Վ. Ա. ԲԱԲՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

ՀՍՍՀ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА им. Р. АЧАРЯНА

В. А. КОСЯН

СЛОВОСОЧЕТАНИЯ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1975

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Վ. Ս. ՔՈՍՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

A II 45718

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1975

Ծ Ар
Գ 84

Գրքում ուսումնասիրված են արդի հայերենի բառակապակցության բոլոր տիպերը։ Համաժամանակյա պլանով քննվում են գեղարվեստական ու հրապարակախոսական գրականության լեզվի բառակապակցությունները։

Գ $\frac{071}{703\,(02)-75}$ 65—74

© *Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 1975*

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Բառակապակցությունը, իբրև շարահյուսական ինքնուրույն միավոր, ուսումնասիրության առարկա է դարձել լեզվաբանության զարգացման համեմատաբար ուշ շրջանում: Թերևս այդ է պատճառը, որ շարահյուսական այդ իրողության ըմբռնման, դասդասման հարցերում չկա միասնական մոտեցում:

Ձեռնարկելով սույն հետազոտությունը՝ նպատակ ենք ունեցել տալու արդի հայերենի բառակապակցությունների գիտական նկարագրությունը՝ հենվելով, մի կողմից, եվրոպական և ռուս լեզվաբանության, մյուս կողմից, հայ քերականագիտության նվաճումների վրա: Հարցի պատմության առաջին մասի հանգամանալից շարադրանքը տրված է մեր մի աշխատանքում (Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնի գիտական աշխատությունների ժողովածուի 1967 թ. № 2, տե՛ս էջ 17—41): Այդ պատճառով էլ այստեղ բառերի կապակցությունների ուսմունքի պատմությունը տրվում է միայն ընդհանուր գծերով:

Իբրև առաջին փորձ, մեր աշխատությունը կարող է ունենալ թերություններ, որոնց վերացման նպատակով արվելիք ամեն մի դիտողություն կընդունենք երախտագիտությամբ:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1. ԲԱՌԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՄՈՒՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՔԵՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Թեև բառակապակցությունների ուսմունքը երևան է եկել XIX դարի 80-ական թվականներից և սերտորեն կապված է հոգեբանական դպրոցի, մասնավորապես երիտասարդ քերականների ուղղության հետ, սակայն լեզվաբանության պատմության մեջ բառերի կապակցությունների ուսմունքը իբրև բառակապակցությունների տեսության նախահիմք, մշակվել է մ. թ. II դարի քերական Ապոլլոն Դիսկոլի կողմից։

Դիսկոլի շարահյուսության հիմքում ընկած են շարահյուսական համաձայնության, անհամաձայնության, բառերի կապակցությունների, բառերի կիրառությունների բազմաթիվ օրինաչափություններ։ Դիսկոլի նպատակն է եղել բառերի կապակցության կանոնների մշակումը։

Բառերի կապակցությունների ուսմունքը հին հունական քերականության մեջ հավասարապես տեղ ուներ խոսքի մասերի ուսմունքի հետ և այդ վիճակով էլ փոխանցվեց լատիներենի քերականությանը։ Միջին դարերում քերականությունն աստիճանաբար նեղացավ խոսքի մասերի ու նախադասության ուսմունքի սահմաններում։ Դրան առավել նպաստեց համընդհանուր քերականության երևան գալը, որը ավանդական քերականությունից վերցրեց միայն նախադասության ուսմունքը, փոքր-ինչ նաև խոսքի մասերինը։

Ռուս լեզվաբանության մեջ բառերի կապակցությունների ուսմունքը գալիս է դեռևս բյուզանդական քերականության ազդեցությամբ գրված քերականություններից։

Կապակցությունների ուսմունքն իսպառ անտեսվեց XIX դարի կեսին, երբ տիրապետող դարձավ տրամաբանական քերականությունը, որի հիմնադիրը Եվրոպայում Բեկկերն էր։

Տրամաբանական քերականության արմատավորմամբ շարահյուսությունը խիստ նեղացվեց, և նրա ուսումնասիրության հիմնական բնագավառը ճանաչվեց միայն նախադասությունը, այն էլ դատողություն-նախադասությունը։ Ավանդական ուսմունքը բառերի կապակցությունների մասին, որը կապվում էր խոսքի մասերի ուսմունքի հետ, դուրս մղվեց քերականությունից։ Տրամաբանական քերականության ազդեցությամբ գրված ձեռնարկներում ռուսերենի բառերի կապակցությունները, որոնք ուսումնասիրության առարկա էին լոմոնոսովյան շրջանում, հետին պլանը մղվեցին։ Ռուս քերականագիտության մեջ, սկսած XVIII դարից, ավանդաբար մշակված համաձայնության և խնդրառության ուսմունքը մի կողմ թողնվեց։ Խոսքի մասերի ուսմունքը միացվեց նախադասության ուսմունքին, իսկ բառերի կապակցություններից շատ քիչ բան մնաց՝ այն էլ ձուլվելով նախադասության անդամների ուսմունքի մեջ։

Լեզվաբանության և մասնավորապես ռուսերենի քերականագիտության մեջ Ֆ. Ֆորտունատովին է պատկանում բառակապակցությունների ուսմունքի հիմնադրումը։

Ֆորտունատովը քերականությունը բաժանում է երկու մասի՝ ձևաբանության և շարահյուսության։ Ձևաբանությունն ուսումնասիրում է առանձին բառերի ձևերը, իսկ շարահյուսությունը՝ բառակապակցությունների ձևերը։ Բառակապակցությունը Ֆորտունատովը լայն իմաստով է հասկանում։ Նրա կարծիքով բառակապակցություն է երկու լրիվ բառերի կապակցությունը. ընդ որում դա կարող է լինել հոգեբանական դատողություն կամ նրա մի մասը։ Իսկ նախադասությունը հոգեբանական դատողության արտահայտությունն է. ընդ որում հոգեբանական ստորոգյալը համարվում է ամեն մի խոսքի մաս, որը կրում է գլխավոր շեշտ, ընդգծվում է խոսողի կողմից։ Ըստ Ֆորտունատովի, նախադասությունը պետք է դիտել երկու վիճակով՝ նախադասություն խոսքի մեջ և նախադասություն մտքում։ Հոգեբանական դատողությունը հենց նախադասությունն է մտքում, իսկ խոսքի մեջ եղած նախադասությունը կարող է ճշգրիտ համապատասխանել հոգեբանական դատողությանը կամ՝ ոչ։ Հոգեբանական դատողության յուրաքանչյուր բաղադրիչ (ենթակա և ստորոգյալ) կարող է արտահայտվել մեկ բառով կամ բառակապակցությամբ։

«Խոսքի մեջ բառակապակցություն ես կոչում եմ ըստ նշանակության այն ամբողջությունը, որը կազմվում է մի լրիվ բառը (ոչ թե մասնիկը) մի ուրիշ լրիվ բառի հետ կապակցելով, լինի դա ամ-

բողջական հոգեբանական դատողության կամ նրա մի մասի արտահայտությունը»[1]։

Ֆորտունատովը բառակապակցությունները բաժանում էր երկու տեսակի՝ լրիվ և թերի։ Թերի է այն բառակապակցությունը, որը մտնում է այլ բառակապակցության մեջ՝ իբրև նրա բաղադրիչ։ Օրինակ՝ летит большая птица բառակապակցության մեջ большая птица թերի բառակապակցություն է։ Ավարտված բառակապակցության մեջ մի բառը կապակցվում է մյուսի հետ, իբրև դատողության մի մասը դատողության մյուս մասի հետ։ Ավարտված բառակապակցությունը նախադասություն է, ուստի նրա մասերը լինում են ենթակա և ստորոգյալ, ընդորում ոչ-ինքնուրույն մասը ստորոգյալն է, իսկ ինքնուրույն մասը՝ ենթական։ Ավարտված բառակապակցությունը և նախադասությունը նա համարում է համանիշներ։ Թերի բառակապակցության մեջ բառը, որը կապակցվում է դատողության մաս հանդիսացող բառի հետ, ինքը դատողության մի մասը չի կազմում, այլ լինում է դատողության մասի մի մասը։

Ֆորտունատովը լայնացրեց բառակապակցության ըմբռնումը՝ դրանով իսկ մի կողմ թողնելով նախադասությունը։

Ըստ Ֆորտունատովի ուսմունքի՝ ստացվում է, որ նախադասությունը բառից և բառակապակցությունից տարբերվում է իր հոգեբանական դերով, բայց ոչ քերականական կառուցվածքով։

Բառակապակցությունների ուսումնասիրության գործում զգալի է Ս. Դոբիաշի հայացքների դերը, որոնք նա պարզաբանել է «Синтаксис Аполлония Дискола» (1882) և «Опыт семасиологии частей речи на почве греческого языка» (1897) աշխատություններում։ Դոբիաշը, հակադրվելով տրամաբանական քերականության սկզբունքներին, մերժեց նախադասությունը որպես շարահյուսության հիմնական առարկա և առաջ քաշեց բառերի կապակցությունների ուսումնասիրության անհրաժեշտությունը։ Շարահյուսության առարկան, ըստ Դոբիաշի, խոսքի մասերն են, նրանց բառային իմաստը և վերջինով պայմանավորված բառերի կապակցելիության կանոնները։ Ապոլլոն Դիսկոլի շարահյուսական սիստեմը մեկնաբանելիս էլ Դոբիաշն աշխատում է ցույց տալ, որ Դիսկոլը տվել է ոչ թե նախադասության, այլ բառերի կապակցությունների ուսմունքը։

Դոբիաշը նախադասությունը համարում էր պատկերացումների կապակցությունների լեզվական դրսևորում և նախադասության

[1] Ф. Ф. Фортунатов, Избранные труды, т. 2, М., 1957, стр. 451.

մեջ տեսնում էր այնքան հոգեբանական դատողություններ, որքան կապակցվող պատկերացումներ կան։

Դոբիաշը ոչ թե նախադասությունն էր համարում շարահյուսական ուսումնասիրության առարկա, այլ՝ բառակապակցությունը, իսկ վերջինիս մեջ ելնում էր բաղադրիչների իմաստային կողմից։ Դրանով անտեսվում էին նախադասության կառուցվածքի բազմաթիվ առանձնահատկությունները, և բառակապակցությունների ուսումնասիրությունն էլ կրում էր միակողմանի բնույթ։

Պետք է նշել, որ Դոբիաշի սխեմը հետագայում չզարգացավ։ Հետևորդներ ունեցավ Ֆորտունատովի սխեմը։ Բառակապակցությունների ուսմունքը զարգացրին Պորժեզինսկին, Ուշակովը։ Մ. Պետերսոնը առաջինը նկարագրեց ռուսերենի բառակապակցությունները։

Ելնելով Ֆորտունատովյան ըմբռնումից, ըստ որի նախադասության շարահյուսությունը պատկանում է հոգեբանությանը, Պետերսոնը շարահյուսությունը համարում է ուսմունք միայն բառակապակցությունների մասին։

Նա բառակապակցությունը գործածում էր լայն իմաստով։ Դա և՛ զույգ, և՛ շատ բառերի միացություն է՝ մինչև պարզ ընդարձակ նախադասություն։ Բառերի կապակցություն է համարում նաև բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունները։

Սակայն հենց Ֆորտունատովի դպրոցի ներկայացուցիչներն իրենք սկսեցին վերանայել նրա հայացքները։ Դա արտահայտվեց առաջին հերթին Ա. Պեշկովսկու շարահյուսական սխեմում։

Պեշկովսկին շարահյուսությունը համարում էր բառակապակցությունների ձևերի ուսմունք։ Սակայն բառակապակցության ըմբռնումը Պեշկովսկու սխեմում շատ լայն է. նա բառակապակցություն է համարում հոգեֆիզիկական ամեն մի միասնություն։ Ըստ այս ըմբռնման՝ բառակապակցությունը երկու կամ մի շարք բառերն են, որոնք միավորված են խոսքի ու մտքի մեջ։ Դրանով բառակապակցության սահմանները շատ են ընդլայնվում։ Այն կարող է լինել ինչպես երկու բառերի միասնություն, այնպես էլ պարզ նախադասություն, ապա և բարդ նախադասություն։ Իրականում Պեշկովսկին բառակապակցության ուսումնասիրության մեջ քննում է նախադասությունը՝ դրանով իսկ վերադառնալով նախադասության ավանդական ուսմունքին։

Բառակապակցությունը շարահյուսության հիմնական բնագավառ համարելու տեսակետը արմատապես վերանայվում է Ա. Շախմատովի քերականական սխեմում։

Շախմատովը շարահյուսությունը բնորոշելով իբրև մտածողության դրսևորման ձևերն ուսումնասիրող բաժին քերականության մեջ՝ նրա առարկան համարում է նախադասությունը, իբրև հոգեբանական հաղորդման արտահայտություն։

Շախմատովը տարբերակում է խոսքը և նախադասությունը։ Խոսքը պատկերացումների կապակցությունների բառային դրսևորումն է, իսկ նախադասությունները խոսքի այնպիսի հատվածներն են, որոնք համապատասխանում են պատկերացումների առանձին կապակցություններին։

Բառակապակցությունները և բառերը պետք է ուսումնասիրել նախադասությանը ստորադասված ձևով, քանի որ դրանք արժեք ունեն սոսկ նրանով, որ չեն կորցրել իրենց կապը նախադասության հետ, պահպանել են նախադասության անդամի նշանակությունը։ Բառակապակցությունների ուսմունքը նա նույնացրեց նախադասության երկրորդական անդամների ուսմունքի հետ։ Նա շարահյուսությունը երեք մասի էր բաժանում, որոնցից հիմնականը նախադասության և նրա գլխավոր անդամների ուսմունքն է, երկրորդ մասը՝ բառակապակցությունների և նախադասության երկրորդական անդամների ուսմունքը, իսկ երրորդը՝ խոսքի մասերինը։

* * *

XIX դարի վերջին և XX դարի սկզբին Եվրոպայում բառակապակցությունների ուսմունքի մշակման ուղղությամբ զգալի գործ կատարեցին Յոն Ռիսի ուսումնասիրությունները։[1]

Լինելով երիտքերականների դպրոցի ներկայացուցիչ՝ Ռիսն աշխատում էր լեզվական հաղորդակցման էությունը բացահայտել բառակապակցություններից ելնելով։ Նա գտնում էր, որ շարահյուսության հիմնական առարկան ոչ թե նախադասությունն է, այլ բառակապակցությունը, որը նա շատ ընդարձակ իմաստով էր հասկանում. դա երկու բառից կազմված կապակցությունից մինչև բարդ նախադասությունն ընդգրկող մի բնագավառ է, որին բնորոշ են հնչերանգային և իմաստային ընդհանրությունները։ Ըստ Ռիսի՝ նախադասությունը բառակապակցությունների մի տեսակն է միայն։ Բառակապակցությունների մեջ նա հատկապես առանձնացնում էր բառախմբերը, որոնք միասնական պատկերացման անդամազատ բառային արտահայտությունն են։ Բառախումբը ոչ նախա-

---

[1] Ries, Was ist Syntax?, Marburg, 1894, „Zur Wortgruppenlehre", Prag, 1928, „Was ist ein Satz?", Prag, 1931

դասությունն է և ոչ էլ առանձին բարդ բառ, այլ բառերի կապակցություն, որը կոչված է արտահայտելու լեզվական հաղորդակցման ժամանակ հանդես եկող միասնական ամբողջությունը, որը միավորված է իմաստային և ձևական տեսակետից։ Բառախմբի մեջ կա միասնական հնչերանգ, և նրանում բաղադրվող բառերը իմաստով ու ձևով կապակցված են։ Բառախումբը ասացվածքի մի մասն է։ Ինչպես վանկերն են բառ կազմում, որի մեջ նրանք ինքնուրույն միավոր չեն, այնպես էլ բառախմբերն են նախադասություն կազմում՝ ինքնուրույն միավորներ չլինելով։ Ռիսը բառախումբը համարժեք է համարում բառին՝ շարահյուսական դերի տեսակետից։ Ռիսը տվել է գերմաներենի բառախմբերի մանրամասն նկարագրությունը։

Բառախմբերի այս ուսմունքը չի արտացոլում բառակապակցությունների, իբրև շարահյուսական յուրահատուկ ամբողջությունների, կառուցվածքային և իմաստային յուրահատկությունները, նախադասության և բառակապակցության սահմանների խառնումով վերացնում է նրանց տարբերությունները, բառախմբի անվան տակ միավորում է շարահյուսորեն կամ ոճական տեսակետից տարբեր երևույթներ։

* * *

Եվրոպական լեզվաբանության մեջ բառակապակցությունների և բառախմբերի ուսմունքը XX դարի սկզբից վերաճեց շարույթի (սինտագմա) ուսմունքի, որի հիմքը դարձավ Ֆ. Սոսյուրի լեզվաբանական այն դրույթը, թե լեզվական հաղորդակցումը ներկայացնում է զույգ կապակցող միավորների գծային շարքեր։ Սոսյուրի շարույթային ուսմունքը ինչ-որ չափով երիտքերականների (Ֆորտունատովի, Ռիսի և մյուսների) բառակապակցությունների ուսմունքի զարգացման որոշակի աստիճանն է։

Ըստ Սոսյուրի՝ լեզվական իրար հաջորդող տարրերի կապը հենց շարույթն է։ Շարույթն արտահայտում է որոշչի և որոշյալի հարաբերությունը։

Սոսյուրի ուսմունքի մեջ շարույթ հասկացությունն ընդգրկում է ոչ միայն շարահյուսությունը, այլև ձևաբանությունը, բառակազմությունը, նույնիսկ իմաստաբանությունը։

Նա տարբերություն էր դնում արտաքին և ներքին շարույթի միջև։ Ներքին շարույթ էր համարում բարդ և ածանցավոր բառերի բաղադրիչների կապակցությունը, իսկ արտաքին շարույթն

արտացոլում է երկու բառի հարաբերությունը։ Պարզ և բարդ նախադասություններում Սոսյուրը շարույթ էր համարում բառակապակցությունները և բաղադրիչ նախադասությունները։

Սոսյուրի շարույթի ուսմունքը լայն տարածում է գտել ոչ միայն Եվրոպայում՝ հիմք դառնալով կառուցվածքային հետազոտությունների համար շարահյուսության բնագավառում, այլև Ռուսաստանում։

Սոսյուրի շարույթի ուսմունքը Պեշկովսկու և Շախմատովի շարահյուսական հայացքների որոշ ազդեցությամբ արտահայտվել է Ա. Ռեֆորմատսկու սխեմում։ Ռեֆորմատսկին շարույթը և հաղորդումը (կոմունիկացիան) նույնացնում է։

Ռեֆորմատսկու կողմից շարույթ տերմինի բազմանշանակ գործածությունը, երբ այն հավասար է համարվում և՛ երկու բառի կապակցության, և՛ ածանցավոր ու բարդ բառի, և՛ երկրորդական նախադասության, և՛ նույնիսկ բառ-նախադասության, այն ոչ պիտանի է դարձնում։ Շարույթի պիտակով Ռեֆորմատսկին հեռու է մնում նախադասության բազմակողմանի ուսումնասիրությունից։

Դեսկրիպտիվ լեզվաբանության հիմնադիր Մ. Բլումֆիլդը մշակեց անմիջական կազմիչների ուսմունքը։ Անմիջական կազմիչները այն կոմպլեքս տարրերն են, որոնցից անմիջականորեն կազմվում է տվյալ կառուցվածքը։ Օրինակ՝ պայծառ արևը ջերմացնում է հողը կառուցվածքը կազմված է երկու անմիջական կազմիչից՝ պայծառ արևը և ջերմացնում է հողը։

Այդ տեսության համաձայն նախադասությունը ոչ թե հաղորդակցական խոսքի հիմնական միավորն է, այլ ուրիշ կարգի բառակապակցություններին հավասար մի կառուցվածք։ Անմիջական կազմիչների տեսությունը հաշվի չի առնում խոսքի հաղորդակցական հիմնական միջոցի՝ նախադասության տարբերությունը այլ կառուցվածքներից։ Մյուս կողմից էլ նախադասության մեջ փնտրելով սոսկ անմիջական կազմիչներ՝ ցույց չի տալիս դրանց իմաստային ու կառուցվածքային առանձնահատկությունները։ Անմիջական կազմիչների վերլուծության կիրառության դեպքում հավասարության նշան է դրվում ոչ միայն շարահյուսական և այլ կարգի միավորների, այլև բառակապակցության ու նախադասության միջև, մի կողմից, ազատ բառակապակցությունների և կայուն, դարձվածաբանական կառուցվածքների միջև, մյուս կողմից։ Շարահյուսական հարաբերությունները այդ դեպքում բոլոր-

վին չեն բացահայտվում։ Սպասարկու բառերի (նախդիրներ, շաղկապներ, հոդեր) դերը այսպիսի վերլուծության դեպքում չի պարզվում։

* * *

Սոսյուրից անկախ, բոլորովին այլ իմաստով է գործածել շարույթ տերմինը ռուս լեզվաբան Լ. Շչերբան։ Նրա ուսմունքը շարույթի մասին հենվում է ավանդական հնչույթաբանական արվեստի և ոճաբանության մեջ գործածված խոսողական տակտի ըմբռնման վրա։ Խոսողական տակտը խոսքի արտասանական միավոր է, որն առանձնանում է նախադասության մեջ հնչերանգային միջոցներով։

Շչերբան շարույթը համարում է ոչ այնքան հնչյունական, որքան շարահյուսական-իմաստաբանական հասկացություն։ Շարույթները կազմվում են խոսքի պրոցեսում ծագող բարդ հասկացությունները արտահայտելու համար։ Լեզվի մեջ չկան արձանագրված շարույթներ, դրանք մարդու խոսողական գործունեության արդյունք են և պատրաստի չեն տրված։ Շարույթը կոնկրետ իմաստ է ստանում միայն խոսքի բնագրում, և նրա իմաստը կախված է ամբողջից։ Շարույթը խոսքի բաղադրիչն է, նրա պարզագույն շարահյուսական-իմաստային միավորը։ Դրանով շարույթը տարբերվում է բառակապակցությունից կամ «բառերի խմբից»։ Շարույթը, իբրև խոսքի հիմնական շարահյուսական-իմաստային միավոր, փոխում է իր կազմը՝ կախված ավյալ ոճի յուրահատկությունից։ Գրական ամեն մի բնագիր կարելի է մեկնաբանել տարբեր ձևով՝ ըստ շարույթային տարբեր բաժանումների։ Խոսքի շարույթային բաժանումը չի կարելի շփոթել նախադասության ավանդական անդամազատման հետ։

Սակայն Շչերբայի ուսմունքի մեջ շարույթը չի սահմանազատված բառակապակցությունից։ Չեն բացահայտված շարույթի և նախադասության փոխհարաբերությունները, չեն նկարագրված շարույթների տեսակները, նրանց կազմության օրինաչափությունները։

Շչերբայի ուսմունքը շարույթի մասին զարգացել է ակադ. Վ. Վինոգրադովը։

Ըստ Վինոգրադովի՝ շարույթը շարահյուսական-իմաստային ինքնուրույն միավոր է, որ հանդես է գալիս նախադասության կազմում։ Նախադասության շարույթային բաժանման մեջ արտա-

հայտվում են հաղորդման իմաստային և ոճական նրբերանգները, ուստի և շարույթների առանձնացումը միշտ էլ կապված է հաղորդման ճիշտ և լրիվ իմաստավորման հետ։ Նույն նախադասությունը կարելի է շարույթային տարբեր բաժանումների ենթարկել՝ կախված ընագրից, խոսքի արտահայտչականությունից, մտքի նրբերանգների արտահայտման նպատակներից։ Նախադասության շարույթային բաժանումը կապված է նաև բառերի շարադասության հետ։ Շարադասության բազմազան ձևերը հնարավորություն են տալիս կատարելու խոսքի տարբեր շարույթային բաժանում։ Ուստի և նախադասության մեջ չկան նախապես տրված քարացած շարույթներ. դրանք միշտ ստեղծվում, կազմավորվում են կոնկրետ նախադասության մեջ՝ պայմանավորված ինչպես հաղորդվող մտքի արտահայտման հանգամանքներով, այնպես էլ շարադասությամբ։

Վինոգրադովը գտնում է, որ շարույթը չի կարելի նույնացնել նախադասության անդամ հասկացության հետ, թեև նշում է, որ դրանք հաճախ կարող է համընկնել, ավելի շուտ՝ նախադասության անդամը երբեմն արտահայտվում է իբրև շարույթ։

Սակայն շատ դեպքերում շարույթն ընդգրկում է նախադասության մեկից ավելի անդամներ, ամբողջ բառախումբ, նույնիսկ ամբողջ նախադասությունները (բարդ նախադասության մեջ բաղադրիչ նախադասությունները կարող են իբրև շարույթ դրսևորվել)։ Որպես կանոն, նախադասության տրոհված անդամները շարույթով են արտահայտվում։

Շարույթի հասկացությունը չի վերացնում բառակապակցության հասկացությունը։ Ընդհակառակը, այն ենթադրում է բառակապակցության գոյությունը։ Բառակապակցությունը կազմվում է բառի հիման վրա, նրա իմաստային-շարահյուսական ծավալման պրոցեսում։ Բառակապակցության ուսմունքը բառի և նախադասության ուսմունքի լրացումն է։ Բառակապակցությունները ծավալով միշտ չէ, որ համընկնում են շարույթին։ Նրանք կարող են ունենալ տարբեր ծավալ, կազմություն և դեր։ Շարույթը ռիթմի հետ միասին բանաստեղծական չափածո ստեղծագործության տարրերն է անջատում, իհարկե շատ դեպքերում էլ շարույթը կարող է ընդգրկել բանաստեղծական մեկից ավելի տողեր.

«Մեծ անտառից նա զատված,
Մարդու կացնից ազատված՝
Կանգնած է դեռ ու շոգին
Հով է տալիս մշակին»։

Հատվածում առաջին և երկրորդ տողերը մեկական շարույթ են, երրորդ տողում կանգնած է դեռ մի շարույթ է, իսկ ու շոգին նով է տալիս մշակին առանձին շարույթ է։

«Ջոքան Կարոն սարերի
Մի հովիվ էր վիթխարի,
Բոյ-բուսաթին նայելիս
Մարդու զարզանդ էր գալիս»։

Հատվածում առաջին և երկրորդ տողերը մեկ շարույթ են, իսկ երրորդ և չորրորդ տողերը՝ առանձին շարույթներ։

Այսպիսով, շարույթը սոսյուրյան ըմբռնումով, անմիջական կազմիչները և բառակապակցությունը տարբեր երևույթների անվանում են։ Բառակապակցությունը նույնիսկ չի կարելի նույնացնել Ռիսի և մյուսների կողմից մշակված բառախմբերին։ Շարույթի՝ Շչերբայի և Վինոգրադովի ըմբռնումը ևս չի համընկնում բառակապակցության հետ։

2. ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՄՈՒՆՔԸ ՀԱՅ ՔԵՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայ քերականագիտությունն սկզբնավորվել է մ. թ. ա. II դարի հույն քերական Դիոնիսիոս Թրակացու «Արվեստ քերականության» գրքի թարգմանությամբ։

Այդ քերականությունը հիմնականում տառի, վանկի. խոսքի մասերի ուսմունքն էր, ավանդաբար զուգակցված ճարտասանությանն ու տրամաբանությանը։ Բառերի կապակցությունների ուսմունքը տեղ չուներ Թրակացու քերականության մեջ. այն ավելի ուշ է մշակվել Ապոլլոն Դիսկոլի կողմից, որի «Շարահյուսությունը» հին Հայաստանում չի տարածվել՝ հայերեն թարգմանված չլինելով։

Կապակցությունների ուսմունքն սկսվում է լատինատիպ քերականությունների հիմնադրումով։

Ս. Ջուղայեցուց սկսած՝ բոլոր լատինատիպ, իսկ հետագայում նաև ինքնուրույն քերականություններում խոսքի մասերի ուսմունքը արդեն համադրված էր հանդես գալիս կապակցությունների ուսմունքի հետ։ Վարդան Արևելցուց հետո Ս. Ջուղայեցին առաջինն էր, որ շարահյուսությամբ զբաղվեց, սակայն շարահյուսությունը նրա քերականության մեջ ընդգրկում էր ոչ թե նախադասության կառուցվածքը, այլ միայն կապակցությունները։

Ս. Ջուղայեցին «Գիրք որ կոչի քերականութիւն» աշխատության (գրված է XVII դարի սկզբին, սակայն տպագրվել է 1725 թ.) «Յաղագս շարադրութեան» բաժնում քննում է համաձայնությունը և հոլովառությունը։ Ընդ որում համաձայնության բաժնում քննության է առնում որոշիչ ածականի և լրացյալ գոյականի կապակցության, գոյականի հետ ստացական և ցուցական դերանունների գործածության, ենթակայի և ստորոգյալի համաձայնության հարցերը։

Հոլովառության բաժնում քննում է անվան (գոյականի, ածականի, բայի և նախադրության խնդրառությունը)։

Բայերի խնդրառության մեջ Ջուղայեցին ելակետ է համարում լրացումների ձևը և ըստ այդմ նշում այդպիսի ձև ստացող բայերը։ Նա գտնում է, որ սեռականը, գործիականը, ներգոյականը, կոչականը հատկապես բայերի կողմից պահանջվող հոլովներ չեն։ Ապա մեկ առ մեկ տալիս է ուղղական, տրական, հայցական, սկզբնական, պատմական, արտագոյական (պարառական) պահանջող բայերի ցանկերը։ Ջուղայեցին երբեմն տարբերակում է հոլովների իմաստները։

Ջուղայեցու կապակցությունների ուսմունքը ձևական բնույթ ունի. կապակցության բաղադրիչների փոխհարաբերությունները, իմաստները չեն բացահայտված (չնչին բացառություններով)։ Ջուղայեցին տարբերություն չի տեսնում գոյականի բուն լրացման (սեռականով դրված) և մյուս հոլովներով դրված լրացումների միջև։

Կապակցությունների ուսմունքի հիմնադրումը կապվում է նաև Կ. Գալանոսի «Քերականական և տրամաբանական ներածութիւն առ իմաստասիրութիւնն շահելոյ» գրքի[1] *հետ, որի «Յաղագս կառավարութեան մասանց բանին» բաժինը նվիրված է համաձայնությանը և խնդրառությանը։ Գալանոսը համաձայնություն ասելով հասկանում է՝ ա) անվան և բայի, բ) ածականի և գոյականի, գ) հարաբերականի և նախընթացի կապակցությունը։*

Խոսքի մասը և նախադասության անդամը չտարբերակելով, Գալանոսը իրականում խոսում է ենթակայի և ստորոգյալի, որոշիչ ածականի և որոշյալ գոյականի համաձայնության մասին։ Անվան կառավարություն *ասելով Գալանոսը հասկանում էր գոյականի և ածականի կապակցությունը համապատասխան լրացում-*

---

1 *Այս աշխատությունը 80 տարի վաղ է տպագրվել Ս. Ջուղայեցու վերոհիշյալ գրքից (1645 թ.) և անմիջական ազդեցություն է թողել հետագա քերականների վրա։*

ների հետ։ Ածականի խնդրառությունը Գալանոսի մոտ ներկայացված է բավական մանրամասն, տրված են տարբեր հոլովներով խնդիր պահանջող ածականների խմբերը։

Նա համեմատաբար մանրամասն է քննում բայի խնդրառությունը՝ այդ երևույթը ներկայացնելով 16 կանոնով։ Գալանոսը խնդրառության մեջ մտցնում է նաև ենթակայի և ստորոգյալի կապակցությունը՝ ելնելով լատինիստների քերականների այն դրույթից, թե ենթական (անուն) և ստորոգյալի (բայի) պահանջով դրվող է։

Ընդհանրապես Գալանոսը չի անդրադառնում լրացումների իմաստային քննությանը։ Այդ է պատճառը, որ նա ուսմունքը կապակցությունները ներկայացնում է խիստ սխեմատիկ։ Սակայն կապակցությունների հարցի արծարծումն իսկ հայ քերականագիտության համար կարևոր նշանակություն ունեցավ։ Հետագա հայ քերականները, զարգացնելով Ջուղայեցու և նրա հիմնադրած կապակցությունների ուսմունքը, հարստացրին հայերենի քերականությունը։

Շատ հարցերում հավատարիմ մնալով Ջուղայեցու և Գալանոսի սկզբունքներին՝ կապակցությունների ուսմունքը զարգացրեց Հովհաննես Հոլովը, որի «Ջամբռին հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական» (Հռոմ, 1674) գիրքը ժամանակի քերականական մտքի նվաճումներից է։

Ա 54718

Նա շարահյուսություն իմաստով գործ է ածում շարամանություն տերմինը, որի տակ քննության է առնում բառերի կապակցությունները։ Նա նույնպես նախադասության ուսումնասիրությունը համարում է տրամաբանության և շարամանության նեղ բնագավառ համարում։ Ածականների հոլովառությունը առաջին անգամ ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրել է Հ. Հոլովը։ Նա ածականները խմբերի է բաժանում՝ ըստ տարբեր հոլով ստանալու հատկանիշի։

Նա առաջինն է հայ քերականների մեջ, որ նշել է ածականների հարաբերակցությունը բայերի հետ՝ հոլովառության տեսակետից։ Նա գտնում է, որ բայերից ծագած ածականները հոլովառությամբ նման են համապատասխան բայերին։ Սակայն նա այն սխալ կարծիքին է, թե բոլոր ածականներն առաջացել են բայերից։

Հ. Հոլովը բայի խնդրառությունը քննում է նոր սկզբունքով։ Նա բայերը բաժանում է երկու խմբի՝ ըստ այն բանի, թե քանի լրացում են ստանում։ Առաջին խմբին պատկանում են այն բայերը,

2—486

ՀԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

որոնք միայն մեկ հոլով են պահանջում, իսկ երկրորդ խմբի մեջ դնում է մեկից ավելի հոլով պահանջող բայերը։

Հ. Հոլովը ուշադրություն դարձրեց այսպես կոչված բայի խնդրառության արգելման երևույթին։ Անորոշ դերբայի (աներևույթ)՝ դիմավոր բայի մոտ հանդես գալը կամ խնդրի՝ երկրորդական նախադասությամբ արտահայտվելը դիտվում է իբրև բայի խնդրառական հատկության կասեցում, խնդրառության արգելում։

Հ. Հոլովն առաջինն էր, որ քննեց նախադրությունների հոլովառությունը մանրամասնորեն։ Նա նախադրությունները դասդասում է ըստ տարբեր հոլով պահանջելու (սեռական պահանջող, վերջահոլով տրական պահանջող և այլն)։ Սակայն նա նախադրություններից չի տարբերում նախդիրները, և վերջիններս էլ հոլովառու է դիտում (նախադրությունների մեջ մտցնում է նաև որոշ նախամասնիկ ածանցներ՝ ենք, գեր)։

Հ. Հոլովի կապակցությունների ուսմունքը ևս տառապում է այն թերությամբ, ինչ բնորոշ է Ջուղայեցու և Գալանոսի տեսությանը, այսինքն՝ խնդրառությունը քննվում է սոսկ ձևական տեսակետից, չեն բացահայտվում կապակցությունների բաղադրիչների հարաբերությունները։

Կապակցությունների ուսմունքի որոշ դրույթներ զարգացվեցին Շրոդերի «Արամեան լեզուին գանձ» (Ամստերդամ, 1711) գրքում։ Շրոդերը շարահյուսության մեջ մտցնում է համաձայնության և կառավարման (խնդրառության) ուսումնասիրությունը։ Համաձայնությունը նա երեք տեսակ է ընդունում. անունը՝ անվան, անունը՝ դերանվան և անունը՝ բայի հետ։ Անունը անվան հետ համաձայնվում է կամ իբրև գոյականը գոյականի հետ, կամ գոյականը ածականի հետ։ Գոյականի հետ գոյականի համաձայնություն ասելով հասկանում է արդի իմաստով գոյական որոշչի և բացահայտչի համաձայնությունը լրացյալ գոյականի հետ։ Ածականի և գոյականի համաձայնությունը քննում է նախորդների նման։ Շրոդերը իր գրքի՝ աշխարհաբարին նվիրված բաժնում նշում է, որ աշխարհաբարում ածականը գոյականի հետ չի համաձայնվում։ Անվան և բայի համաձայնության բաժնում քննում է ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը։ Շրոդերի կապակցության ուսմունքի մեջ նորությունն այն է, որ անունն էլ (ընդ որում ոչ միայն ածականը, այլև գոյականը) դիտվում է իբրև խնդրառու։ Ածականի խնդրառությունը քննում է նախորդ քերականների նման, իսկ գոյականի խնդրառության տակ քննում է գոյականի՝ սեռական հոլովով լրացումները։

Շրոդերը բայի խոնարհումը ներկայացնում է 12 կանոնով, ընդ որում, ի տարբերություն նախորդ քերականների, նա յուրաքանչյուր հոլով պահանջող բայերի համար նշում է իմաստային առանձնահատկություն:

Ի տարբերություն նախորդ քերականների՝ Շրոդերն աշխատել է ներկայացնել նաև մակբայների խոնարհումը:

Բաղդասար Դպիրի «Պարզաբանութիւն քերականութեան կարճառօտ և դիւրիմաց» (Կ. Պոլիս, 1736) գրքի 2-րդ հատորը նվիրված է խոսքի մասերի կիրառությանը: Դպիրը ընդհուպ մոտեցել է շարահյուսական և ձևաբանական հասկացությունների տարբերակմանը: Նա մեկ առ մեկ քննում է ենթակայի պաշտոն կատարող տարբեր խոսքի մասերի համաձայնությունը բայի, այսինքն ստորոգյալի հետ: Նա անուն տերմինն արդեն գործածում է ենթակա նշանակությամբ: Նա առաջինն էր, որ հատկացուցիչ տերմինը գործածեց արդի որոշիչ, ածական և մակբայ տերմինները՝ արդի որոշիչ և պարագա նշանակություններով: Կապակցությունների ուսմունքի մեջ մեծ տեղ է գրավում խոսքի մասերի հոլովառության բաժինը:

Դպիրը խոնարհվող համարում է անունը, բայը և նախդիրը: Սակայն նշում է, որ անվան տակ հասկանում է նաև հոլովվող մյուս բառերը, իսկ բայի տակ՝ նաև ընդունելությունը: Անվան հոլովառությունը նա քննում է ըստ լրացումների ձևի: Մասնավորապես կանգ է առնում սեռականով լրացումների վրա:

Բայի խոնարհության հարցում Դպիրի տարբերությունը նախորդ քերականներից այն է, որ նա լրացումները քննում է որոշ չափով իմաստային հարաբերությունների հաշվառումով և ոչ թե սոսկ ձևական հատկանիշներով:

Նա բայերի խոնարհումը քննում է ըստ բայի սեռերի, ընդ որում առանձին-առանձին ներկայացնում է ներգործական, կրավորական, հասարակ և ընդմիջական (չեզոք) սեռերի բայերի հոլովառությունը:

Մ. Սեբաստացին «Քերականութիւն գրաբառի լեզուի Հայկազեան սեռի» (Վենետիկ, 1730) աշխատությամբ խորացրեց կապակցությունների ուսմունքը:

Սեբաստացին շարահյուսությունն անվանում է շարահարություն (ի տարբերություն նախորդների տված շարամանություն տերմինի): Սեբաստացին ամենայն մանրամասնությամբ քննում է ենթակայի և ստորոգյալի համաձայնությունն ու տարաձայնությունը, նրանց շարադասությունը, ածականի և գոյականի

համաձայնությունը։ Խոսքի մասերի հոլովառության տակ նա քննում է բայի, ընդունելության, ածականի և նախադրությունների հոլովառությունը։ Սեբաստացին առաջինն է փորձել տալ խնդրի սահմանումը։ Նա խնդիր ասելով հասկանում է լրացյալի պահանջով դրվող բառը։ Նա տալիս է սեռի և բնության խնդիրների տարբերակումը։ Ներգործական և կրավորական բայերը նախ սեռի խնդիր են առնում, ապա կարող են նաև բնության խնդիր առնել, իսկ չեզոք բայերը՝ միայն բնության խնդիր։

Սեբաստացին ընդունելությունը դիտում է իբրև դիմավոր բայի խնդրառական հատկություն ունեցող խոսքի մաս. ընդ որում նրա խնդիրները քննում է ընդունելության տարբեր կիրառությունների դեպքում (ենթակայի, խնդրի, հատկացուցչի, ածականի՝ որոշչի և այլն)։ Սեբաստացին ածականի խնդրառությունը կապում է նրանց ծագման հետ. բայից ծագած ածականները բային հատուկ խնդիրներ են առնում, իսկ բայի հետ կապ չունեցող ածականները առհասարակ խնդիր չեն առնում։ Նա բայանունները անջատելով բայից, ցույց տվեց, որ դրանք թեև ունեն բային հատուկ խնդրառություն, սակայն բայ չեն։ Սեբաստացին, ի տարբերություն նախորդ քերականների, գոյականի՝ սեռականով լրացումը ոչ թե խնդիր, այլ հատկացուցիչ է համարում։

Սեբաստացու մոտ աղոտ ձևով երևան է գալիս ուղիղ և ժամանակի իմաստով լրացումները խնդիրներից տարբերելու ձգտումը։

Կապակցությունների ուսմունքի հետագա զարգացումը և նախադասության ուսմունքի հետ միանալու նախնական փորձը կապվում է Մ. Չամչյանի «Քերականութիւն հայկազեան լեզուի» գրքի հետ։ Չամչյանը հիմք է դնում նախադասության տրամաբանական ուսմունքին հայագիտության մեջ, սակայն և դրան հարմարեցնում է կապակցությունների ավանդական ուսմունքը։

Հայերենի կապակցությունները նա բաժանում է մի քանի խմբի՝ ըստ լրացյալի խոսքի մասային պատկանելության։ Նա ընդունում է անվան, բայի, դերբայների (անորոշ դերբայի հոլովաձևերի), ընդունելությունների կապակցությունները։ Անունը անվան հետ կապակցվելիս բաղադրիչներից մեկը կարող է լինել մյուսի համար բացահայտիչ, հատկացուցիչ, խնդիր։

Բացահայտիչ-բացահայտյալ, հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունների քննությունը ըստ էության նախադասության անդամների քննությունն է։ Կապակցությունների ուսմունքի զարգացման մի նոր աստիճան է Չամչյանի այն դրույթը, որ գոյական ա-

նունները ևս խնդիր են ունենում՝ բայի հետ ունեցած առնչության պատճառով։

Զամչյանը բայի և անվան համաձայնությունը երկու մասի է բաժանում։ Առաջին բաժնում քննում է բայի համաձայնությունը անվան, իբրև ենթակայի հետ (անուն բայի), իսկ երկրորդ բաժնում՝ բայի համաձայնությունը խնդրի հետ։ Այստեղ Զամչյանը դրսևորում է շարահյուսական երևույթները ձևաբանականից տարբերելու կարողություն։ Նա արդարացիորեն նշում է, որ անուն բայի լինում են անունները, դերանունները և ընդունելությունը, նույնիսկ աներևույթը։ Իսկ մյուս խոսքի մասերը պատահաբար (գոյականաբար) են անվան փոխարեն գործածվում։ Զամչյանը ենթական այլևս բայի լրացում չի համարում։

Բայի խնդրառությունը ևս Զամչյանը համաձայնություն է համարում՝ այլ դեպքում համաձայնությունը կապակցություն իմաստով գործածելով։

Զամչյանին է պատկանում հետագայում մի շարք քերականների կողմից զարգացած դրույթը բնության խնդիրների տարբերակման մասին։

Գ. Ավետիքյանը «Քերականութիւն հայկական» (Վենետիկ, 1815) աշխատության մեջ տարբերում է ձևաբանական և շարահյուսական հասկացությունները։ Ավետիքյանն արդեն սոսկ չի նկարագրում խոսքի մասերի կապակցությունները, այլ տարբերակված ձևով խոսում է խոսքի մասերի շարահյուսական կիրառության մասին, թեև ավանդաբար պահպանում է խոսքի մասերի կապակցությունների ուսմունքը։ Նա կապակցությունների ուսմունքը հարմարեցնում է նախադասության ուսմունքին։

Ավետիքյանը բաղդասությունը (շարահյուսությունը) երեք մասի է բաժանում. ա) խոսքի մի մասի կախումը մյուսից (այսինքն կապակցությունը), բ) համաձայնությունը, գ) խոսքի մասերի դասավորությունը, որ շարագրություն կամ շարադրություն է (=շարադասություն)։

Շարահյուսության սկզբում նա տալիս է բացահայտչի և բացահայտյալի, խնդրի և խնդրառուի, ածականի և գոյականի, տերբայի և բայի կապակցությունները։ Դրանով նա նախադասության ուսմունքի հիմքն է դնում։ Սրանից հետո միայն շարադրում է բայի խնդրառությունը, նախադրությունների խնդրառությունը, ապա և մակբայի բաղդասությունը (կապակցությունը)։

Գ. Ավետիքյանից հետո կապակցությունների ուսմունքն աստիճանաբար միաձուլվում է նախադասության ուսմունքին։ Այս-

պես, Հ. Ավգերյանի «Քերականութիւն անգղիական և հայերէն» (Վենետիկ, 1817) գրքում արդեն նկատելի է նախադասության ուսմունքի որոշակի գերակշռությունը և կապակցությունների ուսմունքի թուլացումը։ Ավգերյանն առաջիններից է, որ հայերենի քերականության մեջ խոսում է նախադասության տեսակների ու նրանց կառուցվածքի մասին։ Կապակցությունների ավանդական ուսմունքը Ավգերյանի քերականության մեջ աննշան տեղ է գրավում։

Վ. Չալըխյանի «Քերականութիւն Հայկաղեան լեզուի» (Վենետիկ, 1827) գիրքը բնորոշ է կապակցությունների ավանդական ուսմունքի համատեղումով նախադասության ուսմունքին, ընդ որում վերջինից հիմնականում պարզ նախադասության կառուցվածքն է աչքի զարնում[1]։

Խոսքի մասերի համաձայնության մեջ նա քննում է նախադասության անդամների կապակցությունը, սակայն մեծ մասամբ շարահյուսական հասկացությունների համար ձևաբանական տերմիններն է գործածում։ Նա ավանդաբար դիտում է, որ համաձայնվում են անունը անվան և բայը անվան հետ, սակայն անունը անվան հետ համաձայնվելու բաժնում քննում է ենթակայի և ստորոգյալի, հատկացուցչի և հատկացյալի, բացահայտիչի և բացահայտյալի կապակցությունները։ Բայի և անվան համաձայնության մեջ քննում է ստորոգյալի լրացման դերում հանդես եկող հոլովները և նրանց իմաստները։ Չալըխյանի քերականության մեջ քննվում են հոլովների իմաստները, ընդ որում կապակցությունների քննությունը տարվում է արդեն ելնելով ոչ թե լրացյալների, այլ լրացումների ձևից։ Այսպես առանձին-առանձին քննարկվում են բոլոր հոլովները՝ բայերի լրացումների դերում։

Չալըխյանի քերականության մեջ մանրամասնորեն ներկայացված է յուրաքանչյուր խոսքի մասի շարահյուսական կիրառությունը։

Այտընյանի վերամշակած քերականության մեջ արդեն շարահյուսության հիմքում նախադասությունն է ընկած, և կապակցությունների ուսմունքը տարրալուծված է նրա մեջ։

Կապակցությունների ուսմունքը նախադասության ուսմունքի մեջ ձուլելու լավագույն դրսևորումն են Ա. Բագրատունու «Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց» (Վենետիկ, 1852) և Ա.

[1] Բարդ նախադասության մասին տեղեկություններ տրվում են արդեն Չալըխյան—Այտընյանի քերականության մեջ, այն էլ խօսք տերմինով, իսկ նախադասություն տերմինն այնտեղ նշանակում է բարդ նախադասություն։

Այտընյանի «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» (Վիեննա, 1866) գրքերը։

Բագրատունին քերականությունը որոշակիորեն երկու մասի է բաժանում. ա) խոսքի մասերի ուսմունքը, բ) համաձայնությունը կամ շարադրությունը։ Համաձայնությունը, որ նա անվանում է կապակցություն, իր հերթին երկու մասի է բաժանում. ա) խոսք (նախադասություն) կառուցելու ուսմունք, բ) խոսքի մասերի համաձայնություն իրար հետ։

Թեև նա շարահյուսության երկու ենթաբաժինները հստակորեն տարբերում է, սակայն ուսումնասիրությունն այդպես անջատ չի տանում, այլ նախադասության ուսմունքը և խոսքի մասերի համաձայնությունը միաձուլված է ներկայացնում։ Պետք է նշել, որ նախադասության ուսմունքը տվյալ դեպքում ավելի պակաս կշիռ ունի. Բագրատունու քերականությունն աչքի է ընկնում կապակցությունների ուսմունքի (խոսքի մասերի համաձայնություն) առավել խոր մշակմամբ։

Այտընյանը ևս շարահյուսությունը երեք ենթաբաժնով է ներկայացնում. ա) խոսք կամ բառերի համաձայնություն, որը նախադասության կառուցվածքի քննությունն է պարունակում, այսինքն՝ նախադասության անդամները և նրանց համաձայնությունը, բ) խնդրառություն, որտեղ ուսումնասիրված են խոսքի մասերի լրացումները, գ) խոսքի մասերի կիրառությունը, որտեղ քննության են առնված խոսքի մասերի շարահյուսական կիրառությունները։ Ըստ էության 2-րդ և 3-րդ ենթաբաժինները միասին կապակցությունների ավանդական ուսմունքի արտացոլումը և նրա համադրումն են նախադասության ուսմունքին։

XIX դարի կեսից սկսվում է տրամաբանական քերականության տիրապետության շրջանը հայ քերականագիտության մեջ։ Արևմտահայ աշխարհաբարի առաջին տրամաբանական քերականությունը պատկանում է Ն. Ռուսինյանին, որի «Ուղղախօսութիւն արդի հայ լեզուին» (Կ. Պոլիս, 1853) գիրքը բեկկերյան սխեմայի ոգով է գրված։ Նա քերականությունը երկու մասի է բաժանում՝ բառզննություն և բանկազմություն, որոնցից առաջինը խոսքի մասերի ավանդական ուսմունքին է նվիրում, իսկ երկրորդը բարդ և պարզ նախադասությունների շարահյուսությունն է։ Ռուսինյանն առաջինն էր, որ մշակեց հայերենի նախադասության ուսմունքը։

Կապակցությունների ուսմունքից Ռուսինյանի սխեմայում միայն փշրանքներ են հիշատակվում՝ նախադասության ուսմունքի մեջ ձուլված։ Նախադասության մեջ (որը նա առաջարկություն է կոչում) 3 գլխավոր անդամ է ընդունում՝ ենթակա, մակդիր ենթա-

կապ (ստորոգելիական վերադիր) և բայ (հանգույց)։ Ընդ որում նա նախադասության անդամներ համարում է ոչ միայն առանձին բառը, այլև բառը իր բոլոր լրացումներով միասին։ Խնդիրները նա բաժանում է 4 տեսակի՝ կրող և ներգործող, որոնք բայի տեսակով (սեռով) են պայմանավորված, մոտավոր ու հեռավոր, որոնք բայի բառական նշանակությունից են կախված։ Մոտավոր խնդիրները ըստ էության արդի անուղղակի խնդիրներն են, իսկ հեռավոր խնդիրները արդի պարագաներն են։ Ռուսինյանն առաջինն էր, որ քննեց բարդ նախադասությունը՝ պարբերություն անվան տակ, մտցրեց գլխավոր և երկրորդական նախադասություն տերմինները։

Գրաբարի քերականությունը տրամաբանական սկզբունքով մշակեց Ստ. Պալասանյանը իր «Գործնական քերականութիւն հայերէն լեզուի» գրքի երկրորդ հատորում (Թիֆլիս, 1869)։ Պալասանյանի ստեղծած գրաբարի տրամաբանական քերականությունը, ամբողջովին ներծծելով կապակցությունների ուսմունքի հյութը, իր կառուցվածքով դարձավ հետագա աշխարհաբարի քերականությունների հիմքը։

Նախադասության ուսմունքը կատարելության հասցվեց Պալասանյանի «Քերականութիւն մայրենի լեզուի» (Թիֆլիս, 1874) գրքում։ Այստեղ Պալասանյանը վերջնականապես ձևավորեց տրամաբանական քերականությունը, մասնավորապես շարահյուսությունը, որն իր հիմնական գծերով այժմ էլ ընկած է դպրոցական քերականության հիմքում։

Այնուհետև հայ քերականագիտության մեջ, մինչև Աբեղյանը, կապակցությունների ուսմունքը լուծվեց նախադասության ուսմունքի մեջ, ընդ որում արևմտահայերենի քերականները ինչ-որ չափով այն պահպանեցին նախադասության ուսմունքի ներսում, իսկ արևելահայերենի քերականությունը այլևս չանդրադարձավ այդ հարցին։

Արևելահայերենի դպրոցական բազմաթիվ քերականություններ շարահյուսության առարկան համարում են նախադասությունը, և խոսքի մասերի կապակցելիության կանոններն այլևս առանձին քննության նյութ չեն դառնում։ Գրաբարի քերականագիտության մեջ նախադասության ուսմունքը մշակել է Ստ. Մալխասյանցը «Գրաբարի համաձայնութիւնը» (Թիֆլիս, 1892) գրքում։

Սակայն Մալխասյանցի ուսմունքը բնորոշ է նրանով, որ այնտեղ ձուլված են կապակցությունների և նախադասության ուսմունքները, թեև ոչ այն աստիճանի, ինչպես այդ առկա է ժամանակի և

նրանից հետո եղած նորմատիվ քերականության դասագրքերում։ Իբրև կապակցությունների ուսմունքի առկայության վկայություն կարելի է նշել, անունների (գոյական, ածական) խնդրառության քննությունը, որը նա տվել է բավական մանրամասնորեն։

Մալխասյանցը մասնավորապես ցույց է տալիս հայերենի խնդրառության մեջ օտարամուտ երևույթները։

Կապակցությունների ուսմունքը նոր դիրքերից պարզացվեց Մ. Աբեղյանի կողմից «Աշխարհաբարի շարահյուսություն» (Վաղարշապատ, 1912) գրքում։

Մ. Աբեղյանը, իբրև երիտքերականական դպրոցի ներկայացուցիչ, նոր առումով դրեց կապակցությունների ուսմունքի հարցը։

Երիտքերականները լեզվական հաղորդակցման պրոցեսը ներկայացնում էին իբրև պատկերացումների կապակցություն, որը խոսողի և լսողի մոտ նույն պրոցեսում է ձևավորվում։ Նախադասությունը հոգեբանական դատողության արտահայտություն է, որի ընթացքում մի պատկերացումը կապակցվում է մյուսի հետ։ Լեզվական ողջ պրոցեսն էլ կապակցությունների ձևավորման պրոցես է՝ սկսած երկու բառից մինչև բարդ նախադասություն։ Նախադասությունը (որը նա խոսք է անվանում) հոգեբանական դատողության (մտածության) արտահայտությունն է բառերով։ Ինչպես պատկերացումներն են զուգորդվում մտածություն կազմելով, այնպես էլ բառերն են զուգորդվում՝ նախադասություն կազմելու համար։ Շարահյուսությունը «բառերի, իբրև խոսքի մասերի, կապակցության ձևերի» ուսմունք է, լինի կապակցությունը բառաձևերով, թե ձևական բառերով և ուրիշ եղանակներով,— ինչպես և խոսքերի՝ միմյանց հետ կապակցության ուսմունք։

Աբեղյանը շարահյուսության մեջ ներկայացնում է ոչ միայն սոսկ շարահյուսական երևույթները, նախադասության կազմությունը և բառերի կապակցությունները, այլև առհասարակ ողջ ձևաբանությունը։ Ուստի և նրա ուսմունքի մեջ շարահյուսությունն ընդգրկում է այն, ինչ առհասարակ ընդունված է կոչել քերականություն, այսինքն՝ ձևաբանություն և շարահյուսություն։ Շարահյուսության սահմանների այս ընդլայնումը բխում է նրա սիստեմից. լեզուն կապակցությունների համակարգ է, իսկ կապակցությունները (լայն իմաստով) շարահյուսության ուսումնասիրության առարկան են։ Ստեղծելով քերականական յուրահատուկ տեսություն, որտեղ ավանդական ձևաբանական և շարահյուսական հասկացությունները միաձուլված են հանդես գալիս, Աբեղյանը լեզվական բոլոր երևույթները ենթարկեց իր կուռ համակարգին։ Աբեղ-

յանի քերականության մեջ ավանդական խոսքի մաս և նախադասության անդամ հասկացությունները նույնական են։ Աբեղյանի համակարգի հիմքում ընկած է կապակցությունների ուսմունքը, որը, սակայն, նույնական չէ ավանդական ուսմունքի հետ։ Տարբերությունն այն է, որ Աբեղյանի համակարգում քննվում է ամեն մի խոսքի մասի կապակցելիությունը այլ խոսքի մասերի հետ։

Բառերի կապակցությունները նա քննում է պարզ նախադասության կառուցվածքի մեջ (նախադասության ուսմունքն այսպիսով լուծվում է բառակապակցության ուսմունքի մեջ, իսկ վերջինս էլ ըստ էության վերածվում է նախադասության ուսմունքի)։

Բառերի շարահյուսությունն ընդգրկում է երկու ենթաբաժին. ա) բառերի պաշտոնը խոսքի (նախադասության) մեջ, որտեղ քննում է ըստ էության նախադասության անդամները, բ) բառերի կապակցությունը խոսքի (նախադասության) մեջ։

Բառերի հարաբերությունը խոսքի (նախադասության) մեջ (համապատասխանաբար և բաղադրիչ նախադասությունների հարաբերությունը բարդ նախադասության մեջ) Աբեղյանը 2 տեսակ է ընդունում՝ համադասական և ստորադասական, իսկ ստորադասական հարաբերությունը 2 տեսակ է՝ կախման հարաբերություն, որն անվանում է խնդրառություն կամ վարում, և ներունակության հարաբերություն։ Կախման հարաբերությունն արտահայտվում է. ա) հոլովներով, որն անմիջական կապակցություն է. բ) հոլովների հետ կապերով, որը միջական կապակցություն է։ Ներունակության հարաբերությունը դրսևորվում է իբրև բացահայտչի և բացահայտյալի, որոշչի և որոշյալի, ենթակայի և բայի կապակցություն։ Այդ հարաբերությունն արտահայտվում է հոլովներով և համաձայնությամբ։ Այսպիսով, ստորադասական հարաբերությունը բառերի միջև դրսևորվում է հոլովներով, կապերով և համաձայնությամբ։ Իբրև ստորադասական հարաբերության արտահայտման լրացուցիչ միջոց նշում է նաև շարադասությունը (որը վերաբերում է նաև համադասական կապակցությանը)։ Այսպիսով, բառերի կապակցության միջոցներն են հոլովները, կապերը, համաձայնությունը, շարադասությունը և համադասական շաղկապները։

Հենց այս միջոցների քննության էլ Աբեղյանը հատկացնում է իր «Աշխարհաբարի շարահյուսության» մեծ մասը։

Աբեղյանի կապակցությունների ուսմունքն ընդգրկում է և՛ նախադասությունը, և՛ բառակապակցությունը։ Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ բառակապակցությունը միասնական մեկ հասկացության դրսևորմանը ծառայող շարահյուսական միա-

վոր է, որին հատուկ է միայն ստորադասական հարաբերությունը, ապա պարզ կդառնա, որ համադասական հարաբերությունը ինչպես և ներունակության հարաբերությունը, ենթակայի և ստորոգյալի կապակցությունը դուրս են բառակապակցության սահմանից, դրանք բնորոշ են նախադասությանը։

Աբեղյանն ամենայն մանրամասնությամբ քննել է հայերենի հոլովների իմաստներն ու շարահյուսական կիրառությունը, ինչպես և կապերի իմաստային նշանակությունները։ Նա հոլովների իմաստներն ու կիրառությունները չի տարբերակում, ինչպես և տվյալ հոլովաձևի կիրառությունը այս կամ այն խոսքի մասի լրացման դերում չի սահմանազատում այլ խոսքի մասերի հետ կազմող կապակցություններից։ Բայի և ածականի, բայի և գոյականի, ածականի և գոյականի լրացումները նույն մակարդակով են քննվում։

Բառերի կապակցությունները Աբեղյանի շարահյուսության մեջ քննված են «Հոլովների նշանակությունը և կիրառությունը» և «Կապերի նշանակությունն ու կիրառությունը» գլուխներում։

Աբեղյանից հետո դպրոցական քերականության մեջ հոլովների և կապերի իմաստների ուսումնասիրությունը կայուն տեղ գրավեց։ Սակայն դպրոցական շարահյուսությունը հոլովների իմաստների և կապերի իմաստային նշանակությունների ուսումնասիրությունը տանում է նախադասության անդամների շարահյուսական դրսևորումները երևան հանելու ուղիով, և բառակապակցությունն, իբրև այդպիսին, դուրս է մնում շարահյուսական վերլուծության շրջանակից։

Հոլովների կիրառությունները և մի շարք իմաստներ, կապերի իմաստային նշանակությունները քննության առարկա են դարձել Վ. Առաքելյանի «Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները» (Երևան, 1957) գրքում։

Վ. Առաքելյանը դիտել է հոլովների բազմաթիվ իմաստներ ու իմաստային նրբերանգներ։

Կապերի իմաստների ու շարահյուսական դերի մեկնաբանությանն են նվիրված Ա. Մարգարյանի «Արդի հայերենի կապերը» (Երևան, 1955), Ս. Աբրահամյանի «Չթեքվող խոսքի մասերը հայերենում» (Երևան, 1959) գրքի մի հատվածը և այլ ուսումնասիրություններ։

Այսպիսով, հայ քերականագիտության մեջ բառերի կապակցությունների քննությունն սկիզբ առնելով լատինաբան հեղինակներից՝ հետագայում աստիճանաբար մոտեցավ նախադասության ան-

մունքին, այնուհետև տրամաբանական քերականության տիրապետության շրջանում անտեսվեց։ Մ. Աբեղյանի շնորհիվ այն մասամբ վերականգնվեց և մասամբ նոր սկզբնավորում ստացավ։

Բառակապակցության ուսմունքի բազմաթիվ տարրերն առանձին-առանձին ուսումնասիրված են հայ քերականագիտության մեջ, սակայն դրանց ամբողջությունը և տեսությունը վերջին շրջանում է հետազոտության նյութ դարձել։ Այս գործում անուրանալի դեր է կատարել բառակապակցությունների ուսմունքի այն մեկնաբանությունը, որը տրվել է սովետական ռուսագիտության մեջ։

3. ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բառակապակցության ըմբռնման հարցում երկու կարծիք կա։ Առաջինը Վ. Վ. Վինոգրադովի և նրա հետևորդների կարծիքն է, ըստ որի բառակապակցությունը շարահյուսական մի ամբողջություն է, առնվազն երկու բառի կապակցություն, որն արտահայտում է մի ամբողջական, թեև անդամազատ հասկացություն։ Հասկացությունները լինում են կայուն, ելակետային և անցողիկ, բաղադրյալ։ Կայուն, ելակետային հասկացությունները սովորաբար ունեն իրենց դրսևորման ստանդարտ ձևերը՝ իմաստալից բառերը (գոյական, ածական, բայ, մակբայ և այլն)։ Մինչդեռ անցողիկ հասկացությունները ծագում են խոսքի, հաղորդակցման պրոցեսում։ Ահա հենց այսպիսի հասկացություններն արտահայտելու համար էլ կազմվում են բառակապակցությունները։ Հասկացության անդամազատ լինելն էլ բնորոշ է բառակապակցությանը։ Դրանով էլ բառակապակցությունը տարբերվում է առանձին բառից։ Երկրորդը Ա. Ն. Գվոզդևի կարծիքն է, ըստ որի բառակապակցությունը անվանողական արժեքով օժտված միավոր չէ. այն արտահայտում է սոսկ երկու բառերի հարաբերություն, նախադասության մեջ։ «Իմաստով և քերականորեն միացած բառերը, որոնք արտահայտում են հասկացությունների հարաբերություններ, կոչվում են բառակապակցություններ»[1]։ Գվոզդևի բառակապակցություն տերմինը ստանում է սույուրյան շարույթի բովանդակություն (ոչ լիովին)։

Միասնական կարծիք չկա նաև բառակապակցությունների հիմնական տեսակների դասդասման հարցում։ Ֆորտունատովի ու-

[1] А. Н. Гвоздев, Современный русский литературный язык, II մաս, 1958, էջ 17։

մանքի ազդեցությամբ ոմանք բառակապակցությունները բաժանում են ստորոգումային և ոչ ստորոգումային տեսակների, ընդ որում ստորոգումային համարում են ենթակայի և ստորոգյալի կապակցությունը։ Սակայն բառակապակցության ստորոգումային կոչված տեսակն ըստ էության նախադասությունն է, որը չի կարելի մտցնել բառակապակցությունների մեջ։ Ռուս քերականագիտությունը, սկսած Շախմատովից, բառակապակցությունների քննարկման մեջ մտցնում է միայն նախադասությունից փոքր միավորը, որը հենց այսպես կոչված ոչ ստորոգումային բառակապակցությունն է։

Ի՞նչ փոխհարաբերության մեջ են բառակապակցությունն ու նախադասությունը, որո՞նք են բառակապակցության առանձնահատկությունները։

Նախադասությունը հաղորդակցական նվազագույն միավորն է, մինչդեռ բառակապակցությունն օժտված չէ հաղորդակցական դերով։ Բառակապակցությանը հատուկ չեն ստորոգումը, նախադասության հնչերանգը, հաղորդման բնույթի հետ կապված հատկանիշները։

Բառակապակցությունը սոսկ անվանողական դեր ունի և նախադասության մեջ ու նախադասության շնորհիվ է մտնում լեզվի հաղորդակցական-շարահյուսական միավորների շարքը։ Բառակապակցությունը մի կողմից անվանողական միավորների թվին է պատկանում (ըստ դերի հավասարվելով առանձին բառերին), իսկ մյուս կողմից այն, մանավորապես նրա որոշ տեսակները, հիմք են դառնում նախադասության կառուցման համար։ Այսպես, եթե բայի դերբայական ձևերով կազմված բառակապակցությունները (գիրք կարդալ, արագ քայլել, ընկերոջը հանդիպել և այլն), մի կողմից, անվանողական դեր ունեն, ապա մյուս կողմից, դրանք հիմք են դառնում նախադասության կառուցվածքի համար։

Բառակապակցությունը նախադասությունից դուրս էլ կարող է վերլուծվել։ Իբրև դրա ապացույց կարելի է նշել ոչ միայն անվանական, ածականական, մակբայական (մեծ տուն, երեխայի պես միամիտ, հողմից արագ և այլն), այլև բայական բառակապակցությունները, որոնք դիմավոր նախադասությունից դուրս էլ կարող են գործածվել։ Դրանք կարող են դառնալ վերնագրային-անվանողական կառուցվածքներ, և այս վերջին դեպքում էլ հնարավոր է տվյալ բառակապակցությունը վերլուծել այնպես, ինչպես դա վերլուծում ենք դիմավոր նախադասության մեջ։ Բառակապակցությունը և նախադասությունը գտնվում են

այնպիսի հարաբերության մեջ, ինչպես շինանյութն ու ամբողջական շենքը, ընդ որում նախադասության համար շինանյութ են նաև առանձին բառերը։ Հայտնի է, որ նախադասության մեջ բառերը գտնվում են չորս տեսակ հարաբերության մեջ՝ ստորոգումային, որոշչային, կոմպլետիվ (խնդրային և պարագայական) և համադասական։ Այս չորս կարգի հարաբերություններից երկուսը (ստորոգումային և համադասական) դուրս են բառակապակցություններից. դրանք կապակցում են նախադասության կազմիչները։ Բառակապակցությունների մեջ կազմիչների հարաբերությունները կարող են լինել որոշչային, խնդրային և պարագայական։ Այս պատճառով էլ ավելորդ է բառակապակցությունների բաժանումը ըստ հարաբերության համադասական և ստորադասական բնույթի։ Բառակապակցությունը կազմվում է ստորադասական հարաբերությամբ, որտեղ որևէ խոսքի մաս ստանում է լրացումներ։ Բառակապակցության մեջ առկա է միայն լրացյալի և լրացման հարաբերություն (չնչին բացառություններով)։

Նախադասության մեջ համադասական հարաբերությունից բացի կան նաև այլ կարգի հարաբերություններ, որոնք դուրս են բառակապակցության սահմաններից։ Հայտնի է, որ բաղադրյալ ստորոգյալը ևս շատ դեպքերում կարող է ստանալ բայի հատուկ լրացումներ։ Այս դրույթը մասնավորապես վերաբերում է հայերենին, որտեղ բաղադրյալ ստորոգյալը սովորաբար հանգույցով է լինում։ Բաղադրյալ ստորոգյալի լրացումները ըստ էության հանգույցի լրացումներ են, սակայն դրանք ինչ-որ չափով վերաբերում են նաև ստորոգելիական վերադրին։ Երբ ասում ենք, «Գրիգորը ընկեր է մեզ», ապա մեզ տրականով լրացումը վերաբերում է ոչ միայն է հանգույցին, այլև ընկեր ստորոգելիական վերադրին։ Այս երևույթը ցույց է տալիս, որ բերված նախադասության մեջ մեզ բառը բառակապակցություն չի կազմում ընկեր է ստորոգյալի հետ։

Բաղադրյալ ստորոգյալի և նրա լրացումների կապակցությունները բառակապակցություն չեն, քանի որ բաղադրյալ ստորոգյալը թեև շարահյուսորեն նախադասության մեկ անդամ է, սակայն մեկ հասկացություն չի արտահայտում, այլ՝ երկու։ Մյուս կողմից, հայտնի է, որ բառակապակցությունը կազմվում է որևէ լիիմաստ խոսքի մասի իմաստային ընդարձակումով տվյալ բառի շուրջը։ Իսկ բաղադրյալ ստորոգյալը երկու խոսքի մաս է, իսկ լրացումը վերաբերում է ստորոգելիական վերադրին և հանգույցին միասին, ուստի և լրացումը նրանցից որևէ մեկին չի պատկանում և նրա հետ բառակապակցություն կազմել չի կարող։

Նախադասության վերլուծությունը էապես տարբերվում է բառակապակցության վերլուծությունից։ Բառակապակցության մեջ չեն մտնում այնպիսի կարգեր, ինչպես ենթակա, ստորոգյալ, ստորոգելիական վերադիր, հանգույց, միավորյալ (համադաս) անդամներ և այլն։ Բառակապակցության վերլուծության ժամանակ բացահայտվում են սոսկ խոսքի մասերի լրացումները։ Բառակապակցությունը կազմվում է որևէ խոսքի մասի ընդարձակումով։ Վերլուծության ժամանակ բացահայտվող լրացումները վերաբերում են ոչ թե նախադասության որևէ անդամի, այլ տվյալ խոսքի մասին (գոյականին, բային և այլն)։ Մինչդեռ նախադասության վերլուծության ժամանակ լրացումները հանգեցվում են ոչ թե այս կամ այն խոսքի մասին, այլ նախադասության համապատասխան անդամներին (ենթակային, ստորոգյալին և այլն)։

Բառակապակցությունը երբեմն իր դերով հավասարվում է առանձին բառի, և այս դեպքում ամբողջ բառակապակցությունը նախադասության մեջ կատարում է մեկ անդամի պաշտոն։ Մասնավորապես այդպես են ածականի, մակբայի և այլ բառակապակցությունները։

Պետք է նշել նաև, որ բացահայտիչը, որն իր լրացյալից միշտ տրոհված է հանդես գալիս, նախադասության անդամ է, սակայն այն բառակապակցություն չի կազմում լրացյալի հետ։ Սրանում ևս դրսևորվում է նախադասության և բառակապակցության կառուցվածքների տարբերությունը։ Առավել հետաքրքրական են այնպիսի բառակապակցությունները, որոնք նախադասության մեջ են մտնում, սակայն քերականորեն չեն կապվում նախադասության անդամների հետ։ Դրանք են կոչականները, միջարկությունները և այլն, որոնք կարող են արտահայտվել ինչպես առանձին բառերով, այնպես էլ բառակապակցություններով։ Այդպիսի բառակապակցությունների վերլուծությունն անկախ է նախադասության վերլուծությունից։ Իսկ սա նշանակում է, որ բառակապակցությունն ու նախադասությունը և նրանց վերլուծությունը նույնական չեն։ Բազմաթիվ բառակապակցություններ պատմական զարգացման ընթացքում միտում ունեն վերածվելու բարդ բառի։ Ինչպես ցույց է տվել Մ. Աբեղյանը, կցական և հարադրական բարդ բառերն աստիճանաբար ձևավորվել են բառերի ազատ կապակցություններից։

Վ. Վինոգրադովը մշակել է բառակապակցություններից դարձվածաբանական միավորների և կայուն կապակցությունների առաջացման տեսությունը։ Հայերենի դարձվածաբանական միավորները ևս պատմականորեն հանգում են ազատ բառակապակցություննե-

րին։ Բառակապակցությունների բոլոր տեսակների քննարկման ժամանակ աշխատել ենք բացահայտել դարձվածաբանական միավորների, հարադրական բարդությունների կապը համապատասխան բառակապակցությունների հետ (ինչպես, եթե տվյալ հարադրությունը կամ դարձվածաբանական միավորի բաղադրիչների հարաբերությունները ենթարկվում են վերլուծության)։

Բառակապակցությունների ուսումնասիրության մեջ վեճի առարկա է դարձել նաև նրանց ծավալի հարցը։

Ռուսերենի քերականության մեջ առանձին աշխատություններ են նվիրված այս հարցին[1]։ Ոմանք հակված են բառակապակցությունը միայն երկանդամանի համարելու (Գվոզդև, Ռեֆորմատսկի և ուրիշներ)։ Շատերն էլ առաջարկում են ընդունել բառակապակցությունների 2 տեսակ՝ պարզ և բաղադրյալ։ Պարզ համարում են 2 լիիմաստ բառերից կազմվածները, որոնցից մեկը լրացյալն է, մյուսը՝ լրացումը, ընդ որում սրանք կարող են լինել և երկբառանի (высокий дом, книга студента, слушать лекцию, бегло читать), և երեքբառանի (человек высокого роста, юноша двадцати лет, принять участие в состязании, самая интересная книга). Բաղադրյալ համարում են այն բառակապակցությունները, որոնցում լրացյալն ստանում է ամբողջական բառակապակցությամբ արտահայտված լրացում (успех молодого писателя, мой старший брат)[2]։ Ոմանք էլ բացի պարզ և բաղադրյալ տեսակներից ընդունում են նաև համակցված (комбинированные) բառակապակցություններ։ Ընդ որում պարզ բառակապակցությունները ներկայացնում են երկանդամ (новый дом, город Москва, читать книгу, страсть к науке, сильнее смерти, ехать быстрее), եռանդամ (отдать книгу ученику, запретить детям шуметь, спасти жизнь бойцу, отдать часы починить, стоять один к одному), քառանդամ (перевести книгу с русского на английский, переслать письмо из главка в Министерство) ենթատեսակներով։ Բաղադրյալ համարում են այն բառակապակցությունները, որոնք կազմվում են նույն լրացյալի տարբեր կարգի լրացումներով (его первоочередное дело, новая квартира из двух комнат, теплое осеннее пальто, хорошие результаты поездки, заплатить мастеру за работу, взять камень из кучи, писать карандашом на открытке, ехать от Москвы до Ленин-

---

[1] Н. Н. Прокопович, К вопросу о простых и сложных словосочетаниях («Вопросы языкознания», 1959, № 5).

[2] Н. С. Валгина, Д. Э. Розенталь, М. И. Фомина, В. В. Цапукевич. Современный русский язык, М., 1971, էջ 301—313։

града, сидеть в комнате в шляпе, удариться головой о камень): *Համակցված են համարում այն բառակապակցությունները, որոնք կազմվում են երկու կամ ավելի պարզ կամ բաղադրյալ բառակապակցություններից* (удобный для работы стол, хороший друг моего отца, безусловно верить в полную победу над врагом, послать дочь учиться петь, человек под фамилией Орлов, мальчики один другого способнее, судья республиканской категории, любовь с первого взгляда, карта в крупном масштабе)[1].

Սակայն բառակապակցությունների ծավալի հարցը այստեղ առանձին չենք քննում այն պատճառով, որ մեր նպատակն է բացահայտել բառակապակցության գլխավոր և կախյալ բաղադրիչների (լրացյալի և լրացման) հարաբերությունը։ Իսկ այդ նպատակին հասնելու գործում բառակապակցության ծավալի հարցը սկզբունքային նշանակություն չունի։ Հայերենի բառակապակցությունների ծավալի հարցը կարող է դառնալ առանձին ուսումնասիրության առարկա։

Բառակապակցության մեջ սպասարկու բառերի (կապ, նախդիր) դերը դարձյալ նույնն է, ինչ որ նախադասության մեջ։ Այստեղ ևս սպասարկու բառերն օժտված են սոսկ շարահյուսական-իմաստային հարաբերություն արտահայտելու հատկությամբ, և նրանց մասնակցությունը չի փոխում բառակապակցության երկանդամանի բնույթը։ Այսպես, խոսել ընկերոջ մասին, ներկայանալ ըստ հերթականության *երկանդամանի բառակապակցություն են, թեև երեքական բառից են կազմված։ Սպասարկու բառի և լիիմաստ բառի կապակցությունը բառակապակցություն չէ։*

Բառակապակցությունները կազմվում են ստորադասական հարաբերությամբ։ Այդ նշանակում է, որ բաղադրիչները լինում են գլխավոր և կախյալ, լրացյալ և լրացում։ Լրացում ստանալը պայմանավորված է գլխավոր բառի (լրացյալի) բառային իմաստով և ձևաբանական առանձնահատկություններով։ Այսպես, ներգործական սեռի բայերի իմաստի ամբողջականացման պահանջով դրվում են ուղիղ խնդիրները. օրինակ՝ ջարդել *(ի՞նչ)*— փայտ, ճար, սպանել (ո՞ւմ)-թշնամուն, հրավիրել (ո՞ւմ)-ընկերոջը *և այլն։ Ասացական, իմացական, զգայական բայերին հատուկ է վերաբերության խնդիր լրացումը* (խոսել ընկերոջ մասին, իմանալ մեկի

---

[1] «Грамматика современного русского литературного языка» (под редакцией Н. Ю. Шведовой), изд. «Наука», 1970, *էջ 536—540*։

մասին և այլն)։ Բազմաթիվ ածականների, գոյականների՝ լրացում ստանալու հատկությունը պայմանավորված է նրանց բառային իմաստներով։ Այսպես, հայտնի է, որ լի (լիքը), զուրկ, հղի և այլ բառերի իմաստի լրիվությունը պահանջում է համապատասխան լրացումներ (ջրով լի, գինով լիքը, շնորհից զուրկ և այլն)։

Լրացյալի իմաստային հատկանիշով պայմանավորված լինելով է բացատրվում այն երևույթը, որ նույնարմատ բայը և ածականը, ածականը և գոյականը, գոյականը և բայը կարող են ստանալ նույն տիպի լրացումներ։ Օրինակ՝ զրուցել ապագայի մասին, զրույց ապագայի մասին, զրկել մի բանից, զուրկ մի բանից և այլն։

Լրացումների բառային իմաստը ևս նշանակություն ունի տվյալ տեսակի բառակապակցությունների կազմության մեջ։ Մի շարք դեպքերում լրացյալի հետ կապակցվում են միայն որոշակի իմաստային խմբին պատկանող բառեր։ Բառակապակցությունների կազմության օրինաչափությունները հիմնականում պայմանավորված են լրացյալների խոսքի մասային պատկանելությամբ։ Բառակապակցության մեջ լրացումները պայմանավորված են լրացյալով, իբրև համապատասխան խոսքի մասով, իսկ նախադասության մեջ լրացումները վերաբերում են արդեն նախադասության համապատասխան անդամին։ Շատ դեպքերում և՛ բառակապակցության, և՛ նախադասության մեջ համապատասխան լրացումը վերաբերում է միշտ նույն խոսքի մասին, որը նախադասության մեջ որոշակի պաշտոններ է կատարում։ Այսպես, խնդիրները և պարագաները վերաբերում են բային, որը նախադասության մեջ կարող է լինել ստորոգյալ կամ այլ անդամ։ Կան դեպքեր էլ, երբ համապատասխան լրացումը պայմանավորված է ոչ թե լրացյալով, իբրև խոսքի մասով, այլ նախադասության անդամով։

Բառակապակցությունները կազմվում են այս կամ այն խոսքի մասի համակարգի մեջ մտնող բառերի շուրջը՝ նրանց իմաստային և քերականական ընդարձակումով։ Ուստի բառակապակցությունները խմբավորվում են լրացյալի խոսքի մասային պատկանելության հիմունքով։ Հայերենում լրացումներ կարող են ունենալ գոյականը, ածականը, բայը, մակբայը, հազվադեպ և թվականը։ Դերանունների մի մասը ևս հազվադեպ կապակցություն են կազմում։ Ըստ այդմ էլ հայերենում տարբերակում ենք գոյականի, ածականի, բայի, մակբայի, թվականի, դերանվան բառակապակցությունները։

Սակայն այս դասակարգումը թերի կլինի, եթե նկատի չունենանք լրացումների խոսքի մասային հատկանիշը։ Գոյականը լրա-

ցումներ է ստանում տարբեր խոսքի մասերով ու նրանց տարբեր ձևերով։ Ըստ այսմ էլ տարբերակում ենք գոյականի բառակապակցությունները. ա) գոյական լրացումով (գոյականի ուղղական հոլովով, սեռական հոլովով, մյուս թեք հոլովներով), բ) կապերով ու կապի խնդիրներով, գ) ածականով, դ) թվականով, ե) դերբայներով, զ) մակբայով և այլն։ Բայական բառակապակցությունները լինում են՝ ա) գոյականով և հոլովվող այլ բառերով (տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական հոլովներով առանձին-առանձին, բ) կապերով և կապի խնդիրներով, գ) մակբայով, դ) ածականով, ե) դերբայներով։ Այսպես դասակարգվում են նաև մյուս տեսակների բառակապակցությունները։

Բառակապակցությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հաճախ տարբեր տիպի կապակցությունների միջև երևան է գալիս շարահյուսական համանշության երևույթ։ Շարահյուսական համանշությունը, որին բազմիցս անդրադարձել են մեր անցյալի քերականները, և որը ուշադրության առարկա է դարձել վերջին շրջանում սովետական լեզվաբանության մեջ, արտահայտվում է ինչպես նախադասության կառուցվածքի զանազան ձևերի, այնպես էլ բառակապակցությունների մեջ[1]։ Շարահյուսական համանշությունն այն երևույթն է, երբ շարահյուսական-իմաստային նույն հարաբերությունն արտահայտվում է տարբեր կառուցվածքներով։

---

[1] Տե՛ս В. П. Сухотин, «Из материалов по синтаксической синонимике в русском языке» («Исследования по синтаксису русского литературного языка», изд. АН СССР, 1956, Москва), И. Н. Ковтунова, «О синтаксической синонимике» («Вопросы культуры речи», 1955, вып. 1, АН СССР).

Շարահյուսական հոմանշությունը առանձնապես լուրջ քննարկման առարկա է դարձել Մ. Ն. Պետերսոնի «Лекции по современному русск. лит. языку» (Մոսկվա, 1941) գրքում։ Այստեղ հեղինակը զուգահեռներ է անցկացնում գոյականի սեռական հոլովաձևի և ածականների արտահայտած շարահյուսական իմաստների միջև (Հմմտ. житель деревни և деревенский житель, кабинет графа և графский кабинет, командир полка և полковой командир, достоинство человека և человеческое достоинство), նախդիրով սեռականի և ածականի միջև (бюст из мрамора և мраморный бюст, солдат в отставке և отставной солдат, жизнь без заботы և беззаботная жизнь), նախդիրով տրականի և մակբայի միջև с нетерпением և нетерпеливо, без церемонии և бесцеремонно): Սակայն Պետերսոնը նշելով շարահյուսական համանիշները՝ ցույց չի տալիս, թե ի՛նչ տարբերություն կա նույն իմաստի արտահայտման տեսակետից տարբեր կառուցվածքների միջև։ Շարահյուսական համանշության արձանագրումը բավական չէ. պետք է բացահայտել համանիշ միավորներից յուրաքանչյուրի իմաստային և կիրառական առանձնահատկությունները։

Բառակապակցությունները ամենից շատ հնարավորություն ունեն շարահյուսական համանիշների դրսևորման համար։ Ընդ որում պետք է նկատի ունենալ, որ շարահյուսական համանշությունը կարող է լինել կամ նույնանշություն (ինչպես բառերի մեջ էլ տարբերում ենք նույնանիշ և համանիշ բառերը), կամ համանշություն։ Շարահյուսական նույնանշությունը (հարաբերության բացարձակ նույնությունը) հազվադեպ երևույթ է. օրինակ՝ խոսել գործից *և* խոսել գործի մասին: *Բավական շատ տարածված է շարահյուսական այն համանշությունը, որի դեպքում համանիշ բառակապակցություններում դրսևորվում են փոքր-ինչ նրբերանգով տարբերվող կապակցվածքներ։ Օրինակ՝* մեկին հանել *և* մեկի համար հանել, գնալ դեպի տուն *և* գնալ տուն, ընկերների հետ գնալ *և* ընկերներով գնալ:

Աշխատության մեջ ըստ հնարավորին ցույց են տրված շարահյուսական համանշության երևույթները՝ համապատասխան բառակապակցությունների բաժնում։ Այսպես, ածականի բառակապակցությունների քննարկման մասում կապով լրացումների և առանց կապի լրացումների միջև եղած համանշությունը նշված է համապատասխան տեղերում[1]։

1 Այս հարցին է նվիրված Ն. Պառնասյանի «Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում» (1970) աշխատությունը, որտեղ չի հիշատակված մեր ուսումնասիրությունը, որի առանձին մասեր հրատարակվել են իբրև հոդվածներ (տե՛ս «Մակբայի բառակապակցությունները ժամանակակից հայերենում» (Խ. Աբովյանի անվան մանկ. ինստիտուտի գիտ. աշխատությունների ժողովածու, 1961, № 8), «Ածականի բառակապակցությունները ժամանակակից հայերենում» («Պատմա-բանասիրական հանդես», 1962, № 2), «Գոյականի լրացումները սեռական հոլովով» (Խ. Աբովյանի անվ. մանկ. ինստիտուտի «Գիտական աշխատություններ, հայոց լեզվի բաժին», 1965, № 1), «Ժամանակակից հայերենի բառակապակցությունները» (Խ. Աբովյանի անվ. մանկ. ինստիտուտի «Գիտական աշխատություններ, հայոց լեզվի բաժին», 1967, № 2) և այլն)։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԳՈՅԱԿԱՆԻ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժամանակակից հայերենում գոյականը լրացումներ է ստանում գոյականի ուղղական, սեռական, մասամբ և մյուս թեք հոլովներով, ածականով, թվականով, դերբայներով, մասամբ մակբայով, ինչպես և կապով ու կապի խնդրով։ Գոյականի բառակապակցությունները ըստ լրացման ձևի լինում են յոթ տեսակ։ Դրանք են՝ ա) գոյականի լրացումը ուղղական հոլովով, բ) գոյականի լրացումները սեռական հոլովով, գ) գոյականի լրացումները մյուս թեք հոլովներով, դ) գոյականի լրացումը ածականով, ե) գոյականի լրացումը թվականով, զ) գոյականի լրացումը դերբայներով, է) գոյականի լրացումը մակբայով։

1. ԳՈՅԱԿԱՆԻ ԼՐԱՑՈՒՄԸ ՈՒՂՂԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ

Ժամանակակից հայերենում շատ է տարածված լրացումների այս տեսակը։

Ուղղական լրացումով բառակապակցությունները երկու կարգի են։ Մի դեպքում լրացումն արտահայտում է լրացյալի հատկանիշը իր բուն նշանակությամբ, իսկ երկրորդ դեպքում՝ փոխաբերական կիրառությամբ։

Ինչպես արդեն դիտվել է, ուղղականով գոյականը կարող է որոշիչ դառնալ մի շարք դեպքերում[1]*։ Գրաբարից եկող գործածությունն այն է, երբ հատուկ անունը դառնում է զբաղմունք, կոչում, պաշտոն ցույց տվող հասարակ անվան որոշիչ*[2]*։*

---

1 Տե՛ս Վ. Առաքելյան, *Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957, էջ 19—20։*

2 *Նույն տեղում։*

Այս գործածությունը թեև ժամանակակից հայերենում լայնորեն չի տարածված, սակայն հանդիպում է մասնավորապես պատմագեղարվեստական գրականության մեջ, ինչպես նաև բարբառային կնիք կրող ստեղծագործություններում։

Այսպիսի կապակցություններից կարելի է նշել Արշակ թագավոր, Շապուհ արքա, Վասակ սպարապետ, Թաթուլ իշխան, Հերակլ արքա, Եփրեմ եպիսկոպոս, Կարապետ աղա, Պողոս վարժապետ *և այլն։*

«*Բազմել էր* Հերակլ արքան՝ *բռնած մի գինու եղջյուր*» (*ԳՍԲ, 305*)։ «*Հյուր եղավ ծեր Մամիկոնյան իշխանին բյուզանդական* Կոստանդիանոս կայսրը *մեծ*» (*ԳՍԲ, 312*)։ «*Ասաց* Հովհան նախարարապետը *խոնարհ*» (*ԳՍԲ, 313*)։ «*Մխիթարը կանչեց տանուտեր Թուրինջին ու* Թովմա տանուտերին» (*ՍԽՄԽ, 40*), «*Երազ է տեսնում* Թաթուլ իշխանը» (*ՀԹ, Զ, 141*)։

Այս կապակցությունները շրջելի են, այսինքն հնարավոր է փոխել լրացման և լրացյալի տեղերը, որպեսզի փոխվի նրանց հարաբերությունը։

Ժամանակակից հայերենում սրանց փոխարեն գործածվում են հենց այդ «շրջված» տիպի կապակցությունները (սպարապետ Վասակ, գրբաց Գրիգոր, վարժապետ Սողո)։

Համեմատաբար շատ են հանդիպում այն կապակցությունները, որոնցում լրացյալ լինում են ազգակցական հարաբերություն արտահայտող գոյականները, ինչպես՝ Լենին քեռի, Բաղդասար պապ, Մարիամ քույրիկ, Բարսեղ հորեղբայր, Հարությունյան ամուսիններ, Թամար մայրիկ *և այլն։*

«*Եվ նա գիտե արդեն* Լենին քեռուն (*Զ, 354*), «Միայն Հարությունյան ամուսինները *շրջում էին գրեթե տխուր ու լուռ*» (*ՆԴ, Զ,71*)։ «Բարսեղ հորեղբայրը *չէր շտապում*» (*ՍՍԾ, 12*), «*Միջահասակ էր* Մարգար հայրիկը» (*ՌՍՌԵ, 7*)։ «Մարիամ քույրիկն *էլ է այսպես հիասթափվել*» (*ՍԽՀ, 151*), «Բաղդասար պապը *նստեց թիկն տված տեղը*» (*ՍԽՀ, 461*)։

Կապակցությունների այս տեսակը բարբառներից է թափանցել գրական լեզու և ըստ էության ունի զարգացման հեռանկար։

Անձի հատուկ անունը կարող է դրվել նաև այլ իմաստ ունեցող գոյականների վրա, ինչպես՝ անուն, մականուն *և այլն։*

«*Ամբողջ թաղը* Հոպոպ մականունով *էր կնքել զինագործ Աստատուրին*» (*ՆԴ, 1, 57*)։ «*Շատ տարիներ առաջ՝ հին Հայաստանում* Տորք-Անգեղ անվամբ *մի մարդ էր կենում*» (*ԴՍ, 371*)։

Անշուշտ սրանց են մոտենում այն դեպքերը, երբ անձի կամ

այլ կարգի հատուկ անունը դառնում է հասարակ անվան լրացում՝ միջբերման, վերադրման կարգով։ Այսպիսի կապակցությունների համար սահմանափակում չկա։ Այսպես կարելի է ասել «Ալիմյան տուն», «Սևան» ընկերություն», «Երևան» օրաթերթ», «Հայաստան» ակումբ», «Ավրորա» նավ և այլն։

Անձի հատուկ անունը դեռևս գրաբարում կարող էր դառնալ գոյականաբար գործածված ածականի կամ թվականի որոշիչ լրացում (Տիգրան Մեծ, Արշակ Երկրորդ)։

Այս կարգի կապակցությունները գործածված են ժամանակակից հայերենում։ Դրանցից կարելի է նշել՝ Հովակիմ սրբազան, Դավիթ Բեկ, Ներսես Մեծ, Խոսրով Երրորդ, Արա Գեղեցիկ, Շապուհ Առաջին, Աշոտ Երկրորդ և այլն։

Սակայն արդի ընկալմամբ լրացում է դիտվում հատուկ անունը։ Իսկապես ասած, այժմ այդ կապակցությունները բաղադրյալ անուն են դարձել։ Դրանք մոտավորապես նույն արժեքն ունեն, ինչ որ անուն ազգանուն կապակցություններն են (Վահրամ Փափազյան, Հակոբ Պարոնյան, Տիգրան Պետրոսյան և այլն)։

«Էս որ պատահեց, մեր Դավիթ Բեկն Մի մանուկ էր դեռ յոթ-ութ տարեկան» (ՀԹ, Զ, 99)։ «Համ՝ ասացին Սողո Ջոռբան Տանն է պահում իր սերմացուն» (ՆԶՄ, 334)։ «Միայն հիմա մեր Հովակիմ սրբազանն իրեն կուտի» (ՍԽՄԽ, 550)։

Գրաբարից է գալիս նաև կապակցությունների այն տեսակը, որի մեջ լրացում են դառնում աշխարհագրական կամ այլ կարգի (ամսանուն, երևույթի անուն և այլն) հատուկ անունները, իսկ լրացյալ՝ հասարակ անունը։ Այսպես կազմվում են՝ Արարատ լեռ, Երևան քաղաք, Արաքս գետ, Հայաստան աշխարհ, Թմուկ բերդ, Ուրմիա լիճ, Արամազդ լեռ, Այղր լիճ, Օշական գյուղ և այլն։

«Նաիրի երկրից—իմ ողջույնը ձեզ» (Զ, 268)։ «Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սարն եմ սիրում» (Զ, 78)։ «Ցնծա, բյուր վիշապ Հայաստան աշխարհ, փրկության արև Վահագնիդ տեսար» (ՀՀ, 140)։ «Հայոց նախագահ իշխանության նըստավայր Հալիձոր բերդաքաղաքը ցնծության մեջ էր «(ՍԽՄԽ, 241)։ «Իմ մարդիկ քեզ կուղեկցեն մինչև Արաքսի Խուդափիրին կամուրջը» (ՍԽՄԽ, 260)։ «Սպարապետի գունդը մտավ Արցախի Խաչեն գավառը» (ՍԽՄԽ, 273)։ «Իջել, փարվել եմ Գյազբել սարին» (ՀՍՀԵՄ, 415)։ «Դեկտեմբեր ամսի ցուրտ օրերից մեկն էր» (Մուր., 1, 7)։

Այս տեսակի կապակցությունները կարող են դիտվել նաև իբրև բաղադրյալ անուն։ Այսպես, օրինակ, երբ ասում ենք Աստաֆյան

փողոց, Թիֆլիս քաղաք, Արաքս գետ և այլն, ապա դրանք համարյա այլևս իբրև բառակապակցություն չենք ընկալում, այլ հարադրական բարդության նման մի բան։ Եվ պատահական չէ, որ նման կապակցություններից կազմվում են բարդ անուններ՝ կապակցության լրացյալի և լրացման միացմամբ։ Այդպես են կազմվել Անի-պեմզա, Արթիկ-տուֆ, Սպիտակավան, Ագարակավան[1], Թորոսգյուղ, Աթարբեկյանգէս, Սևանգէս և այլն։

Վերևում նշեցինք, որ հատուկ անունները դրվում են կոչում, տիտղոս, զբաղմունք նշող գոյականների վրա, ընդ որում այդպիսի կապակցությունները շրջելի են։

Ժամանակակից հայերենում չափազանց լայն տարածում են գտնում հենց այս տիպի կազմությունները։ Սովորաբար կոչում, տիտղոս, զբաղմունք և այլ կարգի առարկայացած հատկանիշ ցույց տվող բառերը ուղղական հոլովով դրվում են գոյականի (կամ գոյականաբար գործածված բառերի) վրա՝ դառնալով որոշիչ։ Այստեղ առաջին հերթին պետք է նշել այն դեպքերը, երբ հասարակ անունը (հիշյալ իմաստներից մեկն ու մեկը ունեցող) դառնում է անձի հատուկ անվան որոշիչ։

«Չոբան Կարոն սարերի Մի հովիվ էր վիթխարի» (ՀԹ, Չ, 9)։ «Նստած է խանութպան Համոն» (Չ, 293)։ «Նա է շունչ, հոգին իշխան Թաթուլի» (ՀԹ, Չ, 137)։ «Մերունին ասել էր, ծխական քահանա Տեր-Սիմոնն արձանագրել» (Շիրվ., 3, 20)։ «Նախագահ Բագրատը մռայլ էր ու նյարդային» (ՎԱՍԱ, 310)։ «Բրուտ Մանասարը պատերազմի առաջին օրվանից սկսած ճանապարհ էր դրել կավի գնացածներին» (ՍխՀ, 77)։ «Կանգնել էր վարժապետ Սողոն» (Չ, 235)։ «Ո՞վ չէր ճանաչում կալվածատեր և հանքատեր Մարկոս Ալիմյանին» (Շիրվ., 3, 7)։

Նույն ձևով հատուկ անվան որոշիչ կարող են դառնալ ազգակցական հարաբերություն, մարդկային փոխհարաբերություն արտահայտող գոյականները։

«Միսակյանը Գարեգինին հայտնեց, որ իր եղբայր Համբարձումն է» (ՍխՀ, 14)։ «Իմ ընկեր Նեսոն» (ՀԹ, 1, 409)։ «Երեխան նման էր իր մորեղբայր Մարտիրոս Հախվերդյանին» (Շիրվ., 3, 435)։ «Աշոտի հայր Արամը և մի քանի ուրիշները երբեմն որսի ազարտով բռնված՝ մտնում էին այդ ահալի ու անիծված ձորը» (ՎԱՀԳ, 193)։

---

[1] Սրանք չպետք է շփոթել իսկական բարդ բառի հետ, ինչպես՝ Ստեփանավան, Հանրավան և այլն, որոնցում ա հոդակապ չի դրված։

Նույն իմաստ ունեցող հասարակ անունները փոխաբերաբար դառնում են նաև աշխարհագրական հատուկ անունների որոշիչ։ Այսպես են կազմվում մայր Հայաստան,—Արաքս,—Մոսկվա, հայր Մասիս և այլն։

«Հիշեք ձեր Մայր Հայաստանի լուսախորհուրդ ուղին» (ՆԶՄ, 449)։ «Քայլում էր մահը դեպի մայր Մոսկվան (ՆԶՄ, 177)։ «Մայր Արաքսի ափերով Քայլամոլոր գնում եմ» (Ռ. Պատկանյան)։

Կոչում, զբաղմունք, պաշտոն նշանակող հասարակ անունների ուղղականը կարող է որոշիչ լինել ոչ միայն անձի հատուկ, այլև հասարակ անունների համար։ Այսպիսի կապակցությունները ևս հաճախակի են գործածվում։ Դրանցից կարելի է նշել՝ բանվոր մարդ, գեղջուկ մարդ, կոշկակար տղա, զինվոր եղբայր, որսկան եղբայր, ուսուցիչ ընկեր, տրակտորիստ հայր և այլն[1]։

«Ճարտարապետ որդի ունեմ (ԳՍԲ, 153)։ «Գյուղն էին իջել հովիվ պատանիք» (ՀԹ, Զ, 55)։ «Վարժ ու հմուտ վարպետներ, նոր հանճարներ անանուն Վառ ու անմար են պահել մեր քերթությունն հավիտյան» (Զ. 181)։ «Գործարանի մշուշից բանվոր մարդիկ գնացին» (Զ, 264)։

Այսպիսի կազմություն ունեն անվանողական որոշ դարձվածքներ, ինչպես՝ բանվոր դաս, բանվոր դասակարգ: «Որ ղեկավարն է բանվոր դասի» (Զ, 354)։ «Ելիր բողոքիր, բանվոր դասակարգ» (Զ, 354)։

Հասարակ գոյականի լրացում կարող են դառնալ նաև սեռ, ազգակցություն, մարդկային փոխհարաբերություն ցույց տվող գոյականների ուղղական հոլովաձևերը։ Ընդ որում լրացյալ լինում են առաջին հերթին հասարակ, ապա և հատուկ անունները։ Դրանցից կարելի է նշել ախպեր տղերք, մայր սագ, քուրդ հովիվ, տղամարդ տղա,—ընկեր,—հարևան, ընկեր տղա,—նախագահ (կոչական կապակցությունների մեջ այս տիպը չափազանց շատ է գործածվում), հարևան կոշկակար,—Գրիգորը և այլն։

«Ու էն հարսանքից թշնամի դարձան Ախպեր տղերքը էս դեպքի համար» (ՀԹ, Զ, 59)։ «Մայր սագը այդ ամբողջ «շինանյութը» փշրել, կույտ էր դարձրել» (ՎԱՍԱ, 54)։ «Զղջնանում էր, որ կողքի տղամարդ հարևանը շարունակ ոլորում էր ձեռքի ծրագիրը» (ՍԶ, 5, 164)։ «Գնամ ու քնեմ, ընկեր հերթապահ» «ՀՍՀԵՄ, 381),

Նույն իմաստ ունեցող գոյականների ուղղականը կարող է նաև փոխաբերաբար գործածվել իբրև գոյականի լրացում։ Այս

---

1 Այս կարգի գոյականների մի մասը հնում ածական է եղել և հետագայում գոյականաբար գործածվելով է վերածվել գոյականի։

ձևով լինում են առյուծ որդի, մայր ցամաք,—անտառ,—աշտարակ և այլն։

«Մայր աշտարակի վրա, դետքում կանգնած զինվորներն ուշադիր հետևում էին ճանապարհի անցուդարձին» (ՍԽՄԽ, 180)։ «Երկինքն է հիշում իր գլխի վերև Եվ իր մայր անտառն ասեղնատերև» (ՀՍՀԵՄ, 369)։ Սրանցից մայր ցամաք դարձել է անվանողական դարձվածք, որը շատ դեպքերում միասին գրվելով վերածվում է բարդության (մայրցամաք) և որպես այդպիսին ածանց ստանում (մայրցամաքային, միջմայրցամաքային և այլն)։ Նույն կազմությունն ունի նաև Ս. Վահունու հայտնի ընկեր դանիլին կապակցությունը, որն արդեն թևավոր արտահայտության արժեք է ստանում։ «Սուրեն Վահունին՝ ամենքին հայտնի «Ընկեր դանիլը» ինձնից է թռցրել» (ՀՍՀԵՄ, 399)։

Ուղղականով որոշիչ է լինում նաև տեղացիություն նշող գոյականների ուղղականը՝ գրվելով ինչպես հատուկ, այնպես էլ հասարակ անունների վրա։

«Ես եմ՝ նաիրցի մի հսկա պոետ» (Չ, 266)։ «Դավառցի պատանի կար մի խեղճ» (Չ, 431)։ Գրաբարում այս հարաբերությունն արտահայտելու համար հատուկ անունն էր դառնում տեղացիություն նշանակող գոյականի լրացում, այսինքն կապակցությունը շրջված էր (հմմտ. Եզնիկ Կողբացի, Հովսեփ Պաղնացի, Ղազար Փարպեցի և այլն)։

Գրաբարյան կառուցվածք ունեցող մի շարք կապակցություններ վերածվել են բաղադրյալ հատուկ անվան և գործածական են նաև արդի գրական լեզվում, ինչպես՝ Ալեքսանդր Մակեդոնացի, Մովսես Խորենացի, Բարսեղ Կեսարացի, Կիրակոս Գանձակեցի, Համամ Արևելցի և այլն (թեև մի շարք կապակցություններ ուղղակի գրաբարից չեն գալիս, այլ գրաբարակերպ են կազմված, ինչպես Դոնկիխոտ Լամանչացի, Երազմ Ռոտերդամցի և այլն)[1]։

Առանձին պետք է նշել այն կապակցությունները, որոնցում լրացում է դառնում ազգային պատկանելություն, ազգություն ցույց տվող գոյականների ուղղականը։

Այս տիպի կապակցությունները ևս գործուն են ժամանակակից հայերենում։ Դրանցից կարելի է նշել հայ մարտիկ, ռուս զինվոր, թուրք ենիչերի, արաբ երգիչ, վրացի գուսան[2], պարսիկ գյու-

---

[1] Երկտասարդ ստեղծագործողներից մեկը գրական անուն է ընտրել Սիրատ Սեֆաբեցի։

[2] Արդի լեզվամտածողությամբ վրացի դիտվում է իբրև ցեղանուն, ազգ և ոչ թե տեղը նշող գոյական, այսինքն վրացի ձևը հավասար արժեք չունի վրաստանցի ձևի հետ։

ղացի, քուրդ հովիվ, ասորի կրոնավոր, հրեա առևտրական, հույն ձկնորս, լեհ դերասան, լատիշ հրաձիգ, չին գյուղացի, հնդիկ զինվոր *և այլն։*

«Հայ մայրիկի *աչքեր Այրված լռիկ լացից*» *(ՄՄԼ, 35)։* «*Սաբերի սիրահար* է քուրդ հովիվը» *(ՎԱՀԳ, 435)։* «Թե հայ *բնավեր* շինականը *ծեր Ինչպես է արնոտ հողը հարդարել*» *(ՄՄԼ, 11)։*

Ուղղական լրացումով կապակցությունների մեջ յուրահատուկ տեղ ունեն այն կազմությունները, որոնցում լրացումը մի տեսակ շրջված ստորոգելիական վերադիր է հիշեցնում։ Եթե նախորդ խմբերի կապակցություններում լրացումը իր իմաստով այս կամ այն չափով համապատասխանում էր գոյականի հատկանիշն արտահայտելուն, ապա այստեղ լրացումը հատկանիշ արտահայտում է սոսկ իր որոշիչ ֆունկցիայի պահանջով, ոչ թե իր բառային բուն իմաստով, այլ շարահյուսական դերով։ Սա ֆունկցիոնալ որոշիչ լրացում է, եթե կարելի է այսպես արտահայտվել, կամ դրությամբ միայն որոշիչ, ինչպես կասեր Մ. Աբեղյանը։

Ի տարբերություն մյուս կապակցությունների, սրանք կազմավորվում են միայն նախադասության մեջ, իսկ նախադասությունից դուրս անվանողական դեր չունեն։ Այսպես, եթե նախադասությունից դուրս կարելի է ասել ուսուցիչ Գրիգոր, բանվոր եղբայր, Վարդան զորավար *և այլն և հասկանալ որոշակի անձ (տվյալ դեպքում), ապա* բաժին ընթրիք, երկիր Հայաստան *և այլն անվանողական արժեք չունեն, այդպիսի նշանակություն են ձեռք բերում և հասկանալի են դառնում միայն նախադասության մեջ։*

«*Սեղանի վրա, ինչպես միշտ, դրված կլինի իր* բաժին ընթրիքը *(ՍԶ„5,103)։* «*Գիր չէր ունենա՝ Մեսրոպյան ոսկյա Տառերի* Երկիր Հայաստանս» *(ՀՍՀԵՄ, 87)։* «*Վայրի ցեղերին կուլ կգնար Դարերի* Երկիր Հայաստանս» *(ՀՍՀԵՄ, 87)։* «*Արև է տանում աշխարհներին, Արևի* Երկիր Հայաստանս» *(ՀՍՀԵՄ, 88)։* «*Տարբեր արհեստի և ըմբռնումի* տեր մարդիկ *էին Արմենակի ունկնդիրները*» *(ՌԱԶ, 89)։ Ինչպես երևում է բերված օրինակներից, այս կապակցությունների լրացումները սովորաբար իրենց հերթին ունենում են որևէ լրացում, իսկ այդ նշանակում է, որ քննարկվող կապակցությունները երեք բառից են կազմված։ Լրացումն այստեղ բաղադրյալ է, չի կարող տրոհվել բաղադրիչների՝ առանց այդ կապակցության իմաստի խաթարման։*

Իմաստով սրանց մոտ են, սակայն էապես տարբերվում են այն կապակցությունները, որոնցում լրացումն ու լրացյալը մի տեսակ հավասարարժեք են։ Դրանցից են՝ դիվան սենյակ, քարտուղար օգ-

ճակատ, լսարան կաբինետ և այլն, որոնք ըստ էության նույնանում են հարադրական բարդություններին (ակումբ-գրադարան, խրճիթ-ընթերցարան, կինո-թատրոն և այլն)։ Այդ դեպքում բաղադրիչների միջև գծիկ է դրվում։ Ինչպես ասած, դժվար է տվյալ կապակցությունները անջատել հարադրական բարդություններից։ Դրա պատճառը մի կողմից այդ կապակցությունների՝ բարդ բառ դառնալու պրոցեսում գտնվելն է, իսկ մյուս կողմից՝ հեղինակների քմահաճ կետադրությունը։

«Մխիթարի դիվան սենյակում երկու մոմ ու մի կանթեղ էր վառվում» (ՍԽՄԽ, 664)։ «Եվ գրում քեզ նամակ-հրավեր» (ՀՍՀԵՄ, 391)։ «Ու նրանց հետ ցող-արցունքով լցված սրտերն ու աչեր՝ Սարի ծաղկունք տխուր սյուքով հառաչեցին էն գիշեր» (ՀԹ, Զ, 44)։

Այսպիսի կապակցություն-հարադրություններ կազմվում են նաև այլ հարաբերությամբ, լրացման և լրացյալի այլ իմաստային կապով։ Դրանցից կարելի է նշել, այգի-քաղաք, անապատ-կյանք, ախոռ-երկինք, կարապ-ամպ, լույս-ճակատներ և այլն։

«Իմ արտույտ-մանուկն ահա խաղում է քո շվաքում» (ՀՍՀԵՄ, 118), «Գալիս է երկնի ճամփեքով արձակ կարապ-ամպերի երամն սպիտակ» (ՀՍՀԵՄ, 205)։ «Կքանդակես լույս-ճակատներ շենքի» (ՄՄԼ, 211)։ «Մի պորփյուրակիր արքա-առլեկին Հարցաքննել է դեկաբրիստներին» (Զ, 127)։ «Արթնացավ արև-նաիրին» (Զ, 316)։ «Իր անապատ-կյանքի մեջ հանդիպեց մի հրաշալի Եվա» (ՆԴ, 3, 564)։ «— Ով ախոռ-երկիր, մորակի մարդիկ» (ՀԹ, 2, 34)։ «Այ վարդ-աղջիկ, մոտ արի» (ՀՀ, 146)։

Հարադրական բարդություն դարձող այս կապակցություններից մի քանիսը կայուն դարձվածք են։ Դրանցից կարելի է նշել արյուն-արցունք, արյուն-քրտինք։

Ուղղական հոլովով դրված գոյական որոշիչով կապակցությունների մեջ յուրահատուկ տեղ ունեն այն կազմությունները, որոնցում լրացումն արտահայտված է երկբառանի անբաժանելի կապակցությամբ, որն ըստ էության դերբայական դարձված է՝ զեղչված դերբայով։ Ընդ որում դրանցից մի քանիսն ունեն կայուն կապակցության արժեք, ինչպես՝ հաստ կաշի, տաք գլուխ և այլն։ Դրանց իմաստը սովորաբար կարող է արտահայտվել բարդ բառով, ինչպես՝ հաստ կաշի-հաստակաշի, կեղտի գույն-կեղտագույն։ Հենց այդպես էլ գրական լեզուն գործածում է բարդությունը՝ ի տարբերություն բարբառների հիշյալ կապակցությունների ձևի։ Սրանք գրական լեզու են թափանցել բարբառներից։

«Բացվեց նրա ոզնու գույն մազերով գլուխը» (ՍԶ, 4, 179)։

«Ամառ-ձմեռ կանանիք Մուկուչին նույն զորշ, կեղտի գույն հագուստի *մեջ» (ԱՐՊ, 72)։ «Էդ կառավարիչը մի կոպիտ,* հաստ կաշի մարդ *էր» (ԱՐՊ, 87)։ «Ես վախենում եմ, որ նրանց* տաք գլուխ ղեկավարը *զործը փչացնի» (ՎԱՍԱ, 238)։*

Առանձին պետք է նշել այն կապակցությունները, որոնցում լրացումն ունի այլ հոլովաձևերի կամ այլ խոսքի մասերի արժեք։ Դրանցից են՝ բրինձ շիլա, ամառ գիշեր, ծայր անհրաժեշտություն, հայ համայնք, ցորեն հատիկ, մարմար քար, պողպատ դաշույն, ռուս բերբ *և այլն։*

«Տնից դուրս էր գալիս շատ սակավ, ծայր անհրաժեշտության *դեպքում» (ՍԶ, 5, 7)։ «Մեջտեղ էր գալիս տապակած հավը կամ* բրինձ շիլան» *(ՍԽՀ, 515)։ «Եգիպտոսի* հայ համայնքի *մեջ տիրապետող էր դարձել այն կարծիքը...» (ՀԱՆՀ, 122)։ «Դու թուխ* ցորեն հատիկ *ճամփում ընկած հասկից» (ՄՄԼ, 34)։ «Բարձրացավ, տեսավ մի մեծ* մարմար քար» *(ՀԹ, Զ, 106)։ «Թող կարծրանա ոգիդ, որպես* պողպատ դաշույն» *(Զ, 126)։ «*Փունջ ծամերդ *փայփայեմ» (Իս. 1, 53)։ «Վերցրեց տեղական* ռուս բերբերից *մեկը» (ՆԴ, 1,180)։*

Բերված կապակցությունների լրացումը կարող է արտահայտվել նաև այլ ձևերով, ինչպես՝ ծայր անհրաժեշտություն-ծայրահեղ անհրաժեշտություն *(ածականով),* հայ համայնք-հայկական *կամ* հայերի համայնք *(ածական կամ գոյականի սեռական հոլով)։*

Այս կարգի կապակցությունները չի կարելի շփոթել գոյականի ձև ունեցող ածական լրացումով կապակցությունների հետ։ Այսպես, ժամանակակից հայերենում փոքր, հավաք *և այլ բառեր գոյական են, սակայն որոշ հեղինակների մոտ դրանք նաև ածական են դիտվում։*[1]

«Նա իր փոքր հայացքով *չափում էր նրան ոտից գլուխ» (ՍԶ, 5, 8)։ «Ինձ զարմացնում է այդ փոքրիկ աղջկա հանգիստ ու զուսպ բնավորությունը, նրա* հավաք, *զգույշ* լրջությունը, հավաք աշխատանքը» *(ՍԶ, 5,37)։ «Որպես* փոքր գինվորական *և հեռատես գործիչ նա սկսեց գավառից» (ԶԴԱՎ, 548)։*

Երբեմն էլ ուղղականը հանդես է գալիս բաղդատական մակբայի կամ ածականի փոխարեն։ Օրինակ՝ «Գրավոր ու բերան *թունալի* լուտանքներ *էր լսել հակառակ ուղղությունների գործիչներից» (ԶԴԱՎ, 226)։*

Մի շարք կապակցություններում դժվար է որոշել, թե ինչ խոս-

---

[1] *Արևմտահայ գրական լեզվում դրանք նաև ածական են։*

քի մաս է լրացումը՝ նրա երկիմաստության պատճառով։ Եթե գոյականի ուղղական հոլովն էլ որոշչի պաշտոն ունի ածականի նման, ապա ածականական ծագմամբ գոյականների ուղղական հոլովով որոշիչ լինելը հարուցում է լուրջ դժվարություն։ Այսպես, պանդուխտ, ցամաք, լծկան և նման գոյականները անտարակույս ածականից են առաջացել (պատմականորեն) և այժմ դրանք լեզվում գործածվում են իբրև գոյական անուն։ Օրինակներ՝ «Խեղճ պանդուխտը մեռավ օտարության մեջ»։ «Թշնամին հարձակվեց թե՛ ցամաքից, թե՛ ծովից»։ «Շատ կոլտնտեսություններ այժմ արդեն լծկանի կարիք չունեն»։

Սակայն որոշչի դերում դրանց գործածությունը կարող է ստիպել մտածելու, որ դրանք այժմ էլ ածական են։

«Ու տուն են բերել պանդուխտ հային» (ՀՍՀԵՄ, 371)։ «Պատի տակին ցամաք մի տեղ Դունչը դրած զույգ թաթերին Քնել է մեր բարի Զալոն» (ՄՄԼ, 287)։ «Բայց մնում էր անոթի ու ապրում էր անհեթեթ, Անիմաստ կյանք մի դժվար, որպես լծկան անասուն» (Զ, 257)։

Եթե բերված կապակցություններում լրացումն ածականից է առաջացել, ապա կան այնպիսի դեպքեր էլ, երբ գոյականի ուղղական հոլովը ստանձնելով որոշչի դեր, ժամանակի ընթացքում աստիճանաբար վերածվում է ածականի։ Այսպես է եղել ժեռ և լեռ բառերի հետ, որոնք ժայռ, լեռ գոյականների որոշիչ կիրառությամբ սկսել են դիտվել նաև որպես ածական։ Օրինակներ՝ «Ձեր ակունքներն եմ գտել ժեռ քարերի արանքում» (ՀՍՀԵՄ, 114)։ «Պաղ երկնաքի սառնությունը լեռ Չթողեց հոգուս աստղերը շողան» (ՄՄԼ, 160)։

* * *

Ուղղական հոլովով լրացում ունեցող գոյականի կապակցությունների շարքում բոլորովին յուրահատուկ են մակդիրի նշանակություն ունեցող լրացումով կազմությունները։

Վերևում քննած կապակցություններում ուղղականով որոշիչը մակդիր չէ (ինչպես և ածականով արտահայտված ոչ բոլոր որոշիչներն են մակդիր)։ Մակդիրն օժտված է արտահայտչական երանգով, այն առարկան բնութագրում է ոչ նրա էական, հանրածանոթ, հատկանիշի տերմինավորված արտահայտություն հանդիսացող բառով, այլ պատկերավոր ձևով, այնպիսի բառով, որն ար-

տաքուստ բնորոշ չէ տվյալ առարկային, այլ իմաստային ասոցիացիայով է կապվում նրա հետ։

Այսպես, եթե ասում ենք կանաչ խոտ, լուսավոր սենյակ, ապա այդ կապակցություններում չունենք մակդիր-լրացում։ Մինչդեռ եթե ասենք կանաչ գարուն, լուսավոր դար, ապա այստեղ ունենք մակդիր-լրացումով կապակցություններ, քանի որ գարուն գոյականին (իբրև ժամանակի անվանում) բնորոշ չէ սովորական իմաստով կանաչ հատկանիշը, դար գոյականին՝ լուսավոր հատկանիշը։

Գեղարվեստական գրականության մեջ մակդիր-լրացմամբ կապակցությունների գործածությունը չափազանց շատ է հանդիպում։ Մինչդեռ առօրյա խոսակցական լեզվում այդպիսի կապակցությունները քիչ են գործածվում։

Կան բազմաթիվ գոյականներ, որոնք չափազանց շատ են գործածվում հիշյալ դերում։ Իհարկե այդ գործում նշանակություն ունի գեղարվեստական գրականության ժանրը, դարաշրջանը, հեղինակի նախասիրությունն ու ճաշակը և այլ հանգամանքներ։

Այս տեսակետից էլ հնարավոր չէ թվարկել բոլոր այն գոյականները, որոնք ուղղական հոլովով դառնում են մակդիր-որոշիչ։ Սակայն կարելի է մոտավորապես նշել արտահայտչական դունագեղությամբ օժտված մի շարք գոյականներ, որոնց գործածությունը այս կամ այն չափով տարածված է գեղարվեստական գրականության մեջ, մասնավորապես չափածոյում։ Մակդիր-որոշիչները երկու մեծ խմբի են բաժանվում։ Առաջին խմբին պատկանում են շատ տարածված, հաճախակի հանդիպող գոյական-մակդիրները, ինչպես՝ լույս, հուր, հրաշք, երկաթ, արծաթ, ոսկի, զմրուխտ, ծաղիկ, երազ, ծով և այլն։

«Պատասխանը լինում է միայն հար անտարբերությունը» (ՆԴ, 1,157)։ «Ո՞վ է իմացել էսպես հրաշք բան» (ՀԹ, Զ, 36)։ «Թռավ ցոլաց Դավթի հուր ձին» (ՀԹ, Զ, 124)։ «Խոստացիր նրան իմ ոսկի գանը» (ՀԹ, Զ, 138)։ «Պոույտ է գալի ծաղիկ տիրուհին» (ՀԹ, Զ, 141)։ «Արծաթ ջրվեժներ են գահավիժում» (ՀՍՀԵՄ, 412)։ «Ես քեզ մոտ եկա հրաշք հրթիռով» (ՀՍՀԵՄ, 414)։ «Հազար պոեմներ ունի Իր հուժկու երկաթ թոքերում» (Զ 281)։ «Ուր կա դեռ երազ այն առուն ծով ուր որ լողում են ծաղկանց լույս թերթերը» (ԳՍԲ,, 106)։ «Եվ փայփայել ենք նրան ոսկի հույսերի նման» (ԳՍԲ, 146)։ «Արևի ոսկի մատները իջան» (Զ, 221)։ «Զմրուխտ ատողերի քարավանները թափառում էին երկնի ճամփեքով» (Իս., Զ, 47)։ «Անցորդներ են գերվել քո ծով գեղեցկությամբ» (ՀՍՀԵՄ, 209)։

Այսպիսի կազմություններից են առաջացել որոշ կայուն կա-

պակցություններ և դարձվածքներ, ինչպես՝ լույս աշխարհ, քար սիրտ, ոսկի ձեռներ և այլն։

Երկրորդ խմբին պատկանում են քիչ հանդիպող, ոչ սովորական գոյական մակդիրները, ինչպես՝ աստղ ու նկար, կմախք, անապատ, շուշան և այլն։

«Նա իր ձմեռ ձեռներով Դեռ զարմանք է մեզ բերում» (ՄՄԷ, 272)։ «Ձեր հակինթ աչքերը քիչ Ես այսօր կուզեմ երգել» (Զ, 29)։ «Ես սիրել եմ ձեզ, զանգակ աղբյուրներ» (ԴՄԲ, 110)։ «Երբեմն քաղաքի կիսամայթի փողոցում երևում էր մի ընձառ մոլլա կամ կմախք մի մուրացկան» (ՍԽՄԽ, 180)։ «Այս անապատ աշխարհում Դու օազիսն իմ միակ» (ՀՍՀԵՄ, 230)։ «Բողբոջում է սիրտս Գարնան շուշան ամպի տակ» (ՀՍՀԵՄ, 330)։ «Այս խոզ գնդապետը ելել է մեր դեմ» (Զ, 337)։

Որոշ հեղինակների մոտ պատահում են արտառոց մակդիրներ՝ հակադրության սկզբունքով դրված լրացյալի վրա։ Այսպես, Զարենցը գործ է ածում գեհեն դրախտ կապակցությունը, որտեղ լրացումը լրացյալի համար բնորոշ չլինելով հանդերձ արտահայտում է սոսկ հեղինակային վերաբերմունքը։ «Նրանք կգան, կավերեն, և չի մնա էլ ոչինչ՝ Ոչ դրախտը ձեր գեհեն, ոչ թախիծը ձեր դյութիչ» (Զ, 36)։

Դիտողություններ ուղղական լրացումով գոյականի կապակցությունների կառուցվածքի վերաբերյալ— 1. Կան մի շարք գոյականներ, որոնք ուղղականով լրացման հետ միասին են դառնում նախադասության մեկ անդամ։ Դրանք երկու տեսակ են լինում։ Մի դեպքում լրացյալի դերում հանդես են գալիս այնպիսի գոյականներ, որոնք սովորաբար որևէ լրացմամբ են կատարում նախադասության մեկ անդամի պաշտոն։ Դրանք մեծ մասամբ ժամանակ ցույց տվող գոյականներն են, ինչպես՝ օր, ժամանակ[1], հասակ և այլն։

«Արև օրերը գյուղացիները, մանավանդ ծերերը, հավաքվում էին ժամի պատի տակ» (ՍԶ, 4, 131)։ «Դեռ տղա հասակում մուրալով էր ապրել» (Մուր., 1, 240)։ «Երեխա ժամանակ հաճախ էր նա ընկերների հետ եկել այս կողմերը» (ՍԽՀ, 71)։ «Չգիտեմ ինչու մանուկ ժամանակ համբուրում էի խաչքարերը ես» (ՀՇԲՀ, 354)։ «Հազիվ ձեռքդ պարզեցիր, Ինչպես աղջիկ ժամանակ» (ՀՍՀԵՄ, 262)։

---

[1] Նկատի չունենք ժամանակ կապը, որը գործածվում է սեռականով կապի խնդրի հետ (տե՛ս «Բայի լրացումները կապով և կապի խնդրով» բաժինը)։

Ինչպես երևում է բերված օրինակներից, այս կապակցությունների լրացման ու լրացյալի միջև ենթադրվում է որևէ անդամ, որը զեղչված է։ Այսպես, արև օր *կապակցությունը կարելի է հասկանալ իբրև* արև եղած, արև մնացող օր, տղա հասակ *նշանակում է* տղա եղած հասակ, աղջիկ ժամանակ *նշանակում է* աղջիկ եղած ժամանակ: *Այս զեղչված անդամի դերն է, որ ստանձնել է ուղղականը։ Այս պատճառով էլ կարող ենք ասել, որ հիշյալ կարգի կապակցությունները ունեն եռանդամ բառակապակցության արժեք։*

Երկրորդ դեպքում լրացյալ են դառնում այն գոյականները, որոնք թեև կապական իմաստ չունեն, սակայն մեծ մասամբ լրացմամբ են շարահյուսական դեր կատարում։ Լրացյալը դրվում է գործիական, սեռական և այլ հոլովներով, ինչպես՝ Վարդան անունով երիտասարդ, Գրիգորյան ազգանունով ընկեր, խոզ բնավորության մարդ *և այլն։ Օրինակ՝ «Ես մի* ընկեր *ունեի* Լիպո անունով» *(Չ, 418)։*

Սրանց հետ չպետք է շփոթել, սակայն, այն կապակցությունները, որոնք կազմված են գրաբարյան համապատասխան կաղապարների նման՝ ուղղականը գործիականի նշանակությամբ։

Գրաբարում սովորական էր անուն *բառի ուղղական հոլովաձևի՝ գործիականի իմաստով գործածվելը («Եւ այր մի Անատոլ* անուն, *որ էր նորա սպարապետ Արևելից, առաքեաց առ նա բազում զանձիւք»— Եղիշէ, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, 1957, 7)։*

Ժամանակակից հայերենում, իհարկե, սովորական չէ այդ գործածությունը։ Սակայն այդ հոլովաձևի նման կիրառությունը բաղարկվել է (կոնտամինացիա) այլ երևույթի հետ։ Կան նախադասության կրճատմամբ առաջացած կապակցություններ, որոնցում ուղղականը լրացում է դառնում գոյականին՝ համատեղելով գրաբարյան և կրճատման հետևանքով առաջացած կիրառությունները։ Այսպես, Չարենցի «Կար պոետ մի՝ անունը Տերյան» նախադասության մեջ անունը Տերյան *կապակցությունը կարող է դիտվել իբրև «Անունը Տերյան է» նախադասության կրճատման հետևանքով առաջացած կապակցություն, սակայն և միաժամանակ* անունը, *որը* պոետ *գոյականի լրացումն է, կարող է համարվել գրաբարյան իմաստ ունեցող ձև (Տերյան)* անունը պոետ՝ *(Տերյան)* անունով պոետ:

Բոլորովին այլ կարգի են այն կապակցությունները, որտեղ գոյականն ունի ուղղականով ստորոգելիական վերադիր հիշեցնող լրացում։ Այստեղ ուղղականը կարող է դիտվել նաև ստորոգելիա-

կան վերադիր՝ առանց հանգույցի կամ հանգույցի զեղչումով։ Այսպես է հետևյալ նախադասության մեջ. «Նորից արևը ելավ, ինչպես ձեռքից դահիճի՝ Աչքը թարախ ու արյուն ու շողերը մեկ-մեկ նետ» (Չ, 259)։

Անշուշտ, ոչ նույն, սակայն ձևականորեն նման կառուցվածք ունեն որոշ դարձվածքներ, ինչպես՝ գլուխը fարը, երեսը պատը և այլն։

«Գլուխը fարը, գոնե փող լիներ, էլ ինչու էսքան մարդ դանդաղ կաներ» (ՀԹ, Չ, 37)։ «Կրկին պարապ անեմ, գլուխը fարը, մինչև որ տեսնենք ինչ կըլնի ճարը» (ՀԹ, Չ, 85)։

Այս կապակցությունը կարելի է մեկնաբանել նաև իբրև հայցական լրացումով կազմված, այսինքն գլուխը (մանի) fարը (գրաբար՝ գլուխ ի fար)։

2. Առանձին պետք է նշել այն կապակցությունները, որոնց լրացումը կապական իմաստ ունեցող գոյական է և իբրև այդպիսին լրացում է դառնում որևէ լրացման հետ միասին։ Այդպիսի դեր է կատարում տեսակ բառը, որ հաճախ հանդես է գալիս նաև սեռականով (տեսակի):

«էն տեսակ կին, Ես իմ հոգին, թե աչուղն էլ ունենար» (ՀԹ, Չ, 136)։ «Ամեն տեսակ երգ երգեցի— ամենից լավ տաղն է էլի» (Չ, 41)։ «Ուրիշ տեսակ աշուն եկավ» (ՀՍՀՆՄ, 54)։

3. Գոյականը կարող է ունենալ մեկից ավելի լրացում՝ ուղղական հոլովով։

«Արևելքից մի հավք եկավ Ոսկի ճակինք թևեով» (Իս., 1, 121)։ «Շինում են փողոց առ փողոց— Մոսկովցի, Բանվոր մի Իվան, Մի Չինկ Ցու, Մի Հանս, Մի Պողոս» (Չ. 302)։ «Քո պատվիրակ fարտաշ որդին Քանդակել է քո նուրը պերճ» (ՀՍՀՆՄ, 205)։ «Որ մեր ճարեան սայլապան Մոսու Կոտրված սայլը ձորակից հանենք» (ՄՄԼ, 280)։

4. Ուղղական որոշիչը կարող է հանդես գալ ածականի հետ՝ կամ բաղհյուսված կամ ոչ։ Այդպիսի կապակցություններից կարելի է նշել. «Թե ճայ բնավեր շինականը ծեր Ինչպես է արնոտ հողը հարդարել» (ՄՄԼ, 11)։ «Մեր պատմության դառնաշունչ, չար ու խոռշակ գիշերում Ո՞նց է ծաղկել զվարթուն մեր քերթության հնամյա» (Չ, 180)։ «Մահ գիշատիչ ու զազան իշխաններին հողատեր» (Չ, 260)։

5. Ուղղականը կարող է դառնալ երկու կամ ավելի բառերից կազմված բառակապակցության լրացում։ Այսպես կարող են լինել

ինչպես հատուկ, այնպես էլ հասարակ գոյականների որոշիչները։ Օրինակ, փաստաբան Պետրոս Կամսարյան, ուսուցիչ Վարդան Գրիգորյան *և այլն։*

«Հայոց լեզվի ուսուցիչ Մնացական Քամալյանը *կրկին ներս մտավ կապույտ պենսնեով» (ՌԱՋ, 72)։ «Նրան պատասխանեց իր մանկության* ընկեր ֆերմայի վարիչը» *(ՍԽՀ, 14)։*

Դիտողություններ ուղղական լրացմամբ բառակապակցությունների շարադասության վերաբերյալ— *1. Ժամանակակից գրական լեզվում ուղղական որոշիչը սովորաբար նախադաս է լինում։ Այդ շարադասությունը բնորոշ է առաջին հերթին արձակ ստեղծագործությունների լեզվին։ Վերևում նշված բոլոր օրինակներում (չնչին բացառությամբ) ուղղական որոշիչը նախադաս է։*

Չափածո խոսքում ևս ուղղական որոշիչը որոշյալից առաջ է դրվում։

«Մանուկ օրերդ *եմ մտաբերելու» (ԴՍԲ, 192)։ «Պատույտ է գալի* ծաղիկ տիրուհին» *(ՀԹ, Չ, 141)։* «Ոսկի բոցեր *են դառնում ամպերը» (ՀՍՀԵՄ, 371)։*

2. Սակայն պոետական խոսքում հաճախ է պատահում, որ ուղղական (և այլ ձևով արտահայտված) որոշիչը դրվում է որոշյալից հետո։ Այս դեպքում անհրաժեշտ է իմանալ, որ որոշիչը, իբրև կանոն, անորոշ առումով է դրվում, իսկ լրացյալ գոյականը մեծ մասամբ պետք է որոշյալ առումով լինի։

«Եվ զարկեցիր ինձ պշնամուն բարբարոս» *(Իս., 1, 368)։ «Նորից կթափեն* ղազաղում ոսկի» *(Չ, 240)։ «Խլեց ծիծաղիս* կարկաչը մանուկ» *(ՀՇՔՀ, 207)։* «Ջրերը արծաթ *մրմնջում են սեր» (ԴՍ, 123)։ «Մտնում եմ նորից* անտառը մայրի» *(ՀՍՀԵՄ, 5)։ «Սա էլ էր փախչում այս* վայրից գեհեն» *(Չ, 232)։ «Որքան կանգուն է* աշխարհը հար» *(Չ, 475)։*

3. Կան դեպքեր էլ, երբ ուղղականով որոշիչն անջատվում է իր լրացյալից նախադասության այլ անդամներով։ Այս երևույթը ևս կապվում է բանաստեղծական խոսքի չափի և հանգավորման նպատակների հետ։

«Դաման Քաթիպայի տաղերն *են* նուր *Ձեզ ուղեկցում ի մարտ հերոսական» (ՆՁՄ, 154)։ «Ի՞նչ է երազում* տերևն *այդ* ոսկի» *(ՀՍՀԵՄ, 312)։ «Գարունքվա հետ ժպտաց* մանուկն *իմ* արտույտ» *(ՀՍՀԵՄ, 313)։ «Եվ դու,* ոսկի *իմ* աշուն, *աշնան մրգի պես հասած» (Չ, 31)։ «Կոփել էք* սուրուկ *մի* ժողովուրդ» *(Չ, 477)։ «Պիտի գնայինք* երկիրն *այն* երազ» *(ՆՁՄ, 457)։ «Զարմանք դառած՝ վեր փքեցիր* Թշիկները *քո* խնձորիկ» *(ՄՄԼ, 174)։*

4. Իսկ եթե ուղղական հոլովով դրված երկու բառն էլ անորոշ են, ապա դժվար է որոշել, թե ո՞րն է որի լրացումը։ Օրինակ՝ «Նրա մասին նրան պատմել է նավաստի մի ռուս» (Չ, 360)։

5. Եթե ուղղական հոլովով գոյականը դրված է երկու գոյականների միջև կամ նրանցից հետո, ապա դժվար է որոշել, թե նա որ բառի որոշիչն է՝ կա՛մ այդ բառերի քերականական անհրաժեշտ ձևի (տվյալ դեպքում որոշյալ հոդի) բացակայության, կա՛մ այլ պատճառով։ Այսպես է հետևյալ նախադասության մեջ. «Ես հեռվից քեզ եմ գրկում կարոտով կրակ սրտի» (ՀԱՀԵՄ, 118)։ Այստեղ հայտնի չէ, թե կրակ բառը կարոտով (կրակ կարոտով), թե՞ սրտի (կրակ սրտի) բառի որոշիչն է։ «Հիմա ո՞վ է ծամում այն հացի պատառը ոսկի» (ԴՍԲ, 148) նախադասության մեջ ոսկի կարող է դիտվել և՛ պատառը (ոսկի պատառը), և՛ հացի (ոսկի հացի) գոյականների լրացում։

6. Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև, որ ուղղականի ձև ունեցող ամեն մի գոյականի՝ այլ գոյականի մոտ լինելու ոչ ամեն դեպքը կարելի է համարել որոշիչ-որոշյալ կապակցություն։ Հնարավոր է, որ ուղղականի ձև ունեցող բառը պատահաբար դրված լինի այլ գոյականի մոտ։ Այսպես. «Որ ոչ մի ծաղիկ խորշակը չայրի» (ՀԱՀԵՄ, 381), նախադասության մեջ ծաղիկ բառը ուղղականի ձև ունի. սակայն ուղղական չէ (հայցական՝ ուղիղ խնդիր)։

2. ԳՈՅԱԿԱՆԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ

Գոյականն ամենից շատ լրացումներ է ստանում սեռական հոլովով, ուստի սույն հետազոտության մեջ շատ կարևոր տեղ է հատկացվում սեռականով կապակցություններին։

Սեռական հոլովով դրված լրացումների քննությունն առնչվում է ընդհանրապես հոլովի իմաստի և շարահյուսական կիրառության հարաբերակցության հարցին, ուստի և համառոտակի կանգ կառնենք այդ երևույթի վրա։

Հոլովների կիրառական նշանակությունները մանրամասնորեն քննվել են Մ. Աբեղյանի «Աշխարհաբարի շարահյուսություն» (Վաղարշապատ, 1912 թ.), իսկ վերջերս էլ՝ Վ. Առաքելյանի «Հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները» (Երևան, 1957) աշխատություններում[1]։ Ինչպես

[1] Գրաբարի քերականության ձեռնարկներում բավական մանրամասնորեն քննված են հոլովների իմաստային առումները։ Այդ կարգի ուսումնասիրություններից կարելի է նշել Ա. Բագրատունու «Հայերէն քերականութիւն ի պէտս զար-

Մ. Աբեղյանը, այնպես էլ Վ. Առաքելյանը հայերենի հոլովների ուսումնասիրությունը կապել են նրանց շարահյուսական կիրառության հետ։ Նրանք աշխատել են երևան հանել հոլովների շարահյուսական կիրառությունները՝ ելնելով ավանդական քերականության ըմբռնումներից։ Նրանց մոտ առաջին պլանի վրա են քաշված հոլովների շարահյուսական այն կիրառությունները, որոնք իմաստով կապվում են նախադասության այս կամ այն անդամի հետ։ Վ. Առաքելյանը հոլովների կիրառական նշանակությունը քննում է ավելի մանրամասնորեն։ Նրա կողմից արժեքավորվել են հոլովների մի շարք կիրառություններ։

Հոլովների կիրառական նշանակությունները հենվում են ամենից առաջ հոլովական իմաստների վրա։ Ի պատիվ վերոհիշյալ քերականների պետք է ասել, որ նրանք բացահայտել են հոլովների, մասնավորապես սեռական հոլովի, հիմնական ու երկրորդական մի քանի իմաստները։

Բառակապակցությունների ուսումնասիրությունը մեզ հանգեցնում է այն եզրակացության, որ հոլովի իմաստը նույնական չէ նրա շարահյուսական կիրառության հետ։ Հոլովի իմաստը այն հարաբերությունն է, որ կա լրացման և լրացյալի միջև, իսկ շարահյուսական կիրառությունը բառաձևի կատարած պաշտոնն է նախադասության մեջ *(ըստ ավանդական քերականության շարահյուսական կաղապարների)։ Սեռական հոլովի իմաստներն ավելի բազմազան են, քան նրա շարահյուսական կիրառությունները. այն ունի հոլովական մի քանի տասնյակ իմաստներ, մինչդեռ նախադասության մեջ նրա շարահյուսական կիրառությունները սահմանափակ են (հատկացուցիչ, որոշիչ, բացահայտիչ, կողմնակի ենթակա, կողմնակի ուղիղ խնդիր, ստորոգելիական վերադիր, կապի խնդիր)։ Իսկ այդ նշանակում է, որ սեռական հոլովի բազմաթիվ իմաստները որոշ համաբերության մեջ են այդ պաշտոնների հետ։ Այսպես, հատկացուցիչ են դառնում պատկանելության, ծագման, մասնական, հեղինակային, փոխհարաբերության, ենթակայական, խնդրային և այլ սեռականներ։ Իսկ որոշիչ են դառնում տեղի, ժա-*

գացելոց» (Վենետիկ, 1852) գիրքը։ Աշխարհաբարի (արևմտահայ և արևելահայ) քերականության մեջ ևս հանգամանորեն ներկայացված են հոլովների նշանակությունները։ Այդ աշխատություններից են Ա. Այտընյանի «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» (Վիեննա, 1866), Ս. Պալասանյանի «Քերականութիւն մայրենի լեզուի», մասն Ա, Բ և Գ (Թիֆլիս, 1906) և այլ գըրքեր։ Խոսքը, սակայն, հոլովների նշանակությունների ամփոփ ներկայացման մասին է։

մանակի, բաղկացության, նյութի, նպատակի, հատկացման, պատճառականության և այլ սեռականներ, որոնց մասին ստորև կխոսվի ավելի հանգամանորեն։

Ելնելով սրանից, սեռական հոլովով լրացում պարունակող բառակապակցությունները դասակարգում ենք պատկանելության, ծագման, մասնական, հեղինակության, փոխհարաբերության, ենթակայական, խնդրային և այլ իմաստներով հատկացուցիչ-հատկացյալ բառակապակցությունների, ապա՝ տեղի, ժամանակի, բաղկացության, նյութի, նպատակի, պարունակության և այլ իմաստներով որոշիչ-որոշյալ բառակապակցությունների։

Սեռական հոլովի իմաստների այս բազմազանությունը պայմանավորված է այդ հոլովի շարահյուսական կիրառության առանձնահատկություններով։ Ինչպես հայտնի է, սեռականը հայերենի հոլովներից միակն է, որ դառնում է բացառապես գոյականի լրացում (այդ չի նշանակում, իհարկե, թե գոյականը այլ հոլովներով լրացում չի ունենում)։ Իսկ գոյականը, իբրև առարկա ցույց տվող խոսքի մաս, կարող է այլ առարկաների հետ գտնվել բազմազան հարաբերությունների մեջ։ Այդ բազմազան հարաբերությունները տվյալ դեպքում արտահայտության միայն մի ձև ունեն (խոսքը թեք հոլովների մասին է), այն է՝ սեռական հոլովը։ Արտաքին աշխարհի առարկաների հարաբերությունները կարող են դրսևորվել կա՛մ իբրև շարժման մեջ գտնվող առարկաների հարաբերություն, կա՛մ դադարի[1] մեջ գտնվող առարկաների հարաբերություն։ Շարժման մեջ գտնվող առարկաների փոխհարաբերությունը դրսևորվում է բայի և իր լրացումների հարաբերության միջոցով, իսկ դադարի մեջ գտնվող առարկաներինը՝ գոյականների հարաբերությամբ։ Սակայն դադարի մեջ գտնվող առարկաների հարաբերությունը միաժամանակ արտացոլում է շարժման մեջ գտնվող առարկաների փոխհարաբերություն, որքանով որ կայունությունն ու դադարը ևս ներկայացնում են հարաբերական փոփոխության, շարժման պրոցեսի մի հատվածը, օղակը։ Ահա այս է պատճառը, որ սեռական հոլովով դրված լրացումն իր լրացյալի նկատմամբ կարող է արտահայտել այն բոլոր իմաստները, որոնք արտահայտվում են առարկաների և գործողության, այն է՝ լրացումների և բայի (բայի և լրացումների) կապակցություններով։ Եվ իրոք, սեռական հոլովի իմաստների մանրակրկիտ հետազոտությունը մեզ բերում է այն եզրակացության, որ բայի ու իր լրացումների փոխհարաբերությունների

[1] Տվյալ դեպքում հարաբերական դադարի մասին է խոսքը, տարածության մեջ գտնվող առարկաների հարաբերական անշարժության։

բազմազան ու բազմաթիվ տեսակներն առկա են նաև գոյականի ու սեռական հոլովով լրացման կապակցություններում։

Սեռականով կապակցությունների բնորոշ առանձնահատկություններից մեկն այն է, որ այդտեղ լրացյալը կարող է բայական լրացումներ ստանալ առաջին հերթին շնորհիվ իր բառային իմաստի, այսինքն՝ այն բանի, որ գործողություն է արտահայտում առարկայացված ձևով։ Այսպես օրինակ, ձեռքի աշխատանք կապակցության մեջ աշխատանք լրացյալն արտահայտում է առարկայացված գործողություն և այդ պատճառով էլ ունի ձեռքի խնդրային իմաստ ունեցող լրացումը։ Այսպես նաև՝ գլխի փաթաթան, բաշլիկի կապոց և այլն[1]։ Ամառվա արձակուրդը կապակցության մեջ առկա է ժամանակային հարաբերություն՝ շնորհիվ այն բանի, որ արձակուրդ գոյականն ունի բայական ծագում (ամառը արձակելը-ամառվա արձակուրդ)։

Սակայն բանն այն է, որ եթե բայի ու իր լրացման փոխհարաբերության դրսևորման համար ժամանակակից հայերենն ունի մի շարք հոլովաձևեր՝ տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական, ինչպես և կապական խնդրառության բազմազան եղանակներ, ապա գոյականների փոխհարաբերության համարյա միակ միջոցը սեռականով լրացում-լրացյալ բառակապակցություններն են։ Այստեղից էլ՝ սեռականով լրացման ու իր լրացյալի հարաբերությունների բազմազանությունը և դրանից բխող իմաստների սերտությունը։ Այդ իմաստները նույնքան բազմազան են, որքան բայի ու իր լրացման հարաբերությունները։ Իսկ քանի որ բայի ու իր լրացման հարաբերությունները, բազմաթիվ ու բազմապիսի լինելով հանդերձ, զարգացման ընթացքում անընդհատ աճում են (իհարկե յուրաքանչյուր էտապում լինելով սահմանափակ քանակի), ուստի լրացյալի և սեռականով լրացման հարաբերություններն էլ, բազմազան ու բազմապիսի լինելով հանդերձ, դարձյալ անընդհատ աճում են։ Սեռականի բազմաթիվ իմաստների զարգացումը նախնական սահմանափակ իմաստներից պայմանավորված է լեզվին հատուկ՝ փոխաբերական իմաստների՝

---

[1] Այստեղ և հետագայում սեռական հոլովի իմաստային առումները մեկնաբանելիս մենք գործ ենք ածում խնդրային, պարագայական տերմինները ոչ բայի խնդիր և պարագա լրացում նշանակություններով։ Այսպես, երբ ասում ենք, թե ձեռքի աշխատանք կապակցության մեջ ձեռքի խնդրային իմաստ ունի, այդ չի նշանակում, թե ձեռքի համարում ենք խնդիր։ Սեռական հոլովով լրացումը գոյականի մոտ երկու պաշտոն կարող է ունենալ՝ հատկացուցիչ և որոշիչ։ Ուստի խնդրային, պարագայական բառերը ոչ մի կապ չունեն սեռականի պաշտոնի հետ։

բուն իմաստներից շեղելով և հեռանալով։ Սեռական հոլովով լրացումը սովորաբար սկսում է գործածվել փոխաբերաբար և նախնական իմաստից հեռանալով ստանում է ինքնուրույն գործածություն։ Համարյա ամեն մի բուն իմաստին զուգահեռ այժմ կան փոխաբերական-վերացական կիրառության բազմաթիվ դեպքեր։ Փոխաբերական-վերացական կիրառությունը գալիս է գեղարվեստական խոսքից, որտեղ կայունանում և ձևավորվում է իբրև ինքնուրույն իմաստ։ Այդ իմաստները հաճախ կարող են հանդես գալ միահյուսված, խառը, որի հետևանքով էլ դժվար է լինում հստակորեն տարբերակել դրանք։ Քիչ չեն այն դեպքերը, երբ սեռականով կապակցությունն ունենում է մեկից ավելի իմաստներ, որոնք հեշտությամբ շփոթվում են իրար հետ։ Սեռականի իմաստները հաճախ պայմանավորված են բնագրով, որից դուրս հնարավոր է նույն ձևի հետ կապել մի շարք իմաստներ։ Այսպես, օրինակ, (հին) օրերի հիշողություն կապակցությունը կարելի է հասկանալ և՛ իբրև խնդրային հարաբերությամբ կազմված (հին օրերը հիշելը), և՛ իբրև ժամանակային հարաբերությամբ կազմված կապակցություն (հին օրերում եղած հիշողություն), և՛ իբրև վերաբերության հարաբերությամբ կազմված կապակցություն (հին օրերի մասին հիշելը)։ Դրանք տարբերելուն օգնում է բնագիրը։ Այսպես՝ «Քանի որ նրա մեջ միանգամից զարթնել էր լավ հագնվելու ցանկությունը— հին օրերի հիշողությունը— նա շարունակում էր լավ հագնվել» (ՍԶ, 4, 314) նախադասության մեջ հին օրերի հիշողություն կապակցությունը կազմված է խնդրային հարաբերությամբ (հին օրերը հիշելը)։ Այսպես նաև տարիների բացակայություն կապակցությունը կարելի է հասկանալ և՛ իբրև ենթակայական հարաբերությամբ կազմված՝ տարիների բացակայելը (տարիները բացակայում են), և՛ իբրև ժամանակային չափի՝ տարիներով բացակայելը (տարիներ բացակայել է)։ Իսկ բնագիրը պարզում է իմաստը։ Այսպես՝ «Երկար տարիների բացակայությունից հետո այդ ամառ բարեհաճել էր շնորհ բերել գյուղը» (ՆԴ, 1, 100) նախադասության մեջ կապակցությունը կազմված է ժամանակային չափի հարաբերությամբ։

Ապագայի հույսեր կապակցությունը կարելի է դիտել և՛ իբրև ժամանակի սեռականով կազմված (ապագայում իրականանալիք հույսեր), և՛ վերաբերության (հույսեր ապագայի մասին)։ Դա որոշվում է բնագրով։ «Լցված էի փառավոր ապագայի վառ հույսերով» (ՆԴ, 1, 115) նախադասության մեջ առկա է վերաբերության հարաբերությունը։ Այսպես նաև կնոջ գաղափար կապակցու-

թյունը կարելի է հասկանալ և՛ իբրև ենթակայական հարաբերությամբ կազմված (կինը գաղափար ունի), *և՛ վերաբերության* (գաղափար կնոջ մասին)*: Բնագիրն օգնում է կողմնորոշվելու.* «Կնոջ գաղափարը *Շահյանի համար միշտ մութ ու անորոշ էր եղել» (ՆԴ, 3, 565) նախադասության մեջ* կնոջ գաղափարը *կապակցությունն արտահայտում է վերաբերության հարաբերություն։*

Ուսումնասիրության մեջ հաշվի ենք առել այս հանգամանքը։

Շատ լեզվաբաններ գտնում են, որ բառակապակցությունների պատմական զարգացումը տանում է դեպի որոշ տեսակների բարդ բառերի վերածման (սկզբում հարադրական, ապա կցական և այլ կարգի)[1]*։ Այդ պրոցեսն ունի միջակա աստիճաններ, որոնցից ամենակարևորը կայուն կապակցություններն ու դարձվածքներն են, որոնք հենվում են լեզվի առավել գործածական բառակապակցությունների վրա։ Կայուն կապակցություններն ու դարձվածքները, իբրև լեզվի ոճական միջոց, կազմվում են գործուն բառակապակցությունների օրենքներով։ Դրանով իսկ նրանք աղերսակցվում են, մի կողմից, շարահյուսության, մյուս կողմից՝ ոճաբանության հետ։ Հաշվի առնելով այս հանգամանքը՝ ուսումնասիրության մեջ յուրաքանչյուր իմաստի հիման վրա կազմված կայուն կապակցությունները ու դարձվածքները նշել ենք համապատասխան իմաստին նվիրված բաժնի վերջում։*

Սեռական հոլովով դրված գոյական լրացում պարունակող կապակցություններից չենք անջատում նույն հոլովով դրված դերանուն կամ այլ խոսքի մաս լրացումով կապակցությունները։

ՀԱՏԿԱՑՈՒՑԻՉ—ՀԱՏԿԱՑՅԱԼ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սեռական հոլովի հնագույն և այժմ գործուն հիմնական իմաստը պատկանելությունը, ստացականությունն է, որի հիման վրա և զարգացել ու տարածվել են մյուս իմաստները։ Ուստի և սեռական հոլովով կապակցությունների ուսումնասիրությունն սկըսում ենք այդ իմաստից։

Ստացական սեռականով կապակցություններ — *Այս կապակցություններում սեռական հոլովով դրված բառը ցույց է տալիս այն առարկան, որին պատկանում է, որի ստացվածքն է լրացյալով արտահայտված առարկան։ Այսպիսի կապակցությունները խիստ տարածված են արդի գրական և խոսակցական լեզվում։ Բազմաթիվ օրինակներից կարելի է նշել* երեխայի հագուստը,— կոշիկ-

[1] *Տե՛ս* В. Жирмунский, О границах слова («Вопросы языкознания», 1961, № 3).

ները,— խաղալիքը, մեկի տունը,—իրերը,—մեքենան, բշնամու զենքը,—հողը,—տունը,—վրանը և այլն։

«Հովիտը, ուր զարկած էին բշնամու վրանները, ընկած էր երեք բարձրության մեջ» (Մուր., 4,327)։ «Մոտ չեկավ դուշման Մելիքի բրին» (ՀԹ, Զ, 99)։ «Թումանյանի պալատում Ով որ քեֆի չի նստել, նա չի տեսել դեռ խնդում» (ՎՏ, Զ, 97)։ «Տոմռոնի կոշիկն էր քաղաքում տիրում» (Զ, 396)։ «Ու կրկին շառաչեց Ճավարշի մաուզերը» (Զ, 415), «Խոնարհվեցին դրոշները բանակի» (Զ, 420), «Արշալեք, հողմեր, իմ հոր տան վրա» (Իս., Զ, 64), «Ներս ընկան ծառաները խանի Եվ կանայք խանի հարեմից» (ԳՍԲ 251)։ «Հազարացիների մարտիկները աշտարակը մտնելով իրանց գործն սկսան» (Մուր., 4,279)։ «Մի՞թե վերջին պոետն եմ ես, Վերջին երգիչն իմ երկրի» (ՎՏ, 1,235)։ «Մեծ Հայնեի հայրենիքից երգի ոգին վտարվեց» (Զ , 178)։ «Նստում տխուր մի քարի, Գերեզմանին Մարոյի» (ՀԹ, Զ,8)։

Այս իմաստի հիման վրա կազմվում են բազմաթիվ կապակցություններ, որոնցում ձևականորեն առկա է ստացական հարաբերությունը, սակայն ոչ ուղղակի և կոնկրետ կերպով, այլ փոխաբերաբար։ Այսպես, լինում են՝ կյանքի նավը, լեռների գանը, ժողովրդի քնարը և այլն։

«Ցամփա կա՝ ափ է հանում նավակն իմ կյանքի» (ՀՇՔՀ, 13)։ «Բարձրանում կապույտ գահը լեռների» (ՀՇՔՀ, 108)։

Կան դեպքեր, սակայն, երբ սեռականի և իր լրացյալի կապակցությունը կարելի է ըմբռնել և՛ իբրև ստացական, և՛ այլ կարգի հարաբերություն։ Այսպես՝ «Հռոմի ստրուկները չհաջողեցին թոթափել կեղեքիչների լուծը» (ՌԱԶ, 190) նախադասության մեջ առկա են և՛ ստացական, և՛ տեղի իմաստները։

Ստացական սեռականով են կազմված Դամոկլեսի սուր տիպի կայուն կապակցությունները։ «Դրա տեղ անբարոյականության Դամոկլեսի սրի նման կախված է մարդկության գլխին» (ՆԴ, Զ, 316)։

Ծագման սեռականով կապակցություններ— Այս դեպքում հատկացուցիչը ցույց է տալիս այն առարկան, որից ծագել, առաջացել է հատկացյալով արտահայտված առարկան։ Մ. Աբեղյանի և Վ. Առաքելյանի կողմից ծագման սեռականի տակ դիտված են մի շարք իմաստ ունեցող սեռականներ, ինչպես՝ հեղինակության՝

---

¹ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 421, Վ. Առաքելյան, Հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957, էջ 77—78։

նյութի, բաղկացության (որոնք Վ. Առաքելյանը համարում է ծագման սեռականի տարատեսակները), սկզբնապատճառի, ազդակի և այլն[1]: Դա բխում է նրանից, որ Մ. Աբեղյանը ծագման սեռականի և հատկացյալի հարաբերությունը համարում է երկու առարկաների այնպիսի փոխհարաբերություն, որոնցից մեկը ծագել, սերել կամ առաջացել է իբրև մյուսի գործողության արդյունքը։ Մինչդեռ ծագման սեռականի մեջ հիշյալ երկու տարբեր իմաստները չի կարելի միացնել։ Մի դեպքում հատկացուցիչը ցույց է տալիս այն առարկան, որից սերում է հատկացյալով արտահայտված առարկան (ծագման, սերման սեռական), իսկ մյուս դեպքում՝ կա՛մ այն առարկան, որի գործողության հետևանքով է առաջացել (հեղինակության), կա՛մ որի պատճառով է երևան եկել (սկզբնապատճառի) հատկացյալով արտահայտված առարկան։ Իսկ Վ. Առաքելյանի կողմից էլ նյութի սեռականը ծագման սեռականի տարբերակ համարելը ճիշտ չէ, քանի որ դա ցույց է տալիս այն առարկան, որից, իբրև նյութից, ստեղծված, կազմված է հատկացյալով արտահայտված առարկան։ Մ. Աբեղյանն էլ միանգամայն պատճառաբանված կերպով այն սեռականի առանձին տեսակ է համարում։ Դրանում կարելի է համոզվել թեկուզ այն պատճառով, որ նյութի սեռականը որոշիչ է լինում, իսկ ծագման սեռականը՝ հատկացուցիչ։

Ծագման սեռականով լրացում պարունակող բառակապակցություններից կարելի է նշել հողի, ծաղկի բուրմունք, արեգակի շող, աստղերի լույս, շենքի մոխիր և այլն։

«Մեխակի բույրով հովն էր շշնջում» (Իս., Ձ, 47)։ «Հոգնատանջ սրտով նստեցի մենակ Աշխարհում աղոտ, Անհայտ կողմերի մութ ճանապարհին, Ավեր շենքերի մոխիրների մոտ» (ՎՏ, 1, 135)։ «Վերջին սրտանց եմ, որ եկել եմ Հողի բուրմունքից, հովից, հերկից» (ԳՄՀ, 20)։ «Ղեյլանի ծուխը թե երկինք ելներ, Աստղերին հասներ՝ այնպես լույս չկար» (ԳՍԲ, 247)։

Ծագման հարաբերությունը կարող է արտահայտված լինել նաև պատկերավոր խոսքի այնպիսի կապակցություններում, որոնք փոխաբերական նշանակություն ունեն։ Այսպես, փոխաբերաբար ասում ենք նաև սիրո բոց,— կրակ, գգվանքի մոխիր:

«Եկ, տես սիրուդ հողմը Սրտիս ծովն է հուզել» (ԳՄՀ, 124)։ «Գգվանքների մոխիր Ու շշուկներ թողիր» (ԳՄՀ, 131)։ «Ոսկեցոլուն ճառագքիդ Լույսն է ցոլում այս կյանքում» (ՎՏ, 1, 145)։ «Եվ չեք տեսնի դուք բնավ Հուրն ու մոխիրն իմ սիրո» (ՎՏ, 1, 257)։

Ծագման սեռականով կազմված որոշ կապակցություններ դարձել են կայուն դարձվածքներ։ Այսպես, ճալի կար, օձի կար,

կոկորդիլոսի արտասուք *(արցունք) կայուն կապակցություններ են, որոնք նշանակում են հազվագյուտ, չճարվող բան* (հավի կաթ, օձի կաթ), *կեղծավորություն, խաբեբայություն* (կոկորդիլոսի արտասուք):

Հեղինակության սեռականով կապակցություններ— *Ինչպես վերը նշեցինք, հեղինակության սեռականը չի կարելի նույնացնել ծագման սեռականի հետ։ Այս դեպքում հատկացուցիչը ցույց է տալիս այն անձը, որի ստեղծագործությունն է հատկացյալով արտահայտված առարկան։ Եթե* մեխակի բույր *կապակցության մեջ հատկացուցիչը ցույց է տալիս այն առարկան, որից ծագում է հատկացյալով դրսևորվող առարկան, ապա* Թումանյանի պատմվածքները, Նար-Դոսի վեպերը, Չարենցի բանաստեղծություններ *կապակցությունները այդպիսի հարաբերություն չեն արտահայտում։*

«Թումանյանի երգերում *կա և «էս» և «էն» (ՎՏ, Չ, 98)։ «Նույն մեղմախոս* Վերլենի Երգն *ես կրկնում դու համառ» (ՎՏ, 1, 260)։ «Փարիզի որովայնի մեջ մենք հիշեցինք* Էմիլ Զոլայի *համանուն* վեպը» *(ՆԶԱԳ. 308)։ «Նա վեր կացավ, վերցրեց պատմաբան* Լեոյի գիրքը» *(ՌԱՉ, 175)։*

Պատճառի, սկզբնապատճառի, ազդակի սեռականով կապակցություններ— *Այսպիսի բառակապակցություններում հատկացուցիչը ցույց է տալիս այն առարկան, որի պատճառով ստեղծվել է հատկացյալով արտահայտվող առարկան։ Այստեղ լրացումն ունի այն նշանակությունը, ինչ բայի պատճառի պարագա լրացումն է ունենում։*

Մ. Աբեղյանի և Վ. Առաքելյանի կողմից սեռականի այս իմաստը չի տարբերակված։ Ընդ որում Մ. Աբեղյանը այս իմաստն ունեցող սեռականով կապակցությունները նշում է ծագման սեռականով կազմված կապակցությունների մեջ[1]*։ Իրականում պատճառի, ազդակի սեռականը որոշակիորեն տարբերվում է ծագման սեռականից։ Եթե համեմատենք* արևի հուր *և* մանկան վիշտ *կապակցությունները, ապա պարզ կլինի, որ առաջինում* արևի *բառաձևը ցույց է տալիս այն առարկան, որից ծագել է հատկացյալով արտահայտված առարկան* (հուր), *մինչդեռ երկրորդ դեպքում* մանկան *բառաձևը ցույց չի տալիս այդպիսի հարաբերություն, այլ այն առարկան, որը պատճառ է դարձել հատկացյալով արտահայտված առարկայի երևան գալուն։*

Պատճառի, ազդակի սեռականի գործածությունը առանձնապես հատուկ է պատկերավոր, գեղարվեստական խոսքին. այն

[1] Մ. Աբեղյան, *նշվ. աշխ., էջ 428,* Վ. Առաքելյան, *նշվ. աշխ., էջ 77—78։*

շատ հաճախ է հանդիպում չափածո ստեղծագործություններում։ Այդպիսի կապակցություններից կարելի է նշել բաժանման վիշտ, վշտի մորմոք, լույսի հրճվանք, սիրո խայտանք, խնդության, ցավի արցունք, ուրախության ճիչ, կարոտի կսկիծ *և այլն*։

«Բայց մռայլոտ վտանգի երկյուղը *ճնշում էր նրա սիրտը» (Մուր., 4, 202)։ «Եվ վրդովում են իր միտքը թաքուն Դավաճան* գործի ամոթը *խորին Եվ արքայական փառքն ու մեծություն» (ՀԹ, 2, 139)։ «Ու թնդում է Թմուկ բերդը էն* աղմուկից խնդության» *(ՀԹ, 2, 140)։ «Գյուղամասներում բլբուլն էր երգում Գազելներն անուշ՝* սիրո արցունքով» *(Իս., 2, 46)։ «Միշտ նույն* կարոտի կըսկիծը *պահած՝ Ես դուրս եմ գալիս նորից շրջելու» (ՎՏ, 1, 196)։ «Սիրտս բորբոքիր,* բարձրության բերկրանք» *(ՎՏ, 1, 61)։ «Հողն է* մայրության հրճվանքից *դողում» (ՀՄՆԴԲ, 220)։ «*Սիրո խայտանքը *ավլեց ամենքին» (ՀԾՔՀ, 453)։*

Այսպիսի կապակցություններից կայուն են դարձել մահվան դող, նախանձի որդ *և այլն*։

Փոխաբերության տեսակետով կապակցություններ— *Մ. Աբեղյանի և Վ. Առաքելյանի կողմից փոխհարաբերություն դրսևորող սեռականը դիտված է մի դեպքում իբրև ստացական (պատկանելություն), մյուս դեպքում իբրև ծագման սեռականի ենթատեսակ, ելնելով այն բանից, որ եթե ասում ենք* Գրիգորի տղան, *ապա* Գրիգորի *բառաձևը ցույց է տալիս այն անձը, որից սերել, ծագել է* տղան *հատկացյալով արտահայտված անձը*[1]*։ Եթե* Գրիգորի տղան *կապակցության մեջ արտահայտված է ծագման հարաբերություն, ապա* Գրիգորի հայրը, —քեռին, —պապը *և նման կապակցություններում ի՞նչ հարաբերություն է արտահայտված։ Համոզիչ չէ նաև Վ. Առաքելյանի այն բացատրությունը, թե ծագման, սերման հարաբերությունը կարող է արտահայտվել նաև շրջված, այսինքն՝ հատկացյալը ցույց է տալիս այն անձը, որից սերվում է հատկացուցիչով արտահայտված անձը։*

Նախ պետք է ասել, որ ստացական սեռականի բնորոշումը չի կարող ընդգրկել տարբեր անձերի ազգակցական և այլ կարգի կապերի շարահյուսական դրսևորումը։ Մի՞թե իմաստային տեսակետից նույնական են, ասենք, Գրիգորի տունը,— հագուստը, *և* Գրիգորի թշնամին,— բարեկամը,— հարևանը *և այլ կապակցությունները։ Իմաստային այս տարբերությունը նկատի ունենա-*

---

[1] Մ. Աբեղյան, *նշվ. աշխատ. էջ 420—421,* Վ. Առաքելյան, *նշվ. աշխատ., էջ 72—73։*

յով էլ ազգակցական և ընդհանրապես ամեն կարգի փոխհարաբերություն դրսևորող սեռականները մենք դիտում ենք իբրև սեռականի առանձին իմաստ: Ըստ որում այս սեռականը կարող է ունենալ երկու դրսևորում:

Առաջին դեպքում սեռականը ցույց է տալիս այն անձը, որի հետ ազգակցական կապի մեջ է հատկացյալով արտահայտված անձը: Այսպես, կարող են լինել Դավթի որդին,— թոռը,— Երեխան, Պետրոսի աղջիկը,— հայրը և այլն:

«Էն ժամանակ Մարոյի Հայրիկն առավ արաղի կիքը բաժակն ու ասաց» (ՀԹ, 2, 9): «Մինը մեր Սարոն, իսկ մյուսն Անուշի Անդրանիկ եղբայր, դառնարած Մոսին» (ՀԹ, 2, 56): «Գալիս են նրանք՝ Դավթի ցեղը քաջ, Եվ Տարիելի սերունդներն արի» (ԳՍԲ, 179): «Մայրս պիտի դեռ գործե Գուլյա բալիս բալիկին» (ՀՃՔՀ, 65) «Այդ երեկո խոժոռ էր հայրն Իվանի» (Չ, 352): «Մռնչալով եկավ տանից էն առյուծի առյուծ որդին» (ՀԹ, 2, 128): «Գիժ Հոռմսիմը Անանի սկեսուրն էր» (ՆԴ, 1, 68):

Երկրորդ դեպքում հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունն արտահայտում է երկու անձերի ամեն կարգի փոխհարաբերություն: Սրանցից կարելի է բերել շատ օրինակներ, ինչպես, մեկի ընկերը,— բարեկամը,— թշնամին,— հյուրը և այլն:

«Մեր թշնամին բերում է տանկեր» (ՎՏ, 2, 128): «Իր ազգինը ով չսիրի՝ թշնամին է ողջ ազգերի» (ՀՃՔՀ, 446): «Կանչում եմ, գոչում՝ սուր մերկացրեք, Ելել է մարդու ոսոխն ամեհի» (ՀՃՔՀ, 117):

Այս սեռականը ևս կարող է գործածվել փոխաբերաբար՝ պատկերավոր խոսքի մեջ: Այսպես, կարող են լինել մտքի եղբայր, հավերժի որդի, արեգակի մանուկ, գարունների մայր և այլն:

«Ծով են աչքերը Ջավախքի դաշտեր» (ՀԹ, 2, 137): «Հարբեցրու ինձ լույս-հրայքներով, խավարների դեմ անհաղթ ախոյան, Գարունների մայր, ուրախության ծով» (Իս., 2, 82): «Դու մեր մտքի եղբայրն եղար կորովի» (ՎՆԻԱ, 42): «Այդ օրվանից հույսի եղբայրն եղար մեր, նպատակի եղբայրն եղար մեծագույն» (ՎՆԻԱ, 42): «Ես բանաստեղծ եմ՝ հավերժի որդի» (ՀՃՔՀ, 117): «Ուրախ կյանքի ընկերն եմ ես» (ՀՃՔՀ, 263):

Նույնատիպ կայուն կապակցություններ և դարձվածքներ են՝ սատանի ձագ,— ճուտ (շատ խորամանկ, չար), իժի ծնունդ (անչափ վնասակար, նենգ), շան որդի, շան տղա (հայհոյական դարձվածքներ, նաև՝ նենգ) և այլն:

Ենթակայական սեռականով կապակցություններ— Այս կապակցությունների մեջ հատկացուցիչը ցույց է տալիս այն անձը,

կամ առարկան, որը հատկացյալով արտահայտված առարկան ստեղծողն է։ Ենթակայական սեռականը աղերսակցվում է սեռական հոլովով ենթակայի հետ (համմտ. Պետրոսի վերադառնալը և Պետրոսի վերադարձը, գարնան գալը և գարնան գալուստը, բախտի բերած և բախտի բերում)։

Ենթակայական սեռականի գործածությունը շատ է տարածված ժամանակակից հայերենում։

«Բժիշկը երեսսրբիչը կախեց իր տեղը և սկսեց մատները մեկ-մեկ ծալել.— Ներվերի սարսափելի քայքայում, արյան սաստիկ պակասություն, մաղձի անչափ կուտակում, թոքերի թուլություն» (ՆԴ, 1, 152)։ «Խարխուլ մակույկով հանձնվիր ծովին, քան թե հավատա կնոջ երդումին» (Իս., 2, 52)։ «Թշնամու մահն եմ տեսնում ես կրկին» (ԳՍԲ, 179)։ «Որդիաբար եմ հիշում մաքրությունը քո հողի, Անծայրածիր դաշտերից բերրիությունն անարատ» (ԳՍԲ, 189)։ «Եվ իսկույն նորս իմաստուն խոսքն է իմ միտքը գալիս» (ՀՇՔՀ, 208)։ «Որդուս ժպիտով դրախտ է դառնում աշխարհը աչքիս» (ՀՇՔՀ, 208)։ «Դիմացավ որդոց անհետ կորստին» (ՀՇՔՀ, 456)։

Գեղարվեստական խոսքում ավելի շատ է ենթակայական սեռականի փոխաբերական կիրառությունը։ Այսպես, կազմվում են՝ հողմերի շունչը, ծովերի մռունչը, արևի համբույրը, հովի զրույցը, մուրճի լռությունը, ջրի պայքարը, շոգեկառքի սուլոցը, քարի մրմունջը, դրան երգը և այլն։

«Մեր դեմը խաղում ձորերի շունչը» (ՀԲ, 2, 35)։ «Հովի զրույցին ունկն դնելով՝ Աբու Մահարին խոսում էր անձայն» (Իս., 2, 57)։ «Լսվում է մրմունջը քարի» (ԳՍԲ, 249)։ «Ելնեմ, ծաղկումն է ձընծաղիկների» (ՀՇՔՀ, 198)։ «Հույսի մի ծիլն արժե գալուստ մի գարնան» (ՀՇՔՀ, 133)։ «Հովերն նարավի համբույրն են բերում» (ՀՇՔՀ, 139)։ «Ես ձեզ բերում եմ լեռների շունչը, Ես ձեզ բերում եմ հոգուս տրտունջը, Անզուսպ մռունչը վշտի ծովերի» (ՀՇՔՀ, 51)։ «Չգիտեմ՝ որտեղից է գալիս Ջութակի հեկեկանքը տրտում» (ՎՏ, 1, 103), «Ողջույնը կանեմ բարենիների» (Իս., 2, 49)։

Սակայն մի շարք դեպքերում դժվար է որոշել կապակցության բաղադրիչների հարաբերությունը։ Այսպես, բազմաթիվ կապակցություններում հավասարապես զգալի է և՛ ենթակայական, և՛ խնդրային հարաբերությունը։ Օրինակ՝ տենչանքի կատարում, աղջկա համբույր, կնոջ սեր, բարեկամի նամակ կապակցությունները կարելի է հասկանալ և՛ իբրև տենչանքը կատարվելը (տենչանքը կատարվում է), և՛ իբրև տենչանքը կատարելը (տենչանքը կատարում եմ,

ես, է և այլն), *և՛ իբրև* աղջկա համբուրելը (*աղջիկը համբուրում է*), *և՛ իբրև* աղջկան համբուրելը (*աղջկան համբուրում եմ, ես, է և այլն*), *և՛ իբրև* կնոջ սիրելը (*կինը սիրում է*), *և՛ իբրև* կնոջը սիրելը (*կնոջը սիրում եմ, ես, է*), բարեկամի (*գրած*) նամակ, *և՛* բարեկամին (*գրած*) *նամակ*։

«*Մի կյանք արժե մի* համբույրը աղջկա» (*ՀՇՔՀ, 94*)։ «Վարդի սիրուց *շատ էր սոխակն արտասվում*» (*ՀՇՔՀ, 186*)։ «Լույսի ծնունդով *ցավերը մեռցրեց*» (*ՀՇՔՀ, 456*)։

Ենթակայական սեռականը կարող է շփոթվել նաև պարագայականի հետ։ Այսպես, լույսի պայքար, կյանքի կռիվ *կապակցությունները կարելի է հասկանալ և՛ իբրև* լույսի պայքարելը (*լույսը պայքարում է*), *և՛ իբրև* պայքար՝ լույսի համար, *և՛ իբրև* կյանքի կռվելը (*կյանքը կռվում է*), *և՛ իբրև* կռիվ կյանքի համար։

«*Սիրում եմ* աչքերիդ տխրությունը *խորին*» (*ՎՏ, 1, 47*)։ «*Եվ* լույսի, *հոգու անդուլ* պայքարում *Բացվեց բոցբոցուն վերքն Աբովյանի*» (*ԳՍՄ, 219*)։ «*Ես տեսել եմ նրանց մեր երկրի ընդերքում*, Մետաղի *ու* քարի կռիվներում *ահեղ*» (*ԳՍԲ, 159*)։

Ենթակայական սեռականը կարող է շփոթվել նաև վերաբերության սեռականի հետ։ «Եկել է հիմա հերթը քեզ հասնել, Ունկընդիր եղիր կյանքի խրատին» (*ԳՍԲ, 193*)։

Ժամանակակից հայերենում գործածական են ենթակայական սեռականով մի շարք կայուն կապակցություններ, որոնք ստացել են դարձվածքի նշանակություն։ Այդպես են՝ սրտի ցավ, մողայի (*վերջին*) խոսք, խղճի խայթ, բախտի բերում (բերմամբ), արքի ծառայություն, Հուդայի համբույր, հավքի քուն, հոգու պարտք, ժողովրդի ձայն *և այլն*։

Խնդրային սեռականով կապակցություններ— *Այս բառակապակցություններում հատկացուցիչը ցույց է տալիս այն առարկան, որն իր հատկացյալով արտահայտված առարկայացված գործողության խնդիրն է։ Խնդրային հարաբերությամբ կազմված կապակցություններից կարելի է նշել*, մեքենաների հայթայթում, տրակտորների տեղափոխում, փողոցի սիրահար (*փողոցին սիրահարված*), տեսքի կարոտ, անմահության տենչ, մեկի սպանություն, գինու պաշտամունք, արվեստի երկրպագու, դռան բակոց *և այլն*։

«*Տուր ինձ* անցյալի *անդարձ* մոռացում» (*Իս., 2, 82*)։ «*Օ՜, դուք* արշինի երկրպագուներ» (*Չ. 106*)։ «*Տես, բարձրանում են ահա սերունդներ քանի*, Հայրենիքի կառուցման *սրտահույզ երգով*» (*ԳՍԲ, 151*)։ «Տեսքիդ կարոտով, *աղբյուրի ափին Թեքվել եմ ու քո ճամփին եմ նայել*» (*ԳՍԲ, 57*)։ «*Ու ծնվեց մարդու դեռ վայրի սրտին*

Ցավի զգացումն *ու ահը մահվան» (ՀՇՔՀ, 455)։ «Ուշանում է* տրակտորների տեղափոխումը» *(Բակ., 177)։*

Խնդրային հարաբերության սեռականը երբեմն էլ կարող է հասկացվել այլ իմաստներով։ Այսպես, մեկի ունկնդիր *կապակցությունը կարելի է հասկանալ և՛ իբրև* մեկին ունկնդրող *(խնդրային), և՛ իբրև* մեկի ուսանող *(փոխհարաբերության)։ Այսպիսի կապակցություններ կան հետևյալ նախադասություններում. «Սեր կրերի սերը միակ, Սերը՝* կյանքի տերը *միակ» (ՀՇՔՀ, 153)։ «Տարբեր արհեստի և ըմբռնումի տեր մարդիկ էին* Արմենակի ունկընդիրները» *(ՌԱՁ, 89)։*

Կարող են շփոթվել նաև խնդրային ու տեղի սեռականները։ Օրինակ՝ քաղաքի զարդ, դեմքի զարդ *կապակցությունները կարելի է մեկնաբանել մերթ իբրև* քաղաքը զարդարող *(խնդրային), մերթ՝* քաղաքում *(եղած)* զարդ *(տեղի)։*

«Այդ հարվածն համարում էր իր դեմքի զարդը» *(Զ, 406)։ «*Քաղաքի զարդերն *էին նրանց տները» (ԱՍԾ, 220)։*

Խնդրային սեռականով են կազմված մի շարք կայուն կապակցություններ ու դարձվածքներ, ինչպես մազի նամրանք, մահնի մերան, ատամի սիրուն, ի սեր աստծու, գլխի տեր, *(լայն)* սրտի տեր, *(մեծ)* հոգու տեր, *(մեծ)* խելքի տեր, *(պայծառ)* մտքի տեր, խոսքի տեր, սիրո տեր *և այլն։*

Արտացոլման, վերարտադրման սեռականով կապակցություններ— *Սրանցում հատկացուցիչը ցույց է տալիս այն անձը կամ իրը, որն արտացոլված է հատկացյալով դրսևորվող առարկայի մեջ։ Այս կապակցություններում հատկացյալը հանդես է գալիս իբրև հատկացուցչի արտացոլում, պատկեր կա՛մ ուղղակիորեն, կա՛մ պայմանականորեն։ Դրանցից կարելի է նշել* երկրի քարտեզ, բնության պատկեր, շարդի տեսարան,— պատկեր, մեկի լուսանկար,— նկար *և այլն։*

«Ահա մարդը միջտ— պատկերն աստծու» *(Իս., 2, 74)։ «Սա* պատանենն *է այն հուշակավոր արձանի» (ՆՁՍԳ, 364)։ «Երևակայության առաջը եկավ մահացած* տիրացուի պատկերը» *(ԱՍԾ, 139)։ «Նա դուրս էր հանել դարակներից ու պահարաններից իր բոլոր* նարազատների լուսանկարները» *(ԱՍԾ, 425)։ «Պատից նայում է* Պուշկինի դիմանկարը» *(ՌԱՁ, 333)։* «Մրճաշաղի ուրվագծեր *երբ-բահյուս» (ՎՏ, 1, 16)։ «Հայրումյանը մտածում էր, որ եթե ինքը նկարիչ լիներ, անպատճառ կնկարեր նրան՝* վճռւկի *իսկական մի* տիպ *ներկայացնելու համար» (ՆԳ, 1, 196—197)։*

Այս սեռականը ևս կարող է ունենալ փոխաբերական գործա-

ծություն, ինչպես՝ արվեստի դրսևորում, մահվան երազ, հոգու պատկեր, հաղթության կնիք *և այլն։*

«Ես էի պճնել փայլով դյութական Գորշ պատկերը *քո* կյանքի *և* հոգու» *(ՎՏ, 1, 104)։ «Քո* հաղթության *ու* սիրո կնիքը *դիր իմ վրա» (ՎՏ, 1, 107)։ «Ասես* պատկերն *եմ ես* բնության» *(ՀՇՔՀ, 249)։ «Հայ* քնարերգության *գեղեցիկ մի* հեռապատկեր *հափշտակում է Աղավնում» (ՌԱՋ, 206)։*

Մասնական սեռականով կապակցություններ— *Մ. Աբեղյանի և Վ. Առաքելյանի կողմից մասնական սեռական է համարվում այն հատկացուցիչը, որը ցույց է տալիս այն ամբողջը, որի մասն արտահայտված է հատկացյալով* (գինու շիշը, ցորենի բեռը, տանձի ճատը, դեղձի *(լավ)* տեսակը— *Մ. Աբեղյան,* արցունքի կաթիլը, օրի շատը, օրերի *մի* օր, ժամի սկիզբը,— վերջը, շաքարի կտորը, փողի կեսը, ճանապարհի երկայնքը— *Վ. Առաքելյան)*[1]*։ Սակայն Մ. Աբեղյանը ամբողջի և մասի հարաբերությունն արտահայտող կապակցություններից առանձնացնում է* ծառի ճյուղերը, ձիու գլուխը, թռչունի փետուրները, քաղաքի փողոցները *տիպի կապակցությունները՝ մտցնելով դրանք ստացական սեռականի մեջ։ Սա հետևողական մոտեցում չէ։ Այդ է պատճառը, որ Վ. Առաքելյանն ավելի առաջ է գնում և* ժամի սկիզբը, ճանապարհի երկայնքը *և նման կապակցություններ համարում է մասնական սեռականով։ Սակայն իրականում իմաստային ոչ մի տարբերություն չկա, մի կողմից,* քաղաքի փողոցները, ծառի ճյուղերը, թռչունի փետուրները *և, մյուս կողմից,* փողի կեսը, ժամի սկիզբը *կապակցությունների միջև։ Դրանք հավասարապես արտահայտում են ամբողջի և մասի հարաբերություն։ Միայն թե մի դեպքում* (տանձի հոտը, դեղձի լավը *տիպի կապակցություններում) ամբողջը ես կազմված է մասերից, որոնցից մի մասն է արտահայտվում հատկացյալով, իսկ մյուս դեպքում հատկացուցիչն ամբողջական առարկա է, իսկ հատկացյալը՝ նրա մի մասը։ Իմաստային տեսակետից ոչ մի տարբերություն չկա դրանց միջև։ Եվ իզուր է Վ. Առաքելյանը ստացական սեռականի մեջ մտցնում մարմնի և նրա մասերի հարաբերությունն արտահայտող կապակցությունների հատկացուցիչը* (ձիու ոսկորները, իմ ձեռքը, նրա գլուխը *և այլն)։ Դա արել է հետևելով Մ. Աբեղյանին, չնկատելով, սակայն, որ մասնական սեռականի համար իր բերած շատ օրինակներ ոչնչով չեն տարբերվում հիշյալ*

---

[1] Մ. Աբեղյան, *նշվ. աշխատ., էջ 423,* Վ. Առաքելյան, *նշվ. աշխատ., էջ 78—79։*

կապակցություններից։ Ի՞նչ տարբերություն կա, օրինակ, ժամի սկիզբը, նորիզոնի լայնությունը, վրանի մուտքը (որոնք մասնական է համարում) և ճաղափի փողոցները, բռնակի փետուրները, ձիու ոսկորները (որոնք ստացական է համարում) կապակցություննե-րի միջև։

Ելնելով սրանից, մենք ընդհանուրի, ամբողջի (առանձին առարկաների ամբողջության) և նրա մի մասի հարաբերությունը համարում ենք մասնական և այդ սեռականը՝ մասնական։ Մասնական սեռականը դիտում ենք 3 ենթատեսակներով՝ բուն մասնական, տարածական-մասնական և ժամանակային-մասնական:

Պետք է նկատի ունենալ, որ մասնական սեռական տերմինը գործածում ենք քերականագիտության ավանդույթներին հավատարիմ մնալով։ Իրականում այս իմաստը պետք է կոչվի ամբողջի սեռական, ինչպես այդ ընդունված է մասնագիտական գրականության մեջ։ Մասնական սեռականը բայի լրացման դերում հանդես եկողն է, որը համարժեք է հայերենի մասնական բացառականին (купить хлеба, пить чаю և այլն)[1]։

Բուն մասնական սեռականով կապակցություններ— Այս կարգի կապակցությունները շատ են գործածական։ Կարելի է նշել հացի պատառ,— փշրանք, հողի կտոր,— մի բուռ, կերակրի բաժինը, գլանակի մնացորդ, մարդկանց մեծամասնություն, ամպի ծվեններ և այլն։

«Հիմա ով է ծամում այն հացի պատառը ոսկի» (ԳՍԲ, 48)։ «Ես տեսել եմ նրանց մեր երկրի ընդերքում» (ԳՍԲ, 159)։ «Բոցավառվում են ահա կատարները շենքերի» (ԳՍԲ, 181)։ «Հողի ամեն մի բուռն հազար անմահություն կծնի» (ՀՇՔՀ, 115)։ «Անտառում ամպի ծվեններ կային» (ՀՍՆԴԲ, 205)։ «Կերակրի առաջին բաժինը տան ավագ մարդունն էր» (ԱՍԾ, 7)։ «Ցորենի վերջին հատիկն անգամ խլել էին» (ՍԽՄԽ, 395)։

Պատկերավոր խոսքում լայն տարածում ունի մասնական սեռականի փոխաբերական-վերացական գործածությունը, ինչպես՝ պատերազմի ձեռքը, հովի թևը,— շուրթը, սաղերի լեզուն, գիշերվա թևը և այլն։

«Բազմած լուսնի նուրբ շողերին, Հովի թևին թռչելով՝ Փերիները սարի գլխին Հավաքվեցին գիշերով» (ՀԹ, 2, 43)։ «Սակս, վիրավոր գազաններ էին, Մանչում-ռանում հողմի բերանով» (Իս.,

---

1 Տե՛ս О. С. Ахманова, Словарь лингвистических терминов , М., 1966, էջ 390—392։

2, 62)։ «Եվ ժամանակի ձեռքը *անտարբեր Կարբի-կավէն պիղծ հետքերը ձեր» (Իս., 2, 58)*։ «Արևի *ոսկի* մատները *իջան ու գուրգուրեցին հեռուները թաց» (Զ, 221)*։ *«Ձնծաղիկները* աչքերն *են* գարնան» *(ՀՇՔՀ, 42)*։

Այս կապակցություններից շատերն են դարձել կայուն դարձվածքներ, ինչպես՝ դարի ոգին, քամու բերանը, գրողի ծոցը, օձի լեզու, լույսի կտոր, շան երես, առյուծի սիրտ, ճնճղուկի սիրտ, սոխի գլուխ, գառան մորթի, ոչխարի մորթի, աչքի պոչ *և այլն*։

Սակայն սեռականի մի տեսակն էլ կազմվում է որևէ գոյականով և գոյականաբար գործածված թվականով. մարդու մեկը, թշնամու մեկը *և այլն, որտեղ, սակայն, թվականն ու գոյականը անբաժան են։ Օրինակ՝* «Մոռուքավորի մեկը *ջահ վառեց» (ՍԽՄԽ, 262)*։

Տարածական-մասնական սեռականով կապակցություններ— *Սա փոքր-ինչ տարբերվում է բուն մասնական սեռականից։ Տարբերությունն այն է, որ եթե բուն մասնական սեռականը ցույց է տալիս այն առարկան, որի մի մասն է արտահայտված հատկացյալով, ապա տարածական-մասնական սեռականով արտահայտվում է այն տարածությունը, որին կից, սահմանակից է հատկացյալով արտահայտված առարկան։ Այսպես լինում են՝* աղբյուրի ափ, ծովի եզր, ջրի ափ, գետի եզերք, շենքի բակ *և այլն*։

«Նրանցից ամեն մինը պետք է բռնեի ճակտի *մի* զառիվայրը» *(Մուր., 3, 328)*։ *«Տեսքիդ կարոտով,* աղբյուրի ափին, *Թեքվել եմ ու քո ճամփին եմ նայել» (ԳՍԲ, 97)*։

Այս սեռականը ևս պատկերավոր խոսքում կարող է ունենալ փոխաբերական-վերացական գործածություն։ Օրինակ՝ «Այս լեռներն են երկնային ակունքները *իմ* երգի» *(ՀՇՔՀ, 101)*։

Սրանցից դարձվածքներ են առաջացել, ինչպես՝ դժոխքի դուռ, մահվան դուռ, քթի ծակ *(բանականություն)*, քթի մազ *(շատ բծախնդիր) և այլն*։

Ժամանակային-մասնական սեռականով կապակցություններ— *Սրանցում հատկացուցիչը ցույց է տալիս ժամանակային ընդհանուր իմաստ ունեցող այն առարկան, որի մի հատվածը, մասն է արտահայտված հատկացյալով։ Սրանք կարող են ունենալ ուղղակի կամ փոխաբերական գործածություն։ Այդպիսի կապակցությունները շատ գործածական են գրական լեզվում։ Կարելի է նշել՝* կռվի գիշեր, աշխատանքի ժամ,— տարի, օրվա երեկո, *(նոր)* տարվա ձմեռ,— գարուն,—ամառ, կյանքի ձմեռ,— գարուն *և այլն*։

«Անցան հայոց վշտի դարերն *ահարկու» (ՀՇՔՀ, 306)*։ *«Մեր*

սիրո գարունն *էլ չի դառնալու*» (*ՀՇՔՀ, 42*)։ «*Ես հիշում եմ* տարիները *Մեր շինարար* աշխատանքի» (*ԳՍԲ, 214*)։ «*Հասել են* կյանքիս *աշնան* օրերը» (*ՀԹ, 2, 97*)։ «*Եվ ամեն մի ծաղկի մեջ* կյանքիս գարունն *եմ փնտրում*» (*ՀՍՆԴԲ, 246*)։ «Ամառվա *տոթ* երեկո *էր*» (*ՆԴ, 1, 64*)։

Ժամանակային-մասնական սեռականով կազմված են որոշ դարձվածքներ՝ օրերի *(մի)* օրը, օրի շատը, կյանքի արշալույս, կյանքի մայրամուտ *և այլն։ «Քուն թե արթուն՝* օրիս շատը *երազ եղավ, անցկացավ*» (*ՀԹ, 1, 154*)։

Արտաքին և ներքին հատկության կրողի սեռականով կապակցություններ— *Մ. Աբեղյանի և Վ. Առաքելյանի կողմից այս սեռականը դիտվում է ստացական (պատկանելության) սեռականի մի ենթատեսակ*[1]*։ Իրականում սա նույնական չէ ստացական սեռականի հետ, այլ տարբեր իմաստ ունի. ցույց է տալիս այն առարկան, որն ունի հատկացյալով արտահայտված հատկանիշը* (աղջըկա գեղեցկությունը,— հասակը, ծիածանի գույնը, կյանքի իմաստը, ընտանիքի աղքատությունը, մարդու բնավորությունը,— տրամադրությունը,— ուշադրությունը *և այլն)։ Այս կարգի կապակցությունները շատ տարածված են ժամանակակից գրական հայերենում։*

«*Թուրքերի* կանանց կերպարանք *առած Երևում են միշտ միայնակ մարդկանց*» (*ՀԹ, 2, 15*)։ «*Լցրեք* պոետիս հաճույքը *վսեմ*» (*ՀԹ, 2, 45*)։ «Վարդի գույնը *թշերն օծեց*» (*Իս., 2, 134*)։ «*Փուշ անգամ չարժե մեռության գրկում* Գեղեցկությունը վարդ ու աղջըկա» (*ՀՇՔՀ, 25*)։ «*Ես անցնում եմ արտերով, ու հասակս վիթխարի՝ Մանուկի պես կորչում է* հասակի *տակ* հասկերի» (*ՀՇՔՀ, 114*)։ «*Դու ես* կյանքի իմաստն *այսօր ու մարդ քեզնով է խորհում*» (*ՀՇՔՀ, 115*)։

Հատկության կրողի սեռականը կարող է գործածվել նաև փոխաբերաբար. օրինակ՝ «Իրերի *երկաթյա* տրամաբանությունը *դրան է հանգեցնում*» (*ՌԱՋ, 339*)։ (*Այստեղ* իրերի տրամաբանություն *կապակցությունը վերածվել է դարձվածքի*)։ *Այսպես են նաև* գայլի ախորժակ, մեղրի գույն, կայծակի արագություն *և այլն։*

Փոխարինության սեռականով կապակցություններ— *Այս սեռականը ցույց է տալիս այն առարկան, որին փոխարինում է հատկացյալով արտահայտված առարկան։ Այսպիսի կապակցություններում հատկացյալ լինում են սահմանափակ թվով գոյական-*

[1] Մ. Աբեղյան, *նշվ. աշխատ., էջ 420—421,* Վ. Առաքելյան, *նշվ. աշխատ., էջ 72—73։*

ներ՝ վարձ, պարտք, գին, վրեժ և այլն։ Դրանցից կարելի է նշել ցորենի գին, ընկերների վրեժ, աշխատանքի վարձ և այլն։

«Նա հաստատ գիտեր, որ Բեշիրը չի հանգստանալ, մինչև որ յուր կրած պարտության վրեժը *չլուծե» (Մուր., 4, 336)։ «Եվ ժողովուրդը մեր ազատագրի,* Դատաստանության *իբրև* վարձ *արդար, Բարձրացնում է սուրն այս նախատինքի» (ՎՆԻԱ, 182)։ «Ով կին ունի՝ ի՞նչ գիտե* կնոջ գինը *աշխարհում» (ՀՇՔՀ, 260)։ «Ամառվա և աշնան* աշխատանքի փողն *օր գալիս էր, օր գնում» (ՆԴ, 1, 46)։ «Բայց ստիպված էր* կառքիս փողը *տալ» (ՆԴ, 2, 464)։*

ՈՐՈՇԻՉ—ՈՐՈՇՅԱԼ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժամանակակից հայերենում շատ են գործածվում բառակապակցությունների այն տեսակները, որոնցում սեռականով լրացումը որոշիչ հարաբերությամբ է կապվում լրացյալի հետ։

Նյութի սեռականով կապակցություններ— *Նյութի սեռականը ցույց է տալիս այն առարկան, որից պատրաստված է լրացյալով արտահայտված առարկան*[1]*։ Այս կարգի կապակցությունները իմաստային տեսակետից հավասարազոր են հարաբերական ածականով կազմված կապակցությունների (հմմտ.* մետաքսի թել *և* մետաքսե թել*)։ Սակայն պետք է նշել, որ ոչ բոլոր գոյականներից կարող են կազմվել հարաբերական ածականներ։ Այսպես, եթե կարելի է ասել* մետաքսի *և* մետաքսե, պղնձի *և* պղնձե, երկաթի *և* երկաթե, *ապա չի կարելի ասել* խաղողե, ցորենե, լոբե *և այլն։*

Նյութի սեռականով կապակցություններն ավելի շատ գործածվում են գեղարվեստական խոսքում, մեծ մասամբ չափածոյում, իսկ հարաբերական ածականով կապակցությունները՝ առօրյա խոսակցական լեզվում։

«Զարկում են, զարկում օձի մտրակով*» (ՀԹ, 2, 18)։ «Եվ հավաքում էին յուր երգիչները այդ երկու,* Ճանիները պղնձի *անկենդան ու պաղ» (ԳՍԲ, 256)։ «Նա կարող էր* մետաքսի թելերից *Պարտեզներ հյուսել անթառամ» (ԳՍԲ, 248)։ «Կղնդան* ռելսերը երկաթի*» (ԳՍԲ, 155)։*

Գրական լեզվում պատկերավորման նպատակով հաճախ նյութի սեռականը գործ է ածվում փոխաբերաբար։ Այդպիսի կապակցություններից կարելի է նշել արևի գինի,— գունդ, լուսնի սկավառակ, վարդի շրթունք *և այլն։*

---

[1] Վ. Առաքելյանը *նյութի սեռականը մտցնում է ծագման սեռականի մեջ (*Մ. Աբեղյանի *կողմից դա առանձին իմաստ է դիտված)։*

Տե՛ս Վ. Առաքելյան, *նշվ. աշխատ., էջ 78,* Մ. Աբեղյան, *նշվ. աշխատ., էջ 423—424։*

«Ու երերաց երկրի գույնը» (ՀԹ, 2, 126)։ «Խաղաղ ջրերի վճիտ ալմաստում Դողում էր ոսկի ամպերի հեռուն» (ՎՏ, 1, 99)։ «Հոսում է արևի գինին» (Չ, 287)։ «Դու չրքունքներ ունես վարդի Եվ աչիկներ գեղեցիկ, Ատամնաշար աղամանդի Եվ աչիկներ գեղեցիկ, Այտեր ունես վարդ ու կարմի Եվ աչիկներ գեղեցիկ» (ՀԾՔՀ, 168)։

Սրանցից ջրերի հայելի, վրեժի թույն կայուն դարձվածքներ են դարձել։

Բաղկացության սեռականով կապակցություններ— Բաղկացության սեռականը ցույց է տալիս առարկաների այն ամբողջությունը, որոնցից գոյացել է լրացյալով արտահայտված առարկան իբրև մի ամբողջություն։ Մ. Աբեղյանը սեռականի այս իմաստը նույնացնում է մասնական սեռականի հետ[1]։ Վ. Առաքելյանն էլ, թեև բաղկացության սեռականը համարում է իմաստ, սակայն այն դիտում է մասնական սեռականի տարբերակ[2]։ Իրականում բաղկացության սեռականը, իմաստով մոտ լինելով նյութի, ծագման, մասնական սեռականներին, այնուամենայնիվ, ինքնուրույն է, և պետք է առանձնացնել։ Դրանցից կարելի է նշել ծաղիկների փունջ, ծխի քուլա, արագիլների երամ, աստղերի բույլ, գյուղերի շարք, գնդակների տարափ, ուղտերի քարավան, գայլերի ոհմակ, աղջիկների խումբ և այլն։

«Թափում էին փայտերի կույտը» (Մուր., 4, 218)։ «Մենք ունենք էստեղ դեղին ոսկու դեզ» (ՀԹ, 2, 111)։ «Եվ ո՞վ են մարդիկ... աղվեսների հոտ» (Իս., 2, 73)։ «Եվ ոլորվում էր այն քարավանը Սեզ ամավների շարքերի միջով» (Իս., 2, 51)։ «Գնում ենք ու գնում ենք ժայռուն, Գյուղերի գորշ շարքերի մոտով» (ԳՄՀ, 185)։ «Անհայտ, անծանոթ ձեռքեր հոգածու Դնում են ծաղկի փնջեր ու պսակ» (ՎՆԻԱ, 170)։ «Արագիլների երամն է թռչում» (ԳՍԲ, 111)։ «Քարավաններն ուղտերի եկան ու անցան» (ԳՍԲ, 267)։ «Սրտիս ծաղկանց մի փունջ ես դու, իմ բալիկ» (ՀԾՔՀ, 204)։

Գեղարվեստական պատկերավոր խոսքում ավելի շատ տարածված է բաղկացության սեռականի փոխաբերական գործածությունը։ Նա գեղեցկացնում է ոճը, պատկերավորություն, վեհություն տալիս լեզվին։ Այդպիսի կապակցություններից կարելի է նշել՝ հույզերի սարեր, վշտերի ամպ, փողոցների կծիկ, լույսի խուրձ, աղջիկների փունջ, խոների գնդեր, արցունքի հեղեղ, ատվե-

[1] Մ. Աբեղյան, նշվ. աշխատ., էջ 423։
[2] Վ. Առաքելյան, նշվ. աշխատ., էջ 78—79։

րի զորք, տրտմության ժանյակ, ուղիների ժապավեններ, հուշերի վտակներ, աստղերի քարավաններ, խոհերի թել, ամպերի վաշտեր *և այլն։*

«*Գոհար* աստղերի քարավանները *Թափառում էին երկնի ճամփեքով*» *(Իս., 2, 47)։ «Շաղ էին տալիս բուռերով փոշի Եվ կտրում* թելը *նրա* խոհերի» *(Իս., 2, 66)։ «Խոլ կայծակները հրեղեն սրով Ծվատում էին* վաշտերն ամպերի» *(Իս., 2, 71)։ «Մութը հյուսում է* տրտմության ժանյակ» *(ՎՏ, 1, 32)։ «Ես չգիտեմ՝ ուր են տանում հեռավոր* Ուղիների ժապավեններն *անհամար*» *(ՎՏ, 1, 58)։ «Լույս* հուշերի վտակներն *են կարկաչում*» *(ՎՏ, 1, 68)։ «Իմ ներսում հիմա հուզվում են, աճում Ու շարժվում ուրիշ* խոհերի զորքեր» *(Չ, 101)։ «Անցյալ գեղեցիկ* աղջիկների *մի* փունջ» *(ՆԶՍԳ, 272)։ «Կոնդից ցած ընկած էր նեղ, ծուռումուռ* փողոցների *մի* կծիկ» *(ԱՍՃ, 172)։*

Գրական լեզվում բազմաթիվ են այն կապակցությունները, որոնցում առկա են բաղկացության և պարունակության իմաստները հավասարապես։ Այսպես, քարերի քաղաք, խոհերի ծով, հուշերի օվկիան, դրոշների ծով,— անտառ *կապակցություններում զգացվում է բաղկացության և պարունակության իմաստ։*

«Սքողում էին հողի թուխպերով *Անծիր դաշտերը, ավան ու ոստան*» *(Իս., 2, 76)։ «Ողջույն, սև* քարերի, *Սև* քարերի քաղաք» *(ԳՄՀ, 288)։ «Մնացել էր* խոհերի ծովի *մեջ շվար*» *(ԳՍԲ, 271)։ «Սև* հուշերի օվկիանում *կորած կղզու եմ նման*» *(ՀՇՔՀ, 25)։*

Որոշ կապակցություններում էլ զգացվում են բաղկացության և պատկանելության իմաստներ «Հարկավոր է քանդել հնի բերդը» *(Չ, 348)։*

Պարունակության սեռականով կապակցություններ— *Պարունակության սեռականը ցույց է տալիս այն առարկան, որը պարունակվում է լրացյալով արտահայտված առարկայի մեջ (տարածական նշանակությամբ)։ Արդի հայերենում այս կարգի կապակցությունները գործածության լայն շրջանակ ունեն։ Այս կապակցություններից կարելի է նշել* թույնի բաժակ, հարսանիքի տուն, ոսկի սար, բարդիների պուրակ, ոճիրների աշխարհ, մրգի սինի *և այլն։*

«Եվ աղմկալի հարսանիքի տնից *Դուրս եկավ Մոսին սաստիկ վիրավոր*» *(ՀԹ, 2, 58)։ «Որսով մեջը լի* ոսկի սար *ուներ*» *(ՀԹ, 2, 104)։ «Գտավ* լուցկու տուփը *և մի կերպ վառեց լամպը*» *(ՆԴ, 1, 6)։ «Տարիներով մեջը կուտակված* թույնի բաժակը *արդեն պռունկե պռունկ լցվել էր*» *(ԱՍՃ, 391)։* «Բարդիների պուրակում *սիրեց աղջիկն ուրիշին*» *(ԳՍԲ, 232)։ «Գյուլնարի պես վարդ,* հարեմի

Երկիր, *Իրանի ու մի հարեմում չկար»* (ԳՄՔ, 247)։ «Ոճիրների աշխարհը *մեր Զի մեռնելու հավիտյան»* (ԳՄՔ, 298)։

Պարունակության սեռականը հաճախ կարող է գործածվել փոխաբերաբար։ Այսպես, կարող են լինել՝ իմաստության ծով, խոների արտեր, երազների աղբյուր, կյանքի արտ *և այլն։*

«*Գավիթը մնաց* մտքի ծովն *ընկած*» (ՀԲ, 2, 106)։ «Դաշտը *իջավ* արյունի» (ՀԲ, 2, 135)։ «*Դու* երազների աղբյուր *ղովաքեր*» (Իս., 2, 59)։ «*Իմ դեմ* խոների *չհնձած* արտեր» (Զ, 104)։ «Իմաստության ծովս *էլ ցրես ձյուների հետ իմ գլխի*» (ՀՇՔՀ, 393)։

Պետք է նշել, որ պարունակության սեռականը բնագրից դուրս կարող է շփոթվել նպատակի, հատկացման սեռականների հետ։ Այսպես, ներկի դույլ, խնջույքի դահլիճ, բողոքի բացականչություն, արվեստների թանգարան *կապակցությունները կարելի է հասկանալ և՛ իբրև* ներկի *(համար հատկացված)* դույլ, *և* ներկ *(պարունակող)* դույլ, *և՛* խնջույքի *(համար հատկացված)* դահլիճ, *և՛* խրնջույք *(պարունակող)* դահլիճ, *և՛* բողոքի *(նպատակով արվող)* բացականչություն, *և՛* բողոք *(պարունակող)* բացականչություն, *և՛* արվեստների *(համար պատրաստված)* թանգարան, *և՛* արվեստներ *(պարունակող)* թանգարան:

«*Լուռ է* խնջույքի դահլիճը» (Իս., 2, 163)։ «*Հաճախ տեղերից նետում էին* բողոքի բացականչություններ» (ՆՉՍԳ, 139)։ «*Տեսանք նաև* արվեստների թանգարանը» (ՆՉՍԳ, 296)։

Պարունակության սեռականով են կազմված բազմաթիվ կայուն կապակցություններ և դարձվածքներ, ինչպես՝ խելքի ծով, խելքի տոպրակ, ստի տոպրակ, համբերության բաժակ, առատության եղջյուր, խելքի պուտուկ, խելքի տուն, մեղքի պարկ, գինու տոպրակ *(հարբեցող)*, արյան բաղնիք *և այլն։*

Վերաբերության սեռականով կապակցություններ— *Վերաբերության սեռականը ցույց է տալիս այն առարկան, որին վերաբերում է լրացյալով արտահայտված առարկան։ Այս դեպքում իբրև լրացյալ հանդես են գալիս բայական ծագում ունեցող գոյականներ՝ ասացական նրբերանգով։ Այսպես,* գեղեցկության համբավ *կապակցության մեջ* համբավ *լրացյալն ունի բայական ծագում* (համբավել *բայից*), *և* գեղեցկության համբավ *նշանակում է* գեղեցկության մասին, վերաբերյալ համբավ: *Ավանդաբար հայ քերականագիտության մեջ* վերաբերություն *տերմինով արտահայտել են այն, ինչ մենք հասկանում ենք իբրև փոխհարաբերության սեռական (տե՛ս 61—62 էջերը)։* Վերաբերության սեռական *տերմինը առաջին անգամ այս նշանակությամբ գործածել է Վ. Առաքելյա-*

նը[1]։ Կարծում ենք, որ այս տերմինը ճիշտ է արտահայտում սեռականի տվյալ իմաստը, մանավանդ որ գործածական են նաև վերաբերության բացառական և վերաբերության խնդիր տերմինները։ Վերաբերության սեռականով կապակցությունները հաճախադեպ գործածություն ունեն։ Դրանցից կարելի է նշել սիրո զրույց, կռվի պատմություն, կռվի ազդանշան, մահվան բոթ, փառքի հանդես և այլն։

«Ես լավության խոսքն եմ ասում» (ՀԹ, 2, 195)։ «Արին մի անգամ գովքը սիրունի» (ՀԹ, 2, 137)։ «Երեք գիշեր ու երեք օր Բոթը տվին Դավթի մահվան» (ՀԹ, 2, 127)։ «Կարծես թե սիրո քնքուշ խոսք ասաց նիրհող դաշտերին» (ՎՏ, 1, 11)։ «Նրա գեղեցկության համբավը կարկառուն Չիչում է անկասկած այն վիպացյալ սիրուն» (ՆԶՄ, 577)։ «Նա նոր մրրիկների ավետիս էր բերում» (ԳՍԲ, 178)։ «Հիմա կուզեմ անվերջ լսել ոսկի հեքիաթն իմաստության» (ՀՇՔՀ, 272)։ «Վառել են այն, որպես կռվի ու տագնապի ազդանշան» (Չ, 254)։ «Չարագուշակ, դաժան երգեց մաուզերը Արյան, մուժի, մահի, ասպատակի երգ» (Չ, 415)։ «Պոետն իր կյանքի պոեմն էր գրում» (ՀՍՆԴԲ, 161)։

Վերաբերության սեռականը երբեմն նման է լինում պարագայական սեռականին։ Այսպես, օրվա նորություն կապակցությունը կարելի է հասկանալ և՛ իբրև օրվա (մասին) նորություն, և՛ օրվա (ընթացքում կատարված) նորություն:

«Նրանք պատմում էին միմյանց այդ օրվա նորությունների մասին» (ՄԱՊ, 36)։

Վերաբերության սեռականով են կազմված կյանքի և մահվան խնդիր, պատվի խնդիր, պատվի գործ, հացի խնդիր և այլ կայուն կապակցություններ ու դարձվածքներ։

Համեմատության և գերադրության սեռականով կապակցություններ— Այս կապակցություններում սեռական հոլովով դրված բառը ցույց է տալիս այն առարկան կամ անձը, որի համեմատությամբ առավել է լրացյալով արտահայտված առարկան, անձը։ Ընդ որում կապակցության բաղադրիչները կարող են լինել և՛ գոյականներ, և՛ գոյականաբար գործածված ածականներ։ Այստեղ մեծ մասամբ լրացումը և լրացյալը արտահայտվում են նույն բառով, սակայն լրացումը հոգնակի է լինում։ Սրանցից կարելի է նշել՝ իղձերի իղձ, մեղքերի մեղք, հրաշքների հրաշք, խնդիրների խնդիր, բարիքների բարիք, մեծերի մեծ, մեծերի մեծագույն և այլն։

[1] Վ. Առաքելյան, նշվ. աշխատ., էջ 85։

«Դու մեծերի մեծագույնը, *վիթխարի, Նոր պատմության ռահահորդ ու ռահվիրա» (ՎՆԻՍ, 45)։ «Եվ գոհ մնաց նա իր կյանքից և ինքն իրեն, Որ* իղձերի իղձը *տեսավ մարմնավորված» (ՎՆԻՍ, 371)։ «Դու ես միակ իմ գանձը, դու ես* գանձերիս գանձը*» (ՀՇՔՀ, 46)։ «Դու* հրաշքներիս հրաշքն *իմաստուն» (ՀՇՔՀ, 459)։ «Երբ սեղանիս վրա նորահայցն է բուրում՝* Բարիքների բարիքն *այս աշխարհի» (ՀՄՆԴԲ, 134)։*

Սրանցից դարձվածքներ են արքայից արքա *(գրաբարյան ձևով),* սրբություն սրբոց, երգ երգոց, իշխանաց իշխան, ունայնություն ունայնությանց *(գրաբարից) և այլն։*

Պարագայական սեռականով կապակցություններ— *Ինչպես արդեն նշվել է, սեռական հոլովով լրացում ունեցող կապակցություններում լրացումը կարող է արտահայտել այն բոլոր իմաստները, ինչ որ բայի լրացումները։ Այս երևույթն ակնբախ է հատկապես այն կապակցությունների մեջ, որոնցում լրացումն արտահայտում է պարագայական բազմազան հարաբերություններ՝ տարածական, ժամանակային, չափի, նպատակի և այլն։*

Պարագայական սեռականով կապակցությունները երկու կարգի են լինում։ Մի դեպքում լրացումը և լրացյալը գտնվում են մոտավորապես այն հարաբերության մեջ, ինչ որ բայի լրացումն ու բայը։ Դա պայմանավորված է տվյալ լրացյալի բայական կամ ածականական ծագմամբ։ Երկրորդ դեպքում լրացյալ գոյականը բայական ծագում չունի, և լրացման ու լրացյալի հարաբերությունը զուտ պարագայական-որոշիչ երանգի է։ Այսպես, ամրոցի բնակիչ *և* սարերի հովիվ *կապակցությունները տարբեր բնույթի են։* Ամրոցի բնակիչ *կապակցության մեջ զգացվում է սոսկ պարագայական հարաբերություն՝* ամրոցում բնակվող: *Իսկ երկրորդ դեպքում այլևս այս կարգի հարաբերություն չկա, այլ տարածական-որոշիչ հարաբերություն՝* սարերում *(աշխատող)* հովիվ (սարերի հովիվ):

Պարագայական հարաբերության սեռականով կապակցությունները բաժանում ենք ենթատեսակների.

Ա. Տարածական (տեղի) հարաբերության սեռականով կապակցություններ— *Առաջին դեպքում լրացում սեռականն ու լրացյալը բայի ու նրա լրացման կապակցություն են հիշեցնում՝ շնորհիվ լրացյալի բայական ծագման։ Դրանցից կարելի է նշել* ճանապարհի անցուդարձ, քարայրի բնակիչ *և այլն։*

«...Բնակիչը *մռայլ* քարայրի *Վագրեր է բռնել կացինով քարե» (ՀՇՔՀ, 97)։ «Աղավնին հազիվ աչքի անցկացրեց* տիտղոսա-

բերքի մակագրությունը *և մռայլված նայեց իրեն»* *(ՌԱՋ, 166)*։ «*Ոչ մի բան բաց չէին թողնում* ճանապարհի անցուդարձից» *(ՌԱՋ, 274)*։

Երկրորդ դեպքում լրացումը և լրացյալն արտահայտում են սոսկ տարածական-որոշիչ հարաբերություն։ Կարելի է նշել վեպի, երկի հերոս, երազի ասպետ, փողոցի փոշի, անապատի հեղեղ, անտառի եղնիկ, ձեռքի կապոց, Երևանի կոնյակ, հնոցի հուր, սարերի հովիվ, գյուղի ամբոխ, սարի ոտս *և այլն։*

«*Ձորան Կարոն* սարերի *Մի* հովիվ *էր վիթխարի*» *(ՀԹ, 2, 9)*։ «*Հրճվում էր անզուսպ* ամբոխը գյուղի» *(ՀԹ, 2, 55)*։ «*Էն* սարի ոտն *էլ գնաց մեր ձեռից*» *(ՀԹ, 2, 105)*։ «Ճալակի հացը *դրեց թախտի վրա*» *(ՆԴ, 1, 29)*։ «*Նույնն է* խանութը դեմի» *(ՎՏ, 1, 260)*։ «*Դեմքին դեռ մնացել էր* գործարանի մուրը» *(Զ, 352)*։ «*Եթե* անապատի հեղեղն *է Շամիրամ, Նաիրդ Երասխ է մաքրաջուր*» *(ՆԶՄ, 91)*։ «*Ես անզգիչ մի պոետ եմ* փողոցների փոշով *հարբած*» *(ԳՄՀ, 21)*։ «*Անմեղություն հավաքեց* եղնիկներից աշխարհի» *(ԳՍԲ, 287)*։ «*Հանե՛մ* գանձերը *հայոց* լեռների» *(ՀՇՔՀ, 367)*։

Գեղարվեստական պատկերավոր խոսքի մեջ հաճախ տեղի սեռականը գործ է ածվում փոխաբերաբար։ Այսպես, լինում են սրտի հեղեղ, հոգու լույս, հեքիաթի խնձոր *և այլն։ Օրինակներ՝* «*Ո՞վ է իմ* հոգու լույսերը *մարել*» *(ՎՏ, 1, 98)*։ «Սրտիս հեղեղն *է եռնում ու ծածկում է ձոր ու լեռ*» *(ՀՇՔՀ, 101)*։ «*Խնձորով, Ոչ* հեքիաթի խնձորով, *Ես ձեզ դրախտ կտանեմ Արտամետի խնձորով*» *(ՀՇՔՀ, 399)*։

Այս կապակցություններից դարձվածքի են վերածվել տան ճրագ, աչքի լույս, աչքի փուշ, ձեռքի կեղտ, ոտի հող, սրտի հուր (սրտի կրակ), երեսի ջուր, դարմանի տակի ջուր, ականջի օղ *(ծառա)*, դժոխքի կրակ, երեսի կաշի *(անդերես մարդ)*, բանի ճանճ, ճակատի գիր, ոտքի տակի հող, ջրի գորտ *(լողանալ շատ սիրող)*, տան տղա *(մտերիմ)*, տան քոքուկ, փողոցի աղջիկ, ճակատի քրտինք, օջախի տղա,— աղջիկ *և այլն։*

Բ. Ուղղության սեռականով կապակցություններ— *Լրացումը ցույց է տալիս այն տարածական տեղը, դեպի ուր ուղղված է լրացյալով արտահայտված առարկան։ Այստեղ ևս առկա է բայի և նրա լրացման (տվյալ դեպքում՝ ուղղության տեղի պարագայի) հարաբերություն։ Այս կապակցություններից կարելի է նշել՝ (Արարատյան)* դաշտի ճանապարհ *(ճանապարհ, որը Արարատյան դաշտ է տանում)*, Մոսկվայի գնացք *(Մոսկվա մեկնող գնացք, նաև՝ Մոսկվայից եկող գնացք)*, Աշտարակի ավտոբուս *(Աշտարակ մեկ-*

նող ավտոբուս, նաև՝ Աշտարակից եկող ավտոբուս), Թբիլիսիի խճուղի, Երևանի գիծը *(Երևան տանող գիծը) և այլն:*

«...զինվորները ձիաները հեծան և Արարատյան դաշտի ճանապարհը *բռնեցին» (Մուր., 4, 326): «Հաճի աղան դուրս եկավ խանութից և բռնեց* տան ճամփան*» (ԴԴ, 1, 17): «Առավոտյան վաղ բռնեցին* Թելերի ճանապարհը*» (ՆԴ, 1, 38):*

Ուղղության սեռականով են կազմված ջրի ճամփա, փրկության ճանապարհ *և նման կայուն կապակցություններ: Օրինակ՝ «Ընտրված է ճշմարիտ ուղին,* փրկության ճանապարհը *հայոց» (ՄԽՄԽ, 162): Այստեղ* փրկության *սեռականը կարելի է մեկնաբանել նաև նպատակի իմաստով:*

Գ. Ժամանակի սեռականով կապակցություններ— *Այս դեպքում սեռականով լրացումը ցույց է տալիս այն առարկայացած ժամանակը, որի ընթացքում գոյություն է ունեցել (կամ ունի) լրացյալով արտահայտված առարկան: Այս կարգի կապակցությունները ևս երկու տեսակ են լինում: Մի դեպքում լրացման ու լրացյալի կապակցությունը հիշեցնում է բայական կապակցություն: Այդպես են, օրինակ,* կյանքի տառապանք, միջօրեի ժամերգություն, վաղվա ցնծություն,— հայտարարություն, տարեվերջի քննություն, ձմռան արձակուրդ, *որոնցում լրացյալի բայական ծագման հետևանքով զգացվում է լրացման ժամանակային-պարագայական իմաստը:*

«Ձմռան արձակուրդին *նոր հետաքրքիր զբաղմունք գտավ Ղուկասն իր համար» (ՌԱՁ, 71):* «Տարեվերջի քննությունը *մոտ էր» (ՌԱՁ, 144): «Ուզում եմ,* վաղվա ցնծության *գուշակ, Կարոտս նետած լուսեղեն հեռուն, Վառել երգերս, որպես դրոշակ» (ՎՏ, 1, 197): «Հետաքրքրությամբ սպասում էր նրա* վաղվա հայտարարության*» (Մուր., 3, 286):*

Երկրորդ դեպքում՝ սեռականով լրացումը ցույց է տալիս լրացյալի ժամանակային հատկանիշը, և կապակցությունը նման չէ բայականին: Սրանցից կարելի է նշել գարնան անձրև,— թռչուն, մանկության վայրեր,— ընկեր, ամռան արև *և այլն:*

«Գրքաց Գրիգորը նստեց իր առաջվա տեղը*» (ՆԴ, 1, 14): «Եվ* ներկայիս մարդուն *կերգե» (2, 114):* «Ամռան արևն *է կանգնել զենիթում» (Չ, 104): «Պիտի ընկնե՞մ գիրկը ձեր, Երազ* վայրեր մանկության*» (ՀՇՔՀ, 366):* «Գարնան անձրևն *է խշշում իմ հին տան վրա» (ԳՄՀ, 137):*

Ժամանակի սեռականով են կազմված մի շարք կայուն կապակցություններ ու դարձվածքներ, ինչպես՝ օրվա հերոս, աշնան տերև, օգոստոսի աղվես *(շատ նիհար),* օրվա հարց *և այլն:*

Դ. Չափի սեռականով կապակցություններ— *Լրացումը ցույց*

է տալիս այն առարկան, որը չափանիշ է ծառայում լրացյալով արտահայտված առարկայի համար։ Չափը տարբեր բնույթի կարող է լինել (ժամանակային, տարածական, ծավալի, գնի, արժեքի և այլն)։ Մ. Աբեղյանը և Վ. Առաքելյանն ընդունում են միայն գնի և արժեքի սեռականը։ Սակայն գինն ու արժեքը չափի մի տեսակն են, հետևաբար գնի և արժեքի հետ հավասար նշանակություն ունեն չափի մյուս տեսակները։

Այս կապակցությունների համար բնորոշն այն է, որ լրացումը մեծ մասամբ հանդես է գալիս թվական կամ այլ լրացումով, ըստ որում թվականի և չափի սեռականի կապակցությունն ունի նախադասության մեկ անդամի դեր[1]։ Կան դեպքեր էլ, երբ լրացումը միայնակ արտահայտում է այդպիսի կապակցության իմաստ։ Օրինակ՝ դարերի երկիր:

Ժամանակային չափի սեռականով կապակցություններն ավելի շատ են գործածական մյուսներից։ Դրանցից կարելի է նշել՝ հազար տարվա կարոտ, երկու տարվա ընկերներ, մի քանի օրվա ճանապարհ, երկու ժամվա ճանապարհ, օխտը տարվան խարջը և այլն։

«Դու օխտը տարվան խարջը չես առել» (ՀԹ, 2, 107)։ «Թշնամին հեռու է իրենցից միայն երկու ժամվա ճանապարհ» (Մուր., 3, 178)։ «Հազար տարվա կարոտ ունի իմ երազը հաղարաթև» (ՀՇՔՀ, 245)։ «Դարերի երկիր Հայաստանս» (ՀՍՆԴԲ, 61)։ «Մի ժամվա ճանապարհ էր մնացել» (ՍԽՄԽ, 155)։ «Հին գրեր կարդացող մարդիկ ասում են, թե հազար տարվա շենք է» (ՍԽՄԽ, 218)։ «Ձիերը սլանում էին դեպի աջափնյա տափարակով դեպի կեսօրվա հեռավորության վրա գտնվող լեռնագագաթի ձյուները» (ՍԽՄԽ, 66)։

Գնի և արժեքի սեռականով կապակցություններից են երեք ռուբլու գիրք, հինգ կոպեկի տետր, հազար ռուբլու ապրանք և այլն։

«Տո, էրկու գրոշի նավթն ի՞նչ ա, որ չես առնում» (ՆԴ, 1, 78)։ «Ես ճանաչում եմ շատ այդպիսի կրթված հայ աղջիկների, որոնց գլխից երկու կոպեկի խելք հազիվ կարելի է քամել» (ՆԴ, 2, 429—430)։

Ծավալային չափի սեռականով կապակցություններից են մի շենքի փայտանյութ, երկու գլխարկի կտոր և այլն։ Օրինակ՝ «Մանդակյանի համար ավելի հեշտ էր հրաժարվել իր տոնական սև կոստյումից, քան թե ուրիշին զիջել ամբողջ մի վեպի թուղթ» (ՆԶԱԳ, 107)։

[1] Մանրամասն քննությունը տե՛ս սույն աշխատության «Գոյականի լրացումը թվականով» բաժնում։

Կան նաև չափի սեռականով այլ կապակցություններ։ Օրինակ՝ «Նայեց թե չէ, զգաց՝ իր մեջ Տասը գոմշի ուժ *պակասեց» (ՀԹ, 2, 122)։*

Ե. Նպատակի սեռականով կապակցություններ— *Սրանցում լրացումը ցույց է տալիս այն առարկան, որը լրացյալով արտահայտված առարկայի նպատակն է։ Սրանք համանման են բայ-նպատակի պարզ կապակցություններին, սակայն ի տարբերություն վերջինների, այստեղ երկու առարկաների՝ նպատակային հարաբերությամբ կազմված կապակցություն կա։ Լրացումն այստեղ կատարում է մի քանի բառի դեր։ Այսպես,* տազնապի զանգ *կապակցության մեջ* տազնապի *բառաձևը նշանակում է* տազնապի համար *(նպատակով)* տրվող։ *Պետք է ասել, որ նպատակի սեռականը իմաստային անչակցություն ունի հատկացման սեռականի հետ։ Այս կապակցությունները շատ գործածական են պատկերավոր խոսքում։ Դրանցից կարելի է նշել* կառուցման պայքար, խաղաղության ճար, ճացի ճերթ, ճնության առարկա, ծիծաղի երեկո, պայքարի շեփոր, ուրախության տոն *և այլն։*

«—Հայրիկ, ելել ենք մրցության կառուցման *մեծ* պայքարում» *(ԳՍԲ, 153)։ «Բայց ոչ մի մարդ չի շինի* ստի բանալին» *(ԳՍԲ, 271)։ «Բայց սիրտս* զանգ *է դառել* տազնապի» *(ՀՇՔՀ, 122)։ «Բլուրին վանքն է աղոթում, դանը՝* մատաղի *մի* գառ» *(ՀՇՔՀ, 198)։ «*Խաղաղության *տաշած* ճարը *երբեք գետնին չի մնա» (ՀՇՔՀ, 365)։ «Նա ստիպված էր լինում օրեր ու գիշերներ անցկացնել* ճացի ճերթերում» *(ԱՍԾ, 393)։ «Կանգնեցիր՝ ձեռքիդ* պայքարի շեփոր» *(Չ, 129)։*

Երբեմն կազմվում են այնպիսի կապակցություններ, որոնցում լրացումն արտահայտում է նպատակի և վերաբերության իմաստները միասին։ Այսպես են՝ պարի ճրավեր, ճարձակման պատրաստություն *և այլն։*

«Զարուհին մերժեց պարի *բոլոր* ճրավերները» *(ԱՍԾ, 288)։ «Նրանք զբաղված էին մոտալուտ* ճարձակման պատրաստությամբ» *(Մուր., 3, 173)։*

Իսկ որոշ կապակցություններում առկա է նպատակի և խնդրային հարաբերությունը համաստարապես (երկրի կարոտ)։ *«Կանչում է կրկին, կանչում անդադար էն չքնաղ* երկրի կարոտը *անքուն» (ՀԹ, 2, 44)։*

Նպատակի սեռականով են կազմված մի շարք դարձվածքներ, ինչպես՝ կենաց ու մահու կռիվ, ապստամբության դրոշակ, խա-

ղաղության հրեշտակ, խավարի հրեշտակ, անարգանքի սյուն, քավության նոխազ, գայթակղության քար, պատվի գործ *և այլն։*

«Նա սովորել էր հավատալ սրբերին, որոնք այժմ մի-մի պաշտամունքի առարկա *էին դարձել նրա համար» (ՆԴ, 1, 5)։ «Ես քեզ ուզում եմ* կորստյան անդունդից *հեռացնել» (ՆԴ, 2, 327)։ «Դավիթ-Բեկն իր սակավաթիվ հավատարիմներով* ապստամբության դրոշ *բարձրացրեց պարսից տիրապետության դեմ» (ՍԽՄԽ, 42)։ «Ուրախանում էին, որ ընկավ* գայթակղության քարը» *(ՍԽՄԽ, 122)։*

Ջ. Հատկացման սեռականով կապակցություններ.— *Այստեղ լրացումը ցույց է տալիս այն առարկան, որին հատկացված է, որի համար սահմանված է լրացյալով արտահայտված առարկան։ Սա իմաստով շատ մոտ է նպատակի սեռականին։ Այսպես են՝* թատրոնի, կինոյի շենք, գնացքի գիծ, պարի հրապարակ, վաճառքի կրպակ, ակումբի շենք, տղամարդկանց լողավազան, անասունների ախոռ *և այլն։*

«Հռոմեական թատրոնի շենքը *պեղված էր» (ՆՁՍԳ, 310)։ «Այրող մաքերից ազատվելու համար ես բարձրանում եմ* տղամարդկանց լողավազանը» *(ՆՁՍԳ, 328)։ «Իսկ երեկոները մարդիկ ժամանակ են անցկացնում* պարի հրապարակում» *(ՆՁՍԳ, 333)։ «Հայրն ամեն առավոտ ստուգում և մաքրում էր* գնացքի գիծը» *(ՄԱՊ, 123)։ «Հանգստի* տան շենքը *երևաց հանկարծակի» (ՄԱՊ, 410)։*

Հատկացման սեռականով են կազմված մի շարք կայուն կապակցություններ ու դարձվածքներ, ինչպես՝ պատվո նշան, առյուծի բաժին, գրողի բաժին, շան ու գայլի բաժին, սատանի բաժին, գլխի ճար, շան լափ, օձի ծակ *(շատ նեղ տեղ) և այլն։*

Է. Համապատասխանության սեռականով կապակցություններ.— *Այստեղ լրացումը ցույց է տալիս այն առարկան, որին, իբրև չափանիշի, համապատասխանում է լրացյալով արտահայտված առարկան։ Այսպիսի կապակցություններ քիչ են կազմվում։ Եղածներից կարելի է նշել (մեկի)* ոտքի կոշիկ, *(մեկի)* գլխի գլխարկ *(ոչ տեղի իմաստով, այլ չափի) և այլն։ Օրինակներ՝ «Գնաց Օհանը երեխի* ոտի *Մի զույգ* ոտնաման *բերավ երկաթի» (ՀԹ, 2, 100)։ «Չի շղթայվի մարդու հոգին ոչ մի կապով արտաքին, Եթե* դարի, ժամանակի զրահ *ունի իր հագին» (Չ, 176)։*

Միջոցի սեռականով կապակցություններ.– *Այստեղ լրացումը ցույց է տալիս այն առարկան, որի միջոցով սահմանվել է, գոյություն ունի լրացյալով արտահայտված առարկան։ Սրանցում*

զգացվում է միջոցի անուղղակի խնդրի և բայի փոխհարաբերությունը, սակայն կայուն վիճակում և ոչ թե պրոցեսում։ Այս կապակցությունները քիչ են տարածված։ Դրանցից կարելի է նշել ձեռքի գործ, ձեռքի աշխատանք, նավթի լամպ,— ճրագ, գազի լապտեր, բաժակի բարեկամ *և այլն։*

«Բայց թագավորի նժույգը և ահարկու սրի հարվածները *ճեղքեցին խումբը» (Մուր., 4, 197)։ «Մարթան էր նրան կերակրում, հագցնում իր* ձեռքի աշխատանքով» *(ՆԴ, 1, 4)։* «Արյան *անհագ* արբեցումի *Տենչով վառված սուրն ահավոր Տանջում էր հույժ Աթիլլային» (Իս., 2, 189)։ «Վառվեց* գազի լապտերը» *(ՌԱՁ, 342)։ «Առաստաղից* նավթի լամպ *էին կախել» (ՌԱՁ, 9)։*

Իսկ «Նրանք, ճիշտ է, հին ծանոթներ էին, բայց ոչ երբեք բաժակի բարեկամներ» *(ՆՁՍԳ, 108) նախադասության մեջ հիմնականում միջոցի հարաբերություն է արտահայտված, սակայն կա նաև սահմանափակման իմաստ։*

Միջոցի սեռականով են կազմված ձեռքի գործ, ձեռքի բան *կայուն կապակցությունները։*

Սահմանափակման սեռականով կապակցություններ.— *Սրանցում լրացումը ցույց է տալիս այն առարկան, որի մեջ սահմանափակվում է լրացյալով արտահայտված հատկանիշը։ Դա հեշտությամբ կարելի է հասկանալ, եթե համեմատենք համապատասխան խնդրային հարաբերություն արտահայտող բայական և անվանական կապակցությունները։ Այսպես, կարող ենք ասել* վարպետանալ իր գործում *և* գործի վարպետ։ *Պետք է նշել, սակայն, որ համեմատաբար քիչ են գործածվում սահմանափակման սեռականով կապակցությունները։ Դրանցից կարելի է նշել* ասմունքի վարպետ, խոսքի հերոս, գյուղատնտեսության առաջավոր *և այլն։*

«Դպրոցի ընկերներ *են եղել» (ՍՁ, 4, 11)։ «Եվ մնացեք հավիտյան* քերթության վարպետներ» *(Չ, 173)։ «Նրանք շատ ուրախ էին, որ այս տան հեղինակն իրենց* նյութանոցի հարևանն *է» (ՍՁ, 4, 320)։ «Պան Պոժեցկին իմ* բնակարանի հարևանն *էր» (ՍՁ, 2, 333)։*

Սրանցից կայուն կապակցություններ են զենքի եղբայր, խոսքի վարպետ, խոսքի հերոս *և այլն։*

Ներգործող խնդրի սեռականով կապակցություններ.— *Այստեղ սեռականով լրացումը ցույց է տալիս այն առարկան, որից ուղղվում, ելնում է լրացյալով արտահայտված առարկան։ Այստեղ ևս առկա է բայական համապատասխան կապակցության նմանակությունը։ Այսպես,* թշնամու հետախույզ *կապակցության մեջ* թըշ-

նամու ցույց է տալիս ներգործող անուղղակի խնդիր (թշնամուց, թշնամու կողմից ուղարկված)։ Այսպիսի կապակցություններից կարելի է նշել (որևէ) երկրի պատվիրակ, թշնամու գնդակ, ճաշակի պատվիրակ և այլն։ Օրինակ՝ «Ես Մարատին սիրում եմ, բայց նրան չեմ ընտրել իմ ճաշակի պատվիրակ» (ՆՁՍԳ, 202)։ «Գալիս էին զորամասերի պատվիրակներ» (Բակ., 281)։

Այս կապակցությունները համեմատաբար քիչ են տարածված։

Որակի սեռականով կապակցություններ — Մ. Աբեղյանը և Վ. Առաքելյանը որակական ասելով հասկանում են առհասարակ այն սեռականը, որը նախադասության մեջ որոշիչ կարող է լինել։ Ինչպես ասած, Մ. Աբեղյանը որակական սեռականն առանձնացնելով հանդերձ, իբրև սեռականի մի ինքնուրույն իմաստ, միաժամանակ նշում է, որ որակական են նաև պարունակության, տեղի, ժամանակի, նյութի, ստացական սեռականները[1]։ Նա մի դեպքում որակական սեռականի համար նշում է որոշակի հարաբերություն արտահայտող ձևեր, մյուս կողմից այլ իմաստ ունեցող սեռականները միաժամանակ որակական է համարում։ Հենց այս երևույթը վկայում է, որ Մ. Աբեղյանը հոլովի իմաստը և կիրառությունը նույնացնում էր։ Վ. Առաքելյանը ուղղակիորեն որոշիչ սեռական է կոչում սեռականի այն իմաստը, որը նախադասության մեջ կատարում է որոշչի պաշտոն։ Սակայն նա էլ նկատում է, որ որոշիչ են նաև այլ սեռականներ։ Իրականում որոշիչ են լինում բազմաթիվ իմաստ ունեցող սեռականներ (այդ մասին խոսվել է վերևում)։ Նշենք, սակայն, որ որակի սեռականը ևս որոշիչ սեռականի իմաստներից մեկն է և ցույց է տալիս այն առարկան, որը լրացյալի որակական հատկանիշն է նշում։ Որակի սեռականը կարող է ունենալ իմաստային տարբեր նրբերանգներ։ Այսպես, լինում են հատկանշային որակի, ածականին փոխարինող (վերացականը կոնկրետի փոխարեն), որակական-արդյունքային, ձևի-որակական սեռական լրացումով կապակցություններ։ Այս բոլոր իմաստային նրբերանգները, վերջին հաշվով, որակ են արտահայտում։ Ուստի քննում ենք նույն ընդհանուր իմաստի տակ։

Ամենից շատ տարածված են հատկանշային որակի սեռականով կապակցությունները։ Սրանցում լրացումը կարող է արտահայտվել կա՛մ ինքնուրույն գործածվող, կա՛մ որևէ լրացում ունեցող գոյականով։ Առաջին դեպքում գոյականը, առանձին վերցրած,

[1] Մ. Աբեղյան, նշված աշխատ., էջ 426—427, Վ. Առաքելյան, նշվ. աշխատ., էջ 86—88։

որակ կարող է նշել։ Այս կապակցությունները այլ բնագրերում կարող են ուրիշ հարաբերություն արտահայտել։ Օրինակ՝ հերոսի պսակ կապակցությունը կարող է նշանակել և՛ որակի (հերոսին վայել պսակ), և՛ առարկան (այս հերոսի պսակը)։

Որակի սեռականով կապակցություններից կարելի է նշել աշխատանքի մարդ, հանճարի կնիք, եղբայրության բաժակ, հերոսի պսակ, վանականի կյանք, խաղաղության աղավնի, պատերազմի աստված և այլն։

«Թող նրանց ճամփին հաղթանակ փռվի, Հերոսի պսակ իմ ընկերներին» (ԳՍԲ, 189)։ «Լցվում է քո սիրտը կարոտով մոր» (ԳՍԲ, 69)։ «Աշխատանքի ազատ մարդկանց խինդը մաքուր Քեզ խինդ եղավ մարտերի մեջ աշխարհավեր» (ՎՆԻԱ, 78)։ «Տխուր էր թվում նրան իր կյանքը վանականի» (ԳՍԲ, 309)։ «Բայց մանի մարդ է նա» (ՀՍՀԴԲ, 140)։ «Կան նույնիսկ գրի ու բանի մարդիկ» (ՎԽԳԼ, 69)։ «Արհեստի մարդիկ են երկուսն էլ» (ՎԽԳԼ, 70)։ «Ջրահապատ բանակներ ուժի» (Զ, 285)։

Երկրորդ դեպքում որակի սեռականն ունենում է իրենից անբաժան լրացում, այսինքն որակ են արտահայտում այդ լրացումն ու սեռականը միասին։ Այդպիսի կապակցություններից կարելի է նշել՝ արծվի բնույթի տղամարդ, բարի կամքի մարդ, հազար գույնի ցեղ, պարսկական ոճի ապարանք, այս կարգի խոսակցություն, ո՞ր օրվա բարեկամներ և այլն։

«Այդ կարգի խոսակցություններից փոքրիկ ժորան հանում էր իր եզրակացությունները» (ՆԶՍԳ, 94)։ «Վիալուսի մեծության մի արևածաղիկ էլ ընկած էր Զարուհու ծնկներին» (ԱՍԾ, 279)։ «Ինքը մեզ հետ միևնույն արժեքի ու արժանիքի պաշտոնյա չէ» (ՍԶ, 4, 157)։ «Ես աշխարհներ կուզեմ ման գալ, Տեսնել ցեղերն հազար գույնի» (ՀՇՔՀ, 88)։ «Ոչ մի պատերազմ այնքան բազմամբոխ Ու բարի կամքի զորք չի հավաքել» (ՀՇՔՀ, 116)։

Այս կապակցություններից ունենք դարձվածքներ, ինչպես՝ մեռելի արև, Հերոստրատի փառք, գայլի հարսանիք, ավետյաց երկիր և այլն։

Որակի սեռականի երկրորդ ենթատեսակը ածականին փոխարինող սեռականն է (վերացականը կոնկրետի փոխարեն)։ Այս դեպքում սեռական հոլովով դրված լրացումը, որը ցույց է տալիս լրացյալի որակը, հատկանիշը, ծագել է ածականից. դա գոյականաբար գործածված ածական է կամ մակբայ (չարության, լռության, արագության, մոլեգնության և այլն)։ Սեռականի այս իմաստը գալիս է գրաբարից, որտեղ դա սովորական գործածու-

թյուն է եղել ածականի փոխարեն (հմմտ. «յո՞ թափեցից զղանութիւն թիւնից *կամ ո՞ւր բացատրեցից* զբազմութիւն նետիցն»—*Եղիշե), միայն այն տարբերությամբ, որ գրաբարում գոյականը ածականի փոխարեն կարող էր գործածվել տարբեր հոլովներով, իսկ արդի հայերենում՝ միայն սեռական հոլովով։ Նկատված է, որ սեռականի այս գործածությունը վեհություն, հանդիսավորություն, պատկերավորություն է տալիս խոսքին*[1]*։ Այսպիսի կապակցություններից կարելի է նշել* արագության կայծակ,—սուրհանդակ, լռության երկինք, արության գործ, մոլեգնության հրդեհ, չարության ոգի *և այլն։*

«Այդպիսի արության գործը *միայն կարող էր մոռացնել տալ նրան յուր կրած նախատինքը» (Մուր., 4, 337)։ «Ելնում են թաքստից* չարության ոգիները, *կամ աշխարհ իջնում* բարկու հրեշտակները» *(Մուր., 4, 300)։ «*Լռության երկինք, *խոսիր դու ինձ հետ» (Իս., 2, 59)։ «Եվ հա վերցրու, ինչ որ մտքով խոկ ցանկացար, Քանզի* ուժերը չարության *գործում են անխնա» (ՆԶՄ, 88)։ «Եթե* մոլեգնության հրդեհն *է Շամիրամ, Նուարդ* արևն է հեզության *և բաղնի հուր» (ՆԶՄ, 663)։ «Սասուր-Դավիթ, հղիր* սուրհանդակներն արագության» *(ՆԶՄ, 672)։ «Թռիր իբրև* կայծակն արագության» *(ՆԶՄ, 673)։*

Սակայն նույն ձևն ունեցող կապակցություններում կարող է արտահայտվել նաև այլ հարաբերություն։ Այսպես, չարության հողմեր *կապակցությունը կարող է նշանակել ոչ միայն* չար հողմեր, *այլև՝* չարությունից կազմված հողմեր, չարություն պարունակող հողմեր: *Այդպես է, օրինակ, հետևյալ նախադասության մեջ.* «Չարության հողմեր *են արշավում մեր աշխարհի վրայով» (ՍԽՄԽ, 62)։*

Երրորդ ենթատեսակը որակական-արդյունքային սեռականով *կապակցություններն են։ Լրացումն այստեղ ցույց է տալիս այն առարկան, որի ստեղծմանը, առաջացմանն է ծառայում լրացյալով արտահայտված առարկան։ Այս սեռականը կոչել ենք որակական-արդյունքային, քանի որ լրացումով արտահայտված առարկան ստեղծվում է իբրև լրացյալով արտահայտված առարկայի արդյունք՝ նրա հատկանիշը ցույց տալով։ Այդպիսի կապակցություններ են՝* դեղձի ծառ, խնձորի ծառ, կոնյակի գործարան *և այլն։*

*«*Հացի խմորը *հասել էր» (Իս., 2, 133)։ «*Խնձորի ծառը *ծաղ-*

---

[1] Վ. Առաքելյան, *նշվ. աշխատ., էջ 87։*

կել է նորից» (ԳՍԲ, 121)։ «Տես, խփում է այնտեղ մի սիրտ, Ուժի *հակա մի* մեքենա» *(ԳՍԲ, 139)։*

Որակական-արդյունքային սեռականը ևս կարող է գործածվել փոխաբերաբար։ Այսպես, լինում են՝ հույսի ջահ, բախտի ծառ, պայքարի դպրոց *և այլն։*

«Նա ինքն էլ անցել էր քաղաքական պայքարի *բեղմնավոր մի* դպրոց» *(ՌԱՋ, 337)։ «*Բախտից ծառը *թող միշտ բերքով կանա» (ՀԾԺՀ, 204)։*

Չորրորդ ենթատեսակը ձևի որակական սեռականով կապակցություններն են: *Այստեղ լրացումը ցույց է տալիս այն առարկան, որը լրացյալի ձև-որակն է արտահայտում։ Սրանք գործածական են գեղարվեստական պատկերավոր խոսքում՝ առօրյա խոսակցական լեզվին բնորոշ չլինելով։ Կարելի է նշել* աղեղի պարանոց, լիալուսնի դեմք *և այլն։*

«Իրենց աղեղի պարանոցները՝ *Ուղտերը լարած նետերի նման, Ձիգ վազում էին, իրենց հետքից Թողնելով փոշու անծայր քարավան» (Իս., 2, 76)։ «Մեզ դիմավորեց երփած* խնձորի դեմքով *պառավ տանտիրուհին» (ՍԶ, 4, 162)։*

Անվանման սեռականով կապակցություններ.— *Անվանման սեռականը գոյանում է տարբեր իմաստ ունեցող սեռականներից։ Ո՞րն է այս սեռականի բնորոշ կողմը։ Այս սեռականով կապակցություններում լրացումն ու լրացյալը դիտվում են որպես մի սերտ ամբողջություն, բաղադրյալ անուն, և շարահյուսական տեսակետից երկուսը միասին են դիտվում իբրև նախադասության մեկ անդամ։ Այդ կապակցություններից մի քանիսի բաղադրիչների միջև սկզբնապես եղել է* անվան *բառը (որն այժմ էլ կա մի շարք կապակցություններում՝ Լենինի* անվան *հրապարակ, Կոմիտասի* անվան *դպրոցի և այլն), սակայն ժամանակի ընթացքում այն ընկել է, և կապակցությունն այժմ երկու բառից է բաղկացած։ Այս կապակցություններից են* Կոմիտասի *(անվան)* դպրոցի, Շահումյանի *(անվան)* շրջան *և այլն։ Սակայն անվանման սեռականով կազմված մի շարք կապակցություններում սկզբնապես եղել է այլ հարաբերություն, որն այժմ չի ըմբռնվում։ Դրանցից են* Սևանա լիճ, Գեղամա լեռներ, Սասնա սարեր, Շիրակի դաշտ *և այլն։ Անվանման սեռականով կապակցություններից կարելի է նշել* Արաքսի հովիտ, Զանգվի ձոր, Նորքի բարձունք, Ղուկասյանի այգի, Կոմունարների այգի, Կոմերիտմիության այգի, Քիլի ջրանցք, Սուեզի ջրանցք *և այլն։*

«Հավքն էլ չէր անցնում Սասնա սարերով» *(ՀԹ, 2, 97)։*

«Կքարձրանա անհուն ծովը Սիդոնի Եվ կդերի անապատը ծաղկ-ծաղ» (Իս., 2, 150)։ «Ննջիր խաղաղ Կոմունարների Այգում» *(Զ, 421)։ «Հիշո՞ւմ ես* Ղուկասյանի այգին» *(ՆՋՍԳ, 206)։ «Նրանք իջան* Լենինի հրապարակ» *(ՆՋՍԳ, 206)։ «Ես քո* Շիրակի դաշտն *եմ նորածիլ» (ՀՇՔՀ, 375)։ «Գնում է՝ դեմ դիմաց* լեռներն *են* Կովկասի» *(ԳՍԲ, 227)։*

Բառակապակցություններ, որտեղ լրացման իմաստը ճշգրիտ չէ.— *ժամանակակից հայերենում սեռականը երբեմն կարող է դառնալ այնպիսի գոյականի լրացում, որի լրացում եղել է նույն լրացման ղեկավարած լրացյալը։ Այսպես, խոսակցական լեզվում հաճախ գործ ենք ածում* ոչխարի մածուն, կովի պանիր *և այլ կապակցություններ, որոնցում սեռականով լրացումը անմիջապես լրացյալինը չէ, այլ լրացյալի լրացյալինը, որի ղեկավարմով և անցել է նրան* (ոչխարի կաթի մածուն, կովի կաթի պանիր)։ *Օրինակ՝ «Կըթվորները ճամփի ուտելիք դրին նրանց հետ՝* ոչխարի *անքաշ* պանիր՝ *լավաշ հացի մեջ փաթաթած» (ՎԱՀԳ, 10)։*

ՍԵՌԱԿԱՆՈՎ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Սեռականով լրացումը չունի իմաստային սահմանափակում. այն իմաստային տեսակետից անընդհատ աճում է։ Սեռականով լրացումը կարող է արտահայտել տարբեր խոսքի մասերով կազմված կապակցությունների լրացման իմաստներ։ Եվ պատահական չէ, որ երբեմն սեռականով լրացումը կարող է կատարել դերբայի, դերբայական դարձվածի դեր։ Այսպես, Ն. Զարյանը գործ է ածել սպասարկման սեղան *կապակցությունը, որտեղ* սպասարկման *բառանեն ունի (մեկի)* կողմից սպասարկվող, *(մեկի)* սպասարկված *իմաստը. «Նաղյան, նրբակազմ ու բարեհամբույր մի աղջիկ, իր անունը լսելով ժպտում էր և հարցական նայում իր* սպասարկման սեղանի *մարդկանց» (ՆՋՍԳ, 330)։*

2. *Լրացումը կարող է հաճախ բազմիմաստ լինել։ Իհարկե յուրաքանչյուր կոնկրետ կապակցության մեջ սեռականն ունի մեկ իմաստ, և դա բնական է։ Ընդ որում, սեռականի իմաստը կոնկրետանում է համապատասխան բառակապակցության մեջ կոնկրետ բնագրում։ Այսպես,* պատուհանի ապակի *կապակցության մեջ* պատուհանի *կարող է արտահայտել և՛ մասնական (այս* պատուհանի ապակին, *երբև պատուհանի մի մասը. ինչպես, ասենք, շրջանակը, գոգը և այլն), և՛ հատկացման* (պատուհանի համար

զարդարված, ինչպես ասենք, պատի ժամացույց, դպրոցի շենք և այլն)։

Սակայն կան դեպքեր, երբ սեռականը նույն կապակցության և բնագրի մեջ ունենում է մեկից ավելի իմաստներ։ Իսկ դա բխում է սեռականի բազմիմաստությունից, որն առանձնապես առկա է պատկերավոր խոսքում։ Այսպես, լույսերի շող, փրկության սեղան, թշնամու բանակ, մարդկանց արդարություն և այլ կապակցություններում սեռականով լրացումը բազմիմաստ է։ Լույսերի շող կապակցության մեջ լույսերի կարելի է հասկանալ և՛ իբրև բաղկացության (լույսից կազմված (շող), և՛ պարունակության (լույս պարունակող (շող), և՛ մասնական (լույսի մի մաս)։ Փրկության սեղան կարելի է հասկանալ և՛ իբրև հատկացման (փրկության համար նախատեսված (սեղան), և՛ պարունակության (փրկություն պարունակող (սեղան)։

«Մտքովն անցնում է աշխարհի բանը» (ՀԹ, 2, 143)։ «Կապել սիրո ծաղկեփունջ» (ՀԹ, 2, 43)։ «Բայց թշնամու բանակում ուրիշ գործի վրա էին» (Մուր., 4, 273)։ «Փրկության սեղանը դադարել էր ազատություն բաշխելուց» (Մուր., 4, 330)։ «Համայնքից փախիր, փախիր վրեժից, Մարդկանց արյունոտ արդարությունից» (Իս., 2, 75)։ «Փախիր, քարավան, այդ պոռնկության լպիրշ ու արբշիռ ցոփ խնջույքներից, Կեղծի, կեղեքման հրապարակներից Եվ վաճառանքի պիղծ շուկաներից» (Իս., 2, 75)։

Շնորհիվ իմաստային ճկունության, բանաստեղծական պատկերավոր խոսքում սեռականը հաճախ ստանում է ոչ կոնկրետ, ընդհանուր, վերացական իմաստ։ Այդ կարգի կապակցությունները երկու տեսակ են։ Մի դեպքում սեռականը կարելի է դիտել իբրև բազմիմաստ, սակայն այնուամենայնիվ հասկանալի։ Այսպես, երբ ասում ենք դարերի մորմոք, հայրենիքի առավոտ, հույսի մեղու, հուշերի ձոր և այլն, ապա դրանք կարող են ըմբռնվել մի քանի իմաստներով (դարերի մորմոք-դարերից առաջացած, դարերի պատճառած, դարերում առաջացած մորմոք, հույսի մեղու-հույսից ծնված, հույս ծնող մեղու և այլն)։ Այսպիսի կապակցություններից են նաև կարոտի լեռ, ափսոսանքի ձոր, արևի, բերքի կոմունարներ, պատմության վերքեր, աշխատանքի բոց և այլն։

«Շողում է ճակատիդ գարնան փառքը» (ԳՄՀ, 71)։ «Ինչո՞ւ խաղողն իմ սիրո չքաղցրացավ մայիսին» (ԳՄՀ, 85)։ «Գնաց պոետը։ Գնաց կարոտի բարձր լեռներով, Եվ ափսոսանքի ձորերով գնաց» (ԳՄՀ, 252)։ «Ընկել է ինքը՝ իր վրա, Դարերի մորմոքը հողում» (ԳՄՀ, 500)։ «Սփռում էին նրանք իրենց խինդն ու սերը

Արևի ու բերքի բյուր կոմունարները» (ԳՍԲ, 159)։ «Բացվեք, հայրենիքի շքեղ առավոտներ» (ԳՍԲ, 203)։ «Մի դամբան էր կարծես նա երջանիկ իր օրերի» (ԳՍԲ, 308)։ «Բայց դեռ ինչքան Անուններ կան, Որ վերմերն են մեր պատմության» (ՀՇՔՀ, 431)։

Երկրորդ դեպքում սեռականով կապակցության մեջ լրացման իմաստն այնքան է կոնկրետությունից հեռու, որ, թվում է, անիմաստություն է հասնում, սակայն բանաստեղծական խոսքում այն գործածական է։ Այդպիսի կապակցություններից են՝ օրվա երկինք, ճանապարհի օր, երկնքի աշխարհ, կյանքի աշխարհ և այլն։

«Այս ցուրտ հյուսիսի թախծալի աշնան Անձրևոտ օրվա մութ երկնքի տակ, Ամայի դաշտում նստեմ միայնակ» (ՎՏ, 1, 105)։ «Հարազատ մի հող ես չեմ գտնելու Սև ճանապարհիս օրերում դժնի» (ՎՏ, 1, 108)։ «Այս կյանքի աշխարհում դժգունակ Իր զարդերն է փռում իմ հոգին» (ՎՏ, 1, 176)։ «Ամեն առավոտ հուշերս նորից Ինձ տանում են այն զմրուխտե հեռուն, Ուր իմ մանկության ոտնատեղերից Անձրևաջուր է խմում եղջերուն» (ՀՍՆԴԲ, 93)։

3. Սեռականի իմաստների բազմազանությունը հնարավորություն է տալիս բանաստեղծին սեռականով կապակցությունների համահնչյուն շարքով գեղեցկացնելու խոսքը, ստեղծելու բովանդակությամբ և ձևով ներդաշնակ պատկերներ։ Դա բանաստեղծական խոսքի միջոցներից մեկն է։ Այսպես, Հ. Շիրազը 9 տողում սեռականով 14 կապակցություն է գործածում՝ զանազան իմաստներով և ստեղծում մի զողտրիկ պատկեր.

«Մեր տան աղբյուրն է մայրս, (տեղի)
«Մեր հացն ու ջուրն է մայրս, (պատկանելության, հատկացման),
«Մեր տան ծառան է մայրս, (խնդրային, տեղի)
«Մեր տան արևն է մայրս, (խնդրային տեղի)
«Մեր օրորոցն է մայրս, (պատկանելության)
«Մեր տան ամրոցն է մայրս, (տեղի, պատկանելության)
«Մեր տան երազն է մայրս, (տեղի)
«Մեր արեգակն է մայրս, (պատկանելության փոխաբերաբար)
«Մեր հերն ու մերն է մայրս, (փոխհարաբերության) (ՀՇՔՀ, 49)։

Այդպես է նաև Շիրազի հետևյալ ստեղծագործության մեջ. «Օ, երկինք՝ պսակ հավիտենության, Աստղեր՝ դուք զանգեր երկնի գմբեթի, Արեգակ՝ օվկիան դու մայր զորության, Դու լուսե սռինն այս տիեզերքի, Ծովեր՝ տարերք մշտրմրստության, Լեռներ՝ եղջյուրներ դուք հողագնդի, Եվ դուք անտառներ՝ վահաններ գարնան, Եվ դուք ջրվեժներ՝ բաշեր բնության, Մի՞թե չարի դեմ դեռ նիրհեք պիտի» (ՀՇՔՀ, 121)։

Պատկերավոր ու գեղեցիկ է դարձրել խոսքը բանաստեղծ Հ. Սահյանը նույն միջոցի գործադրմամբ. «Ճեղքել ես դու մանկան ահեր Եվ տագնապներ քաղցի, Վրդովմունքի փոթորիկներ, Մառախուղներ թախծի, Տեսել ես դու սիրո զգվանք, Հետո խանդ ու դավեր, Եվ հանդիպման խորին հրճվանք Եվ անջատման ցավեր» (ՀՍՆԴԲ, 200)։

Սեռականի իմաստային բազմազանությունը պատկերավոր և ճկուն է դարձնում ոչ միայն չափածո, այլև արձակ խոսքը։ Այսպես, հետևյալ նախադասության մեջ չորս կապակցություն կա, որոնք կազմված են սեռականի երեք իմաստներով։ «Քո սերը կրկնապատկում է իմ մեջ ամեն բան՝ և՛ ապրելու իղձը, և՛ հոգվո արիությունը, և՛ սրտի կորովը» (Մուր., 4, 255)։

4. Սեռականի իմաստային ճկունությամբ է պայմանավորված նաև այն երևույթը, որ նույն լրացման և նրա մեկից ավելի լրացյալների կապակցության մեջ լրացումն արտահայտում է տարբեր իմաստներ։ Այսպես, թշնամու դիրքն ու բանակը կապակցության թշնամու լրացումն ունի ենթակայական կամ հատկանիշ կրողի իմաստ՝ թշնամու դիրք կապակցության մեջ և պատկանելության կամ բաղկացության իմաստ՝ թշնամու բանակ կապակցության մեջ։ Այստեղ լրացման իմաստը պայմանավորված է լրացյալով։ Այսպես են նաև հարցի իմաստն ու դրդապատճառը, մեկի անունն ու սերը, մեկի (մի բանի) բույրն ու հմայքը և այլն։

«Իսկ ես և Վահրամ սեպուհը կերթանք նախ թշնամու դիրքն ու բանակը հետազոտելու» (Մուր., 4, 327)։ «Սարոյի անունն ու սերը թաքուն խանչալի ծերով սրտիցը հանի» (ՀԹ, 2, 59)։ «Մայիսին բացվող նշենին անգամ Գյուլնարի բույրն ու հմայքը չուներ» (ԳՍԲ, 247)։

5. Սեռականի իմաստային ճկունության շնորհիվ է նաև, որ հնարավոր է դառնում նույն լրացյալի մեկից ավելի լրացումները գործածել տարբեր իմաստներով։ Այսպես, Շիրակի իրիկվա հովեր կապակցության մեջ հովեր լրացյալն ունի Շիրակի և իրիկվա լրացումները, որոնցից առաջինը տեղի, իսկ երկրորդը ժամանակի իմաստ է արտահայտում։ Այսպես, կարող ենք նշել նաև թագավորի սկզբի հաջողությունը, մեկի հրաժեշտի այցը, բնության նրա նկարագրությունը, մեկի գոհունակության խոսքը և այլն։

«Նիզակակից իշխանները թագավորի սկզբի հաջողությունը տեսնելով որոշել էին վերջապես կատարել իրենց զինակցական պարտքը» (Մուր., 4, 189)։ «Արմենակի հրաժեշտի այցն էր դա սիրելի քաղաքին ու հորդառատ գետին» (ՌԱԶ, 90)։ «Տպարաններից

հետո Սարաջևի կոնյակի գործարանն *է խափանվում»* *(ՌԱՁ, 41)*։ *«Նա սկսեց լրացնել Վահանին, հարստացնել հայրենի աղքատ* բնության *ու չարքաշ* ժողովրդի նրա նկարագրությունը» *(ԱՍԾ, 308)*։ *«Դեռ* Վահանի գոհունակության խոսքը *չլսած, տարավ այն և տեղավորեց իր փաթաթած գրքերի շարքում» (ԱՍԾ, 234)*։ *«Կգար հայրս* Շիրակի հովերի *հետ* իրիկվա» *(ՀՇՔՀ, 223)*։

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԵՌԱԿԱՆՈՎ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Մի շարք կապակցություններում լրացյալը բարդ բառ է, որի առաջին բաղադրիչն է լրացման բուն հատկացյալը։ Այսպես, օրինակ, մահվան բոթաբեր, Նորքի բլրագագաթ, մարդու ոտնատեղ *կապակցություններում* մահվան, Նորքի, մարդու *ձևերը* բոթ, բլուր, ոտ *բառերի լրացումներն են, սակայն ժամանակի ընթացքում այդ կապակցությունները գործածվելով այնքան են սովորական դառնում, որ այլևս չի գիտակցվում նշված հանգամանքը, և համապատասխան լրացումները դիտվում են իբրև ամբողջ բարդության հատկացուցիչ։ Սա սեռականով կապակցությունների այնպիսի բնորոշ հատկանիշ է, որը հնարավորություն է տալիս անսահմանորեն բազմացնելու այդ կապակցությունները։ Այդպիսի կապակցություններից կարելի է նշել նաև* մեկի շիրմաքար, պարսպի հիմնաքար, հիվանդանոցի պահեստապետ, պատերազմի հրձիգ *(որն ի միջի այլոց կայուն կապակցություն է այժմ)*, մահվան ու կյանքի սահմանագիծ, ձիերի քայլատրոփ *և այլն*։

«Ապա դառնալով կղզու դարանապետին *հարցրեց» (Մուր., 4, 343)*։ *«Ձորակի մեջ միայն* ձիաների քայլատրոփը *զարթեցրեց պահանորդ եղերացիներին» (Մուր., 4, 197)*։ *«Երկու* մարդու *թարմ* ոտնատեղ *գտան» (ՀԲ, 2, 61)*։ *«Վանա ծովի հովը դառնամ ու մեղմիկ* Նարեկացու շիրմաքարը *համբուրեմ» (ՀՇՔՀ, 299)*։ *«Վոլկովը նրա համար հանդիսանում էր միայն և միայն իր որդու* մահվան *չարախինդ* բոթաբերը» *(ԱՍԾ, 432)*։ «Նորքի բլրագագաթը *վառվում էր արդեն» (ՌԱՁ, 367)*։

Կան բառակապակցություններ էլ, որոնցում բարդ բառով արտահայտված լրացյալի առաջին բաղադրիչը, լինելով սեռականով լրացման բուն լրացյալը, բայց է եղել, որին և վերաբերում է այն, իբրև բայի լրացում, սակայն վերածվել է ամբողջ բարդության լրացման։ Այսպես, ցուցահանդեսի հրավիրատոմս *կապակցության մեջ* ցուցահանդեսի *լրացումը պատկանում է* հրավիրատոմս

բառի առաջին բաղադրիչին (հրավիրել)՝ *լինելով նրա բայական լրացումը* (ցուցահանդես հրավիրել), *սակայն դարձել է ամբողջ բարդության լրացում։ Այսպես, կարող են լինել նաև* համերգի, երեկույթի, հարսանիքի հրավիրատոմս, *(պատվավոր)* կոչման շնորհագիր, *(արգելված)* գոտու անցաթուղթ, *(որևէ)* բանի պահանջագիր *և այլն։*

«Ինձ հանձնեց իր ցուցահանդեսի հրավիրատոմսը» *(ՆԶՍԳ, 322)։ «Նրանք մտան* տիկնոջ աշխատասենյակը» *(ՍԽՄԽ, 70)։*

2. Հաճախ լրացումը կարող է անմիջապես տվյալ լրացյալին չվերաբերել, այլ որևէ դերբայի ենթական կամ լրացումը լինել, և այդ դերբայի զեղչման հետևանքով (որը շատ տարածված սղման օրենքների դրսևորումներից մեկն է լեզվի մեջ) անցնել այդ լրացյալին։ Սա ևս սեռականով կապակցությունների զարգացման կարևոր գործոններից մեկն է և հնարավորություն է տալիս անչափ բազմացնել այդ կապակցությունները։ Այսպես, օրինակ, մարդու պատգամ, անտառապահի խարույկ *կապակցություններում* մարդու, անտառապահի *սեռականները եղել են լրացում որևէ դերբայի (տվյալ դեպքում՝* թողած *կամ* ավանդած, վառած), *որի զեղչումով և անցել են անմիջապես գոյականին։ Իհարկե պարտադիր չէ, որ անպայման բոլոր կապակցություններն էլ անցած լինեն այդ ճանապարհը։ Բավական է, որ այդ ճանապարհն անցած մի քանի կապակցություններ սովորական դառնան, այնուհետև նրանց նմանակությամբ կարող են կազմվել շատ նոր կապակցություններ։ Դրանցից կարելի է նշել* մեկի ուղին, ամպրոպի ազդանշան, մարդկանց հարգանք, գողերի հետք, մարդու գործ *և այլն։*

*«*Մարդու գործն *է միշտ անմահ» (ՀԹ, 2, 134)։ «*Գողերի հետքը *իր տունն է տանում» (ՀԹ, 2, 37)։ «Առավ* ընկերներն *հին* կռիվների, *Եվ հողն հայրենի թողին, հեռացան» (Իս., 2, 179)։ «Համրելով մեկ-մեկ անցիր* քայլերը *իմ քարավանի, իմ անծայր* ճամփու, *Անթիվ քայլերը չեն հասնում չափին Մի օրում գործած հանցանքին մարդու» (Իս., 2, 74)։ «Ի՞նչ է* պատիվը, հարգանքը մարդկանց*—սուտ ոսկուց—վախից հարդ են մատուցում»* *(Իս., 2, 68)։ «Ձեր օրենքները—լուծ ու խարազան, Եվ անելք մի* ցանց *խոլական* սարդի» *(Իս., 2, 58)։ «*Հանճարիդ նուռն *է հասել սրբատաշ քարի վրա» (ՀՍՆԴԲ, 64)։ «Հանգստանում էր հողմը բացատում՝ Ականջն* ամպրոպի ազդանշանին» *(ՀՍՆԴԲ, 205)։ «Հիշում է սոսափն ամեն ծառի,* խարույկն *է հիշում* ան–

տառապանքի» (ՀՍՆԴԲ, 269)։ «Տիրանին առանձնապես դուր էր գալիս փայտի աշխատանքը» (ՍՁ, 272)։

Այսպիսի կապակցություններից մի քանիսը վերածվել են դարձվածքի, ինչպես՝ աստծու գառ,— կրակ, մարդ աստծու և այլն։

Այսպես նաև մի շարք դեպքերում սեռականով լրացումը կարող է անմիջապես լրացյալին չվերաբերել, այլ մի զեղչված գոյականի կամ այլ խոսքի մասի։ Օրինակ՝ մեկի տեղը կապակցության մեջ մեկի չի վերաբերում անմիջապես տեղին, այլ խոսք, խոսել զեղչված բառերին, որոնք և տեղ բառի լրացումներն են եղել (մեկի խոսելու տեղը, մեկի խոսքի տեղը)։ Սրանք ևս սղման հետևանքով առաջացած կապակցություններ են։

«Եվ ամայնաշունչ հողմը կշաչի Ձեր ոսկորների փարերի վրա» (Իս., 2, 58)։ «Սերգեյ Արկադևիչի զուտ տեղը զինաթափ արեց Քամալյանին» (ՌԱՁ, 96)։

3. Կան այնպիսի կապակցություններ, որոնցում լրացյալը ոչ թե միայնակ, այլ որևէ լրացումով հանդերձ է ունենում սեռական լրացում։ Այս դեպքում իհարկե չունենք բաղադրյալ բառակապակցություն, այլ պարզ, քանի որ լրացյալն արտահայտված է երկու բառից կազմված անբաժանելի կապակցությամբ։ Դրանցից կարող ենք նշել բնության ամենամոտ մարդը, քաղաքների մեծ մասը, (որևէ) երկրի, տեղի տեսարժան վայրեր և այլն։

«Դու մեր բնության ամենամոտ մարդն ես» (ՆՁՍԳ, 198)։ «Ավերակ քաղաքների մեծ մասում կանգնած են նորակառույց գեղեցիկ շենքեր» (ՆՁՍԳ, 245)։ «Չնկարագրեցի Բեռլինի շատ տեսարժան վայրերը» (ՆՁՍԳ, 248)։ «Գետնից մինչև աշտարակի առաջին հարկը՝ ողջ պարտեզը հագեցած էր կանաչով» (ՄԱՌՀ, 74)։ «Քիչ հետո սկսվում էր ձորի ամենագեղեցիկ մասը» (ՄԱՌՀ, 128)։ «...Ինչպիսի սիրալիրությամբ է երկրի երկրորդ մարդը խոսում մի հասարակ հարյուրապետի հետ» (ՍԽՄԽ, 115)։ «Բարխուդարի տանու երեցը մի կերպ ոտքի կանգնեց» (ՍԽՄԽ, 124)։

Կան նաև այնպիսի կապակցություններ, որոնցում սեռականով դրված բառը լրացնում է երկու բառից կազմված մի կապակցություն, որի առաջին բաղադրիչն է սեռականի բուն լրացյալը։ Այսպես, մեկի ազատ օրը տիպի կապակցություններում մեկի սեռականը ազատ բառի լրացումն է եղել (մեկը ազատ է), սակայն դարձել է ամբողջ կապակցության լրացում։ Օրինակ՝ «Հարմարեցրել էի այնպես, որ համընկնի կիրակի՝ ամուսինների ազատ օրը» (ՄԱՊ, 20)։

4. Կա նաև սրա հակառակ երևույթը, երբ կազմվում են այն-

պիսի կապակցություններ, որոնցում լրացումն արտահայտված է երկու բառից կազմված կապակցությամբ։ Այստեղ սեռականով դրված բառը միայնակ ամբողջական իմաստ չի կարող արտահայտել։ Այսպես, անտիկ աշխարհի արձան *կապակցության մեջ աշխարհի ձևը չի կարող դառնալ* արձան *բառի լրացումը, այլ միայն* անտիկ աշխարհի *կապակցությունը կարող է դառնալ* արձան *բառի լրացում։ Այսպիսին են նաև* նախորդ օրվա խոսակցություն, անցյալ տարվա իրադարձություն, հին օրերի երջանկություն, նախորդ շաբաթվա պարապմունք, երեք ամսվա դեպք *և այլն։*

«Իրար մեջ բացված բազմաթիվ սենյակներ զարդարված են անտիկ աշխարհի *օրիգինալ* արձաններով *և նկարներով» (ՆԶՍԳ, 256)։ «Եվ Մուրադն սկսեց արագ-արագ պատմել* նախորդ օրվա խոսակցության *և այդ օրվա պատահածի մասին» (ՄԱՌՀ, 300)։*

5. Ժամանակակից հայերենում, մանավանդ գեղարվեստական պատկերավոր խոսքում, լայն տարածում են ստացել այն կապակցությունները, որոնցում լրացյալը, գոյականաբար գործածված ածական լինելով, կատարում է երկու բառից կազմված կապակցության դեր։ Սրանք են վերաբերում, օրինակ, աշխարհի հեռուն, երկնքի հեռուն, ծովի բացը, սրտիս մութը, սրտի դատարկը, մեկի աջը *և այլ կապակցություններ։* Աշխարհի հեռուն *նշանակում է* աշխարհի հեռու տեղերը, տարածությունը, ծովի բացը *նշանակում է* ծովի բաց տարածությունները։

Այսպիսի կապակցությունները առավել գործածական են պոեզիայում։

«Ես էի լցրել ախրությամբ սիրուն Քո փոքրիկ սրտի դատարկը *անգույն» (ՎՏ, 1, 10)։ «Ես երբեք չեմ բանա* սրտիս մութը *փակ» (ՎՏ, 1, 36)։ «Եվ իմ մութ* կյանքի սևերում *դժկամ՝ Ես գտնեմ, ոսկի ժպտաս, լուսավոր» (ՎՏ, 1, 77)։ «Ոսկի հասկերով ողջունում էր մեզ* Աշխարհի հեռուն*՝ բաց, լայնատարած» (Չ, 220)։ «Ու ցոլաց նրա մեջ հանկարծ* Երկնքի *անսահման* հեռուն*» (Չ, 284)։ «Համբուրեց* վենափառի աջը*» (Մուր., 4, 371)։*

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԵՌԱԿԱՆՈՎ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ԼՐԱՑՅԱԼԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ինչպես հայտնի է, ժամանակակից հայերենի շարադասությունը ճկուն է. լրացումը կարող է դրվել լրացյալից և՛ առաջ, և՛ հետո։ Այսպես, օրինակ, կարելի է ասել և՛ Երևանի գեղեցկությունը, *և՛* գեղեցկությունը Երևանի։ *Անհրաժեշտ է նշել, որ շրջան*

շարադասությունը ավելի շատ հատուկ է պոեզիային։ Լրացման և լրացյալի կապակցության իմաստային ամբողջությունն այնքան սերտ է, որ նրանք կարող են իրարից անջատված լինել տարբեր բառերով, սակայն կապակցության իմաստը չի խաթարվում։ Մասնավորապես պոետական խոսքում կապակցության բաղադրիչները հաճախ են անջատվում իրարից։

«Առնում եմ կնոջ՝ տարերքը **կրքի**» (Իս., 2, 53)։ «Եվ հոգին լցնում վսեմ **ղողանջով** Երկնքի հազար բյուրեղ **զանգերի**» (Իս., 2, 61)։ «Դուռը չեմ բախի **մարդու** ննջավոր» (Իս., 2, 73)։ «Երևի դիտե, որ կընկնի գողով, **Մամուռ** կդառնա մամռած մի **քարի**» (ՀՍՆԴԲ, 211)։

Հայերենում սեռականով լրացումը սակավ դեպքերում է տրոհվում իր լրացյալից։ Դա լինում է առաջին հերթին այն ժամանակ, երբ հատկացուցչի և հատկացյալի միջև ընկնում է վերջինիս՝ դերբայական դարձվածով արտահայտված լրացումը։ Այսպես, «Նայելով **մահամերձի**՝ արդեն հողի գույն ստացած **դեմքին**, խորասուզվում էր անսովոր մտքերի մեջ» (Շիրվ., 3, 409) նախադասության մեջ **մահամերձի** հատկացուցչի և **դեմքին** հատկացյալի միջև ընկած է **դեմքին** բառի դերբայական դարձվածով արտահայտված լրացումը (**արդեն հողի գույն ստացած**)։

Սեռականով լրացումը լրացյալից տրոհվում է նաև այն դեպքում, երբ նրանց միջև ընկնում է առաջինի բացահայտիչը։ Օրինակ՝ «Նա չկամեցավ հիսուն տարվա արյուն-քրտինքով վաստակածը քամուն տալ, այսինքն՝ ձգել երկրորդ **որդու**՝ Միքայելի **ձեռքը**» (Շիրվ., 3, 18) նախադասության մեջ **որդու** լրացման և **ձեռքը** լրացյալի միջև ընկած է **Միքայելի** բացահայտիչը։

Սեռականով լրացումը սովորաբար տրոհված որոշիչ չի դառնում։ Սակայն կան հազվադեպ օրինակներ. «Տարբեր **հասակի ու մեծության**, երեք **գյուղացիներն** էլ ուսերի վրա դցել էին գույնզգույն խուրջիններ» (ՄԱՌՀ, 141)։ «**Պրոլետարներ**՝ ամեն **ազգության ու ցեղի**՝ իրար հանդեպ կեցած տարիներ է արդեն, Որ լափում են իրար...» (Չ, 134)։

Սակայն շարադասության այդ ազատությունն ունի նաև բացասական հետևանք։ Պատահում են դեպքեր, երբ հնարավոր չէ պարզել, թե լրացյալը երկու սեռականներից որին է պատկանում։ «Ու պեղում եմ մտքով ես անցյալ **մարդկության պանթեոնը** բոլոր անմահ **հանճարների**» (ՎՆԻԱ, 47)։ Այստեղ կարելի է առանձնացնել և՛ **մարդկության պանթեոնը**, **հանճարների պանթեոնը**, և՛ **մարդկության հանճարների պանթեոնը**։

Պատահում է նաև հակառակը, երբ նույն լրացումը մեկից ավելի իրար հետ կապ չունեցող գոյականների կարող է վերագրվել։ Այսպես, «Տինզերական դու բաժակ անհուն՝ Ոսկի արբեցման և երանության» (Իս., 2, 81) նախադասության մեջ արբեցման *և* երանության *սեռականները կարող են դիտվել և՛* բաժակը, *և՛* ոսկի *բառերի լրացում։*

Շփոթություն կարող է առաջանալ նաև այն դեպքում, երբ լրացման մոտ լինում է ոչ միայն այլ գոյական, այլև ածական։ Օրինակ՝ «Մթանը գնում իրեն հոր *ծանոթ Աղքատ, անորդի մի ծեր կնկա մոտ» (ՀԹ, 2, 104) նախադասության մեջ հայտնի չէ, թե* հոր *ձևը որ բառի լրացումն է.* կնկա *գոյականի՞, թե՞* ծանոթ *ածականի, այսինքն պիտի լինի* հոր կնկա *(որն անիմաստ ու սխալ է), թե՞* հոր ծանոթ*։ Իհարկե վերջինն է հավանական, սակայն այդ դեպքում պետք է* հոր *ձևը որոշյալ լիներ (*հորը ծանոթ*, որն անհնարին է բանաստեղծական չափի տեսակետից. մի վանկ կավելանար)։*

Երբեմն պատահում է, որ սեռականով լրացումը դրվում է այնպիսի բառի վրա, որը գոյականից վերածվել է ածականի՝ համապատասխան ածանցով։ Այսպիսի կապակցությունները սխալ են և մերժելի գրական լեզվում։ Այսպես, «Պատրաստվում էր գինին, որ շուտով խմվելու էր նույն այդ երիտասարդների *ու* աղջիկների *ամուսնական խնջույքներում» (ՄԱՌՀ, 73) նախադասության մեջ* երիտասարդների, աղջիկների *սեռականները* ամուսնական *բառի լրացումն են, մինչդեռ այն ածական է դարձել՝* —ական *ածանցով (եղել է* երիտասարդների, աղջիկների ամուսնություն, *ապա ստացել նշված ձևը)։ Այդ կապակցությունը պետք է լիներ՝* երիտասարդների և աղջիկների ամուսնության *(խնջույքներում)։*

Ի վերջո անհրաժեշտ է նշել, որ հաճախ նախադասության այլ անդամներ, իրար հետ քերականական կապ չունենալով հանդերձ, անմիջականորեն իրար մոտ են դրվում և արտաքուստ նման են լինում կապակցության բաղադրիչների։ Դա լինում է մեծ մասամբ անորոշ տրականի և ուղղականի կամ հայցականի պատահական զուգադրություն։

«Բայց չի փոխվում այդ վիշտը մառախուղի, *Այլ քրտինք է դառնում՝ մաքրող ու զով» (Չ, 121)։ «Երգեցիր* սուտ ցնորքներ *ու* հուշ*» (Չ, 128)։*

Հատկանշական է, որ ընդգծվածները սեռականով կապակցություններ չեն, այլ առաջին դեպքում ենթակայի և տրական հոլո-

վով արտահայտված անուղղակի խնդրի, երկրորդ դեպքում՝ տրական հոլովով դրված անուղղակի խնդրի և ուղիղ խնդրի պատահական զուգադրություններ։

3. ԳՈՅԱԿԱՆԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՄՅՈՒՍ ԹԵՔ ՀՈԼՈՎՆԵՐՈՎ

Ժամանակակից հայերենում գոյականի լրացումները հիմնականում արտահայտվում են սեռական և մասամբ ուղղական հոլովներով։ Դա հասկանալի է. սեռական հոլովը ցույց է տալիս դադարի մեջ գտնվող առարկաների հարաբերություն, իսկ գոյական լրացյալը և լրացումը միայն այդպիսի հարաբերության մեջ կարող են գտնվել։ Մինչդեռ մյուս թեք հոլովները՝ տրական, հայցական, բացառական, գործիական և ներգոյական, արտահայտում են շարժման մեջ գտնվող առարկաների հարաբերություն և դրա շնորհիվ դառնում բայի (ինչպես և ածականի) լրացումներ։

Սակայն քիչ չեն այն դեպքերը, երբ գոյականը ևս լրացումներ է ստանում հիշյալ թեք հոլովներով։ Իհարկե այդպիսի լրացում կարող են ստանալ ոչ բոլոր գոյականները և ոչ բոլոր դեպքերում։ Գոյականը իր քերականական առանձնահատկություններով, ինչպես նաև կապակցելիությամբ էապես տարբերվում է բայից, ածականից և մյուս խոսքի մասերից։ Իսկ եթե այն նշված հոլովներով լրացումներ է ստանում, ապա դա պայմանավորված է նրանով, որ գոյականը և համապատասխան խոսքի մասերն ունեն ընդհանրություն ինչպես քերականական-շարահյուսական, այնպես էլ բառակազմական տեսակետից։ Միաժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ գոյականի՝ այլ հոլովներով լրացում ստանալը բոլորովին էլ չի վերացնում նրա և բայի ու ածականի շարահյուսական առանձնահատկությունները, չի հավասարեցնում այդ տարբեր խոսքի մասերը կապակցելիության տեսակետից, այլ, որքան էլ այդ տարօրինակ թվա, ավելի է ընդգծում, մի կողմից, գոյականի և, մյուս կողմից, բայի ու ածականի քերականական-շարահյուսական առանձնահատկությունները։ Իրականում, եթե որևէ գոյական անուն իր կազմության ու ծագման կամ իմաստային յուրահատկություններով բային հատուկ լրացումներ է ստանում տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական հոլովներով, ապա դրանով նա ոչ միայն չի նույնանում բայի կամ ածականի հետ, այլ, ընդհակառակն, ավելի են շեշտվում գոյականի և բայի, գոյականի և ածականի տարբերությունները շարահյուսական կապակցելիության տեսակետից։

Նշված բոլոր հոլովները հավասար չափով չեն դառնում գոյականի լրացում։ Առավել հաճախ շարահյուսական հիշյալ դերով հանդես են գալիս բացառական և գործիական հոլովները, որոնք, ինչպես հայտնի է, ունեն իմաստային շատ ավելի բազմերանգություն, քան մյուսները։

Թեք հոլովներով (բացի սեռականից) լրացումներով գոյականի կապակցությունների ուսումնասիրությունն ունի մի առանձնահատկություն. դա լրացյալի և լրացման իմաստային փոխհարաբերության բացահայտումն է։ Այս հարցում մենք ելակետ ենք ընդունել այն իրողությունը, որ հիշյալ հոլովաձևերով գոյականի լրացումը լրացյալի նկատմամբ արտահայտում է այն հարաբերությունները, որոնք բնորոշ են տվյալ լրացյալ գոյականին հարաբերակից բայի (նաև ածականի) և նրա լրացում կապակցություններին։

Այս կապակցությունների քննության ժամանակ ծագում է կապակցության բաղադրիչների իմաստային կապի արժեքավորման հարցը։ Իմաստային ի՞նչ փոխհարաբերության մեջ են լրացյալն ու լրացումը նման կապակցությունների մեջ։

Բայական կապակցությունների քննարկումը ցույց է տալիս, որ բայի լրացումները տրական հոլովով արտահայտում են խնդրային և պարագայական հարաբերություններ։ Եթե նկատի ունենանք բերված մասնակցել պատերազմին բայական կապակցությունը, ապա հայտնի է, որ այստեղ արտահայտված է փոխադարձ կապի հարաբերություն։ Սակայն պարզ է, որ իմաստային նման հարաբերություն չի կարող լինել գոյականի և նրա լրացման միջև՝ բայական կապակցություններին բնորոշ իմաստով։ Սակայն այստեղ ևս անժխտելի է այդպիսի կապը։ Այստեղից էլ պետք է հետևցնենք, որ առհասարակ բայական ծագում ունեցող գոյականների և նրանց լրացումների միջև արտահայտվում է այնպիսի կապ, ինչպիսին առկա է համապատասխան բայերի ու նրանց լրացումների միջև։ Բանն այն է, սակայն, որ լրացման իմաստը նույնական չէ նրա շարահյուսական պաշտոնի հետ[1]։ Շարահյուսական տեսակետից գոյականի տրական (ինչպես և հայցական, բացառական, գործիական, ներգոյական) հոլովով լրացումը դիտվում է իբրև որոշիչ։ Սակայն տարօրինակ է, առաջին հայացքից, որ պարագայական և խնդրային իմաստ արտահայտող լրացումը որոշիչ է համարվում։ Բանն այն է, որ միայն այս թեք հոլովներով դրված լրացումները

[1] Տե՛ս «Գոյականի լրացումները սեռական հոլովով» հատվածը։

չեն այդպես։ Նույնպիսի փոխհարաբերություն կա նաև սեռական հոլովով դրված մի շարք պարագայական հարաբերություն արտահայտող լրացումների իմաստի և շարահյուսական պաշտոնի միջև[1]*, միայն այն տարբերությամբ, որ այնտեղ լրացյալի բայական ծագումը վճռական նշանակություն չունի լրացման իմաստի համար։*

Ոչ-բայական կամ ոչ-ածականական ծագում ունեցող որոշ գոյականներ ևս կարող են ստանալ հիշյալ հոլովներով (գերազանցապես բացառական և գործիական) դրված լրացում։ Այս դեպքում արդեն գոյականի լրացումները պայմանավորված են ոչ թե լրացյալի կազմությամբ, այլ լրացման իմաստային առանձնահատկություններով։

Միաժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ թեք հոլովներով (բացի սեռականից) լրացումները բխում են տվյալ կապակցության ֆունկցիոնալ-շարահյուսական առանձնահատկություններից։ Նկատելի է, որ այդ կարգի կապակցությունները երկու հիմնական դեր ունեն խոսքի մեջ. մի դեպքում դրանք ունեն անվանողական-նկարագրական պաշտոն և հիմնականում հանդես են գալիս իբրև վերնագրային անվանում-նախադասություններ։ Այդպես են, օրինակ, (մեկի) ելույթը ժողովում, *(մեկի)* զեկուցումը համագումարում, *(մեկի)* վերադարձը արտասահմանից. *(մեկի)* դիմումը ժողովրդին *և այլն։ Երկրորդ դեպքում հիշյալ կապակցությունները գործածվում են սովորական նախադասությունների մեջ (բայական, անվանական)։*

ԳՈՅԱԿԱՆԻ ԼՐԱՑՈՒՄԸ ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ

Տրական հոլովը ժամանակակից հայերենում բայի լրացում է լինում։ Սակայն, ինչպես նշեցինք, բայական կամ ածականական ծագում ունեցող մի շարք գոյականներ ևս կարող են ստանալ տրական հոլովով դրված լրացում։ Այս դեպքում լրացումը պայմանավորված է ոչ թե լրացյալի խոսքի մասային առանձնահատկություններով, այլ կազմության և ծագման յուրահատկություններով։

Այսպես, օրինակ, մասնակցությունը պատերազմին *կապակցության մեջ* մասնակցությունը *լրացյալն ստացել է* պատերազմին *տրականով լրացում, որը բխում է ոչ թե* մասնակցությունը *բառի*

---

[1] Տե՛ս նույն տեղում։

գոյականական բնույթից, այլ բայական ծագումից։ Մասնակցությունը գոյականը կազմված է մասնակցել բայից, որն ունի տրականով լրացում (մասնակցել պատերազմին)։

Տրական հոլովով լրացում ունեցող կապակցություններից կարելի է նշել վերաբերությունը կյանքին, նվերը մեկին, նախապատրաստումը մի բանի և այլն։

Ինչպես արդեն նշել ենք, այս կապակցությունները ավելի շատ գործածական են վերնագրային-անվանողական դարձվածքներում, իսկ վերջիններս երկու տեսակ կառուցվածք ունեն։ Մի դեպքում լրացյալ գոյականը բայական կամ ածականական ծագման պատճառով է ստանում տրականով լրացում, ինչպես՝ «Ընդունելություն Լիբանանի սովետական դեսպանատանը» (լրագիր), «Պատասխան Դյուբեին» (Չ, 142), «Առավել ուշադրություն գրական երիտասարդությանը» (լրագիր), «Նվեր Վրաստանի բանաստեղծներին» (ՀԹ, 1, 141) և այլն։ Իսկ երկրորդ դեպքում գոյականի՝ տրականով լրացումը հետևանք է նրա անմիջական լրացյալ բայի (դիմավոր կամ դերբայական ձև) զեղչման, որից հետո է այն ստանձնում այդ դերբայի լրացյալ գոյականի լրացման դերը։ Այսպես, երբ ասում ենք՝ «Լուրջ ճայլ Լաոսի հարցի խաղաղ կարգավորման ճանապարհին», ապա այստեղ ճայլ գոյականը ճանապարհին լրացումն ստացել է ամենևին էլ ոչ իր բայական ծագման շնորհիվ (թեև հնարավոր է նաև ասել ճայլ ճանապարհին— ճայլել ճանապարհին), այլ իր անմիջական լրացման (ենթադրյալ արած, կատարած) զեղչման հետևանքով է ստացել այդ դերբայի ճանապարհին լրացումը։ Այսպես են նաև՝ «Բարձրորակ սարքեր ժողովրդական տնտեսությանը» (լրագիր), «Լայն ճանապարհ կոմունիստական աշխատանքի շարժմանը» (լրագիր), «Ամերիկյան մրցանակ սովետական կոնստրուկտորին» (լրագիր), «Նվերներ բանվորանին» (լրագիր), «Խոսք աշխարհին» (լրագիր), «Ողերծ մեր հանճարեղ վարպետներին» (Չ, 173), «Տաղ սրտաուչ եղբայրական Վրաստանին» (Չ, 200), «Թուղթ բանաստեղծ բարեկամիս» (Չ, 616), և այլն։

Այսպես նաև ածականական ծագում ունեցող գոյականները կարող են ստանալ տրականով լրացում՝ վերնագրային-անվանողական նախադասություններում։ Օրինակ՝ «Նմանություն Հայնեին» (Չ, 88)։

Վերոհիշյալ կապակցությունները գործածական են նաև դիմավոր նախադասությունների մեջ։

«Առանձնապես սիրելի էր Գայանեի համար նրա կիսան-

փուլթ և կիսահեղնական վերաբերությունը կյանքին» *(Շիրվ., 2, 315)։ «— Լուցկի եմ ուզում,— գոռաց Մելքոնը, որի նախանձը շարժել էր Միքայելի* նվերը երգչուհուն» *(Շիրվ., 3, 94)։ «Նորից տարվեց իր սովորական աշխատանքով. դասեր, տետրեր,* այցելություններ հիվանդանոցին» *(ՍԶ, 5, 156)։ «Արդյոք ինչո՞վ կլինի բացատրած կնոջ տարաժամ բացակայությունը տնից և* վերադարձը կեսգիշերին» *(ՆԴ, 3, 159)։*

Այս նախադասություններում եղած կապակցությունների բաղադրիչները տարբեր հարաբերություններ են արտահայտում։ Այսպես, վերաբերությունը կյանքին, այցելությունները հիվանդանոցին *կապակցություններում արտահայտվում է հանդման հարաբերություն,* նվերը երգչուհուն *կապակցության մեջ՝ մատուցման հարաբերություն,* վերադարձը կեսգիշերին՝ *ժամանակի հարաբերություն։ Սակայն բոլոր կապակցություններում էլ լրացումը որոշիչ է՝ որպես նախադասության անդամ։*

Այս կարգի կապակցությունները քիչ են գործածվում գեղարվեստական գրականության լեզվում։ Եղած օրինակներն էլ գերազանցապես այն հեղինակներից են, որոնց խոսքը պարունակում է այլ լեզուների պատճենված ձևեր։

Ինչպես երևում է բերված օրինակներից, լրացումը սովորաբար հատադաս է լինում, երբեմն էլ լրացյալից անջատված այլ բառերով։ Ժամանակակից հայերենին խորթ է նման դեպքերում լրացման նախադաս գործածությունը։ Այդ է պատճառը, որ այլ լեզուներից պատճենված են երևում հետևյալ տիպի նախադասությունները՝ «Ճանապարհորդներին այցելություններս *վերջացնեմ» (ՀԱՆՀ, 83)։*

Որոշ հեղինակներ այնքան հեռուն են գնում այլ լեզուներից կատարած պատճենումների ճանապարհով, որ ստեղծում են սխալ կապակցություններ։ Հայտնի է, օրինակ, որ հայերենում տեսակցել *բայը տրականով լրացում չի ստանում, այլ կապով* (տեսակցել մեկի հետ)։ *Սակայն միաժամանակ այդ կապակցություններում լրացումը նախադաս են դնում՝ հավանաբար* տեսակցել և տեսնել *բայերի բաղադրկությամբ։ Օրինակներ՝ «Ահա «Մայրը գնում է մահապարտ* որդուն տեսակցության» *նկարը» (ՌԱՌԵ, 6)։ «Սկսեց պատրաստություն տեսնել* ամուսնուն տեսակցության *գնալու համար» (ՍԶ, 2, 295)։*

Դիմավոր նախադասության մեջ գործածվում են այնպիսի կապակցություններ, որոնք ըստ էության դերբայական դարձված են՝ դերբայի կրճատմամբ։ Այդ կապակցությունները կատարում են

սովորաբար պարագայի պաշտոն (լրացյալի ֆունկցիան է)։ Դրանցից կարելի է նշել՝ «Ձեռքին կոտրած գերանդի՝ անցնում էր մահն անկշտում» (Չ, 260)։ «Մաճակն ուսին, շունն ետևից ներս է մտնում մի զըռ չոբան» (ՀԹ, 1, 258), «Հայացքը լուրթ ջրերին, ականջը՝ ձայնի, Երազներով քնքշագին պահում է ճամփաս» (ՀԱՀԵՄ, 135) նախադասությունները, որոնցում ձեռքին կոտրած գերանդի, մաճակն ուսին, հայացքը լուրթ ջրերին, ականջը ձայնի առաջացել են համապատասխան գերբայական դարձվածի գլխավոր բառ-գերբայի զեղչումով. եղել են՝ ձեռքին կոտրած գերանդի (բռնած, պահած, ունենալով և այլն), մաճակն ուսին (դրած, պահած և այլն), ականջը ձայնի (պահած, բռնած, ուղղած և այլն), որոնցից և առաջացել են նշված կապակցությունները։

Այս կապակցությունները նման են ներգոյական հոլովով դըրված համապատասխան կազմություններին և համապատասխանում են ածականի նույն կարգի բառակապակցություններին։

Սրանք երբեմն կարող են դառնալ նաև գոյականի լրացում՝ շարահյուսական հատուկ կառուցվածքում։ Այսպես, «Գարեգինի կողքին Արուսն էր՝ գլխին ծոպավոր սպիտակ շալ» (ՍԽՀ, 312) նախադասության մեջ գլխին ծոպավոր սպիտակ շալ կապակցությունը Արուս գոյականի լրացումն է (կարող է դիտվել նաև ստորոգյալի լրացում՝ վիճակի պարագա)։ Հենց այսպիսի կիրառության միջոցով է, որ արդեն կայուն դարձվածքի արժեք ստացած որոշ կապակցություններ դառնում են գոյականի լրացում, ինչպես, օրինակ, խելքը գլխին։ «Փորձեցեք խելքը գլխին մարդուն գցել մի այնպիսի շրջան» (Շիրվ., 4, 288)։ «Եկած կլինի, որ խաբար տանի, Թե խելքը գլխին դեռ քանի գյուղ կա» (ՀԹ, 2, 33)։

ԳՈՅԱԿԱՆԻ ԼՐԱՑՈՒՄԸ ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ

Գոյականը հայցական հոլովով ևս լրացում չի ստանում, քանի որ այն բայի լրացումների հոլովն է, սակայն թեք հոլովների նման հայցականը ևս կարող է դառնալ բայական ծագմամբ գոյականի լրացում՝ սահմանափակ գործածությամբ։

Բայական ծագում ունեցող գոյականի մոտ դրվում է հայցականով տարածական իմաստ արտահայտող լրացում՝ սովորաբար բացառական հոլովի հետ։ Այս դեպքում բացառականն ու հայցականը, իբրև գործողության տարածական սկզբնակետ ու վախճանակետ, միասին են հանդես գալիս։

«Երկար շարունակում էր երթուդարձը գրադարանի մեկ ծայրից մյուսը» (ՀԱՆՀ, 126)։ «Երկրից երկիր թափառումները, սահ-

մանագլխից սահմանագլուխ արտաքսումները... *կոփել էին նրա մարմինը»* *(ՀԱՆՀ, 166)*։ «Մուտքը կինո-թատրոն *ժամը ութից հետո արգելվում է» (ցուցանակ-ազդ), «Չէ՞ որ դրա համար էին կազմակերպել մեր* այցը Արևմտյան Բեռլին» *(լրագիր)*։

Սրանք ավելի շատ գործածական են վերնագրային-անվանողական նախադասություններում։ Գործածության տեսակետից այս վերջին տեսակը ավելի կենսունակ է ու զարգացող։ Օրինակներ՝ (մեկի) ժամանումը Երևան *(Մոսկվա, Հայաստան և այլն), (մեկի)* վերադարձը հայրենիք, *Նապոլեոնի* արշավանքը Ռուսաստան և *այլն։ «Դա Մխիթարի առաջին* այցն *էր հայոց հյուսիսային* գավառները» *(ՍԽՄԽ, 654)*։

Սովորաբար խնդրային հայցականը գոյականի լրացում չի դառնում։ Սակայն որոշ հեղինակներ կազմում են այդ տիպի կապակցություններ։ Օրինակ՝ «Զարհուրելի սպանդ էր և իրար ոչընչացումն» *(ԴԴՎ, 699)։ Այս նախադասության մեջ* ոչնչացումն *բայական ծագմամբ գոյականն ունի* իրար *հայցականով խնդրային իմաստ արտահայտող լրացում* (իրար ոչնչացում-իրար ոչնչացնել)։

ԳՈՅԱԿԱՆԻ ԼՐԱՑՈՒՄԸ ԲԱՑԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ

Որոշ դեպքերում գոյականն էլ կարող է այս հոլովով լրացում ստանալ։ Գոյականի՝ բացառական հոլովով լրացումներով կապակցությունները երկու խմբի են բաժանվում։ Առաջին դեպքում լրացումը բխում է լրացյալ գոյականի ոչ-բայական կամ ոչ-ածականական ծագումից, այլ բնորոշ է գոյականին։ Այդ կապակցությունների լրացյալը սովորաբար կա՛մ գոյական է լինում, կա՛մ գոյականաբար գործածված այլ խոսքի մաս (թվական, դերանուն և այլն)։ Լրացումը ցույց է տալիս այն ամբողջը, որի մի մասն արտահայտված է լրացյալով (հմմտ. մասնական բացառականի հետ)։ Մասնական բացառականը կարող է դառնալ ոչ միայն բայի[1], *այլև գոյականի լրացում* (նրանցից մի քանիսը, վերադարձածներից Գրիգորը *և այլն)*։

«Հովիտը շրջապատող հրաբխային սարերից մեկը *շատ անհանգիստ էր» (ՎԱՍՍ., 9)։ «Հինգ հարյուր* տարուց մի ժամ *էլ դեռ կա» (ՀԲ, 1, 217)*։

Երկրորդ դեպքում բացառականով լրացումը երկու կարգի է լինում։ Առաջին՝ լրացումը գոյականի հետ կապակցվում է դերբա-

[1] *Տե՛ս «Բայի լրացումները բացառական հոլովով» բաժինը։*

յական դարձվածի դերբայի դեղչումով։ Հայտնի է, որ գոյականը կարող է լրացում ստանալ դերբայական դարձվածով (օրինակ՝ կարմիր մետաքսից կարված դրոշակ)։ Հնարավոր է, որ այդ դերբայական դարձվածի գլխավոր բառ-դերբայը դեղչվի, և բացառականն ստանձնի անմիջապես դերբայի պաշտոնը (կարմիր մետաքսից դրոշակ)։ Ժամանակակից հայերենում այսպիսի գործածությունը բավական տարածված է։ Այս ձևով ունենք ասլյա կտորից հագուստ, կարմիր աղյուսից շենք, երկու սենյակից բնակարան և այլն։

«Հագել էր միակ տոնական մեխակագույն ասլյա կտորից հագուստը» (Շիրվ., 3, 124)։ «Մյուս կողմից հեշտ չէր հեռանալ հայրենի քաղաքից, ուր թողնելու էր երեք սենյակից իր հարմարավետ բնակարանը» (ՍԶ, 5, 50)։ «Հեռվում երևում էր մի շինություն կարմիր աղյուսից» (Շիրվ., 2, 557)։

Բերված բոլոր կապակցություններում լրացումն արտահայտում է նյութի-խնդրային հարաբերություն՝ նման լինելով համապատասխան բայերի լրացումներին (հմմտ. կտորից կարել, աղյուսից կառուցել, սենյակից բաղկանալ)։

Երկրորդ ենթատեսակը բայական կամ ածականական ծագում ունեցող գոյականներով կազմված կապակցություններն են, որոնք համեմատաբար քիչ գործածություն ունեն։ Դրանցից կարելի է նշել՝ վերադարձը որևէ տեղից, ակնածություն մեկից, վախը նախապաշարումներից,— մեկից,— մի բանից, երկյուղը մի բանից, բացակայությունը տնից,— մի տեղից և այլն։

«Ամբողջ արդեն գիտեին սպարապետի վերադարձը Տիզբոնից» (Բ, 7, 61)։ «Նրա ամբողջ կերպարանքը մատնում էր նրան, ցույց տալով նրա վախը նախապաշարումներից» (Շիրվ., 2, 462)։ «Դիմաքսյանը Մսերյանի աչքերի մեջ կարդաց նրա հոգեկյան խորին դժգոհությունը յուր այժմյան վիճակից» (Շիրվ., 2, 580)։ «Շարունակում էինք մեր մասլահաթը քաղաքականությունից» (ՆԴ, 2, 550)։ «Արդյոք ինչո՞վ կլինի բացատրած կնոջ տարաժամ բացակայությունը տնից» (ՆԴ, 3, 159)։ «Մինչդեռ քրոջ դեմքի վրա կարդացվում էր ինչ-որ դառն դժկամություն կյանքից» (Շիրվ., 3, 167)։ «Մինչև անգամ հիշեց թիկունքի հաճելի ցավը խնձորի հարվածից» (ՋԴԱՎ, 60)։

Բերված կապակցություններում տարբեր հարաբերություններ են արտահայտվում։ Այսպես, երկյուղն ամուսնուց, վախը նախապաշարումներից կապակցությունների մեջ դրսևորվում է պասսիվ ներգործության, մասլահաթը քաղաքականությունից, դժկամություն

կյանքից, դժգոհությունը վիճակից *կապակցությունների մեջ՝ վերաբերության*, բացակայությունը տնից *կապակցության մեջ՝ անջատման-տեղի հարաբերություններ։ Այսինքն՝ այս կապակցությունների հարաբերությունները նույնական են համապատասխան բայական կապակցությունների իմաստների հետ։*

Ինչպես երևում է բերված օրինակներից, այս կապակցությունների համար բնորոշ է լրացյալ գոյականի չթեքվող ձևը։ Այս երևույթն օրինաչափ է ժամանակակից հայերենում։ Այդ է պատճառը, որ ոչ հայերեն, արտառոց են հնչում հետևյալ կապակցությունները. «Ամեն անգամ քաղաքից դարձին՝ *տղերքը հարցնում էին Բենոյին» (ՍԶ, 4, 236)։ «Ռոզան այդ նկատել էր* ջրվեժից դարձին» *(ՍԶ, 4, 332)։*

Այս երկու ենթատեսակի կապակցություններն էլ շատ հաճախ են գործածվում վերնագրային-անվանողական նախադասություններում։ Դրանցից են՝ «Հիշողություն հայրենիքից» *(ՀԲ, 1, 27)։ «Չորս* տաղ «Տաղարան»-ից» *(Չ, 43)։* «Փախուստ ճակատամարտից»: «Նամակ ընկերոջից» *և այլն։*

Վերնագրային-անվանողական մի շարք կապակցություններում հաճախ զեղչված է լինում լրացյալը, և այդ դեպքում կապակցությունը կարելի է մեկնաբանել երկու կերպ։ Այսպես, «Շիրակի դաշտերից» *(ՎՏ, 1, 14) կապակցությունը կարելի է ըմբռնել կա՛մ* վերադարձ, հիշողություն *(և այլն) Շիրակի* դաշտերից, *կա՛մ ուղղակի՝* գալիս եմ, վերադառնում եմ *(և այլն) Շիրակի* դաշտերից: *Այսպես են նաև՝* «Քաջերի կյանքից» *(ՀԲ, 1, 300)։* «Անկումների սարսափից» *(Չ, 35),* «Հրաժեշտի խոսքերից» *(ՎՏ, 1, 49) և այլն։*

Պատահում է, որ բացառականով լրացումը հանդես է գալիս լրացյալից տրոհված։ Այս երևույթը բնորոշ չէ ժամանակակից հայերենին և հետևանք է այլ լեզուների համապատասխան կապակցությունների պատճենման։ Օրինակ՝ «Տանում են իմ լավագույն քրոջը, իմ առաջին օգնականին՝ *ճակատային առաջին* օրերից» *(ՄՇՉ, 590)։*

ԳՈՅԱԿԱՆԻ ԼՐԱՑՈՒՄԸ ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ

Գործիական հոլովը թեև գերազանցապես բայի լրացում է լինում, սակայն գոյականի հետ կապակցվելու ավելի շատ հնարավորություններ ունի, քան մյուս թեք հոլովները (բացի սեռականից)։ Դրա պատճառը այդ հոլովի իմաստային բազմազանությունն է, ինչպես նաև նրա շարահյուսական կիրառության առանձնահատ-

կությունները։ Գործիական հոլովի որոշ իմաստներ, մասնավորապես նյութի և սահմանափակման (բացառականի նման), լայնորեն գործածվում են իբրև և՛ բայի, և՛ գոյականի լրացում (իսկ սահմանափակման գործիականը՝ նաև ածականի լրացում)։

Գործիական հոլովի որոշիչ կիրառությունը միայն ժամանակակից հայերենին չէ հատուկ. այն բնորոշ է նաև հին հայերենին։ Գործիական հոլովի որոշիչ պաշտոնն է պայմանավորել պատմականորեն գործիական հոլովաձևերի ածական դառնալը (խելոք, տեսոք)։

Գոյականի լրացումը գործիական հոլովով կարող է արտահայտել տարբեր հարաբերություններ, սակայն բոլոր իմաստներն էլ վերջին հաշվով հանգում են որոշիչ պաշտոնին, ուստի և գործիականով կապակցություններում լրացումը միշտ որոշիչ է լինում։ Այդ կապակցություններից կարելի է նշել՝ համով հաց,— պտուղ, տարիքով մարդ,— կին, խղճով երիտասարդ,— տեր, ճաշակով աղջիկ և այլն։

«Եվ ո՞վ գործից կվախենա, եթե խղճով տեր ունենա» (ՀԱՀԵՄ, 417)։ «Նա է միայն բանաստեղծ, ով վարժվել է հանգերով ոտանավորներ գրել» (ՆԴ, 2, 457)։ «Բենոն ականջակալներով գլխարկն առջևը՝ անսփռոց սեղանին դրած, պատմում էր» (ՍԶ, 4, 189)։ «Դրոշակով վրանի ստվերում ձիու թամբին նստած էր մի սպա» (ՍԽՄԽ, 592)։

Այս կազմությունն ունեցող որոշ կապակցություններ անվանողական դարձվածք են (երեսով մարդ, գլխով մարդ և այլն), իսկ մի մասն էլ վերածվել է բաղադրյալ անվան, ինչպես՝ թանով ապուր, թանով սպաս, երեսով մածուն, երեսով պանիր, Ձենով Օհան։

Այս կապակցությունների մի մասը համանիշ են— վոր,— ավոր,— անի,— եղ ածանցներով կազմված ածական լրացում ունեցող գոյականի կապակցություններին. հմմտ. տարիքով մարդ և տարիքավոր մարդ, դրոշակով վրան և դրոշակավոր վրան, հանգերով ոտանավոր և հանգանի ոտանավոր, համով հաց և համեղ հաց և այլն։ Սակայն դրանք միշտ չէ, որ կարող են փոխարինվել մեկը մյուսով. կան կապակցություններ, որոնց ածականական լրացումով համարժեքը չի կազմվում. օրինակ, եթե կարելի է ասել ճաշակով հագուստ, խղճով մարդ, ապա չի կարելի ասել ճաշակավոր հագուստ, խղճավոր մարդ։

Դրանցից մի փոքր տարբեր են, թեև որոշիչ հարաբերությամբ կապակցվող, սահմանափակման իմաստով լրացում պարունակող

կապակցությունները։ Այդպես են՝ դեմքով հրեշտակ, հոգով ստրուկ, կոչումով գիտնական, ազգով հայ, ծագումով պարսիկ, հոգով երեխա և այլն։

«Մնաք բարով, համբույր և սեր, Դեմքով հրեշտակ կույս շքեղնազ» (ՀՀ, 79)։ «Ախպոր, գրկում քո, հոգով երեխա, Ես եմ ճերմակում ու ծերանում» (ՄՄԼ, 259)։

Սրանց հետ չպետք է շփոթել այն կապակցությունները, որոնցում լրացումը գոյականի վրա է դրվել, ինչպես արդեն նշել ենք տրականի և հայցականի առթիվ, նրանց երբեմնի լրացյալ գերբայի (կամ ածականի) զեղչմամբ։ Այստեղ, իհարկե, լրացումը միատեսակ հարաբերությամբ չի կապակցվում գոյականի հետ։ Դրանցից են՝ ճտով փլավ, մսով կերակուր, խնձորով տոլմա, գինով բաժակ և այլն։

«Մեկ անհոգ ժամեր երգիր՝ ոգելից, Կյանքի խնջույքը, գինով բաժակներ» (ՀՀ, 76)։ «Հիմա ճտով փլավ կբերեն» (ՍԽՄԽ, 490)։

Գինով մարդ կապակցությունը կարելի է հասկանալ և՛ գինով (հարբած) մարդ (գերբայի զեղչումով), և՛ գինով, այսինքն՝ խմած, հարբած մարդ։ Այստեղ գինով ձևն ունի ածականի արժեք։ Օրինակ՝ «Մի երիտասարդ, գինով գինվոր բռնել էր Նասյու օձիքը» (ՍԽՄԽ, 247)։

Գործիականը կարող է ժամանակային չափի իմաստով էլ դառնալ գոյականի լրացում։ Օրինակ՝ «Ապրեց ու հուզվեց երգը սրտագին Դարերով ստրուկ գեղջուկի կյանքում» (Ծ, 143)։

Մինչև այժմ նկարագրված կապակցությունները չունեն այնքան լայն տարածում, որքան գրական լեզվում այժմ կենսունակ՝ որևէ լրացում ունեցող (ածականով, թվականով, գոյականով կամ այլ խոսքի մասով) գոյականի գործիական հոլովով կապակցությունները։ Այստեղ լրացյալ կարող են լինել բազմազան իմաստ ու կազմություն ունեցող գոյականներ, իսկ լրացում՝ բոլոր այն գոյականները, որոնք ծառայում են որևէ հատկանիշ, բնութագրում արտահայտելուն։ Լրացումն այս կապակցություններում շարահյուսական տեսակետից լիարժեք անդամ չէ, այլ իր լրացումով (կամ լրացումներով) հանդերձ է կատարում նախադասության մեկ անդամի դեր[1]։ Իբրև լրացում սովորաբար հանդես են գալիս արտաքին առարկայական բնութագրում տվող գոյականները՝ դեմք, երես, գլուխ, ձեռք, մարմին, մորուք, բեղ, ոտք և այլն։

[1] Տե՛ս «Գոյականի լրացումը ածականով» հատվածը։

Այդպիսի կապակցություններից կարելի է նշել՝ սև հագուստով մարդ, սև երեսով օրիորդ, երկար արտևանունքներով աչքեր, գեղեցիկ կազմվածքով տղամարդ, հարուստ օժիտով աղջիկ, միջին տարիքով կին, ոչխարի մորթով գալ, ճաքճքած բնով ծառ և այլն։

«Լոկ չոր ուղեղով մարդը կարող է միևնույն բանին հազար ու մի իրար հակառակ բացատրություններ տալ» (ՆԴ, 3, 347)։ «Հարուստ օժիտով մի աղջիկ առավ» (Ծ, 245)։ «Սա միջին տարիքով մի կին էր» (Մուր., 1, 97)։ «Կարմիր, մսալի երեսով, հաստ շրթունքներով, վառվռուն սև աչքերով մի երիտասարդ էր» (Շիրվ., 3, 28)։ «Ո՞ր ճաղցած փորով մարդու անունն է հիշվում» (Շիրվ., 3, 597)։

Որոշիչով գործիական լրացումը հաճախ կարող է անջատվել իր լրացյալից, և դրանից կապակցության ամբողջությունը մեծ մասամբ չի խաթարվում. այն շարունակում է դիտվել իբրև մի միասնական բառակապակցություն։ Լրացման անջատումը լրացյալից երկու տեսակ է լինում. մի դեպքում լրացման և լրացյալի միջև ընկնում են նախադասության այլ անդամներ՝ զանազան պատճառներով։

«Կնիկարմատներ չե՞ք հավի խելքով» (ՆԴ, 1, 25)։ «Գալ էր ոչխարի մորթով» (Շիրվ., 3, 515)։ «Ամենից շատ մանուշակագույն ծաղիկներով վայրի առվույտ կար այդտեղ» (ՍխՀ, 163)։ «Սուրիկ անունով կար մի լավ տղա» (ՄՄԼ, 204)։

Առանձին տեսակ են կազմում որոշիչ ունեցող գործիականով այն կապակցությունները, որոնցում լրացումը տրոհված է։ Ժամանակակից հայերենում սրանք բավականին կենսունակ են։ Անշուշտ չի կարելի անտեսել այն հանգամանքը, որ տրոհվող լրացումը իր լրացյալի հետ բառակապակցություն չի կազմում։ Սակայն այստեղ անհրաժեշտ ենք համարում քննել գոյականի՝ լրացումով կապակցությունները ևս՝ նյութի ուսումնասիրությունն ամբողջացնելու նպատակով։

Ժամանակակից հայերենում բավական շատ են գործածական գործիական հոլովաձև պարունակող այն նախադասությունները, որոնցում դժվար է այդ հոլովաձևի շարահյուսական դերը որոշելը։ Ավելի ճիշտ, այն կարելի է համարել և՛ գոյականի, և՛ բայի լրացում։ Դրանց շարահյուսական դերի մեկնաբանությունը կախված է նախադասության հնչերանգից։ Գործիականի շարահյուսական դերի պարզաբանումը դժվարացնում է մասնավորապես չափածո խոսքի շարադասությունը։ Օրինակներ՝ «Եկավ խաչով տերտերը» (ՀԹ, 2, 9)։ «Թե հավատը կորցնի հանկարծ, ներշնչեցեք սիրով

հավատ» (ՀԱՀԵՄ, 254)։ «Կանայք բերեմ քառսուն-քառսուն, Քառսուն բեռնով *դեղին ոսկի» (ՀԹ, 2, 108)։ «Թափում է նա* հեղեղներով *արյուն» (ՆԶՄ, 126) նախադասություններում* խաչով, սիրով, քառսուն բեռնով, հեղեղներով *լրացումները կարելի է հասկացնել և՛* նկավ, ներշնչեցի՛, բերեմ, թափում *է բայերին, և՛* տերտերը, հավատ, ոսկի, արյուն *գոյականներին։*

Երբեմն այդ լրացման շարահյուսական դերի բացահայտմանը կարող է նպաստել համապատասխան անդամների բառային իմաստը, որի անտեսումը ճիշտ չի լինի։ Այսպես, «Դա էր սափրատան ամբողջ կահ-կարասին, եթե չհաշվենք մի հնադարյան բազկաթոռ երկու փութ ծանրությամբ» *(Շիրվ., 3, 477) նախադասության մեջ* երկու փութ ծանրությամբ *չի կարելի համարել* չհաշվենք *բայի լրացում. այն միայն կվերաբերի* բազկաթոռ *գոյականին* (երկու փութ ծանրությամբ բազկաթոռ *կապակցությունը կազմված է չափի-որակական հարաբերությամբ)։*

Վերջին տարիներս առանձնապես հրապարակախոսական (գերազանցապես ռադիոյի և էտրադայի) լեզվում գործածվում են այլ լեզուների բառակապակցությունների որոշ պատճենումներ, որոնց մի մասը անշուշտ ճիշտ են, նպաստում են մեր գրական լեզվի հարստացմանն ու զարգացմանը։ Սակայն միաժամանակ չի կարելի չնշել, որ մի շարք կապակցություններ խորթ են հայերենին։ Այսպես է նաև լրացում ունեցող գործիականի ետադաս որոշիչ կիրառությունը։

«Համերգը երգի վարպետների մասնակցությամբ *հետաքրքրում էր նրան» (ՍԶ, 5, 160)։*

Բոլորովին այլ կարգի են այն կապակցությունները, որոնցում իբրև լրացյալ հանդես են գալիս բայական կամ ածականական ծագում ունեցող գոյականները։ Այստեղ, արդեն, ինչպես տրական, հայցական, բացառական հոլովների դեպքում, լրացումը կարող է արտահայտել բոլոր այն հարաբերությունները, որոնք հատուկ են բայի լրացումներին։ Սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այսպիսի կապակցություններ շատ քիչ են գործածվում։ Եղած սակավաթիվ օրինակներից են՝ «Հարությանը յուր ամիսներով բացակայությունից *շատ կարող էր օգտվել» (ՆԴ, 2, 62)։ «Անպայման հավատը* երկու աչքով կուրություն *է» (ՆԴ, 2, 86)։ «Իր* տարիներով թափառումների *ընթացքում սովորել էր մի շարք արևելյան լեզուներ» (ՀԱՆՀ, 361)։*

Սրանցից տարբեր են վերնագրային-անվանողական կապակցությունները, որոնցում, ինչպես հայտնի է, գոյականի հետ կարող

են կապակցվել բոլոր հոլովներով դրված բառերը։ Ընդ որում այսպիսի կապակցությունները կարող են կազմվել զանազան հարաբերություններով։ Սակայն պետք է տարբերենք երկու ենթատեսակ։ Առաջին դեպքում լրացյալն ունի բայական ծագում, որի մոտ լրացումն արտահայտում է համապատասխան բայական կապակցություններին համարժեք հարաբերություն։ Այսպես են, օրինակ, սրերով պար (սրերով պարել), մուտքը տոմսերով, զեղչով առևտուր, վերադիրով վաճառք, բարձր տոկոսով փոխառություն, ժամավճարով աշխատանք, նոր եղանակով արտադրություն և այլն։ Երկրորդ դեպքում լրացումը դրվում է ոչ-բայական ծագում ունեցող գոյականի հետ՝ համապատասխան դերբայ-որոշչի փոխարեն, որի բուն լրացումն է եղել այդ գործիականը։ Այսպես, երբ ասում ենք ավանսով ռոճիկ, ապա այն կապակցության մեջ ավանսով գործիականը եղել է զեղչված տրված, տրվող, վճարված, վճարվող կամ այլ դերբայների բուն լրացումը և նրանց զեղչումով է սահմանել ռոճիկ գոյականի լրացման դերը։ Այսպես են նաև՝ իջեցված գներով ապրանքներ, թագավոր երկու ժամով և այլն։

ԳՈՅԱԿԱՆԻ ԼՐԱՑՈՒՄԸ ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ

Ներգոյական հոլովը իբրև զուտ աշխարհաբարյան ձև, համայնապարփակ չէ ժամանակակից հայերենի գոյականների հոլովման համակարգում։ Դրանով պետք է բացատրել նաև, որ շատ բայերի մոտ այն չի գործածվում։ Այստեղից էլ՝ համեմատական այն աղքատությունը, որ կա բայական ծագում ունեցող գոյականների մոտ ներգոյական հոլովաձևերի գործածության մեջ։ Նշենք, որ, ի տարբերություն բացառականի և գործիականի, ներգոյական հոլովաձևը երբեք չի կարող դառնալ ոչ-բայական ծագում ունեցող գոյականների լրացում։ Ներգոյական հոլովով դրված գոյականը հազվադեպ կարող է կատարել գոյականի լրացման դեր՝ այն բոլոր իմաստներով, որոնք հատուկ են այդ հոլովին։ Գործածական կապակցություններից կարելի է նշել՝ անցուղարձը սենյակում, աշխատանքը դպրոցում, հանդիպումը գյուղում և այլն։

«Մորը ճանապարհ դնելուց հետո Վերգինը նորից սկսեց իր անցուղարձը սենյակում» (ՍԶ, 4, 33)։ «Նրանց առանձնացումը անտառում, նրանց թևանցուկ քայլվածքը...» (ՍԶ, 4, 332)։ «Հիշեցնում էր մերթ ծղրիդների երգը գիշերային խավարի մեջ, մերթ մուրճի ծանր հարվածները մի աներևույթ դարբնոցում» (Շիրվ., 3, 141)։ «Բակից լսվում էր երիտասարդների ուրախ քրքիջը և ար-

քաղի ճարճատյունը խարույկում» *(ՌԱՌՆ, 26)։ «Հաճախ հիշում էր գիշերային* երբը ճաճճում» *(ՍՉ, 230)։*

Արտաքուստ լրացյալ-լրացում կապակցություններին նման են կրճատված դերբայական դարձվածները, որոնց բուն լրացյալն է եղել կրճատված դերբայը և որի զեղչումով ստացված կապակցությունը յուրահատուկ կառուցվածք է։ Այսպես, օրինակ, «Կանգնած է նա գլխին ամպերում» նախադասության մեջ գլխին ամպերում *ըստ էության կրճատված դերբայական դարձված է (կամ նույնիսկ ստորոգումը զեղչված նախադասություն, որը նման է ածականի նույն կարգի կապակցությանը՝* «Ոտները ամպոտ *կանգնեց առաջին»)*[1]*։*

Զեղչված ստորոգումով կապակցությունները շատ կենսունակ են ժամանակակից գրական լեզվում։

«Հոկտեմբերի ճրգեճը *իր* բիրերում՝ *նա նայում է հեռուն» (Չ, 461)։ «Եվ մայլ աչքերը՝* բիբերում արյուն, *Եվ խիտ հոնքերի գերանդին...» (Չ, 406)։ «Որոտանի եզերքին մի լույս աղավնի,* Արտում բախիծ *ու մորմոք, պահում է ճամփաս» (ՀՍՀԵՄ, 135)։*

Առանձին պետք է դիտել վերնագրային-անվանողական կապակցությունները, որոնցում լրացյալը կարող է ունենալ բայական ծագում։ Այդպես են՝ «Անակնկալ ճանճիկյում *Պետրոպավլովյան* ամրոցում» *(Չ, 433), «Հինամյա սկսնակ գրողի* եկույթը *երիտասարդ գրողների* ճավաfnում» *(ՀՍՀԵՄ, 398),* «Բաճակցությունները Լաոսում» *(լրագիր), «Հայ աստղաֆիզիկի* դասախոսությունները Չեխոսլովակիայում» *(լրագիր) և այլն։*

Իսկ մի շարք կապակցություններում լրացյալը (կամ սոսկ իբրև այդպիսին ենթադրվող գոյականը, քանի որ դրանցում լրացում-լրացյալ հարաբերությունը որոշակի չէ) բայական ծագում չունի։ Այդպես են կազմված՝ «Լաբորատորիա գործարանում» *(լրագիր),* «Երեկո *Խ. Աբովյանի անվան* դպրոցում» *(լրագիր), «Լավ* գործը *անկարող* ձեռfերում» *(լրագիր), «Ամառվա* գիշերը գյուղում» *(ՀԹ, 1, 8),* «Քրիստոնն անապատում» *(ՀԹ, 1, 56), «Կոմունարների* պատը Փարիզում» *(Չ, 366)։*

4. ԳՈՅԱԿԱՆԻ ԼՐԱՑՈՒՄԸ ԱԾԱԿԱՆՈՎ

Այս կապակցությունները, բաղադրիչների իմաստային փոխհարաբերության տեսակետից էական տարբերություն չունենալով

---

[1] *Տե՛ս «Ածականի բառակապակցությունները» գլուխը։*

գրաբարի նույնատիպ կապակցություններից, իրենց կառուցվածքով էապես տարբերվում են նրանցից։ Եթե գրաբարում ածականը մեծ մասամբ հետադաս (որոշ դեպքերում նաև նախադաս) գործածվելիս համաձայնում էր լրացյալին, ապա ժամանակակից հայերենում ածական լրացումը քերականական համաձայնությամբ չի կապակցվում իր լրացյալի հետ[1]*։*

Եթե մյուս խոսքի մասերով կազմվող բառակապակցություններում լրացումները լրացյալի հետ կապակցվելով արտահայտում են իմաստային զանազան հարաբերություններ, ապա ածականը լրացյալի հետ կապակցվում է միայն որակական (որոշիչ) հարաբերությամբ։ Շարահյուսական տեսակետից այս կապակցության բաղադրիչները նախադասության մեջ լինում են որոշիչ-որոշյալ։

Ածականի՝ գոյականի լրացում դառնալը պայմանավորված է առաջին հերթին այն բանով, թե տվյալ ածականի իմաստը որքան տարբերակներ կարող է ընդգրկել։ Հետևաբար ածական լրացումով կապակցությունները քննելիս պետք է ելնել ածականների իմաստային ընդգրկման հնարավորություններից։ Այդ ընդգրկումը կարող է մի դեպքում սահմանափակ լինել, երկրորդ դեպքում՝ ընդարձակ, ապա՝ ավելի ընդարձակ և այլն։ Այս տեսակետից բնորոշ է այն հանգամանքը, որ որակական ածականներով կազմվում են անհամեմատ շատ կապակցություններ, մինչդեռ հարաբերական և հատկացական ածականները հնարավոր է կապակցել միայն համապատասխան իմաստ ունեցող գոյականների հետ։ Որակական ածականներն էլ իրենց հերթին ունեն ընդգրկման այս կամ այն սահմանը, որը պայմանավորված է նրանց իմաստով։ Այս կապակցությունները կազմվում են առաջին հերթին բաղադրիչների իմաստային զուգորդումների հնարավորության դեպքում, այսինքն՝ գոյականի հետ կարող են կապակցվել այնպիսի ածականներ, որոնց բառային իմաստը բնորոշ է տվյալ առարկային։ Այսպես, ծավալ ենթադրող գոյական անունների հետ կարող են կապակցվել միայն ծավալային հատկանիշ արտահայտող ածականներ։ Հնարավոր է ասել խոր գետ,— ծով,— ճահիճ,— փոս,— ձոր *և այլն*, լայն տերև,— դաշտ,— ճակատ,— տախտակ,— կամուրջ, ընդարձակ դահլիճ, երկար ճանապարհ,— փայտ,— բել, բարակ փայտ,— ճյուղ, խոշոր հատիկ,— կոռ,— ֆառ *և այլն։*

---

[1] *Այստեղ, անշուշտ, նկատի չենք առնում ամբողջական այն կապակցությունները, որոնք գրաբարից փոխառնվելով, այժմ գործածական են իբրև կայուն կապակցություն* (մեծավ մասամբ, մեծավ ուրախությամբ)։

«Այստեղից թագուհին անցավ մի ընդարձակ զարդարուն դահլիճ» (Մուր., 4, 18)։ «Կրիան մի քառակուսի և լայնադիր տախտակամած էր» (Մուր., 4, 281)։ «Դաշտը անծայր ու անսահման, լայնատարած՝ հրակարմիր տարածվել էր նրանց առջև» (Զ, 249)։ «Բուխարու մեջ կանկարայի վրա դրած կաթսայի տակ մի քանի բարակ փայտ էր ծխում» (ՆԴ, 1, 26)։ «Ծալքից հանեց բավական մեծ ու հաստ մի վերմակ և ծածկեց մարդուն» (ՆԴ, 1, 26)։ «Ու պարից հետո լեն հրապարակ Բաց արին մեջտեղն արձակ գլխատան» (ՀԹ, 2, 56)։ «Գետին են զարկում ձեռքերը հաստլիկ» (ՀԹ, 2, 56)։

Եվ ընդհակառակը, հնարավոր չէ ասել խոր երես,—կամուրջ,— սեղան,— թել կամ լայն մազ,— առավոտ,— ամիս,— ասեղ և այլն, որովհետև այդ գոյականների համար հիշյալ ածականները բնորոշ հատկանիշ չեն արտահայտում։

Մյուս կողմից, ասենք, կշիռ ենթադրող գոյականների հետ կարող են կապակցվել համապատասխան հատկանիշ արտահայտող ածականներ։ Օրինակ, կարելի է ասել ծանր քար,— փայտ,— բեռ և այլն, թեթև մետաղ,— ծածկ,— մարմին և այլն։

«Ունեին թեթև վահաններ և ծանր, քառակուսի ասպարներ» (Մուր., 4, 173), «Ծանր չոմբախը, գլուխը մեխած, Օձորքում դրած պիտի մնար» (ՀԹ, 2, 65)։

Սակայն հնարավոր չէ ասել ծանր գազար,— ծայր,— եզր,— ափ,— փոս,— հոր, թեթև թվանշան,— ջրանցք,— ճակատ,—մեջք և այլն, քանի որ տվյալ գոյականների համար նշված հատկանիշները բնորոշ չեն։

Սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ածականները բացի համապատասխան իմաստ ունեցող գոյականներից, կարող են կապակցվել նաև այլ գոյականների հետ՝ փոխաբերական գործածությամբ։ Այստեղ առկա է գեղարվեստական խոսքին բնորոշ փոխաբերությունը։ Փոխաբերաբար հնարավոր է դառնում ասել տխուր դաշտ,— առավոտ, նենգ ու դավադիր ոգի, շքեղ գարուն, ուրախ գարուն, զվարթ լույս, գորշ օր, անթառամ սեր, քնքուշ երազ, գողտրիկ երազ, չոր ու ցամաք պատասխան, սև ու մութ օրեր, կոպիտ խոսք, ծանր մտածմունք և այլն։

«Ու ողջ միասին մի խորունկ թախիծ, Մի մութ զարզանդ են գիշերին տալիս» (ՀԹ, 2, 35)։ «Եվ վրդովում են իր միտքը թաքուն Դավաճան գործի ամոթը խորին Եվ արքայական փառքն ու մեծությունը» (ՀԹ, 2, 139)։ «Իմ սուր արթուն ականջում Մի խոր ձեն է միշտ հնչում, Անհուն, անքուն կարոտով Իրեն մոտ է ինձ կան-

չում» (ՀԲ, 1, 151)։ *«Ով սեր, բնության դու խոշտանգիչ կամք,* նենգ ու դավադիր ոգի *աննահանջ» (Իս., 2, 53)։*

Ինչպես հայտնի է, գեղարվեստական խոսքում այս ածականները կոչվում են մակդիր (իհարկե միայն սրանք չեն մակդիր)։

Կան բազմաթիվ ածականներ, որոնք կարող են կապակցվել շատ մեծ թվով գոյականների հետ՝ շնորհիվ իմաստային ընդհանրության, այն հատկության, որ ընդգրկում են շատ գոյականների անուններին բնորոշ հատկանիշ։ Այսպես, գույն ցույց տվող ածականները ի վիճակի են կապակցվելու մեծ թվով գոյականների հետ։ Օրինակ, կարելի է ասել սպիտակ ծաղիկ,— ձյուն,— հող, — ֆար,— փայտ,— պատ,— բուրդ,— տուն,— հաց,— կտոր, — հագուստ,— կոշիկ,— մաշկ,— երես *և այլն,* կապույտ ծաղիկ,— թուղթ,— բանաֆ,— փոշի,— երկինֆ,— ջուր,— ծով,— օվկիան *և այլն։*

*«*Կարմիր ձիու *մեջքին զարկեց» (ՀԲ, 2, 124)։ «*Սև ձին *քաշեց Ձենով Օհան» (ՀԲ, 2, 124)։ «Մերթ զայրացկոտ ծառս է լինում Մինչև* երկինֆ կապուտակ*» (ՀԲ, 1, 100)։ «Դու երազել ես ատղը հեռավոր, Հրեշտակաթև* շուշանն սպիտակ*» (Իս., 2, 52)։ «*Սև ջրեր *հայած կնատի տանը» (ՀԲ, 2, 66)։*

Այս ածականները կարող են կապակցվել գոյականների հետ նաև փոխաբերական կիրառության դեպքում։ Օրինակ՝ «Ես տեսա միայն սև ու մութ օրեր*» (Ծ. 178)։*

Կան նաև ավելի շատ գոյականներ ընդգրկող ածականներ։ Այսպես են, օրինակ, հին, նոր, գեղեցիկ, տգեղ, լավ, վատ, դուրեկան, գրավիչ, հիանալի *և այլն։ Սրանցով կարելի է կազմել շատ մեծ թվով կապակցություններ։ Կարելի է նշել* հին գինի,— տուն,— հագուստ,— ժամացույց,— ընկեր,— բարեկամ,— հարևան,— ձյուն, — ֆար,— շենֆ,— մթերֆ,— երկիր,— ժողովուրդ,— տարիներ, — դարեր *և այլն,* գեղեցիկ ծաղիկ,— վարդ,— տուն,— ֆաղաֆ, — մարդ,— աղջիկ,— տղա,— խաղ,— դեմֆ,— երես,— մարմին, — գլուխ,— ոտֆեր,— հագուստ,— կոշիկ,— դաշտ,— լեռներ,— երկիր,— անտառ,— բույս *և այլն,* լավ բան,— գործ,— մարդ,— կին, — հարևան,— ընկեր,— բարեկամ,— երեխա,— հող,— երկիր *և այլն։*

Մինչդեռ հարաբերական ածականները կարող են կապակցվել միայն սահմանափակ թվով և այն էլ տվյալ հատկանիշ ենթադրող գոյականների հետ։ Այսպես, կարելի է ասել ֆարե շենֆ, — դուռ,— նստարան,— ցանկապատ,— պարիսպ,— արձան,— տախտակ *և այլն, սակայն չի կարելի ասել* ֆարե մազ,— աչֆ,

— ոտք, — օդ, — ջուր, — հաց, — գինի, — պանիր և այլն[1]: Եթե կարելի է ասել փայտե գդալ, — աման, — կամուրջ, — ծածկ, — սեղան, — աթոռ, — տուն, — խրճիթ, ոտք, — ձեռք, ապա հնարավոր չեն փայտե պտուղ, — ջուր, — հող, — հաց, — պանիր, — լույս, — կյանք, — մահ և այլն:

Հարաբերական ածականները ևս կարող են փոխաբերաբար գործածվել: Այդ դեպքում նրանք կապակցվում են այլ հատկանիշ ենթադրող գոյականների հետ:

«Թունավոր նետից հառաչացած վերքը օրըստօրե քայքայում էր նրա երկաթե առողջությունը» (Մուր., 3, 385): «Շառավիղները քրքջում էին Պայծառ ծիծաղով ադամանդեղեն, Բույր ու համբույր էր խնկարկվում չորս դին խալիֆաների քյոշքից լուսեղեն» (Իս., 2, 46): «Ո՜հ, կնոջ մարմին, պաղշոտ, օձեղեն, գինական անոթ ոճիրների չար, Դու որ մսեղեն դառն հաճույքով, Արևը հոգու դարձնում ես խավար» (Իս., 2, 52): «Դու երգ իմ լուսե» (ԳՄՀ, 29):

Իրենց իմաստի թելադրանքով սահմանափակ թվով կապակցություններ կարող են կազմել նաև հատկացական ածականները: Այսպես, ասում ենք ծովային քամի, — խոտ, — բույս, — նավ, — թռչուն, — կենդանի, — գայլ, — հոսանք և այլն:

Հատկացական ածականները կարող են փոխաբերաբար գործածվելով կապակցվել նաև այլ հատկանիշ ենթադրող գոյականների հետ:

«Իրենց հոգու անապատից խուսափում են խուռներամ Դեպ Արևելքն աստվածային՝ հայրենիքը իմ հոգու» (ՀԹ, 1, 156): «Աստեղային երանգների աշխարհքներում լուսակաթ, Երբեմն, ասես, զգում եմ ես, թե կհասնեմ նրա մոտ» (ՀԹ, 1, 157): «Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին» (ՀԹ, 1, 158):

Սակայն հնարավոր չէ կազմել ծովային դեմք, — ձեռք, — գլուխ, — գազար, — փոշի, — միտք, — ուղեղ, — խիղճ, — զգացմունք և այլն:

* * *

Գոյականը շատ դեպքերում ստանում է և, ու շաղկապներով կապվող մոտավոր կամ երբեմն նույն իմաստն ունեցող ածականներով արտահայտված լրացում: Այդ դեպքում երկու ածականը փոխադարձաբար լրացնում են իրար և գոյականի հատկանիշը

[1] Խոսքը այստեղ և հետագայում փոխաբերական գործածության մասին չէ:

դրսևորում ավելի ցայտուն։ Սովորաբար բաղհյուսական շաղկապներով միանում են որակական ածականները։

«Նրա սահմանափակ և դժվարաշարժ ուղեղը միայն անորոշ ու մութ հասկացություններ էր դուրս բերում» (ՆԴ, 3, 286)։ «Բայց խուլ ու խավար օղում էս գիշեր Մենակ է Սաքոն ու չունի ընկեր» (ՀԹ, 2, 25)։ «Ուրախ ու անհոգ գարունն էլ ահա Բազմել է կանաչ սարերի վրա» (ՀԹ, 2, 85)։ «Իմ անտեր ու որբ աշխարհի վրա Ոտի կը կանգնեն հազար քաջ ու դև» (ՀԹ, 2, 97)։ «Որ լիքն ու առատ բաժակներ քամեն» (ՀԹ, 2, 140)։

Բաղհյուսական շաղկապներով կարող են կապակցվել ոչ միայն համանիշ, այլև տարբեր իմաստ ունեցող ածականներ՝ դառնալով գոյականի որոշիչ։

«Շրթունքները կրծում էր փղոսկրի պես՝ պլպլող պստիկ ու սպիտակ ատամներով» (ՆԴ, 3, 36)։ «Իսկույն ևեթ առաջ է գալի մի ուրիշ պատկեր, մի շատ ամոթալի ու ցավալի պատկեր» (ՀԹ, 1, 113)։ «Կրիան մի քառակուսի և լայնադիր տախտակամած էր» (Մուր., 4, 281)։

Պատահում են դեպքեր, երբ բաղհյուսական շաղկապներով կապակցվում են հականիշ ածականներ՝ գոյականի լրացման դերում։ Օրինակներ՝ «Ես շատ սիրեցի իմ ընկերներին Եվ բոլոր մարդկանց մոտիկ ու հեռուն» (Իս., 2, 48)։ «Մանիր թելեր հաստ ու բարակ» (ԴԱ, 8)։

Պետք է նշել, որ երբեմն ածականը բաղհյուսական շաղկապներով կապակցվելով նաև այլ խոսքի մասերի հետ, կարող է դառնալ գոյականի լրացում։

«Նա իր մանկությունն ու օրիորդական տարիներն անց էր կացրել բացառապես ընտանեկան շրջանում, թեև խորթ, բայց բարի ու սիրող մոր հսկողության տակ» (ՆԴ, 2, 283)։ «Անձնատուր եղած ծանր ու ճնշող մտածմունքներին, գրեթե ամբողջ օրը նստած էր մնում լուսամուտի առաջ» (ՆԴ, 3, 285—286)։ «Ձմեռային օրվա սառած ու անփայլ վերջալույսը, արագորեն խավարելով, հանգչում էր դաժան հանդարտությամբ» (ՆԴ, 3, 578)։ «Մահմեդի մատների տակ հառաչում էր խուլ ու ճնշված նվագով» (ԱՐՊ, 36)։ «Նորից շնչում, ապրում է այս լույս ու հրապուրիչ աշխարհում» (ՎԱՍՍ, 480)։

Այս կարգի բաղհյուսական կապակցությունների մի մասը դարձվածքի են վերածվել, ինչպես խեղճ ու կրակ, թանկ ու կրակ և այլն։

Երկու ածականները բաղհյուսական կապակցությամբ կա-

բող են գոյականի լրացում դառնալ նաև առանց շաղկապի։ Գրության ժամանակ այդ ածականների միջև գծիկ է դրվում, որով նրանք մոտենում են հարադրական բարդություններին։ Այսպիսի կապակցություններ շատ է գործածում Նար-Դոսը։

«Գարնան վերջին օրերից մեկում մեռավ Թորոսենց հեռու-մոտիկ ազգականներից մեկի թոքախտավոր աղան» (ՆԴ, 1, 5)։ «Նա ակամա մի տեսակ հարգական և անհամբեր-հետաքրքիր հայացքով նայում էր նրան» (ՆԴ, 2, 304)։ «Նրա սանձարձակ-ծաղրական լեզուն նողկանքի պես մի բան է ազդում իրեն» (ՆԴ, 3, 24)։ «Վահանը նայեց քրոջ աղերսական-սարսափահար աչքերին» (ՆԴ, 3, 83)։ «Նոսից եկողների համար բաց-պատրաստ ճամփա է լինում» (ՀԹ, 1, 395)։ «Կարմիր-կանաչ իմ օրերս Սիրո սուգով սևացան» (Իս., 1, 89)։ «Սև-մութ ամպեր ճակտիդ դիզվան» (Իս., 1, 101)։

Պատահում են դեպքեր, երբ ածականն ու դերբայը ևս բաղհյուսական կապակցություն են կազմում առանց շաղկապի։

«Նասիբյանը սկզբում կարծես թե շփոթվեց ոչ այնքան այդ հարցից, որքան այն տարօրինակ փայլից... և վերին աստիճանի լարված-թշնամական այն տոնից» (ՆԴ, 3, 36)։ «Կարծես այդ տողերը զարհուրելի օձեր լինեին, որոնք շարժվում էին իրենց լպրծուն մարմնի ահաբեկող-ճկուն գալարումներով» (ՆԴ, 3, 513—514)։ «Այդ բանում նրան քաջալերում էր պանի Զդանևիչի մտերմական-հովանավորող վերաբերմունքը» (ՆԴ, 3, 571)։ «Սաթենիկի ձայնի հուսահատ-գազազած հնչյունը վերջնականապես սթափեցրել էր Երեմիային» (ԶԴՍՎ, 89)։

* * *

Ածական լրացումով գոյականի կապակցությունների ուսումնասիրությունը երևան է հանում հետաքրքրական մի երևույթ։ Մի շարք ածականներ իրենց իմաստի թելադրանքով կարող են դառնալ միայն հոգնակի գոյականի լրացում։ Այդպիսիք են մեծ մասամբ կրկնավոր ածականները, որոնք կազմված են կա՛մ ածականից (նորանոր, խոլ-խոլ, մեծ-մեծ, պաղ-պաղ, հին-հին և այլն), կա՛մ այլ խոսքի մասերից (փունջ-փունջ, խումբ-խումբ, տեսակ-տեսակ, գույն-գույն և այլն)։ Այսպես, կարելի է ասել՝ բազում գործեր,— տներ,— մանուկներ, զանազան շենքեր,— աշ-

խամաճիկներ, մանր-մունր իրեր,— գործիքներ, պես-պես ծաղիկներ,— տեսարաններ, գույն-գույն վարդեր և այլն[1]։

«Խոլ-խոլ հսկաներ հնոց աշխարհի, Փախցրին բերին անտառիկ Լոռի» (ՀԹ, 2, 45)։ «Ոսկե կապեցիր թել-թել մազերով» (ՀԹ, 2, 46)։ «Փունջ-փունջ աղջիկներ սարերը եկան» (ՀԹ, 2, 51)։ «Լսել եմ հաճախ գանգատներ պես-պես» (ՀԹ, 2, 99)։ «Ես նայում էի պղտոր ջրերին, Պես-պես ցավերով տանջված սիրտս լի» (ՀՀ, 127)։ «Քաղաքում ձեռք էր բերել մոտ քսան տեղ զանազան շենքեր» (ՆԴ, 3, 241)։ «Մտել էի մի քանի մանր-մունր բաներ գնելու» (ՆԴ, 3, 539)։ «Պաղ-պաղ ջրեր, պապակ շուրթս չի բացվի» (Իս., 1, 360)։ «Խոսում են Լոռու հին-հին քաջերից» (ՀԹ, 2, 44)։ «Կբարձրանան բազում մանուկներ սևաչ» (ԳՍԲ, 160)։

Հետաքրքրական է այն հանգամանքը, որ երբեմն գոյականի լրացումն արտահայտվում է երկու ածականների անբաժանելի կապակցությամբ։ Այդ այն դեպքում է, երբ գոյականի անմիջական լրացում ածականը իր գոյականական հիմքի (արմատի) պահանջով իր հետ ունենում է ածական լրացում։ Այդպիսի կապակցություններից կարելի է նշել՝ սև թավիշե գլխարկ, կանաչ թավշե դրոշակ, սպիտակ երիզավոր դրոշակ, երկար կոթավոր չիբուխ, սև մետաքսե փողկապ, հում կաթնակեր մարդ, կարմիր կտուցավոր թռչուն և այլն։

«Դատարկ տուփը ձեռքին նա վազեց երեխաների մոտ, Նրանց ցույց տալու սպիտակ թիթեղյա տուփը» (Բակ., 194)։ «Ծովափին սև թավիշե գլխարկով կինը հովանոցի ծայրով ավազի վրա նշաններ էր անում և ավերում» (Բակ., 194)։ «Նրա գլխին տնկված էր կանաչ թավշե դրոշակ» (ՍԽՄԽ, 607)։ «Սև թաղիքե անհամար վրանները, դրոշակները, ձիերի երամակները, ամենուր վխտացող զորագնդերը ծանր տպավորություն թողեցին հայ դեսպանների վրա» (ՍԽՄԽ, 606)։ «Վանյուշը, գիմնազիստի սպիտակ երիզավոր գլխարկը դեպի ծոծրակը ետ գցած, նստած էր ճաշասեղանի մոտ» (ՆԴ, 1, 264)։ «Ծանր տնքալով թեք ընկավ ծերը, Երկար կոթավոր չիբուխը լցրեց» (ՀԹ, 2, 36)։ «Հազար-հազար մարդ թուխ միրուքավոր» (ՀԹ, 2, 114)։

Ժամանակակից հայերենում օրինաչափ է այն երևույթը, որ ածականը լրացում է դառնում գոյականաբար գործածված բառերի համար։ Ընդ որում գոյականաբար ամենից շատ գործածվում են հենց ածականները։ Ուստի սպասելի է, որ ավելի շատ կապակ-

[1] Տե՛ս նաև Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, Ա, 1958, էջ 240—242։

ցություններ կազմվեն այդպիսի գոյականներով և ածականներով։ Նման կապակցություններից կարելի է նշել՝ հին ծանոթը, խեղճ որբը, նախկին հավատարիմը, մոլեռանդ հավատացյալը, փոքրիկ հիմարը, գեղեցիկ մատնիչը և այլն։

«Տանտերը Համբոյի հին ծանոթն էր» (ՀԹ, 1, 313)։ «Բայց վայ խեղճ որբին աշխարքի վրա, Թեկուզ Առյուծի կորյուն լինի նա» (ՀԹ, 2, 100)։ «Բարի օր, պապի, ու խոժոռադեմ Ծերը ետ նայեց ձեռքը ճակատին» (ՀԹ, 2, 32)։ «Պետք է սպանեմ էս փոքրիկ ծուռին» (ՀԹ, 2, 99)։ «Անցավ անտես ու աննման էն սիրունը աշխարհից» (ՀԹ, 2, 144)։

Սակայն հազվադեպ որոշ հեղինակներ կազմում են այնպիսի կապակցություններ, որոնք անիմաստ են։

«Կարծես ինչ-որ դուռ բացվեց, և տաք զոլը փչեց» (ՍԶ, 4, 197)։ «Բայց նորա առջև ոսոխ թշնամին Յուր սրով փորեց կյանքի գերեզման» (Ծ, 117)։

Մի շարք դեպքերում ածականը կարող է դառնալ գոյականաբար գործածված, սակայն անորոշ առումով դրված ածականի լրացում։

«Աշխարքի երեսին մարդիցն էլ վերը անիրավ շնչավոր չկա» (ՀԹ, 1, 358)։ «Ներկայացնում էր բնության մի գեղեցիկ հրաշակերտ» (Մուր., 3, 441)։ «Քանդում էին նրանք, երգեր էին երգում, Հանքերի խավարում անթիվ ծեր ու ջահել» (ԳՍԲ, 159)։ «Շատ գործնական և մարտական երիտասարդ դուրս եկավ պիոներական թերթի խմբագիրը» (ՎԱՍԱ, 181)։ «Կդառնայի շուտով ես մեծ, Վեհ բարերար Ազգի համար» (ՀԹ, 2, 86)։ «Կամ անարգված մի նոխ հիմար, Որ ապրում է լոկ իր համար» (ՀԹ, 2, 86)։ «Այ, դու, կեղծավոր, սիրուն անպիտան, Ես լավ եմ տեսնում այժմ ամեն բան» (ՀԹ, 2, 95)։ «Ի՞նչ ես ուրիշի որբին սուտ բերել, Նստեցրել գլխիս պարապ հացակեր» (ՀԹ, 2, 100)։ «Բեզոյան Լաչին, ունեոր միջակ, Բատրակ է պահել, կիսով ցանք արել» (ՆԶՄ, 302)։

Կան նաև այնպիսի կապակցություններ, որտեղ հայտնի չէ, թե երկու ածականներից որն է գոյականաբար գործածված։

«Հոգի կուտամ, հոգի տուր ինձ, Իմ նազելի աչագեղ» (Իս., 1, 44)։ «Իմ աղավնյակ, իմ սիրունիկ թևասլաց, Ես քեզ Տոսպա ոսկեցորեն կուտով եմ կերակրել» (ՆԶ, 5, 44)։

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ժամանակակից հայերենում որակական ածականի հարաբերական գերադրա-

կան աստիճանը դառնում է գերազանցապես որոշյալ գոյականի լրացում[1]։

«**Ամենագեղեցիկ հայացքը**, որ ես տեսել եմ իմ կյանքում» (ՀԹ, 1, 363)։ «...Ձեռնասուն կենդանիների մեջ մարդու **ամենահին ընկերն** է» (ՀԹ, 1, 416)։ «Հարկավոր է խնդիր ուղարկել **ամենաբարձր տեղը**՝ հենց իրեն՝ ռուսաց թագավորին» (Բակ., 135)։ «Դու մեր շրջանի **ամենաազնիվ երիտասարդն** ես և **ամենահայտնի բրիգադավարը**» (ՆԶ, 5, 121)։

Սակայն երբեմն պատահում է նաև, որ հարաբերական գերադրականը դառնում է անորոշ առումով գոյականի լրացում (խոսքը վերաբերում է ոչ կապի խնդիր դարձող գոյականներին)։

«Տեսե՞լ ես իմ մեջ մի **ամենափոքր չարություն** դեպի իմ ազգակիցը» (Մուր., 4, 170)։ «Իսկ սիրո զգացումն այն առանձնահատկությունն ունի, որ մարդուն **ամենանեղ եսասեր** է դարձնում» (ՆԴ, 3, 475)։ «Մենք հեռացանք մի **ամենախուլ անկյուն**» (Մուր., 1, 181)։

ԱԾԱԿԱՆ-ԳՈՅԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երբ մեկից ավելի ածականները տարբեր տեսակի են, ապա արձակ ստեղծագործություններում դրանց սովորական շարադասության կարգ կա. գոյականի վրա անմիջականորեն դրվում են որակական ածականները, իսկ հարաբերական և հատկացական ածականները նախորդում են դրանց։

«Նրանք իմ կյանքը երազ դարձուցին— **Կուսական մաքուր աչերը** անուշ» (Իս., 1, 200)։ «Դիմացը՝ փողոցում **էլեկտրական խոշոր լամպն** է» (Բակ., 177)։ «**Աշնանային գեղեցիկ առավոտ** էր» (Մուր., 4, 209)։ «Ծիրանենիների տակ զրույցը դառնում էր **առօրյա դժվար աշխատանքի** և **պայքարի** շուրջը» (Բակ., 175)։ «Բացվեց **ձմեռային ցրտասառույց առավոտը**» (ՍԽՄԽ, 50)։

Սակայն այս կարգն անխախտ չէ, և հաճախ հարաբերական և հատկացական ածականներն են դրվում որակականից առաջ։ Դա նկատելի է մանավանդ չափածո ստեղծագործություններում։

«**Գիժ, լեռնային** մի **վտակ** խոխոջում է նրա տակ» (ՀԹ, 2, 8)։ «Գնա մենավոր վայրերը թափուր. **ազատ, կույս և սուրբ զմրուխտյա հեռուն**» (Իս., 2, 47)։ «**Պարզ, աշնանային գիշեր** էր» (ՀԹ, 1, 261)։

[1] Այս մասին տես նաև Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի որոշիչ հոդը (ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1960, № 1)։

Ածական լրացումը նախադաս է լինում։ Սա արդի հայերենի շարադասության օրինաչափություններից մեկն է։

«Մի խաղաղ առավոտ *էր, մի* տխուր առավոտ» *(ՀԹ, 1, 312)։* «*Նրա* քարեղեն սրտի *մեջ ծածկված էին* բազմաթիվ գաղտնարաններ» *(Մուր., 4, 447)։ «Երգի շինությունները կպատսպարեին իրենց* աշնանային գիշերվա *ցրտից» (Մուր., 4, 179)։ «Իմ* սո՜ւր, արքուն ականջում *Մի* խոր ձեն *է միշտ հնչում,* Անհուն, անհուն կարոտով *Իրեն մոտ է ինձ կանչում» (ՀԹ, 1, 151)։*

Չափածո ստեղծագործություններում հաճախ ածական որոշիչը կարող է դրվել գոյական որոշյալից հետո։ Ածականի նորադաս գործածությունը վեհություն, հանդիսավորություն է տալիս խոսքին։

«Առնում եմ նորից սերն ու կռիվը, իր համբույրները շողոմ *ու* դժնյա» *(Իս., 2, 53)։ «Քաղաքներից ու գյուղերից,* ստեպներից հեռու *ու* մոտ՝ *Եկել էին նրանք նորից՝ հուսավառված ու կրակոտ» (Չ, 250)։*

Արձակում ևս, որոշ հեղինակների մոտ (առանձնապես Բակունցի երկերում), հաճախ է ածականը նորադաս գործածվում։

«Մորուքը սպիտակափառ *փռվել էր կրծքին» (ՆԴ, 1, 4)։ «Առավոտից մինչև կեսօր՝* արևը դուրեկան *խփում էր պատին» (ՍԶ, 4, 191)։ «Այդ արահետի* կալերն *են՝* սանդուղքաձև» *(Բակ., 143)։ «Բացվում են վայրի* վարդերը՝ դեղին, սպիտակ» *(Բակ., 77)։* «Մոզիները գիժ *և* արջառները խաժ *ջրի տանելիս թռչկոտում էին ձյունի վրա» (Բակ., 31)։ «Նախիրը փնչոցով արածում էր* խոտը համեղ» *(Բակ., 32)։*

Սակայն կան բազմաթիվ դեպքեր, երբ գոյականից հետո դրված ածականը կարող է դիտվել կա՛մ իբրև նորադաս որոշիչ, կա՛մ իրենից հետո դրված բայի լրացում։

«Ու աղերքը տխուր ու լուռ *Վերադարձան դեպի տուն» (ՀԹ, 2, 67)։ «Ու չի դադարում երգի հետ վարար Կախեթի գինին* խելագար *հոսել» (ՀԹ, 2, 140)։ «Մառանները* փոշեթաթախ *ընկած էին մութ պատի տակ» (ՆԴ, 1, 4)։ «Գարնան արևը* մեղմ *տաքացնում էր գետինը» (Բակ., 31)։ «Եվ խայտալով իմ առաջին Վտակն* անուշ *խոխոջե» (ՀՀ, 29)։ «Ալիքներն* ուրախ *բռնել են շուրջպար» (ԳՍԲ, 123)։*

Գոյականից հետո դրված ածականը կարող է պարագա դիտվել նաև այն դեպքում, երբ ածականին բայ չի հաջորդում։ Սա բնորոշ է չափածո խոսքին։

«Տվիր սիրտդ աներկմիտ *Նոր ջրերի շառաչին» (ԳՄՀ, 394)։*

«Ու տրտում էր դու Որոտանը անեղաձայն» (ՎՆԻԱ, 178)։ «Արտույտներն ուրախ մեր սերն են երգում» (ԳՍԲ, 27)։ «Ծփում է սիրտս անհուն» (ԳՍԲ, 74)։ «Նայեց նրանց առավոտը խաղաղ ու լուռ» (ԳՍԲ, 205)։ «Փախչում է ձմեռն անզոր ու անզեն» (Ծ, 203)։

Անհրաժեշտ է նշել, որ գոյականից առաջ դրված ածականն էլ երբեմն կարող է դիտվել նախորդ բայի լրացում։ Սա ևս հանդիպում է չափածո խոսքում։

«Պարում էին ճկուն ճյուղ ու տերև Իրիկնային քամու նվագի տակ» (ՆԶՄ, 216)։ «Ջկաքավե գալարաբև նախրուհին» (ՆԶՄ, 452)։ «Բացվել է շքեղ գարնան առավոտ» (ԳՍԲ, 111)։ «Թիկնել է լուռ Նաչիբեան ասեղնակար իր բարձին» (ԳՍԲ, 264)։ «Թնդում է զվարթ աղմուկը բինի» (ՀԹ, 2, 45)։ «Երգեց վսեմ շարական» (ՀԹ, 2, 67)։

Սակայն ետադաս ածականը կարող է դիտվել նաև իբրև հաջորդ գոյականի նախադաս որոշիչ։ Դա երկիմաստություն է առաջացնում և կապակցությունների կամայական մեկնաբանության տեղիք տալիս։

«Էս դարում Մըսըր անհաղթ ու հզոր Մսրա-Մելիքն էր նստած թագավոր» (ՀԹ, 2, 98)։ «Ամպերը ճերմակ երամով անցան» (ՎՏ, 1, 189)։ «Պարզեցի կյանքս պարզ ու խնդագին Հավիտենությա՜ն, Հավիտենությա՜ն» (ՎՏ, 1, 138)։

Բազմաթիվ դեպքերում գոյականի մեկից ավելի ածական լրացումները կարող են դառնալ և՛ նախադաս, և՛ ետադաս որոշիչ։ Այս գործածությունը ևս հատուկ է չափածո խոսքին, թեև քիչ չի հանդիպում նաև արձակում։

«Գնա մենավոր վայրերը թափուր» (Իս., 2)։ «Կը գգվեմ վայրի տատասկը դժնի» (Իս., 2, 54)։ «Նրանց ոտքերում՝ գազազած գայլ՝ Գալարվում է գիժ Դև-Բեդը մոլի» (ՀԹ, 2, 13)։ «Բայց դու էլ խելոք մի մարդ ես գիտուն» (ՀԹ, 2, 34)։ «Կանչում էին հրաշալի հնչյուններով դյութական» (ՀԹ, 2, 44)։ «Սպասում է էնտեղ կինը, Ջանել կինը սևաչյա» (ՀԹ, 2, 136)։ «Պարտվեց մահաշունչ ոսոխը դաժան» (Իս., 1, 380)։

Պետք է առանձին կանգ առնել նաև այն կապակցությունների վրա, որոնցում գոյականի ածականի որոշիչն անջատվում է նրանից նախադասության այլ անդամներով։ Այստեղ տարբերակում ենք երկու դեպք։ Առաջին դեպքում գոյականի ածական լրացումն անջատվում է նրանից նույն գոյականի այլ լրացումներով։

«Դա մի տարիքավոր, բարձրահասակ, լուրջ ու պատկառելի

դեմքով և ալեխառն մազերով տղամարդ էր» (Մուր., 4, 20)։ «Երգենք աշխարհաշեն նրա հզոր ոգին» (ԳՍԲ, 203)։ «Ջինջ հնչյունների կարկաչուն այդ ջուն հեգնում է ներկան, ինձ չի ճանաչում» (ԳՄՀ, 17)։ «Ցնդում է ստվերը քո լուսե երկարե այն գծերի վրա» (ԳՄՀ, 185)։

Երկրորդ դեպքում գոյականի ածական լրացումն անջատվում է նրանից հիմնականում ստորոգյալով կամ օժանդակ բայով։ Այստեղ էլ պետք է տարբերենք երկու ենթատեսակ։ Նախ, գոյականը տրամաբանական շեշտ ստանալով անմիջապես դրվում է ստորոգյալից կամ օժանդակ բայից առաջ, ապա հետևում են այդ գոյականի ածական լրացումը կամ լրացումները։

«Մեր առջև ձորն էր թշշում խավարչտին» (ՀԹ, 2, 42)։ «Եկեք չահել սիրահարի Սերը ողբանք վաղամեռ» (ՀԹ, 2, 43)։ «Իմ զավակներն են քաջ՝ փորել այգին, Մեր առվակներն են պաղ՝ ջրել այգին» (ՆԶՄ, 126)։ «Երկրում մահն էր արշավում Դեղնատենդ ու ճաղքական» (ԳՄՀ, 517)։ «Օրն էր մթնում գորշ, անորոշ» (ԳՄՀ, 257)։

Այստեղ դեր է խաղում ոչ միայն այն հանգամանքը, որ գոյականը անջատվել է իր ածական լրացումից տրամաբանական շեշտ ստանալու պատճառով, այլև այն, որ դա կատարվում է բանաստեղծական չափի ու հանգավորման նպատակով։ Ավելի ճիշտ, այս վերջին նպատակն է թելադրում գոյականն անջատել իր լրացումից (կամ լրացումներից)։ Սա երևում է նաև այն դեպքերում, երբ գոյականն իր ածական լրացումից անջատվում է ոչ տրամաբանական շեշտ ստանալու պատճառով։ Օրինակներ՝ «Ուրախ սրտով դուք ձեր սերը Վայելեցեք անքառամ» (ՀԹ, 2, 248)։ «Քառասուն կույս աղջիկ բերեք արմաղան» (ՀԹ, 2, 208)։ «Քո սուրբ քրտինքով Բազում-բյուրավոր Ապրում են մարդիկ» (Ծ, 160)։

Սակայն կան սակավաթիվ դեպքեր, երբ գոյականի լրացումը նրանից այլ անդամներով անջատելը հասցնում է անիմաստության։ Օրինակ՝ «Թափվիր, ճերմակ, թափվիր, ձյուն» (ԳՄՀ, 87)։

Երբեմն էլ չափածո խոսքում հայտնի չէ, թե որն է ածականի լրացյալը։

«Մենք քանդեցինք, կործանեցինք աշխարհը հին իր հիմքից, Կամքը մարդու ստեղծագործ կուտակեցինք մենք ի մի» (Չ, 179)։ «Բայց նա խոսեց, դրեց արնաթաթախ Իր ոհմակի մատյանը պարզելի» (ՆԶՄ, 128)։ «Կամ պետք է լինի Գերմանիա միակ գերիշխան և տեր» (ՆԶՄ, 511)։

Այստեղ հայտնի չէ, թե արնաքարախ, միակ, ստեղծագործ ածականները որ գոյականների լրացումն են. ռնմա՞կը թե՞ մատյանը, Գերմանիա՞, գերիշխան թե՞ տեր, կա՞մքը թե՞ մարդու։

Անհրաժեշտ է նշել, նաև այն դեպքերը, երբ իրար մոտ դրված երկու ածականներից մեկը պարագա է, մյուսը՝ որոշիչ։ Իհարկե, այսպիսի դեպքերը խիստ սակավաթիվ են։

«Իմ նազելուս շունչը քնքուշ ինձ շոյեց, Կարոտավառ հպարտ կրծքին փարվեցի» (Իս., 1, 211)։

Այստեղ կարոտավառ պարագա է, իսկ հպարտ՝ որոշիչ։

«Այն ժամանակից է պահել և պատերազմի տարիներում խալին ու սանդուղները լի պինդ թաքցրել մառանի մի անկյունում» (Բակ., 72) նախադասության մեջ լի որոշիչ է, իսկ պինդ՝ պարագա։ «Թողնի անպաշտպան ամայի դաշտում Այս կոլխոզական բերքը վիթխարի» (ՆԶՄ, 391) նախադասության մեջ անպաշտպան պարագա է, իսկ ամայի՝ որոշիչ։ «Ու պատվիրեց խոժոռ արևելյան մի սուրճ (ՆԶՄ, 398) նախադասության մեջ խոժոռ պարագա է, իսկ արևելյան՝ որոշիչ։ Այդ զգալով էլ հեղինակը դրանք իրարից անջատել է գծիկով, որը հայերենի կետադրական օրենքով ճիշտ չէ։

Կրկնությունը ոճաբանության մեջ համարվում է իմաստի ընդգծման, էֆեկտիվության միջոց։ Ածականը գոյականի որոշչի դերում ևս կարող է կրկնված լինել։

«Աշնան պղտոր, պղտոր ամպեն Արցունքի պես թոն կգա» (Իս., 1, 96)։ «Եղեգնուտներում երգում էր քամին Հեռու, հեռավոր, հեռավոր մի երգ» (ԳՄՀ, 493)։ «Երկնքի սպիտակ, սպիտակ շուշաններ, Իջնում եք անշշուկ, իջնում եք ձյուն դառած» (ՀՇՔՀ, 185)։

Սակայն հնարավոր է, որ իրար մոտ դրված երկու ածականները նույն դերը չկատարեն, և այդ դեպքում դա չի դիտվի իբրև ածականի կրկնություն։ Օրինակ՝ «Բայց խոնարհ՝ գլուխ տվեց, Քյամանչան բռնած ձեռքին, Եվ տխուր, տխուր հոգով հեռացավ Սայաթ-Նովան» (ԳՍԲ, 308) նախադասության մեջ առաջին տխուր-ը կարող է նաև պարագա դիտվել։

Սովորաբար բաղադրյալ անունները, մասնավորապես հատուկ անունները, ունենում են ամբողջ բառակապակցությանը վերաբերող ածական լրացում։ Այսպես, ասում ենք հզոր Սովետական Միություն, նորաստեղծ Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն, անպարտելի Խորհրդային Բանակ, բերքառատ Արարատյան դաշտ և այլն։

«Ծիծաղախիտ Վանա ծովի Փոքրիկ գյուղից առափնյա, Ծովն է մտնում գաղտագողի Ամեն գիշեր մի տղա» (ՀԲ, 1, 205)։ «Բայց շարժում է դեռ Նա իր դիվային ռազմի մեքենան» (ՆԶՄ, 120)։ «Գործոն անդամ էր մի քանի խոշոր ակցիոներական ընկերությունների» (ՆԴ, 1, 224)։

Ածականը երբեմն կարող է դառնալ բաղադրյալ հատուկ անվան բաղադրիչներից մեկի լրացումը։ Այդ դեպքում նա երկփեղկում է բաղադրյալ հատուկ անունը։ Այսպես, հնարավոր է ասել Արարատյան արգավանդ դաշտը, Սևանա գեղեցիկ լիճը և այլն։ Օրինակ՝ «Երդումն առաջին նա անցյալ տարի Տվեց Լաչինի աղջըկան Ռուշանի կապույտ Քարափի ծարին» (ՆԶՄ, 287—288)։

Անհրաժեշտ է կանգ առնել նաև այն կապակցությունների վրա, որոնք կազմված են նախադասության մեջ շարահյուսական ինքնուրույն պաշտոն չունեցող գոյականներից և ածական լրացումից (կամ լրացումներից)։ Իբրև կապակցության լրացյալ առաջին հերթին հանդես են գալիս ժամանակի ընդհանուր կամ կոնկրետ իմաստ ունեցող մի շարք բառեր՝ ժամանակ, առավոտ, երեկո, օր, պահ և այլն։

«Մայրը տան գործերից ազատ ժամանակ սովորաբար նստում էր ծալապատիկ և զբաղվում գուլպա գործելով» (ՆԴ, 1, 155)։ «Քամու կատաղի ժամանակ նրանք հանկարծ գլխներից ետ էին քաշում յափընջու ծայրը» (ՆԴ, 1, 88)։ «Հետևյալ առավոտ, շատ վաղ, կաթողիկոսը խորհրդի հրավիրեց յուր մոտ միաբանության գլխավորներին» (Մուր., 4, 208)։ «Դահի թափուր ժամանակ ամեն մի դավաճան հրապարակ է հանում յուր հին հաշիվները» (Մուր., 4, 438)։ «Քո ուրախ պահին հիշիր, որ ես կամ» (ԳՍԲ, 194)։

Այսպիսի կապակցությունների լրացյալ են դառնում նաև կողմ, երես, մաս և այլ գոյականներ՝ տարբեր հոլովներով դրվելով իբրև կապական բառեր։ Օրինակ՝ «Երևաց Դարդմանը յուր սպիտակ պարիսպներով, որոնք ամբառնում էին բերդի արևմտյան կողմից և աջ ու ձախ ձգվելով՝ միանում հյուսիսային մասի անմատչելի լեռնալանջին և հարավային ու արևելյան կողմերի վիմահերձ ժայռերի բնական պատնեշներին» (Մուր., 4, 96)։

Երկրորդ դեպքում այդպիսի կապակցությունների լրացյալ կարող է հանդես գալ գործիական հոլովով դրված որևէ գոյական, որը և զուրկ է շարահյուսական ինքնուրույն պաշտոնից և միայն այդ ածականի հետ միասին է դիտվում իբրև նախադասության մի անդամ։

«Միրանի տափի համար համարյա հավասար թվով մահակներ

էին զարկվում երկուստեք» (Բակ., 42)։ «Տան տերը՝ Օհան ապերը, նահապետական բարքով մարդ էր» (Բակ., 119)։ «Դու տնքում ես ջանքով գերմարդկային» (ՀՍՆԴԲ, 135)։ «Կարմիր շորով մի խիղան Ընկավ ձորը, մի կածան» (ՀԲ, 2, 11)։ «Խաբում են, կանչում ծանոթ ձայներով» (ՀԲ, 2, 16)։ «Բանը վերջացնի գեղական կարգով» (ՀԲ, 2, 40)։

* * *

Անհրաժեշտ է նշել նաև ածական լրացումով գոյականի այն կապակցությունները, որոնք իբրև կայուն բառակապակցություն, անվանողական դեր են կատարում. բաղադրյալ հատուկ կամ հասարակ անուն են։

Դրանցից են՝ Արարատյան դաշտ, Սև ծով, Կարմիր ծով. Միջերկրական ծով, Կովկասյան լեռնաշղթա, Հայկական սար և այլն։

Այս կարգի անվանողական կապակցություններից պետք է տարբերել մի շարք կայուն կապակցություններ, որոնք նույնպես մեկ միասնական հասկացություն արտահայտելով հանդերձ սովորաբար չեն տրոհվում՝ առանց իմաստի խաթարման։ Այսպես, ծնողական ածականով կարող ենք կազմել շատ ազատ կապակցություններ՝ ծնողական սեր,— գութ,— պարտք,— զգացում և այլն, սակայն ծնողական ժողով կապակցությունը որոշակի իմաստ ունի։ Այստեղ, իհարկե, բաղադրիչները կարող են անջատ ևս գործածվել (ըստ որում, նրանք այլ կայուն կապակցություններ էլ կկազմեն, ինչպես՝ ազգային ժողով, օրենսդիր ժողով և այլն), սակայն ամբողջ կապակցությունը դիտվում է իբրև կայուն։ Այսպես են՝ ազգային դրոշակ,— հիմն, —գույք,— եկամուտ,— հարց.— ժողով, —փոքրամասնություն, ակադեմիական տարի, սահմանադիր ժողով, օրենսդրական ժողով. մայրենի լեզու. կենդանի լրագիր, խնայողական դրամարկղ, մեծ պաս, պատվավոր նախագահություն, հանքային ջուր, քաղաքացիական պատերազմ, սևագործ բանվոր և այլն։

Սրանցից պետք է տարբերենք ածական լրացումով կազմված դարձվածքային կապակցությունները, որոնց իմաստը անմիջապես բաղադրիչներից չի բխում (թեև հասկանալի է նրանց կապակցությունից), այլ ժամանակի ընթացքում փոփոխվելով է արդի վիճակին հասել։

Այսպես են՝ աղի արտասուք, անհոտ ծաղիկ (անպետք մարդ), բարի լույս, բարի օր, դատարկ մարդ, դատարկ խոսք,— ձեռքով.

թեթև ձեռք, լայն սիրտ, թունավոր լեզու, սև երես, սև օր, պոչատ գդալ, փափուկ դրություն, կարճ խելք, նեղ տեղ, մեռյալ կետ, յուղոտ պատառ, մոգական գավազան, սպիտակ ջարդ, գայլային բարքեր, կենդանի դիակ *և այլն*։

Սրանցից տարբերվում են կրոնական, առասպելաբանական ծագում ունեցող (մեծ մասամբ այլ լեզուներից պատճենված) դարձվածքները, որոնց իմաստը կապվում է այս կամ այն հին առասպելի կամ պատմական դեպքի հետ։

Դրանցից են՝ աքիլլեսյան գարշապար, ավգյան ախոռ, դամոկլյան սուր, բաբելական կրակ, բաբելոնյան աշտարակ,— աշտարակաշինություն,— խառնակություն, մարաթոնյան վազք, գորդյան հանգույց, պրոկրուստյան մահիճ, վերջին մոհիկան, պլատոնական սեր, դրակոնյան օրենք, սպարտական դաստիարակություն, հոմերոսյան քրքիջ,— ծիծաղ (հոմերյան քրքիջ,— ծիծաղ), լակոնական ոճ, չինական պարիսպ, կեսարյան հատում, սիզիֆյան չարչարանք *(տանջանք, աշխատանք)*, դելփյան պատգամախոս, փարիսեցիական վերաբերմունք, պրոմեթևսյան կրակ (հուր), բարդուղիմեոսյան գիշեր, բոհեմական գիշեր, եզովպոսյան քար, ստոիկյան համբերություն *և այլն*։

5. ԳՈՅԱԿԱՆԻ ԼՐԱՑՈՒՄԸ ԹՎԱԿԱՆՈՎ

Թվական անունը, իբրև առարկայի թվական հատկանիշ արտահայտող խոսքի մաս, դառնում է գոյականի լրացում։ Թվական լրացումով կազմված բառակապակցությունները բաժանվում են երկու տեսակի։

Առաջին դեպքում լրացյալը հանդես է գալիս որպես շարահյուսական ինքնուրույն ֆունկցիա ունեցող բառ, և այս դեպքում թվականը սոսկ նրա որոշիչն է լինում։ Այսպիսի բառակապակցություններ կազմվում են քանակական, դասական և բաշխական թվականներից՝ անձ կամ իր ցույց տվող բոլոր գոյականների հետ։ Այսպես են, օրինակ, հինգ աշխարհամաս, քսան զինվորներ, առաջին դար, վեցերորդ շարքը, յոթական աշակերտ *և այլն*։

«Յոթն ավանները *միասին ունեին* տասներեք հազար երեք հարյուր *հետևակ և ձիավոր* զինվոր» *(Ր, 7, 184)*։ «Առաջին պարսպի *քանդակն այն աստիճան լայնացել էր, որ լեռնականները նրա էին մտել և այժմ սկսել էին փորել* երկրորդ պարսպի *ստորոտը*» *(Ր, 7, 306)*։ *«Խմբի հետևից եկող ուժեղ ձիերին բարձել*

էին երկու վարազ» (ԴԴՎ, 8)։ «Երկու խոսակիցները միաժամանակ բարձրացրին գլուխները» (Մուր., 4, 171)։

Առանձնակի տեղ ունեն այն կապակցությունները, որոնցում լրացյալ են լինում տարածության, ժամանակի, կշռի, ծավալի, հաշվի և բազմաթիվ այլ չափերի միավոր ցույց տվող գոյականներ։ Այս դեպքում չափի միավորն ստանում է ավելի շատ քանակական թվականով դրված որոշիչ։ Այդ միավոր գոյականներից են՝ միլիմետր, սանտիմետր, մետր, կիլոմետր. հեկտար, քառակուսի մետր, խորանարդ մետր, վայրկյան, րոպե, ժամ, օր, ցերեկ, գիշեր, շաբաթ, ամիս, տարի, դար, գրամ, կիլոգրամ, փութ, ցենտներ, տոննա, կտոր. գլուխ, շունչ, բեռ, հոգի և այլ բազմաթիվ բառեր, որոնք իմաստային զանազան անցումներով ձեռք են բերել կամ ձեռք են բերում չափի միավորի նշանակություն։

Այսպիսի բառակապակցություններում գոյականը միշտ եզակի է դրվում։

Նկատելի է, որ այս տիպի բառակապակցություններում լրացյալ գոյականի շարահյուսական դերն անխզելի է նրա հետ կապակցված թվական լրացումից։ Իմաստով այսպիսի բառակապակցությունը ներկայացնում է մի անխզելի միասնություն։ Դրանցից կարելի է նշել՝ երեք մետր, հինգ կտոր, երկու բաժակ (չափի իմաստով), վեց օր, քսան ռուբլի, տասը գրամ, ութ հոգի, առաջին պահ, վեց հատ, չորս կտոր և այլն։

«Այնպիսի հոգնածություն էր զգում, կարծես տասը վերստ ճանապարհ էր կտրել» (ՆԴ, 1, 155)։ «Նրանք կոլտնտեսության տասնհինգ հազար ռուբլու գումարը ինքնագլուխ բաժանել են իրենց բարեկամներին ու մտերիմներին» (ՍԽՀ, 439)։ «Լվացարանի ջրից մի երկու բուռ շփեց կոշտ, մաղակալած երեսին» (ՔԹՈՀ, 48)։ «Հարյուր գրամ կոնյակ խմեց» (ՔԹՈՀ, 48)։ «Մի րոպե իշխանուհու դաժան, թափառող հայացքը կանգ առավ գրասեղանի մոտ հատակի վրա» (ՆԴ, 1, 197)։ «Ճիմերի քառակուսի կտորներից երեք-չորս հատ իրար վրա դնելով՝ վերցրեց, բերեց» (ՔԹՈՀ, 337)։

Չափի միավոր գոյականների հետ կապակցվում են նաև դասական թվականները՝ ցույց տալով տվյալ չափի միավորի, որպես առարկայի, հերթական կարգը։ Այս բառակապակցություններն էլ դարձյալ իմաստային ամբողջություն են կազմում. բաղադրիչները միասնական են ոչ միայն իմաստային, այլև շարահյուսական տեսակետից։ Օրինակներ՝ «Վասոն երկրորդ բաժակ ջուրը դատարկելուց հետո, խոսեց իր երկհարկանի վիլլայի մասին» (ՔԹՈՀ, 56)։ «Առաջին պահ ոչ մեկը նրանցից բառ անգամ չէր կարողանում ասել»

(ԳՍԹ, 1, 401)։ «Համատարածի առաջին օրվանից *վերջին ասեղս բերել եմ կոլխոզ» (ՔԹՈՀ, 254)։* «Երրորդ օրը *նկատեց, որ չոր կերպով հազում է» (ՆԴ, 3, 169)։*

Համեմատաբար սակավ գործածություն ունեն չափի միավոր գոյականների և բաշխական թվականների կապակցությունները։ Օրինակներ՝ «Առանց ծեծ ու կռվի մի–մի կտոր *հաց ու պանիր էլ շպրտեց նրանց գոգը» (ՆԴ, 1, 9)։ «*Հինգ–հինգ հոգի *իրար դեմ ելած՝ սրամարտ էին մղում» (ԴԴՎ, 14)։*

Առանձին տեղ ունեն այն բառակապակցությունները, որոնք կազմվում են թվականով և տեսակ, կարգ, շարք *գոյականներով, որոնք կարող են տվյալ կապակցություններում հանդես գալ նաև* տեսակի, կարգի, շարքի *սեռական ձևերով։ Այս բառերը չափ կամ որոշակի աստիճան չեն նշում, սակայն թվականի հետ միասին ցույց են տալիս հատկանիշ՝ ընդհանուր ձևով։ Այսպես, կազմվում են՝* երկու տեսակ (երկու տեսակի), հազար տեսակ (հազար տեսակի), երրորդ տեսակի, առաջին կարգի, երկրորդ կարգի *և այլն։ Օրինակ՝ «Նա* երկու տեսակ *հայացք ուներ» (ՆԴ, 2, 427)։*

Թվականի և չափի միավոր գոյականի բառակապակցությունները լինում են ոչ միայն երկանդամանի, այլև եռանդամանի, երբ չափի միավորն ունենում է նաև այլ բնույթի լրացում։ Այս դեպքում քանակական թվականը լրացական հարաբերության մեջ է դրվում ոչ միայն չափի միավոր գոյականի, այլև այդ գոյականի լրացման ու գոյականի նկատմամբ՝ միասին վերցրած։ Իբրև կանոն, այսպիսի դեպքում չափի միավորի հետ սերտ կապակցության մեջ են գտնվում ածականները, ինչպես՝ քառակուսի մետր, խորանարդ սանտիմետր, ծովային մղոն, մեծ ամպեր, լիքը բաժակ, փոքրիկ կում *և այլն։ Այս ձևով կազմվում են՝* հինգ քառակուսի մետր, երեք լիքը բաժակ, հարյուր ծովային մղոն *և այլն։ Օրինակ՝ «Նա մի* երկու փոքր կում *ջուր ըմպելով... շարունակեց» (ՔԹՈՀ, 51)։*

Թվականով և չափի միավոր գոյականով կազմված բառակապակցությունը կարող է բաղադրվել նման այլ բառակապակցության հետ, ինչպես՝ քսան ռուբլի երեսուն կոպեկ, հազար վեց հարյուր մետր քսանհինգ սանտիմետր *և այլն։ Այսպիսի բաղադրյալ բառակապակցությունները շարահյուսական տեսակետից միասնություն են կազմում, այսինքն՝ նախադասության մեջ մեկ անդամ են դիտվում։*

Գրության մեջ բաղադրյալ բառակապակցության բաղադրիչները իրարից չեն բաժանվում որևէ կետադրական նշանով։ Օրինակ՝

«Այսօրվա կուրսով հարյուր ֆրանկն անում է ճիշտ երեսունհինգ ռուբլի քառասունհինգ կոպեկ» (ՆԴ, 3, 128)։

Բաղադրյալ կապակցության հաջորդ բաղադրիչը պակաս չափային միավոր է լինում, իսկ նախորդը՝ մեծ միավոր։ Այսպիսի բառակապակցություններում երբեմն բաղադրիչները կապակցվում են ու, երբեմն էլ և բաղհյուսական շաղկապներով, ինչպես՝ հարյուր կիլոմետր ու հարյուր մետր, հինգ ցենտներ ու երեսուն կիլոգրամ և այլն։ Հաջորդ բաղադրիչի մեջ կես բառի մոտ չափի միավորը չի կրկնվում, ինչպես՝ հինգ մետր ու կես, վաթսուն տոննա ու կես, վեց ժամ ու կես և այլն։ Օրինակ՝ «Ծառն ուսին դրած գավազանի պես, Քայլեր էր անում չորս կանգուն ու կես» (ՂԱ, 374)։

Թվականի և չափի միավորի բառակապակցությունը շարահյուսական տեսակետից կատարում է մեկ ֆունկցիա։ Այդպես են մինչև այժմ նշած բառակապակցությունները։

Սակայն հաճախ այսպիսի բառակապակցությունները զուրկ են շարահյուսական ինքնուրույն պաշտոնից։ Դա երևան է գալիս մանավանդ այն ժամանակ, երբ դրանք լրացական հարաբերության մեջ են մտնում մի շարք մակբայների, կապական բառերի հետ։ Այս վերջինների հետ կապակցվելով՝ թվականի և չափի միավորի բառակապակցությունն ստանձնում է կա՛մ կապի խնդրի, կա՛մ մակբայի լրացման դեր։ Երկու դեպքում էլ թվականն ու չափի միավոր գոյականն անքակտելի կապակցությամբ են հանդես գալիս։ Այսպես՝ հետևյալ նախադասություններում թվականի ու չափի միավոր գոյականի բառակապակցությունը մակբայի լրացում է։ «Ինն ամիս առաջ նրան այդտեղից մի խումբ բանվորների հետ վռնդեցին» (ԳՍԹ, 1, 211)։ «Որ իմանա, քսան կիլոմետր հեռու կփախչի» (ՔԹՈՀ, 698)։ «Երեք օր հետո Ջեհթարին Մադինեին տարավ Շիմրան» (ԳՍԹ, 1, 211)։ «Գինու գավը բանեցնում էր տասնհինգ տարուց ավելի» (ՆԴ, 1, 59)։ «Ես քսանհինգից-երեսուն սանտիմետրից պակաս խոր չեմ վարել» (ՔԹՈՀ, 265)։

Կապերի հետ այս բառակապակցություններն ստանձնում են կապի խնդրի դեր՝ դարձյալ միասնաբար։

«Երեք օրից հետո դուրս եկան Ողական ամրոցից երկու եղբոր որդիները» (Ր, 7, 266)։ «Պատվերը երկու ժամից հետո պատրաստ կլինի» (ՔԹՈՀ, 283)։ «Բացի տասը հազար ռուբլուց նրա գրպաններում հայտնաբերեցին ուրիշ անվամբ մի կեղծ անձնագիր» (ՍԽՀ, 731)։ «Երկու ֆունտի չափ արդեն պակասել էր ծանրությունս» (ՆԴ, 3, 75)։ «Մի օրվա փոխարեն պապս նրան պահում էր երկու,

9—486

երեք օր» (Բակ., 123)։ «Այդ ուրախ և անհոգ մարդն այդ մի ամսվա մեջ մի քանի տարով ծերացել է» (ՆԴ, 2, 391)։

Այս բառակապակցությունները միաժամանակ հանդես են գալիս նաև մի շարք կապական բառերի հետ՝ նրանց մակբայական իմաստի առկայությամբ էլ։

«Դոկտոր Աշոտի հրապարակային զեկուցումից երեք օր հետո ինստիտուտի դատախազական կազմի ժողով հրավիրվեց» (ԳՍԹ, 1, 36)։ «Պսակումն սկսվելուց հինգ օր առաջ նրան իր մոտ կանչեց առաջին բարապանը» (ՄԽՀ, 678)։ «Դռնից մի երկու մայլ հեռու դրված էին երկու գրասեղան» (ՔԹՈՀ, 6)։

Թվականը սերտ կապակցության մեջ է մտնում ոչ միայն չափի միավոր ցույց տվող, այլև բազմաթիվ ուրիշ գոյականների հետ, որոնք այդ համադասություններում կարող են թվականից անջատ էլ գործածվել՝ կատարելով շարահյուսական ինքնուրույն պաշտոն, սակայն թվական լրացում ունենալու դեպքում չեն գիտակցվում որպես անկախ անդամ։ Այս դեպքում արդեն թվականի և գոյականի բառակապակցությունն այնքան է սերտ, որ դրանց բաժանումն անհնարին է՝ առանց իմաստի խախտման։ Կապակցության երկու բաղադրիչները նախադասության մեջ այլևս չեն կարող դիտվել իբրև ինքնուրույն անդամներ, այլ միասին դառնում են նախադասության մեկ անդամ։ Պետք է նշել, որ այս գոյականներից մի քանիսը նման կապակցության մեջ են մտնում նաև ուրիշ խոսքի մասերի հետ, ինչպես դերանվան, ածականի և այլն (այս դեպքում, նման դեպքում և այլն)։

«Առաջին հայացքից Արևելքի այդ մեծ քաղաքում ոչինչ չի փոխվել» (ԳՍԹ, 1, 6)։ «Առաջին հերթին շուկա հանեց փոքրիկ կապերտը» (ԳՍԹ, 1, 211)։ «Երեք կողմից Կաթնաղբյուրի խոտհարքները շրջապատված են սարերով, իսկ մի կողմից բաց հորիզոն է» (ՄԽՀ 568)։

6. ԳՈՅԱԿԱՆԻ ԼՐԱՑՈՒՄԸ ԴԵՐԲԱՅՆԵՐՈՎ

Դերբայները, իբրև բայի անդեմ ձևեր, կատարում են ձևաբանական և շարահյուսական դեր։ Ընդ որում ոչ բոլոր դերբայներն ունեն հավասարապես այդ երկու ֆունկցիաները։ Վաղակատար և ժխտման դերբայներն ունեն միայն ձևաբանական, անորոշ և ենթակայական դերբայները՝ միայն շարահյուսական, իսկ անկատար (—իս վերջավորվող ձևը), ապառնի, հարակատար դերբայ-

ները՝ և՛ ձևաբանական, և՛ շարահյուսական դեր (անկատար դերբայի — ում վերջավորվող ձևը միայն ձևաբանական դեր ունի)[1]։

Դերբայների շարահյուսական դերի պարզաբանումն էլ հիմնականում կազմում է այս կարգի բառակապակցությունների ուսումնասիրության առարկան (ասում ենք հիմնականում, որովհետև դերբայների ոչ լրացում և բայի լրացում գործածությունը շարահյուսական տեսակետից չի մտնում այս թեմայի մեջ)։ Դերբայների շարահյուսական, մասնավորապես լրացական կիրառությունների ուսումնասիրությունը երևան է հանում բավականին բարդ պատկեր։ Բանն այն է, որ ժամանակակից հայերենի դերբայները ֆունկցիոնալ-շարահյուսական և իմաստային առանձնահատկություններով հարաբերակից են մի քանի խոսքի մասերի։ Սրանով է բացատրվում նաև այն հանգամանքը, որ անցյալի հայ քերականագիտության մեջ դերբայները դիտվել են համապատասխանաբար և՛ իբրև գոյական, և՛ իբրև ածական, և՛ իբրև մակբայ։

Մերժելով դերբայները այլ խոսքի մասի մեջ ձուլելու տեսակետը, չի կարելի անտեսել, սակայն, այն կապը, որ իմաստային ու ֆունկցիոնալ-շարահյուսական տեսակետից կա, մի կողմից, դերբայների և, մյուս կողմից, գոյականի, ածականի և նույնիսկ մակբայի միջև։ Այդ հարաբերակցությունն առանձնապես անհրաժեշտ է հաշվի առնել դերբայների շարահյուսական կիրառությունները ուսումնասիրելու ժամանակ։ Այսպես, հայտնի է, որ անորոշ դերբայը, որն ունի միայն շարահյուսական կիրառություն, կատարում է առաջին հերթին շարահյուսական այն պաշտոնները (չնչին բացառությամբ), որոնք հատուկ են գոյականին (և դրա շնորհիվ էլ այն հոլովվում է՝ միայն եզակի թվով)։ Հարակատար դերբայը շարահյուսական տեսակետից համապատասխանում է ածականի և գոյականի հատկանիշները (փոքր-ինչ տարբերությամբ)։ Ենթակայականն դերբայը ևս շարահյուսական կիրառության նույնպիսի հատկանիշներ ունի (դարձյալ որոշ յուրահատկությամբ)։ Այսպանի դերբային հիմնականում հատուկ է ածականի շարահյուսական դերը։ Սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դերբայները նշված խոսքի մասերի շարահյուսական դերից զատ ունեն նաև այլ կիրառություններ, որոնք հատուկ չեն նշված խոսքի մասերին (այստեղ նկատի ունենք միայն դերբայների՝ գոյականի լրացման դերում հանդես

---

[1] Հայերենի դերբայների մասին մանրամասն ուսումնասիրություն է Ա. Արտանամյանի «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը», Երևան, 1953։

եկող ձևերը, իսկ բայի լրացման մասին կխոսենք առանձին՝ «Բայի լրացումները դերբայներով» հատվածում)։ Իսկ մյուս կողմից էլ չեն կարող կատարել այդ խոսքի մասերի բոլոր պաշտոնները։

Դերբայների շարահյուսական-լրացական գործածությունն ունի իր առանձնահատկությունները, որոնց բացահայտմամբ էլ զբաղվում է բառակապակցությունների ուսմունքի սույն հատվածը։ Գոյականի լրացում կարող են դառնալ անորոշ, ապառնի, հարակատար և ենթակայական դերբայները։

Գոյականի լրացումը անորոշ դերբայով.— Անորոշ դերբայը գոյականի լրացում կարող է դառնալ և՛ հոլովված, և՛ անփոփոխ ձևով (նրա հոլովումը, ինչպես հայտնի է, կատարվում է ու հոլովիչով), և այդ դեպքում այն սեռական-տրական հոլովներում նմանվում է պատմականորեն նույն ձևից ծագած ապառնի դերբային։ Անորոշ դերբայի փոփոխված ձևերից գոյականի լրացում դառնում է սեռական հոլովաձևը (խիստ սակավադեպ կարող են նաև մյուս թեք հոլովաձևերը ևս այդպիսի դեր կատարել այնպես, ինչպես այդ լինում է գոյականների թեք հոլովաձևերի դեպքում)։ Անփոփոխ ձևը ևս գոյականի լրացում կդառնա. տվյալ դեպքում առաջին հերթին նկատի ունենք ուղղականը, ապա և չհոլովված-չփոփոխված ձևը, որը այս դեպքում նմանվում է բայական բաղադրյալ ստորոգյալի դերբայական բաղադրիչին։

Անորոշ դերբայը կարող է լրացման դերում հանդես գալ ինչպես առանձին, այնպես էլ լրացումներով (դերբայական դարձված)։ Լրացում ունենալը կամ չունենալը որևէ դեր չի խաղում դերբայի շարահյուսական պաշտոնի գործում։

Ամենից շատ տարածված են այն կապակցությունները, որոնցում լրացումը հանդես է գալիս սեռական հոլովով։ Այս դեպքում դերբայը կարող է լինել և՛ նախադաս, և՛ ետադաս։ Կապակցության լրացյալի և լրացման հարաբերությունները այստեղ կարող են լինել մոտավորապես այնպիսիք, ինչպիսիք կան գոյականի սեռական հոլովով դրված լրացման և նրա լրացյալի միջև[1]։ Քանի որ լրացման ու լրացյալի իմաստային հարաբերությունները մանրամասն նշված են համապատասխան տեղում, ուստի այստեղ կբավականանանք սոսկ այդ իմաստները նշելով ընդհանուր ձևով։ Պետք է դիտել, որ այս կապակցությունների լրացյալի դերում սովորաբար սահմանափակ թվով գոյականներ

[1] Այդ մասին մանրամասն տե՛ս «Գոյականի լրացումները սեռական հոլովով» հատվածը։

կարող են հանդես գալ։ Դրանցից կարելի է նշել՝ ժամանակ, ժամ, րոպե, վայրկյան, օր, միտք, ցանկություն, տենչ, խնդիր, հարց, գործ, բան, հնարավորություն, կասկած, ծարավ, պատճառ և այլն։ Դրանցով կազմվում են՝ ունելու ցանկություն,— պահանջ,— ժամ, պաշտպանելու հնարավորություն,— կամք, — օր, ապրելու տենչ, սովորելու կամք, սիրելու պահանջ, հեռանալու օր,— ժամ,— տարի և այլն։

«Պակասում էին բահեր, քլունգներ և քար ու հող տեղափոխելու պատգարակներ» (ՍԽՀ, 448)։ «Հենց այսօրվանից պետք է վերջ տալ քոչելու անհիմն շատախոսությանը» (ՍԽՀ, 329)։ «Նորից բարձր պաշտոն ստանալու հնարավորությունից սիրտը թպրտաց» (ՍԽՀ, 139)։ «Դա սիրելու և սիրվելու ցանկություն էր» (ՍԽՀ, 201)։ «Նա թեև ունելու ցանկություն չուներ, բայց և այնպես պատկերացնում էր տան ընթրիքը» (ՍԶ, 5, 103)։

Բերված կապակցություններում լրացումների արտահայտած իմաստները միատեսակ չեն։ Այսպես, տեղափոխելու պատգարակներ կապակցության մեջ արտահայտվում է հատկացման (նպատակի), քոչելու շատախոսության՝ վերաբերության, ստանալու հնարավորության՝ վերաբերության, սիրելու, սիրվելու, ունելու ցանկություն՝ նպատակի իմաստներ։

Սակայն այդ բոլոր իմաստներն էլ վերջին հաշվով հանգում են որոշիչ կիրառությանը, և բերված բոլոր կապակցություններում լրացումը որոշիչ է, այսինքն կապակցությունը կազմված է որոշյալ-որոշիչ հարաբերությամբ։ Կան կապակցություններ էլ, որոնցում անորոշ դերբայը կատարում է հատկացուցչի պաշտոն։

«Հայտնեց ոստիկանին, թե գտել է ծովն արձակելու և Սևանն ափից բաժանող անջրպետը ցամաքեցնելու հնարը» (Մուր., 3, 334)։ «Առայժմ իմ սովորելու խնդիրը հետաձգվում է» (ՍԽՀ, 142)։ «Իհարկե, մնալու ուրիշ պատճառներ էլ կան» (ՍԽՀ, 142)։ «Խնդալու կամ լալու կարծեմ պատճառ չիք» (Զ, 365)։ «Մյուսը խոսելու իրավունք չունի» (ՀԹ, 2, 42)։

Սակայն միշտ չէ, որ հնարավոր է անորոշ դերբայի սեռական հոլովով դրված լրացման պաշտոնը որոշել։ Երբեմն այդ հստակ չի լինում։

«Ոչ էլ մեռնելու կասկածանք կար նենգ» (Զ, 219)։ «Սար գնալու օրը ահա այն լորենու տակից դուրս եկան հնձվորների համար ջուր տանող աղջիկները» (ՍԽՀ, 196)։ «Ի՞նչն է խանգարում ձեր տնտեսությունը ոտքի կանգնեցնելու, հարստացնելու ճանապարհին» (ՍԽՀ, 328)։

Գործածական են այնպիսի կապակցություններ, որոնցում անորոշ դերբայով արտահայտված որոշիչը հետադաս է։

«Ժամանակ չկար անգամ լացելու» (ՀԱՀԵՄ, 27)։ «Երդում տվին պայքարելու կատաղի» (Չ, 74)։ «Բախտավորությունն այն է, կյանքում, որ ձեռքեր ունես կառուցելու» (ՀԱՀԵՄ, 231)։

Անորոշ դերբայը սեռական հոլովաձևը մի շարք կապակցություններում դրվում է այնպիսի լրացյալի հետ, որն ըստ էության զուրկ է շարահյուսական ինքնուրույն պաշտոնից և մի տեսակ կապի դեր է կատարում։ Այդպես են օր, ժամ, վայրկյան, պահ և նման լրացյալներով կազմված կապակցությունները։ «Մեկնելու պահին հիշեց այդ»։ «Թռչելու վայրկյանին զղջաց»։ «Եթե ինքը չխմեր անգամ հարբելու աստիճան» (ՍԽՀ, 498)։

Սակայն եթե ժամանակի անունները ոչ ժամանակայնի, այլ տարիքային իմաստով են հանդես գալիս, ապա անորոշ դերբայը ինքնուրույն անդամ՝ որոշիչ (կամ հատկացուցիչ) է լինում շարահյուսական ինքնուրույն դեր կատարող լրացյալի համար։

«Ինքը խողը բացելու և ձեռքը փաթաթելու ժամանակ կունենար» (ՍԽՀ, 456)։ «Ասենք խոսելու ժամանակ էլ չկար» (ՍԽՀ, 465)։

Քանի որ հայերենի շարադասությունը համեմատաբար ազատ է, այդ պատճառով էլ անորոշ դերբայի՝ սեռականով լրացումները կարող են դրվել լրացյալից և՛ առաջ, և՛ հետո կամ կարող են անջատվել նրանից այլ անդամներով։ Այդ դեպքում, սակայն, հնարավոր է տվյալ հոլովաձևի պաշտոնը շփոթել։ Այսպես, հետևյալ նախադասության մեջ պարզ չէ, թե որ բառի լրացումն է միջամտելու դերբայը։ «Նայում էր իր շուրջը և սպասում միջամտելու համար րոպե» (ՀԱՆՀ, 30)։ Այս նախադասության մեջ միջամտելու կարող է լինել և՛ րոպե գոյականի, և՛ համար կապի լրացում։

Սովորաբար անորոշ դերբայը քիչ է դառնում բացահայտիչ։ Սակայն ունենք այդպիսի գործածության դեպքեր։ «Ձեզ մնում է մի բան՝ հաշվետու ընտրական ժողով հրավիրել» (ՍԽՀ, 330)։ «Այժմ նրա հոգսը միայն մի բան էր՝ իրեն հեռու պահել շառից» (ՍԽՀ, 313)։

Կան որոշ կապակցություններ, որոնցում լրացում-լրացյալի հարաբերությունը կարող է երկու ձևով մեկնաբանվել՝ կա՛մ բացահայտյալ-բացահայտիչ, կա՛մ որոշյալ-որոշիչ, ընդ որում՝ հետադաս անփոփոխ տրոհված որոշիչ (որը շատ սակավ է լինում)։ Այսպես են հետևյալ նախադասություններում. «Նա մերժեց բրու-

տի նուվերը՝ զնալ նշանդրեքին» (ՍխՀ, 538)։ «Այնինչ Գարեգինի մաքից չէր հեռանում Մարգարյանի խորհուրդը՝ մնալ հայրենի գյուղում» (ՍխՀ, 136)։

Քանի որ եռադաս անփոփոխ (չթեքված) արտահայտված որոշիչը բացահայտչին է նման, ուստի և ունենում է նույն կետադրությունը (բութով է անջատվում)։ Հետևաբար այն երկու կողմից ստորակետերի մեջ առնելը ճիշտ չէ. «Այժմ այդ մարդու կատարած քայլը, օգտվել հարմար առիթից, անսպասելի չէր նրա համար» (ՍխՀ, 184)։

Ժամանակակից հայերենում կա անորոշ դերբայի գործածության մի յուրահատուկ դեպք։ Դա անորոշ դերբայի անփոփոխ, կամ երբեմն էլ փոփոխված, ձևի եռադաս գործածությունն է, երբ լրացումը դրվում է լրացյալից և բայից հետո (սկզբում լրացյալ գոյականը, ապա բայը և անմիջապես անորոշ դերբայը)։ Այս դեպքում դերբայը նմանվում է (սոսկ արտաքուստ) բայական բաղադրյալ ստորոգյալի դերբայական բաղադրիչին։ Այսպես, համեմատենք երկու կապակցություն. «Նա ցանկություն չուներ հեռանալ» և «Նա աշխատեց այդտեղից հեռանալ»։ Սրանցից առաջինում անորոշ դերբայը ցանկություն գոյականի լրացումն է (նրանից անջատված չուներ ստորոգյալով), իսկ երկրորդում հեռանալ ձևը բայական բաղադրյալ ստորոգյալի (աշխատեց հեռանալ) բաղադրիչ է։

Անշուշտ դրանք տարբեր բաներ են։ Սակայն անհրաժեշտ է իմանալ, որ անորոշ դերբայի լրացյալը շատ դեպքերում հարադրական բարդության անվանական բաղադրիչին է մոտենում։ Համենայն դեպս այդ լրացյալը նախադասության մեջ շատ դեպքերում ինքնուրույն պաշտոն չի կատարում։ Այսպես, եթե ասում ենք «խորհուրդ տվեց մեկնել», ապա խորհուրդ բառը, որը լրացյալն է, շարահյուսական ինքնուրույն պաշտոն չի կատարում (դա չունի այն արժեքը, ինչ որ, ասենք, «Նա հաց տվեց» նախադասության մեջ հաց գոյականը), այլ բայի հետ միասին նախադասության ստորոգյալ է դիտվում։ Սակայն նա միաժամանակ ունի իր հետ դերբայով արտահայտված լրացում, որը նրանից կտրել հնարավոր չէ։ Այստեղ էլ դրսևորվում է յուրաքանչյուր երևույթին ներհատուկ դիալեկտիկան. տվյալ երևույթը հակասական է. գոյականը (խորհուրդ) իբրև առանձին խոսքի մաս, լրացում ունի, սակայն և միաժամանակ ինքնուրույն պաշտոն չունի, այլ մտնում է ստորոգյալի կազմի մեջ իբրև կախյալ բաղադրիչ, և այդ դեպքում նրա լրացումը չի կարող վերաբերել ամբողջ ստո-

րոգյալին։ Այս է պատճառը, որ նման դեպքերում ստորոգյալ համարվում է ամբողջ կապակցությունը, բայց հետ միասին (խորհուրդ տվեց մեկնել), որը սակայն, շատ է լայնացնում ստորոգյալի սահմանները և միաժամանակ նրան հանում մի այլ հակասություն։ Հայտնի է, որ անորոշ դերբայը իր լրացումներով (կողմնակի անդամներով) մի ամբողջություն է դիտվում։ Այսպես, «Հասարակության համար աշխատելը պարտադիր է» նախադասության մեջ աշխատելը անբաժան է իր լրացումից՝ հասարակության համար: Եթե այս տեսակետից մոտենանք բերված կապակցությանը (խորհուրդ տվեց մեկնել) և ստորոգյալ համարենք ամբողջը, ապա գուցե սա համոզիչ լինի։ Սակայն եթե դերբայը լրացումներ ունենա, ինչպե՞ս պիտի դերբայը իր լրացումներից տրոհենք։ Եթե այս նախադասության մեջ ստորոգյալ է ամբողջը, ապա «Խորհուրդ տվեց անմիջապես մեկնել գյուղ» նախադասության մեջ ո՞րն է ստորոգյալը։ Այստեղ խորհուրդ տվեց մեկնել-ը ստորոգյալ համարելու դեպքում անմիջապես, գյուղ բառերը մի՞թե ամբողջ ստորոգյալին են վերաբերում։ Կամ, եթե այստեղ մեկնել կտրենք իր լրացումներից և մտցնենք ստորոգյալի մեջ, ապա «Անմիջապես գյուղ մեկնելը նրա ցանկությունն էր» նախադասության մեջ ինչպե՞ս վարվենք. դարձյալ անջատե՞նք։ Իսկ եթե չանջատենք, ապա ի՞նչ սկզբունքով առաջին դեպքում դերբայական դարձվածը մասնատում ենք նախադասության տարբեր անդամների («Խորհուրդ տվեց անմիջապես մեկնել գյուղ» նախադասության մեջ խորհուրդ տվեց մեկնել-ը ստորոգյալ համարելով անմիջապես և գյուղ բառերը նախադասության բուն պարագաներ կլինեն՝ ձևի և տեղի), իսկ երկրորդ դեպքում դա դիտում ենք դերբայական դարձված, և նրա անդամները կողմնակի անդամներ («Անմիջապես գյուղ մեկնելը նրա ցանկությունն էր» նախադասության մեջ անմիջապես և գյուղ կլինեն կողմնակի ձևի և տեղի պարագաներ)։

Ինչպես նշել ենք, այս կապակցություններում լրացումը լինում է անփոփոխ ձևով կամ սեռական հոլովով։ Դժվար է ասել, թե դրանցից որն է կենսունակը։ Հնարավոր է, որ անփոփոխ ձևը զարգացման ընթացքում տեղը զիջի հոլովված ձևին։

Այս կապակցություններից կարող ենք նշել՝ հեռանալու միտք, մնալու ուժ, պատմելու, բացատրելու կարիք, սովորելու հնարավորություն, դիտել (ու) խորհուրդ, մոտենալ (ու) սիրտ և այլն։

«Խնդրեց նրան հրաման տալ իրան՝ կղզին առնելու մի նոր հնարք գտնել» (Մուր., 3, 334)։ «Բայց միևնույն ժամանակ նե

կարիf էր զգում մեկին պատմելու, բացատrելու, թե ինչպես եղավ այդ ամենը» (ՍՁ, 5, 126)։ «Գարեգինի մեջ ցանկություն առաջացավ բռնել ձիուց, շորերը պոկել վրայից ու մտնել գետը, լողանալ նրա ջրապտույտներում» (ՍԽՀ, 137)։ «Հազվագյուտ մարդկանց էր բախտ վիճակվում լինել Սուլանի այգում, ճաշակել նրա պտուղներից» (ՍԽՀ, 138)։ «Մանվելը կնոջը խոrհուrդ տվեց հագնել ամառային վերարկուն» (ՍԽՀ, 178)։ «Նա նպատակ դրեց ուսումնասիրել ստրատեգիան և պատերազմի փիլիսոփայությունը» (ՄՇՁ, 159)։

Գոյականի լրացումը ապառնի դերբայով·— Ժամանակակից հայերենում ապառնի դերբայն ունի երկու ձև՝ —ու վերջավորվող, որը կատարում է ձևաբանական դեր, և —իf վերջավորվող, որը սահմանափակ լինելով իր ձևակազմական ընդգրկման տեսակետից, կատարում է սոսկ շարահյուսական դեր[1]։

Ապառնի դերբայի —իf վերջավորվող ձևը նախադասության մեջ իր դերբայական իմաստով ունի որոշիչ կիրառություն։ Այդպիսի կապակցություններից կարելի է նշել՝ հասանելիf վարձ, կատարելիf աշխատանf,— գործ, ստանալիf գումար,— բաժին, — նամակ,— գիrf, ուղարկելիf ծանrոց,— դրամ, բերելիf մթեrf, —իrեr,— հաց և այլն։

«Նրանց երկյուղը ոչ թե աշտարակի ու կրիայի տալիf հարվածներից էր» (Մուր., 3, 276)։ «Ու կանգնել եմ ես՝ Ոտքերս ամուր հողի մեջ մխած Ու գլուխս տոթ խառնարաններում Անցած ու գալիf անթիվ orերի» (Չ, 267)։ «Չէր գտնում գնալիf տեղի հաստատ շառավիղը» (ՎԽԳԼ, 74)։ «Աշխենին գրելիf մի նամակ մի երես չգրած՝ պատռեց դեն ձգեց» (ՆԳ, 3, 477)։

Գոյականի լրացումը հարակատար դերբայով.— Հարակատար դերբայը յուրահատուկ է բայական ձևերի մեջ. այն, իբրև հետևանք դարձած գործողության գաղափար ցույց տվող բառ, ունի շարահյուսական բազմազան կիրառություն։ Այդ կիրառությունը պայմանավորված է առաջին հերթին նրա իմաստային առանձնահատկությամբ. այդ այն է, որ գործողի կամ եղողի ձևական կամ ժամանակավոր հատկանիշ ցույց տվող բառը մոտենում է հատկանիշ ցույց տվող խոսքի մասերին, ընդհանրապես,

[1] Ապառնի դերբայի —իf վերջավորվող ձևը ապառնի դերբայ չեն համարել շատերը։ Այդ ձևի մանրամասն քննությունը տրված է Ա. Աբrահամյանի «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» (1953) աշխատության մեջ, էջ 145, 317—341։

և ածականին, մասնավորապես։ Իսկ ածականի շարահյուսական կիրառությունները երեքն են՝ որոշիչ, ստորոգելիական վերադիր և պարագա։ Հարակատար դերբայն ունի սրանցից երկուսը՝ որոշիչը և պարագան, իսկ ստորոգելիական վերադիր չի լինում, քանի որ օժանդակ բայի հետ կազմում է դիմավոր ձևեր։ Սակայն քանի որ ածականը կարող է գոյականաբար գործածվել, հոլովվելով, ապա հարակատար դերբայը ևս ունի գոյականաբար գործածվելու հատկություն։ Այս դեպքում հարակատար դերբայը կարող է կատարել բոլոր այն պաշտոնները, որոնք հատուկ են գոյականին։

Այն սկզբունքով, որ գոյականաբար գործածված ոչ մի բառի հոլովաձևերի կիրառությունն առանձին չենք ուսումնասիրում (բացի անորոշ դերբայից, որը յուրահատուկ է և՛ ձևով, և՛ կիրառությամբ), քննության առարկա չենք դարձնում նաև հարակատար դերբայի հոլովված ձևերի շարահյուսական կիրառությունները։

Գոյականի լրացման դերում հանդես եկող հարակատար դերբայը արտահայտում է որոշչի հարաբերություն՝ անկախ ինչպես լրացյալի, այնպես էլ լրացումների կոնկրետ իմաստից։

Ընդհանրապես չկա սահմանափակում այն գոյականների համար, որոնք ստանում են հարակատար դերբայով արտահայտված լրացում։ Այդպիսի որոշիչ կարող են ունենալ և՛ հասարակ, և՛ հատուկ անունները, և՛ կոնկրետ, և՛ վերացական գոյականները։ Սակայն հարակատար դերբայով արտահայտված լրացում ունեցող գոյականների կապակցությունների ուսումնասիրությունը երևան է հանում հետաքրքրական մի երևույթ. այդ այն է, որ ներգործական սեռի բայերի հարակատար դերբայը որոշիչ է դառնում ավելի շատ կրավորական ձևով, իսկ ներգործական ձևը այդ իմաստով սահմանափակ գործածություն ունի։ Օրինակներ՝ «Իրար վրա թափված, իրարու հենված տնակներ» (ՆԴ, 1, 3)։ «Սալահի այգին շրջապատի ամայության մեջ նման էր բարձր պարիսպներով եզերված կանաչ օազիսի» (ՍԽՀ, 138)։ «Առյուծի երախի նման բացված կիրճում իջնում էր կապույտ երեկոն» (ՍԽՀ, 138)։ «Ճանապարհին հանդիպում էին սիլոսացուով բեռնված սայլեր» (ՍԽՀ, 162)։

Բերված նախադասություններում ներգործական սեռի թափել, հենել, եզերել, բացել, բեռնել բայերի հարակատար դերբայի կրավորական ձևերն են գործածվել (թափված, հենված, եզերված, բացված, բեռնված)։ Սակայն պատահում են նաև կապակ-

ցություններ, որոնցում լրացումը ներգործական ձևով է դրված.

«Հաստ շղթաներով կախված էր անիվների վրա ամրացված մի ծածկի առաստաղից» (Մուր., 3, 274)։ «Մյուսներին քարտուղարուհին ցույց էր տալիս դռան վրա կպցրած գրությունը» (ՍխՀ, 168)։

Ներգործական և կրավորական ձևերի գործածությունն անշուշտ պայմանավորված է կոնկրետ գործողի նշման անհրաժեշտությամբ։ Այսպես, երբ ասում ենք «Գրիգորը աշխարհ չտեսած մարդ է», ապա չտեսած ներգործական ձևի գործածությունը խիստ անհրաժեշտ է, քանի որ այն ունի կողմնակի ուղիղ խնդիր լրացում (աշխարհ)։ Կամ երբ ասում ենք «Նա մի հերոս է չգրված վեպի», ապա չգրված կրավորականը նույնպես անհրաժեշտ է, քանի որ նախադասության լրացյալը նախադասության ենթական է, որը գործողությունը (չգրված) կրում է ուրիշից։ Օրինակ՝ «Թույն էր կարծես՝ բորբ արևի սրտից քամած» նախադասության մեջ քամած կարող է արտահայտել և՛ ներգործական, և՛ կրավորական իմաստ։ «Եվ թվում էր հին մի ավանդ՝ Կտակած մեր մեռած հայրերից» (Չ,465) նախադասության մեջ կտակած ձևը ունի և՛ ներգործական, և՛ կրավորական նշանակություն (կտակած, կտակված)։ Այս գործածությունը, սակայն, գնալով, նվազում է, և այժմ գրական լեզվում հարակատար դերբայի որոշիչ կիրառության ժամանակ ձևը պայմանավորվում է կոնկրետ սեռային իմաստով։

Կան հազվադեպ նախադասություններ, որոնցում հարակատար դերբայի լրացյալը գոյականաբար գործածված հարակատար դերբայ է։ Օրինակ՝ «Կարծում ես հինը չկա՞ այնտեղ, Քո երազածը՝ հուշով նախշած» (Չ, 383)։

Հարակատար դերբայը հաճախ բաղհյուսական կապակցություն է կազմում ածականի հետ՝ գոյականի լրացման դերում։

«Հիմա հիշում եմ բոլոր օրերս հին ու անցած» (Չ, 30)։ «Եվ իր կյանքը ամբողջ եղել է սին մի հարց՝ Աննպատակ ուղղված և ամպաշեն» (Չ, 488)։ «Հողմերին դիմահար լինեմ Այս այրված ու բաց ճակատով» (ՀՍՀԵՄ, 375)։ «Տաք իմ երկիր, այրված ու շեկ, Այրված քարեր դուք իմ ծարավ, Տարածվեցեք աշխարհով մեկ» (ՄՄԼ, 40)։

Հարակատար դերբայը համադաս լրացում է դառնում ենթակայական և ապառնի դերբայների հետ։

«Բարկությամբ հիշեց նախագահի տանը բացված ամեն տեսակ ուտելիքների ու խմիչքների ծանրությունից տնքացող սեղա-

նը» (ՍխՀ, 299)։ «Իր այդ կեցվածքից և թերևս նկարվելուց շփոր-ված-ճաշվող հայացքից երևում էր գյուղացին» (ՍՉ, 5, 88)։ «Ու կանգնել եմ ես՝ Ոտքերս ամուր հողի մեջ մխած Ու գլուխս տաք խառնարաններում Անցած ու գալիք անթիվ օրերի» (Չ, 267)։

Բաղհյուսական շաղկապներով կարող են կապակցվել նաև երկու (կամ ավելի) հարակատար դերբայ՝ գոյականի լրացման դերում։ Այսպես, կարելի է ասել տանջված ու չարչարված մարդ. հոգնած ու տանջված մշակ, կատարված և վերջացած դեպքեր:

Սրանց հետ չպետք է շփոթել զուգաբայական հարադրական բարդությունները (որոնք կազմված են երկու բայերից), ինչպես՝ տարած եա բերած (անբախտ) աղջիկ (ՀԹ), կորած գնացած բան և այլն։

Սակայն հնարավոր է, որ երկու հարակատար դերբայ միացած լինելով և, ու շաղկապներով՝ նույն գոյականի լրացում չլինեն։ Օրինակ՝ «Ալեկոծվում էր անտառը հուզված ու ոսկեզօծված գլուխն օրորում» (ՀԱՀԵՄ, 312)։

Նույնպես իրար մոտ դրված երկու հարակատար դերբայ կարող է նույն պաշտոնը չունենան, համադաս չլինեն։ Օրինակ՝ «Հերոսություն, փառքի մի ճանապարհ անհաս, Հիմա դարձած անցած օրերի երգ» (Չ, 433)։ Այս նախադասության մեջ դարձած և անցած հարակատար դերբայները իրար մոտ են դրված, սակայն տարբեր պաշտոն են կատարում. անցած-ը օրեր գոյականի որոշիչն է, իսկ դարձած-ը՝ ճանապարհ գոյականի։

Դիտողություններ հարակատար դերբայով արտահայտված որոշչի շարադասության վերաբերյալ.— Հարակատար դերբայ որոշիչն ունի ոչ միայն նախադաս կիրառություն (օրինակների մեծ մասում այն նախադաս էր)։ Կան դեպքեր, երբ այն լրացյալից անջատվում է այլ բառերով, ինչպես և հետադաս է դրվում կա՛մ անմիջապես լրացյալից հետո, կա՛մ այլ անդամներից հետո։

Առհասարակ գոյականի որոշիչների հետադաս գործածությունը պայմանավորված է ինչպես գեղարվեստական ստեղծագործության տեսակով, այնպես էլ նախադասության կառուցվածքով։ Մասնավորապես հարակատար դերբայով արտահայտված որոշչի մասին պետք է ասել, որ այն դրվում է մյուս որոշիչներից առաջ, որովհետև վերջիններս դերբայից առաջ դրվելու դեպքում կարող են դիտվել դերբայի լրացումների լրացում։ Այսպես, ասում ենք «ձյունով ծածկված հարթ տարածություն», որտեղ ծածկված որոշիչը դրված է հարթ որոշչի առաջ, որպեսզի վերջինս չշփոթվի

ձյուն բառի որոշչի հետ (եթե ասեինք, «հարթ ձյունով ծածկված տարածություն», ապա կստացվեր, որ նուրբ որոշիչը վերաբերում է ձյունով գոյականին, որը ծածկված դերբայի կողմնակի անուղղակի խնդիր լրացումն է)։

Այդպիսի դեպքերում սովորաբար այդ որոշչից հետո լինում է արտասանական դադար՝ նշելու այդ երկու բառերի (նուրբ և ձյունով) քերականական կապ չունենալու հանգամանքը։ Իսկ սա խոսքի մեջ առաջացնում է կտրտվածություն, խանգարում նրա սահունությունը։ Այս օրինաչափությունը հատուկ է արձակի լեզվին։

«Ասլանի այգին շրջապատի ամայության մեջ նման էր բարձր պարիսպներով եզերված կանաչ օազիսի» (ՍխՀ, 138)։ «Իրենց ընդարձակ այգում շինել էր երկու սենյակից բաղկացած մի համեստ բնակարան» (ՆԴ, 1, 99)։ «Նա նստած էր թղթերով, թղթապանակներով, գրքերով և անթիվ մանր-մունր բաներով ծանրաբեռնված ահագին գրասեղանի առջև և գրում էր» (ՆԴ, 1, 174)։

Չափածո երկերում ևս պահպանվում է այս օրինաչափությունը։

«Ոչ օրենք գիտի, ոչ կարգն ու լեզուն, Բերանը կապած սարի անասուն» (ՀԹ, 2,40)։ «Մի՛ տրտմիր, Անուշ, մի՛ լինիր համառ, Մեր ձեռքով հանած մի անմիտ վիճակ» (ՀԹ, 2, 54)։ «Եվ իջևանիր այն պղնձացած շեկ ժայռերի տակ, գագաթների մոտ» (Իս., 2, 49)։ «Ճերմակ մեղմությունն է փռում ձորերն ի վար Եվ մաքրության ճերմակ հրապույրը Լեռնաշխարհի քարե եղջյուրներից կախված Այս առաջին ձյունի վարագույրը» (ՀՍՀԵՄ, 13)։ «Չեմ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրքերը մեր» (Չ, 48)։ «Կարծես քաղաք չտեսած այն պատանին եմ նորից» (ՀՍՀԵՄ, 318)։ «Ո՞վ է հոգնած իմ հոգու մեջ Այսքան այրվող երգեր փռում» (ՄՄԼ, 89)։

Սակայն ինչպես արձակում, այնպես էլ չափածոյում հաճախ են կազմվում այնպիսի կապակցություններ, որոնցում դերբայը այլ լրացումներից հետո է դրվում։ «Մեր հին սազի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում» (Չ, 48)։ «Իմ կարոտած սրտի համար ոչ մի ուրիշ հեքիաթ չկա» (Չ, 48)։ «Պղտոր լույս էր սփռում նրանց հոգատանջ, քրտնած երեսներին» (ՆԴ, 1, 68)։ Սրանցում լացակումած, կարոտած, քրտնած դերբայ որոշիչները դրվել են լրացյալից անմիջապես առաջ մի դեպքում բանաստեղծական չափի պահանջով, իսկ արձակում՝ այլ պատճառով։

Հաճախ չափածոյում բանաստեղծական չափի կամ հանգա-

վորման (կամ երկուսի՝ միասին) նպատակով հարակատար դերբայով արտահայտված որոշչի և որոշյալի միջև կարող են ընկնել այլ անդամներ։ Սա կարող է լինել և՛ նախադաս, և՛ առավելապես ետադաս գործածության դեպքում։

«Նրանք ձիեր են ինձ թվում արշավանքում արձանացած» (ՀՍՀԵՄ, 253)։ «Մանկությունն է իմ փշրված Մղկտալով կանգնում իմ դեմ» (ՄՄԼ, 28)։ «Այգի ունես թև կանաչած, Մոլախոտից հողն ազատիր» (ՄՄԼ, 111)։ «Չար խոսքեր չկան աշխարհում ասված» (ՄՄԼ, 238)։ «Այդ գրքերը խոհի ամրոցներ են գոցած» (Չ, 162)։ «Հուշ են դարձել հիմա նանգած» (Չ. 34)։

Չափածո ստեղծագործությունների լեզվին բնորոշ են ետադաս որոշիչներով կապակցությունները, որոնցում լրացյալին անմիջապես հաջորդում է լրացում հարակատար դերբայը։

«Եվ այրեցի երգերս մի երեկո գրած» (Չ, 124)։ «Եվ քո երգերը երեկ երգած Դեռ շուրթերին են այնտեղ ազդում» (Չ, 330)։ «Ի՞նչ պիտի տար սրտին քո, Քո հանճարին որբացած» (Չ. 508)։ «Իմ լավ գրքեր դեռ չգրված, Իմ խոստումներ դեռ չտրված, Կարոտների ծով անհատակ՝ Իմ ցնորքներ դեռ չգրված» (ՄՄԼ, 43)։ «Դու Վարդանի սուրը Մեր օրերին հասած» (ՄՄԼ, 33)։

Հարակատար դերբայով որոշիչը երկու գոյականի մոտ (նրանցից անմիջապես առաջ, նրանց միջև, հետո) դրվելիս երբեմն կարող է վերաբերել երկուսին էլ, և այս դեպքում կապակցությունների մեկնաբանությունը կամայական կլինի։ Այսպես՝ «Քիչ է մնում թե շփոթես Կոտրած պապիդ փափախի հետ» (ՀՍՀԵՄ, 323). «Դու Չարենցի սրտում Այրված տողեր երգի» (ՄՄԼ, 34), «Դու թուխ ցորեն հատիկ ճամփում ընկած հասկից» (ՄՄԼ, 34) նախադասություններում կոտրած, այրված, ընկած դերբայները կարող են լինել համապատասխանաբար պինդ և փափախի, սրտում և տողեր, հատիկ և հասկից գոյականների լրացում (կոտրած պապիդ և կոտրած փափախի, այրված սրտում և այրված տողեր, ընկած հատիկ և ընկած հասկից)։

Երկրորդ և երրորդ նախադասություններում այրված, ընկած դերբայները տողեր, հատիկ գոյականների լրացում համարվելիս սրտում և հասկից գոյականները դիտվում են իբրև դերբայի լրացում (սրտում այրված, հասկից ընկած)։

Ժամանակակից հայերենում քիչ չեն այն դեպքերը, երբ նախադասության մեջ հնարավոր չէ պարզել, թե նախադասության ի՞նչ անդամ է դերբայը՝ որոշի՞չ, թե՞ պարագա։ Իսկ դրա պատճառը, նախ, այն է, որ տվյալ ձևը շարահյուսական բազմազան

կիրառություններ ունի, երկրորդ՝ հայերենի շարադասության համեմատական ազատ լինելը, մի բան, որ առանձնապես բնորոշ է որոշչի և պարագայի համար:

Ինչպես որոշիչը, այնպես էլ պարագան նախադասության մեջ կարող են դրվել լրացյալից և՛ առաջ, և՛ հետո, լրացյալից կարող են անջատվել այլ անդամներով: Հենց այս հանգամանքն էլ պայմանավորում է հարակատար դերբայի շարահյուսական դերի միմնաբանության դժվարությունը: Այսպես, մի շարք նախադասություններում այն կարող է դիտվել և՛ որոշիչ, և՛ պարագա: Այս երևույթն առանձնապես ցցուն է պոետական խոսքում:

«Հեռվում երևում էր Մասիսը՝ կապույտ շղարշ հագած» (Զ, 484): «Կանչում էր, կանչում ճամփան անմեկին՝ Ոլորապտույտ մեր առաջ փռված» (Զ, 219): «Պարիսպներով շրջապատված Բերդի պես էր ձեր տունը հին» (ՀԱՀԵՄ, 255): «Դեռ մնում է այն լոռենին Բրշված գարնան ծաղիկներով» (ՀԱՀԵՄ, 280): «Տես, ինչպես է նայում խոժոռ ժայռը Նորքի ձորին թիկնած» (ՄՄԼ, 52):

Բերված նախադասություններում հագած, փռված, շրջապատված, բրշված, թիկնած դերբայները կարող են համապատասխանաբար համարվել և՛ Մասիսը (կապույտ շղարշ հագած Մասիսը), ճամփան (Ոլորապտույտ մեր առաջ փռված ճամփան), բերդի (պարիսպներով շրջապատված բերդի), լոռենին (գարնան ծաղիկներով բրշված լոռենին), ժայռը (Նորքի ձորին թիկնած ժայռը) գոյականների որոշիչ, և՛ երևում էր (երևում էր կապույտ շղարշ հագած), կանչում էր (կանչում էր ոլորապտույտ մեր առաջ փռված), էր (բերդի պես էր պարիսպներով շրջապատված), մնում էր (մնում էր գարնան ծաղիկներով բրշված), նայում է (նայում է Նորքի ձորին թառած) ստորոգյալների լրացում (պարագա):

Այս նախադասություններում, անկախ դերբայի պաշտոնից, անհրաժեշտ է տվյալ լրացումից առաջ բութ կամ ստորակետ դնել, քանի որ այն տրոհված է (ինչպես ճիշտ կերպով դրված է առաջին և երկրորդ նախադասություններում՝ նրանց հատկապես տրոհված լինելու համար, անկախ այն բանից, թե դրանք որոշի՞չ են, թե՞ պարագա): Մինչդեռ երրորդ նախադասության մեջ եթե շրջապատված որոշիչ է, ոչ մի կետ պետք չէ դնել, իսկ եթե հեղինակը պարագա դիտեր, պետք է բութ դներ: Չորրորդ և հինգերորդ նախադասություններում երկու դեպքում էլ (որոշիչ կամ պարագա դիտելու դեպքում) բութ պետք է լոռենին, ժայռը բառերի վրա (քանի որ հատկապես տրոհված անդամ են):

Եթե այս կարգի կապակցությունները երկիմաստ են, կարող են մեկնաբանվել երկակի, ապա կան շատ դեպքեր էլ, երբ գոյականից անմիջապես առաջ դրված հարակատար դերբայը անառարկելիորեն պարագա լինելով՝ չի առանձնացվել հեղինակի կողմից (անհիմն ձևով): «Դեռ գյուղին չհասած կածանը իջնում էր մի փոքրիկ, կանաչ հարթավայր» (ՍԽՀ, 200): «Շուտ պիտի ճանապարհվեինք, որ չմթնած գյուղ հասնեինք» (ՍԽՀ, 243): «Ես մանկությունից սուզված գրքերում Եկել հասել եմ Այն այրող կյանքի արևոտ հեռուն» (ՄՄԷ, 264):

Այս նախադասություններում չհասած կապ չունի կածանը գոյականի հետ, թեև առաջ է դրված (այն պարագա է), չմթնած ձևը գյուղ բառի որոշիչը չէ, իսկ սուզված՝ գրքերում (ընդհակառակն, գրքերում ձևն է սուզված դերբայի լրացումը): Անհրաժեշտ էր չհասած, չմթնած դերբայների և գրքերում (սա ընկել է լրացյալից հետո, պիտի լիներ գրքերում սուզված) գոյականի վրա բութ դնել: Իսկ հեղինակային բնագրում կետադրական նշանի չգործածելը դրդում է դրանք որոշիչ դիտել, մի բան, որ սխալ կլիներ:

Դիտողություններ հարակատար դերբայ լրացումով կապակցությունների ներքին կառուցվածքի վերաբերյալ.— Ածականի նման՝ հարակատար դերբայը ևս կարող է դառնալ մի շարք այնպիսի գոյականների լրացում, որոնք նախադասության մեջ շարահյուսական ինքնուրույն դեր չունեն, այլ լրացման հետ միասին են կատարում մեկ անդամի պաշտոն: Դրանք տեղ, ժամանակ ցույց տվող մի շարք գոյականներ են, ինչպես և գործիական հոլովաձևեր, որոնք, ինչպես հայտնի է, երբեմն լրացման հետ մի ամբողջություն են կազմում: Այդպիսի կապակցություններ են պարունակվում հետևյալ նախադասություններում. «Պառկած տեղն էլ հանգիստ չէր կարողանում մնալ Դավիթը» (ՆԴ, 1, 51): «Մի մարդու առջև բացել է սիրտը Գիշերը՝ խելքից ընկած ժամանակ» (Զ, 54): «Նա թթված դեմքով բացեց իր հսկա հաշվեմատյանը» (Զ, 454): «Հասրաթյանը շրջկոմից եկավ փչացած տրամադրությամբ» (ՍԽՀ, 140): «Հասրաթյանը գյուղ վերադարձավ բոլորովին խռոված սրտով» (ՍԽՀ, 140): «Այգիների մեջ թաքնված էին ծղոտե կտուրներով և սպիտակ ներկած պատերով խրճիթները» (ՍՇԶ, 676): «Եղբայրներ են ծնված օրից Աշխարհում հայն ու վրացին» (ՀՍՀԵՄ, 197):

Այստեղ շարահյուսական մեկ միավորի՝ նախադասության

մեկ անդամի դեր ունեցող կապակցություններում լրացյալ են դառնում ժամանակի իմաստ ունեցող ժամանակ, օր, *ինչպես և այլ նշանակություն ունեցող որոշ գոյականների գործիական հոլովաձևեր* (սրտով, տրամադրությամբ, պատերով)*։ Բանն այն է, որ նույն գոյականները միշտ չէ, որ նման դերում են հանդես գալիս։ Կան դեպքեր, երբ այդ գոյականները նախադասության մեջ ինքնուրույն պաշտոն ունեն։*

«Եկել է այդ սպասված պահը» *(ՍԽՀ, 476)։ «Ախ, սև ըլի, Զըլլի, փլի* ծնված օրը աղջկա. *Ցավ ու խնդում* Փակված սրտում *Ծիծաղ չկա, ախ, չկա» (ՀԸ, 1, 215)։*

Հարակատար դերբայով լրացումով որոշ կապակցություններ դարձվածքի են վերածվել, ինչպես՝ ասած բան *տիպի կապակցությունները* (բախտ ասած բան, ուրախ տրամադրություն ասած բան):

«Ծիծաղ, ուրախ տրամադրություն ասած բանը *կարծես բնավ ծանոթ չէր նրան» (ՆԴ, 1, 4)։ «*Բախտ ասած բանից *բան չհասկացանք» (ՀԱՀԵՄ, 321)։*

Գոյականի լրացումը ենթակայական դերբայով.— *Ենթակայական դերբայը, որը ցույց է տալիս գործողություն կատարողի բայական հատկանիշ, գաղափար*[1]*, ժամանակակից հայերենում ունի միայն շարահյուսական դեր*[2]*։ Ենթակայական դերբայի շարահյուսական դերը ևս, հարակատար դերբայի նման, երկու կարգի է լինում։ Մի դեպքում այս դերբայը, իբրև վերջին հաշվով հատկանիշ (գործողություն կատարողի բայական հատկանիշ) ցույց տվող բառ, կարող է կատարել ածականի պաշտոն։ Սակայն անհրաժեշտ է իմանալ, որ ենթակայական դերբայը ի վիճակի է հանդես գալու ածականին բնորոշ միայն երկու կիրառությամբ՝ որոշչի և ստորոգելիական վերադրի։ Իսկ ածականի պարագա պաշտոնը հատուկ չէ այս դերբային։*

Գոյականի լրացման դերում հանդես եկող ենթակայական

---

[1] *Տե՛ս* Ա. Աբրահամյան, *Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, 1953, էջ 227—228։*

[2] *Ենթակայական դերբային նաև ձևաբանական դեր է հատկացվում որոշ քերականների կողմից։ Այդ դերբայով կազմված են համարվում այսպես կոչված սահմանական եղանակի ապառնի և անցյալ ապառնի ժամանակները* (գնացող եմ, ես, է, ենք, եք, են, էի, էիր, էինք, էիք, էին)*։ Տե՛ս* Պ. Պողոսյան, *Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում, Երևան, 1959, էջ 103—115։*

դերբայը կարող է արտահայտել միայն որոշիչ հարաբերություն։ Սովորաբար այն գոյականից առաջ է դրվում։

«Երևում է հեռու-հեռու կարմիր լույսով վառվող մի գյուղ» (Զ, 254)։ «Գիշերը մոլեգնող քամին դադարել էր» (ՍԽՀ, 152)։ «Հեռվում երևացող կիրճի խորքում հազիվ էր նշմարվում Որոտանի ճերմակ թելը» (ՍԽՀ, 178)։

Քանի որ ենթակայական դերբայը ևս հատկանիշ ցույց տվող բառ է, ուստի զարմանալի չէ, երբ այն հոմադաս է լինում ածականին։

«Եվ ապա, երբ դառնում է օրը ծառաչուն, բեղացող ցերեկ» (Զ, 404)։ «Եվ խորասուզվեց իր մանրակրկիտ, Անվերջ, չհատնող հաշիվների մեջ» (Զ, 454)։ «Ուլայց կալի կանչող հնչուն չեփոր» (Զ, 493)։

Այս հանգամանքն է պատճառը, որ հաճախ ենթակայական դերբայը ածականի հետ հանդես է գալիս բաղհյուսական կապակցությամբ։ Ընդորում այս դեպքում նրանք կապակցվում են կա՛մ շաղկապներով (և, ու), կա՛մ շարահարությամբ, դրանով իսկ այդպիսի կապակցությունը մոտենում է հարադրական բարդություններին։ «Մնաս բարով, քաղաք դու մեծ, Քաղաք զգաստ ու մաքառող» (Զ, 95)։ «Հավիտյան վազող ու միշտ ժրաջան՝ խոտերի միջից առվակը խնդաց» (Զ, 221)։ «Կան լույսեր, լույսեր, Վառվող ու վարար» (ՄՄԼ, 270)։

Ածականի նման, ենթակայական դերբայը ևս կարող է կապակցվել շարահյուսական ինքնուրույն պաշտոն չունեցող գոյականի հետ, և այդ դեպքում լրացումն ու լրացյալը միասին են կատարում նախադասության մեկ անդամի դեր։

«Առաքելություն թույլ հնչող տոնով պահանջեց կերակրել իրեն» (ՄՇՋ, 73)։ «Ծխացող հոգով գնեցի ես այն Երկու ծաղիկը տխուր ժպտացող» (ՄՄԼ, 135)։

Առաջին նախադասության մեջ թույլ հնչող տոնով կապակցությունն է մեկ անդամ (ձևի պարագա), երկրորդում՝ ծխացող հոգով (ձևի պարագա)։ Ինչպես հայտնի է, նման կապակցություններ կազմվում են մեծ մասամբ գոյականի գործիական հոլովով։

Ժամանակակից հայերենում կան նաև ենթակայական դերբայ լրացումով որոշ կապակցություններ, որոնք դարձվածքի արժեք ունեն։ Այդպես են՝ հեռու մահ եկող, մեջ ուտող մարդ և այլն։ Օրինակ՝ «Հեռու մահ եկող, մեջ ուտող մարդ է էդ մեր նախագահը» (ՍԽՀ, 556)։

Ենթակայական դերբայը կարող է դառնալ նաև ետադաս որոշիչ: Այդ գործածությունը արձակ ստեղծագործություններում սովորական չէ: Այսպիսի կապակցությունների ավելի հաճախ հանդիպում ենք չափածո երկերում:

«Այրվում է արևը եփող» (Չ, 284): «Առաջնորդվում ես, գնում արթուն, Հեռքերով մտքի առաջնորդող» (Չ, 475): «Հանկարծ աչքին ընկավ մի գրուպյան գերող» (Չ, 485): «Քեզ իմ սերը ծխացող» (ՄՄԼ, 31): «Լցրիր կյանքս երգերով տաք, Բառերով թեժ, հույզով այրող» (ՄՄԼ, 60): «Դիմում ենք կյանքին փակուղուց հանող» (ՄՄԼ, 201):

Կան նաև դեպքեր, երբ լրացումը լրացյալից անջատվում է այլ անդամներով: Սա ավելի շատ լինում է լրացման ետադաս գործածության դեպքում: Լրացման և լրացյալի անջատումը երկու կարգի է լինում: Մի դեպքում լրացյալի և լրացման միջև ընկնում են կա՛մ այլ լրացումներ, կա՛մ այլ բառեր:

«Իզուր է սիրտը քո պաղպաղում Երկրի հանդեպ մեր վերածնվող» (Չ, 392): «Դու մոր նման միշտ ներող» (ՄՄԼ, 31): «Բայց աչքերում վճիռ մի չմարող» (Չ, 433):

Երբեմն հանդիպում են այնպիսի կապակցություններ, որոնցում լրացումն իր լրացյալից անջատվում է ստորոգյալով և այլ անդամներով: Այս դեպքում կապակցությունը դժվար ըմբռնելի է լինում, և նախադասության այսպիսի կառուցվածքը կոպտում է խոսքը: Այս շարադասությունը այնքան էլ հարազատ չէ հայերենի ոգուն, ուստի պետք է խուսափել դրանից: Իհարկե պետք է նշել, որ հիշյալ շարադասությունը արձակ խոսքում անհեթեթություն կստեղծի, իսկ չափածոյում այս կամ այն կերպ հասկանալի է. բանաստեղծն ստիպված է չափի, հանգավորման նպատակով դիմելու լրացյալն ու լրացումը բայով անջատելու քիչ հանձնարարելի միջոցին:

«Դու այդ ուժից ես փախել ելնող» (Չ, 392): «Դու պանդուխտի տարագիր Սիրտն ես երգել կարոտող» (Չ, 504): «Վատ քննություն տալու նման Վարկաբեկող չկա չարիք» (ՄՄԼ, 77): «Երեխա եմ դառնում ես Թեթև թռչող ու պարող» (ՄՄԼ, 98): «Որ մեր դեմ անթիվ ճամփա է բացում Դեպի ցանկալի բարձունքը տանող» (ՄՄԼ, 201):

Եթե ենթակայական դերբայով արտահայտված որոշչին նախորդում է գոյականով (կամ այլ բառերով) դրված լրացում, ապա դրանց միջև անհրաժեշտ է տրոհության նշան, որպեսզի այլ բառով արտահայտված լրացումը չդիտվի ենթակայական

դերբայի լրացում։ Այսպես, «Օրինակ էր բերում Հարևան Օսանի տղա՝ Թաթախ մաճ անող Ցականին» (ՆԴ, 1, 76) նախադասության մեջ գոյականով արտահայտված տղա որոշիչը թաթախ մաճ անող դերբայական դարձվածից անջատվել է բութով՝ նրա որոշիչը չդիտվելու նպատակով։ Սակայն որոշ հեղինակներ հաշվի չառնելով այս կարգը, չեն տրոհում այդպիսի լրացումները։ Այսպես, «Լճակի կողմից լսվում էր շնագայլի աղերսանքի նմանող կաղկանձը» (ՍԽՀ, 676) նախադասության մեջ անհրաժեշտ էր շնագայլի բառի վրա բութ դնել, որպեսզի այն չհամարվի աղերսանքի գոյականի կամ նմանող դերբայի լրացում, այսինքն չկազմվեն շնագայլի աղերսանքի կամ շնագայլի նմանող չեղած կապակցությունները, այլ հեղինակի ցանկացած շնագայլի կաղկանձը (և աղերսանքի նմանող կաղկանձը)։

Ի վերջո, անհրաժեշտ է նշել ենթակայական դերբայի սխալ գործածությունը գոյականի լրացման դերում։ Որոշ հեղինակների մոտ ենթակայական դերբայը դրվում է այնպիսի գոյականի վրա, որին այն բնորոշ չէ։ Այսպես, ի՞նչ կնշանակի մաճ անող պայուսակ կապակցությունը։ Ս. Խանզադյանի «Մանուշը բաց արեց հետը մաճ անող փոքրիկ պայուսակը» (ՍԽՀ, 536) նախադասության մեջ մաճ անող լրացումը պայուսակ գոյականի որոշիչ է դարձել, սակայն կապակցությունն անիմաստ է, քանի որ մաճ անող դերբայը ներգործական սեռի է, որը կարող է դըրվել միայն ակտիվ գործողություն կատարող գոյականի վրա, իսկ պայուսակը չի կարող գործողություն կատարել, այլ գործողության առարկա կարող է լինել։

7. ԳՈՅԱԿԱՆԻ ԼՐԱՑՈՒՄԸ ԿԱՊՈՎ ՈՒ ԿԱՊԻ ԽՆԴՐՈՎ

Գոյականի բառակապակցությունների բարդ ու բազմազան համակարգի մեջ յուրահատուկ տեղ ունեն կապային լրացումներով կառուցվածքները։ Ինչպես հայտնի է, կապերը, իբրև սպասարկու բառեր, նախադասության մեջ կատարում են շարահյուսական դեր՝ կապելով լրացումը լրացյալին բոլոր այն դեպքերում, երբ շարահյուսական տվյալ հարաբերության արտահայտման համար ձևաբանական միջոց չկա, այսինքն բառի քերականական փոփոխությամբ այդ հնարավոր չէ։ Կապերի շարահյուսական այդ դերով պայմանավորված է նրանց գործածության բազմազանությունը խոսքի մեջ. որքան շատ են ձևաբանական միջոցներով (հոլովական ձևերով) չարտահայտվող հարա-

քերությունները, այնքան անհրաժեշտ են կապերը լրացական հարաբերությունները արտահայտելու համար։ Մեր քերականագիտության մեջ կապերն ուսումնասիրված են իրենց իմաստի, ինչպես և կազմության ու այլ խոսքի մասերի հետ ունեցած առնչակցության տեսակետից[1]։ Սակայն հանգամանալից ուսումնասիրություն չկա կապերի և կապի խնդիրների շարահյուսական-ֆունկցիոնալ կիրառությունների վերաբերյալ, այսինքն չեն բացահայտված կապերի ու նրանց խնդիրների լրացական բազմազան հարաբերությունները, այն, թե ինչ խոսքի մասերի և ինչպիսի լրացումներ են դառնում դրանք։

Հայտնի է, որ կապը նախադասության մեջ ինքնուրույն շարահյուսական ֆունկցիա չունի, այլ իր խնդրի հետ միասին է կատարում շարահյուսական մեկ պաշտոն, դառնում նախադասության մեկ անդամ։ Իր խնդրից առանձին կապը զուրկ է շարահյուսական ֆունկցիոնալ հատկությունից։ Միաժամանակ մեր քերականագիտության մեջ ընդունված է, որ կապերը հիմնականում բայի լրացումներն են կապում նրա հետ։ Անշուշտ, այս դրույթը ճիշտ է։ Սակայն անհրաժեշտ է հարցին մոտենալ կոնկրետ։ Կապերի ֆունկցիոնալ-շարահյուսական կիրառությունները ճիշտ մեկնաբանելու համար անհրաժեշտ է ելնել այն բանից, թե ինչ ծագում ունեն կապերը (քանի որ դրանք, իբրև սպասարկու բառեր, պատմականորեն առաջացել են գոյականներից, ածականներից, մակբայներից և այլն)։ Գոյականից, մակբայից առաջացած կապերը հավասարապես կարող են կապել և՛ բայի, և՛ գոյականի լրացումները։ Դա հասկանալի է. եթե գոյականը թեք հոլովներով (բացի սեռականից), մակբայը բայի լրացումներ են, ապա և նրանցից գոյացած կապերն էլ կարող են կապել բայի լրացումները, մինչդեռ ածականը կարող է դառնալ և՛ գոյականի, և՛ բայի լրացում, հետևաբար և ածականից ծագած կապերն էլ կարող են կապել և՛ բայի, և՛ գոյականի լրացումները։

Սակավաթիվ այն կապերը, որոնք ծագում են ածականից, ի վիճակի են կապելու նաև գոյականի լրացումները։ Այդ կապերից են նման, մոտ, կից, առընթեր, հակառակ, համաձայն,

---

[1] Մ. Աբեղյան, Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912, Վ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957, Մ. Մարգարյան, Արդի հայերենի կապերը, Երևան, 1955, Ս. Աբրահամյան, Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1965։

համապատասխան, համեմատ, հավասար: Դրանցով կարող են կազմվել բազմաթիվ կապակցություններ, ինչպես՝ **մեկի նման ընկեր,— բարեկամ,— մարդ,— ուսուցիչ,— քաղաքացի, խելքի մոտ բան, խելքի մոտ գործ, հիմնարկին կից հանձնաժողով, կոչումին համեմատ պաշտոն,— դիրք** և այլն։

«**Երկյուղի նման** մի **զգացմունք** լցրել էր նրա սիրտը» (Մուր., 1, 323)։ «Նա էլ **ձեզ նման** մի **ծաղիկ** էր» (ԱՐՊ, 482)։ «Դա **խելքի մոտ բան** չի» (ԱՐՊ, 482)։ «Որ եղել է դարերում մի **սարսափի նման կին**» (Չ, 36)։

Ինչպես երևում է բերված օրինակներից, այս կապակցություններում լրացումն արտահայտում է համապատասխանություն, նմանություն հարաբերություն այնպես, ինչպես բայի լրացումները բայի հետ կապվելիս է արտահայտում։

Գոյականի լրացումները կապում են նաև գոյականի անփոփոխ ձևերի քարացմամբ առաջացած կապերը՝ **պես, չափ**: Դրանցով կարող են կազմվել՝ **մեկի պես մարդ,— տղա,— աղջիկ,— ընկեր,— եղբայր, մի բանի չափ առարկա,— սար,— մարդ** և այլն։

«Եթե բոլոր բժիշկներն **ինձ պես մարդիկ** լինեին, աշխարհիս երեսին այսքան հիվանդ չէր լինի» (ՆԴ, 1, 157)։ «Դուք **Որոտանի պես գետ** ունեք» (ՍԽՀ, 126)։ «Ո՞վ կիմանա նրա **սարի չափ ցավը**» (ՍԽՀ, 522)։ «**Մուկիկի պես մարդը** մեռավ» (ՀԲ, 1, 255)։

Գոյականի լրացումները կապում է նաև **առանց** կապը, որը սովորաբար իր բացասման իմաստով կոչված է բայի լրացումները նրա հետ կապելու («**Առանց զենքի, Առանց զորքի** Շահերի դեմ **կգնար**»— ՀԲ, 2, 136)։ Սակայն խոսակցական լեզվի, բարբառների ազդեցությամբ **առանց** կապը երբեմն կատարում է **ան-**ժխտական նախածանցի դեր (իմաստով մոտ լինելով), և այդ է պատճառը, որ նրա մոտ կապի խնդիրը հազվադեպ արտականի փոխարեն հայցականաձև է լինում։ Այս կապի հետ դրված լրացումները սովորաբար ետադաս են լինում, թեև կան նաև նախադաս գործածության դեպքեր։

«Մարդը դառնում է զուտ կենդանական մի **մարմին՝ առանց հույզերի, առանց նպատակների**» (ՆԴ, 3, 361)։ «Կյանքով իմացա, իմացա էլի, Որ բոլորս էլ **զինվորներ** ենք մենք, Բայց **առանց սապոգ, առանց շինելի**» (ՄՄԼ, 120)։ «Մի՞թե ամենուրեք և **առանց ընչացքի քահանա** կա աշխարհում» (Մուր., 1, 84)։ «Նա ոչ թե

սովորական սրիկա է, այլ առանց դավանանքի մարդ» (ՄԱՊՀՋ, 278)։

Սրանցից տարբերվում են այն կապակցությունները, որոնցում լրացյալը գոյականաբար գործածված ածականն է, որի լրացումները, ինչպես հայտնի է, կարող են նույնպես կապով և կապի խնդրով արտահայտվել, սակայն որը գոյականաբար գործածվելիս էլ կարող է ունենալ նշված կապերով ու նշված խնդրով լրացում։ Այս դեպքում լրացումը երկու մեկնաբանություն կունենա. այն կարող է լինել և՛ լրացյալի ածականական բնույթին համապատասխան, և՛ գոյականական բնույթի պահանջով դրված լրացում։ Այսպես, ունենք, մեկի պես միամիտներ, մեկի նման երիտասարդներ,— խենթեր և այլն։

«Պետք է լավ ճաշ տալ քեզ պես ճարտարին» (ՂԱ, 385)։ «Ծնճռան ֆրազներով խելքահան կարելի է անել միայն Մարուքյանի պես միամիտներին» (ՆԴ, 3, 423)։ «Եթե միայն Մուկուչի նման խեղճերը լինեին, բանը բուրդ կլիներ» (ԱՐՊ, 75)։

Այս կապակցություններում ևս լրացումն արտահայտում է համապատասխանության, համեմատության հարաբերություն, ինչպես էլ մեկնաբանելու լինենք բաղադրիչների փոխհարաբերությունը։ Այսպես, եթե Մուկուչի նման խեղճերը դիտենք իբրև խեղճ ածականի համեմատության աստիճան կազմող կապակցություն, դարձյալ լրացումը համապատասխանության հարաբերություն է արտահայտում։ Կամ եթե այն դիտենք իբրև խեղճերը բառի գոյական բնույթի պահանջով դրված լրացում, ապա դարձյալ նույն հարաբերությունն է արտահայտում։

Կենսունակ ու զարգացող են այն կապակցությունները, որոնք կազմվում են բայական ծագում ունեցող գոյականներով և կապով ու կապի խնդրով։ Այս դեպքում կապային լրացումը բխում ոչ թե լրացյալի գոյականական, այլ բայական իմաստից։ Իմաստային տեսակետից էլ լրացյալի և լրացման հարաբերությունները նույնն են, ինչ որ համապատասխան բայի ու իր լրացման հարաբերությունն է լինում։ Բայական ծագմամբ գոյականների կապային լրացումները երկու տեսակ են լինում։ Մի դեպքում լրացյալ գոյականը գործածվում է ոչ ստորոգելիական վերադրի պաշտոնով (այսինքն շփման կետեր չունի բայականության հետ)։ Իսկ մյուս դեպքում այն ստորոգելիական վերադիր է (կամ ենթակա է՝ էական բայի մոտ), որի մոտ կապային լրացումը կարող է մեկնաբանվել երկու կերպ. կա՛մ իբրև տվյալ լրացյալ բառի գոյականական լրացում (անկախ ծագումից, թեև լրացումը

նրա մոտ հենց լրացյալի բայական իմաստի պահանջով է դրված), կա՛մ լրացյալ բառի ստորոգելիական վերադրի պահանջով (բային մերձավոր անդամի)։

Առաջին ենթատեսակի կապակցությունները կազմվում են բազմաթիվ ու բազմապիսի գոյականներով (անկախ նրանց շարահյուսական պաշտոնից՝ համարյա բոլոր կապերի միջոցով)։ Դրանցից կարելի է նշել՝ հանդիպում մեկի (մի բանի) հետ, վերաբերմունք մեկի (մի բանի) նկատմամբ, հարձակում մեկի (մի բանի) վրա, վիճաբանություն մեկի հետ, զրույց ընկերոջ հետ, առաջխաղացում դեպի հյուսիս, փախուստ դեպի լեռները, բողոքը մեկի դեմ,— մեկի մասին, ամուսնություն մեկի հետ, պատմություն մի բանի մասին *և այլն։*

«Նա հիշեց հոր պատմությունը *Մարության եղբայրների ժա*ռանգության մասին» *(ՆԴ, 3, 256)։ «Լրագրի մեջ հիշատակվում էր Արմենակ Մարությանի չարաչար* մահը *թրքական ահարկու* բանտի մեջ» *(ՆԴ, 3, 514)։ (Այս կապակցությունը կարելի է մեկնաբանել նաև իբրև կապի ու կապի խնդրի բուն լրացյալի զեղչումով կազմված՝* բանտի մեջ *(տեղի ունեցած)* մահը։ *«Իմ* ամուսնությունը նրա հետ *մի խոշոր սխալ էր իմ կողմից» (ՆԴ, 3, 536)։ «Հայերի* արտագաղթը դեպի Սովետական Միություն *Ամերիկայի հեղինակության անկման ցայտուն նախանիշ է» (ՌԱՌԵ, 178)։* «Պարսկաստանի հետ *բամբակի և գորգերի* առևտուր *ունեին» (Շիրվ., 3, 338)։* «Բանակցությունը Վարդանի վերաբերմամբ *վաղուց վերջացած կլիներ» (Շիրվ., 3, 447)։ «Չշարունակեց* խոսքը *նույն* հարցի շուրջը» *(ԱՐՊ, 271)։ «Դա ևս պայքար էր,* պայքար՝ կյանքի համար» *(ՎԱՀԳ, 152)։ «Եվ պատանին պատմեց իր* զրույցը *համալսարանի* քարտուղարի հետ» *(ՀԱՆՀ, 220)։ «Այդտեղ էր, որ* գյուղի մեջ *մի* պտույտից *հետո վարժապետը հրավիրեց մեզ նստելու» (ՎՓ, 4, 234)։ «Պատուհանից թագուհին դիտում էր* արևամուտը ծովի վրա» *(ՋԴԱՎ, 971)։*

Բերված բոլոր նախադասություններում լրացյալ գոյականը, որը բայական ծագման է լինում[1] (ամուսնություն–ամուսնանալ,

[1] *Բայական ծագում ասելով չենք հասկանում միայն պատմական զարգացման ընթացքում բայական արմատների անցումը անվանականին, այլ արդի էտապում բայի հետ որոշակի հարաբերակցություն ունեցողը։ Ընդ որում, կարող է պատահել, որ դրանց մի մասը իրոք այդպիսին լինի, ինչպես՝* աշխատանք–աշխատել, վերաբերմունք-վերաբերել *և այլն։ Հնարավոր է նաև, որ տվյալ գոյականի արմատից ավելի ուշ է բայ ստացվել, բայց այդ չի խանգարում տվյալ գոյականին՝ իր արմատակից բայի հետ ունեցած հարաբերակցությամբ ստանալու բային հատուկ*

արտագաղթ-արտագաղթել, առևտուր-առևտուր անել (առևտուր բառի բաղադրիչներն էլ բայ են՝ բայարմատ), բանակցություն-բանակցել, խոսք-խոսել, պայքար-պայքարել, արշավ-արշավել, վիճաբանություն-վիճաբանել, վիճել, զրույց-զրուցել), կապով ու կապի խնդրով լրացում է ստանում նույն հարաբերությամբ և նույն ձևով, ինչ որ նրա արմատակից բայը։

Փոքր-ինչ տարբերվում են այն կապակցությունները, որոնցում լրացյալը կատարում է ստորոգելիական վերադրի կամ էական բայով արտահայտված ստորոգյալ ունեցող նախադասության ենթակայի դեր (կամ, լինել և այլն)։ Այս կարգի կապակցությունները ևս սահմանափակ չեն. բազմաթիվ գոյականներ կարող են դառնալ լրացյալ։ Կապերը նույնպես սահմանափակ չեն։

«Ասես դա նրա համար անցողակի հանդիպում էր պատահական մարդու հետ» (ՍԶ, 5, 133)։ «Ինչ էլ լինի նյութը՝ երկու ամուսինների միջև խոսակցություն է վերջիվերջո» (ՀԱՆՀ, 274)։ «Դա զրպարտություն է նրա վերաբերյալ»: «Վիճաբանություն կար այդ դեպքի մասին»։

Բայական ծագմամբ մի շարք գոյականներ նախադասության մեջ երբեմն ունենում են իրենց արմատակից բայերից տարբեր կապերով արտահայտված լրացում։ Իսկ երբեմն էլ համապատասխան բայը կապային խնդրառություն չունի, մինչդեռ նրան արմատակից գոյականը կապով լրացում է ստանում։ Այսպես կազմվում են՝ սեր դեպի աշխատանքը,— դեպի պաշտոնը, վախ ապագայի վերաբերյալ,— մեկի նկատմամբ,— մի բանի մասին, համակրանք (հակակրանք) դեպի մեկը,— դեպի մի բան, հարգանք մեկի նկատմամբ, հետաքրքրություն մեկի (մի բանի) նկատմամբ,— դեպի մեկը (մի բան) և այլն։

«Ինքն է քարոզում սեր դեպի աշխատանքը» (Շիրվ., 3, 178)։ «Չէ՞ որ ձեր մոր, քրոջ ու բոլոր ազգականների հակակրանքը դեպի ինձ հենց այդ կետի վրա է հիմնված» (Շիրվ., 3, 284)։ «Տեսնելով որդու այդ բնազդական սերը դեպի դրամը ուրախանում էր» (Շիրվ., 3, 438)։ «Դպրոցականների մեջ օրեցօր աճում էր հետաքրքրությունը դեպի նոր կազմակերպվող ֆերման» (ՎԱՍԱ, 108)։ «Դեռ պատերազմից շատ առաջ էր սկսվել նրա սերը հանդեպ Հասմիկը» (ՄՇՋ, 566)։

լրացումներ։ Այդպես է, օրինակ, զրույց: Իսկ որոշ բառերի արմատի ծագումն այս տեսակետից պարզ էլ չէ, ինչպես, օրինակ, խոսք և խոսել (այս առթիվ մանրամասն տե՛ս Ս. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Երևան, 1962, էջ 70—119)։

Սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ երբեմն բայական ծագում ունեցող գոյականի՝ կապով լրացումը չի բխում լրացյալի բայական հատկանիշից, այլ թելադրված է նրա գոյականական իմաստով: Այսպես, երբ ասում ենք զզվանքի նման զգացում, *ապա այստեղ* զգացում *գոյականին ունի* զզվանքի նման *լրացումը, որը բոլորովին էլ նրա բայական ծագմամբ չի պայմանավորված: Մենք կարող ենք ասել նաև* շան նման կենդանի, կնոջ նման տղամարդ *և այլն:*

«Նրա սրտի խորքում բույն էր դրել զզվանքի նման *մի* զգացում *հասարակական այն հոտի կարգերի և մարդկանց դեմ, որոնց մեջ գործում էր տարիներից ի վեր» (ՆԴ, 1, 157): «*Երկյուղի նման *մի* զգացմունք *լցրել էր նրա սիրտը» (Մուր., 1, 323):*

Ածականական ծագում ունեցող գոյականները ևս ունենում են կապերով արտահայտված լրացումներ, ընդ որում այստեղ ևս լրացյալի հարաբերակցությունը ածականին միակ պայմանավորող հանգամանքը չէ կապային հոլովառության համար. Հնարավոր է, որ արմատակից ածականն այլ կապով լրացում ունենա, իսկ գոյականը՝ այլ (կամ հնարավոր է համընկնում): Այդպիսի կապակցություններից կարելի է նշել՝ անտարբերություն դեպի մեկը (մի բան), անզգայություն դեպի մեկը (մի բան),— մեկի (մի բանի) նկատմամբ *և այլն:*

«Նա ծանոթ էր քեռայրի անտարբերությանը դեպի *հասարակական* գործերը*» (ՀԱՆՀ, 198): «Հոգեկան այդ դրությանը նորից հաջորդեց ծայր աստիճան* անտարբերություն *ու* անզգայություն դեպի ամեն ինչ*» (ՆԴ, 1, 117):*

Կան որոշ կապակցություններ էլ, որոնցում կապն ու կապի խնդիրն ստանձնել են գոյականի լրացման պաշտոնը՝ իրենց բուն լրացյալ դերբայի զեղչման հետևանքով: Այսպես, երբ ասում ենք վիշտ որդիների վերաբերմամբ, վճիռ մեկի (մի բանի) մասին *և այլն, ապա սրանցում* որդիների վերաբերմամբ, մեկի (մի բանի) մասին *լրացումները եղել են* ունեցած, առաջացած, հանած, տված *և այլ դերբայների լրացում, որոնց զեղչումով էլ անցել են* վիշտ, վճիռ *գոյականներին (եղել են՝* որդիների վերաբերմամբ ունեցած վիշտ, մեկի (մի բանի) մասին հանած վճիռ, *ապա ստացվել են տրված ձևերը):*

«Եվ նա հասել էր այդ նպատակին ամենափայլուն կերպով, բայց հետը գերեզման տանելով ծանր վիշտ որդիների վերաբերմամբ*» (Շիրվ., 3, 158): «Հասկացավ նրա* կսկիծը՝ *ընկերոջ* կորուստի առթիվ*» (ՄՇՋ, 393):*

Որոշ դեպքերում էլ հնարավոր չէ պարզել, թե կապն ու կապի խնդիրը ավելի գոյականի ինչ բնույթի պահանջով են դարձել նրա լրացում, քանի որ այդ գոյականը թե՛ իր ծագմամբ ու բայի հետ ունեցած հարաբերակցությամբ, թե՛ գոյականական իմաստով կարող է այդպիսի լրացում ստանալ։

Այդպիսիք են հետևյալ նախադասությունների մեջ եղած կապակցությունները. *«Նա* մտքեր *ուներ* գյուղի մասին, Վանքերի մասին *ու* Հիսուսի» *(ԳՄՀ, 428)։ «Բանի մի վայրկյան անցած, լսեց Պետրոսի բոբիկ ոտների* ձայնը գորգի վրա» *(Շիրվ., 3 151)։*

Այդպես են նաև՝ առաջարկություն մի բանի (մեկի) մասին, ցանկություն մեկի (մի բանի) նկատմամբ *և այլն։ Օրինակներ՝* «Առաջարկություն *կա* այդ մասին», «Ցանկություն *չունի այդ* աշխատանքի նկատմամբ»:

Կապով արտահայտված լրացումը սովորաբար ետադաս է լինում. առ ժամանակակից գրական լեզվի օրինաչափություններից մեկն է։ Բերված կապակցությունների մեծ մասը հենց այդպիսի շարադասությամբ է կազմված։ Սակայն կան սակավաթիվ դեպքեր, երբ լրացումները նախադաս են լինում։ Ինչպես այդ երևաց մինչև այժմ բերված օրինակներից, հիմնականում նախադաս են լինում ոչ բայական ծագում ունեցող գոյականների լրացումները։ Իսկ բայական և ածականական ծագում ունեցող գոյականների լրացումները ետադաս են լինում (ինչպես ուղիղ շարադասության դեպքում ետադաս են բայի համապատասխան լրացումները)։ Այս վերջին տեսակի կապակցություններում կապային լրացումների նախադաս գործածությունը հարազատ չէ հայերենի ոգուն։ Այսպես, օրինակ, հայերեն չեն հնչում հետևյալ նախադասությունները, որոնցում այդպիսի շարադասությամբ կապակցություններ կան. *«Նա շարունակ վերհիշում էր* ծերունիների հետ խոսակցությունը» *(ՄՇՁ, 134)։ «Նա զգում էր, որ այդ* հոդվածի մասին հիշեցումը *Նիկուլինին անհանգստություն պատճառեց» (ՄՇՁ, 430)։ «Արդարացման և* երեխաների մասին գուշակությունները» *(ՄՇՁ, 306)։* «Տղայի մասին հիշեցումը *սուր ասեղի պես ծակեց Աշխենի սիրտը» (ՄՇՁ, 558)։ «Մի քանի օրից հրապարակվելից* բանակցությունների մասին կոմյունիկե» *(ՄՇՁ, 673)։ «Նա աշխատեց դեն վանել իրենից այդ* աղջկա մասին մտքերը» *(ՄՇՁ, 231)։*

Կապի խնդրի այս նախադաս գործածությունը, սակայն, հարազատ չլինելով հայերենին, դեռևս որոշ չափով ընդունելի է

դարձնում այդ կապակցությունները, եթե լրացյալ գոյականն ունի ուղղական հոլովաձև։ Իսկ եթե նախադասության գործածության հետ միասին լրացյալը դրված է լինում թեք հոլովով, ապա կարող է առեղծվել խրթին, չհասկացվող կապակցություն։ Այդպես է ստացվել հետևյալ նախադասության մեջ. «Պնդապետի տեսողությունից չեն վրիպում Ջեֆի ծամածությունները, որոնք առաջացել են գունատությունը թաքցնելու համար բնազդաբար քմծիծաղից» (ՍԱՊ, 10)։

Այստեղ հեղինակը ցանկացել է ասել, որ քմծիծաղը գունատությունը թաքցնելու համար է եղել։ Այդ դեպքում կապակցությունը պետք է լիներ... որոնք առաջացել են բնազդաբար քմծիծաղից՝ գունատությունը թաքցնելու համար (որը դարձյալ անթերի հայերեն չէր լինի այն պատճառով, որ ամեն մի գոյականի մոտ կապով և կապի խնդրով լրացում չի դրվի), այսինքն քմծիծաղ է տվել՝ գունատությունը թաքցնելու համար։ Մինչդեռ հեղինակի նախադասության մեջ ստացվել է, որ գունատությունը թաքցրել է քմծիծաղից, որն անհեթեթ բան է։

Հայերենի շարադասության ազատությունը երբեմն առեղծում է կապի ու կապի խնդրի մեկնաբանման դժվարություն, այսինքն պարզ չի լինում, թե տվյալ կապն ու կապի խնդիրը գոյականի թե բայի, գոյականի թե ածականի լրացումն է։

Հետևյալ նախադասություններում այդպիսի դժվարություն կա գոյականի և բայի կապակցությունների հարցում։

«Փոշու նման անձրև էր մաղում դուրսը» (ՆԴ, 3, 243)։ «Սպիտակ ժապավենի նման մի երկար առու էր սկիզբ առնում արհեստական Շաքարալճից» (ՍԽՀ, 244)։ «Իմ տխուր բարդին Չոր սարահարթին Արցունքի նման ոսկի է թափում» (ՄՄԼ, 278)։

Այս կապակցություններում փոշու նման, ժապավենի նման. արցունքի նման կապն ու կապի խնդիրները կարող են հավասարապես վերաբերել (համապատասխանաբար) և՛ մաղում էր, առնում էր, թափում է բայերին, և՛ անձրև, առու, ոսկի գոյականներին։

Իսկ եթե նախադասության մեջ կան նաև ածականներ, ապա հնարավոր է երեք տեսակի կապակցություն ենթադրել։ Այսպես են հետևյալ նախադասությունները. «Բամբակի պես թանձր մառախուղը ծանրացել էր կիրճում» (ՍԽՀ, 275)։ «Հուշի պես թել մի բարակ Կապում է սիրտը իմ քեզ» (Չ, 18)։ «Զգեստներն այժմ դառել են ստվարաթղթի նման կոշտ ու չծալվող մի բան» (ՄՇՁ, 708)։

Առաջին նախադասության մեջ բամբակի պես *կարող է վերաբերել և՛ թանձր ածականին* (բամբակի պես թանձր), *և՛* մառախուղը *գոյականին* (բամբակի պես մառախուղը), *և՛* ծանրացել էր *բային* (բամբակի պես ծանրացել էր): *Երկրորդ նախադասության մեջ* նուշի պես *կարող է կապվել և՛* բել *գոյականին* (նուշի պես բել), *և՛* բարակ *ածականին* (նուշի պես բարակ), *և՛* կապում է *բային* (նուշի պես կապում է): *Երրորդ նախադասության մեջ* ստվարաթղթի նման *կարող է լրացում դիտվել և՛* կոշտ *ածականի, ինչպես նաև* չծալվող *դերբայի* (ստվարաթղթի նման կոշտ,— չծալվող, *և՛* բան *գոյականի* (ստվարաթղթի նման բան), *և՛* դառել է *բայի* (դառել է ստվարաթղթի նման) *համար*։

Երբեմն նշանակություն չունի նույնիսկ այն հանգամանքը, որ կապն ու կապի խնդիրը գոյականից անմիջապես առաջ են դրված։ Այսպես, հետևյալ նախադասությունների մեջ գոյականից առաջ դրված կապային լրացումը նրանը չէ։

«Սյուների պես *երկինք մխրճված աժռելի քերծերի վրա ոչ մի ծիլ, ոչ մի կանաչ չէր երևում» (ՍԽՀ, 6)։ «Ամբողջ գյուղում* նրա նման *հեքիաթ պատմող չկար» (ԱՐՊ, 18)։*

Առաջին նախադասության մեջ սյուների պես *լրացումը վերաբերում է* մխրճված, *իսկ երկրորդ նախադասության մեջ* նրա նման *լրացումը*՝ պատմող *դերբայներին*։

Ժամանակակից հայերենում շատ գործածական են մի շարք յուրահատուկ կապակցություններ, որոնք տարբեր կառուցվածք լինելով՝ նմանվում են գոյականի կապային լրացում պարունակող բառակապակցություններին։ Դրանց մի մասը հիշեցնում է ստորոգումը զեղչված նախադասություն, մյուս մասը՝ դերբայը զեղչված դերբայական դարձված, սակայն երկու դեպքում կապակցությունը միատեսակ ձև ունի, իսկ նրա շարահյուսական դերը տարբեր է լինում։ Այստեղ կխոսենք միայն գոյականի լրացման դերում հանդես եկող այդ կարգի կապակցությունների մասին։ Այսպես, երբ ասում ենք խաղող՝ ցողը տերևների վրա, տանձ՝ ստվերը վրան, պանիր՝ ոռղը մեջը, աչքը դեպի դուրս մարդ, *ապա սրանցում* խաղող, տանձ, պանիր, աչքը *գոյականները լրացյալ են, սակայն լրացումները սովորական առումով կապ և կապի խնդիր չեն, այլ կապային այնպիսի կառուցվածք, որը համաստրագոր է նախադասության կամ դերբայական դարձվածի։* Խաղող՝ ցողը վրան *(կամ* ցողը վրան խաղող) *կապակցության մեջ լրացումը՝* ցողը վրան *կարելի է մեկնաբանել և՛ իբրև* ցողը վրան է, *և՛* վրան ցող ունեցող (ունենալով),—

պահած (պահելով),— պահպանված և այլն։ Ըստ էության ցողը վրան *լրացում է, իսկ ներքին կառուցվածքով այն բարդ է։ Նույն կապակցությունը այլ դեպքում բայի լրացում կարող է լինել (խաղողը* քաղեցինք ցողը վրան, *որտեղ* ցողը վրան քաղեցինք *բայի լրացումն է՝ պարագան)։* Տանիք ստվերը վրան *կապակցության մեջ ևս* տանիք *գոյականի լրացումն է* ստվերը վրան, *որ կարող է նշանակել* ստվերը վրան է, վրան ստվեր եղող, վրան ստվեր ունեցող *և այլն։ Նույն ձևով կարող են մեկնաբանվել նաև մյուս կապակցությունները։*

Այսպիսի կապակցությունները, ինչպես նշել ենք, կարող են դառնալ և՛ գոյականի, և՛ բայի լրացում։ Գոյականի լրացում են հետևյալ նախադասությունների մեջ. «Ես ինչպե՞ս գտնեմ տանիքն *այն կանաչ՝ Կանաչ թթենու* ստվերը վրան» *(ՀՍՀԵՄ, 115)։ «Այդտեղ ձյան մակերեսի վրա մեկնված վազեր կային, չորացած* տերևները վրան *խաղողի* վազեր» *(ՎԱՀԳ, 272)։*

Նույնպիսի կապակցությունը բայի լրացում է հետևյալ նախադասության մեջ. «Երբ մանուկ էի ես ոտաբոբիկ, Հոգուս մեջ *հազար* տենչանք ու ցնորք, *Զանգվի եզերքից տանիքից-տանիք Թռչելով* գնում, հասնում էի *Նորք» (ՀՍՀԵՄ, 115)։*

Ի վերջո անհրաժեշտ է նշել վերադրային-անվանողական բնույթի կապակցությունները[1]*։ Դրանք ունեն բազմազան ներքին կառուցվածք, սակայն արտաքուստ նույն ձևը, ուստի և ուսումնասիրության ժամանակ դիտվում են իբրև մի տեսակի կապակցություններ։ Այսպես, օրինակ, երբ ասում ենք «Մակագրություն գրքի վրա» (Զ, 76) և «Ոստիկանությունը ուսանողների դեմ» (լրագիր), ապա սրանք նույն ձևն ունենալով հանդերձ, տարբեր կառուցվածք ունեն։ Առաջին կապակցությունը կարելի է մեկնաբանել իբրև* մակագրություն՝ *(արված)* գրքի վրա, մակագրություն *(եմ, ես է կատարել)* գրքի վրա, *նաև՝* մակագրությունը գրքի վրա *(է), մինչդեռ երկրորդը ունի միայն մի մեկնաբանություն՝* ոստիկանությունը *(դուրս է եկել, կռվում է, պայքարում է)* ուսանողության դեմ:

Այս կարգի կապակցություններից են՝ «Ներբող առ քննադատն NN» *(Զ, 109),* «Հեղինակություններ ընդդեմ օրինականության» *(լրագիր),* «Ընտրություններ զինվորականության խնամակալության ներքո» *(լրագիր)։*

---

[1] *Որպիսին բնորոշ է նաև մյուս տեսակների բառակապակցություններին (տե՛ս «Գոյականի լրացումները թեք հոլովներով (բացի սեռականից)» և այլ բաժինները։*

Ժամանակակից հայերենում մակբայը շարահյուսական երկու հիմնական դեր ունի. այն լինում է բայի, որոշ դեպքերում էլ ածականի լրացում[1]: Սրանցից դուրս հնարավոր է մակբայի այլ կիրառություն ևս, ինչպես ստորոգելիական վերադիր և այլն, սակայն դրանք յուրահատուկ դեպքեր են, և դրանցում մակբայը հանդես չի գալիս իր բուն ֆունկցիայով:

Սակայն ինչպես գրաբարում, այնպես էլ արդի գրական հայերենում կան մի շարք կապակցություններ, որոնցում մակբայը կատարում է գոյականի լրացման դեր:

Մեծ հայագետ Մ. Աբեղյանը «Աշխարհաբարի շարահյուսություն» գրքում խոսելով որոշչի արտահայտության մասին, որն, ի դեպ, նա վերադիր տերմինով էր անվանում, նշում է, որ մակբայներից մի քանիսը ևս կարող են ստանձնել գոյականի որոշչի ֆունկցիան: Իբրև օրինակներ նշում է հանկարծ շարժում, աստիճանաբար բերևացում, հիմնովին նորոգություն, բոլորովին գաղտնիք, խստիվ կարգադրություն և այլ կապակցություններ[2]: Սակայն տեղնուտեղը ծանոթության կարգով զգուշացնում է, որ այս դեպքում մակբայն այլևս մակբայ համարվել չի կարող: Այս դիտողությունը պայմանավորված է Մ. Աբեղյանի քերականական սիստեմով, որտեղ խոսքի մաս և նախադասության անդամ հասկացությունները միահյուսված են: Պրոֆ. Գ. Սևակը «Հայոց լեզվի շարահյուսություն» դասագրքում նույնպես նշում է մակբայի որոշիչ կիրառության օրինակներ՝ զգուշացնելով, որ այդպիսի գործածությունը հմտություն է պահանջում[3]: Այս կապակցությունները գործածության տեսակետից երկու կարգի են լինում: Մի դեպքում գործ ունենք վերնագիր-անվանողական այն կապակցությունների հետ, որոնք հաճախադեպ կիրառություն ունեն հրապարակախոսական-լրագրային լեզվում: Երկրորդ դեպքում այդ կապակցությունները հանդես են գալիս ավարտված նախադասությունների կազմում և գործածական են գեղարվեստական արձակ և չափածո երկերում:

Իհարկե, չի կարելի անանցանելի անջրպետ դնել այս երկու կարգի կապակցությունների միջև: Այդ երկուսի միջև անընդհատ

1 Տե՛ս «Բայական բառակապակցությունները մակբայ լրացումով» և «Ածականի բառակապակցությունները» բաժինները:

2 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 393—394:

3 Գ. Սևակ, Հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 1955, էջ 24:

տեղի է ունենում ներթափանցում. Հրապարակախոսական-լրագրային լեզվի վերնագրային-անվանողական կապակցությունների կառուցվածքն զգալի դեր է կատարում գեղարվեստական գրականության մեջ նման կարգի կապակցությունների երևան գալու գործում։

Այսպես, օրինակ, հրապարակախոսական-լրագրային լեզվում հաճախ են գործածվում ակամա զարմանք, ակամա պատասխան, սրտագին ընդունելություն, քաղաքավարի մերժում. շտապ կարգադրություն և այլն։

Այսպիսի կապակցություններից գեղարվեստական երկերի վերնագիր են ընտրել որոշ հեղինակներ, ինչպես՝ «Ջուր հույսեր» (Շիրվ.)։ Որո՞նք են այս կապակցությունների կառուցվածքային առանձնահատկությունները։

Վերնագրային-անվանողական այս կապակցությունները կազմությամբ երկու կարգի են լինում։ Դրանց մի մասը նման են բոլոր այն կապակցություններին, որոնցում ենթադրյալ բայ-ստորոգյալը կամ ածականական ստորոգելիական վերադիրը զեղչված է, և դրա հետևանքով անմիջապես բային կամ ածականին հատուկ մակբայ լրացումն անցել է գոյականին։ Այսպես, ակամա երաժիշտ տիպի կապակցությունն ըստ էության արտացոլում է ակամա երաժիշտ լինել (դառնալ, կոչվել, համարվել և այլն) կապակցությունը, որտեղ ակներև է, որ ակամա մակբայը վերաբերում է լինել (դառնալ, կոչվել, համարվել) բային, որի զեղչումով և անցել է երաժիշտ գոյականին։ Այսպես է կազմվել հնուց աղախին կապակցությունը. «Պալատումը կար նախանձոտ ու չար Մի պառավ կնիկ, հնուց աղախին» (ՀԹ, 1, 234)։

Իսկ մյուս՝ ավելի շատ մասը ներկայացնում են այնպիսի կազմություններ, որոնք կարելի է մեկնաբանել իբրև բայական կամ ածականական ծագմամբ գոյականների և մակբայ լրացման կապակցություն։ Այսինքն՝ զուր հույսեր, շտապ կարգադրություն, ակամա զարմանք, ակամա հետաքրքրություն և այլ կապակցություններում համապատասխան մակբայը գոյականի լրացում է դարձել բայական կապակցությունների նմանակությամբ։ Այսպես, եղել են, ասենք, զուր հուսալ, շտապ կարգադրել, ակամա զարմանալ, ակամա հետաքրքրվել և այլն, որոնց ազդեցությամբ և կազմվել են վերը նշված գոյականի՝ մակբայ լրացումով կապակցությունները։

Անշուշտ հիշյալ վերնագրային-անվանողական կապակցություններն առավելապես կազմվում են այն գոյականներով, որոնք

այս վերջինների նման ունեն բայական կամ ածականական ծագում։

Մեր ուսումնասիրության հիմնական նյութը կազմում են գոյականի՝ մակբայ լրացումով այն կապակցությունները, որոնք առավել գործածական են հիմնականում գեղարվեստական արձակ և չափածո ստեղծագործություններում, ինչպես նաև հրապարակախոսական-լրագրային լեզվի մեջ։

Հետազոտվող կապակցությունները երկու տեսակ են լինում։ Մի դեպքում մակբայը դառնում է բայական կամ ածականական ծագում ունեցող գոյականի լրացում, իսկ մյուս դեպքում լրացյալի բայական ծագումն ակնհայտ չէ, կամ առհասարակ այդպիսին չէ։ Ըստ այսմ էլ հիշյալ կապակցությունների նկարագրությունը կատարել ենք այս երկու տեսակը տարբերակելով։

Մակբայների բոլոր տեսակները հավասարապես չեն հանդես գալիս գոյականի լրացման դերում։ Առավել գործուն են այն կապակցությունները, որոնցում լրացում են լինում ձևի, ապա ժամանակի մակբայները։ Ուստի դրանց բառակապակցությունների դասդասումը կատարում ենք՝ ելնելով մակբայների տեսակներից։

Առավել գործածական են այն կապակցությունները, որոնցում լրացում են լինում ձևի մակբայները։ Սակայն բոլոր ձևի մակբայները չէ, որ կարող են դառնալ գոյականի լրացում։ Կան որոշ թվով ձևի մակբայներ, որոնք հաճախ են դառնում այդպիսի լրացում։ Դրանցից կարելի է նշել՝ արագ, դանդաղ, շտապ, ակամա, կամաց, բռնի, բերանացի, հանդարտ, անակնկալ, թաքուն, շուտափույթ և այլն։

Սրանցով կազմված կապակցություններից են՝ արագ քայլ,— քայլվածք,— վազք,— փախուստ, շտապ գործ,— ոռնումներ, դանդաղ գործ,— ընթացք, անընդհատ տեղափոխում,— անցուդարձ, ակամա վարանում,— պատկառանք,— թմրություն, անակնկալ պայմաններ,— հանդիպում,— միտք, սրտանց խոսք,— վերաբերմունք, բարձրաձայն խոսակցություն և այլն։

«Սառան մտավ ջղային արագ քայլվածքով» (ՆԴ, 2, 434)։ «Ձին հևում էր արտակարգ արագ վազքից» (ՍԽՄԽ, 100)։ «Գնում էր դանդաղ քայլերով» (ՆԴ, 2, 246)։ «Վաղ թե ուշ այս ակամա հակումը կարող է Սամսոնի աչքին ընկնել» (Շիրվ., 4, 404)։ «Ապշությանս հետ միասին ինձ տիրեց ակամա մի վարանում ու պատկառանք նրա այդ հաղթական շքեղության առջև» (ՆԴ, 1, 119)։ «Եվային տեսնելուն պես ցնցվեց և իր շտապ ու անհանգիստ ոռնումը դանդաղեցրեց» (ՆԴ, 3, 334)։ «Սրանցից յուրա-

11—486

քանչյուրի սրտանց մի խոսքը սաստ ամրացնում է նրա վիրավոր, բեկված սիրտը» (ՍՋ, 5, 44)։ «Դա նրա սրտի բռնի թելադրությունն էր» (Շիրվ., 3, 280)։ «Դա մի հաստատուն գրավական էր իմ շուտափույթ վերադարձի համար» (Մուր., 1, 226)։ «Դարձյալ սկսվեցին թեր ու դեմ խոսակցությունները» (Շիրվ., 3, 196)։ «Մեր հապճեպ ուղևորության ճշմարիտ պատճառը հայտնել չէի կարող» (Մուր., 1, 223)։ «Որին շատ անգամ դիմում էր բերանացի կռվից հետո» (ՆԴ, 1, 66)։ «Լռելյայն մաղթանքի պահն անցավ» (ՋԴԱՎ, 781)։

Ինչպես երևում է բերված օրինակներից, ավելի հաճախ գործածվում են բայական ծագում ունեցող գոյական լրացյալով կապակցությունները։ Իսկ ածականական ծագմամբ գոյական լրացյալով կապակցությունները քիչ են հանդիպում։ Դա բնական է. մակբայն ավելի շատ դառնում է բայի, քան ածականի լրացում, մասնավորապես ձևի մակբայը հազվադեպ է հանդես գալիս ածականի լրացման դերում։

Ձևի մակբայները կարող են երբեմն դառնալ նաև այնպիսի գոյականների լրացում, որոնք բայական կամ ածականական ծագում չունեն։ Այստեղ անշուշտ առկա է մակբայի՝ բուն լրացյալ բայի զեղչում, որի հետևանքով և մակբայը վերածվել է գոյականի լրացման։

Այս կապակցություններից կարելի է նշել՝ հանդարտ առուներ, ակամա արցունք,— պատճառ և այլն։ Գրական օրինակները սակավաթիվ են։

«Կգնամ իմ դժկամ ցավի հետ» (ՎՏ, 1, 49)։ «Ես նրա մահվան ակամա պատճառն եմ» (Շիրվ., 5, 327)։ «Ու նստում եմ մի մեկուսի քարի վրա» (ՎՆԻՍ, 138)։ «Կա ակամա արցունք, և՛ վիշտ, և՛ տանջանք» (ՀՀ, 80)։

Ձևի մակբայ լրացումով որոշ կապակցություններ այժմ շատ գործածական լինելու շնորհիվ վերածվել են անվանողական դարձվածքների։ Դրանցից են՝ շտապ օգնություն, շտապ վիրահատություն, շտապ կարգադրություն, հապճեպ որոշում և այլն։

Կան դեպքեր էլ, երբ ձևի որոշ մակբայներ դրվում են այնպիսի գոյականի վրա, որի հետ միասին են դառնում նախադասության մեկ անդամ։ Սրանցից կարելի է նշել այն կապակցությունները, որոնցում լրացյալը գործիական հոլովով դրված գոյական է, ինչպես՝ արագ թափով, դանդաղ շարժումով, միահամուռ ձևով և այլն։ «Սլանում են թափով արագ Իրար գըրկած անթիվ ալիք» (ԴՍԲ, 137)։

Այսպես են նաև իզուր մակբայը, որը տեղ գոյականի հետ միասին է կատարում նախադասության մեկ անդամի պաշտոն (իզուր (զուր) տեղը): «Բայց իզուր տեղը չէր Արշակը նրան «անհանգիստ նախագահ» անվանել» (ՍԽՀ, 677)։

Ժամանակի որոշ մակբայներ ևս կարող են գոյականների լրացում դառնալ։ Այստեղ ևս պետք է տարբերակել երկու դեպք։ Մի դեպքում ժամանակի մակբայը ստանձնում է բայական կամ ածականական ծագմամբ գոյականի, իսկ երկրորդ դեպքում՝ այլ գոյականի լրացման դեր։ Միաժամանակ պետք է նշել, որ խիստ սահմանափակ թվով մակբայներ են լինում գոյականի լրացում։ Մի քանի տասնյակ ստեղծագործություններից հնարավոր է եղել քաղել շուրջ 20 օրինակ միայն։ Բայական կամ ածականական ծագմամբ գոյականներով կազմվում են հավերժ պայքար,— հույս, վաղ այցելություն, դեռևս երիտասարդություն և այլն։

«Հերիք, որքան, հեգ հայրենիք, կյանքդ հավերժ պայքարում Հավերժ հուսով դու անսացիր օտար ձայնին հուսատու» (Ծ, 192)։ «Չէ՞ որ Մսերյանը նույնն է, ինչ որ էր 10 տարի առաջ— միշտ ոգևորվող, միշտ պատանի» (Շիրվ., 2, 264)։

Որքան էլ տարօրինակ լինի, ժամանակի մակբայները ավելի շատ են դառնում ոչ բայական ծագմամբ գոյականների լրացում։ Այստեղ անշուշտ դեր է խաղում այն հանգամանքը, որ մի շարք ժամանակի մակբայներ համատեղում են նաև ածականի իմաստ։ Այլապես անհնար է պատկերացնել, որ վաղ, ուշ մակբայները ավելի շատ լինում են գոյականի, քան բայի լրացում։ Այս կապակցությունները շատ գործածական են արդի հայերենում։ Իբրև կանոն այդ մակբայները կապակցվում են ժամանակի իմաստ ունեցող ժամ, ժամանակ, առավոտ, գիշեր, աշուն, գարուն, ձմեռ, ինչպես նաև փոխաբերաբար ժամանակ արտահայտող հասակ, պատանեկություն, երիտասարդություն և այլ գոյականների հետ։

Այսպես, կազմվում են՝ վաղ առավոտ,— պատանեկություն,— հասակ, ուշ ժամ,— աշուն և այլն։

«Հիշում եմ ինչպես այն ուշ Աշունն էր ոսկեորվում» (ՎՏ, 1, 236)։ «Ծնողներիս կորցրել եմ վաղ պատանեկության հասակում» (ՆԶՍԳ, 403)։ «Ցրտից հեծկլտում էր հեռու այն անտառը, Պարզկա գիշերվա ուշ ժամին» (ԳՄԲ, 236)։ «Դրանք բույներ էին, որ հարազատացրել էին նրան այդ արդեն տարիքով և բոլորովին օտար մարդու հետ» (ՄՇՁ, 253)։

Գոյականի լրացում են դառնում նաև աստիճանի, չափի որոշ մակբայներ։ Այստեղ անհրաժեշտ է տարբերակել երկու կարգի

կապակցություններ։ Մի դեպքում գործ ունենք գոյականի այն կապակցությունների հետ, որոնց լրացում մակբայը իր իմաստի առանձնահատկություններով ի վիճակի է միաժամանակ լինել և՛ մակբայ, և՛ ածական։ Խոսքը վերաբերում է շատ, քիչ, սաստիկ, խիստ և նման մակբայների, որոնք ժամանակակից հայերենում համատեղում են որակական ածականի և աստիճանի, չափի մակբայի հատկանիշներ։

Այս բառերը, իբրև ածական, կարող են անչափ շատ կապակցություններ կազմել գոյականների հետ, ինչպես՝ շատ մարդիկ,— գործեր,— տներ և այլն, քիչ փայտեր,— քարեր,— մարդիկ և այլն, խիստ եղանակ,— մարդ,— ձմեռ և այլն։

Սակայն այս բառերը մակբայ են նաև՝ իրենց իմաստով ու քերականական հատկանիշներով, և, իբրև այդպիսին, կարող են դառնալ բայի լրացում։ Այսպես, կարելի է ասել՝ շատ աշխատել,— կռվել,— սովորել,— խոսել,— վաստակել և այլն, քիչ զբաղվել,— մնալ,— զարմանալ և այլն, սաստիկ զայրանալ,— կարմրել,— վիրավորվել և այլն։

Բանն այն է, որ հիշյալ բառերը իբրև մակբայ գործածվելիս էլ կարող են սահմանել գոյականի լրացման դեր՝ համապատասխան գոյականի բայական և ավելի շատ ածականական ծագման դեպքում։

Այս ձևով կազմված կապակցություններից կարող ենք նշել՝ սաստիկ հարձակում,— զարմանք,— բարկություն,— ծուլություն,— հիվանդություն և այլն, շատ հիմարություն,— խելոքություն,— զարմանք և այլն, քիչ հավանականություն,— զարմանք,— հետաքրքրություն,— հեռատեսություն,— մոռացկոտություն, խիստ սիրալիրություն,— հանդիմանություն,— նկատողություն (որը անվանողական դարձվածքի է վերածվել) և այլն։

«Սաստիկ և աննահանջ հարձակումը մեծ վնասներ էր պատճառում պաշարյալներին» (Մուր., 3, 471)։ «Հոգեկան սաստիկ խռովմունքի միջոցներին Սմբատն զգում էր պահանջ որևէ կերպ սիրտը թեթևացնելու» (Շիրվ., 3, 243)։

Սակայն շատ մակբայը բուն՝ մակբայական իմաստով չի կարող դառնալ բայական ծագում չունեցող գոյականի լրացում։ Այդպիսի կապակցությունները հայերեն չեն։

«Մարութխանյանի գլուխը զբաղված էր շատ արտաքո կարգի լուրջ խնդրով» (Շիրվ., 3, 30)։ «Խմենք մեր թանկագին Գարեգինի շատ կենացը» (ՍԽՀ, 92)։

Բայական կամ ածականական ծագմամբ գոյականների լրա-

ցում կարող են դառնալ աստիճանի, չափի այլ մակբայներ ևս՝ ինչպես՝ չափազանց, կրկին, հաճախ, բոլորովին, ամբողջովին, իսպառ և այլն։ Դրանցով կազմվում են՝ չափազանց ազնվություն,— մեծություն,— փոքրոգություն, կրկին տեսակցություն, —հաշտություն,— միացում, հաճախ հանդիպում,— այցելություն, բոլորովին անջատում,— մեկուսացում, ամբողջովին ազատագրում,— վերականգնում, իսպառ վերացում,— ոչնչացում և այլն։

«Բայց հետո մտածեցի, որ այդ արդեն չափազանց փոքրոգություն կլիներ» (ՆԴ, 1, 117)։ «Այդ բանը ես վերագրում եմ քո չափազանց ազնվությանը» (ՆԴ, 3, 471)։ «Օհ, ինչ տաղտկալի է կնոջ չափազանց սերը» (Շիրվ., 3, 377)։ «Ընկեր, բարեկամ գնացին եկան, Կրկին հաշտության չեղավ մի հնար» (ՀԹ, 2, 59)։ «Մեր քանամյա ծանոթության և այնքան հաճախ հանդիպումների ընթացքում երբեք չէր խոսել սիրո մասին» (Շիրվ., 5, 305)։ «Զգում էր, որ յուր հաճախ այցելությունները նրան դուր չեն գալիս» (Շիրվ., 2, 276)։ «Երկարատև անջատումից հետո կրկին տեսակցությունը չափազանց մեծ ուրախություն էր պատճառել երկու նախկին սիրելի և ամենամոտ դասակցուհիներին» (ՆԴ, 2, 19)։

Կրկին մակբայը երբեմն կարող է դառնալ նաև բայական ծագում չունեցող գոյականի լրացում (թեև դա սովորական չէ)։ Օրինակներ՝ «Նա շրջապատված էր կրկին պարիսպներով» (Ր, 5, 50)։ «Հասավ վերնասրահին, որ լուսավորված էր կրկին աշտանակներով» (Մուր., 3, 18)։

Ընդհանրական որոշ մակբայներ ևս կարող են դառնալ բայական ծագում ունեցող գոյականների լրացում։ Դրանցից կարելի է նշել՝ անընդհատ անցուդարձ,— բողոք,— վեճ,— կռիվ,— պայքար, շարունակ ընթերցում,— վերականգնում,— բաշխում և այլն։

«Նրանց անընդհատ անցուդարձը նմանվում էր մի հանդիսավոր կադրիլի» (Մուր., 1, 297)։ «Նրանց շարունակ քարոզությունները ձեզ արբեցրել են» (Մուր., 1, 170)։ «Ավետարանի շարունակ ընթերցումից նա չէր սովորել համբերատար լինել» (ՆԴ, 3, 241)։

Դիտողություններ մակբայ լրացումով գոյականի բառակապակցությունների կառուցվածքի վերաբերյալ.— Կան մի շարք կապակցություններ, որոնցում մակբայը գոյականի լրացում է դառնում ածականի հետ բաղհյուսական կապակցության մեջ մտած։ Առավել գործածական կապակցություններից կարելի է

նշել՝ խաղաղ ու հաշտ (հաշտ ու խաղաղ), մանր ու արագ, մանր ու շտապ և այլն։

«Ձանձրացե՞լ եք խաղաղ ու հաշտ Հողագործի օր ու կյանքից» (ՀԹ, 2, 130)։ «Որոնց միօրինակ ու համրաքայլ ընթացքը մերթ ընդհատվում էր նրանց երկաթագամ քոշերի՝ սառույցի վրա սահելուց» (Մուր., 2, 7)։ «Նրա խնամոտ ու զգույշ վերաբերմունքը դեպի իր հագուստն առակ էր դարձել գյուղում» (ԱՐՊ, 132)։ «Գնումների պայուսակը ձեռքին, մանր ու շտապ քայլերով գնում էր շուկա» (ՍԶ, 5, 9)։ «Վարդիթեր Աղին մանր ու արագ քայլերով գնաց խոհանոց» (ՍԽՀ, 467)։

Բանաստեղծական խոսքում երբեմն այսպիսի կապակցության պաշտոնը որոշելը դժվար է լինում։ Օրինակ՝ «Դու սրտում մեր ընդմիշտ վառեցիր Կրակներ անմար ու թաքուն» (Չ, 34) նախադասության մեջ անմար ու թաքուն կապակցությունը կարելի է դիտել և՛ պարագա (վառեցիր ստորոգյալի լրացում), և՛ որոշիչ (կրակներ գոյականի լրացում)։

Ժամանակակից հայերենի ազատ շարադասության պայմաններում երբեմն դժվար է որոշել մակբայի պաշտոնը։ Այդ կարելի է տեսնել հետևյալ օրինակներում.

«Վերջին ժամանակներս մեր կյանքում երևան եկած շարժումներն անշուշտ փոքրիշատե հետաքրքրություն են զարթեցրել նրանց մեջ» (ՆԴ, 3, 324)։ «Նրա սիրտը զգում էր քիչ-շատ թեթևություն» (Շիրվ., 3, 244)։ «Իրիկնապահին գյուղի վրայով ուժգին քամի անցավ» (ՍԽՀ, 310)։

Այս նախադասություններում փոքրիշատե, քիչ-շատ, ուժգին մակբայները կարելի է դիտել և՛ բայի (զարթեցրել են, զգում էր, անցավ), և՛ գոյականի (հետաքրքրություն, թեթևություն, քամի) լրացում։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԱԾԱԿԱՆԻ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ածականի կապակցությունները ներկայացնում են չափազանց հետաքրքիր պատկեր։ Դրանք ինչպես բաղադրիչների բնույթով, այնպես էլ շարահյուսական դերով միատարր չեն, իսկ դա պայմանավորված է մի կողմից ածականների ծագման ու կառուցվածքի, մյուս կողմից՝ ածականի շարահյուսական կիրառության առանձնահատկություններով։ Ածականի բառակապակցությունների տարբեր տեսակները ձևաբանական-շարահյուսական կառուցվածքով կապվում են ածականների տարբեր խմբերի կազմության ու ֆունկցիոնալ-շարահյուսական առանձնահատկությունների հետ։ Այդ կապակցությունների մի մասն արտահայտում է ձևաբանական իմաստ (դրսևորելով համեմատության այս կամ այն աստիճանը), մի այլ խումբը համապատասխան ածականների բառային իմաստի ընդարձակման դրսևորման արդյունք է, երրորդ խումբը բխում է ածականի շարահյուսական կիրառության յուրահատկություններից։

Ածականի բառակապակցությունների քննարկման ժամանակ, ինչպես և մյուս կապակցությունների ուսումնասիրության դեպքում, դրանք դասդասել ենք՝ ելնելով լրացումների խոսքի մասային պատկանելությունից։ Ըստ այսմ էլ ածականի բառակապակցությունները բաժանում ենք ենթախմբերի՝ գոյական լրացումով, դերանուն լրացումով, մակբայ լրացումով, ածական լրացումով, թվական լրացումով, դերբայ լրացումով և այլն։

Սրանցից գոյական և դերանուն, մակբայ և դերանուն, թվական և դերանուն լրացումներով կապակցությունները իմաստային և շարահյուսական տեսակետից հարաբերակից են՝ շնորհիվ համապատասխան խոսքի մասերի հարաբերակցության։ Ուստի

քննարկման ժամանակ առաջինների հետ միաժամանակ նշվում են նաև երկրորդները։ Այսպես, գոյական լրացումով բառակապակցությունների ուսումնասիրության բաժնում նշում ենք, որ նույն տիպի կապակցություններ կարող են կազմվել նաև առարկա և անձ նշող դերանուններով և ածականով՝ առանց իմաստային-շարահյուսական տարբերության։ Նույն ձևով և մակբայ լրացումով կապակցությունների քննարկման ժամանակ խոսում ենք մակբային փոխարինող դերանուն լրացումով կապակցությունների մասին, դրանով իսկ ոչ միայն խնայելով ժամանակն ու տեղը, այլև ընդգծելով մակբայի և դերանվան հարաբերությունը նաև ածականի բառակապակցությունների կազմության գործում։

Ածականի բառակապակցությունների ուսումնասիրությունը տարվում է՝ ելնելով նաև լրացումների շարահյուսական կառուցվածքից։ Այդ կապակցությունների մեջ լրացումը կարող է արտահայտվել կա՛մ ինքնուրույն գործածվող խոսքի մասով, կա՛մ կապի և կապի խնդրի միջոցով։ Հետևաբար, տարբերում ենք ածականի այն բառակապակցությունները, որոնցում լրացումը առանց կապի է, այն կապակցություններից, որոնցում լրացումը կապով է արտահայտվում։ Մյուս կողմից, ածականի լրացումը կարող է լինել ինչպես մեկ բառ, այնպես էլ ամբողջական բառակապակցություն, որը երբեմն հարաբերակից է լինում նախադասությանը։ Այսպիսի լրացումները երբեմն դժվար է տարբերել ինքնուրույն նախադասությունից։ Դա առանձնապես զգալի է այն դեպքերում, երբ ածականի բառակապակցությունը հանդես է գալիս որպես տրոհվող լրացում։ Այստեղ խոսքը չի վերաբերում այն դեպքերին, երբ ածականի լրացումն արտահայտվում է երկրորդական նախադասությամբ։

Ժամանակակից հայերենի բառակապակցությունների որոշ տեսակների (ինչպես, օրինակ, թվական լրացումով գոյականի կապակցությունները) քննությունը հանգեցնում է այն եզրակացության, որ թեև նախադասության անդամ և բառակապակցություն հասկացությունների միջև օրգանական կապ կա, սակայն դրանք շարահյուսական տարբեր հասկացություններ են, որոնք մի շարք դեպքերում սահմաններով համընկնում են, բայց և շատ դեպքերում տարբերվում են։ Ածականի բառակապակցությունների քննությունը նույնպես մեզ բերում է նման եզրակացության։ Շարահյուսական որոշ ֆունկցիաների դեպքում բառակապակցությունը համընկնում է նախադասության անդամին, իսկ այլ դեպ-

քերում՝ ոչ։ Երբեմն կապակցությունը իբրև մեկ անդամ է հանդես գալիս, երբեմն էլ ածականը դիտվում է որպես նախադասության ինքնուրույն անդամ, իսկ նրա հետ կապակցվող բառը՝ այլ անդամ։

ԳՈՅԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՄՈՎ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ածականը գոյական լրացումներ է ունենում տարբեր հոլովներով դրված։ Ելնելով դրանից՝ տարբերակված են գոյականով կապակցությունները լրացման տարբեր հոլովների դեպքում՝ գոյականը սեռական, բացառական, գործիական, ներգոյական հոլովներով։ Առանձին քննարկված են այն կապակցությունները, որտեղ գոյականը լրացում է դառնում կապի միջոցով։

Առանձին-առանձին քննվում են ածականի շարահյուսական տարբեր ֆունկցիաների դեպքում կազմվող կապակցությունները։ Ելնելով սրանից՝ գոյականով կապակցությունները բաժանում ենք հետևյալ խմբերի. 1) կապակցություններ, որոնց գլխավոր բառ ածականը նախադասության մեջ կատարում է ստորոգելիական վերադրի պաշտոն. 2) կապակցություններ, որոնց ածական լրացյալը նախադասության մեջ կատարում է պարագայի պաշտոն. 3) կապակցություններ, որոնց լրացյալը նախադասության մեջ որոշիչ է։

Գոյական և դերանուն լրացումը տրական հոլովով.— *Ածականի այս բառակապակցությունը ավելի շատ է գործածվում։ Տրական հոլովով գոյական և դերանուն լրացում են ունենում տարբեր իմաստ և ծագում ունեցող ածականներ։ Դրանցից են՝* արժանի, հլու, վայել, ազգական, պարտական, հատուկ, ծառա, ծառայի, տեղյակ, հավասար, հավատարիմ, մատչելի, համապատասխան, ծանոթ, հարմար, ներդաշնակ, մտերիմ, համաձայն, խառն, մոտ, մոտիկ, ուրախ, կից *(նաև՝* հասակակից, կարեկից, վիճակակից, արհեստակից, սահմանակից *և այլն),* կարոտ, նման, մերձավոր, պիտանի, անընտել, համաչափ, պատրաստ, նախանձախնդիր, վրեժխնդիր, հմուտ, սիրահար, անտարբեր, հակառակ, հայտնի, հարկավոր, անհրաժեշտ, ցանկալի, ատելի, լսելի, հասկանալի, պաշտելի, անբացատրելի, համակրելի, համակիր *և այլն։*

Տրական հոլովով դրված գոյական կամ դերանուն լրացումն արտահայտում է մի շարք իմաստներ։ Այսպես, պարտական, երախտապարտ, անձնվեր, մատչելի *և այլ ածականներով կազմը-*

ված կապակցություններում արտահայտվում է մատուցման հարաբերություն։

«Նա ասավածային վեհանձնությամբ կանգնած էր հասարակ մահկանացուներին անմատչելի այդ բարձրության վրա» (ՆԴ, 2, 120)։ «Արցախանխում դա համարվում էր ամենահեռանյալ աղբյուրին խսկ մատչելի բան» (ՆՋՊՊ, 271)։

Մատուցման հարաբերությունը կարող է արտահայտվել նաև այն կապակցություններով, որտեղ ածականի լրացումը կապի հետ է դրված։ Այս ձևով լինում են՝ նրա համար անմատչելի, իմ նկատմամբ անձնվեր և այլն։ «Գեներալը միանգամից մատչելի էր դարձել պատանու համար» (ՀՔՄՏՁ, 1, 326)։

Խառն, կից (կարեկից, սահմանակից, հասակակից), մոտ, մոտիկ, մերձակա, մոտակա, մերձավոր, անընտել, սովոր, հայտնի, հարկավոր, անհրաժեշտ, հմուտ, արժանի, արժանավոր, վայել, վայելուչ, սազական, հնազանդ, հլու, հավատարիմ և այլ ածականներով կազմված կապակցություններն արտահայտում են հանգման հարաբերություն։

«Գործ ունենք թեև արբած, բայց կատարելապես խելքը գլխին և ազնիվ մարդու հետ, իր պատվին նախանձախնդիր զինվորականի հետ» (ՆԴ, 2, 352)։ «Կոզակը գործին հմուտ մարդու ժպիտով աչքերը գցեց հատակին» (ԴԴՎ, 26)։ «Տեր Գևորգը վկայեց, որ տանուտերը խղճով մարդ է, ժողովրդին կարեկից ու հոգատար» (Շիրվ., 2, 144)։ «Առանք մեզ ամենահարկավոր իրերը և վարձելով երկու սայլ ճանապարհ ընկանք» (ՎՓ, 2, 286)։ «Գուցե աստանդական կյանքը, անհաջողությունները և ինձ անհայտ հանգամանքները նրա բնավորությանը տվել էին այդպիսի կոշտ, կոպիտ և մթին հատկություններ» (Ր, 5, 100)։ «Ավետիքին հայտնի էր Անիին մերձակա քար ու ժայռից» (ՎԽԳԼ, 20)։ «Թագավորն ուրախությամբ լսեց վիրաբույժի խորհուրդը և գրեց Աբաս եղբորը մեզ հայտնի նամակը» (Մուր., 4, 390)։ «Անշուշտ, Սևադան էլ գործել է այս պատժին արժանի մի հանցանք» (Մուր., 4, 112)։ «Եվ զայրացած քարտուղարի բերանից դուրս թռան խնտելիգենտ մարդուն անվայել մի քանի հայհոյական խոսքեր» (ՆԴ, 1, 187)։ «Վարդանն իր մոտ կանչեց ուխտին հավատարիմ նախարարներին» (ԴԴՎ, 253)։ «Եվ լուռ, հնազանդ հանճարի ձայնին, Մութ ալիքները, փոթորկի ժամին, Կտավի վրա կանգնած են ահա» (ՀԹ, 1, 72)։ «Միշտ նույն խոհերի շշուկին հլու, Միշտ նույն կարոտի կսկիծը պահած՝ Ես դուրս եմ գալիս նորից շրջելու» (ՎՏ, 1, 196)։

Հանգման հարաբերությունը կարող է արտահայտվել նաև կապի միջոցով։ Իհարկե այդ դեպքում հնարավոր է իմաստային որոշ տարբերություն, սակայն ածականի բառակապակցությունների զարգացման ընթացքը ցույց է տալիս, որ իմաստային այդ տարբերությունը այլևս չի զգացվում, և վերջին տեսակի կապակցություններն ավելի հաճախ են գործածվում։ Այսպես, **խառն**, **հարկավոր**, **անհրաժեշտ**, **անհայտ**, **հմուտ** և այլ ածականներ ունենում են լրացում նաև **հետ**, **մեջ**, **համար** և այլ կապերով։

«Նրանց վրա գտնված ոսկին և արծաթը **իր համար** շատ **հարկավոր** էին» (Ր, 4, 396)։ «Այժմ երևում էր, որ դարձյալ **խառն** էին Կարոյի **գործերի մեջ**» (Ր, 4, 408)։ «Վանեցու սեղանի երգն անգամ **խառն** է լինում **արտասուքի հետ**» (Ր, 5, 12)։ «Գնացքը կանգնել էր **բոլորի համար անհայտ** ու անանուն մի կայարանում» (ՀՔՄՏՁ, 2, 36)։ «Երգ իմ, **քեզ համար վայել** վայր չկա» (Իս., 1, 167)։ «Նա ոչ **ընդունակ** է, ոչ էլ **արժանի** այդ **գործի համար**» (ՀՔՄՏՁ, 1, 333)։

Հավատարիմ ածականը կարող է լրացում ստանալ նաև **նկատմամբ** կապի միջոցով (**մեկի նկատմամբ հավատարիմ**)։

Երբեմն ածականի լրացումը նրա հետ բարդություն է կազմում։ Այսպես, **հարգանքի արժանի** կապակցությունը համարժեք է **հարգարժան** բարդությանը։ Սակայն սխալ է **հարգարժան** տիպի ածականի մոտ տրականով լրացման գործածությունը։ Օրինակ՝ «Բանիդ, քո **անձիդ հարգարժան** Մլեհ վարպետն էլ նույն խորհուրդին է» (ՎԽԳԼ, 186)։

Մտերիմ, **բարեկամ**, **ծանոթ**, **հակառակ** և այլ ածականներով կազմված կապակցություններում արտահայտվում է փոխադարձ կապի հարաբերություն։

«Եվ թեև վաղուց **ծանոթ իրարու** Կուշտ-կուշտ ճաշեցին, առանց ուտելու» (ՂԱ, 386)։ «Հարսնյանները հետաքրքրությամբ դիտում էին այդ՝ **իրենց անծանոթ** հարևան գեղեցկուհուն» (ՆԴ, 2, 11)։ «Իրենից թաքուն, սեփական **կամքին հակառակ**, սիրտն ուրախությամբ էր լցվում» (ՋԴԱՎ, 17)։

Փոխադարձ կապի հարաբերությունը կարող է արտահայտվել նաև կապով։ Այսպես են (այդ) **մարդու հետ մտերիմ**, **բարեկամ**, **մեկի հետ ծանոթ**, **անծանոթ** և այլն։ Իսկ որոշ դեպքերում տարբերություն կա առանց կապի և կապով կազմվող բառակապակցությունների միջև։ Այսպես, **ծանոթ**, **անծանոթ** ածականները առանց կապի պահանջում են իրի անուն, իսկ կապով՝ անձի անուն։ Օրինակ, «Վարպետ **Փանոսի հետ** նա **նախածանոթ** էր երևում» (Ր, 5, 98)։ Եվ մյուս կողմից՝ «Ես այդ **գործին ծանոթ** եմ»։

Տեղյակ, անտարբեր, անփույթ, գիտակ, անգիտակ, անգետ *ածականներով կազմված կապակցությունները տրականով արտահայտում են վերաբերության հարաբերություն։*

«Նա խոսեց և դրանց խաղի մասին գործին տեղյակ *մարդու հանձնապաստանությամբ» (ՆԴ, 2, 24)։ «Ու հավիտյան էլ մնացին քնած,* Դավին անտեղյակ, ցավին անտարբեր» *(ՀԹ, 2, 143)։ «Իսկ դու,* անփույթ *մեր* տանջանքին, Հավածներին *մեր բախտի, Արբեցնում ես արբուն հոգին» (ՀԹ, 1, 74)։ «Թեև գալիս եք դուք ալիքների նման և սաղերի՝ Ձեր* ճանապարհին, *ձեր* կոչումին, *ձեր* ընթացքին անգետ» *(Չ, 168)։ «Եվ անցնում էինք* անկումին գիտակ» *(Չ, 235)։ «Եվ ես,* անգիտակ *նրա* խորհրդին, *Անձնատուր եղա բոլոր ուժերով» (ՀԹ, 1, 30)։*

Սակայն ճիշտ չէ իմացական *ածականի տրականով լրացումը։ «Սովոր էր և* նամփաներին իմացական» *(ՎԽԳՎ, 13)։ Ճիշտ կլիներ գործածել* նամփաներին տեղյակ *կամ* նամփաներն իմացող *կապակցությունները։*

Նման, հավասար, հարմար, համապատասխան, ներդաշնակ, համաչափ *և այլ ածականներով կազմված բառակապակցություններում արտահայտվում է նմանության, համապատասխանության հարաբերություն։*

«Դուք ուրեմն կնոջից պահանջում եք տղամարդին հավասար ուժ» *(Շիրվ., 2, 199)։ «Նրհար տղա էր, դեղնավուն, հիվանդոտ դեմքով և խոհուն, իր* տարիքին անհամապատասխան *լուրջ հայացքով» (ՆԴ, 2, 551)։ «Իր ժամի գալթում Թաղից ու մարմար Արձան կանգնեցրեց իր* գործին հարմար» *(ՀԹ, 1, 152)։*

Այս ածականները ևս կարող են ունենալ կապային լրացումներ։ Այսպես, հարմար, անհարմար *ածականները կարող են ունենալ* համար *կապով լրացում (*ինձ համար, մեկի համար անհարմար *և այլն)։*

«Երկարատև ձմեռը, անդադար անձրևները, իսկ տարվա չեզոք եղանակներում երաշտությունը կացուցանում էին հողը անհարմար ցանքերի համար» *(Ր, 4, 401)։ «Գիշերը միշտ* հարմար է *զորքերի* տեղաշարժի համար» *(ՀՔՄՏՉ, 2, 141)։*

Ներդաշնակ, համաչափ, անհամապատասխան *ածականները կարող են լրացում ունենալ* հետ *կապով (մի* բանի հետ ներդաշնակ, մեծերի հետ համաչափ *և այլն)։ Այս ածականները կարող են կապակցվել նաև այլ հոլովով դրված գոյականի կամ դերանվան հետ։* Հարմար *ածականն ունենում է նաև բացառականով լրացում։*

Կարոտ, ծարավ, ծարավի, պապակ և այլ ածականներով կազմված բառակապակցություններում արտահայտվում է ձգտման, ուղղվածության հարաբերություն։

«Չէ, ասացին, արնի ծարավ Հսկաներն են իրար զարկում» (ՀԹ, 2, 126)։ «Լինում է՝ իբրև գյուղացի մի մարդ, Աղքատ, օրական ապրուստի կարոտ» (ՀԹ, 1, 249)։ «Մտրակի կարոտ չէին նրանք» (Ր, 4, 94)։

Առնելի, լսելի, զգալի, համակրելի, սիրելի, ցանկալի և այլ ածականների լրացումներն արտահայտում են ենթակայական հարաբերություն։

«Այդ միջոցին նրանք սկսեցին խոսել ինձ բոլորովին անհասկանալի մի լեզվով» (Ր, 4, 288)։ «Այդ անցքից հետո Կարոն նշանակություն ստացավ իր ընկերների մեջ և համարյա բոլորին պաշտելի դարձավ» (Ր, 4, 284)։ «Խոսում էին ինձ անլսելի ձայնով» (Ր, 4, 303)։ «Երևում է, որ ներս մտնողը բոլորին էլ սիրելի անձնավորություն էր» (Մուր., 4, 22)։ «Մենք կքաշենք մեր կողմը մեզ համակիր նախարարներին» (ԴԴՎ, 72)։

Այս վերջին նախադասության մեջ մեզ համակիր կապակցությունը կարելի է հասկանալ երկու իմաստով. մի դեպքում ենթակայական իմաստով (որոնց մենք համակրում ենք), երկրորդ դեպքում՝ հանգման իմաստով (որոնք համակրում են մեզ)։

Նկատելի է, սակայն, որ վերջին շրջանում ենթակայական հարաբերությունն սկսում է ըմբռնվել իբրև հանգման-շահի հարաբերություն, և այդ պատճառով համապատասխան ածականը լրացում է ստանում համար կապով։ Այսպես, ինձ հասկանալի, մեզ զգալի և այլ կապակցություններ արդեն քիչ են գործածվում. դրանց փոխարեն կազմվում են ինձ համար հասկանալի, մեզ համար զգալի և այլն։ «Եվ նա յուր համար ևս անզգալի կերպով սկսում էր փոքր առ փոքր ինքնամոռացության մեջ ընկնել» (ՆԴ, 2, 66)։ «Ու լիաթոք շնչում եմ զովը, որ իջնում է լեռան բարձր գագաթից, ամպի նման սպիտակ ձյուներից և այն կապույտ, ինձ համար հավիտյան անհասանելի ամպերից» (Բակ., 238)։ «Ձմեռվա և աշնան ամիսներին, օրինակ, նա գերադասում էր Դվինը, ամռանը՝ զովասուն Կարինը, ուր կային և նրա համար հանելի, բուժիչ ջերմուկներ» (ՍԶ, 7, 365)։

Պատրաստ, պիտանի և այլ ածականների լրացումներն արտահայտում են նպատակի հարաբերություն։

«Հեռու կորի, խենթ պատանի, Որ անպիտան գործի, բանի, Ուշք ու միտքդ տվել երգին, Մի չես նայում էս աշխարհքին»

(ՀՔ, 2, 90)։ *«Քրոջական սիրալիր մի ջերմություն կար այդ հայացքում,* անձնազոհության պատրաստ *մի հոգի» (ԴԴԿ, 492)*։

Նպատակի հարաբերությունը կարող է արտահայտվել նաև համար *կապի միջոցով։ Օրինակ՝ «Կռիվ— և այս* պիտանի *դառնա Այս դժվար, այս բարդ* պայքարի համար*» (Չ, 111)*։

Ուրախ *ածականի լրացումն արտահայտում է շահի հարաբերություն։*

«Հակառակորդներն ուրախ *էին այդ* անկարգությանը*» (Շիրվ., 2, 367)*։ *«Եվ ով են մարդիկ... աղվեսների հոտ, նամով անհուն, ուրացող, մատնիչ,* Անկումի ուրախ, *արյուններ լակող» (Իս., 2, 73)*։

Սակայն այժմ ուրախ *ածականը լրացում է ստանում* համար *կապի միջոցով (*հաջողության համար ուրախ, երջանկության համար ուրախ *և այլն)*։

Բնորոշ, հատուկ *ածականների լրացումներն արտահայտում են պատկանելության հարաբերություն։*

«Տիկինը միայն կանանց հատուկ *նուրբ բնազդով զգաց նրա շփոթության հիմնական պատճառը» (Շիրվ., 2, 316)*։ *«Սիրային նամակներ էին գրում միմյանց անկեղծ խոսքերով և իրենց* հասակին բնորոշ *պարզունակ փիլիսոփայությամբ լի» (ՀՔՄՏՉ, 1, 329)*։

Ընդունակ, անընդունակ *և նման ածականներով կազմված կապակցություններում արտահայտվում է սահմանափակման հարաբերություն։*

*«*Գործի անընդունակ *մարդու չարությունն է այդ գործունյայի դեմ» (ՋԴԱԿ, 165)*։ *«Մեծ եղբայրը հաշմված,* գործին անընդունակ *էր դարձել» (ՎՓ, 3, 297)*։

Սահմանափակման հարաբերությունը կարող է արտահայտվել նաև մեջ *կապով ու սեռականով, ինչպես՝ այս* գործի մեջ ընդունակ, ուսման մեջ անընդունակ: *Երբեմն* մեջ *կապի փոխարեն կարող է հանդես գալ* համար *կապը։*

Քննարկվող ածականները ծագման տեսակետից միատարր չեն. դրանց մեջ կան և՛ բուն ածականներ (պարզ և բաղադրյալ), և՛ գրաբարյան դերբայական ձևերի բարացմամբ առաջացած ածականներ, և՛ բայարմատին զուգահեռ գործածվող ածականներ։ Սակայն տարբեր ծագման ու կազմության ածականները լրացում ստանալու նույն հատկությունն ունեն. բոլորն էլ տրական են պահանջում։ Մի շարք դեպքերում ածականի լրա-

ցումը պայմանավորված է նրա շարահյուսական կիրառությամբ, իսկ շատ դեպքերում էլ ածականի շարահյուսական դերը նշանակություն չունի լրացում ստանալու հարցում։ Բերված բոլոր ածականները տրական հոլովով լրացում են ունենում ստորոգելիական վերադիր, երբեմն էլ պարագա գործածվելու դեպքում։ Մինչդեռ որոշիչ կիրառության դեպքում ոչ բոլոր ածականներն են այդպիսի լրացում ունենում։

Այսպես, արժանի, ծարավ, հատուկ, հավատարիմ, ծանոթ, սովոր, պիտանի, հայտնի, ձեռնտու, սազական, պարտական, տեղյակ, հմուտ, հարկավոր, անընտել, ատելի, սիրելի, ցանկալի, լսելի, զգալի, կից *և այլ ածականներ տրականով լրացում են ունենում ստորոգելիական վերադիր և որոշիչ կիրառության դեպքում։ Բերենք այդպիսի կապակցությունները ածականի ստորոգելիական վերադիր պաշտոնի դեպքում։*

«Թագուհին որ սովոր *էր աղմկալից* կյանքի, *արդեն հոգնել էր երկար մենակությունից» (Մուր., 4, 391)։ «Հակառակորդներն* ուրախ *էին այդ* անկարգությանը» *(Շիրվ., 2, 367)։ «*Ինձ *տակավին* հայտնի *չէր, թե ուր էինք գնում» (Ր, 4, 271)։ «*Մեզ *ավելի* հասկանալի է, *թե ինչ է կրում այս երկրում մշակ մարդը» (Ր, 4, 336)։ «Դուք ամենքդ* ինձ արհեստակից *եք» (ԳԱ, 125)։ «Օտար վայրում նա մնաց տենչավառ, Հայրենի* հողին *չեղավ* արժանի» *(Իս., 2, 199)։*

Նույն ածականներով կազմված բառակապակցությունները ավելի շատ հանդես են գալիս որոշիչ կիրառության դեպքում։

«Այդ ամենատաղանդավոր արձանագործի ճերիչին արժանի *տղամարդը պարապմունքով նավարար էր» (Ր, 5, 98)։ «Այս միտքը շղթայում էր ապահով* ապրուստի սովոր *տիկնոջը» (Շիրվ., 2, 468)։ «Թագավորը այցի ելավ Իր հարկատու,* Գահին հլու *Գավառներին, քաղաքներին» (Իս., 2, 236)։ «Անծանոթը վանական* մթնոլորտին անընտել *մի անձնավորություն էր» (Մուր., 4, 300)։ «Ու խոհեմությունը՝* հատուկ *իր* սեռին՝ *Իբրև մի սուր զենք՝ պահում է ձեռին» (ԳԱ, 367)։ «Քաշվեցի սենյակս, որը տանտիրոջս* բնակարանին կից *ամենավերջին սենյակն էր» (ՆԴ, 2, 851)։ «Երեկոյան դեմ նա գնաց* իրեն *լավ* ծանոթ *մի կապալառուի մոտ» (ՆԴ, 1, 35)։*

Վայել, ծարավ, հավասար, համաձայն, խառն, մոտ, հարմար, ներդաշնակ, համաչափ, պատրաստ, հակառակ, անտարբեր, կարևոր *և այլ ածականներով կապակցությունները կարող են կազմվել ածականի բոլոր պաշտոնների դեպքում։ Այսպես, օրի-*

նակ, այդ կապակցությունները հանդես են գալիս ածականի ստորոգելիական վերադիր կիրառության դեպքում:

«Կրոնավորին վայել չէ այդ ստորին պճնասիրությունը» (Ր, 5, 87): «Մտրակի կարոտ չէին նրանք» (Ր, 5, 94)։ «Վանեցու սեղանի երգն անգամ խառն է լինում արտասուքի հետ» (Ր, 5, 12)։ «Նրան համամիտ էր միայն ժամհար Պարսեղը» (Բակ., 297): «Այդ ուժը նոր է, ձերին օտար, Ձերին ներհակ միշտ ու հակադիր» (Չ, 387)։

Այդ կապակցությունները հանդես են գալիս ածականի պարագա կիրառության դեպքում։

«Ում պետք է ընտրեմ հարմար իմ սրտին» (ՂԱ, 377)։ «Ջարդեցին իրար, Ջնջեցին իրար, Կորան գնացին Դևանին հավասար» (ՀԹ, 1, 261)։ «Ու հավիտյան էլ մնացին քնած, Դավին անտեղյակ, ցավին անտարբեր» (ՀԹ, 2, 143)։ «Ծիրունի տանուտերը իր նահապետական բնավորության համար, միշտ աշխատում էր մի բանով հյուրասիրել ինձ» (Ր, 4, 506)։ «Տեղին ու դպրոցին վայել իմ հագուստն էլ փոխեցին» (ՀԹ, 1, 411)։ «Կարծես նետված մի հաղթ ձեռքով՝ աշխարհային կամքին հլու՝ Գնո՞ւմ էին կուլո՞վ, երգո՞վ կայարանը գրավելու» (Չ, 251)։ «Սիրող սրտի ծարավ, ծարավ մնացի» (Իս., 1, 194)։ «Կընկնեք մուրալու հափրած որկորով՝ Հրեղեն խոսքի, վեհ խոսքի կարոտ» (Իս., 1, 168): «Այսպես լուռ, անշարժ մինչև երբ մնաս Դարնան զարդերին համր, անտարբեր» (Իս., 1, 172)։

Այդ կապակցությունները դառնում են որոշիչ հետևյալ նախադասություններում։

«Մի՞թե անձնասպանության հավասար մի հանցանք չէր լինի դա ինձ համար» (Մուր., 4, 118)։ «Աղաչեցի, թախանձեցի, որ նա խնայեր իմ դստեր քնքուշ, դյուրաբեկ և վշտերի անսովոր սիրտը» (Մուր., 4, 121)։ «Ամեն տեղի, ամեն դեպքի, ամեն ժամանակի համար խաղեր ունեին» (ՂԱ, 202)։ «Դուք ինձ ցույց տվիք սեր, ուրախություն, Քաջերին վայել հյուրասիրություն» (ՂԱ, 389)։ «Նա իր հասակին անհամար արագ շարժումներով շտապում էր» (ԴԴՎ, 74)։ «Քրոջական սիրազեղ մի ջերմություն կար այդ հայացքում, անձնազոհության պատրաստ մի հոգի» (ԴԴՎ, 492)։

Գոյական և դերանուն լրացումը բացառական հոլովով.— Բացառական հոլովով լրացում ունեցող ածականների կապակցությունները լինում են երկու տեսակ։ Մի դեպքում ածականի լրացումը համեմատության խնդիրն է, այն առարկան, որի համեմատությամբ բարձր է տվյալ ածականով արտահայտվող հատ-

կանիշը։ Սրանք կարող են կազմվել որակական բոլոր այն ածականներով, որոնք համեմատության աստիճան են ունենում։ Այսպիսի բառակապակցություններ հնարավոր են ածականի ամեն մի կիրառության դեպքում։ Այսպես, նման կապակցություններ են կազմվում ածականների ստորոգելիական վերադիր կիրառության դեպքում։

«Ինձ անհարմար զգան իրանց ընկերության, որովհետև ես նրանցից հասակով շատ փոքր էի և բոլորովին անփորձ» (Ր, 275)։ «Սովորականից ուրախ էր Կարոն» (Ր, 4, 331)։ «Բայց Կարոն ինձանից ավելի ազատ և ավելի բախտավոր էր» (Ր, 4, 290)։ «Նրա արինը կարմի՞ր է մերից» (ՀՐ, 2, 42)։

Նույնատիպ կապակցությունները պարագայի դերով են գործածված հետևյալ նախադասություններում։

«Ծառաները սովորականից լավ էին զարդարված» (Ր, 7, 87)։ «Նա յուր հասակից ավելի պարզ և անպառամ էր մնացել» (Ր, 7, 42)։ «Ու նորից հնչեցին լարերն առաջվանից ավելի փաղաքուշ ու դյութիչ» (ՆԴ, 1, 122)։ «Նա Ասլանին ինձանից ավելի խելացի էր համարում» (Ր, 4, 287)։

Այս կապակցությունները ավելի շատ գործածվում են որպես որոշիչ։

«Բայց ո՞վ կտա մեզ ամսական տասը ռուբլով սրանից ավելի հարմար բնակարան» (Շիրվ., 2, 105)։ «Ներս մտավ միջին հասակից քիչ ցածր, կլորիկ դեմքով, երկայնաձև քթով, մաքուր սափրած այտերով մի երիտասարդ» (Շիրվ., 2, 254)։ «Անգութ բնությունը երբեմն մարդկանց փոքրիկ մարմնի մեջ նրանց ուժից ավելի չար նախանձ է դնում» (Շիրվ., 2, 305)։ «Արդյոք կարո՞ղ է սրանից ավելի վիրավորական խոսք լինել մարդու մասին» (Շիրվ., 2, 308)։ «Աշտարակից ավելի լավ բախտի չհանդիպեց կրիան» (Մուր., 4, 281)։ «Մահվան ուրվականը նորից գալիս է իր փափուքը տարածելու մեռնողի սենյակում առաջվանից ավելի ծանր ու չարագուշակ լռության մեջ» (ՆԴ, 1, 43)։ «Իր արտաքինով կարող էր հրապուրել բարեկամիցս շատ ավելի նուրբ ճաշակ ունեցող մարդկանց» (ՆԴ, 2, 434)։ «Ճանապարհին առավ թևս ու խոսում էր այնպիսի մտերմությամբ, որ կարծես ինձնից ավելի սրտակից բարեկամ չունի» (ՆԴ, 2, 465)։

Համեմատության աստիճան կազմող բառակապակցությունների մեջ առանձին տեղ ունեն գերադրության բացառականով կազմվածները։ Այս դեպքում համեմատության խնդիրը գոյականաբար գործածված ածական է լինում։ Այսպես, լինում են՝ բա-

ջերից քաջ, անհաղթներից անհաղթ, հզորներից հզոր, գեղեցիկներից գեղեցիկ, մեծերից մեծ, խելոքներից խելոք:

«Ընտրի, զարկի ձեռքիդ խնձորն Անհաղթներից անհաղթին» (ՀԹ, 1 ,226)։ «Միշտ ուժեղից ուժեղը կա» (ՀԹ, 1, 247)։

Բացառական հոլովով այլ կարգի լրացում ունենում են սակավաթիվ այնպիսի ածականներ, որոնք կամ բայական ծագում ունեն, կամ զուգահեռ են համապատասխան բայարմատին։ Եվ այդ նշանակում է, որ ածականը բացառական հոլովով դրված լրացում ստանում է բայական հատկանիշ ունենալու շնորհիվ։ Դա հեշտությամբ կարելի է հասկանալ, եթե համեմատենք համապատասխան բայը և նրա արմատին զուգահեռ ածականը՝ խնդրառության տեսակետից։ Այսպես, զրկել բայը և զուրկ ածականը ունենում են հավասարապես բացառական հոլովով դրված լրացում։

«Մեր հին ադաթից ընկել ենք, զրկվել, Նորն էլ չգիտենք, թե ինչ է եկել» (ՀԹ, 2, 38)։ «Քեզ հետ մտերիմ դառնալու օրից Զրկված մնացի կյանքում բոլորից» (ՀԹ, 2, 86)։ «Մենք ունենք Կ. Պոլսում մի քանի տգետ և ամեն կրթությունից զուրկ «գեզեկներ» միայն» (Ր, 4, 491)։

Բացառական հոլովով գոյական կամ դերանուն լրացում են ունենում ազատ, զուրկ, անջատ, գաղտնի, զերծ, պակաս, ապահով, սակավախոս, խելագար, վաստակաբեկ, ահաբեկ, անսպասելի, անտեղյակ, թափուր, անկախ և այլ ածականներ։

Սրանց լրացումներն արտահայտում են զանազան իմաստներ։

Այսպես՝ ազատ, զուրկ, անջատ, զերծ, թափուր, անկախ և այլ ածականներով կազմված կապակցություններում արտահայտվում է պակասության, անջատման հարաբերություն։

«Օրիորդը ազատ էր յուր զբաղմունքներից» (Շիրվ., 2, 443)։ «Նա փալաս էր, կամքից, անհատականության, ազատասիրության զգացմունքից զուրկ մի արարած» (ՆԴ, 2, 600)։ «Նա զորքն առաջ էր վարել այնպիսի ճանապարհներով և այնքան միմյանցից անջատ խմբերով, որ հազարացի պահնորդները չէին կարող նրանց նշմարել» (Մուր., 4, 466)։ «Թե ոնց եմ այրում Նրանից բաժան» (ՀԹ, 1, 27)։ «Հարկահանները, վրեժխնդրությունից հազիվ մազապուրծ, ձեռնունայն տներն էին վերադառնում» (ԶԴԱՎ, 153)։

Խելագար, խելառ, վաստակաբեկ, ահաբեկ և այլ ածականներով կազմված կապակցություններում արտահայտվում է պատճառի հարաբերություն։ «Բնականից թուխ դեմքը ավելի մռայլ

գույն էր ստացել» (Ր, 7, 27)։ «Վիրավոր թևի վերքը մի ձեռքով բռնած, գլուխը կախ և նրա ընկերները՝ մենամարտից *և* ամոթից կասկարմիր՝ *կանգնեցին Վարդանի առջև» (ԴԴՎ, 15)։ «Գրքայ Գրիգորը գդակը քաշեց աչքերին և,* ամոթից *ու անզոր* կատաղությունից գունատ, *կանանց ծաղրական ժպիտների տակ դիմեց դեպի դուռը» (ՆԴ, 1, 25)։ «Կարծես ծանր* աշխատությունից վաստակաբեկ *նա յուր աչքերը դարձրեց դեպի Սեդան հոգնած ձևով» (Մուր., 4, 40)։*

Ապահով, պակաս, գեղեցիկ, տգեղ, ուժեղ, աղքատ *և այլ ածականների լրացումներն արտահայտում են սահմանափակման հարաբերություն։*

«Կապտագույն շալվարը, վերևից *բավական* լայն, *իսկ հետըզ-հետե սաստիկ նեղանալով, իջնում էր մինչև նրա ծնկները» (Ր, 5, 98)։ «Շահենն* ուժեղ *էր* մաթեմատիկայից, *Արամը՝* գրականությունից*» (ՆԶՊՊ, 108)։*

Անտեղյակ, տեղյակ, գիտակ *և այլ ածականներով կազմված կապակցություններում արտահայտվում է վերաբերության հարաբերություն։*

«Նրանք իրարից անտեղյակ, *իրար կարծելով միևնույն տերերի կողմից ուղարկված՝ ճամբարից հեռանում և կորչում էին զանազան ուղղությամբ» (ԴԴՎ, 345)։ «Աշխարհի* չար ու բարուց անտեղյակ, *միամիտ երեխաներ էինք» (Բակ., 132)։*

Աջ, ձախ *ածականների լրացումներն ունեն տարածական իմաստ։ Օրինակ՝ «Սիսիանի մի մասը՝ Որոտան* գետից ձախ, *տիրում էին Ցրանգուլովները» (Բակ., 307)։*

Այս կապակցությունները կարող են հանդես գալ ածականի տարբեր կիրառությունների դեպքում։ Այսպես, նման կապակցություններ կան ածականի ստորոգելիական վերադիր պաշտոնի դեպքում։

«Այդ պատճառով Հասոն միշտ գոհ *էր* նրանից*» (Ր, 4, 361)։ «Վերջինս* թափուր *է պաշտպանության* միջոցներից*» (Մուր., 3, 270)։ «*Ազատ *չէր* հարկից *ինքը մշակը» (Ր, 4, 357)։*

Նույն կապակցությունները հանդես են գալիս ածականի պարագա, մասնավորապես տրոհված պարագա գործածության ժամանակ։

«Նրա օրինակից խրախույս առան և այն իշխանները, որոնք Հազարապետի սրից ահաբեկ, *իրանց փրկությունը միայն բերդերի մեջ էին որոնում» (Մուր., 4, 58)։ «Մեռած չոբանի պառավ նանն է նա՝* ցավից խելագար *բառաչում, լալիս» (ՀԹ, 2, 65)։ «Համառ*

Հարուստը հերսից խելագար, Իրեն աննման զավակը միջին, Կրակի մատնեց աշտարակն էն հին» (ՀԹ, 1, 268)։

Այդպիսի կապակցություններ կան հետևյալ նախադասություններում, որտեղ ածականը կատարում է որոշչի պաշտոն։

«Բնականից թուխ դեմքը ավելի մռայլ գույն էր ստացել» (Ր, 7, 27)։ «Ուրիշ բան է, եթե սովից խելագար մի գել իրեն կորցրած դցի ափաշկարա վտանգի մեջ» (ՀԹ, 1, 395)։

Գոյական կամ դերանուն լրացումը գործիական հոլովով.— Գործիական հոլովով լրացում են ունենում սակավաթիվ ածականներ։ Այդպիսի բառակապակցությունները երկու կարգի են։

Առաջին խումբը կազմում են սահմանափակման հարաբերություն արտահայտող կապակցությունները։ Այսպիսի լրացում կարող են ունենալ համեմատաբար մեծ թվով ածականներ՝ անկախ կազմությունից և բայի հետ ունեցած փոխհարաբերությունից։ Այսպես են մեծ, հզոր, ուժեղ, գեղեցիկ, հպարտ, բարձր, երկար, կարճ, գրավիչ, այլանդակ, հրապուրիչ և այլն։ Այս կապակցությունները կարող են հանդես գալ ածականի տարբեր կիրառության դեպքում։ Հետևյալ նախադասություններում այդպիսի լրացում ունեցող ածականը ստորոգելիական վերադիր է։

«Այդ Գոլիաթը կլիներ երեսուն տարեկան, այսինքն՝ հասակով տասն և հինգ տարի մեծ Կարոյից» (Ր, 4, 284)։ «Թեպետ տարիքով ավելի փոքր էր քան Թադևոսը, բայց նրանից ավելի խոհեմ և շրջահայաց էր» (Մուր., 3, 373)։ «Մայրիկ, հիվանդ եմ երկնքի ցավով» (Իս., 1, 76)։ «Շահենը բնավորությամբ խիզախ էր» (ՆԶՊՊ, 108)։ «Սրտով խաղաղ եմ ես հիմա Ու խոհերով հստակ, մաքուր» (Չ, 112)։

Նույնպիսի կապակցություններ կան նաև ածականի պարագա գործածության ժամանակ։

«Մենակ եմ տեսնում ինձ ու մտքով տկար» (ԴԴՎ, 627)։ «Կարող ես դու՝ երգիր նրան՝ իր հույզերով մեծ ու մանրիկ» (Չ, 116)։

Այդպիսի կապակցություններ կան նաև ածականի որոշիչ լինելու դեպքում։

«Նա խիստ վատ էր սովորում, թեև ընդունակ և բնական ձիրքերով հարուստ տղա էր» (Ր, 4, 286)։ «Թողնելով դպրոցը, այնուհետև Կարոն վարում էր լի փորձանքներով թափառական կյանք» (Ր, 4, 286)։ «Նա մի փոքրիկ մարդ էր, ոտքերով կաղ» (Ր, 4, 515)։ «Տխուր կղզին և նրա բնակիչները հետզհետե իրանց ազդեցությունն արին հոգվով ու մարմնով վիրավոր արքայի վրա»

(Մուր., 4, 389)։ «Եվ այդ էր պատճառը, որ այդ պերճահասակ, վեհադեմ, դյուցազնոդի և քաջությամբ ու իմաստությամբ այնքան հառաջադեմ արքայազնի հանդիպումն ինձ չճնշեց» (Մուր., 4, 61)։ «Ինձ շրջապատող դատարկ, անտանելի Պետրովների մեջ հազիվհազ գտել եմ մեկը— մտքով, սրտով, հոգով հարուստ մի մարդ» (ՆԴ, 2, 131)։

Երկրորդ խումբը կազմում են միջոցի-նյութի խնդրային հարաբերություն արտահայտող կապակցությունները, որտեղ ածականը իմաստային ամբողջության պահանջով լրացում է ունենում։ Այդպիսի կապակցություններ կարող են ստացվել լի (լիքը, լեցուն), հղի, կաղ, տեսանելի, տարբեր և այլ ածականներով։ Սրանք կարող են հանդես գալ ածականի տարբեր կիրառությունների դեպքում։

Այսպես, այս կապակցությունները հանդես են գալիս ածականի ստորոգելիական վերադիր կիրառության դեպքում։ «Իմ զայրույթը լիքն է սիրով. Իմ գիշերը՝ լիքն աստղերով» (ՀԹ, 1, 149)։ «Բոլոր վայրերում, բոլոր կողմերում, Աշխարհը մի նոր երգով է հղի» (Չ, 271)։ «Նա տեսավ, որ ամբարը լիքն է ցորենով» (ՂԱ, 267)։

Նույն կապակցությունները կան ածականի պարագա կիրառության ժամանակ։

«Նոր սիրով լեցուն՝ դարձա ես ձեզ մոտ» (ՎՏ, 1, 195)։ «Եվ հայ պատանին, լի անխտարորբոք կրքերով լուսնկա գիշերներին թափառում էր լճի ափերի մոտ «հրեղեն աղջիկներ» որսալու համար» (Իս., 4, 390)։

Նույն կապակցություններն առկա են նաև ածականի որոշիչ լինելու դեպքում։

«Նրա մոտ պառկած էր գինով լիքը տկճորը» (Ր, 4, 276)։ «Սիրտը դառնությամբ լի երիտասարդը մերթ համոզում էր, մերթ խնդրում» (Շիրվ., 2, 113)։ «Վարդանը լսում էր սարսափներով հղի այդ խոսքերը» (ԴԴՎ, 573)։ «Խառնվածքով տարբեր մարդիկ լինելով, Իվան Լյաշկոն ու Յակով Կացնելսոնը մտերիմներ էին» (ՀՔՄՏՉ, 1, 513)։ «Կես կիլոմետրի վրա երկնքում վառվում էին սպիտակ լույսեր, սովորական աչքով տեսանելի մետաքսե փոքրիկ պարաշյուտներից կախված» (ՀՔՄՏՉ, 1, 127)։

Երբեմն գործիականով լրացումը կարող է մեկնաբանվել սահմանափակման, միջոցի և նույնիսկ չափի իմաստներով։ Օրինակ՝ «Կար մի ավերակացող քաղաք, յոթ պորտով՝ կենդանի մարդով, մեռածով պարտական այս Սարգիս Մլքենցին» (ՎԽԳԼ, 12)։

Գոյական կամ դերանուն լրացումը ներգոյական հոլովով.— Ածականը քիչ դեպքերում է ունենում ներգոյական հոլովով դրված լրացում։ Բայական ծագում ունեցող և մի շարք այլ ածականներ կարող են ունենալ այդպիսի լրացում՝ սահմանափակման իմաստով։

«Իսկ այդ ալմաստները... հաղթով կհանդիպացնեն քեզ ամեն ձեռնարկության մեջ և թագավորների աչքում սիրելի կկացուցանեն» (Ր, 7, 44)։ «Սրահից լսվում էր գինով նախարարների քրքիջն ու երգը։ Գործերում կիսատ, անվճռական, հարափոփոխ, փափկամորթ մարդիկ, որ չգիտեն, թե ինչ պիտի անել, երբ գալիս է արհավիրքը» (ԴԴՎ, 561)։ «Ով չի տեսել պատերազմի առաջին տարվա նահանջը, նա հազիվ թե ամբողջ խորությամբ զգա այն մեծ, մարդկային հոգում անպարփակելի ցավը, որ ապրում էր ամեն զինվոր» (ՀՔՄՏՋ, 1, 74)։ «Նա քայլում էր հանդուգն կերպով գլուխը բարձր պահած, շտկելով սովորական պայմաններում նկատելի իր սապատը» (ՀՔՄՏՋ, 1, 602)։ «Ժամանակն ու հանգամանքները շատ ժլատ են ձեր որդու նմաններին ստեղծելում, բայց երևում է, որ շատ շռայլ են բաղեղյաններ արտադրելում» (ՆԴ, 3, 505)։

Սահմանափակման հարաբերությունն արտահայտվում է նաև մեջ կապի հետ դրված լրացումով։

«Դա ամուր կազմվածքով, դեմքի խոշոր գծերով լռեցի Մարուքյանն էր, բվաբանության մեջ ամենից ընդունակ աշակերտը» (Շիրվ., 2, 416)։ «Զարմացած գիտում էր իրեն անհասկանալի և այդ տան մեջ տարօրինակ տեսարանը» (ՆԴ, 1, 261)։ «Դա լուրջ նախազգուշացում էր արտաքուստ մոլեգին, բայց ճաչության մեջ սաստիկ չափավոր Վարդազարի համար» (ՆԶՊՊ, 277)։ «Բայց ես՝ միշտ համառ, չէի հավատում, Մինչև լսեցի մի մեծ պարոնի, Մեր մեջ շատ խելոք ու շատ անվանի» (ՀԹ, 2, 93)։

Ածականի լրացումները՝ դրված կապերի հետ.— Ածականներն ավելի շատ լրացումներ են ունենում կապերի միջոցով։ Կապերը, ինչպես բայի, այնպես և ածականների լրացումները նրա հետ կապելու դերում հանդես գալով արտահայտում են զանազան վերաբերական իմաստներ։

Ամենից առաջ պետք է տարբերակել այսպիսի բառակապակցությունների երկու տեսակները՝ կապով լրացում ունենալու դեպքում։

Պես, չափ, նման կապերով լրացում ունենալու դեպքում ածականը կազմում է ձևաբանական իմաստ արտահայտող կա-

պակցություն, այն է՝ որակական ածականի համասարական համեմատական աստիճանի։ Այդ կապերի խնդիրները 1-ին, 2-րդ դեմքերի անձնական դերանունների դեպքում դրվում են տրական հոլովով, իսկ գոյականների դեպքում՝ սեռականով։ Այս կապակցությունները կարող են գործածվել ինչպես ածականի ստորոգելիական վերադիր, այնպես էլ պարզ և որոշիչ կիրառությունների դեպքում։ Հետևյալ նախադասություններում ածականը ստորոգելիական վերադիր է. «Տխուր էր և հայրս, մանկան չափ տխուր էր նա» (Ր, 4, 228)։ «Բայց ձյունի պես սառն է նա» (Ր, 4, 522)։ «Այդ գիծն այն էր, որ նա ցինիկի պես անկեղծ էր, լրբի պես համարձակ և երեխայի պես անփույթ» (ՆԴ, 2, 465)։ «Ու բարձր է, բարձր է կայանն իմ հոգու՝ Մասիսի նման բարձր է ու հաստատ–Հզոր, ահարկու», «Ահա թե ինչու է իմ ձայնն այսօր Հավերժի նման համառ ու հաստատ» (Չ, 270)։

Նույն կարգի կապակցությունները պարզ են հետևյալ նախադասություններում։ «Խեղճ մարդը մեռելի պես գունաթափ դողում էր» (ՎՓ, 2, 441)։ «Խմբագիրը, ընդհակառակն, սովորականի նման աշխույժ ու տենդոտ, կատարում էր իր առօրյա աշխատանքը» (ՆԴ, 1, 205)։ «Գարեգինի տրամադրությունը բոլորովին բացվեց, և ես նորից տեսա նրան առաջվա պես պարզամիտ, սրտաբաց, ուրախ ու շատախոս» (ՆԴ, 2, 442)։ «Վիրավորական լինելու չափ կարճառոտ և հրամայական գրել էին ընկերները» (ՋԴԱՎ, 212)։ «Երբեք նրան այսօրվա պես անհանգիստ չեմ տեսել» (Շիրվ., 2, 243)։

Այս կապակցությունները կատարում են նաև որոշչի դեր հետևյալ նախադասություններում։

«Ստեփանը ինձ նման չար ու անհանգիստ տղա էր» (Ր, 4, 262)։ «Ծառազարդ բլուրները մխում էին ձյունի պես ճերմակ գոլորշիներով» (Ր, 7, 22)։ «Անանի մարդն էր, դրոգապան Յագորը, իր դրոգի պես կոպիտ ու անտաշ, իր հսկա ձիու պես խոշոր ու ջլապինդ» (ՆԴ, 1, 73)։ «Մոտ քառասուն տարեկան տղամարդ էր արդեն, բոլորովին սպիտակահեր գլխով, գաջի պես գունատ դեմքով» (ՆԴ, 1, 189)։ «Նրանց միջից առաջ եկավ մի զորական, կարճահասակ ու կոճղի պես հաստատուն» (ԴԴՎ, 287)։ «Հետո պատից վերցնում եմ ծամի նման պիրկ մտրակը» (Յակ., 107)։ «Նրանք գալիս էին բարձրավանդակի տափարակից, որի մեջտեղը ադամանդի նման ջինջ լիճն էր» (Բակ., 207)։

Ածականը կապերի միջոցով ստանում է նաև այլ իմաստ արտահայտող լրացումներ, ինչպես՝ վերաբերության, հանգման,

նպատակի և այլն։ Կապի խնդիրները դրվում են սեռական, տրական, հայցական, երբեմն էլ բացառական հոլովներով։ Սակայն ամենից հաճախ գործածական են սեռականն ու հայցականը։ Այս կապակցություններից մի քանիսի մասին խոսվել է վերևում՝ կապված համապատասխան հոլովով լրացում ունեցող ածականների բառակապակցությունների հետ՝ իմաստային տեսակետից։ Այստեղ քննարկվում է ածականի կապային խնդրառությունն ընդհանրապես։ Ածականը լրացում կարող է ունենալ համար, նկատմամբ, դեպի, առանց, հետ և այլ կապերով։

«Նա մի լուռ, մտախոհ, միևնույն ժամանակ դեպի ամեն վատություն ոխերիմ էր» (Ր, 4, 409)։ «Վիրավորում էին առանց այն էլ վիրավոր սիրտը» (ՁԴԱՎ, 42)։ «Չէր իմանում, ինչպես վերջ տա այդ իրեն համար անախորժ տեսարանին» (ՆԴ, 1, 258)։ «Նա յուր համար և անզգալի կերպով սկսում էր փոքր առ փոքր ինքնամոռացության մեջ ընկնել» (ՆԴ, 2, 66)։ «Այս պատճառով մի դաղտնի և, մինչև այն իրան անծանոթ, կասկած պաշարեց յուր սիրտը» (Մուր., 4, 136)։ «Մտավ Ակոբը գզգզված հագուստով, մրից սևացած դեմքով, ձեռքերով և մինչև սրունքները մերկ ոտներով» (ՆԴ, 1, 53)։

Այս կապակցությունները և կարող են հանդես գալ ածականի տարբեր կիրառությունների դեպքում։ Այսպես, նման կապակցություններ կան ածականի ստորոգելիական վերադիր պաշտոնի դեպքում։

«Այս բոլորը պարզ էր Սամվելի համար» (Ր, 7 ,64)։ «Ձեռքերի բազուկները մինչև արմունկը մերկ էին» (Ր, 5, 41)։ «Արշակյանի համար անսպասելի ու զարմանալի էին գեներալի այդ խոսքերը» (ՀՔՄՏՁ, 1, 92)։

Նույն կարգի կապակցություններն առկա են նաև ածականի պարագա կիրառության դեպքում։

«Առաջին անգամն էր նա տեսնում Մսերյանին այդքան ուշադիր դեպի մի կին» (Շիրվ., 2, 386)։

Այդպիսի կապակցությունները հանդես են գալիս նաև ածականի որոշիչ կիրառության ժամանակ։

«Այն հոդվածը ով որ էլ գրած լինի, իմ կարծիքով, յուր մեջ ճեզ համար վիրավորական բան չի պարունակում» (Շիրվ, 2, 311)։ «Որը հանկարծ լուսավորեց իմ մինչ այդ մութ ներքին աշխարհը» (ՆԴ, 1, 119)։

Ժամանակակից հայերենում ածականն ստանում է աստիճանի և չափի, ժամանակի, ձևի մակբայներով և մակբայական իմաստ ունեցող կապակցություններով արտահայտված լրացումներ։ Մակբայներն ածականի լրացում են դառնում՝ արտահայտելով զանազան հարաբերություններ։ Մակբայ լրացումով կապակցությունները լինում են երկու տեսակ։ Առաջին խմբին պատկանում են չափի, աստիճանի մակբայներով (համապատասխանաբար նաև դերանուններով), ինչպես և աստիճանի մակբայի իմաստ ունեցող բառերով լրացում ունեցող այն բառակապակցությունները, որոնք արտահայտում են որակական ածականի համեմատության այս կամ այն աստիճանը (նվազական, առավելական համեմատական և բացարձակ գերադրական)։

Ածականի լրացում կարող են դառնալ ավելի, պակաս, առավել, խիստ, շատ, քիչ, մի քիչ, բավական, բավականին, չափազանց, փոքր ի շատե, սաստիկ, կրկնապատիկ, եռապատիկ, բազմապատիկ, փոքր-ինչ, վերին աստիճանի, մի տեսակ, քիչ թե շատ, սակավ ինչ, այն աստիճան, ծայր աստիճան, չափից դուրս, ավելի քան, բոլորովին, ամբողջովին, մասամբ, հազիվ, իսպառ *մակբայներն ու մակբայական կապակցությունները, ինչպես նաև մակբային հարաբերակից* այսքան, այնքան, այդքան, նույնքան, որքան, ոչ այնքան *դերանունները։ Թվարկած մակբայները, մակբայական կապակցություններն ու դերանունները լրացում են դառնում տարբեր կազմություն ու ծագում ունեցող ածականների համար. դրանք կարող են դրվել ինչպես գրաբարյան դերբայական ձևերի քարացումից առաջացած* (թախծալի, մատչելի, լսելի, նշմարելի, սոսկալի), *բայարմատին զուգահեռ* (զուրկ, տարբեր, մերկ, հարմար, ախորժ), *կամ կազմությամբ բարդ՝ երկրորդ բաղադրիչը բայարմատ ածականների* (արագաշարժ, երախտագետ, խանդավառ, ծանրախոհ, խաղաղասեր, շատախոս, հայրենասեր *և այլն*), *այլև պարզ ու ածանցավոր կազմություն ունեցող ածականների վրա* (տխուր, խոժոռ, բարձր, ջերմ, նոր, թույլ, վայելուչ, աննպատակ, պատրաստ *և այլն*)։ *Այս ածականներով կազմվում են բազմաթիվ կապակցություններ, ինչպես՝* ավելի կարևոր,— մատչելի,— սիրելի,— բարձր, առավել գեղեցիկ,— հրապուրիչ,— կարևոր, բավականին բարձր,— երկար, շատ կարեվոր,— հեռավոր,— բարձր,— ձեռնտու, չափազանց պարզ,— ուրախ,— գեղեցիկ, ոչ պակաս կարևոր,— հրապուրիչ, պակաս

մեղավոր,— արժեքավոր, սակավ կարևոր,— գրավիչ,— պետքական, սաստիկ շատախոս,— շոգ, կրկնապատիկ մեծ,— զորավոր, ծայր աստիճան հետաքրքրական,— դյուրագրգիռ,— ջղային, փոքր-ինչ կրոնական, քիչ թե շատ պետքական,— ինքնասեր, փոքր ի շատե ունևոր,— ծանոթ,— զգայուն և այլն։

Մակբայներն ածականի հետ կապակցվում են վերջինիս տարբեր կիրառության դեպքում։ Այսպես, չափի, աստիճանի մակբայները կապակցվել են ածականների հետ՝ վերջիններիս ստորոգելիական վերադիր գործածության ժամանակ։

«Մհեն շատ հավատարիմ էր» (Ր, 4, 369)։ «Բացի հարկերից, ավելի անտանելի էին զանազան տեսակ մաքսերը» (Ր, 4, 387)։ «Ճանապարհորդները սաստիկ շատախոս են լինում» (Ր, 5, 91)։ «Անկեղծ սրտով հարձակվեցան թշնամու դեմ, որ կրկնապատիկ զորավոր էր իրանցից» (Մուր., 4, 274)։ «Միայն գործը պետք է բավականին ծանր լինի և խոշոր» (Ր, 4, 361)։ «Այո, իշխան, ես պակաս հայրենասեր չէի» (Մուր., 4, 131)։

Այսպիսի կապակցություններ կան նաև ածականի պարագա կիրառության ժամանակ։

«Ես իմ մտքում խիստ դժգոհ մնացի Կարոյից» (Ր, 4, 272)։ «Նա կանգնած էր գետնի մակերևույթից բավականին բարձր» (Ր, 4, 319)։ «—Պապա,— կրկնեց Վանիչկան մի. քիչ ավելի բարձր, կարծելով, թե չլսեց» (ՆԴ, 1, 144)։ «Նա իրեն չափից դուրս ուրախ և երջանիկ էր զգում» (ՆԴ, 2, 254)։

Ավելի շատ են գործածվում այս կապակցությունները որոշիչ պաշտոնով։

«Այդ հասակում նա խիստ հաջողակ ձեռքեր ուներ» (Ր, 7, 59)։ «Այստեղ վիճակված էր նրան մի ուրիշ, ոչ պակաս կարևոր, նորություն ևս իմանալ» (Շիրվ., 2, 215)։ «Նա բավական գեղեցիկ տղամարդ էր, գեղեցիկ կազմվածքով և առավել ևս գեղեցիկ կապույտ աչքերով» (ՆԴ, 2, 349)։ «Հարցը փոքր-ինչ կրոնական բնույթ ուներ» (Ր, 7, 94)։ «Գրավում էր, ամենից առաջ, նրա մշտածիծաղ, վերին աստիճանի համակրելի դեմքը» (ՆԴ, 2, 452)։ «Գարեգին Սիսակյանը քիչ թե շատ ունևոր ծնողների զավակ էր» (ՆԴ, 2, 425)։

Համեմատության աստիճանի հարաբերությունն արտահայտվում է նաև չափ ու քանակի, աստիճանի ընդհանուր իմաստ ունեցող ցուցական և հարցական-հարաբերական դերանունների և ածականների բառակապակցության միջոցով։ Այստեղ դերանունը պարզապես փոխարինում է մակբային կամ մակբայական կա-

պակցությանը։ Սրանք լինում են երկու կարգի. մի դեպքում այդ դերանունները դրվելով ածականի վրա՝ ձևականորեն են նշում հատկանիշի աստիճանը, որն իրականում արտահայտվում է երկրորդական նախադասությամբ։ Այդպիսիք են **այնքան, նույնքան, այնչափ, նույնչափ** ցուցական դերանունները։ Քննարկվող կապակցությունները կարող են հանդես գալ ածականի տարբեր կիրառության դեպքում։ Հետևյալ նախադասություններում լրացյալ ածականը ստորոգելիական վերադիր է։

«Բայց նրանք **այնքան աղքատ** չէին, որ չկարողանային օգնել մեզ» (Ր, 4, 238)։ «Նրանք **այնքան մանր** էին, որ աչքը հազիվ էր տեսնում» (Ր, 4, 253)։ «Նրա մուտքն **այնքան փառավոր** և **բազմամարդ** էր, որ նմանվում էր հաղթական մի դարձի» (Մուր., 4, 399)։ «Ահռելի էր նա և **այնքան ուժեղ**, Որ հիսուն զոմեշ չունեին մեկտեղ» (ՂԱ, 371)։

Այսպիսի կապակցություններ կան նաև հետևյալ նախադասություններում, որտեղ ածականը պարզ է։

«Մարոն երբեք չէր երևացել ինձ **այնքան հրապուրիչ**, որպես այն առավոտ» (Ր, 4, 415)։ «Վարազվաղանը պատմեց Անգղի և Արտաշատի դեպքերը **այնքան գունավոր**, ինչքան հնար էր տալիս իր երևակայությունը» (ԴԴՎ, 483)։ «Մարդ չկար, և բրածո դինոզավրը **նույնքան ազատ** էր զգում իրեն, ինչպես արջը մեր օրերում» (Բակ., 3)։

Այս կապակցությունները կազմվում են նաև ածականի որոշիչ կիրառության դեպքում։

«Իմ առջև բացվում էր մի նոր տեսարան, **այնքան հիանալի, այնքան հափշտակիչ**, որպես մի գեղեցիկ պատկեր իր հրաշալի արհեստագործությամբ» (Ր, 4, 325)։ «Քարանձավի մուտքը **այնքան լայն** բացվածք ուներ, մինչ կիսով չափ երևում էր նրա ներսույքը» (Ր, 4, 458)։

Երբեմն չափի իմաստ ունեցող ցուցական դերանվան փոխարեն նույն դերով հանդես է գալիս ձևի իմաստ ունեցող ցուցական դերանուն։ Այս գործածությունը սակայն քիչ է տարածված։

«Պատերը և առաստաղը **այնպես սև** էին, որ դժվարանում էի որոշել, թե ինչով է ծեփված» (ՎՓ, 2, 265)։ «Ամենահամարձակ այծյամն **այնպես թեթև, այնպես հանդուգն** չէր կարող թռչել այն քարաժայռերի միջով, որպես Մարոն» (Ր, 4, 322—323)։

Բացի ձևական չափ արտահայտելուց, ցուցական և հարցական-հարաբերական մի շարք դերանուններ կարող են կապակցվել ածականի հետ ընդհանուր ձևով՝ հատկանիշի չափ կամ ա-

տիճան դրսևորելով։ Ածականների հետ կապակցվում են ինչքան, որքան, ինչ, այնքան (ոչ այնքան), այսքան, այդքան, նույնքան, այնպես, նույնպես դերանունները։

«Ախ, որքան լավ բան է եղել աշխատությունը» (Ր, 4, 236)։ «Այդ պատճառով Մագթաղի նույնպես ներմակ երեսը և չեկ մազերը չէին բարկացնում նրան» (Ր, 4, 246)։ «Ես առաջին անգամ տեսնում էի այնպիսի սիրուն երեխա, որի մեջ կար այնքան համարձակ անմեղություն, որի սիրտը այնքան տաք և զգայուն էր» (Ր, 4, 353)։ «Ինչու այդքան երկար տևեց քո ուխտագնացությունը» (Ր, 5, 8)։ «Բագրատյանը բնակվում էր մի պառավ կնոջից վարձած մի ոչ այնքան ընդարձակ անշուք սենյակում» (Շիրվ., 2, 228)։ «Ֆետրե գլխարկով մարդը տեսավ կնոջ սպիտակ ճակատը, սև մազերը և նույնքան սև աչքերը» (Բակ., 193)։

Ածականի լրացում կարող են դառնալ նաև ժամանակի և ձևի մակբայները։ Այսպես, ածականի հետ կապակցվում են միշտ, արդեն, տակավին, այժմ, երբեմն, մերթ, դեռ, դեռևս և այլ ժամանակի մակբայներ ու մակբայական կապակցություններ (միևնույն ժամանակ, նույն ժամանակ, այդ դեպքում, տվյալ դեպքում և այլն)։

Այս կապակցությունները հանդես են գալիս ածականի բոլոր կիրառությունների դեպքում։ Հետևյալ նախադասություններում ածականը ստորոգելիական վերադիր է։

«Ոտի վրա նա միշտ հիվանդ էր» (Ր, 4, 232)։ «Եվ վաճառականը միշտ խաբեբա է, միշտ խարդախ, միշտ անիրավ է» (Ր, 4, 485)։

Նույնպիսի կապակցություններ կան հետևյալ նախադասություններում, որտեղ ածականը կատարում է պարագայի պաշտոն։

«Բայց դարձյալ մնում էր միշտ աղքատ» (Ր, 4, 225)։ «Բայց նա մնաց միշտ բարի դեպի ինձ և դեպի մեր ընտանիքը» (Ր, 4, 420)։

Ժամանակի մակբայով կազմված կապակցություններն ավելի շատ գործ են ածվում որպես որոշիչ։

«Դավթի արտասանած ամեն մի պարբերություն համեմված էր ամենաընտիր և երբեմն շատ ինքնուրույն հայհոյանքներով» (ՆԴ, 1, 48)։ «Ջուլհակայի լռությունը փաղաքշում էին միշտ նոր, միշտ դյութիչ հնչյունները» (ՆԴ, 1, 123)։ «Միշտ երախտագետ մեր ազգը հայոց Նրան հռչակեց ազնիվ բարեգործ» (ՀԹ, 1, 192)։ «Լուսամուտի առջև երևում էին փողոցում տնկված ծառերի կատարների տակավին մերկ ճյուղերը» (ՆԴ, 2, 260)։ «Ուր է նրա կյանքի այն շարունակ քաղցր թմրությունը» (ՆԴ, 2, 285)։

«Բոլորն ազդվեցին այս արդեն խստադաժան, հուսահատ վճռից» (ԴԴՎ, 337)։ «Այստեղ-այնտեղ երևում էին մասրենու դեռ կանաչ թփերը» (ՀՔՄՏՁ, 1, 76)։

Ածականի լրացում են դառնում երբեմն նաև ձևի մի շարք մակբայներ, ինչպես՝ սովորաբար, անմիջապես, անհունորեն, ֆիզիկապես, հոգեպես, շեշտակի, ռազմապես, ի բնե, խստորեն և այլն։ «Սյունյաց լեռները կոհակում, վետվետում և հորձանք էին տալիս դեպի երկինք՝ փակելով հորիզոնը տեղ-տեղ շեշտակի բարձր» (ԴԴՎ, 24)։ «Իսկ դեմքը նույն ֆիզիկապես առողջ, կլորիկ, լեցուն դեմքն էր» (ՆԴ, 2, 416)։ «Ժողովուրդը երգում էր Արշակունիների ժամանակից դեռ կենդանի հեթանոսական ռազմական երգը, որ անկախ Հայաստանի ժողովուրդը հյուսել էր հին, ռազմապես հզոր օրերին» (ԴԴՎ, 119)։ «Ջնջին մարդուկներ, լրբորեն հանգիստ, Անսիրտ, փոքրոգի, պծուծ ու կոպիտ» (ՀԲ, 1, 94)։

ԱԾԱԿԱՆԸ ԱԾԱԿԱՆԻ ԼՐԱՑՈՒՄ

Հայտնի է, որ ածականը նախադասության մեջ կատարում է որոշչի, պարագայի և ստորոգելիական վերադրի պաշտոն։ Դրանցից դուրս ածականի կիրառությունը պայմանավորված է նրա փոխանցմամբ գոյականի։ Սակայն կան բազմաթիվ դեպքեր, երբ ածականները կատարում են չափի, աստիճանի, մակբայի դեր՝ նաև որակական ածականի համեմատության աստիճանը կազմելու դեպքում։

Համեմատության աստիճան կազմելու համար լրացման դերում կարող են հանդես գալ որակական-աստիճանական երանգավորման իմաստ ունեցող մի շարք ածականներ, ինչպես՝ զարմանալի, անսովոր, արտասովոր, անսահման, անհեթեթ, անբնական, անսպասելի, աներևակայելի, առասպելական, հրեշավոր, միատեսակ, միանման, միօրինակ, մշտական, ծայրահեղ, չարագուշակ, պարզ և այլն։ Հետևյալ նախադասություններում, որտեղ կան այսպիսի կապակցություններ, ածականը ստորոգելիական վերադիր է։

«Երիտասարդը արտակարգ բարեկազմ էր և գեղեցիկ» (ԴԴՎ, 60)։ «Երկուսն էլ միօրինակ սուրբ են նրա համար» (Ր, 4, 375)։ «Ինձ պարզ հասկանալի էր, թե քեռի Պետրոսի հեգնական ակնարկությունները ումն էին վերաբերում» (Ր, 4, 448)։ «Բայց բոլորը միանման անխոս էին և անշարժ» (Մուր., 4, 291)։

Ածականի պարագա գործածության դեպքում ևս կարող են կազմվել այդպիսի կապակցություններ։

«Եվ ամենի հետ նա վարվում էր միատեսակ մեղմ, սիրալիր և զարմանալի ուշադրությամբ» (Շիրվ., 2, 154)։ «Նա խորտակվել էր անսպասելի դյուրին, աննախընթաց հաջողությամբ» (ԴԴՎ, 536)։

Այսպիսի կապակցություններն ավելի շատ են հանդիպում ածականի որոշիչ կիրառության դեպքում։

«Անսովոր թափանցիկ օդի մեջ երկինքը մուգ փիրուզի գույն էր ստացել» (ՆԴ, 1, 167)։ «Խանբեգյանն այդ դիրքով ավելի հարմարություն ուներ դիտելու Վիկտորիա Պավլովնայի իրեն լավ ծանոթ դեմքը իր զարմանալի կանոնավոր գծերով» (ՆԴ, 1, 251)։ «Զարմանալի բարեսիրտ և հնազանդ աղջիկ էր նա» (ՆԴ, 2, 571)։ «Շատերի աչքն էր ընկնում նա իբրև մի անսովոր շնորհալի երեխա» (ՂԱ, 437)։ «Նա դիտմամբ ջանում էր ուղղակի ցույց անել իր անսահման բարձր աստիճանը մեծամեծներից» (ԴԴՎ, 63)։ «Վերջը Նյուսալավուրտը առաջարկեց ճակատ ուղարկել այրուձին և քուշանաց դեմ մաշել սառույց վտանգավոր կռիվներում» (ԴԴՎ, 531)։ «Նա ապրում էր ծայրահեղ մեծ հուզումնալի վիճակ» (ԴԴՎ, 377)։

Ուրույն տեղ ունեն որակական և հարաբերական ածականի բառակապակցությունները։ Լրացման դերում հանդես է գալիս որակական ածականը, իսկ լրացյալի դերում՝ հարաբերականը։ Այդ կապակցությունների կազմությունն արտացոլում է սղման երևույթը։ Որակական ածականը եղել է հարաբերական ածականի գոյական սկզբնաձևի որոշիչ, ապա և այդ ածականի լրացում։ Սկզբում եղել է, ասենք, սպիտակ բիբեղից (պատրաստված) տուփ, ապա դարձել է սպիտակ բիբեղյա։

«Դատարկ տուփը ձեռքին նա վազեց երեխաների մոտ, նրանց ցույց տալու սպիտակ բիբեղյա տուփը» (Բակ., 194)։ «Ծովափին սև բավիշե գլխարկով կինը հովանոցի ծայրով ավազի վրա նշաններ էր անում և ավերում» (Բակ., 194)։ «Կանյուշը, գիմնազիստի սպիտակ երիզավոր գլխարկը դեպի ծոծրակը ետ գցած, նստած էր ճաշասեղանի մոտ» (ՆԴ, 1, 264)։ «Դողդոջուն ձեռքով պատռեց ծրարը, հանեց պոստի նույնպես սև շրջանակավոր ազնիվ թուղթը և կարդաց» (ՆԴ, 2, 361)։ «Հազար հազար մարդ թուխ միրուքավոր, Հազար հազար մարդ սպիտակ ալեոր» (ՀԹ, 2, 114)։ «Երբեմն դռները բացվում էին, ներս ու դուրս էին անում պսպղան կոճակավոր մարդիկ» (Բակ., 139)։

ԹՎԱԿԱՆԸ ԱԾԱԿԱՆԻ ԼՐԱՑՈՒՄ

Շատ գործածական են այն բառակապակցությունները, որոնք կազմվում են օրական, ամսական, տարեկան *և նման ածականներով՝ քանակական թվականների հետ։ Այս դեպքում ածականը զուրկ է շարահյուսական ինքնուրույն դերից, որպիսին ստանձնում է միայն թվական լրացման հետ։ Թվականն այստեղ նշում է ժամանակային հատկանիշի թվական չափը, այսինքն դրսևորում է հատկանիշի սահմանափակությունը ժամանակի շղթայի մեջ։ Թվականն ու ածականը սերտ միասնություն են կազմում՝ հանդես գալով իբրև նախադասության մեկ անդամ։ Օրինակներ՝* «Հինգ տարեկան *երեխա էր, որ հայրն ու մայրը մեռան» (ՆԴ, 3, 12)։ «Սառատ կանաչի մեջ կանգնած էր հազիվ* մի ամսական *սպիտակ մի գառ» (ՆԴ, 3, 8)։*

Քանակական թվականները լրացական հարաբերությամբ կապակցվում են— անի *ածանցով կազմված ածականների հետ* (հարկանի, գլխանի, աչքանի *և այլն)։ Դրանցով կազմվում են՝* հինգ հարկանի, երեք գլխանի, վեց աչքանի, երեք ոտանի *և այլ բառակապակցություններ։ Ածականը ցույց է տալիս որևէ հատկանիշ, իսկ թվականը, նրա վրա դրվելով, սահմանափակում է այդ հատկանիշը։ Այսպիսի բառակապակցությունները նույնպես շարահյուսական միասնական դեր են կատարում։ Օրինակ՝ «Իր համար* երկու հարկանի *բնակարան է շինել Երևանում» (ՔԹՈՀ, 430)։*

ԱԾԱԿԱՆԻ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ ՈՒՆԵՆ՝ ԱՌԱՆՑ ՍՏՈՐՈԳՄԱՆ

Յուրահատուկ տեղ են գրավում ածականի այն կապակցությունները, որոնցում ածականը ստորոգյալի տեսք ունի։ Դրանք շարահյուսական յուրահատուկ, դերբայական դարձված հիշեցնող կազմություններ են։ Որ ածականի կապակցությունները դերբայական դարձվածին մոտ են, յուրահատուկ դարձված են, հեշտությամբ կարելի է տեսնել դերբայական դարձվածի և դրանց միասին գործածվելու դեպքերից։ Նախադասության մեջ այդ երկու կապակցությունները երբեմն նույն պաշտոնով իրար հետ են հանդես գալիս։

«Ու մարդասպանը դուրս եկավ ձորից, Դեմքը այլայլված, քայլվածքը մոլոր» *(ՀԹ, 2, 64)։*

Առանձին վերցրած դրանք կարող են դիտվել իբրև նախադասություն՝ առանց ստորոգման, իբրև նախադասության կմախք, որը ստորոգմամբ վերածվում է նախադասության։ Այդտեղ, իս-կապես ասած, դժվար է լրացում-լրացյալ կապակցություն փնտրել, այլ ավելի շատ կա բաղադրիչների համազոր կապակցություն ճիշտ այնպես, ինչպես նախադասության ենթակայի և ստորոգյալի միջև եղած կապն է։

Անհրաժեշտ է նշել, որ այս կարգի կապակցությունները համընկնում են նախադասության անդամ հասկացությանը։

Դրանք ավելի շատ հանդես են գալիս որոշիչ կիրառությամբ։

«Միմյանց հետևից նրա գլխում հղանում էին զանազան մըտքեր, մեկը մյուսից վատ, առելի և գարշելի» (Շիրվ., 2, 371—372)։ «Դեղնավուն դեմքը հետզհետե սևանում էր, միշտ մաքուր սափրած երեսը ծածկվում էր սևը սպիտակի հետ խառն մազի փշերով» (ՆԴ, 2, 233)։ «Բերանն արնոտ Մարդակերը էն անբան Հազար դարում հազիվ դառավ մարդասպան» (ՀԹ, 1, 152)։ «Հե՜յ ագահ մարդ, հե՜յ անգոհ մարդ, միտքդ երկար, կյանքդ կարճ» (ՀԹ, 1, 153)։ «Քու հերը ձեռին մի աշխարհ ուներ, Որսով մեջը լի որսի սար ուներ» (ՀԹ, 2, 104)։ «Հատակը ծաղկաշար գորգերի նուրբ մանրանկարները խոժոռ էին բերում նայողի աչքերին» (ԴԴվ, 230)։ «Մռայլ ամպերից, հզոր կայծակով Սիրտը շանթահար մի մրրկահավ Ծովափի խոժոռ ժայռերին ընկավ» (Իս., 1, 199)։

Կան նաև այդ կապակցությունների պարագա կիրառության մի շարք օրինակներ.

«Ծծում էր աչքերը փակ» (ՆԴ, 1, 52)։ «Թռչում է միշտ իմ մտքում Թևը արնոտ ու մոլոր» (ՀԹ, 1, 151)։ «Ձեռքերն արնոտ դնում է նա դեռ կամկար» (ՀԹ, 1, 152)։ «Եվ ողջ ծաղրեց, երբ ապրում էր Գրպանները լի ոսկին» (ՀԹ, 1, 189)։ «Մի հուրհրեղեն հայտնվեց քաջին, Ոտները ամպոտ կանգնեց առաջին» (ՀԹ, 2, 98)։ «Առաջ վազեց մազերն արձակ Մելքի պառավ մայրը ջադու» (ՀԹ, 2, 128)։ «Կանգնած է մարդը արևի տակին, Ոտն ու ծունկը բաց, բահը դրած ուսին» (ՂԱ, 11)։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԹՎԱԿԱՆԻ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թեև թվականը հազվադեպ է լրացումներ ստանում, սակայն ժամանակակից գրական հայերենում գործածական են այլ խոսքի մասերով և թվականով կազմված մի շարք բառակապակցություններ, որոնք տարբեր են ինչպես բաղադրիչների փոխհարաբերության, այնպես էլ իրենց արտահայտած իմաստների տեսակետից: Առաջին հերթին պետք է նշել քանի, մի քանի *դերանունների և թվականի կապակցությունը, որն արտահայտում է մոտավոր, ոչ որոշակի թվի հասկացություն: Այս ձևով ունենում ենք* մի քանի հարյուր, քանի՞ հարյուր, մի քանի հազար, մի քանի միլիոն: Մի քանի *դերանունը (որն իր ծագմամբ* մի *թվականի և* քանի *դերանվան կապակցություն է) կարող է կապակցվել նաև հավաքական թվականի իմաստ ունեցող* տասնյակ *բառի հետ* (մի քանի տասնյակ):

Սակայն պետք է նշել, որ քանի, մի քանի *դերանունները ոչ բոլոր թվականների հետ կարող են կապակցվել: Այդ բառերի հետ կապակցության մեջ մտնում են մեծ համրանք արտահայտող թվականները միայն (*հարյուր, հազար, միլիոն, միլիարդ *և այլն):*

«Նրա համար ինչ նշանակություն ունի, եթե մեր կոլխոզում մի քանի հարյուր *հեկտար կմնա առանց հերկելու ու ցանելու» (ՍԽՀ, 605): «Հայկ,* քանի հազար *անգամ ասել եմ, որ քեզ հասկացող, գնահատող չկա, չկա, չկա» (ՔԹՈՀ, 773):*

Քանակական թվականների հետ սերտ բառակապակցություն է կազմում հավաքական թվականի իմաստ արտահայտող տասնյակ *բառը: Այդպիսի բառակապակցությունները մոտավոր անորոշ մեծ թվի հասկացություն են արտահայտում:* Տասնյակ *բառի հետ նույնպես կապակցվում են* հազար, միլիոն, միլիարդ *և այլ խոշոր թվականներ (*տասնյակ հազար, տասնյակ միլիոն *և այլն):*

Այս բառակապակցությունների լրացյալ թվականը կարող է ածականակերտ ածանց էլ ստանալ, սակայն դարձյալ թվական հասկացություն կարտահայտի։ Օրինակ, տասնյակ հազարավոր, տասնյակ միլիոնավոր *և այլն։*

Թվականի հետ կապակցություն են կազմում նաև մի շարք ածականներ, դերանուններ, մակբայներ։ Դրանցում թվականը կարող է հանդես գալ կա՛մ ինքնուրույն շարահյուսական պաշտոն կատարող, կա՛մ թե այլ ֆունկցիա կատարող բառերի հետ կապակցված։ Որոշ դեպքերում թվականը կարող է գոյականաբար առնված լինել կամ չլինել։ Սակայն բոլոր դեպքերում էլ այն դիտվում է իբրև տվյալ բառակապակցության գլխավոր բառ, լրացյալ, որի լրացումն են այդ բառակապակցության մեջ մտնող ածականը, դերանունը կամ մակբայը։

Իմաստային տեսակետից այդ բառակապակցությունները միասնական են, բաղադրիչները զատել հնարավոր չէ։

Այսպես են՝ հազիվ երեսուն տարեկան, ուղիղ ժամը վեցին, ընդամենը երեք հատ, առնվազն հինգ ցենտներ, մոտ քառասուն տարի, ամբողջ երեք օր, ճիշտ քսան կտոր *և այլն։*

«Ուղիղ ժամը տասին *ընդարձակ այդ համարը մտավ միջահասակից քիչ բարձր, վայելչակազմ, գեղեցկադեմ,* հազիվ քսանհինգ տարեկան *մի զինվորական՝ գնդապետի ուսադիրներով» (ԳՍԹ, 1, 62)։ «Մենք քիչ ենք,* ընդամենը երեսուն *հոգի» (ՍԽՀ, 445)։ «Բերքը* առնվազն մեկ ցենտներով *ավելի պետք է լինի» (ՍԽՀ, 543)։ «*Ամբողջ չորս տարի *վշտի և հուսահատության մեջ սպասելը շատ շատապե՞լ է նշանակում» (ՆԴ, 1, 211)։*

Բերված բառակապակցություններում ածականը, դերանունը, մակբայը կամ ճշգրտում են թվականի ցույց տված չափը (ուղիղ, ընդամենը, ամբողջ, միայն), *կամ մոտավոր չափ են ցույց տալիս* (հազիվ, գրեթե, մոտ)։

Սակայն մոտավոր թվի հասկացությունն արտահայտվում է նաև մի *քանակական թվականի կապակցությամբ ուրիշ քանակական թվականների հետ։ Այսպես, օրինակ,* մի երկու, մի տասնհինգ *(հոգի),* մի հարյուր *(մարդ)։*

«Մի տասը *րոպե անց նրանք արդեն նստել էին սեղանի մոտ» (ՍԽՀ, 740)։* «Մի երկուսի *նժույգները խրխնջում էին կատաղությունից» (ԴԴՎ, 14)։*

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԴԵՐԱՆՎԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայերենում դերանունը սովորաբար լրացումներ քիչ է ստանում։ Եղածներն էլ մեծ մասամբ բացահայտիչ են, որը, ինչպես հայտնի է, իր լրացյալի հետ բառակապակցություն չի կազմում։ Սա վերաբերում է մեծ մասամբ գոյականին հարաբերակից դերանուններին։ Անձնական, ցուցական, որոշյալ և այլ դերանուններ կարող են բացահայտիչ ունենալ, որը նրանց մոտ երկու ձևով է դրվում։ Մի դեպքում բացահայտիչը համաձայնվում է թվով, հոլովով, դեմքով, նույնիսկ հոդով։

«Ես, պոետս, Լենինյան բոլշևիկս՝ Պատին կռթնած ահա լսում, լսում եմ նրանց ձայնը» (Չ, 369)։ «Թվում էր նրան, Համոյին» (Չ, 286)։ «Այդ նա է, Լենինը» (Չ, 354)։ «Ցրված էր նա, կայարանը, հսկա ու հաղթ, նրանց առաջ» (Չ, 251)։

Երբեմն բացահայտիչը հոդով չի համաձայնվում բացահայտյալին։

«Նա նայում էր մեզ՝ իր դեմ նստածներին» (ՄԱՊՀՉ 308)։ «Եվ ինչո՞ւ միայն նա երգի— Միայն նա— նաիրցի մի Պողոս» (Չ, 183)։ «Եվ ես, պոետս իմաստուն, ահա երգում եմ նորից» (Չ, 37)։

Յուրահատուկ են այն կառուցվածքները, որոնցում դերանունն ստանում է տրոհված լրացում, որը կարող է մեկնաբանվել և իբրև բացահայտիչ (հոդով չհամաձայնող), և՛ իբրև պարագա։ Այս դեպքում լրացում լինում են և՛ գոյականները, և՛ ածականները, որոնք կարելի է հասկանալ կա՛մ իրենց բուն՝ ածականական իմաստով գործածվող, կա՛մ գոյականաբար գործածվող։ Օրինակներ՝ «Նա, արդեն տարիքոտ մարդ, հուզումով վերակարդացել է իր մանկության գրքերը» (ՄԱՊՀՉ, 173)։ «Իզուր է նա, անկոչ

նյութ, *համարձակվում միջամտել»* (ՄԱՊՀՁ, 367)։ «*Արևի դեմ*, դու, թույլ, *հանգար»* (Ձ, 307)։

Այսպիսի կառուցվածքին մոտ են այն դեպքերը, երբ դերանվան մոտ դրված գոյականը կամ ածականը կարելի է հասկանալ և՛ իբրև նրա լրացում (բացահայտիչ), և՛ իբրև ստորոգելիական վերադիր։

«Դու–լույս, *անցար ու չկաս։* Դու–բերկ, անմարմին, անծիր» (Ձ, 34)։ «*Իսկ Թարոնով նրանք զվարճանում էին ինչպես դատարկապորտով,* որը, *արտանյալ* ճծույգ, *չի տեսել կյանքի ոչ մի դառնություն»* (ՄԱՊՀՁ, 66)։ «*Պիտի հրդեհեմ ու քանդեմ հիմա՝* Ես–արփա, աստված, տենդ, դժոխք, ու մահ, Ես–ճշմարտության խարազանը *մերկ»* (Ձ, 240)։ «*Ես էլի քո փառքը կերգեմ—* Ես— *չնչին, վերջին* պոետ» (Ձ, 202)։ «Ես էլ հիմար՝ *ճիշտ եմ կարծել»* (ՀԹ, 1, 241)։

Դերանվան բացահայտիչը կարող է նաև երկրորդական նախադասությամբ արտահայտվել։

«Մենք, որ մի նոր կյանք ենք կանգնել, *Չունենք երգեր հաստ ու խոր»* (Ձ, 114)։ «Դուք, որ ուզում եք աշխարհին խաբել, *Եվ դատաստանի առաջ դողալով Գիտեք կեղծավոր արտասուք թափել»* (ՀԹ, 1, 25)։

Իհարկե, ճիշտ չէ այն կառուցվածքը, որտեղ իբրև լրացյալ հանդես է գալիս երբ *հարաբերական դերանունը։ «Եղե՞լ է երբ, որ քո մտքում հուրհրացող խոհ մի խոր Գրի առած՝ լինի այդքան ինքնաբավ ու այդքան նոր»* (Ձ, 176)։

Սակայն հարցական, հարաբերական, անորոշ, որոշյալ դերանունները կարող են ստանալ բացառական, երբեմն և սեռական հոլովով դրված լրացում, որը մասնական իմաստ է արտահայտում։ Ավանդական քերականագիտության մեջ այս դերանունները հենց մասնական անունով էին կոչվում (ոչ իբրև դերանվան տեսակ)։

«*Արծիվն ու կաղնին էսպես վիճեցին, Թե* որն իրենցից *շատ տարի կապրի»* (ՀԹ, 1, 127)։ «Ով որ *հայ* ազգից *մտել է իր մոտ»* (ՀԹ, 1, 266)։ «*Էդ վեճի ժամանակ երկաթուղու գծի վրա աշխատող* օտարականներից մինը *ձորիցը դուրս եկավ»* (ՀԹ, 1, 344)։ «Ձեզանից ո՞վ *ալյուր կծախի»* (ՀԹ, 1, 344)։ «Ով մեզանից *կլինի փոշման»* (ՀԹ, 2, 130)։ «*Ես չգտա ոչ* մեկին Երազներից *իմ շքեղ»* (ՀԹ, 1, 136)։ «Մեկն *էլ այն է հոգուս անթիվ* տենչերի» (ՀԹ, 1, 66)։

Երբեմն նախադասության մեջ բացառականով դրված բառը

կարելի է մեկնաբանել կա՛մ իբրև դերանվան մասնական լրացում, կա՛մ բայի լրացում։ Այսպես, «Ո՞վ առաջինն ասավ ողջերթ Քեզ մեր հողից, մարդու ցեղից» (ՀԹ, 1, 143) նախադասության մեջ հողից, ցեղից ձևերը կարելի է դիտել և՛ ով դերանվան լրացում (հողից ով, ցեղից ով), և՛ ասավ բայի լրացում (հողից ասավ, ցեղից ասավ)։

Այս դերանունները կարող են ստանալ նաև որոշիչ լրացում՝ արտահայտված ածականով, դերբայներով, ցուցական դերանուններով և այլ խոսքի մասերով։ Նկատելի է, որ այսպիսի բառակապակցությունները կազմվում են բացառապես գոյականին հարաբերակից դերանուններով և համարժեք են համապատասխան գոյականների բառակապակցություններին։

«Այժմ այլևս խոսելու ոչինչ չունեին» (ՄԱՊՀՋ, 160)։ «Նա և Բրաբին չունեն խոսելու ոչինչ, որոշելու ոչինչ» (ՄԱՊՀՋ, 328)։ «Հեգնական ու չար ոչինչ չկար տղայի արտահայտության մեջ» (ՋԴՍՎ, 88)։ «Իսկ բակամիջում կանգնած մյուսը ետ-ետ քաշվելով, գնաց» (ՎԽԳԼ, 83)։ «Մի այդպիսին կար» (ՎԽԳԼ, 216)։ «Ինչու պատահեց էն ամենը, ինչ որ ինքը տեսավ» (ՀԹ, 1, 315)։ «Տվել է, որ դու այդ ամենը... Պարզես գալիքի ցնորքին անհաս» (Չ, 144)։ «Պատահեցիր ուրիշ մեկին» (ՀԹ, 1, 108)։ «Չկա ոչ-ոք ինձնից ուժեղ» (ՀԹ, 1, 245)։

Սրանցից տարբեր է այն դեպքը, երբ գոյականին հարաբերակից դերանունն ստանում է այնպիսի լրացում, որը գործածված է այլ խոսքի մասի փոխարեն։ Այսպես, «Ամբողջ աշխարհում մի դու ես, որ կաս» (ՀԹ, 1, 251) նախադասության մեջ մի բառը դու ստորոգելիական վերադրի լրացումն է, սակայն գործածված է միայն եղանակավորող բառի նշանակությամբ։

Բառակապակցություններից են առաջացել ամեն մեկը (ամեն մինը), յուրաքանչյուր ոք, ամեն ինչ։

Լրացական հարաբերությամբ կազմված բառակապակցություններից պետք է տարբերել այն կազմությունները, որոնցում համազոր բաղադրիչ են լինում կա՛մ երկու դերանուն, կա՛մ որևէ դերանուն (սովորաբար անձնական և որոշյալ) և գոյական (կամ գոյականաբար գործածված որևէ բառ)։ Այդպիսի կառույցվածքի մի կիրառությունը համարված է բաղադրյալ ենթակա[1]։

«Մենք ամենքս հյուր ենք կյանքում» (ՀԹ, 1, 157)։ «Թող

[1] Տե՛ս Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ. 1, Երևան, 1958, էջ 33—45, նաև «Грамматика русского языка», т. 2, ч. I, М., 1954, էջ 372—377։

բոլորը նրանք երգեն» (Չ, 282)։ «Երեխան ինքն է այդպես արել»։

Սակայն հարկ է նշել, որ երկու դերանվան կամ դերանվան և գոյականի այսպիսի զույգերը գործածվում են ոչ միայն ենթակայի, այլև նախադասության այլ անդամների դերում։ Այսպես, «Մեզ բոլորիս սիրով ընդունեցին»։ «Նրանց ամենքի աշխատանքը բարձր գնահատվեց» նախադասություններում գործածված են զույգ դերանունները թեք հոլովներով և տարբեր պաշտոններով։ Իսկ սա ցույց է տալիս, որ այդ զուգադիր դերանունները յուրահատուկ տեսակի բառակապակցություն են, թեև դրանք այլ դեպքերում անվանողական դեր չունեն։ Դրանք այնպիսի բառակապակցություն են, որոնք հանդես են գալիս միայն նախադասության մեջ՝ պայմանավորված նրանց շարահյուսական միասնական դերով։

Վերջապես պետք է նշել կոչական կառուցվածքում ով բառի և երկրորդ դեմքի անձնական դերանունների համատեղ գործածությունը։ Առհասարակ ով հարաբերական դերանունը կոչականի հետ զուգակցված է գործածվում։

«Ով մեր մեռած վարպետներ, իմ թախանձանքը լսեք» (Չ, 174)։ «Ով իմաստուն, այդ շերեփով չի դատարկվի այս կաթսան» (Չ, 175)։ «Ի՞նչ ես ուզում դու, ով սուրբ ալևոր» (ՀԹ, 1, 265)։ «Պապանձվիր, ով լիրբ» (ՀԹ, 2, 23)։

Նույն ձևով ով դերանունը կարող է զուգակցվել նաև երկրորդ դեմքի դերանվան հետ՝ վերջինիս կոչական կիրառության դեպքում, որը քիչ է հանդիպում։ Օրինակ՝ «Քայլերով երկաթյա և անդրդվելի եկեք ուրեմն, ով դուք» (Չ, 167)։

Կոչական կառուցվածքներում հնարավոր է նաև երկրորդ դեմքի դերանվան հետ՝ որևէ գոյականի (կամ գոյականաբար առնված բառի) գործածությունը։ «Ախ, չարամիտ դու ավազակ, ինչ խաբար է, երկու հատ ձագ» (ՀԹ, 1, 239)։ «Այ, դու սատանա, է՞լ կուզես խաբել» (ՀԹ, 2, 95)։

Երբեմն ով բառի հետ դրվում են և՛ երկրորդ դեմքի դերանունը, և՛ կոչականը։ Օրինակ՝ «Ետ արի, սասալ, ով դու աստծու մարդ» (ՀԹ, 1, 265)։ «Ուղարկում եմ գիրքս քեզ, Ով դու ընթերցող» (Չ, 92)։ «Ով դու անիրավ, ի՞նչ եմ արել քեզ» (ՀԹ, 2, 94)։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԲԱՅԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժամանակակից հայերենում բայը կարող է լրացումներ ստանալ գոյականով (և հոլովվող ամեն մի բառով, այդ թվում և գոյականին հարաբերակից դերանուններով), մակբայով,ածականով, դերբայներով[1]։ Ընդ որում գոյական լրացումով բառակապակցությունները բաժանվում են երկու խմբի. ա) բայի լրացումն արտահայտվում է որևէ հոլովաձևով՝ առանց կապերի, բ) բայի լրացումն արտահայտվում է հոլովաձևերով և կապերով (կապային լրացումներ)։ Ուսումնասիրության մեջ հաշվի ենք առել այս հանգամանքը և այդ երկու տեսակները առանձին-առանձին քննել։

Բայի լրացման դերում հանդես եկող դերանունները դրսևորում են այն խոսքի մասերի առանձնահատկությունները, որոնց հարաբերակից են նրանք (գոյական, ածական, մակբայ, թվական և այլն)։ Այս հանգամանքը նկատի ունենալով էլ բայ-դերանուն առանձին տեսակի բառակապակցություն չենք քննում։

Մի քիչ այլ է բայ-դերբայ բառակապակցությունների հարցը։ Անորոշ դերբայի թեք հոլովաձևերը բայի լրացման դերում հանդես են գալիս գոյականի հատկանիշներով և իմաստային նույնպիսի հարաբերությամբ։ Ուստի անորոշ դերբայի թեք հոլովա-

---

[1] Բայական բառակապակցությունների ուսումնասիրության մեջ նկատի չենք առնում քիչ գործածվող այն կառուցվածքները, որոնցում բայի լրացման դերում հանդես են գալիս թվական անունները՝ վերջիններիս անմիջական լրացյալի զեղչման հետևանքով։ Օրինակներ՝ «—Դե որ չես սիրել՝ չես հասկանա —հազար նկարազրեմ» (ՆԴ, 2, 420)։ «Մին-Երկու լռեց» (ՀԹ, 100)։ «Հազար-հազար հավաքվեց» (Չ, 158)։ Դասական թվականի՝ որոշիչ հոդով ձևից պետք է տարբերել նույնաձև մակբայը. «Առաջինը այգի մտավ Կարինեն» (ՔԹՈՀ, 99)։ Անշուշտ, մերժելի է քանակական թվականի գործածությունը մակբայի փոխարեն։ Օրինակ՝ «Այստեղ էլ Ավետիքը Երկու ուրախացավ» (ՎԽԴՎ, 148)։ Այս օրինակում Երկու գործածված է կրկնակի մակբայի փոխարեն։

ձևերի քննությունը չենք զատել բայ-գոյական բառակապակցությունների ուսումնասիրությունից։ Նույն ձևով և հարակատար, ենթակայական դերբայների հոլովաձևերի քննությունը չի անջատված գոյականի հոլովաձևերի քննությունից։ Սակայն դերբայների ոչ գոյականական կիրառությունները բայի լրացման դերում դարձել է առանձին քննության առարկա։

1. ԲԱՅԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԳՈՅԱԿԱՆՈՎ (ԵՎ ՀՈԼՈՎՎԱԾ ԱՅԼ ԲԱՌԵՐՈՎ)

Բայի լրացումները դրվում են տրական, հայցական, բացառական, գործիական և ներգոյական հոլովներով։ Այս հոլովները գերազանցապես բայի լրացումների արտահայտման միջոց են (թեև մի շարք դեպքերում գոյականները ևս ստանում են այդ հոլովներով լրացումներ[1])։ Իհարկե չենք անտեսում նաև ածականների խնդրառությունը հիշյալ հոլովներով։

Այս հոլովները բայի լրացման դերում հանդես գալով արտահայտում են իմաստային բազմազան հարաբերություններ, որոնց բացահայտումն էլ կազմում է սույն հետազոտության նյութը։

Ժամանակակից հայերենում բայի լրացումները հազվադեպ կարող են դրվել նաև սեռական հոլովով, որն իր բնույթով գոյականի լրացումների դրսևորման ձև է։ Առհասարակ սեռական հոլովը բայի հետ չի կապակցվում։ Դա երևում է նրանից, որ դիմավոր ձևի մոտ սեռականի գործածությունը հնարավոր չէ։ Սակայն նախադասության մեջ գոյականական կիրառություն ունեցող որոշ դերբայներ կարող են ստանալ նաև սեռականով լրացում, որը գրական լեզվի ոգուն շատ հարազատ չէ։ Բնորոշ է, որ սեռականով լրացումները հանդես են գալիս ներգործական սեռի բայերի ենթակայական, երբեմն էլ անորոշ դերբայների հետ, որոնք, ինչպես հայտնի է, ամենից շատ են մոտ գոյականին (Այս դերբայները ձևաբանական դեմքից զուրկ են. նրանցով ժամանակներ չեն կազմվում։ Նրանց դերը զուտ շարահյուսական է, և այն էլ անորոշ դերբայը միայն գոյականի դեր ունի, իսկ ենթակայականը՝ գոյականի և ածականի, որն, ի դեպ, ավելի բնորոշ է նրան)։ Այս տեսակետից հետաքրքրական է այն երևույթը, որ

[1] Տե՛ս «Գոյականի լրացումները թեք հոլովներով (առանց սեռականի)» բաժինը։

սեռականով դրված բառը գոյականի և ենթակայական դերբայի լրացում է հավասարապես։

«Ազատ էր Սարուկը, ազատ, բայց ոչ որպես փախստական, այլ իբրև տեր և իշխող իր տան ու տեղի, իր անդ ու անդաստանի, իր ձորերի ու հովիտների, իր լեռների ու բլուրների, իր հոտ և նախրի» (ՂԱ, 393)։ «Թեև այսօրինակ անբավ գանձերի ստեղծողն է ու տերը, բայց տեղյակ չէ դրանց» (ՍԽՄԽ, 169)։

Գործածական են մասնավորապես ենթակայական դերբայով կազմված բազմաթիվ կապակցություններ, ինչպես՝ (որևէ) գրքի կարդացող, գրերի գտնող, բարիքների պարգևող, խնդիրների կատարող, հաջողության ցանկացող, գաղափարների ստեղծող, տան պահող և այլն։

«Հապարացոց ոստիկանը, հարկավ, հայոց թագավորի հաջողության ցանկացող չէր» (Մուր., 4, 85)։ «Էլ իմ պահողն ո՞վ կլլի» (ՆԴ, 1, 77)։ «Մոլորության թշնամի է եղել և միևնույն ժամանակ ստեղծող բոլոր վեհ և առաջադեմ գաղափարների» (ՆԴ, 1, 129)։ «Նա է լինելու աշխարհի մի վերջերորդական մասի հիմնիվեր շրջողը և համայն մարդկության ապագա նախատագրի կերտողը» (Շիրվ., 8, 348)։ «Ի վերջո այդ կայսն է նայրենիքի ստեղծողն ու պահողը» (ՎՏ, 2, 331)։ «Սա է մեր քաղաքի քաղցնողը» (ՂԱ, 247)։ «Այդ մեծ մարդը եղել է հայոց, վրաց և աղվանից գրերի գտնողը» (ՂԱ, 403)։ «Մենք գոնե մի բարի խոսքով հիշում ենք դրա կառուցողին» (ՄԱՊՀՉ, 359)։

Երբեմն անորոշ դերբայը ևս սեռականով լրացում է ստանում, ինչպես՝ մի բանի գտնելը, գործի քննելը, պատերազմի սկսելը, դրամագլխի խոշորացնելը, ուղկանի ժողովելը, փումսի փչելը, աղորքի կարդալը, հացի ուտելը և այլն։

«Փողի գտնելը հեշտ է, դերվիշ բաբա» (ՀԹ, 1, 486)։ «Տեսան, որ Հերիմնազի փախցնելը դժվար գործ է» (ՂԱ, 603)։ «Օրերով տենչացած հացի ուտելն այժմ դարձել է տանջանք» (ԲՀԱՉ, 134)։

Սակայն պետք է դիտել, որ արդի գրական լեզվին այդ կապակցություններն արդեն խորթ են։ Ինչպես երևում է բերված օրինակներից, դրանք հիմնականում հանդես են գալիս անցյալ դարի գրողների երկերում (թեև հանդիպում են այժմ էլ)։ Գրական լեզվի նորմաներով ուղիղ խնդիրը դրվում է հայցականով (նկատի չունենք մասնակի բացառությունները)։ Հետևաբար պետք է գործածել հաջողություն պարգևող, պետություն(ը) կերտող, գաղափարներ(ը) ստեղծող, տուն(ը) պահող, պատե-

ռազմ(ը) սկսելը, ուռկան(ը) ժողովելը, հաց(ը) ուտելը *և այլն*։

Բայի խնդրառության (հոլովառության) քննարկման ժամանակ երևան են գալիս մի շարք առանձնահատկություններ, որոնք պետք է նկատի ունենալ։

Ամենից առաջ անհրաժեշտ է նշել, որ բայի խնդրառությունը պայմանավորված է առաջին հերթին լրացյալի բառային իմաստով։ Իմաստային ընդհանրություն ունեցող բազմաթիվ բայեր կարող են ստանալ նույն բնույթի լրացում։ Այսպես, նպատակային շարժում ցույց տվող բոլոր բայերն էլ ունեն ուղղության հայցականով լրացում (գնալ տուն, հրավիրել տուն, ուղարկել տուն, փոխադրվել *(նոր)* տուն *և այլն*)։ *Ասացական բայերը հավասարապես ստանում են վերաբերության անուղղակի խնդիր լրացում* (պատմել մեկի, մի քանի մասին, խոսել մեկից, մի քանից,— մի քանի մասին, հարցնել մեկից,— մի քանի մասին *և այլն*)։ *Այսպես նաև ներգործական մի շարք բայեր* (ունենալ, ցանկանալ, իմանալ, լսել, մտածել, զգալ *և այլն*) *ուղիղ խնդիր են ստանում միայն իրի առումով, ինչպես՝* հաց ունենալ, առողջություն ցանկանալ, լուր իմանալ, երաժշտություն լսել, ցավ զգալ, *(լավ)* բան մտածել *և այլն*։ *Այդ է պատճառը, որ նման բայերի մոտ անձ ցույց տվող գոյականներն էլ իրի առումով են հանդես գալիս* (հայր, մայր, կին, երեխա ունենալ)։

Միաժամանակ պետք է նշել, որ խնդրառության գործում կարևոր նշանակություն ունի լրացման իմաստը։ Այսպես, նույն բայը նույն հոլովի հետ կարող է կազմել տարբեր բնույթի կապակցություններ, որոնք պայմանավորված են լրացման իմաստով։ Օրինակ, ստեղծել *բայը բացառականով լրացումներ է ստանում տարբեր իմաստներով. լույս* ստեղծել ջրից *(նյութի կամ ծագման), խումբ* ստեղծել *հաշմանդամ* մարդկանցից *(բաղկացության) և այլն։* Անցնել փողոցից *(տեղի),* անցնել չափից *(համեմատության) և այլն։* Խոսել գործից *(վերաբերություն),* խոսել *մտքի* խորությունից *(պասսիվ ներգործության կամ պատճառի),* խոսել ձանձրույթից *(պատճառի) և այլն։*

Բայի խնդրառության ուսումնասիրությունը երևան է հանում նաև մի կարևոր օրինաչափություն. դա լրացումների կախումն է բայի սեռից։ Ներգործական բայերը, անկախ իրենց բառային իմաստի յուրահատկությունից, ստանում են հայցականով ուղիղ խնդիր, ինչպես՝ տեսնել (ծով, անտառ, մարդուն, երեխային), լսել (ձայն, լուր), կանչել (բժշկին, հյուր), մաքրել (սեղանը,

նազուստը), կառուցել (տուն, քաղաք) *և այլն։ Կրավորական սեռի բայերին բնորոշ է ներգործող խնդիր լրացումը, ինչպես* գրվել (մեկի կողմից, մեկի ձեռքով), ծեծվել (ծնողից, թշնամուց), սպանվել (թշնամուց, չարագործների կողմից), սիրվել (ծնողից, ընկերոջից) *և այլն։ Չեզոք սեռի բայերին բնորոշ է ուղիղ և ներգործող խնդիրների բացակայությունը (նկատի չունենք այն դեպքերը, երբ չեզոք բայերը ուղիղ խնդիր ստանալով ներգործական են փոխվում)։*

Բայական կապակցությունների մյուս առանձնահատկությունն այն է, որ բայը լրացումների տեսակետից խիստ սահմանափակված չէ։ Սա վերաբերում է ոչ միայն ներգործական, այլև չեզոք ու կրավորական բայերին։ Այսպես, բացի հայցականով ուղիղ խնդրից, ներգործական շատ բայեր կարող են ստանալ նաև տրական, բացառական, գործիական, ներգոյական հոլովներով դրված լրացումներ, ինչպես՝ (սեղանը) մաքրել ձեռքով, *(սեղանը)* մաքրել սենյակում, *(սեղանը)* մաքրել կեղտից, *(սեղանը)* մաքրել լուսաբացին *և այլն, որտեղ* մաքրել *բայն ունի տրականով, բացառականով, գործիականով և ներգոյականով դրված լրացումներ* (լուսաբացին, կեղտից, ձեռքով, սենյակում):

Հայտնի է, որ յուրաքանչյուր հոլովով դրված լրացումները բազմաթիվ իմաստներ են արտահայտում, որոնք իրարից սահմանազատվում են որոշակիորեն։ Սակայն բազմաթիվ դեպքերում լրացման իմաստը որոշակի չէ. լրացումը կարող է երկակի, երբեմն և եռակի մեկնաբանություն ունենալ։ Բայը նույն լրացման հետ կապակցություն է կազմում մերթ մեկ, մերթ մյուս իմաստներով։ Երկու կամ երեք իմաստների համատեղումը նույն կապակցության մեջ երբեմն դժվարացնում է կապակցության մեկնաբանությունը։

Բայի խնդրառության ուսումնասիրությունը կապվում է մի ուրիշ դժվարության հետ ևս։ Դա արդի հայերենում մի շարք բայերի հոլովառության մեջ եղած անհետևողականությունը, հոլովառության շեղումն է։ Ինչպես մատնանշել է Վ. Առաքելյանը[1], *ժամանակակից հայերենում բազմաթիվ բայեր ստանում են և՛ տրական, և՛ հայցական հոլովներով դրված լրացում։ Այսպես են* հսկել, սպասել, նայել, ձեռնարկել, սպասարկել, դիմավորել, երկրպագել, լսել, խանգարել *և այլն։ Ա. Աբրահամյանի դիտողությամբ, մի շարք բայերի՝ տրական և հայցական հո-*

[1] Վ. Առաքելյան, *Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957, էջ 23—41։*

լովներով դրված լրացումները երևան են հանում իմաստային նուրբ տարբերություններ՝ պայմանավորված այդ բայերի սեռային պատկանելությամբ[1]։ Ա. Աբրահամյանի կողմից արժեքավորված բայի կրկնասեռությունը նոր լույս է սփռում խնդրառության մի շարք հարցերի վրա։ Դրանցից առաջին հերթին պետք է նշել մի շարք բայերի տրական և հայցական խնդիրների հարցը՝ կապված այդ բայերի սեռային ըմբռնման հետ։ Ընդորում կրկնասեռությունը պայմանավորված է ինչպես բայերի պատմական զարգացմամբ, որի ընթացքում նույն բայն աստիճանաբար կորցնում է իր սեռային իմաստը և ձեռք է բերում այլ սեռի նշանակություն, այլև նրանով, որ գրական լեզվի արդի շրջանում նույն բայը կարող է ունենալ երկու սեռի նշանակություն։ Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ներգործական և չեզոք սեռերի իմաստները համատեղող բայերին։

Ա. Աբրահամյանի հիշյալ աշխատության մեջ մանրամասնորեն քննարկված են բայերի այն խմբերը, որոնք համատեղում են ներգործական և չեզոք սեռերի նշանակությունները ժամանակակից հայերենում, ինչպես և այն բայերը, որոնց սեռային տեղաշարժն արդյունք է լեզվի պատմական զարգացման։

Նշելով հանդերձ, որ մի շարք բայեր խնդրառության տեսակետից երկակի բնույթ ունեն, դրանով իսկ չենք անտեսում այդ խնդիրների էությունը։ Տրականով խնդիրը չի դադարում անուղղակի և ոչ էլ հայցականով խնդիրը՝ ուղիղ լինելուց։ Եթե տրականի և հայցականի իմաստների մերձեցում թույլ տանք, ապա ինչպե՞ս պետք է բացատրենք բայի սեռային տեղաշարժի հետևանքով առաջացած խնդրառության փոփոխության էությունը։ Չէ՞ որ բայն իր սեռի փոփոխության հետևանքով է տրականի փոխարեն հայցականով խնդիր ստանում։ Եթե տվյալ բայի մոտ տրականով խնդիր կա, ապա այն անուղղակի է, իսկ հայցականով խնդիրը՝ ուղիղ։

Բազմաթիվ բայեր տարբեր պատճառներով և տարբեր չափերով խնդիր են ստանում և՛ տրական, և՛ հայցական հոլովներով։ Ընդ որում պետք է նկատի ունենալ, որ տարբեր հոլովներով խնդրառություն ունեցող բայերը միատեսակ չեն։ Դրանց մեծ մասը սեռային տեղաշարժերի է ենթարկվել չեզոքից դեպի ներգործական, մյուսները՝ ընդհակառակը։ Կան նաև բայեր, որոնց հայցականով լրացումը կրում է ժամանակավոր բնույթ, այ-

[1] Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Երևան, 1962, էջ 702—722։

սինքն՝ դրանք չեզոք բայեր են, որոնք ժամանակավորապես ձեռք են բերում նաև ներգործական նշանակություն։

Կրկնասեռ բայերի տարբեր խմբերը ամենայն մանրամասնությամբ քննված են Ս. Աբրահամյանի հիշյալ աշխատության մեջ[1]*։*

Կրկնասեռ բայերի խնդրառությունը քննում ենք երկու խմբով։

Առաջին խմբին պատկանող բայերի կրկնասեռությունը պայմանավորված է այդ բայերի բառային իմաստով։

Սրանք ըստ էության նույնանուն բայերն են, որոնք բառիմաստով տարբեր են, և դրա հետևանքով տարբեր են նաև նրանց սեռային իմաստները։ Ս. Աբրահամյանի հիշյալ աշխատության մեջ նշված են շուրջ 20 այդպիսի բայեր։ Այս բայերը, որոնք չեզոք են, ժամանակակից հայերենում ձեռք են բերել բառային նոր իմաստներ՝ համապատասխանաբար ստանալով ներգործական սեռի նշանակություն։ Չեզոք նշանակությամբ դրանցից մի քանիսը տրականով խնդիր են ստանում, ինչպես՝ սովորել *(ընտելանալ, վարժվել)* մի բանի (գործին, աշխատանքին, պաշտոնին *և այլն*), լսել *(հնազանդվել)* մեկի խոսքին, ասածին, խնայել *(գթալ, կարեկցել)* մեկին,— մի բանի, նայել մի բանի,— մեկին, սպասել *(մնալ)* մի բանի,— մեկին *և այլն։ Իմաստի տարբերակմամբ ներգործական և չեզոք սեռային իմաստներ ունեն նաև* համբերել, հանդուրժել, պատել, արժել-արժենալ, հավանել, զիջել, *մասամբ և* անսալ-անսել *(լսել-ի համաբանությամբ) բայերը։ Այս բայերի երկակի խնդրառությունը երևում է հետևյալ օրինակներից, որոնցում մի դեպքում բայը տրականով է լրացում ստանում։*

«Առտված խնայի ջահել-ջիվանին, *Առտված* խնայի *իր անբախտ* Նանին» *(ՀԹ, 2, 62)։ «Սև ամպ էր* պատել *Սասմա* սարերին» *(ՀԹ, 2, 123)։* «Խոջաներր հավանում էին *Բեկի* ասածներին» *(ՍխՄխ, 235)։ «Թագավորը չէր* կարողանում համբերել *Աշոտ բռնավորի ապստամբական* շարժումներին» *(Մուր., 4, 86)։ «Մեր հոգին արդեն* չի համբերում *ոչ մի* ծվենին *մութ մշուշի» (ՀԱՀԵՄ, 355)։ «Ես* չեմ հանդուրժում *իմ վրա իշխող ոչ մի* զո–

---

1 Ս. Աբրահամյան, *նշվ. աշխատ., էջ 662—722։ Այստեղ, ինչպես և «Բայի լրացումները հայցական հոլովով» հատվածում նշվող կրկնասեռ բայերի մեծ մասի խնդրառական առանձնահատկությունները գիտական խորությամբ քննված են Ս. Աբրահամյանի հիշյալ աշխատության մեջ։ Այս երևույթը քննում ենք՝ բառակապակցությունների ուսմունքն ամբողջական դարձնելու նպատակով։*

րության» (Իս., 2, 60)։ «Զարժեն կարճատև քո ներշնչանքին» (ՀԹ, 2, 95)։ «Նրանց առաջնորդների ձայնին էր սպասում» (Մուր., 4, 222)։ «Կազմ ու պատրաստ սպասում են Մոտիկ ժամին մըրցության» (ՀԹ, 1, 225)։ «Նայի շանին, իրեն զորքին» (ՀԹ, 2, 139)։ «Ականջս այն աստիճան սովորել է ձայնից» (ՆԴ, 3, 378)։ «Սկսում է սովորել հասակավոր Վասակին» (ԴԴՎ, 13)։ «Ձիչեց զորավարի փառասիրությանը» (ՍԽՄԽ, 833)։ «Արշակը նստած մեկուսի՝ լսում էր քաղաքի որոտին» (Իս., 3, 199)։ «Հավերժ հուսով դու անսացիր օտար ձայնին հուսատու» (Ծ,192)։ «Մարդ ազատ կլիներ իր մտքին ու սրտին անսալու» (ՎՓ, 3, 516)։

Նույն բայերը նաև հայցականով են խնդիր ստանում։

«Ես հենց էն խոսող ձուկն եմ, որի կյանքը դու խնայեցիր» (ՀԹ, 1, 463)։ «Սերդ աչքերս մուժով չի պատել» (Իս., 2, 194)։ «Եկավ Թմկա բերդը պատեց» (ՀԹ, 2, 135)։ «Նա չէր հավանում Պետրոսի արարքը» (ՍԽՄԽ, 303)։ «Հիմար ծիծաղդ ես ո՞նց համբերեմ» (Գորկի, Զ, 539)։ «Ես չեմ հանդուրժում ոչ օրենք, սահման, ոչ ճակատագիր, ոչ չար ու բարի և ոչ դատաստան» (Իս., 2, 60)։ «Մի կյանք արժե մի համբույրը աղջկա» (ՀՇՔՀ, 94)։ «Երիտասարդ վարդապետի կողմից չէր սպասում երբեք այդպիսի նախամտածված և համարձակ քայլ» (Մուր., 4, 206)։ «Նա սպասում էր բանկում, զայրույթ, հայհոյանք» (ՍԶ, 4, 386)։ «Խնդրեմ, նայեք իմ զինվորական գրքույկը» (ԲՀԱԶ, 192)։ «Չի զիջել նա իր արմատը վերջին» (ՀԱՀԵՄ, 304)։ «Սիրով լսեցի երիտասարդ ուսուցչի ամբողջ ժամվա դատախոսությունը» (Մուր., 2, 353)։ «Անսել էր մոր խոսքը և լացով հագել շորերը» (Բակ., 202)։

Հետաքրքրական է, որ երբեմն նույն նախադասության մեջ երկու հոլովով լրացումներն էլ առկա են։ Օրինակներ՝ «Հագուստներին մի նայեք, նայեք գոմերը» (ՍԶ, 8, 196)։ «Նրա աչքերը նայում էին կարծես ոչ մարդկանց, այլ նրանց միջով ինչ-որ հեռու խորհրդավոր աշխարհ» (ԴԴՎ, 13)։

Պետք է դիտել, որ երբեմն նայել բայի հայցականով լրացումը ուղիղ խնդիր չէ, այլ ուղղության իմաստ ունի (տրականի նման)։ Օրինակ՝ «Բայց նայելով սրտիս խորքը— ոչ մի ժամ չսպասեցին, հեռացան» (Բայրոն, Ծ, 409)։

Երկրորդ խմբին պատկանում են այն բայերը, որոնց կրկնասեռությունը, հետևաբար և տարբեր հոլովներով խնդիր ստանալու հատկությունը, չի բխում այդ բայերի բառային իմաստների տարբերությունից։

Բացի այն բայերից, որոնց տրական-հայցական զուգահեռ խնդրառությունը պայմանավորված է նրանց բառային տարբեր իմաստներով, ժամանակակից հայերենում մեծ թվով բայեր կան, որոնք բառային այդպիսի տարբերություն չունեն, կամ եթե ունեն, ապա քիչ զգալի, սակայն զուգահեռ խնդրառություն ունեն, որը պայմանավորված է այդ բայերի կրկնասեռ բնույթով։ Այդ բայերի մի մասը գրաբարում և աշխարհաբարի սկզբնական շրջանում չեզոք սեռի են եղել, իսկ արդի գրական լեզվում աստիճանաբար ձեռք են բերել նաև ներգործական սեռի նշանակություն։ Իսկ մյուս մասի հետ կատարվել է հակառակ պրոցես. ներգործական լինելով՝ դրանք ստացել են չեզոք նշանակություն և դրա շնորհիվ պահանջել տրականով խնդիր։ Անկախ սեռային տեղաշարժի ուղղությունից՝ այս երկու խմբի բայերն այժմ նման են զուգահեռ խնդրառության տեսակետից, սակայն տարբերվում են զարգացման միտումով. մի մասը ժամանակին կկորցնի տրականով խնդիր ստանալու հատկությունը, մյուսները, ընդհակառակը, հայցականով խնդիր ստանալու հատկությունը։ Այդ բայերից պետք է նշել հսկել, կարոտել, դիմավորել, գերազանցել, ունկնդրել, ձեռնարկել, սպասարկել, հուսալ, տենչալ, փափագել, ողջունել, ափսոսալ, զգվել, խանգարել, վնասել, հովանավորել և այլն։ Այսպես, դրանք տրականով խնդիր են ստանում հետևյալ օրինակներում։

«Գնա ու հսկիր նրա ամեն մի քայլին» (Մուր., 4, 90)։ «Հսկել եմ անքուն ես ձեր գործերին» (ՀԹ, 1, 97)։ «Աղմուկը շատ է խանգարում մեր պարապմունքին»: «Հազարապետը այդպիսի գործերի չի ձեռնարկի» (ԴԴՎ, 28)։ «Կարոտի նրա դաշտին ու մարգին, նրա հովտին ու առվակին, նրա անտառի անուշ հովերին» «Մուր., 5, 240)։ «Բայց օտարի պես էի ունկնդրում ինքս իմ հոգուն, ինչպես իմ լացին» (ՎՏ, 1, 136)։ «Դու տենչացել ես լույս— ափերի մեջ քեզ իրեն կանչող աղբյուրի երգին» (Իս., 2, 52)։ «Խորին տենչանքով փափագում էր այն հանդեսներին» (Ր, 7, 209)։ «Թշնամին չի կարող վնասել նրա ժայռերին» (Մուր., 4, 222)։ «Եվ հուսացին արդարության մի խուլ աստծու դատաստանի» (Իս., 1, 351)։ «Սևամերկ դաշտավայրը կենսաթրթիռ գարունքով զարթնած՝ դիմավորում էր մատաղ կյանքին» (ԴԴՎ, 58)։ «Վարպետը սպասարկում է շատ մեքենաների»: «Կզգվի դեմքիդ քամի մի զով» (Զ, 58)։ «Գյազբել սարին զգվեմ անափ

քնքշանքով» (ՀԱՀԵՄ, 102)։ «Եվ ողջունեցին *քո* մտերմության» (Ծ, 147)։ «Ափսոսում *էր դալար* ճյուղերին» (Բակ, 350)։

Նույն բայերը համարյա հավասարապես, ընդ որում մի քանիսը ավելի շատ, իսկ մյուսները ավելի քիչ, հայցականով են խնդիր առնում։

«*Անցնում է,* հսկում սեղաններն *ամեն*» (ՀԲ, 2, 140)։ «Ձեռնարկել էի *օրվա աշխատանքս*» (ՆԴ, 2, 491)։ «*Նա* չէր փափագում *հզոր* հաղթանակ, Դափնին ու պսակ» (Ծ, 47)։ «Ընկեր եմ *ես* փափագում, *մի սրտակից, լավ* ընկեր» (ՍԲԱ, 21)։ «*Նրանք* կառուցել *են լեռնային* արոտները» (Բակ., 321)։ «1928 *թվի* տարեմուտը դիմավորեցինք *նրա տանը*» (Իս., 4, 61)։ «Կզգվեմ *վայրի* տատասկը *դժնի*» (Իս., 2, 24)։ «*Նրանք* փրկություն հուսացին»։ «*Մի խոսքով անգամ* չեմ խանգարել *ձեր* պարապմունքը» (Մուր., 2, 348)։ «Չեմ տենչում *փառքի* լեռներ» (ՍԲԱ, 212)։ «Ողջունիր *շքեղ* գալուստը *գարնան*» (ՀԲ, 2, 86)։ «*Ու դերվիշների* երգն էի ունկնդրում» (ԳՍԵԺ, 2, 122)։ «*Էն ո՞ր* բախտն ես *դու* ափսոսում» (ՀԲ, 2, 87)։ «*Նա մտածում էր միայն մի բան, որ* չվնասեն *իր* տունն *ու* ընտանիքը» (ՍՁ, 2, 163)։

Դրժել, հարվածել *բայերը ուղիղ խնդիր առնում են և՛ տրականով, և՛ հայցականով։ Այսպես, տրականով խնդիր են առել հետևյալ օրինակներում։*

«*Ով որ չէր կարող հավատալ, թե դու* կդրժեիր *քո* երդման *և բոլորիս ներկայությամբ կնքած* ուխտին» (Մուր., 4, 132)։ «*Նա ուժգին* հարվածեց դռանը»։

Սրանք հայցական են առել հետևյալ օրինակներում։

«*Գործնական կյանքում՝ յուրաքանչյուր քայլ* դրժում են *իրանց* ասածները» (ՎՓ, 3, 213)։ «Հարվածիր *անխնա նորա չար* գործքեր» (Ծ, 39)։

Սրանցից փոքր-ինչ տարբերվում է փոխարինել *բայը, որը ներգործական սեռի է, սակայն ուղիղ խնդիր առնում է տրականաձև հայցականով, և արտաքուստ թվում է, թե այն կրկնասեռ է։ Դրա պատճառը ուղիղ խնդիրը և ենթական շփոթելուց խուսափելն է։ Եթե այդ բայի ուղիղ խնդիրը ուղղականաձև հայցականով լինի, ապա կարող է ենթակայի հետ շփոթվել։ Այսպես, եթե ասենք «լուսնի* լուսավորությունը փոխարինեց *մի այլ* լուսավորություն», *ապա դժվար կլինի որոշել, թե որն է ենթական և որը՝ ուղիղ խնդիրը։ Իմաստի հստակեցման նպատակով էլ Րաֆֆին այդ նախադասությունը կառուցել է հետևյալ ձևով.* «*լուսնի* լուսավորությանը *փոխարինեց մի այլ լուսավորություն*»

(*Ր, 7, 287*)։ *Այսպես են նաև հետևյալ նախադասությունները.* «*Աստծու* սիրուն *ու* երկյուղին փոխարինել *է պիղծ արծաթասիրությունը*» (*ՁԴՄՆ, 2, 254*)։ «*Տիրության* արցունքներին *այժմ* փոխարինել *էին ուրախության արցունքները*» (*ՍՁ, 4, 550*)։

Կան մի շարք ներգործական բայեր, որոնք կարող են միաժամանակ ստանալ տրական և հայցական հոլովներով խնդիրներ՝ տարբեր իմաստներով։ Այսպես են՝ զարկել, խփել, կապել, ներել, մատնել, գրել, ուղարկել, ուղղել, ներարկել, սրսկել, ներշնչել, ցույց տալ, մատնանշել, մերժել, ոգեշնչել, լծել, ազդել, պատճառել, տալ, ներկայացնել, ամրացնել (*չեզոքից կազմված բոլոր պատճառականները՝ տրական ստացող*), նվիրել, սեղմել, զոհել, շինել, պարզել *և այլն։ Հայցականով լրացումը սրանց մոտ ուղիղ խնդիր է, իսկ տրականով լրացումը կարող է տարբեր իմաստի անուղղակի խնդիր լինել (դրանց քննությունը կարդալ ստորև)։ Շատ հաճախ այդ բայերի մոտ տրականն ու հայցականը միաժամանակ են հանդես գալիս։*

«*Մեր հաջողությունը* նույն կներշնչի *նաև* թագավորին» (*Մուր., 4, 291*)։ «Սերունդներին ոգեշնչել է *նա վսեմ* իդեալներ, անձնազոհություն» (*Իս., 4, 325*)։ «Արյուն ներարկեցին հիվանդին»: «Ծառերին փոշի սրսկեցին»: «*Աղվեսը* զարկեց գլուխը քարին» (*Իս., 2, 224*)։ «*Ընտրի,* զարկի *ձեռքից* խնձորն *Անհաղթներից* անհաղթին» (*ՀԲ, 1, 226*)։ «Ոտքս զարկեմ սար ու քարին» (*ՀԱՀԵՄ, 367*)։ «*Ուներ տարօրինակ հայացքներ, որոնք յուր* խոսակիցներին *մերթ* զայրույթ *և հաճախ* զվարճություն էին պատճառում» (*ՀԲ, 1, 113*)։ «*Բե չէ* կմատնի քեզ պոլիցիային» (*ՀԲ, 1, 113*)։ «*Ու ձեռն ընկած մոտիկ* բանը Տուր թե կտաս *շան* ճակատին» (*ՀԲ, 1, 259*)։ «*Հողին* տվին *հովվի* դին» (*ՀԲ, 2, 67*)։ «*Ներս եկավ Արուսը,* որին *մի երկու անգամ Ավետիսը հարևանցիորեն* ինձ ցույց էր տվել» (*ՀՄՀԵ, 12*)։ «*Եպիսկոպոսն* ինձ մատնացույց արավ *իմ երդման* գիրը» (*Մուր., 4, 133*)։ «Խոստացիր նրան *իմ ոսկի* գանը» (*ՀԲ, 2, 138*)։ «*Հին* գրչակոթն ինձ նվիրեց» (*ՀԲ, 2, 88*)։ «*Նա իր* խոսքն *ու* բարքը խառնում *էր Հիսուսի* պատվիրաններին» (*ՁԴՄՆ, 2, 335*)։ «*Բայց յուր դշխոյական հպարտությունը* չէր ներում իրան *այդ* բռնությունը» (*Մուր., 4, 19*)։ «Բռունցքն *է ահեղ* սեղմել ճակատին» (*Իս., 2, 70*)։ «*Խոնավ անկողինը մի անախորժ* սարսուռ ազդեց *նրա ցամաքած* մարմնին» (*ՆԴ, 1, 76*)։ «*Պրոլետարիատը* կապեց Գորկուն *ռևոլյուցիոն* սոցիալ-դեմոկրատիային» (*Իս., 4, 191*)։ «*Մայրը* մերժեց որդուն *յուր* գութն *ու* սերը» (*Ր, 7, 523*)։ «*Լուսափիտուր*

14—486

որորները քնքշորեն խփում էին իրենց կուրծքը ոսկեծայր կոճակներին» (Իս., 3, 429) «Ստիպված ես նրանց զոհել ոչ միայն գրիչդ, այլև կյանքդ» (Շիրվ., 8, 218)։

Եթե այս բայերից մի քանիսի հայցականը զեղչվում է, ապա տրականը կարող է հայցականի իմաստ արտահայտել։ Այսպես, «Փայտը խփեց նրա գլխին» նախադասության մեջ փայտը ուղիղ խնդիրը կարող է չդրվել, և նախադասությունը կարելի է արտահայտել «խփեց նրա գլխին», որտեղ գլխին ըստ էության հանգման անուղղակի խնդիր լինելով միաժամանակ նաև դիտվում է իբրև ուղիղ խնդիր։ Այսպես նաև հետևյալ նախադասություններում տրականն ըստ էության ուղիղ խնդրի նշանակություն ունի։

«Էնպես զարկեց ջաղացպանին՝ Քարը եղավ հազար կտոր» (ՀԹ, 2, 125)։ «Ո՞նց թե դու իմ շանը զարկես» (ՀԹ, 1, 259)։ «Բայց Վարդանի գիշերային երթը, նախարարների մտահոգ դեմքերը, անորոշ փսփսուքները բոլորին ազդել էին» (ԴԴՎ, 13)։ «Հիվանդին շտապ սրսկեցին»։ «Պետք է ներշնչել հիվանդին, որ շուտ առողջանա»։

Այս խմբին պատկանող զարկել, խփել բայերը կարող են հանգման տրականը վերածել ուղիղ խնդրի հայցականի, և դրանով երկու խնդիրների միաձուլում կկատարվի։ Այսպես, Թուրը զարկել գլխին կապակցության փոխարեն կարող է գործածվել գլուխը զարկել (որտեղ անշուշտ զարկել բայը գործածված է կտրել իմաստով)։ Այսպես է հետևյալ օրինակներում. «Գլուխս զարկ դահճի նման» (Իս., 1, 262)։ «Հրամանատարի ձին խփեցին»։

Կան չեզոք սեռի մի քանի բայեր, որոնք կարող են ունենալ և՛ տրականով, և՛ հայցականով լրացումներ՝ տարբեր իմաստներով։ Այս դեպքում գործ ունենք ոչ թե զուգահեռ խնդրառության, այլ ուրիշ երևույթի հետ։ Այդ բայերի՝ տրականով լրացումն արտահայտում է ուղղություն, հանգման կամ այլ իմաստ, իսկ հայցականը՝ տեղի կամ ուրիշ իմաստ։ Այսպես, տրականով կապակցություններ են կազմում դիմել, իջնել, հասնել և սակավաթիվ այլ բայեր։

«Վերջապես հասան բարձր մի լեռնանովտի» (ԴԴՎ, 43)։ «Քրտինքն իջավ ճակատին» (Իս., 2, 134)։ «Ի՞նչ սարի արծիվ կհասնի քաջին» (ՀԹ, 2, 140)։ «Այդ հարցով դիմեցին Գրիգորին»։

Իսկ հայցականը այդ բայերի մոտ բոլորովին այլ իմաստ է արտահայտում։

«Այդ որոտները պարզ հասնում էին գյուղատնտեսի ական-

չը» (ՍՁ, 8, 263)։ «Երկինք հասավ սրտից մորմոք» (Ծ, 173)։ «Դիմեցին Վաղարշապատ» (Մուր., 4, 79)։ «Գյուղն էին իջել հովիվ պատանիք» (ՀԹ, 2, 55)։

Չեզոք սեռի մի քանի բայեր սովորաբար տրականով են խնդիր առնում։ Սակայն երբեմն որոշ հեղինակներ հայցականով խնդիր են գործածում այդ բայերի մոտ։ Այդպես են երկրպագել, ապավինել բայերը։ Դրանց տրականով խնդրի վերաբերյալ բազմաթիվ օրինակներից կարելի է նշել մի երկուսը. «Երկրպագում եմ փողի քսակին» (ՀԹ, 2, 95)։ «Մի ապավինիր դու հիացմունքին» (ՀՍՀԵՄ, 342)։ Այս բայերի մոտ կան հայցականի հազվադեպ գործածության օրինակներ. «Երկրպագում եմ քո վաստակը թանկ» (ՀՍՀԵՄ, 220)։ «Ժողովուրդն ապավինել է լեռնաստանները» (ԴԴՎ, 475)։

Կրկնասեռ բայերի զուգահեռ խնդրառության հետ չպետք է շփոթել այն դեպքը, երբ նույն բայի տրականով լրացումը, պայմանավորված նրա ձևի առանձնահատկությամբ, կարող է դիտվել նաև իբրև հայցականով ուղիղ խնդիր։ Այսպես, կանչել մեկին կապակցությունը կարելի է մեկնաբանել և՛ իբրև հաղորդման տրականով կազմված կապակցություն (կանչել մեկին–ձայն տալ մեկին, դիմել մեկին), և՛ իբրև ուղիղ խնդիր հայցականով կազմված կապակցություն (կանչել մեկին–հրավիրել մեկին)։ Օրինակներ՝ «Երրորդ անգամ է կանչում զորքերին, Գալիս է անցնում մնացած գերին» (ՀԹ, 1, 266)։ «Օրերով ու շաբաթներով տան երես չէր տեսնում, մորը չէր նայում» (ՆԴ, 1, 76)։

Նախադասության մեջ երկու կամ ավելի բայեր կարող են ունենալ նույն լրացումը։ Օրինակ՝ մաքրել, լվանալ, փայլեցնել հատակը, մոտենալ, հենվել աթոռին և այլն։

Սակայն պատահում է նաև, որ տարբեր սեռերի երկու կամ ավելի բայեր առնում են նույն ձևն ունեցող, բայց տարբեր իմաստներով նրանց հետ կապակցված լրացում։ Ընդ որում այս դեպքում սովորաբար տվյալ լրացման ձևը թելադրվում է մերձակա բայով, պայմանավորվում է նրանով։ Եթե նույնիսկ լրացյալ բայերից մեկն ու մեկը այլ ձևով պիտի լրացում ստանար, ապա համատեղ լրացում ունենալիս նրանց խնդրառական հատկությունները համահարթվում են։

Այս երևույթը ավելի շատ երևան է գալիս տրական և հայցական պահանջող բայերի խնդրառության առնչությամբ։ Երկու և ավելի բայերի մոտ նույն ձևը կարող է ունենալ և՛ տրական, և՛ հայցական հոլովի իմաստներ։

«*Վանքը հաց* էր տալիս, կերակրում էր *ժողովրդի* աղքատներին» (*Բ, 7, 190*)։ «*Ձիլ ձայնով կոչ էր անում հավատացյալներին՝ կատարել երեկոյան սրբազան նամազը*, աղոթել *և* փառաբանել երկնավորին» (*Շիրվ., 8, 9*)։ «*Անծանոթ* հարբածին *անգամ* ուղեկցել *ու տուն են* տարել» (*ՀԱՀԵՄ, 39*)։ «*Ինքը յուր* որդուն *բարձր կրթություն* է տվել *և փաստաբան շինել*» (*Մուր., 5, 269*)։ «*Հազարացի* գազաններին աղաչել, համոզել *անկարելի էր*» (*Մուր., 4, 142*)։

Առանձին տեղ ունեն տրականով լրացում ունեցող այն կապակցությունները, որոնց լրացյալը հարադրական բայ է։ Այս դեպքում տրականը կարող է կամ արտահայտել անուղղակի խնդրի իմաստ, կամ ուղիղ խնդրի նշանակություն ստանալ։ Այսպես, հետևյալ օրինակներում տրականն անուղղակի խնդիր է։

«Երախտագետ չեն լինում *անձնվեր* մարդկանց» (*Մուր., 4, 113*)։ «*Պարտավոր էր* պատկառ մնալ *աստուծու և մարդկանց բերանով օրհնված այդ* միությանը» (*Մուր., 4, 121*)։ «*Ջատին էլ* կուլ չի գնաց թավաղին» (*ՀԹ, 2, 39*)։ «*Ես սիրով* ձեռք զարկեցի թարգմանություններին» (*Իս., 4, 157*)։ «*Նույն հերոսությամբ* ձեռնամուխ է եղել *հիմա* աշխատանքի» (*Իս., 4, 322*)։ «Հրաման արավ *իրեն* զորքերին» (*ՀԹ, 2, 285*)։ «*Քարտուղարն ամենից առաջ* վրա ընկավ նամակներին» (*ՆԴ, 1, 186*)։ «*Հանգամանքներն այս անգամ էլ կողմնակի* ծառայություն արեցին թշնամիներին» (*Շիրվ., 8, 470*)։ «Ունկնդիր եղա *հողմի խենթ* երգին» (*ՎՏ, 1, 33*)։ «*Որ* ամենքին վիզ չծռես» (*Ծ, 102*)։ «*Մեծ մասը* կուլ գնաց գետին» (*ԴԴՎ 536*)։ «*Նրանց* ուրախությանը անմասն մնաց *միայն սպարապետը*» (*ՍԽՄԽ, 9*)։

Սակայն կան բազմաթիվ հարադրական բայեր, որոնց տրականով լրացումն արտահայտում է հայցականի նշանակություն։ Այդտեղ լրացումը պայմանավորված լինելով հարադրության բայական բաղադրիչի խնդրառական հատկությամբ, իրականում տրական է սոսկ ձևով, իսկ իմաստով հայցական է։ Դրանում կարելի է համոզվել՝ համապատասխան կապակցությունները զուգադրելով։ Այսպես, ըստ էության նույն իմաստ են արտահայտում ոտները հանգստացնել *և* ոտներին հանգիստ տալ, սիրտը հանգստացնել *և* հանգիստ տալ սրտին, սանձահարել կրքերը *և* սանձ դնել կրքերին *զույգ կապակցությունները*։

Պետք է նկատել, որ այս դեպքում հարադրության բայական բաղադրիչի դերում ավելի շատ տալ *բայն է հանդես գալիս*։

«*Այնժամ էլ* չէիր ինձ հանգիստ տալիս» (*ՀԹ, 2, 31*)։ «*Օրա-*

վարձն ստանա ու չարչարված տանջերին հանգստություն տա» (Իս., 3, 528)։ «Պիտի վերջ դնի նրա տառապանքներին» (Իս., 4, 123)։ «Աղքատի ու տկլորի է ման գալի, պանդուխտ ու անտեր երեխա է որոնում» (ՀԹ, 1, 327)։ «Հապա դուք ի՞նչպես եք որսի ման գալի» (ՀԹ, 1, 357)։ «Քիչ մնաց ձեռք բարձրացնեի ինքս ինձ վրա՝ հոգեկան անտանելի տառապանքներիս մի անգամից վերջ տալու համար» (ՆԴ, 1, 117)։ «Խոհեմությունը փականք դրեց նրա լեզվին» (Ր, 7, 49)։ «Ազատություն շնորհեցեք հայոց գերիներին» (Ր, 7, 511)։ «Երբ սանձ չի դնում նա իր կրքերին» (Լերմոնտով, Ծ, 333)։ «Վարդանը հանգիստ տվեց զորագնդին» (ԴԴՎ, 537)։ «Հույս տուր վհատին, ըսփոփիր որբին, Ուժ տուր պանդխտին իր երկար ճամփին» (ՀԹ, 2, 85)։ «Փոքր առ փոքր ազատություն տվեց իր լեզվին» (Շիրվ., 8, 532)։ «Թմրած աշխարհին կյանք տվիր նորից» (Ծ, 55)։ «Կատաղի ծնողը մոլուցքի մեջ վնաս տա նրան» (ԴԴՎ, 261)։

Ա. ԲԱՅԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ

Տրական հոլովով դրված լրացումներն արտահայտում են երկու կարգի հարաբերություն՝ խնդրային և պարագայական։ Կապակցությունների մեծ մասում խնդրային և պարագայական իմաստները որոշակի են, թեև կան դեպքեր, երբ դրանք խստորեն չեն սահմանազատվում։ Այսպես, խնդրային իմաստ ունեցող շահի տրականը սերտորեն առնչակցվում է պարագայական իմաստ ունեցող նպատակի տրականի հետ։ Կան մի շարք կապակցություններ էլ, որոնցում խնդրային և պարագայական իմաստները միաձուլված են հանդես գալիս։ Տրական հոլովը գերազանցապես խնդրային իմաստներ է արտահայտում։ Խնդրային իմաստները բազմազան են, ինչպես՝ մատուցման, հանդման, շահի, ուղղության, հաղորդման, վերածման, փոխադարձ կապի, համապատասխանության, համեմատության, վերաբերության, հավելման, ներգործող խնդրի, ստացական, ընկալման և այլն։ Պարագայական իմաստներն են նպատակի, տեղի, ժամանակի, վիճակի-ձևի, չափի ու գնի և այլն։

Խնդրային հարաբերություններից հիմնականը հանդման և մատուցման իմաստներն են, որոնցով և բնորոշվում է այս հոլովը։ Մյուսները այս կամ այն չափով արտացոլում են հանդման իմաստը։ Առհասարակ տվյալ հոլովի բոլոր իմաստները կամ

ունեն նրա հիմնական նշանակության հետ։ Յուրաքանչյուր հոլովի հիմնական և երկրորդական իմաստները մի ամբողջական շղթա են կազմում, որի սկիզբը տվյալ հոլովը բնորոշող իմաստն է։

Խնդրային տրականով կապակցություններ

Մատուցման տրական.— *Բայի լրացումը այս իմաստով ցույց է տալիս այն առարկան, որին մի բան է տրվում, մատուցվում։ Իբրև լրացում հանդես են գալիս մեծ մասամբ անձի անունները, երբեմն և իր ցույց տվող բառերը։*

Թեև մատուցման անուղղակի խնդիրը տրականի հիմնական կիրառություններից մեկն է, սակայն ինչպես գրաբարում, այնպես էլ ժամանակակից հայերենում շատ չեն այն բայերը, որոնց մատուցման խնդիր են ստանում։ Դրանք առաջին հերթին մատուցելու, տալու գործողություն արտահայտող բայերն են, ինչպես՝ տալ, մատուցել, հանձնել, անձնատուր լինել, վերադարձնել, ընծայել, պարգևել, նվիրել, մատնել, հատկացնել, բաշխել, բաժանել, ավանդել, կտակել, տրամադրել, փոխանցել *և այլն։*

«Կասեին թե՝ Գարդմանա հզոր իշխանը յուր դուստրը տվել *է լեռներում ապրող մի* հովվի*» (Մուր., 4, 34)։ «Ես ինքս մեծագին նվեր* տվի սուրհանդակին*» (Մուր., 4, 56)։ «Ամրոցների պահպանությունը նույնիսկ* կանանց *կարող* էին հանձնել*» (Մուր., 4, 20)։ «Յուր բոլոր կարողությունը* կտակել է ազգին*» (Մուր., 5, 9)։ «Երկիրն ու որդին* ավանդեց նրան*» (ՀԹ, 2, 28)։ «Մեջտեղ փլավ* չեն բաժանում իրար*» (Թ, 2, 39)։ «Ավարի զենքերը* բաժանեցին *գյուղերից* եկածներին*» (ՍԽՄԽ, 394)։ «Դրանց բոլորին տեղավորեց տասը լաստի վրա, յուրաքանչյուր* լաստին հատկացնելով *յոթ զինվոր» (Մուր., 4, 346)։ «Եվրոպացիք ութ նավ զենք* են տրամադրել բուրերին*» (ՍԽՄԽ, 186)։ «Իմ խոր վերքերը ո՞վ* կնյութեր ինձ*» (Իս., 2, 65)։*

Մատուցման տրականով լրացում կարող են ունենալ նաև փոխաբերաբար մատուցման գործողություն ցույց տվող որոշ բայեր, ինչպես՝ սեցնել, շռայլել *և այլն։ Օրինակներ՝ «Քսանուհինգ տարի էր, որ վերադարձնում էր իր ինքնասիրության և պատվի կորուստները, ընդունելով ուրիշներից այն, ինչ որ ինքը քսանուհինգ տարի շարունակ* շռայլել *էր իրենից* մեծերին *ու* զորավորներին*» (Շիրվ., 3, 9)։ «Էն բարիկենդանն եկավ, իր բաները* իրեն սեցրի, *տարավ» (ՀԹ, 1, 476)։*

Մատուցման տրականը կարող է ոչ միայն բուն, այլև փոխաբերական նշանակություն ունենալ։ Իհարկե, այս դեպքում նրա մեջ զգալի են նաև իմաստային այլ երանգներ։ Այսպես, «Նա գիրք նվիրեց Վարդանին» և «Նա իրեն նվիրեց այդ վեհ գործին» նախադասություններից երկրորդում գործին տրականը մատուցման հետ նաև նպատակի, շահի իմաստային երանգներ ունի։ Այսպիսի գործածությունը բնորոշ է գրական լեզվին։

«Բազմոցի վրա ընկնելով անձնատուր պիտի լիներ երևակայության տանջող թռիչքներին» (Մուր., 4, 16)։ «Երբեմն անձնատուր էր լինում անձնական զգացումներին» (Շիրվ., 3, 66)։ «Ամբողջապես նվիրված էր այդ գործին» (ՆԴ, 1, 99)։ «Եթե հեռվում ճակատագրին անհոգի Սիրտդ մատնեն անկարեկից տանջանքի» (ՎՏ, 1, 12)։ «Մեծագումար նվերներ հավաքելով ժողովրդից՝ հանձնեց Հայոց ժողովրդի տնօրինությանը» (ՍխՄխ, 618)։

Կան մի շարք կապակցություններ, որոնցում մատուցման իմաստը միահյուսված է այլ իմաստների հետ։ Այսպես, մատուցման և շահի իմաստների համատեղում է նկատվում հետևյալ կապակցություններում։

«Սևադա իշխանին կարևոր լուր եմ բերել» (Մուր., 4, 98)։ «Ապա սրբազան նվերներ տարան այն աղոթարար միաբաններին» (ՀԹ, 2, 21)։ «Բերել եմ ձեզ ոտանավոր» (ՀԹ, 2, 90)։ «Մենք նրան կնշանակենք մի որոշ ամսական» (Շիրվ., 3, 56)։ «Այդ մատուռը հատկացրին իշխանական տանը» (Ր, 7, 309)։

Մատուցման և հաղորդման իմաստների միահյուսում կա հետևյալ օրինակներում։

«Աթոռ առաջարկեցին կառավարչին» (Մուր., 5, 292)։ «Համբավը տարան Մարա Մելիքին» (ՀԹ, 2, 107)։ «Նրանք սեր էին քեզ խոստովանում, հավատարմության երդումներ տալիս» (ՀՍՀԽՄ, 109)։ «Այդպես էլ ավանդեց սերունդներին» (ՋԴՍՆ, 2, 145)։

Մատուցման և հավելման իմաստների համատեղում կա հետևյալ նախադասության մեջ։ «Նրանք ծակ տըլըով ջուր էին մատակարարում մերթ կաթսայից թաբախին, մերթ դևերից կարբային» (ՆԴ, 1, 69)։

Իսկ հետևյալ նախադասություններում համատեղվում են մատուցման և ուղղության իմաստները։

«Մի քանի օր առաջ սուրհանդակ ուղարկեցին թագուհուն» (Մուր., 4, 108)։ «Երկրին առաջին համբույրն է ղրկում» (Ծ, 203)։

Մատուցման տրականով կազմված են բազմաթիվ դարձվածքներ։ *Այդպես են՝* մահու տալ, սրի տալ, փորձանքի տալ, հրի մատնել, հրի ու սրի մատնել, զոռ տալ խելքին, խելք-խելքի տալ, կայծակին տալ, վտանգի մատնել, *(իրեն)* մի բանի տալ (գինու տալ, հարբեցողության տալ, քամուն տալ, ջրին տալ) *և այլն։* «*Մի՛ կոտորիր, մի՛* տար մահու» *(ՀԹ, 2, 109)։* «*Գուցե թե գթա, Մեզ* սրի չտա» *(ՀԹ, 2, 115)։* «*Գլուխդ* փորձանքի ես *դու* տալիս» *(ՀԹ, 2, 159)։* «Հրի մատնեցին *գյուղեր ու ավան*» *(Իս., 2, 173)։* «*Թող՝ ով կուզի՝ երկար-բարակ,* Զոռ տա խելքին *մինչև մահ*» *(ՀԹ, 1, 142)։* «*Աչքերը* կայծակին տվին» *(ՀԹ, 1, 321)։* «*Սկսեց* չիբխին զոռ տալ» *(ՀԹ, 1, 466)։* «*Նա իրեն* տվել էր գինու և տաղի» *(ԴԴՎ, 202)։* «*Անահիտը միտքը* տվել էր լուսնկայի ալիքներին» *(ԴԴՎ, 512)։* «*Ու բանակները նրանց* տվեց քամուն ու հովին» *(Չ, 260)։*

Թեև հարադրական բայերի բայական և անվանական բաղադրիչների իմաստային հարաբերակցությունը խիստ մթագնած է, սակայն այժմ էլ մի շարք հարադրությունների մեջ թեթևակի զգացվում է բայ լրացյալի և անուն լրացման իմաստային հարաբերությունը։ Այս տեսակետից քննելով բայական հարադրությունները՝ տեսնում ենք, որ սրանց մեջ մի շարք կազմություններ հենվում են բայի և տրականով լրացման այս կամ այն հարաբերության վրա։ Կան բազմաթիվ հարադրական բայեր, որոնց տրականով լրացումը մատուցման հարաբերությամբ է կապված բայական բաղադրիչի հետ։ Այսպես են՝ մոռացության տալ, կանաչին տալ, սևին տալ, սպիտակին տալ *և այլն։*

«*Սարերը* կանաչին էին տալիս» *(Իս., 3, 479)։* «*Ճգնում է միտքը* աղորքի տված» *(ՀԹ, 2, 20)։* «Կատակի տալով *թողած էր իրեն*» *(ՀԹ, 2, 57)։* «*Միայն ձյունն էր աղոտ* սպիտակին տալիս *ոտքերի տակ*» *(ՄԱՊՀՉ, 12)։* «*Մազերի ճերմակն* արծաթին է տալիս» *(ՎԽԳԼ, 164)։*

Հանգման տրական.— *Բայի լրացումն այս դեպքում ցույց է տալիս այն առարկան, որին հանգում է գործողությունը։ Լրացյալ դառնում են հիմնականում շարժում ցույց տվող բայերը, ինչպես՝* հասնել, հանգել, դեմ առնել, կպչել, դիպչել, թիկն տալ, հենվել, կառչել, քսել (քսվել), արձագանքել, կոթնել, մոտենալ, հանդիպել, պատահել, ներկայանալ, ցույց տալ, զարկել (զարկվել), կապել *և այլն։*

Ինչպես երևում է բերված ոչ լրիվ ցանկից, բայերի սեռային սահմանափակում չկա. հանգման տրականով խնդիր ստանում են

ինչպես ներգործական (կապել, ցույց տալ, զարկել), *այնպես էլ կրավորական* (կապվել, զարկվել), *միջին-անդրադարձ սեռային առման* (շղթայվել, զարկվել) *և չեզոք սեռի* (հասնել, հանգել կպչել, կոթնել) *բայերը։ Հանգման իմաստ արտահայտող տրականը սովորաբար թանձրացական գոյական է լինում։*

«*Քու ձենը* հասավ *աստծու* գահին» *(ՀԹ, 2, 98)*։ «*Փոքրիկ ճկույթը* մի քարի առավ» *(ՀԹ, 2, 99)*։ «*Անտակ* ծովին դեմ առա» *(Իս., 1, 91)*։ «Թիկն է տվել *զմրուխտ* գահին» *(Իս., 2, 8)*։ «*Նեսոն ձեռքը* քսեց *իմ* շորերին» *(ՀԹ, 1, 411)*։ «*Ես ու դու էլ* շղթայված ենք իրարու» *(ՎՏ, 1, 17)*։ «*Մոլախոտերը* զարկվում են ծնկներիս» *(ԲՀԱՉ, 80)*։ «*Բահը դեղձենու* բնին հենելով՝ *առաջացավ դեպի մեզ*» *(Մուր., 5, 270)*։ «*Գոռ իշխանը ցանկանում է* ներկայանալ թագուհուն» *(Մուր., 4, 21)*։ «*Այս բոլորը նա* ցույց էր տալիս *բարձրաստիճան* հյուրերին» *(Մուր., 4, 451)*։

Հանգման տրականը ևս փոխաբերական գործածություն ունի, այսինքն լրացում կարող են դառնալ վերացական գոյականները։

«*Այս* ճշմարտության *մենք* հանդիպում ենք *ամեն քայլափոխում*» *(Մուր., 5, 264)*։ «*Սոկրատեսը* դատապարտված էր մահվան» *(Իս., 2, 200)*։ «*Եվ միշտ* հանգում էր *նույն* պատասխանին» *(Շիրվ., 3, 297)*։ «*Նա մելամաղձոտ հայ* եղանակին *Հայկական ուրախ հորդան* էր *կցում*» *(ՊՍԱՉ, 142)*։

Հանգումը ևս կարող է միահյուսված լինել այլ իմաստների հետ։ Այսպես, հանգման և ուղղության իմաստներով կարելի է մեկնաբանել բայի լրացումը հետևյալ նախադասություններում. «*Ակնածությամբ* գլուխ խոնարհեց թագուհուն» *(Մուր., 4, 16)*։ «*Կարոտ աչքս* կառնի *իմ հայրենի* տանը» *(ՀԱՀԵՄ, 122)*։

Կարող են միահյուսվել նաև հանգման և նպատակի իմաստները։ «*Ժամերով* հերթի էին սպասում» *(ՆԴ, 1, 11)*։ «*Օդն այնքան քնքուշ էր և խաղաղ, որ* մղում էր *միայն* երազանքի *և ոչ դաժան* արհավիրքի» *(ԴԴՎ, 16)*։ «*Այս դաժան* մարտին *ո՞վ նրան* հրեց» *(Չ, 232)*։

Իսկ «*Ջուռնի* ձենին *դելը* մոտ չի գալի» *(ՀԹ, 1, 400) նախադասության մեջ տրականով լրացումը կարող է մեկնաբանվել և՛ հանգման, և՛ պատճառի իմաստներով։*

Հանգման տրականով կազմված մի շարք կապակցություններ դարձվածքի են վերածվել, ինչպես՝ իրար գալ, սև կապել օրին, շղթայի զարկել (զարկվել), խռով մնալ գլխին, աչքին երևալ, խոսք խոսքի հասնել:

«*Բայց թագավորն ո՞ւր է հիմի, Որ սև* կապեմ *նրա* օրին» (*ՀԹ, 2, 120*)։ «*Ի՞նչ* օրի հասա, *Որ սոսր* մարդուն գլուխ ծռեցի» (*Իս., 1, 113*)։ «*Եվ որդին, որդին, կաթողին որդին նորից բանտի մեջ՝* զարկված շղթայի» (*Իս., 1, 278*)։ «*Էս ի՞նչ սև* օրի կանգնեցրիր *ինձ*» (*ՆԴ, 1, 142*)։ «*Իր ունեցած անթիվ գանձն ու հարստությունը* աչքին չէր երևում» (*ՂԱ, 217*)։

Հանգման տրականով են կազմված մի շարք հարադրական բայեր, ինչպես՝ հազարի հասնել, ուժի դիմել, օգնության դիմել, խորամանկության դիմել, եզրակացության հանգել *և այլն*։

«*Ոչ մի գործնական* եզրակացության չհանգեցին» (*Շիրվ., 8, 253*)։ «*Որոնց թիվը* ուր հազարի էր հասնում» (*Մուր., 4, 131*)։ «*Նա այն ժամանակ* ուժին էր դիմում» (*Պուշկին, ՂԱ, 373*)։

Ծանոթություն 1.— Հնազանդել, հպատակվել, ենթարկվել, խոնարհվել *բայերի լրացումը Վ. Առաքելյանը անվանում է հնազանդության տրական*[1]։ *Սակայն սա հանգման իմաստ է արտահայտում, թեև փոքր-ինչ յուրահատուկ ձևով։ Այս դեպքում իմաստն այնպիսին է, որ լրացումը առարկայական ձևով չի շփվում գործողությանը, ինչպես այդ առկա է* կպչել, դիպչել, հասնել *և նման բայերի լրացումների դեպքում։ Այս բայերի լրացում դառնում են ինչպես թանձրացական, այնպես և վերացական գոյականներ*։

«*Աշխատիր համոզել նրան, որ* հնազանդե *յուր* թագավորին» (*Մուր., 4, 143*)։ «Խոնարհել եմ Սևադային՝ *իմ թագավորի շահն ունենալով ի նկատի*» (*Մուր., 4, 106*)։ «*Առերես է* հպատակում *նրանց* ճնշումներին» (*Մուր., 4, 99*)։ «Պիտի անսաստեմ *քո* հրամանին» (*Մուր., 4, 217*)։

Ծանոթություն 2. — Ապավինել, ապաստանել, մնալ, թողնել, վստահել, վստահանալ *բայերի տրականով լրացումը Վ. Առաքելյանն առանձնացնում է իբրև առանձին իմաստ՝* ապավինության տրական *անունով*[2]։

Սակայն այս բայերի լրացման իմաստը հանգման է՝ մի փոքր յուրահատուկ դրսևորմամբ։ Սրանց լրացումը գրաբարում արտահայտվում էր ի *նախդիրով և հայցականով (օրինակ՝* յուսալ ի նա,— ի սիրտ և ի մարմին *ուրումն*)։ *Լրացման դերում*

---

[1] Վ. Առաքելյան *Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957, էջ 124—125*։

[2] *Նույն տեղ, էջ 123*։

կարող են հանդես գալ և՛ թանձրացական, և՛ վերացական գոյականներ։

«Իշխանին մնում էր մի նվազ հույս, այն է՝ ապավինել յուր կորովին և պերճախոսությանը» (Մուր., 4, 150)։ «Յուրաքանչյուրն իր կյանքն ապավինում է իր հրացանին» (ՍԶ, 8, 418)։ «Մեր հովիվների մեջ սովորություն է հաճախ իրենց հոտը թողնել շների հսկողությանը» (ՀԹ, 1, 420)։ «Գարդմանա զորաց քաջությանը կարող եմ վստահել» (Մուր., 4, 45)։

Ուղղության տրական.— Ուղղության տրականը ցույց է տալիս այն առարկան, որին ուղղվում է գործողությունը։ Սա ըստ էության գործողության նպատակակետ առարկան է նշում, սակայն ոչ երբեք պարագայական նպատակ։ Այսպիսի լրացում ունենում են սահմանափակ թվով բայեր։ Դրանցից են՝ ուղղել (ուղղվել), նայել, մտիկ անել, հառել. սևեռել, մեկնել, նետել, ձգել, գցել, քաշել, արձակել, կարկառել, պարզել և այլն։

«Նայեցեք սրա պատկառելի դեմքին, սրա կրակոտ աչքերին» (Մուր., 5, 7)։ «Օտարներն անգամ ձեռք են կարկառում նրանց» (Մուր., 5, 14)։ «Ուրեմն դատարկենք դարձյալ մի գավաթ և անցնենք բուն խնդրին» (Մուր., 5, 303)։ «Աչքերը մի քանի վայրկյան գետնին հառելուց հետո նորից բարձրացրեց նրանց և թագուհու սպասող հայացքին ուղղելով՝ սխալ մեղմ և հանդիստ ձայնով շարունակեց» (Մուր., 4, 36)։ «Անկուշտ հողին աչքն է գցել» (Իս., 1, 122)։ «Ձեռք է մեկնում առաջավոր հումանիստ գաղափարներով ոգևորված մարդկությանը» (Իս., 4, 341)։ «Դունչը մեկնեց կովկիթին» (ՀԹ, 1, 172)։ «Պարզես մեղմիկ ցոլքդ իմ հոգուն» (ՎՏ, 1, 29)։ «Աչքս եմ նետում մորս նստած անկյունին» (Իս., 1, 331)։ «Իմ սատանային հաշտության ձեռք կպարզեմ, բայց նրան՝ երբեք» (Մուր., 4, 156)։

Ուղղության տրականի տարբերակ է ձգման, հակման տրականը, որը սովորաբար դառնում է ներքին հոգեկան վիճակ՝ կարոտ, ձգտում, տենչ արտահայտող բայերի լրացում, ինչպես՝ ձգտել, կարոտել, ծարավել, փափագել, տենչալ, պապակել և այլն։

«Այժմ ես կարոտում եմ մի հավատարիմ բարեկամի» (Մուր., 4, 31)։ «Գաղութային ժողովուրդները ձգտում են ազատության և անկախության» (լրագիր)։ «Դու գիտես, թե որքան իրավունք ունեմ ես մահվան փափագելու» (Մուր., 4, 344)։

Այս իմաստը հատուկ է նաև հիշյալ բայերի արմատին հա-

*մարժեք ածականների լրացմանը (*կարոտ, ծարավ, պապակ *և այլն)*[1]։

Մի քանի բայեր իրենց սովորական իմաստով ուղղության տրականով լրացում չեն ստանում, սակայն փոխաբերաբար գործածվելիս, երբ նրանք նշանակում են ուղղել (ուղղվել), նայել, *կարող են ստանալ այդպիսի լրացում։*

«Սարքույը կամաց-կամաց հանգստանում է և մտասու հայացքը տնկում *դիմացի սան արևակեղ* պատին» *(ՆԴ, 1, 44)։ «Իսկ չինովնիկի աչքերը երեխայի ոտի ալիներից* սահում էին *գետնի գունավոր* կարպետին» *(Բակ., 45)։ «Երկու գյուղն էլ ականջները* խլշեցին *նոր օրերի* լուրերին» *(Բակ., 46)։ «Նստոտում էինք, հիացած* պլշում *Նեսոյի՝ ոգևորությունից գեղեցկացած* դեմքին» *(ՀԹ, 1, 409)։*

Ուղղության իմաստը կարող է համատեղվել նպատակի հետ։ Օրինակ՝ «Ինչին ենք *մենք* ըղձում *այնքան կարոտով» (ՎՓ, 4, 467)։*

Դնել, իջնել, շուռ գալ *և այլ բայերի լրացում տրականը կարող է մեկնաբանվել և՛ ուղղության, և՛ տեղի իմաստներով։ Օրինակ՝* «Շուռ եկավ *մյուս կողքին» (ՆԴ, 1, 30)։*

Իսկ «Բոլոր սպասավորները և կողմնակի անձինք ապտակի ճնշյունին երես դարձրին» *(Շիրվ., 3, 196) նախադասության մեջ տրականը կարող է մեկնաբանվել և՛ ուղղության, և՛ պատճառի իմաստներով։*

Ուղղության տրականով կազմված կապակցություններից առաջացել են որոշ դարձվածքներ, ինչպես՝ մեկի խոսքին նայել,— մտիկ անել, մեկին քաշել *(նմանվել) և այլն։*

«Մի ծերունու խոսքին մտիկ» *(ՀԹ, 2, 119)։* «Աչք է ձգել *մեր* խորոզին» *(ՀԹ, 1, 161)։ «Ու* ձեռ մեկնի *աղքատ* մարդու» *(ՀԹ, 1, 199)։ «Մեր Ավետիքն էլ ուղիղ իր* նորն էր քաշել» *(ՂԱ, 472)։*

Ուղղության տրականով են կազմված մի շարք հարադրական բայեր, ինչպես՝ մի բանի անել (երեսը սարին անել), մի բանի գալ *և այլն։*

«Որս եմ՝ բութես ձեզ արած» *(ՀԹ, 2, 62)։ «Երեսս էլի* ձեզ եմ արել» *(ՀԹ, 1, 273)։* «Կասկածի եկավ, *զարմացավ սատանիկ» (ՂԱ, 24)։*

Հաղորդման տրական.— *Բայի լրացումը ցույց է տալիս այն*

---

[1] *Տե՛ս «Ածականի բառակապակցությունները» բաժինը։*

տարկան, որին հաղորդում, պատմում, զեկուցում է ենթական։ Այս կապակցություններում իբրև լրացյալ հանդես են գալիս հիմնականում ասացական բայերը, որոնք սակավաթիվ են։ Դրանցից են՝ ասել, պատմել, հարցնել, հաղորդել, հրամայել, խնդրել, գանգատվել, արտահայտել, քարոզել, խոստովանել, ձայնել, ձայն տալ, հայտնել, թելադրել, գուժել, պատասխանել, բացատրել, զեկուցել, առաջարկել *և այլն։ Լրացման դերում հանդես են գալիս անձ ցույց տվող բառերը (գոյական, դերանուն և այլն), իսկ եթե իր ցույց տվող գոյականները լինում են ասացական բայերի լրացում, ապա դա հետևանք է նրանց անձնավորման։*

«— *Վերադառնանք,*— ասացի ընկերոջս» *(Մուր., 5, 267)*։ «*Ես* քեզ կպատմեմ *ոսկե հեքիաթներ*» *(ՎՏ, 2, 143)*։ «*Երկնի* մովին, *կանաչ* ծովին, անտառների *խոր ու մթին*, *Գարնան* ամպին *լույս ոլորտում*, ասում եմ ես *մենակ բարով*» *(ՎՏ, 1, 11)*։ «Խնդրեց իշխանին, *որ բարեհաճի նախ հանձնել իրան յուր սուրը*» *(Մուր., 4, 99)*։ «Ինձ մի խնդրիր, *ես չեմ երգի*» *(ՀԹ, 1, 60)*։ «*Սուրհանդակ ուղարկեց Սևան՝ արքայական դրոշի տարած հաղթությունը* թագավորին ավետելու» *(Մուր., 4, 335)*։ «*Ու լիդառնությամբ* հարցնում է *նա Դալուկ, մարմարիոն Թմկա* տիրուհուն» *(ՀԹ, 2, 143)*։ «*Լույսդ* կավետեմ *խավար* աշխարհին» *(Իս., 1, 134)*։ «Ձայնում են *անվերջ մթնում* իրարու» *(ՎՏ, 2, 44)*։ «Զորքին էր հրամայում» *(Մուր., 4, 44)*։ «Ուրիշին *է խելք* քարոզում» *(Ծ., 250)*։

Պետք է նշել, որ խոսել *բայի տրականով խնդրառությունն արդեն հնանում է։ Այս պատճառով էլ այժմ հարազատ չեն հընչում այսպիսի կապակցություններ.* «*Ես* քեզ չեմ խոսում,— *գոչեց կինը*» *(ՎՓ, 4, 15)*։

Հաղորդման տրականով խնդիր են ստանում նաև տալ *բայով կազմված մի շարք հարադրություններ, ինչպես՝* պատասխան տալ, հաշիվ տալ, պատվեր տալ, խոստում տալ, հրաժեշտ տալ *և այլն։*

«*Կերթամ, ես* նրան պատասխան կտամ» *(ՀԹ, 2, 112)*։ «*Աստղունք* լուսնին ձայն տվին» *(Իս, 1, 80)*։ «Պատվեր տվինք *մեր* բանակին» *(ՀԹ, 1, 262)*։ «*Իր կողմից հանդիսավոր* խոստում տվեց փեսացուին» *(ՆԴ, 1, 144)*։ «*Անլուր* աշխարհին իմաց տվեցին» *(ՊՍԱՁ, 81)*։ «*Ահա ես* հրաժեշտ եմ տալիս *ցավերով ծանրացած այս* աշխարհին» *(ՍԽՄԽ, 558)*։

Հաղորդման տրականով լրացում կարող են ստանալ նաև ոչ ասացական մի շարք բայեր՝ փոխաբերաբար ասացական նշա-

նակությամբ գործածվելու դեպքում։ Դրանցից են գոռալ, մրմնջալ, գոչել, կրկնել *և այլն*։

«— *Կենդանի եմ, ամպի տակից* Գոռաց *Դավիթ* Մսրա Մելիքին» (*ՀԹ, 2, 126*)։ «*Եվ թող քո անուշ, թովիչ սոսափյուն խռնված* հոգուս մրմնջա *օրոր*» (*Իս., 1, 57*)։ «*Ես* քեզ կկրկնեմ *նույնը*» (*Ր, 7, 510*)։ «*Իսկույն գոհության աղոթք* մրմնջացին աստծուն» (*Մուր., 4, 353*)։

Կան սակավաթիվ բայեր, որոնց լրացումը կարող է մեկնաբանվել հաղորդման և ուղղության իմաստներով։ Այդպես են՝ առաջարկել, արձակել, գրել, խնդիրք անել *և այլն*։

«*Իսկ մնացյալ* զինվորներին, պետերին ու առաջնորդներին առաջարկում եմ *հենց վաղվանից ընկերանալ ինձ*» (*Մուր., 4, 291*)։ «Գրեց *Արաս* եղբորը *մեզ հայտնի նամակը*» (*Մուր., 4, 390*)։ «Արձակում է *հրովարտակ* ժողովրդին *իր հպատակ*» (*ՀԹ, 1, 261*)։ «Խնդիրք եմ անում հոլին ու հավքին» (*ՀԱՀԵՄ, 126*)։ «Դարձավ ներկաներին՝ *դեմքի անսովոր խորհրդավոր արտահայտությամբ*» (*ՆԴ, 1, 15*)։ «Թուղթ ու գրքերիս դառնում եմ, *ասում*» (*ՀՀ, 107*)։

Որոշ կապակցություններում տրականը կարող է մեկնաբանվել հաղորդման և հանգման իմաստներով։

«*Երբեք իմ* լսելիքին *բեմից* չի հնչել *այդչափ երաժշտական բարիտոն*» (*Շիրվ., 8, 193*)։ «Շշնջում են իրարու *բարդիներս հինավուրց*» (*Իս., 1, 246*)։

Պատասխանել *բայի լրացումը մի դեպքում հաղորդման իմաստ ունի* (պատասխանել մեկին), *իսկ երկրորդ դեպքում՝ հանգման-փոխարինության* (պատասխանել *մեկի* հարցին)։ «*Քո անհանգիստ* հարցերին *հանգստացնող պատասխաններ* էր տալիս» (*Մուր., 4, 72*)։

Շահի (և վնասի) տրական.— *Բայի լրացումը այս իմաստով ցույց է տալիս այն առարկան, որի օգտին կամ որին ի վնաս կատարվում է գործողությունը*։

Այսպիսի լրացում կարող են ստանալ տարբեր սեռերի բազմաթիվ բայեր, ինչպես՝ ծառայել, բերել, զոհել, կարգել, հաջողել, սահմանել, սեփականել, մնալ, բացել, երգել, պատրաստել, գնել, հայցել *և այլն։ Լրացման դերում հիմնականում հանդես են գալիս անձ ցույց տվող բառերը*։

«*Թույլ տուր, որ միայն ես* ծառայեմ քեզ» (*Մուր., 4, 15*)։ «*Ընկերուհիներ* կարգեց քեզ *Այունյաց իշխանուհիներին*» (*Մուր., 4, 91*)։ «Բերում է ինձ *ամեն օր Կանիկեռ, շամիչ ու խնձոր*»

(ՀԹ, 2, 53)։ «Ըլնում է մեկին իր երազն ու սեր» (ՀԹ, 2, 53)։ «— Գնացեք, ասավ, ազատ ապրեցեք, Սասունցի Դավթին արև խնդրեցեք» (ՀԹ, 2, 112)։ «Դրի մեր ժամին մի հարյուր թուման» (ՀԹ, 1, 190)։ «Նա սեփականել է իրան ամբողջ Արարատը» (Բ, 7, 175)։ «Եկան օրեր ու անցան ու ինձ ոչինչ չմնաց» (ՎՏ, 1, 255)։ «Բայց քնքշությունդ երբեք քեզ առաջնորդ չկարգես» (Զ, 180)։

Շահի տրականով լրացում պահանջում են նաև անել, ընկնել, լինել, դառնալ բաղադրիչներով կազմված մի շարք հարադրական բայեր, ինչպես՝ շնորհ անել, բարիք անել, բաժին ընկնել, օգուտ տալ, ինչպես նաև՝ լինել, դառնալ հանգույցով և որևէ վերադիրով կազմված ստորոգյալ-բայերը, ինչպես (որևէ) բան դառնալ (բաժին դառնալ, կրակ դառնալ, աշակերտ դառնալ, ծառա դառնալ), հաճելի լինել, ծանրություն լինել և այլն։

«Լավ, բերեք ինձ զվարճացուցիչ մի բան,— ասաց Թագուհին, կարծես կամենալով շնորհ անել դայակին» (Մուր., 4, 29)։ «Իմ Սահականույշը հարս կլինի այն իշխանին, որին ինքը կհավանի» (Մուր., 4, 38)։ «Նա ասպետություն էր անում մեր քաղաքի չափազանց աշխատասեր օրիորդներին» (ՎՓ, 5, 21)։ «Հով է արել հոգնած հողի հոգնած մշակներին» (ՀՍՀԵՄ, 96)։

Շահի տրականը կարող է արտահայտվել ոչ միայն թանձրացական, այլև վերացական գոյականներով։

«Մեղքեր ես միմիայն վաստակել հոգուդ» (ՀԹ, 2, 30)։ «Խմում են կռվող քաջերի փառքին, Որ կռվի դաշտում կյանք չեն խնայում, Եվ ընկածների սուրբ հիշատակին» (ՀԹ, 2, 141)։

Պակասել բայի լրացումն ունի շահի իմաստ, սակայն շնորհիվ այն բանի, որ այդ բայը պահանջում է նաև բացառականով լրացում, տրականի մեջ մի տեսակ անջատման (պակասության) նրբերանգ էլ է զգացվում։ Օրինակներ՝ «Ինչ է պակասում թշնամուն» (Մուր., 4, 78)։ «Իմ տիրուհին մեկ է, սրան ուրիշ մեկ չի պակասել» (ՂԱ, 236)։

Այս իմաստն ունեցող տրականի որոշ ձևեր կարող են ժամանակին կապի վերածվել։ Այդպես են օգտին, հասցեին ձևերը։

«Նա ազգի օգտին գործում էր բարիքներ երբեմն միայն փառք վաստակելու համար» (Մուր., 4, 202)։ «Նրան թվաց, թե կինն իր հասցեին ինչ-որ բան փնթփնթաց» (ՆԴ, 1, 52)։ «Հապա՝ օրհնված, տանու տերերին ժամոց չե՞ս տալիս քո հոգու խերին» (ՀԹ, 1, 192)։

Մի շարք կապակցություններում առկա են շահի և հաղորդման իմաստները։

«Նախարարներին ու թագավորին կարդացին բուռն, խիստ սպառնալիք» (Իս., 2, 173)։ «Ու բարի մաղբեց ջահել ղոնաղին» (ՀԲ, 2, 35)։ «Արքայական հրամանները կարդացել են ժողովրդին» (ՍԽՄԽ, 74)։

«Մեկի կամքին թողնել» կապակցության մեջ առկա է շահի և վիճակի-ձևի իմաստների համատեղումը։ «Երկիրը բախտի կամքին թողնելը նրան ավելի վհատեցրեց» (Մուր., 4, 243)։ «Հաջողությունը թողնենք բախտի կամքին» (Բ, 7, 143)։

Ինչպես արդեն նշել է Վ. Առաքելյանը, շահի տրականը ներգործական սեռի բայերի մոտ արդեն ստանձնաբար դուրս է մղվում։ Դրա պատճառն այն է, որ ներգործական բայի մոտ այն կարող է շփոթվել տրականաձև հայցական ուղիղ խնդրի հետ։ Օրինակ՝ երեխային բերել կապակցության մեջ երեխային կարող է համարվել և՛ շահի տրական (երեխային խաղալիք բերել), և՛ հայցական ուղիղ խնդիր (երեխային տուն բերել)։ Չեզոք սեռի բայերի մոտ շահի տրականի այդ շփոթի հնարավորություն չկա։ Սակայն քանի որ ներգործական բայերի շահի տրականի գործածությունը նվազում է, այն փոխարինվում է համար կապով և կապի խնդրով։ Այսպես, պետք է ասել ոչ թե երեխային կոշիկ գնել, այլ՝ երեխայի համար կոշիկ գնել։ Այդ պատճառով չեզոք սեռի բայերի մոտ էլ հաճախ շահի տրականի փոխարեն դրվում է համար կապ և կապի խնդիր, այսինքն՝ բաժին դառնալ մեկին կապակցության փոխարեն գործածվում է բաժին դառնալ մեկի համար կապակցությունը։

Շահի տրականի փոխարեն համար կապի ու նրա խնդրի գործածությունը հիմք է ստեղծում շահի և նպատակի իմաստների մերձեցման համար։ Այսպես, գիրք գնել երեխայի համար, դիմել աշխատանքի համար կապակցություններում երեխայի համար շահի անուղղակի խնդիր է, իսկ աշխատանքի համար՝ նպատակի պարագա։ Սակայն շահի անուղղակի խնդիրը չի կարելի շփոթել նպատակի պարագայի հետ։ Դրանք իրարից տարբերելուն կարող է նպաստել այդ երկուսի համատեղ գործածությունը։ Ժամանակակից հայերենում հաճախ շահի տրականն ու նպատակի հայցականը համատեղ են հանդես գալիս։

«Նրանք մնացին ձյունոտ դաշտերում՝ Քաղցած գայլերի

---

[1] Վ. Առաքելյան, նշվ. աշխատ., էջ 105։

ոնմակներին կեր» *(Չ, 236)*։ «*Իմ նոր գործած գորգը* տարել նրան ընծա» *(ՂԱ, 118)*։ «Նրան ընարել եմ *ես* ինձ հարսնացու» *(ՂԱ, 390)*։ «Եկել եմ քեզ թիկունք» *(ՍԽՄԽ, 703)*։

Ճաշի տրականով կազմված կապակցություններից առաջացել են մի շարք դարձվածքներ, ինչպես՝ մեռնել մեկին *կամ* մի բանի *(*գլխին մեռնել, հոգուն մեռնել, արևին մեռնել *և այլն)*, մատաղ լինել մեկին, մի բանի *(որը կարող է գործածվել նաև* լինել*-ի զեղչումով՝* հոգուն մատաղ, գլխին մատաղ *և այլն)*։

«Մեռնեմ գարունքիդ, *ծաղկած գարուն ես*» *(ՀԹ, 2, 54)*։ «*Ամեն տեղ էլ տերտերը վատ, Ազգի* գլխին դարձել է *ցավ*» *(ՀԹ, 1, 183)*։ «Հոգուդ սատկեմ, *Մարգարյան, սպասիր*» *(ՆԴ, 2, 470)*։ «*Մեր սև* օրին ճար անենք» *(ՀԹ, 1, 7)*։ «*Ո՞հ, չէ, սիրուն, էլ ոչ մի սեր* ճար չի անի *իմ* սրտին» *(ՀԹ, 1, 91)*։

Ծանոթություն.— *Երբ շահի կամ երբեմն և հաղորդման տրականի լրացյալ բայը զեղչվում է (խոսքի որոշ տեսակներում. մասնավորապես անենթակա և անդեմ նախադասություններում), լրացումը կապակցվում է ձայնարկության հետ։ Այսպիսի տրականը Վ. Առաքելյանը կոչում է ձայնարկության տրական*[1]*։ Իրականում սա տրականի առանձին իմաստ չէ, այլ հիշյալ իմաստների վրա հենված գործածություն։ Այսպիսի տրականը կարող է գործածվել բոլոր այն ձայնարկությունների հետ, որոնք ուղղվում են որևէ առարկայի, ինչպես՝* անեծք, ափսոս, վայ, վուշ, երանի, ամոթ, թու *և այլն։*

«Ափսոս *իգիթ քու* յարին, Ափսոս բոյիդ *թելիկ-մելիկ*, Ափսոս *էգ ծով աչքերին*» *(ՀԹ, 2, 43)*։ «Վուշ *քու* սերին, *քու* յարին... Վուշ-վուշ, *Սարո*, Վուշ-վուշ *իգիթ*, Վուշ *քու սիրած* սարերին» *(ՀԹ, 2, 44)*։ «Երնեկ *քու* սերին, *Քու սարի սովոր Սև-սև* աչերին» *(ՀԹ, 2, 54)*։ «Ամոթ *քեզ նման գոված* իգիթին» *(ՀԹ, 2, 58)*։ «*Բայց ուր փախչես*, վայ *քո* ջանին, Վայ *քո* աման ու շամանին» *(ՀԱՀԵՄ, 390)*։

Վերածման (փոխարկման) տրական.— *Բայի լրացումը այս իմաստով ցույց է տալիս այն առարկան, որին վերածվում, փոխարկվում է մի բան։ Երբ ասում ենք «Կասկածը* փոխվեց համոզմունքի», *ապա* համոզմունքի *ցույց է տալիս այն առարկան, որն ստացվում է կասկածի փոփոխության, վերածման հետևանքով։ Վերածման տրականը որևէ առարկայի ձևափոխման արդյունքն է։ Գրաբարում վերածման իմաստն արտահայտվում է*

[1] Վ. Առաքելյան, *նշվ. աշխատ., էջ 108։*

ի նախդիրով և հայցականով (յերկուս բաժանել)։ Արդի գրական լեզվում վերածման իմաստի դրսևորման հիմնական ձևը տրականն է, թեև պատահում են հայցականի դեպքեր ևս[1]*։ Խիստ սահմանափակ է այսպիսի լրացում ունեցող բայերի թիվը։ Դրանք փոխակերպման գործողություն ցույց տվող բայերն են, ինչպես՝* վերածել, փոխարկել, փոխակերպել, փոխել, քաժանել, տրոհել, թարգմանել, փոխադրել, կիսել, ճեղքել, կտրատել, տարրալուծել *և այլն։ Լրացում կարող են դառնալ բազմաթիվ բառեր՝ առանց իմաստի սահմանափակման։*

«Նա այժմ ամբողջապես փոխարկվել էր *քարակարկառ* բըմբերի *և* ամբարտակների» *(Մուր., 4, 9)։ «Ծովակի մութ բոսոր գույնը* փոխվում էր *հեղհեղուկ փայլուն* արծաթի» *(Մուր., 4, 300)։ «Ողջ գյուղը կանգնեց պարսպի նման, Ջոկվեց,* բաժանվեց երկու բանակի» *(ՀԹ, 2, 56)։ «*Կիսում է *Վեներիկը* երկու մասի» *(Իս., 4, 8)։ «Մի ամբողջական* պատմվածքի վերածեցի *միայն այն գրանցումները» (ՆԴ, 1, 114)։ «Իրանն ավերակների* կույտի փոխարկվեց» *(ՎՓ, 4, 444)։ «Ալիքները հեռանում էին մի պահ, հետո մոտենում, զարկում նավին,* փշրվում կոհակների» *(Բակ., 102)։ «Նա ջուրը* տարրալուծեց *բաղադրիչ* նյութերի»: *«Մուշեղ զորավարը* երկու բաժնի է կիսել *այրուձին» (ՎԽԴԼ, 395)։*

Փոխադարձ կապի տրական.— *Բայի լրացումը այս իմաստով ցույց է տալիս այն առարկան, որի հետ փոխադարձ կապի մեջ է, փոխադարձ գործողության մեջ է գտնվում մի այլ առարկա։ Այսպիսի լրացում ստանում են սահմանափակ թվով բայեր, որոնք ցույց են տալիս փոխադարձ կապի մեջ գտնվող երկու կամ ավելի առարկաների միջև կատարվող գործողություն, ինչպես՝* աջակցել, գործակցել, ձայնակցել, ուղեկցել, դաշնակցել, ցավակցել *(առհասարակ բոլոր բարդ բայերը, որոնց երկրորդ բաղադրիչն է* կից*)*, բարեկամանալ, մտերմանալ, ընկերանալ, ծանոթանալ, հաղորդվել, հաշտվել *և այլն։*

«Ընկերացնում էր *նրան շատ անգամ հասարակ* զինվորներին» *(Մուր., 4, 249)։ «Անկարելի էր վերև սլացող հուրը* ընկերացնել *երկրին կառչող* հողին» *(Իս., 3, 445)։ «Ներելի էր մի օրիորդի* ցավակցել *մի օտար* երիտասարդի» *(Շիրվ., 3, 267)։ «Տանտիրոջ խնդրանքով Դավիթ-Բեկը գնաց նրա* գերդաստանին ծանոթանալու» *(ՍԽՄԽ, 143)։* «Նրան ընկերակցում էին *յուր թիկ-*

[1] *Տե՛ս «Բայի լրացումները հայցականով» բաժինը։*

նապահները» (Մուր., 4, 360)։ «Գույց թագավորը կփեսայանա իրանց» (Մուր., 4, 69)։ «Այդ մարդիկ կիսավայրենիների էին նմանում» (ՍԽՄԽ, 14)։

Փոխադարձ կապի իմաստը արտահայտվում է նաև հետ կապով և կապի խնդրով։ Այսպես, ոչ միայն կարելի է ասել՝ բարեկամանալ մեկին, այլև՝ բարեկամանալ մեկի հետ, ոչ միայն՝ դաշնակցել մեկին, այլև՝ դաշնակցել մեկի հետ։ Սակայն ոչ բոլոր բայերն են զուգահեռ խնդրառություն ունենում։ Վշտակցել, աջակցել, ձայնակցել, ուղեկցել բայերը չեն կարող հետ կապով այսպիսի լրացում ստանալ։ Իսկ ծանոթանալ բայը այս իմաստով լրացումը ավելի շատ հետ կապով է ստանում։ Անձի անունը լրացում դառնալիս հետ կապի հետ է դրվում (ծանոթանալ Գրիգորի հետ, ընկերոջ հետ)։ Իսկ իրի անունը տրականով լրացում դառնալիս հանդիման իմաստ է արտահայտում (ծանոթանալ գործին, աշխատանքին, գրքին և այլն)։ Օրինակ՝ «Արդեն ծանոթացա այդ հանգամանքներին» (Մուր., 4, 109)։ Միաժամանակ պետք է նշել, որ հետ կապով լրացումը կարող է միասնություն իրանք էլ արտահայտել։ Այսպես, «Գործակցել ընկերոջ հետ» կարող է նշանակել ոչ միայն գործակցել ընկերոջը, այլև՝ ընկերոջ հետ միասին գործակցել մի գործի կամ այլ մարդու։

Փոխադարձ կապի տրականը կարող է լրացում դառնալ նաև ածականներին, ինչպես՝ մեկին դաշնակից, մեկին ծանոթ կամ մի բանի ծանոթ, մի բանի հաղորդակից և այլն։

Այս տրականի լրացյալ լինում են նաև հարադրական բայերն ու բաղադրյալ ստորոգյալները, ինչպես՝ ընկեր դառնալ, ընկեր լինել, բարեկամ դառնալ, թշնամի դառնալ և այլն։ Օրինակ՝ «Նրանց սովերին ընկեր էր դարձել» (Չ, 227)։

Համապատասխանության տրական.— Բայի լրացումը ցույց է տալիս այն առարկան, որին համապատասխանում, նմանվում է մի այլ առարկա։ Այս իմաստը ածականի լրացումներին է բնորոշ[1]։ Բնորոշ է, որ այսպիսի լրացում ստանում են համապատասխան ածականներից կազմված բայերը, ինչպես՝ հարմարվել, պատշաճել, համապատասխանել, նմանվել, հավասարվել, համեմատվել, ներդաշնակել, համաձայնել, արժանանալ և այլն։

«Ամեն տեղ էլ հարմարվել է իրեն շրջապատող պայմաններին» (ՀԹ, 1, 417)։ «Նա այդ ասաց չոր արտահայտությամբ, որ պատշաճում էր դեպքի անախորժության» (ԴԴՎ, 60)։ «Այլ տուն,

[1] Տե՛ս «Ածականի բառակապակցությունները» բաժինը։

ղոմ, մարագ գետնին հավասարեց» (*ՂԱ, 372*)։ «*Տիրել ես բախտի շռայլ գանձերին եվ* հավասարվել *բոլոր* մեծերին» (*ՀԱՀԵՄ, 67*)։ «Նա նմանում էր *խոլական* հավերժահարսի» (*ՆԴ, 1, 123*)։ «*Աշխարհը* չարժե քո արտասուքին» (*Իս., 1, 217*)։

Համեմատության տրական.— *Այս դեպքում բայի լրացումը ցույց է տալիս այն առարկան, որի համեմատությամբ առավել կամ պակաս է մի այլ առարկա։ Սա խիստ սահմանափակ թվով բայերի լրացում է։ Այսպիսի լրացում ստանում են* գերազանցել, գերակշռել, ստորադասել, ստորադրել, ցածր դասել *և այլ բայեր։*

«*Ամեն քեն ու ոխ* ստորադրում է *միայն հայրենիքի* շահին» (*Մուր., 4, 392*)։ «*Վերջին դարերի ընթացքին փողի ուժը* գերազանցեց սուրին» (*Իս., 3, 206*)։ «*Նույնիսկ սիրուն ժպիտի մեջ՝ սավառնում էր ինչ-որ սխուր, հուսաբեկ ու սրտմաշուկ ստվեր, որ անպայման կերպով* գերակշռում էր *բոլոր մյուս* տպավորություններին» (*ՎՓ, 4, 656*)։ «*Սակայն սրանց պարզամիտ ու անմտածել հարձակման ձևը* գերազանցեց *ձեռնամարտի բոլոր ձևերն ունեցող զինվորների* իմաստությանը» (*ԴԴՎ, 603*)։

Փոխարինության տրական.— *Բայի լրացումը այս իմաստով ցույց է տալիս այն առարկան, որի փոխարեն տրվում է մի բան, կատարվում է գործողություն։ Այսպիսի լրացում դրվում է խիստ սահմանափակ թվով բայերի մոտ, ինչպես՝* տալ, ավելանալ:

«*Ես շվարած միտք եմ անում էն վայրերում դյութական, Ու կարճատև մի* հանույքի *ինչպես* տվի *էնքան բան*» (*ՀԹ, 2, 157*)։ «*Ինչ որ ուներ տանը, հագին, Ողջ հավաքեց,* տվավ պարտքին» (*ՀԹ, 1, 200*)։ «*Երեք մանեթ ունենամ՝ կտանեմ* հացի կտամ, *կբերեմ կուտեք*» (*ՀԹ, 1, 410*)։ «*Ունեցած-չունեցածը* դեղ ու դարմանի ա տվել» (*ՆԴ, 1, 32*)։ «Մեկին *վաթսուն և հարյուր պտուղ* են տալիս» (*ՂԱ, 96*)։

Վերաբերության տրական.— *Լրացումը ցույց է տալիս այն առարկան, որին վերաբերում է բայի գործողությունը։ Իբրև լրացյալ հանդես են գալիս իմացական և ասացական սակավաթիվ բայեր, ինչպես՝* վերաբերել, տեղեկանալ, կասկածել, զարմանալ *և այլն։ Գրաբարում այս իմաստն արտահայտվում էր նախդիրներով և հայցականով կամ բացառականով։ Ժամանակակից հայերենում վերաբերության իմաստը հաճախ արտահայտվում է* մասին, վրա *կապերով և կապի խնդիրներով։ Այսպես, կարելի է ասել՝* կասկածել հաջող ելքին *և* կասկածել հաջող ելքի մասին,— վրա,— վերաբերյալ, տեղեկանալ գործին *և* տեղեկանալ գործի մասին (*կա նաև* տեղեկանալ գործից)։ *Գրական լեզվում այս*

տրականի գործածությունն արդեն հնանում է, սակայն դեռևս կան օրինակներ։

«Հետաքրքրությամբ հարցրեց, թե արդյոք կարողացա՞վ անծանոթ մնալ Սևադայից կամ թե տեղեկացա՞վ *ցանկացած* գաղտնիքներին» *(Մուր., 4, 146)։ «Գուցե և* կասկածում էր *ձեռնարկության* հաջողությանը» *(ԶԴՍՆ, 2, 309)։ «*— Զարմանում եմ անհոգությանդ, *Վարդ,— ասաց նա» (ՍԽՄԽ, 26)։ «Եվ ամենքը* մնացել էին զարմացած *նրա* գեղեցկությանը, խելքին, հեզությանը, ճարպկությանը» *(ՂԱ. 169)։*

Հավելման տրական.— *Այս իմաստով դրվող լրացումը ցույց է տալիս այն առարկան, որին մի բան է ավելացվում։ Այսպիսի լրացում առնում են սակավաթիվ բայեր՝* ավելանալ, ավելացնել, դնել, գումարել *և այլն։*

«Գալիս եմ, բայց ոչ ուրախ երգերով Քո ծաղիկներին *ծաղիկ* ավելացնեմ» *(ՀԹ, 2, 32)։ «Մի քանի կոճղեր* դրեց կրակին» *(ՀԹ, 2, 35)։* «Կանթեղներին *յուղ* ավելացրին» *(ՍԽՄԽ, 36)։* «Երեքին գումարելով հինգ *կստանանք ութ»։*

Հավելման իմաստն արտահայտվում է նաև վրա *կապով և նրա խնդրով։*

Ընկալման տրական.— *Ցույց է տալիս այն առարկան, որին ունկնդրում է մի այլ առարկա։ Վ. Առաքելյանի կողմից այս իմաստն ունեցող կապակցությունները քննվում են հաղորդման տրականի հետ նույնացված։ Այսպես, հաղորդման տրականով կապակցություններ են համարված* պատմել ուսուցչին և լսել ուսուցչին: *Մինչդեռ առաջինում, իրոք,* ուսուցչին *ցույց է տալիս այն առարկան, որին մի բան հաղորդվում է, որից ընկալվում է։ Հետևաբար* լսել մեկին *կապակցության մեջ լրացումը հաղորդման տրականին հակադիր է իր իմաստով։ Այդ նկատի ունենալով այսպիսի բայերի լրացումը համարում ենք* ընկալման տրական:

Այս տրականը լինում է լսել, ունկնդրել, անսալ, ականջ դնել, ականջ անել, ուշ դնել *և նման բայերի լրացում։ Իբրև լրացում կարող են հանդես գալ ինչպես անձ, այնպես էլ իր ցույց տվող գոյականները։*

«Մինչև լսեցի *մի մեծ* պարոնի» *(ՀԹ, 2, 93)։ «Հեյ, պարոններ,* ականջ արեք *Թափառական* աշուղին, *Սիրուն տիկնայք, ջահել տղերք, Լավ* ուշ դրեք *իմ* խաղին» *(ՀԹ, 2, 194)։* «Ունկընդիր եղա *հողմի խենթ* երգին» *(ՎՏ, 1, 33)։ «Տուֆաքար շենք,* ականջիր *դու իմ* հոգուն» *(ԳՍԵԺ, 1, 308)։ «Քո* հրամանին *երբեք* չանսաց *նա» (Իս., 3, 439)։ «Այ վարդ* լսիր աղաչանքիս» *(Ծ,*

84)։ «*Հովվապետն ինքը* ականջ է կախում *Ինչ-որ մի մանկան անօրեն* երգի» (*ՊՍԱՋ, 20*)։

Ստացական տրական.— *Բայի լրացումը այս իմաստով ցույց է տալիս այն առարկան, որին պատկանում, վերագրվում, վերապահվում է մի բան։ Այս իմաստով լրացում ստանում են սակավաթիվ բայեր, ինչպես՝* պատկանել, վիճակվել, վերագրել, լինել, կա, վերապահել *և այլն։*

«*Գարդմանն արդեն իր հին* տիրոջն է պատկանում» (*Մուր., 4, 98*)։ «*Մնացյալը* վերագրում *էր նախախնամության* կամքին» (*Ր, 7, 430*)։ «*Թիվ* կա աստղերին, *Թիվ* չկա զորքին» (*ՀԹ, 2, 15*)։ «*Արար-աշխարհք գիտի՝* չկա *մեր* դարդերին *չափ, սահման*» (*ՀՀ, 72*)։ «*Մեր* երգին *վախճան* չկա» (*Ձ, 402*)։ «*Գիշերը քաղաքը* մնում էր գողերին» (*ՍխՄխ, 290*)։

Ներգործող խնդրի տրական.— *Ինչպես հայտնի է, ներգործող խնդիրը կրավորական կառուցվածքի նախադասության տրամաբանական ենթական է։ Այս խնդիրը ժամանակակից հայերենում արտահայտվում է բացառական, գործիական հոլովներով (և այդ հոլովներից ծագած* կողմից, ձեռքով *կապերով)։ Տրականը այս իմաստի համար, ինչպես ճիշտ կերպով նշել է Վ. Առաքելյանը*[1], *քիչ գործածվող ձև է։ Այժմ ներգործող խնդրի տրականի գործածությունը վերանում է բայի լրացման դերում, իսկ ածականները դեռևս ստանում են այդպիսի լրացում*[2]*։ Այսպիսի լրացում ունեցող բայերից են՝* զոհվել, հափշտակվել, կախարդվել, խաբվել, գերվել, երազվել *և այլն։*

«*Մինչև այսօր բյուր մեզ նմանները* զոհվել *են Թշնամու* սրին» (*Մուր., 4, 329*)։ «*Որքան այդպիսի դժբախտներ* զոհվել *են քո չար* կրքերին *և քո անիրավ* փառասիրությանը» (*Ր, 7, 428*)։ «Թովված, կախարդված, տարված *էն* երգին, *Վերացավ, թռավ իմ վշտոտ հոգին*» (*ՀԹ, 2, 80*)։ «Հափշտակված զմայլքին *կախարդական քո երգի ճախրում էին գլխիդ շուրջը թռչունները երկնքի*» (*ՀԹ, 2, 154*)։ «*Խելքս է* տարվել *քո* ալ-վարդին» (*Իս., 1, 239*)։ «*Ահա պոետն էլ պատրանքով հարբած՝* Գերվեց *մի անգամ ժպտուն* աչքերի» (*ՀԹ, 1, 240*)։ «*Գրքի էջերից* Երազվում էր նրան *տիտանային մի մարդ*» (*Ձ, 431*)։ «Խաբվեցինք խանին, *անհեռատես* կաթողիկոսին» (*ՍխՄխ, 410*)։

---

[1] *Տե՛ս* Վ. Առաքելյան, *նշվ. աշխատ., էջ 109—110։*

[2] *Տե՛ս նույն տեղում, ապա* Վ. Քոսյան, *Ածականի բառակապակցությունները ժամանակակից հայերենում («Պատմա-բանասիրական հանդես», 1962, № 2)։*

Ուղիղ խնդրի տրական.— *Ժամանակակից հայերենում սակավաթիվ բայեր, գրաբարի ավանդույթով*[1], *շարունակում են ուղիղ խնդիր ստանալ տրական հոլովով։ Այդ բայերն են* հաղթել, տիրել:

«Ոստիկանը կտիրե մայրաքաղաքին» *(Մուր., 4, 25)։ «Ի՞նչը* կհաղթի *կյանքում* ներոսին» *(ՀԹ, 2, 137)։ «Թե* տիրես, *մեծ շահ, դու նրա* սրտին, *Թամթուլն էլ անզոր կընկնի ոտից տակ։ Հանգիստ* կտիրես *և Թմուկ* բերդին» *(ՀԹ, 2, 137)։*

Այս բայերը ներգործական մյուս բայերի նմանակությամբ երբեմն հայցականով են ուղիղ խնդիր ստանում։

«Խնդիրն էր մեր Տիրել բարձունքն *անպայման» (ԳՍԵԺ, 2, 364)։ «Հեշտ է* տիրել երկրներ *մեծն Իսքանդարի պես, Բայց ոչ մի զորք չի* տիրի սիրտը *աղջկա» (ԳՍԵԺ, 2, 114)։*

Ապտակել, հարվածել *բայերի՝ տրական հոլովով դրված լրացումը ես պետք է ուղիղ խնդիր համարել։*

«Հարվածեց իմ վզու, խանդալից կյանքին» *(Լերմոնտով, Ծ, 300)։ «*Ապտակում են *դեռ ծաղրելով անմեղության* ճակատին» *(ՀԹ, 1, 82)։ «Երբ այդ ես եմ անում,* ապտակում ես դեմքիս» *(ՀՍՀԵՄ, 340)։*

Ծեծել *բայը սովորաբար հայցականով է ուղիղ խնդիր ստանում* (ծեծել դուռը,— երկաթը *և այլն), սակայն երբեմն այն* խփել, զարկել *բայերի նման տրականով է ուղիղ խնդիր ստանում։ Օրինակ՝ «Քարոտ ափին, Լեռ* փարափին *դեռ* ծեծում է» *(ՀԹ, 2, 66)։*

Ասել *ներգործական բայն ունի և՛ հայցականով, և՛ տրականով խնդիրներ* (մեկին մի բան ասել)։ *Սակայն այս բայը* անվանել, կոչել *իմաստներով գործածվելիս կարող է երկու ուղիղ խնդիր ստանալ, որոնցից մեկը՝ տրականով։ Օրինակներ՝ «*Պապովին *դեղի* էլին ասում» *(ՀԹ, 1, 317)։ «Ես էն* սրտին *դրախտային մրգերի թաղ* պիտի ասեմ» *(Զ, 46)։*

Սակայն պետք է նշել, որ երբեմն այս կամ այն հեղինակի մոտ հանդիպում ենք տրականով ուղիղ խնդրի սխալ գործածություն, որը չի կարելի օրինականացնել։

«Ներում էր *իմ* անկարգություններին» *(Ր, 4, 224)։ «Եվ այդ* ամենին սովերող *շշուկալից ուռիներ, շքեղահասակ բարդիներ» (ՎՓ, 4, 532)։ «Գնում էի և քաշվերում ինձ, սիրտ տալիս,* հոգ-

---

1 *«Որ* յաղթեցեր *քաջ* ազգին *Ալանաց» (Մ. Խորենացի)*, «Տիրեցին աշխարհիս *Հայոց ազգն Սասանեայ պարսկի» (Եղիշե)։*

նածության և թուլության մտրակում *այս մտածությամբ և համոզմունքով» (ՎՓ, 4, 566)*։

Մինչդեռ ներել, ստվերել, մտրակել *բայերը ներգործական սեռի են և հայցականով ուղիղ խնդիր են պահանջում*։

«Սահուն և կտոր-կտոր ամպերը հաճախ ստվերում էին *նրա* ճառագայթները» *(ՎՓ, 4, 313)*։ *«Նա* ներեց *քո* սխալը»։ «Մտրակեց հետամնացությունը»։

Միջնորդական (պատճառական) խնդրի տրական.— *Հայ քերականագիտության մեջ պատճառական բայերի խնդիրները երկու ձևով են մեկնաբանվել։ Ոմանք պատճառական բոլոր բայերն անխտիր համարել են ներգործական և նրանց լրացումները դիտել ուղիղ խնդիր (հայցականով)։ Ս. Աբրահամյանի «Բայը ժամանակակից հայերենում» աշխատության մեջ հանգամանորեն քննված են պատճառական բայերը, նրանց սեռի սահմաններում շոշափված են նաև խնդրառության հարցերը։ Պատճառական բայերը կազմվում են երկու սկզբնատիպ ձևերից՝ չեզոք և ներգործական։ Չեզոքից կազմված պատճառական բայերի մի մասն ունի բուն ներգործական սեռի արժեք, և նրանց լրացումներն էլ պետք է դիտել ուղիղ խնդիր։ Օրինակ՝* «Նա արագացրեց քայլերը», «Վերջացրեց գործը», «Տաքացրեց ձեռքը», «Բարձրացրեց փայտը» *և այլ նախադասություններում լրացումները հայցականով դրված ուղիղ խնդիր են։*

Սակայն սկզբնատիպ չեզոք բայերից կազմված պատճառականների մի մասը սեռային տեսակետից նույնական չէ բուն ներգործականներին, և նրանց լրացումն էլ ուղիղ խնդիր լինելով՝ ունենում է միջնորդական խնդրի երանգ (օրինակ՝ վազեցնել մեկին*), իսկ սկզբնատիպ ներգործականից կազմված պատճառական բայերը ունենում են առանձին լրացում*[1]*։ Հենց այս լրացումն էլ կոչվում է միջնորդական խնդիր, որը միշտ դրվում է տրական հոլովով*[2]։

Բնորոշ է, որ միջնորդական խնդիրը սովորաբար արտահայտվում է անձի անունով։

«Երբեմն նա կատակով հիշեցնում էր երիտասարդին *Շահանդուխտի անունը» (Մուր., 4, 250)*։ «Կհիշեցնեմ նրան *մեր անցյալը» (Մուր., 4, 258)*։ *«Հովանավոր սրահը և հյուրընկալի*

[1] Ս. Աբրահամյան, *Բայը ժամանակակից հայերենում, Երևան, 1962, էջ 541—563։*

[2] Միջնորդական խնդիր *տերմինն էլ առաջարկվել է Ս. Աբրահամյանի կողմից (տե՛ս նշված աշխատության 555 էջը)։*

քաղցր ընդունելությունը շուտով մոռացրին մեզ *ճանապարհի շոգից կրած մեր նեղությունը»* *(Մուր., 5, 243)*։ *«Բայց ի՞նչ* հասկացնես *բոլի* չորանին» *(ՀԹ, 2, 39)*։ *«Պահպանիչ ասել* տվին քահանաներից մեկին» *(ՆԴ, 1, 39)*։ *«Անցած փառքը* հիշեցնում են հայերին» *(ՀՀ, 92)*։

Պարագայական տրականով կապակցություններ

Նպատակի տրական.— *Բայի այսպիսի լրացումը ցույց է տալիս այն առարկան, որի համար կատարվում է գործողությունը։ Նպատակի տրականը որոշ չափով իմաստային մերձավորություն ունի շահի տրականի հետ, սակայն, ինչպես ասել ենք սկզբում, դրանք տարբեր են։ Բացի նշվածներից, պետք է իմանալ, որ շահի տրականը գլխավորապես անձ է ցույց տալիս, որի օգտին կամ ի վնաս որի կատարվում է գործողությունը, իսկ նպատակի տրականը հիմնականում առարկայացած գործողություն է ցույց տալիս։ Իսկ այն դեպքերում, երբ տրականը գործողության անուն չէ, ապա նպատակի իմաստ արտահայտելիս այն գործողություն է ենթադրում։ Այսպես, երբ ասում ենք* «Նա գնաց հացի», *ապա այստեղ* հացի *տրականը նշանակում է* «հաց բերելու»:

Համեմատաբար քիչ են այն բայերը, որոնք նպատակի տրականով լրացում են ստանում։ Դրանք առաջին հերթին շարժում ցույց տվող մի շարք բայեր են, ինչպես՝ գնալ, գալ, ուղարկել, բերել, ելնել, դուրս գալ, նստել, վազել, *ինչպես նաև նպատակային գործողություն ցույց տվող* հրավիրել, կանչել, պատրաստել (պատրաստվել), հաղորդել, դրդել *և այլն։ Լրացման դերում սովորաբար հանդես են գալիս բայանուններ, բայական հարադրության անվանական բաղադրիչներ, ինչպես նաև այլ գոյականներ։*

«Օրը երկու անգամ պտույտի էին հանում *հանցավորներին»* *(Իս., 3, 105)*։ *«Ուղղակի* գնաց *աստծու մոտ* գանգատի» *(Իս., 3, 438)*։ *«Երազումս մի մաքի Մոտս* եկավ հարցմունքի» *(ՀԹ, 1, 150)*։ *«Մարդ* գնում է առուտուրի» *(ՀԹ, 1, 261)*։ «Պիտի քարշ գար *նրա հետևից* տնօրհնեքի» *(ՆԴ, 1, 166)*։ *«Նա Րաֆֆիին* չէր հրավիրում աշխատակցության» *(Շիրվ., 8, 139)*։ «Եկանք խրախճանքի, գնում ենք արհավիրքի» *(ԴԴՎ, 50)*։ *«Մենք* խաղաղության ենք վազում, *պարսիկը՝* կռվի» *(ԴԴՎ, 97)*։ *«Բոլորը ծիծաղելով* վեր կացան պարի» *(ԴԴՎ, 523)*։

Որոշ կապակցություններում նպատակի և շահի իմաստները համատեղվում են։

«Պրոլետարիատը հանեց Գորկուն, զինվորագրեց իր նպատակներին և պայքարին» (Իս., 4, 191)։ «Վերջը մի ճար գտավ սրան» (ՀԹ, 1, 183)։

Նպատակի տրական անվանական բաղադրիչով կազմված են բազմաթիվ հարադրական բայեր, որոնցից մի քանիսը նույնիսկ կարող են մեկնաբանվել նաև անկախ բայի և լրացման կապակցություն։ Այսպես, անկախ կապակցություն հիշեցնող հարադրական բայեր են դատի ելնել, հացի նստել և այլն։

«Պետության դեմ դատի ելնել» (ՎՓ, 4, 430)։ «Դրսումն էլ իրիկնահացի են նստում» (ՀՄՀԵ, 189)։ «Սրբած թրի դեմ դուրս գալ ճակատի Թշնամին նվազ ախորժակ ունի» (Իս., 2, 216)։ «Գնում են տեսնում մարդիկն իր դրկած— Մեր հայր Օհանը՝ աղոթքի չոքած» (ՀԹ, 1, 266)։

Սակայն շատ հարադրական բայերի բաղադրիչների միջև ազատ կապակցություն փնտրելը դժվար է։ Այդպես են՝ կնության տալ, օգնության հասնել, բանին գնալ, անուրդի հանել, վաճառքի հանել, տեսության գալ, այցի գալ (գնալ) և այլն։

«Օգնության էր հասնում նեղ ընկածներին» (Իս., 3, 503)։ «Անցել է, որդի, քու բանին գնա» (ՀԹ, 2, 105)։ «Մեռած սրտերը կյանքի կոչելու» (ՎՏ, 1, 197)։ «Ու վաճառքի հանեցին հաղթ մկանները իրենց» (Չ, 261)։ «Նա իսկույն տեսության եկավ ինձ» (ՀՄՀԵ, 9)։

«Խոսք տվիր գալու գարնանն ինձ այցի» (Իս., 1, 378)։ «Երբեմն գնում էր հնադարյան ավերակներին այցի» (Իս., 4, 142)։

Ուղևորության տրական.— Բայի լրացումը այս իմաստով ցույց է տալիս այն առարկայացած տեղը, ուր ուղղվում է գործողությունը։ Սա Վ. Առաքելյանի կողմից քննված է ուղղության տրականի հետ և միասին համարված մի ընդհանուր իմաստ[1]։ Սակայն իրականում տարբերություն կա ուղղության և ուղևորության տրականների միջև։ Եթե ուղղության տրականը այն առարկան է, որին ուղղվում է գործողությունը, ապա ուղևորության տրականը այն առարկան է, դեպի որը շարժվում է մի բան։ Այս երկուսի տարբերությունն այն է, որ ուղղության տրականի լրացյալը շարժում ցույց տվող բայ չէ, իսկ ուղղության տրականը միայն շարժում ցույց տվող բայի լրացում է։ Այսպես, «Հայաց-

[1] Վ. Առաքելյան, նշվ. աշխատ., էջ 103—104։

քը ճառել երեսին» և «ձեռքը տանել երեսին» կապակցություններից առաջինում երեսին ուղղության տրական է, իսկ երկրորդում՝ ուղեկցության։

Ուղեկցության տրական պահանջում են շարժում ցույց տվող սակավաթիվ բայեր, ինչպես՝ վերադառնալ, արշավել, նետել, բարձրանալ, վազել և այլն։

«Թող ինձ ծովը նետե ափին, Ափին հեռու, հեռավոր» (Իս., 1, 111)։ «Մի նկարից մյուսին էի շտապում» (Իս., 4, 161)։ «Տեղափոխվում ես վայրկենաբար անցյալի մեջ, հին տեսիլներին» (Իս., 4, 99)։ «Խոշոր փաթիլներն իջնում են սառն հողին» (ԲՀՍՋ, 271)։ «Ու վերադարձավ Արարատներին, Արագածներին իր քառակատար, Իր հող ու ջրին՝ անարատներին, Իր տաճարներին ու պալատներին» (ՊՍԱՋ, 254)։

Պետք է դիտել, որ գնալ, գալ բայերի մոտ ուղեկցության անձի տրականի գործածությունը ժամանակակից արևելահայ գրական լեզվում արդեն հնացած է (իսկ արևմտահայերենը լայնորեն գործածում է այդ ձևը)։

«Ինքը ուղղակի գնաց դպրոցի տեսչին» (ՎՓ, 4, 400)։ «— Հայրիկ, ես չեմ գնա տուն, ամուսնուս» (ԴԴՎ, 57)։ «Սուրհանդակ եկավ ժողովից Վասակին» (ԴԴՎ, 121), «— Անցել է ահագին ճամփա— եկել է Իլյիչին» (Զ, 340)։ «Վռազ-վռազ գլխապատառ վազեց իրեն բագավորին» (ՀԹ, 2, 113)։ «Գնաց Դավիթ ծանոթ պառավին» (ՀԹ, 2, 115)։

Մի շարք կապակցություններում առկա են ուղեկցության և նպատակի իմաստները հավասարապես։

«Ամեն կողմից թող ամենին Հրապուրի ու բերի բազմալեզու խրախճանքին» (ՀԹ, 1, 142)։ «Էդ ձենի վրա գալիս է հրավերքին» (ՀԹ, 1, 142)։ «Իրենց արդար վարձին են գնում ու միշտ ոսկի գտնում» (ՀԹ, 1, 448)։ «Ճակատագիրը մեզ մղում է վտանգավոր մի գործի» (ԴԴՎ, 206)։

Ուղեկցության իմաստի համար հայցականի՝ հիմնական ձև դառնալը մի կողմից, դեպի, մոտ կապերի գործածությունը, մյուս կողմից, արդեն համարյա դուրս են մղում ուղեկցության տրականը։ Այս պատճառով էլ տրականի՝ ուղեկցության իմաստով գործածությունը մի շարք դեպքերում արդեն սխալ է. դրա փոխարեն պետք է լինի կա՛մ հայցական, կա՛մ հիշյալ կապերն ու կապի խնդիրները։ Ընդունելի չեն հետևյալ կապակցությունները։ «Ինքն էլ մտավ նրա կողքին» (ՆԴ, 1, 92)։ «Մեր տանը հարս են ուղարկում» (Ր, 2, 130)։ «Եվ մի անգամ գոնե մտքիս չբերեցի

իմ հայրենիքը» (Ր, 2, 405)։ «Նամակները ծվատելով, պատառելով լափում էր, կողքին նետում» (ՎՓ, 3, 648)։

Ուղևորության տրականով են կազմված մի շարք դարձվածքներ, ինչպես՝ կրակ բերել գլխին, ձյուն բերել մեկի գլխին, ոտքը քարի գալ, մեկին կամ մի բանի գալ (հարմարվել), փորձանք բերել գլխին, ուղիղ ճանապարհի բերել, ուղիղ ճանապարհի գալ և այլն։ Օրինակներ՝ «Ինչ ձյուն պիտի բերեր յուր խեղճ հոր գլխին» (Մուր., 4, 39)։ «Եվ մարմնին ախորժ թմբիր էր գալիս» (ՀԹ, 2, 23)։ «Սա էլ անպատճառ Մեր գլխին մի նոր կրակ է բերում» (ՀԹ, 2, 23)։ «Ոտքդ քարի թող չգա» (Իս., 2, 142)։ «Հյուսիսի ցուրտ կլիման չէր եկել խեղճ աղջկան» (Իս., 3, 97)։ «Գլխիս էս ի՞նչ փորձանք բերավ» (ՀԹ, 1, 161)։ «Ինքն անգիտակցաբար ուղիղ ճանապարհի է բերում մի մոլորված մարդու» (Շիրվ., 3, 420)։ «Այլևս ոչինչ աչքին չէր գալիս» (ՎՓ, 4, 520)։

Տեղի տրական.— Բայի լրացումը այս դեպքում ցույց է տալիս գործողության կատարման, եղելության տեղը։ Իմաստային տեսակետից տեղի տրականը որոշ դեպքերում նույնական է ներգոյականին։ Վ. Առաքելյանը քննել է այդ հոլովների հարաբերակցության մի շարք կողմեր[1]։

Տրական լրացումը ցույց է տալիս հիմնականում գործողության արտաքին, մակերեսային տեղ, որը հակադրվում է ներգոյականին, իբրև պարունակություն-տեղի հոլովաձևի։ Այսպես, երբ ասում ենք «Նստել մեկի գլխին» և« Այդ բանը նստեց նրա գլխում», ապա գլխին ձևը արտաքին, մակերեսային տեղն է ցույց տալիս, իսկ գլխում ձևը՝ պարունակություն-տեղը։ Այս ձևով հակադրվում են ծառին–ծառում, կողքին–կողքում, ափին–ափում, (ձեռքի ափ իմաստով), ականջին–ականջում (քնել ուղտի ականջում դարձվածքը), փորին–փորում, սրտին–սրտում, պատին–պատում, լեռներին–լեռներում, գետնին–գետնում, ամանին–ամանում, բաժակին–բաժակում, քթին–քթում, ոտքին–ոտքում, քարին–քարում և այլն։

Կան դեպքեր էլ, երբ տրականն ու ներգոյականը իմաստային տարբերություն չունեն։ Այդպես են՝ ծայրին–ծայրում, լանջին–լանջում, սարին–սարում, շեմքին–շեմքում և այլն։ Սրանց գործածությունը պայմանավորված է լեզվաոճական տարբեր հանգամանքներով։ Երբեմն նույն հեղինակը գործածում է և՛ մեկ և՛ մյուս ձևերը՝ պայմանավորված երկի բնույթով։ Այսպես, Հ.

[1] Վ. Առաքելյան, նշվ. աշխատ., էջ 112—115։

Թումանյանը շատ դեպքերում գործածել է լանջին ձևը։ Օրինակներ՝ «Սարի լանջին, ժայռի տակ, Ջուր էր բխում սառնորակ» (ՀԹ, 1, 71)։ «Դու սարի լանջին խաղեր ես կանչում» (ՀԹ, 2, 49)։ Սակայն հանգավորման նպատակով երբեմն գործածում է լանջում ձևը։ Օրինակ՝ «Անցել են, ոնց որ ծաղկունքը պես-պես, Որ անցած գարնան կային ձեր լանջում. Անցել՝ ձեր գլխի հերվան ձյունի պես, Բայց եկել եմ ես՝ նրանց եմ կանչում» (ՀԹ, 2, 45)։ Այսպես նաև՝ «Նա նստել էր տան շեմքին»։ Եվ՝ «Ուստա կատվի շեմքում կանգնեց» (ՀԹ, 1, 196)։ «Հորեղբոր շեմքում մյուս օր ծեգին Դավիթը կանգնեց աղեղը ձեռքին» (ՀԹ, 2, 105)։

Սակայն կան բազմաթիվ դեպքեր, երբ տվյալ բառի միայն տրականն է գործածվում։ Այդ դեպքերում տրականն արտահայտում է և՛ արտաքին, մակերեսային, և՛ ներքին, պարունակության-տեղի իմաստներ։ Այսպես են՝ դուռ-դռան(ը), կտուր-կտերը (կտրանը), պարան-պարանին, թոռ-թոռին, կամուրջ-կամուրջին, շալակ-շալակին, ուս-ուսին, տուն-տանը, կատար-կատարին, գագաթ-գագաթին և այլն։

Իհարկե կան դեպքեր էլ, երբ տվյալ բառի ներգոյականը գործածվում է նաև տրականի իմաստով, իսկ տրականն առհասարակ տեղի նշանակությամբ չի գործածվում։ Այսպես են գետ-գետում, ծով-ծովում, լիճ-լճում, սենյակ-սենյակում, դահլիճ-դահլիճում, սրահ-սրահում, փոս-փոսում, հոր-հորում, օդ-օդում, և բազմաթիվ այլ բառեր, որոնք պարունակություն-տեղ նշող գոյական են և մակերեսային տեղ չեն ենթադրում։

Տեղի տրականով լրացում պահանջում են առաջին հերթին դադարման (ուղղություն ցույց չտվող) բայերը, ինչպես՝ ծառայել, գտնվել, ունենալ, հսկել, նստել, կանգնել, հավաքել, կանչել, աշխատել, տեսնել, արածել, ոռնալ և այլն։ Լրացում կարող են դառնալ արտաքին տեղ (մակերես, կլորություն, ծայր) ցույց տվող մի շարք գոյականներ, ինչպես՝ գագաթ, ծայր, ձեռք. քար, գլուխ, ճակատ, ափ, կամուրջ, լանջ, ծառ, բառ, ինչպես և ներգործական հոլովաձև չունեցող տուն, կտուր, դուռ, առաջ և այլն։

«Վերջապես Սեպուհը նստեց յուր մահճակալի ծայրին» (Մուր., 4, 105)։ «Ամրոցի բանալիները գտնվում էին նրա ձեռքին» (Մուր., 4, 20)։ «Ծառայում էին դարձյալ փոստատանը» (Մուր., 5, 296)։ «Ձունի երեսին մի գիծ կենդանի» (ՀԹ, 2, 25)։ «Ով յուր դռանը անասուն ունի» (ՀԹ, 2, 33)։ «Կաները կանթած՝ կտերը կանգնած» (ՀԹ, 2, 38)։ «Փերիները սարի գլխին Հավաք-

վեցին գիշերով» (ՀԹ, 2, 43)։ «Գետի եզերին շրջում է մոլոր» (ՀԹ, 2, 67)։ «Ոսկին Կոզբադին ձեր տանն է չափում» (ՀԹ, 2, 110)։ «Սև-մութ ամպեր ճակտից դիզվան» (Իս., 1, 101)։ «Արագի ափին բոստանս լինի» (Իս., 1, 164)։ «Մի մրահոն աղջիկ տեսա Ռիալտոյի կամուրջին» (Իս., 1, 322)։ «Զարնեց մթնում ծխող ծառին» (ՀԹ, 1, 163)։

Մի շարք դեպքերում տրականը գործածվում է ներգոյականի փոխարեն։ Դա վերաբերում է առաջին հերթին այն բառերին, որոնք ներգոյական չունեն։

Սակայն պատահում են դեպքեր, երբ ներգոյականի փոխարեն տրականով են գործածվում այն բառերը, որոնք ներգոյական ունեն։ Դա լինում է իբրև բացառություն գեղարվեստական խոսքի մեջ, չափածո ստեղծագործություններում՝ հանգավորման կամ չափի պահանջով։

«Ինչքան ծաղիկ պիտի բուսներ, որ չբուսավ էս հողին... Ինչ պատասխան պիտի ես տամ հող ու ծաղիկ տվողին» (ՀԹ, 1, 157)։ «Եկել, մեր դաշտին բանակ է զարկել» (ՀԹ, 2, 114)։

Այսպիսի օրինակներ խիստ հազվադեպ կան նաև արձակ ստեղծագործություններում և հնչում են օտարոտի։

«Մեր թագավորի որդին՝ Վաչագանը, քեզ տեսել է աղբյուրին» (ՂԱ, 116)։ «Պատահում էր, որ կովը հանդին էր ծնում» (Բակ., 32)։ «Մի՞թե այս կողմերին ուրիշ ճանապարհ չկա» (ՍխՄխ, 476)։

Տեղի տրականը ներգոյականի փոխարեն օգտագործվելիս միշտ էլ որոշյալ առումով է դրվում։ Այդ պատճառով էլ օրինաչափ չէ աշխարհի ձևի գործածությունը ներգոյականի փոխարեն «Ինչ դարդ ունեմ, քանի նա կա աշխարհի» (ՀԹ, 2, 52) նախադասության մեջ։ Սա գրաբարի ի նախդիրից և տրականից կազմված յաշխարհի ձևի արտացոլումն է, որը հեղինակը գործածել է հանգավորման նպատակով (նախորդ տողն է՝ «Բեղը ծիլ-ծիլ, բոյը թիլ-թիլ էն յարի»)։

Տեղի տրականը երբեմն գործածվում է տեղի հայցականի փոխարեն։ Սակայն սա ևս ժամանակակից հայերենի ոգուն հարազատ չէ, թեև գեղարվեստական երկում այդ խոտորումը հաճախ չի զգացվում։

«Վեր է կենում, խեղճ փիսիկին Դնում տակին» (ՀԹ, 1, 259)։ «Գլխարկը դրեց կռնատակին» (Զ, 489)։ «Պայուսակն ուսին առավ» (ՎՓ, 4, 426)։

Ճիշտ չէ նաև տեղի տրականի գործածությունը վրա կապի և

նրա խնդրի փոխարեն։ Օրինակ՝ «Այժմ նրանք ակամա ցավակցում էին ավանակին կուշ եկած այդ մարդուն» (ՁԴԱՎ, 109)։

Կան մի շարք կապակցություններ, որոնցում լրացումը կարող է մեկնաբանվել և՛ իբրև ներգոյականի իմաստով տրական, և՛ իբրև շահի տրական։ Այս դեպքում ոչ թե նույն ձևը համատեղում է երկու իմաստները, այլ կապակցությունն այնպիսին է, որ լրացումը տարբեր իմաստներ արտահայտելու հնարավորություն ունի՝ լրացյալի կապակցելիության առանձնահատկության շնորհիվ։

«Լույսը բացվեց մեր աշխարհքին» (ՀԹ, 1, 207)։ «Հովիտներին թողած ամեն տագնապ ու հուշ՝ Տար լեռների հովին կարոտներդ անուշ» (Չ, 24)։ «Որ կյանքը հին ու անամեջ Ողջակիզեն կրակին» (Չ, 247)։ «Վառվելով լույս ես անում մարդկության ճանապարհին» (ՀԱՀԵՄ, 90)։

Մի շարք կապակցություններում տրականով լրացումը կարող է արտահայտել և՛ տեղի, և՛ ուղղության իմաստներ։

«Շտապեց վերցնել և ձգել նրա ուսերին պերճ սամույրենին» (Մուր., 4, 15)։ «Կռանալով էն քարին Ձեն է տալիս Մարոյին» (ՀԹ, 2, 12)։ «Գրբաց Գրիգորը գդակը քաշեց աչքերին» (ՆԴ, 1, 25)։ «Սեղանին հակված տիկինը գրել էր» (ՍԽՄԽ, 483)։

Որոշ կապակցություններում էլ առկա է տեղի, հանգման իմաստների համատեղում։

«Ինչպես այդ հանդեսին երդվող իշխանները դավաճանում են նրան» (Մուր., 4, 63)։ «Սիրահարների զրույցը դեռ հնչում էր նրա ականջին» (Մուր., 4, 256)։ «Ներկա եղա սիրեկանիս պսակին» (Իս., 1, 167)։ «Շաչեցեք գլխիս, ամեհի հողմեր, Դուք, մրրիկներ, պայթեցեք գլխիս» (Իս., 2, 63)։ «Հենց նախարարները երևացին ճամբարին՝ զորքերն ու ժողովուրդը թափվեցին եկան» (ԴԴՎ, 639)։ «Ամրացած հնավանդ իր բնին՝ բարձրացել էր բարդին այն քուրյան» (Չ, 464)։

Երբեմն կարող են համատեղվել տեղի և ժամանակի իմաստները երազ, խնջույք, կալ և նման բառերի տրականի մեջ։

«Այն եղնիկն էլ երազին Մարալի ձայնն է լսել» (Իս., 1, 127)։ «Մեր խնջույքներին երգում էր նա» (Իս., 4, 44)։ «Օտար երկնքի կամարների տակ երազիս տեսա մի չքնաղ աղջիկ» (ՎՏ, 1, 67)։ «Կալին կալսածը հեշտ կլիներ քամուն տալ» (Բակ., 51)։

Դարձվածքային բնույթի (դուռը) փակել (մեկի) երեսին,— քթին, ծիծաղել երեսին, խնդալ քթին և նման կապակցություններում առկա են տեղի, հանգման և ձևի իմաստները։ Օրինակ՝

«Շտապեց դուռը նորից փակել մի քանի կանանց երեսին» (ՆԴ, 1, 15)։ «Վարդերի հետ խաղում ես, Երեսիս ծիծաղում ես» (ՀՀ. 146)։ «Անդունդից ելնում, դեմքիս ծիծաղում, խուլ շառաչում են, լարում են թակարդ» (ՎՏ, 1, 60)։

Տեղի տրականով կազմված մի շարք կապակցություններ վերածվել են դարձվածքի, ինչպես՝ խելքին նստել, գլխին կիտվել, գլխին փորձանք դառնալ և այլն։

«Այդ նկատողությունն այն ժամանակ խելքիս նստեց» (Իս., 4, 156)։ «Ազգի գլխին դարձել է ցավ» (ՀԹ, 1, 183)։ «Ու գալիս են չարչու գլխին կիտվում պանդուխտ, գերի հայեր» (ՀԹ, 1, 276)։ «Գալիս եք մարդի գլխին խարա դառնում» (ՀԹ, 1, 316)։

Ժամանակի տրական.— Ցույց է տալիս գործողության, եղելության ժամանակը։ Այսպիսի լրացում ստացող բայերի սահմանափակում չկա։ Այս տրականը մի շարք դեպքերում համարժեք է նույնիմաստ հայցականին, երբեմն էլ ներգոյականին, թեև արդի հայերենում ժամանակային իմաստն ավելի շատ տրականի հետ է կապվում։ Վ. Առաքելյանի նշված աշխատության մեջ մանրամասնորեն քննված է տրականի և այլ հոլովաձևերի հարաբերության հարցը՝ մասնավորապես ժամանակի իմաստի արտահայտման տեսակետից։

Ավելի շատ են այն բառերը, որոնց տրականը ժամանակի իմաստի համար նախընտրելի է այլ հոլովաձևերից, կամ որոնք այլ հոլովաձևերով ժամանակի իմաստ չեն արտահայտում։

Պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ տրականը ժամանակային իմաստ արտահայտում է միայնակ, առանց լրացման, մինչդեռ հայցականը, ներգոյականը ավելի շատ որևէ լրացումով են ժամանակի պարագայի դերն ստանձնում։ Օրինակ՝ «Կեսօրին հասա գյուղ» և «Նույն օրը հասա գյուղ», «Հաջորդ տարում (կամ տարին) ավարտեց դպրոցը» նախադասություններում ակնհայտ է այդ երևույթը։

Լրացում դառնում են առաջին հերթին ժամանակ ցույց տվող մի շարք բառեր, ինչպես՝ ամառ, գարուն, աշուն, ձմեռ, ժամ, վայրկյան, րոպե, լուսաբաց, լուսադեմ, արևածագ, արևամուտ, այգաբաց, ձմեռնամուտ, աշնանամուտ, իրիկնաժամ, կեսօր և այլն, ինչպես և ամիսների անունները, օրաթվերը, ժամերը։ Ընդ որում պետք է նշել, որ ժամանակի տրականը երբեմն որևէ լրացմամբ հանդերձ է կատարում նախադասության մեկ անդամի պաշտոն, ինչպես՝ այս ժամին, հաջորդ աշնանը, այդ վայրկյանին, նույն օրերին և այլն։

«*Նա նույն* ամառը *զբոսանքներ* պատրաստեց *քեզ համար*» (*Մուր.*, 4, 91)։ «*Որ* անցած գարնան կային *ձեր լանջում*» (ՀԹ. 2, 45)։ «Լուսին *իշխաններ* եկան *միասին*» (ՀԹ, 2, 101)։ «*Վառ արևի շողքը* խաղաց Լուսադեմին *իմ ճակատին*» (Իս., 1. 84)։ «Ամեն գարնան գալիս էր *ու* ամեն աշնան գնում» (Իս., 3, 328)։ «Իրիկնաժամին նստում եմ *մենակ*» (ՎՏ, 1, 77)։ «Իրիկնամուտին մենք *մի գյուղ* մտանք» (Զ, 223)։ «Նիրհում է *Ղարսը խաղաղ* ամառնամուտին» (Զ, 418)։ «Գիշերային այդ տագնապալի պահին *երկու ձիավորներ* անցնում էին *Մուշի դաշտով*» (Ր, 7, 17)։ «Մի կեսօրի. *հանկարծ, լուր* տարածվեց *շուկայում*» (ՎԽԳՎ, 317)։

Ժամանակային իմաստ կարող են ունենալ բնության երևույթ արտահայտող մի շարք գոյականներ, ինչպես՝ շոգ, ցուրտ, տապ. ձյուն, անձրև, մառախուղ. արև, եղանակ (պարզ եղանակ, խոնավ եղանակ *և այլն*), ձնհալ *և այլն*։

«*Կանգնած է դեռ ու* շոգին *Հով* է տալիս մշակին» (ՀԹ, 2. 8)։ «*Մի քիչ* տաքանար այս անպիտան ցուրտ եղանակին» (ՆԴ, 1, 47)։ «Անձրև եղանակին *ստիպված* մնում էր *վրանի ներսը*» (ՍՉ, 4, 9)։

Ժամանակի տրականով կարող են գործածվել նաև ժամանակի այս կամ այն հատվածում կատարվող աշխատանքների, գործողության անունները, ինչպես՝ հանդես, ծես, վերադարձ, հանդիպում, արձակուրդ, գարնանացան, բերքահավաք, կալ, աշնանացան, այգեբաց, այգեքաղ, ցրտահերկ, հարսանիք, նշանդրեք, քեֆ, խնջույք *և այլն*։

«*Հայրն էլ եկավ ու* ծեսին *էսպես* օրհնեց *իր փեսին*» (ՀԹ, 2, 10)։ «*Տոների* արձակուրդին վերադարձա *մեր գյուղը*» (ՀԹ, 1, 411)։ «*Պառկած են նրանք, որ* ընկան *Առաջին* գրոհին» (Զ, 375)։ «*Ամեն մի* քայլափոխի նայում էի *ճանապարհին*» (Բակ., 323)։ «*Այդ երեկո* պատարագին օգնում էր *նրան ժամաշապիկ հագած*» (ՆԴ, 1, 166)։

Ընթացք *բառի տրականը արևելահայ գրական լեզվում չի գործածվում ժամանակի իմաստով*[1]։ *Այս պատճառով էլ այժմ անընդունելի են այդպիսի գործածություն պարունակող կապակցությունները*։

«*Թափառումներիս* ընթացքին հյուր եղա *Վահանենց ընտանիքի մոտ*» (Իս., 4, 147)։ «*Տարիների* ընթացքին *բնավ մի վայր-*

[1] *Արևմտահայերենում դա սովորական կիրառություն է*։

կյան իսկ չեղավ, որ մեր հոգիները իրարուց դժգոհ լինեին» (Իս., 3, 71)։

Ընդունելի չէ նաև երեկոյին *ձևի գործածությունը՝ ժամանակի իմաստով։*

«Ուշ երեկոյին հասնում եմ Վենետիկ» *(Իս., 4, 7)։ «Այս էլ կտանես հետդ ման կածես,* երեկոյին *էլի ետ* կբերես» *(ԴԱ, 222)։*

Բոլորովին մերժելի է երեկոյաններր *ձևը. «Գոնե* երեկոյանները *շաբաթը մեկ անգամ, մի ամբողջ օր* գտնում է *մոռանալու միջոցը» (ՎՓ, 4, 613)։*

Ություն *վերջածանցով գոյականների տրականը ևս ժամանակի իմաստով չի գործածվում։ Ուստի հնացած են հետևյալ կապակցությունները։*

«Նրա բացակայությանը *մենք* էինք կառավարում *խանութը» (Իս., 3, 122)։ «Վարդանը չէր կամենում* խոսել *այդ մասին բոլոր նախարարների* ներկայության» *(ԴԴՎ, 139)։*

Որոշ կապակցություններում տրականը կարող է համատեղել ժամանակի և նպատակի իմաստները։

«Բա ս. Գևորգի համար ետ դրած մատաղացուն մեռելի ճելեխին մորթելը *հանաք բան եք կարծո՞ւմ» (ՆԴ, 1, 16)։ «Թախանձեց օրիորդին* մնալ ճաշին» *(Շիրվ., 3, 337)։*

Իսկ «Փառք ձեր անունին, որ այս ահարկու Գիշերին բերիք *նոր լույսի համբավ» (ՎՏ, 2, 140) նախադասության մեջ տրականը կարելի է մեկնաբանել ժամանակի կամ շահի իմաստներով։*

Կարող են համատեղվել նաև ժամանակի և հանգման իմաստները։

«Ինչպես է դիմանում *փետրվարի այս* ցրտերին, *մանավանդ գիշերները» (ՍԶ, 8, 400)։ «Ձեր մրցությունը* կթողնենք վաղվան» *(ԴԱ, 394)։*

Երբեմն ժամանակի տրականը գործածվում է հայցականի փոխարեն։

«Սոսինները կսոսափեն *լուռ ու անդորր* գիշերին» *(Իս., 1, 86)։ «Էլի* հուսանք *ու* երազենք *էս մութ* օրին*—լույս արև» (Ս, 206)։*

Ձևի տրական.— *Բայի լրացումը հոլովական այս իմաստով ցույց է տալիս գործողության, եղելության ձևը։ Սակավաթիվ բառեր են դառնում ձևի տրական։ Եղածներն էլ ծագել են այլ իմաստի տրականներից։ Այսպիսի կապակցություններից կա-*

ընկի է նշել երեսին ընկնել, մեջքի պառկել, ձեռքերին ընկնել, քթի տակին փնթփնթալ, օրհացի աշխատել *և այլն*։

«*Ես* պառկել էի մեջքիս, *գլուխս ձեռներիս վրա դրած*» (*Իս., 3, 150*)։ «*Իրեն սիրտ տալու համար սկսում է* քթի տակին մռմռալ» (*ՀԹ, 1, 497*)։ «*Հյուսիքաթի ձորում, Միջին մահլայում և Գյունեյ թաղում մնացին հացթուխներ, գզրար կանայք, սրա-նրա դռանը* օրհացի աշխատող *աղջիկներ և մանուկներ*» (*Բակ., 292*)։

Ձևի իմաստ ունեն նույն բառերի հայցական-տրական դարձվածքային կապակցությունները՝ բայի լրացման դերում, ինչպես՝ աշխատել օրը օրին, առաջ գնալ ձեռք ձեռքի, կանգնել մեջք մեջքի, թև թևի քայլել *և այլն*։ «*Բայց* ձեռք ձեռքի՝ հառաջ գնանք *միասին*» (*ՀՀ, 1, 49*)։ «Առաջ է գնում *տղեն* օրն օրին» (*ՀԹ, 1, 250*)։ «Սովորանում են օրը օրին» (*Չ, 390*)։ «Բազուկ բազկի օգնենք *միմյանց*» (*ՍԽՄԽ, 251*)։ «*Սարսափը հեզնելով* կանգնել, *Հողմի դեմ* ճակատ ճակատի» (*ՀՍՀԵՄ, 52*)։ «Թև թևի բռնած *Ձուզում են չեռներ*» (*ՀԹ, 2, 52*)։

Ձևի տրականով կազմված որոշ կապակցություններ դարձվածքի են վերածվել, ինչպես՝ զոռի կանգնել, խելք խելքի տալ *և այլն*։

Ձևի տրականն ու լրացյալը կարող են վերածվել հարադրական բայի, ինչպես՝ բանին մնալ (բանին կենալ), գործին մնալ *և այլն*։

Վիճակի տրական.— *Լրացումը ցույց է տալիս ենթակայի կամ գործողության առարկայի (խնդրի) վիճակը գործողության ընթացքում։ Ըստ այսմ էլ վիճակի տրականը երկու ենթատեսակ ունի. ա) բուն վիճակի տրական, բ) խնդրային վիճակի տրական։*

Երկու դեպքերում էլ վիճակի տրականը արտահայտության նույն ձևն ունի, այն է՝ կրճատված դերբայական դարձված է, որի մեջ տրականը ենթադրյալ դերբայի լրացումն է եղել, սակայն նրա զեղչումով առանձնել է վիճակի պարագայի պաշտոնը։ Այսպես, երբ ասում ենք «Ու ձորի գլխին, ձեռքը ճակատին, Կանչում է, կանչում *անահ պալակին*» (*ՀԹ, 2, 42*), *ապա այստեղ* ձեռքը ճակատին, *կապակցությունն ստացվել է* ձեռքը ճակատին դրած *դերբայական դարձվածից՝* դրած-*ի զեղչումով, որի պաշտոնը հատկացվել է* ճակատին *ձևին*։

Այս ձևի համար բնորոշ է ուղղականաձև հայցականի առկայությունը՝ զենքը ձեռքին, գլխարկը գլխին, աչքը ճամփին, թասը գլխին, արտասունքն աչքին *և այլն*։ *Վիճակի տրականը մեծ մասամբ հանդես է գալիս լրացյալից տրոհված*։

Ա. Բուն վիճակի տրականով կապակցություններ.— *Սրանք շատ են գործածվում։* «*Մոսին*՝ *փայլկոտուն* խանչալը ձեռին՝ Ուզում էր մորթել *նրան*՝ *աչքը բաց*» (*ՀԹ, 2, 57*)։ «*Ճամփից վերջում* կանգնած է *դեռ Անուշ* ծիծաղն աչքերին» (*ՀԹ, 2, 68*)։ «*Մի* բարդի ուսին գալիս է *ահա*» (*ՀԹ, 2, 118*)։ «*Մի մարդ* էր փախչում հոգին բերանին» (*Իս., 2, 210*)։

Բ. Անդրային վիճակի տրականով կապակցություններ.— *Սրանք գործածությամբ ևս չեն մնում նախորդներից։* «*Որը կինն* է թողել *էնտեղ* Աչքը ճամփին, *խեղճ ու կրակ*» (*ՀԹ, 2, 119*)։ «*Եթե ճանապարհին* տեսներ *մեկին գողացած* փայտը շալակին, *Պանինի շները պիտի հարձակվեին նրա վրա*» (*Բակ., 4*)։ «*Ամենածանր պահերին էլ* տեսնում եմ *նրան*՝ ժպիտը դեմքին *և* կատակը շուրթերին» (*ՀՄՀԵ, 28*)։

Հիմունքի և պատճառի տրական.— *Տրականը այս իմաստով սահմանափակ գործածություն ունի։ Եղածներն էլ այլ իմաստ ունեցող տրականի փոխաբերական կիրառությունից են առաջացել։ Այսպես,* գալ (*մեկի*) հրավերին *կապակցության մեջ* հրավերին *հիմունքի կամ պատճառի տրական է, սակայն արտաքուստ այն ուղղության տրական է հիշեցնում։ Լրացում դառնում են* ձայն, կանչ, հրավեր, հրաման, կարգադրություն *և այլ բառեր։ Այսպիսի լրացում ստանում են շարժում ցույց տվող* գալ, գնալ, վազել, դուրս հանել, վեր կենալ *և այլ բայեր։*

«*Ուր էլ լինեմ*՝ պիտի գամ *իմ* կոչին» (*Մուր., 4, 147*)։ «Շտապեց վազել *իր տիրոջ* ձայնին» (*ՎՓ, 4, 156*)։ «*Ու էն* երգին *օրոր-շորոր, ինչպես հուրի, տոլաս ու խաս, Երազիս մեջ գուզալն* եկավ» (*Զ, 45*)։ «*Եվ ահա այդ ահեղ* կանչին *Շիրակի դաշտերից-հանկարծ— Զրահապատը խանդով առաջին Նաիրի դաշտերում* զնգաց» (*Զ, 299*)։ «*Շների* ձայնին *մի քանի հոգի* դուրս եկան *վրաններից*» (*Բակ., 191*)։ «*Դռան* ձայնին *Դիլանը գլուխը* դուրս հանեց» (*Բակ., 229*)։ «*Իմ* հրավերին չեկավ» (*ՍԽՄԽ, 129*)։

Չափի (արժեքի) տրական.— *Լրացումը ցույց է տալիս գործողության չափը, արժեքը։ Իբրև լրացյալ հանդես են գալիս հիմնականում առքի-վաճառքի գործողություն ցույց տվող, ինչպես և այլ սահմանափակ թվով բայեր, ինչպես՝* առնել, վաճառել, ծախել, գնել, աշխատել, պարապել, վաստակել *և այլն։ Լրացում դարձող գոյականները սովորաբար չափի միավոր բառեր են, որոնք որևէ թվական լրացմամբ են հանդես գալիս իրենց այդ դերում։*

«*Աշխարքը իրան վրա ծախեն*, մեկ կոպեկի չի առնի» (*Իս.,*

3, 143)։ «Տվեք հինգ ռուբլի, կպարապենք ճինգ ռուբլու» *(ՍՋ, 3, 272)։ «Թէ* ճանիսի․ եմ գնվել *ես, այդ էլ չգիտեմ» (ԴՄԼՉ, 232)։ «Տունը* վաճառվում է *հազար* ռուբլու»։

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՅԻ ՏՐԱԿԱՆՈՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ժամանակակից հայերենում կան որոշ բայեր, որոնց լրացումները դրվում են ինչպես տրական, այնպես էլ այլ հոլովներով կամ կապերի միջոցով, ընդ որում տրականը հնացած և արդեն ոչ հարազատ է դարձել։ Այդ բայերից են՝ զմայլել (զմայլվել), բռնվել, ստիպել, գրկախառնվել, ծիծաղել *և այլն։*

«Զմայլեցա ալ վարդին» *(ՀՀ, 101)։ «Նայում էր Մարկոյին անվերջ, Եվ ինչ-որ* բանի ծիծաղում էր» *(Գորկի, Զ, 597)։ «Կամ* ամքնուրյա՞նս եմ *ցավում, փշերվա լռակյաց ուղեկցին իմ» (Պուշկին, Զ, 586)։ «Մի քանի անգամ գործարանատերը, երկու պարոնների հետ* խոսակցության բռնված՝ *ծանրաքայլ անցել էր նրանց կողքից» (ՎՓ, 4, 587)։ «Ժողովրդի մի մասը կոտորեցին, մի* մասն ուրացության ստիպեցին» *(Մուր., 4, 70)։ «Հազիվ փշերվա մեջ հանգչում էր նա մի փոքր և վաղ առավոտվանից նորեն* գործի սկսում» *(Մուր., 4, 401)։ «Եվ օրհներգում եմ, և* գրկախառնվում *Մեծ և անսահման* բնությանն *հավերժ» (Իս., 1, 245)։*

2. Կան դեպքեր, երբ տրականով լրացումը չի բխում լրացյալ բայի խնդրառական բնույթից. այն բացահայտ սխալ է և հեղինակի կողմից գործածված կամ չափածոյի հանգավորման, կամ այլ նպատակով։

«Մտաբերեցի և «Եդեմ» այգին, Եվ համբույրները տարփոտ գգվանքում, Երբ ճռաճռում էր *կուրծքս քո* կրծքին» *(ՎՏ, 2, 122)։ «Այս մարդիկ իրենց գործակցության միակ պայմանը* դնում էին *հույների* օգնությանը» *(ԴԴՎ, 548)։ «Հայրդ* ճայրենիին լցվեց» *(ԴԴՎ, 599)։ «Էս հարուստը մի չլված պայման* է դնում ծառային» *(ՀԹ, 1, 450)։*

3. Ժամանակակից հայերենում ունենալ, *հազվադեպ և այլ բայերի մոտ, երբեմն դնում են ենթակայական տրական, որը, Վ. Առաքելյանի ճիշտ դիտողությամբ,* ես ունեմ *և* ինձ կա *կառուցվածքների բաղարկության (կոնտամինացիա) արդյունք լինելով սխալ է։*

Սակայն չի կարելի համաձայնել Վ. Առաքելյանի կողմից

դա ստացական տրականի արտահայտություն համարելու հետ[1]: Ենթակայական տրականը բարբառային ծագում ունի և գրական լեզու է թափանցում այնտեղից։ Դա երբեմն հանդիպում է անցյալի գրողների երկերում։

«Պապի, մեզ ունենք շատ նետ ու աղեղ» (ՂԱ, 391)։ «Բա նրանց տուն չունե՞ն, տեղ չունե՞ն» (ՂԱ, 431)։ «Հրեն այ, տերությանը աշխարքի չափ հող ունի» (ՎՓ, 4, 434)։ «Մեկին մեր գյուղում մի թիզ հող ունի» (ՀԹ, 2, 38)։ «Ձենով Օհանին ունեւ մի չար կին» (ՀԹ, 2, 100)։ «Մեզ մեռել չունենք» (ՎԽԳՀ, 118)։

4. Երբեմն բայի իմաստից բխող տրականը գործածվում է ոչ տվյալ բային բնորոշ լրացման իմաստով, այլ ուրիշ նշանակությամբ, որը պայմանավորված է չափածո խոսքի որոշ առանձնահատկություններով։ Այսպես, երդում տալ մեկին կապակցության մեջ մեկին լրացումը հաղորդման կամ հանդման իմաստ ունի. դա նրա սովորական իմաստն է։

Սակայն Հ. Թումանյանը գործ է ածել միջնորդական խնդրի իմաստով. «Դու քու եսիրին երդո՞ւմ ես տալիս» (ՀԹ, 2, 58): Այստեղ եսիրին տրականը միջնորդական խնդիր է, որը բնորոշ կլիներ երդվեցնել բային (երդվեցնել եսիրին): Հավանաբար երդում տալ գործածված է գրաբարյան նշանակությամբ (գրաբարում տալ զերդումն=երդվեցնել):

5. Երբեմն բայը կարող է ստանալ նույնիմաստ երկու լրացում (ոչ բազմակի), որոնցից մեկը հակված է բայի հետ համադրություն կազմելու։ Այսպես, կանչել բայն ունի նպատակի տրականով լրացում (օգնության), սակայն ստանում է նաև բռնելու լրացումը հետևյալ նախադասության մեջ. «Նա սկսեցի գոռալ, հարևաններիս օգնության կանչել չարագործներին բռնելու» (Շիրվ., 8, 485)։

Նույն բայի նպատակի և շահի տրականով լրացումները քերականագիտության մեջ անվանվել են կրկնակի տրական։ Վ. Առաքելյանը կրկնակի տրական է համարում նաև տարբեր իմաստ ունեցող տրականների գործածությունը նույն նախադասության մեջ, որը ոճաբանորեն մերժելի է համարում՝ բերելով այսպիսի օրինակներ. «Արժանացել էին նախարարի անվանին մասնակից լինելուն», «Օրենք չէր կանանց՝ մարդկանց այցելության գնալ», «Հրամայել էր կանանց օտար տղամարդկանց չերեվալ»։ Սակայն այս նախադասություններում նույն բայի լրացում չեն երկու տրականները, այլ մեկը ստորոգյալի, մյուսը՝ դերբայի։ Այսպես են նաև հետևյալ օրինակները. «Թագավորը

[1] Վ. Առաքելյան, նշվ. աշխատ., 101—103։

այցի ելավ իր հարկատու, գահին հլու զավառներին, քաղաքներին» (Իս., 2, 236)։ «Ճամփին ծռեց, ջահել այրուն գիշերելու նա գնաց» (Լերմոնտով, Ծ, 387)։

6. Կան դեպքեր, երբ տրականի լրացյալը զեղչված է։ Լրացյալի զեղչումը սովորական երևույթ է հայերենում։ Զեղչված լրացյալով կապակցությունների մի տեսակը քննել ենք վիճակի տրականի բաժնում (տե՛ս էջ 243—245)։ Դրանցից զատ ուրիշ դեպքեր էլ կան։

«— Շենը ինչ եղավ, շենը,— հանկարծ լռության մեջ լըսվեց շինականներից մեկի՝ Սիմոնի հարցը Բակուրին» (ԴԴՎ, 45)։ «Մեր արյունը ժողովրդին» (ԴԴՎ, 248)։ «Ինչքան որ հուր կա իմ սրտում— բոլորը քեզ» (Չ, 43)։ «Ձեր ամեն մի փորած նավթահորը Մի քայլ է ցանկալի կյանքին» (Չ, 402)։ «Մի հին կապերտ ուսերին— Այս է հովվի անկողին» (ՂԱ, 7)։

7. Տրականով խնդիր պահանջող բայերը կարող են երբեմն գործածվել նաև առանց լրացման։ Այդ դեպքերում խնդիրը հասկացվում է խոսքի պայմաններից, ընդլայն (խնդրազուրկ գործածությունը հատուկ է նաև այլ հոլով պահանջող, մասնավորապես հայցական պահանջող ներգործական բայերին)։

«Երբ Թագուհու գահավորակը մոտեցավ, նրանք իսկույն շարվեցան կարգով» (Մուր., 4, 17)։ «— Ձեր հիմնապե՞տը,— նարցրեց Թագուհին» (Մուր., 4, 17)։ «Փարվեցան նրանք քնքըշանքով մի մեծ» (ՀԱՀԵՄ, 277)։

8. Տրականը երբեմն կարող է հանդես գալ իբրև ստորոգելիական վերադիր։ Այս դեպքում անշուշտ ենթադրվում է, որ լրացյալը զեղչված է։

«Ականջս ձենի է» (ՀԹ, 1, 393)։ «Նրա մի ականջը դարձյալ պապի պատմածին է» (Բակ., 83)։ «Նա այն կարծիքի էր, թե իրենց հողերը, իրենց գյուղը վաղ թե ուշ պիտի առնվի թուրքից» (ՍՁ, 9, 194)։ «Ես այն համոզման եմ, որ Գրիգորն իրավացի է»։

9. Նույն բայի մոտ երբեմն դրվում են տրական և այլ հոլովներով համադաս լրացումներ։ Այս դեպքում գործ ունենք երկու երևույթի հետ. ա) տրականը և այլ հոլովաձևերը նույն իմաստն ունեն, և կապակցությունը սովորական է, բ) տրականը և այլ հոլովաձևերը նույն իմաստը չունեն, և կապակցությունը բռնազբոսիկ է, հայերեն չի հնչում։ Առաջին դեպքում տեղի, ժամանակի, ուղղության տրականները հանդես են գալիս նույնիմաստ հայցականի, ներգոյականի հետ։

«Տարին մի քանի անգամ հազիվ կհանդիպեիր նրան դուրսը,

փողոցում, հանդեսներին, *հասարակային* հավաքույթներին» (*Իս., 4, 106*)։ «*Չեմ հիշում, նույն* աշնանն էր, *թե՞ հաջորդ* տարին, *երբ առաջին անգամ այցելեցի «Անկախ արտիստների» մի ցուցահանդեսը*» (*Շիրվ., 8, 287*)։ «*Իրիկվա* պահուն *թե վաղ առա*վոտ *Որբեր ու այրիք՝ պարկերը մեջքին*, Գալիս, կանգնում *են լուսամուտիս մոտ*» (*Նիկիտին, Ծ, 369*)։ «*Նամակներ* էր գրում արտասահմանի *իր* ընտանիքին» (*ՆԴ, 1, 233*)։

Երկրորդ դեպքում տրականը և համադաս անդամները անկապակցություն են առաջացնում նույն բայի մոտ։

«*Եվ նա կաշառում է, հազար ու մի զրկողություններով, անեծքներով, թուք ու մրով վաստակած հարստության մի մասը* կտակելով *մի որևէ բարեգործական* նպատակով *կամ որևէ* եկեղեցու» (*Շիրվ., 8, 418*)։ «*Նրա աչքերը* նայում էին *կարծես ոչ* մարդկանց, *այլ նրանց միջով ինչ-որ հեռու խորհրդավոր աշ*խարհ» (*ԴԴՎ, 13*)։ «*Ամենքը մնացել էին* զարմացած *նրա գե*ղեցկությանը, խելքին, ճարպիկությանը, *ինչպես նա էր պահում իրեն ձիու վրա, ուղեկցելով եղբայրներին որսի գնալիս, նրա նետ* ձգելը, *նիզակ* բանեցնելը» (*ՂԱ, 169*)։

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՅԻ ԵՎ ՏՐԱԿԱՆՈՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սովորաբար տրականով լրացումները չեն տրոհվում լրացյալից։ Սակայն կան մի շարք դեպքեր, երբ այն տրոհված է հանդես գալիս։

1. Տրականը տրոհվում է, երբ վիճակի պարագա է՝ առաջացած կրճատված դերբայական դարձվածից։

«*Օրվա որ ժամին գնայիր նրա մոտ, ձեռքի գործը կթող*ներ և, ժպիտը դեմքին, կնստեր զրույցի» (*Իս., 4, 69*)։ «Անհուն ցավը սրտին՝ անջատվեց *նա իր մեծագույն ձեռնարկից*» (*Իս., 4, 145*)։ «*Բայց ես*, նամակը միշտ ձեռքիս, առաջ եմ գնում» (*ՍԶ, 3, 257*)։

2. Հազվադեպ կարող է տրոհվել նաև այլ պաշտոնների դեպքում։ «*Աշոտն* ապրում է *քեռու տանը*՝ նրա հաշվին» (*ՍԶ, 3, 353*)։ «*Կայծակի ղեկավարած ֆերման*, նրա պաշտոնի առաջին տարեվերջին, *մեր ռեսպուբլիկայում երկրորդ տեղն* էր գրավում» (*ՀՄՀԵ, 154*)։

3. Երբեմն տրականը լրացյալից անջատվում է հեղինակի քմահաճույքով։ Այս երևույթը խրախուսելի չէ։

«Իրանի երկրին նկավ ու տիրեց մի աշխարհակալ» (ՎՓ, 4, 444)։ «Իմ հարցին, իբր պատասխան, մայրս անում է մի զարմանալի պատմություն» (ՍԶ, 3, 42)։

Երկրորդ օրինակում հարցին ձևը կարող է դիտվել և՛ պատասխան բայական ծագմամբ գոյականի, և՛ անում է բայի լրացում։

4. Երբեմն նույն տրականը կարող է դիտվել և՛ բայ-ստորոգյալի, և՛ հաջորդ դերբայի լրացում։

«Իսկ ուսին տարած ուսաշոր չկա» (ՀԲ, 2, 51)։ «Ծանր, շատ ծանր էին խեղճ կնոջ ճաշած օրերն արբեցող ամուսնու ձեռքին» (ՆԴ, 1, 49)։ «Բեկը գնաց խորհրդի հրավիրված խոջաների մոտ» (ՍխՄխ, 235)։

5. Բայական ծագում ունեցող գոյականները ևս կարող են ունենալ տրականով լրացում[1]։ Այս պատճառով էլ երբեմն տրականը կարող է դիտվել և՛ բայ-ստորոգյալի, և՛ համապատասխան գոյականի լրացում։

«Նախարարները Վարդանի գլխավորությամբ գնացին Վասակին պաշտոնական տեսակցության և հրաժեշտի» (ԴԴՎ, 141)։ «Երգում էր գովեստ նա տեր-աստծուն» (Լերմոնտով, Ծ, 293)։

6. Հազվադեպ դժվար է լինում որոշել, թե տվյալ ձևը անորոշ տրակա՞ն, թե՞ սեռական է (որևէ գոյականի լրացում)։

«Առավոտյան մառախուղը չքացել էր» (Ր, 7, 40)։ «Բանվորն է աղայի հաց տվողը» (ՎՓ, 4, 584)։ «Բայց հառաչանքիս չունեմ ձայնակից» (Ծ, 113)։ «Նյուսալավորը նշան տվեց երթի ավարտման» (ԴԴՎ, 309)։ «— Իսկ հո՞ղ ստացար։— Չորս սամարի ստացա» (ՍխՄխ, 208)։

Բ. ԲԱՅԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ

Հայցականը ներգործական սեռի բայերի ուղիղ խնդրի հոլովն է, և իբրև այդպիսին, համարյա անբաժան է լրացյալից։ Հայտնի է, որ բայի ներգործականության հատկանիշ համարվում է ուղիղ խնդիր ընդունելը։ Բոլոր այն բայերը, որոնք արդի հայերենում չեզոքից վերածվել են ներգործականի, ստանում են հայցականով ուղիղ խնդիր, և, ընդհակառակը, այժմ ներգործականությունը կորցրած բայերը դադարել են հայցականով ուղիղ խնդիր ստանալուց։

[1] Տե՛ս «Գոյականի լրացումները թեք հոլովներով» հատվածը։

Հայցականի և տրականի խնդրառության փոխանցումների մասին մանրամասնորեն խոսվեց վերևում, այստեղ այդ հարցին չենք անդրադառնում։ Անհրաժեշտ է, սակայն, քննել կրկնասեռ և ներգործական սեռի իմաստով գործածվող այն բայերը, որոնք չեզոք լինելիս տրականով խնդիր չեն ստանում, իսկ ներգործական լինելիս ունենում են հայցականով ուղիղ խնդիր։

Առաջին հերթին խոսքը վերաբերում է այն բայերին, որոնք, իրենց բառային իմաստով պայմանավորված, հանդես են գալիս մերթ իբրև չեզոք, մերթ իբրև ներգործականի սեռի։ Դրանցից են՝ աշխատել, անցնել, այրել, անրջել, երազել, արածել, գործել, ծաղկել, ծորել, խաղալ, հնչել, ծխել, հոգալ, պրծնել, ստել, լալ *և այլն։ Չեզոք իմաստով դրանք ուղիղ խնդիր չեն ստանում, իսկ ներգործական նշանակություն արտահայտելու դեպքում դրանց խնդիրը հայցականով է դրվում։ Ընդ որում պետք է իմանալ, որ դրանց սեռային տեղաշարժը միատեսակ չէ. մի մասը հնում չեզոք է եղել, և այժմ ներգործական է դարձել՝ միաժամանակ պահպանելով չեզոք նշանակությունը՝ պայմանավորված բառային իմաստով, իսկ մյուսները, ընդհակառակը, աստիճանաբար կորցրել են ներգործականությունը և վերածվել չեզոքի՝ դարձյալ բառային իմաստով պայմանավորված*[1]*։ Քանի որ հայոց լեզվի զարգացման արդի շրջանում սեռի տեսակետից դրանք նման են (կրկնասեռ), ուստի և դրանք քննում ենք միասին։ Նշենք այդ բայերի՝ հայցականով խնդրառությունը վկայող օրինակներ։*

«Օրական մի քանի ձուկն է աշխատում» *(ՀԹ, 1, 459)։ «Երկուսն էլ* այրում էին *ծերության* տարիները» *(Շիրվ., 7, 291)։ «Ջանգակներն, ասես հեկեկում էին և* ծորում *հատ-հատ հնչուն* արցունքներ» *(Իս., 2, 55)։ «Վաղաժամ էր համարում* մեկնել *իր* միտքը» *(ՍԽՄԽ, 740)։ «Սրտեր քանի՜ դեռ, քանի՜* Հողն են *իրենց* անրջում» *(Չ, 517)։ «Շուտ, այն տխուր* երգն հնչիր» *(ՀԹ, 1, 33)։ «Լավ* կծաղկես մատենիկներդ» *(ԴԴՎ, 379)*[2]*։ «Նա* շրջեց բերքը»։ *«Մենք* անցնում ենք *շատ* առարկաներ»։ *«Նա իր* գործը պրծավ»։ *«Դու* ստեցիր պատմածդ»։ *«Վերջին տնեյակում* բիլիարդ էին խաղում» *(Շիրվ., 3, 79)։ «Ամռանը* երկիրն էր գործում, *ձմեռը*

---

[1] *Տե՛ս* Ա. Աբրահամյան, *Բայը ժամանակակից հայերենում, էջ 681—702։*

[2] *Որոշ գրողներ,* ծաղկել *բայի հին սեռային նշանակությունը ակնարկելով, այն չափածոների մեջ են գործածում։ Օրինակ՝ «Այդ հնագույն ձեռագրերի խոշորագույն մասը «ծաղկել» են հայ հին մանրանկարիչները» (ՀՄՀԵ, 105)։*

իր արհեստը բանեցնում» (ՂԱ, 141)։ «Քահանաները խունկ էին ծխում» (ՍԽՄԽ, 421)։ «Այդ օրը Ռուբենը հանգիստ պարապեց իր առարկան» (ՍԶ, 8, 108)։ «Վերջապես ես եկա այստեղ իմ վշտերը թաքցնելու և ճանցանքները լալու» (Մուր., 4, 313)[1]։ «Դավիթը նախիրը արածելիս մի կտոր քար է վերցնում» (Իս., 4, 200)։ «Որ ես ճոգամ իմ ցավեր» (ՂԱ, 8)։

Այս բայերը չեզոք իմաստով են գործածված (առանց ուղիղ խնդրի) հետևյալ օրինակներում։

«Հողմն է լալիս թփերում» (ՎՏ, 1, 93)։ «Գիշերը ամբողջ հիվանդ, խելագար, Ես երազեցի արևի մասին» (Չ, 6)։ «Ծխում են երկնամուխ գործարանային ծխնելույզները» (ԳՄՀՉ, 259)։ «Պետրոսն աշխատում է գյուղում»։ «Ես պիտի լամ, պիտի լամ» (ՀԹ, 2, 68)։ «Շրջում է մոլոր, խնդում ու լալիս» (ՀԹ, 2, 67)։ «Անցավ զալում էն մեծ արքան» (ՀԹ, 2, 144)։ «Արածում էր ծովի ափին» (ՀԹ, 1, 244)։ «Շատ ծաղիկներ ծաղկեցին»։ «Նա պրծավ իր ճոգսերից»։

Կրկնասեռ անցնել բայի հետ չպետք է շփոթել անցրնել ներգործական բայը, որը վերջին տարիներին դասական գրողների ստեղծագործությունների վերահրատարակության մեջ տպում են բացահայտ սխալ գրությամբ՝ անցնել[2]։ Անցրնել բայը գործածական էր դասական հայ գրողների երկերում։

«Իսկ ես քուն չունեմ և երկար ժամեր Անցրնում եմ խաղաղ, բայց անուշ ցնորքով» (ՀՀ, 54)։ «Կյանք են անցրնում մի հարկի տակ, Բայց սրտերով խորթ իրար» (Ծ, 241)։ «Գիրքը ձեռիս ես ժամեր եմ անցրնում այն թիկնակով նստարանի վրա» (ՍԶ, 3, 352)։ «Նստում կին պարտեզի ծառերի տակ և միասին երկար ժամեր անցրնում» (ՎՓ, 4, 131)։

Առանձին պետք է նշել այն բայերը, որոնք կրկնասեռ են ոչ թե բառային իմաստի տարբերակմամբ, այլ նույն իմաստի սահմանում։ Դրանցից են՝ աղմկել, բուրել, գոռճել, դոփել, երգել, թռթռվել, ժայթքել, ծափաճարել, ճորդորել, ճառագայթել, մաղել, շնչել, սգալ, տեղալ, ցայտել և այլն։ Սրանց կրկնասեռությունը հավասարաչափ դրսևորում չունի. երբեմն մեկ, երբեմն մյուս

---

[1] Հետաքրքրական է, որ նույնիսկ լաց լինել հարադրական բայը կարող է ներգործական սեռի իմաստով գործածվել։ Օրինակ՝ «Ես իմ գլուխն եմ լաց ըլում» (ՀԹ, 1, 392)։

[2] Այս բառի (ինչպես և շատ այլ բառերի) գրության աղավաղումների վերաբերյալ շատ տեղին դիտողություններ է արել Վ. Առաքելյանը «Տիգնիսից Տիգրիս» խորագրով հոդվածում (տե՛ս «Գրական թերթ», 1961, ՀԼ, VII, № 30)։

իմաստն է դերակշռում։ Իսկ երբեմն էլ սեռային տարբերակումը հասցնում է բառիմաստային տարբերակման։ Այսպես, հետևյալ օրինակներում սրանք հայցականով ուղիղ խնդիր են ստացել։

«Երբ հողմակոծ կոհակները մոլեգնած Մինչև երկինք փրփուր ու ջուր ցայտեին» (ՀԹ, 1, 66)։ «Ամեն ինչ ուրախություն էր շնչում» (Ր, 7, 40)։ «Աղոտ լուսավորված դահլիճը խոնավություն է բուրում» (ԴԴՎ, 61)։ «Ամեն անգամ նրա շղթաները աղմկում էին նկուղի խորին լռությունը» (Ր, 7, 233)։ «Թող ոչ մի մարդ ինձ կարոտով չսգա» (ՎՏ, 2, 155)։ «Երգում է քաղաքն իր երգն առօրյա» (Զ, 9)։ «Թախիծ են մաղում դեղին ծառերը» (ՀՍՀԵՄ, 358)։ «Նոր սերունդներ են գալիս քո ճամփաները դոփում» (ԳՍԵԺ, 1, 230)։ «Նա լույս էր ճառագայթում»։ «Երկինքը տեղաց հորդառատ անձրև»։ «Լեռը հրաբուխ ժայթքեց»։ «Հրամայեցի արագորեն գրոհել թշնամու դիրքերը» (ՀՄՀԵ, 8)։ «Հանդիսատեսները ծափահարում էին վարպետ դերասանի խաղը»։ «Բանաստեղծներն են հասկացել դույզն ինչ և բորբոքում են ճնշյուններն անմահ» (Իս., 2, 57)։

Նույն բայերը չեզոք իմաստով են հանդես եկել հետևյալ նախադասություններում։

«Աչքերը հանգչող կրակին հառած՝ Մանր է շնչում հովիվն ահ առած» (ՀԹ, 2, 18)։ «Ջուրը ցայտում էր շատրվանից»։ «Այստեղ անուշ հոտ է բուրում»։ «Առավոտվանից հորդ անձրև է տեղում»։ «Գետը ճողում էր ափերից»։ «Հրաբուխը նորից սկսեց ժայթքել»։ «Երեխաներն աղմկում են բակում»։

Առանձին տեղ ունեն այն բայերը, որոնց երկսեռականությունն առաջացել է նույնարմատ երկու բայերի խոնարհումների նույնացումից։ Այդ բայերը գրաբարում պատկանել են տարբեր խոնարհումների՝ համապատասխանաբար լինելով տարբեր սեռերի, իսկ հետագայում աշխարհաբարում դրանց խոնարհումը նույնացել է, իսկ սեռային տարբերակումը պահպանվել։ Այսպես. ցնդել բայը գրաբարում Ե խոնարհման պատկանելիս ներգործական էր, իսկ Ի խոնարհման դեպքում՝ չեզոք։ Արդի հայերենում այդ երկուսը նույնացել են ձևով, և ցնդել բայն այժմ երկսեռ է։ Իրականում կա երկու բայ, բայց դրանք հնչյունական նույն տեսքով են հանդես գալիս։ Այսպես են նաև մաշել, մեղմել, երկարել, խամրել, խռովել, մոլորել, խավարել և այլն։ Այս բայերի ներգործական լինելը կասկած չի հարուցում։ Բազմաթիվ օրինակներից նշենք մի քանիսը։

«Մի՞թե կարող ես երգերս մաշել» (Իս., 1, 76)։ «Այսպիսի

գիշեր մատաղհաս երգչին Առաջին սիրո շունչն է խռովում» (ՀՀ, 85)։ «Գարունը չի մոլորել իր ճանապարհը» (ԳՄԼՁ, 341)։ «Դաժան մահը ցնդում է անուրջները և երգերը չքնաղ» (Իս., 3, 401)։ «Հիմի ձեր արևը խավարեմ» (ԴԴՎ, 420)։ «Իմ խոսքերը մեղմեցին նրա բարկությունը»։ «Նա ձեռքը երկարեց փայտին»։

Նույն բայերը չեզոք իմաստով են գործածված հետևյալ օրինակներում։

«Դալուկ աշնան տխուր շողերն են մարում» (ՎՏ, 1, 68)։ «Ամեն առիթով խռովում է նա մի քանի ժամով կամ մի շաբաթով» (ՀԱՀԵՄ, 394)։ «Ստվերները երկարեցին»։ «Արևը խավարել է կեսօրին»։ «Բենզինը շուտ է ցնդում»։

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ թեև մի շարք բայերի գրաբարյան ն խոնարհման ձևը չի պահպանվել (գործածվում է միայն այլ խոնարհումներին պատկանող ձևը), սակայն երբեմն հանդիպում ենք գործածված նաև ն խոնարհման ձևին՝ ներգործական նշանակությամբ։ Այս դեպքում գործ չունենք արդի հայերենում կենսունակ կրկնասեռության հետ, այլ առկա է վերապրուկային երևույթ։ Այսպես, գրաբարյան դղրդել ն խոնարհման պատկանող բայն այժմ չկա. գործածական է դղրդալ չեզոք բայը։ Օրինակ՝ «Ճռնչում են, դղրդում են դարպասները երկաթի» (ՀԹ, 2, 143)։ Սակայն որոշ հեղինակներ գործածում են դղրդել ձևը՝ ներգործական իմաստով։ Օրինակներ՝ «Թող օդ դղրդեն ձեր ճիչ, աղաղակ» (Ծ, 37)։ «Իրանց ահեղ գոռոցով Ամբողջ շենքը դղրդում են» (ՂԱ, 13)։

Կրկնասեռ բայերից պետք է տարբերել չեզոք սեռի այն բայերը, որոնք պատկերավոր խոսքի մեջ երբեմն կարող են գործածվել ներգործական իմաստով՝ ստանալով հայցականով ուղիղ խնդիր։ Դրանք բառային իմաստով մոտ են համապատասխան ներգործական բայերին և դրա շնորհիվ գործածվում են նրանց փոխարեն[1]։ Այսպիսի բայերի թիվը սահմանափակված չէ. պատկերավոր խոսքին բնորոշ երևույթ է, երբ մի բառ գործածվում է փոխաբերաբար՝ ժամանակավորապես ստանալով այլ իմաստ՝ դրանով իսկ արտահայտիչ դարձնելով խոսքը։ Այսպես, «Գազանը մռնչում է» նախադասության մեջ մռնչալ բայը գործածված է իր բուն բառային իմաստով և չեզոք սեռի է։ Մինչդեռ «Իրենց վայրենի վախն են մռնչում» (Չ, 273) նախադասության

[1] Այս երևույթը դիտված է Ա. Աբրահամյանի «Բայը ժամանակակից հայերենում» աշխատության մեջ, էջ 662—681։

մեջ մռնչալ *ներգործական սեռի է և ստացել է* վախը *ուղիղ խնդիրը, քանի որ գործածվել է* արտահայտել, ասել *կամ* դրսևորել *իմաստով։*

Ներգործական իմաստով գործածված են բազմաթիվ չեզոք բայեր, որոնցից կարելի է նշել՝ կոնչալ, շողալ, գոռգոռալ, ծագել, ծփալ, շշնջալ, գեղգեղալ, դայլայլել, մխալ, հուրհրալ, ոռնալ, գիշերել, շրշել, փսփսալ, ֆրթմնչալ, փնթփնթալ, մղկտալ, մրմնջալ, հեկեկալ, փղձկալ, սուլել, փնչալ, զառանցել *և այլն։ Իհարկե բոլորն էլ նույն չափով չեն հանդես գալիս ներգործական կիրառությամբ։ Դրանցից մի քանիսի այդ գործածությունը համարյա սովորական է դարձել, ինչպես՝* շշնջալ, փսփսալ, ֆրթմընչալ, փնթփնթալ, մրմնջալ, սուլել, *իսկ մյուսները սակավ են այդպես գործածվում։*

«Շաղ են շողում *ծաղիկ ու խոտ»* *(ՀԹ, 1, 93)*։ «Գոռգոռաց *մի սարսափելի* հայհոյանք» *(ՆԴ, 1, 74)*։ «*Այդ դու ես, հոգյակ, որ* ծագում ես լույս» *(ՀՀ, 52)*։ «*Եվ իրենց* երգը *վայրագ* Մռնչում են *ականջիս»* *(ՀՀ, 164)*։ «*Սուրբ* սեր ծփաց *իմ հոգին»* *(Իս., 1, 83)*։ «*Բուն է իր դաժան* վայր կոնչում» *(ՀԹ, 2, 25)*։ «Զանգն *ազատության* զանգահարեցեք» *(Իս., 1, 178)*։ «*Եվ կարծես թե՝ հեռավոր Այն* օրերն են շշնջում» *(Իս., 1, 246)*։ «*Եվ զեփյուռների սրինգները մեղմ* գեղգեղում էին շարքիներն անուշ» *(Իս., 2, 55)*։ «Դայլայլում էին *կաթնաղբյուրները* երազներն *իրենց կուսական սրտի»* *(Իս., 84)*։ «*Շատրվաններն* հուրհրում են կրակներ» *(Իս., 2, 148)*։ «*Գայլի պես դանդաղ* ոռնում էին երազներ *մահի, արյունի, հրի»* *(Չ, 290)*։ «*Իսկ քաղաքը, ամբողջ, դեռ քնել էր Ու* զառանցում էր *մաուզերի* կրակոց» *(Չ, 415)*։ «*Եվ քո քնքուշ ժպիտների խուսքերն անձայն* Գիշերեցին *իմ հոգու մեջ մի քաղցր* մութ» *(ՎՏ, 1, 72)*։ «*Մի կարոտ* էր *իմ* սիրտը դեգերում» *(ՎՏ, 1, 167)*։ «*Երբ բանտարկյալն* է ցնորում *դալար Հայրենի երկրի* դաշտերն *ու* անտառ» *(Լերմոնտով, Ծ, 325)*։ «*Ճարտարի իմաստուն արվեստը* խիզախել էր *մի անիրագործելի* թռիչք» *(ԴԴՎ, 626)*։ «*Ինչպե՞ս* հեկեկամ *ես քո* սուգը *մեծ»* *(ՍՏԲ, 136)*։ «*Դու* շեփորեցիր կռիվ ու պայքար» *(Չ, 129)*։ «*Գնդացիրը* արյուն է հազում» *(Չ, 278)*։ «*Ու կարոտ հանկարծ ալվան— Ողջակեզ—* հոգիս արնեց» *(Չ, 317)*։ «*Սազանդարը* ծորում էր *հեշտագրգիռ մի* երգ» *(ՍԽՄԽ, 291)*։ «*Խուան Թորնադն արդեն դիպուկ* Գնդակներ էր ճարճատում» *(ԳՍԵԺ, 2, 47)*։ «*Նա այժմ* մղկտում էր *իր եղբայրների* կորուստը» *(ՋԴԱՎ, 413)*։ «*Ու* մռռում է *դանդաղ մի երգ»* *Չ, 287)*։ «*Թոնիրների դառը* ծուխն են *երկինք* փնչում»

(ՊՍԱՋ, 115)։ «Երգեհոն է դրված կարծես, Որ ճիչեր է միայն փղձկում» (Չ, 115)։ «Քամին ամեն շնչավորի օրոր է ելևէջում» (ՎԽԳԼ, 32)։

Սակայն եթե չեզոք սեռի բայը բառային իմաստով շատ մոտ է այն բային, որի փոխարեն գործածվում է, ապա ուղիղ խնդիրը նրա մոտ շփոթ է ստեղծում։ Այսպես, Ստ. Զորյանը բռնըկել (բռնկվել) չեզոք բայը մի տեղ գործածել է բորբոքել, արծարծել իմաստներով՝ ներգործական բային հատուկ ուղիղ խնդիր դնելով նրա մոտ։ Կապակցությունը լավ չի հնչում։

«Նվարդը երկյուղի մեջ էր, թե հին հեղափոխականի շաղակրատանքը հանկարծ բռնկի հոր զայրույթը» (ՍԶ, 8, 138)։

Նույնպիսի ոչ ճիշտ կապակցություն է կազմել Վ. Փափազյանը.

«Դանակոծությունը դադարեցին» (ՎՓ, 4, 104)։ Դադարել բայը չեզոք սեռի է (այդպես է եղել նաև գրաբարում), սակայն հեղինակի կողմից գործածվել է դադարեցնել պատճառական-ներգործականի իմաստով, որը ճիշտ չէ։

Բոլորովին այլ է ցրվել բայի հարցը։ Ինչպես արդեն նշվել է քերականագիտության մեջ[1], ցրվել բայը իրականում բառակազմական տեսակետից երկու ձևի նույնացումն է. մի կողմից այն ցրել ներգործականի կրավորականն է, մյուս կողմից գրաբարյան ցրուել ներգործականի արտացոլումն է և կազմված է ցրիւ արմատից (ցրիւ–ել, ցրուել, ցրիվ տալ)։ Հենց այս վերջին ձևն է, որ այժմ գործածվում է իբրև ներգործական սեռի բայ՝ ստանալով ուղիղ խնդիր, և թողնում է այն տպավորությունը, թե կրավորական բայը վերածվել է ներգործականի։ Իրականում դրա վ-ն կրավորական ածանց չէ այնպես, ինչպես որ ածանց չէ պատռվել, հաշվել և նման այլ բայերի մեջ (պատռվել–պատռիվ–ել, հաշվել–հաշիվ–ել)։ Օրինակներ՝ «Ցրվեցեք այդ անիծյալ պարսկական բանակը» (Ր, 7, 511)։ «Ես կամենում եմ ցրվել իմ բախիծը» (ՀՀ, 70)։

Սակայն, ինչպես արդեն նշված է, բուն կրավորական տարվել, բաժանորդագրվել բայերը երբեմն գործածվում են ներգործական նշանակությամբ՝ ստանալով ուղիղ խնդիր։ Օրինակներ՝ «Ղումար խաղալիս շատ փող էր տարվել» (ՆԴ, 1, 84)։ «Ես բաժանորդագրվել եմ շատ թերթեր ու ամսագրեր»։

Այլ է զխտվել և խոստովանվել բարբառային բայերի հարցը։

[1] Տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխատ., էջ 658—660։

Առաջինը կրավորական կազմություն ունեցող ներգործական սեռի բայ է, իսկ երկրորդը կա նաև խոստովանել ձևով, և երկուսն էլ ներգործական սեռի են։

Զխտվել բայը իմաստային նրբերանգ ունի (ուտել է նշանակում) և կարող է ներգործական նշանակություն արտահայտել, իսկ խոստովանվել ձևը պետք է համարել սխալ և ոչ հանձնարարելի (թեև կան գրական սակավաթիվ վկայություններ)։

Ա. Աբրահամյանը ցույց է տվել մի շարք չեզոք բայերի՝ հայցականով լրացումների երկակի բնույթը։ Այդ լրացումները յուրահատուկ են նրանով, որ արտահայտում են և՛ խնդրային, և՛ պարագայական իմաստներ։ Խոսքը վերաբերում է շարժում, տեղափոխություն ցույց տվող մի շարք բայերի՝ քայլել, անցնել (գնալ), ընթանալ, գնալ, բարձրանալ, մագլցել, իջնել, նստել, ելնել և այլն։ Սրանց մի մասը գրաբարում նախդրավոր հայցական էր պահանջում (գերազանցապես ի նախդրով)։ Արդի հայերենում այդ բայերի մի մասի հայցականով լրացումն ավելի շատ խնդրային իմաստ ունի, քան պարագայական, մյուսներինը՝ ընդհակառակը։

Այս բայերով կարող են կազմվել ինչպես ազատ, այնպես էլ կայուն, դարձվածքային բնույթի բազմաթիվ կապակցություններ։

«Հեծավ արքայական ոսկեսար երիվարը» (Մուր., 4, 65)։ «Ձի նստեց և շտապեց յուր երկիրը» (Մուր., 4, 42)։ «Քասումն էլ երկար, որ ուղտեր բառնան» (ՀԹ, 2, 108)։ «Երբ հասակ առա. նստեցի հաճախ երկաթուղիներ և շոգենավեր» (Իս., 1, 349)։ «Հետո Մանուշը ծառն է բարձրանում» (ՀԹ, 1, 225)։ «Սայլը ելա, գյուղից դուրս գնացինք» (ՎՓ, 4, 313)։ «Ավելի խիզախները մագլցել էին տարաձև ժայռերը» (ՍխՄխ, 73)։ «Անցան խուժխառանի անապատները, անցան արևակեզ Ասորեստանը, անցան հայկական Միջագետը» (Ր, 7, 17)։ «Ջափի փշրանքը պատն անցավ գնաց» (ՀԹ, 2, 111)։ «Կառքը յուղած անիվներով ծանր ճամփան հեշտ կընթանա» (Ծ, 239)։ «Գնում եմ ուղին իմ ծուռ» (ՎՏ, 1, 271)։ «Քայլիր, քայլիր անվերջ կարոտներիդ ուղին» (Չ. 29)։ «Դու քո ճամփեն գնա, քույրիկ» (ՀԹ, 1, 92)։

Այսպիսի կապակցություններից մի քանիսը դարձվածքի կամ հարադրական բարդության արժեք ունեն։ Դրանցից են սեղան նստել, գլուխ անցնել, սատանի ձին հեծնել և այլն։

«Սեղան նստենք, խոսենք կարգին» (ՀԹ, 2, 125)։ «Նորեն

յուր զորքի գլուխ կանգնի» (Մուր., 4, 291)։ «Այժմ կարծես թե ամբոխը սուգ էր մտել» (Մուր., 4, 97)։

Սակայն ճիշտ չէ սեղանը նստել կապակցությունը։ Օրինակ՝ «Ինձ բռնեցին տարան սեղանը նստեցրին» (ԴԴՎ, 578)։

Վերջապես, անհրաժեշտ է կանգ առնել ներգործական սեռին պատկանող այն բայերի վրա, որոնք ժամանակակից հայերենում արդեն դուրս են եկել կամ դուրս են գալիս գործածությունից, սակայն որոշ հեղինակներ կոլորիտ ստեղծելու նպատակով գործածում են։ Այդպիսի բայերը երկու խմբի ենք բաժանում։ Մի դեպքում գործ ունենք այն բայերի հետ, որոնք այժմ անգործածական են առհասարակ։ Դրանցից կարելի է նշել կալ(ալ) (ունել բայի գրաբարյան անցյալ կատարյալի ձևերը առհասարակ) սարել, բառնալ, զգենուլ, գաղել, թանալ, մոգել, ոգել, ողոքել, ջամբել, վարժել, տիտղոսել և այլն։ Սրանցով կազմված բազմաթիվ կապակցություններ կան թե՛ անցյալի, թե՛ արդի գրողների երկերում։

«Խոչ ու խութերն թշնամական Թռիչքդ չեն կասում» (Իս., 1, 333)։ «Ոգե՞լ ես արդյոք ճշմարիտ մի բառ» (Իս., 2, 48)։ «Արջը դուրս եկավ ու ինձ կալավ» (ՀԹ, 1, 365)։ «Մի տարի բակարդ էի սարել» (ՀԹ, 1, 395)։ Պետք է մարդկային կյանքից բառնալ կրոնի բռնության լուծը» (ՆԴ, 1, 129)։ «Նորա փառավոր Պայազատեցին անուն, հիշատակ» (ՀՀ, 89)։ «Դու մի այլ մահվան հանդերձ ես զգենում» (ՀՀ, 111)։ «Աչքերից հոսող արյամբ հեղեղը թանում էր փափուկ բարձերը» (Ր, 7, 135)։ «Հոգիս մոգում եմ երազով անզոր» (ՎՏ, 2, 39)։ «Կարելի է ողոքել նրա սիրտը» (ԴԴՎ, 478)։ «Որ միլիոն թնդանոթների Անկուշտ, անհագուրդ ծարավը ջամբեն» (Չ, 290)։ «Վարբեցին արյուն-արցունք» (ՊՍԱ.Չ. 202)։ «Ստարշինա», «Գոլովա», այդպես էին տիտղոսում նրան գյուղացիք» (ՎՓ, 4, 291)։

Երկրորդ խումբը կազմում են գործածությունից դուրս եկած այն բայերը, որոնք ժամանակակից հայերենում ունեն բառակազմական տեսակետից նման ձևեր (կա՛մ նույնիմաստ, կա՛մ իմաստային տարբերություն ունեցող)։ Այս բայերի մի մասը գրաբարյան ներգործականից աշխարհաբարում դարձել է չեզոք, ինչպես՝ սատկել, կանգնել, մերկանալ, վիճակվել և այլն՝ կամ հնչյունափոխվելով (սատկել–սատակել) կամ առանց հնչյունափոխվելու (կանգնել–կանգնել, մերկանալ–մերկանալ)։ Իսկ մյուսները թեև ներգործական են եղել և աշխարհաբարում այդպիսին էլ մնում են, սակայն բառակազմական տեսակետից տարբերվում

են աշխարհաբարյան ձևերից։ Այս բայերից կարելի է նշել զիջանել-զիջել, կառուցանել-կառուցել, մատուցանել-մատուցել և այլն։

«Մենք նրանց կսատակենք» (Մուր., 4, 275)։ «Եվ նրանք քաջաբար կռվեցին. բազմաթիվ թշնամիներ սատակեցին» (Մուր., 4, 275)։ «Նրա ալերի վերա փառավոր Ապագան լուռ կկանգնի նշան» (ՀԹ, 1, 13)։ «Փորձով ես ուսա խորհուրդը կյանքի» (ՀՀ, 117)։ «Չէր ուզում զիջանել շատ անձնական նախապաշարումներ» (Շիրվ., 3, 298)։ «Նա կառույց բազմաթիվ Բարեգործական հիմնարկություններ» (Ր, 7, 185)։ «Մատույց նրան սուրբ սեղանի նշխարքը» (Ր, 7, 309)։ «Սրտի կրակը զիջուցանել չէր կարողանում» (Ր, 7, 317)։ «Այն օրից ուխտեց՝ չմերկանալ այս հագուստը» (Ր, 7, 526)։ «Որ վիճակեցինք մենք ման երջանիկ» (ՀՀ, 91)։

Պետք է նշել նաև այն ներգործական բայերը, որոնք գործածված են մեկ կամ երկու հեղինակի կողմից, սակայն դեռևս տարածված չեն։ Դրանք նորակերտ են և մնում են իբրև առանձին հեղինակների սեփականություն։ Դրանցից են՝ աղորել (աղալ. ծամել), հանճարել, հավերժել, փայլել, շեփորել, մառախուղել և այլն։

«Մեկը փայլում էր իմ սիրտը մենակ» (ՎՏ, 1, 67)։ «Նժույգները անվրդով աղորում էին գարին» (ԴԴՎ, 407)։ «Կերտել ես ոստանդ նոր, հավերժել փառքը նրա» (ՀՍՀԵՄ, 89)։ «Երբ գարունները ողջ բազավորեմ» (ՀՇՔՀ, 108)։ «Ես պահակում էի սերնդամթերքի պահեստը» (ՄՍԿԿՏ, 240)։ «Դու շեփորեցիր կռիվ ու պայքար» (Չ, 129)։ «Նրանք, ոսկեպատ կաբինետներում, Հանճարում էին հեղձուցիչ գազեր» (Չ, 290)։ «Ժամանակը մառախուղել է միտքը» (ՎԽԳՀ, 218)։

Հայցական հոլովի իմաստները նույնպես քննում ենք երկու բաժնով՝ խնդրային և պարագայական։

ԽՆԴՐԱՅԻՆ ՀԱՅՑԱԿԱՆՈՎ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուղիղ խնդրի հայցական.— Հայցական հոլովի հիմնական իմաստը այն հարաբերությունն է, որը արտահայտվում է գործողության և նրա անմիջական առարկայի միջև։ Այս հիմնական իմաստով էլ հայցական հոլովով դրված բառերը դառնում են ուղիղ խնդիր։ Այսպես, տեսնել Գրիգորին, մաքրել սեղանը, կառուցել տուն կապակցություններում Գրիգորին, տուն, սեղանը

Հայցական հոլովով են դրված և տեսնել, մաքրել, կառուցել *բայերի գործողությունն իրենց վրա կրող առարկաների անուններն են։ Այդ երեք կապակցություններում գործողությունն անցնում է նշված առարկաների վրա, սակայն հարաբերությունները նույնական չեն։ Առաջին դեպքում* Գրիգորին *ցույց է տալիս այն անձը, որը տեսնելու սոսկ առարկան է, օբյեկտը։ Այդ առարկան* (Գրիգորը) *գործողության ընթացքում փոփոխության չի ենթարկվում, գործողությունից անկախ նա գոյություն ունի անփոփոխ ձևով։ Այդտեղ ներգործությունը միայն պայմանական է։ Այդ պատճառով էլ նման ուղիղ խնդիրները կոչվում են գործողության սոսկ* առարկա (օբյեկտ) *նշող խնդիրներ։*

Երկրորդ կապակցության մեջ ցույց է տրվում, որ սեղանը *առարկան գործողության ընթացքում ազդվող, ներգործվող օբյեկտն է։ Սեղանը որոշ ազդեցության է ենթարկվում, ուստի և այդ չափով այն տարբեր է նախորդից։*

Երրորդ կապակցության մեջ նշվում է, որ տուն *առարկան առաջանում է իբրև գործողության արդյունք։ Նա կարող է ունենալ մի տարբերակ ևս, երբ իբրև գործողության հետևանք հանդես է գալիս բայի արմատ գոյականը* (երգ երգել)։

Ըստ այսմ էլ ուղիղ խնդիրները քննում ենք ենթատեսակներով։

Ա. Գործողության անմիջական առարկայի (օբյեկտի) հայցական.— *Այսպիսի լրացում կարող են ունենալ ներգործական սեռի բոլոր այն բայերը, որոնք ներազդող կամ հետևանքային գործողություն չեն ցույց տալիս։ Դրանք շատ են, և դժվար է թվարկել բոլորը։ Կարելի է նշել մի քանիսը, ինչպես՝* տեսնել, դիտել, նկատել, լսել, խաբել, սիրել, թողնել, վարձել, կանչել, շրջապատել, ուղարկել, հրավիրել, հրապուրել, գրավել, տանել տալ, բերել, գովել, գովերգել, դրվատել, փառաբանել, ծաղրուծանակ անել, ծաղրի առնել, թող անել, գլխի ընկնել, ճանապարհ դնել, ի կատար ածել, կատակի տալ, փոխ տալ *և այլն։*

«Լսեց *նրա* զեկուցումը» *(Մուր., 5, 14)*։ «*Այժմ ես* գործս թողած դիտում եմ *նրա* դեմքը» *(Մուր., 5, 301)*։ «*Նեսոյի հոր* ձին վարձեցինք» *(ՀԹ, 1, 412)*։ «Աղքատություն *ես* սիրեցի, *խեղճի* լացը, հառաչանք» *(ՀՀ, 79)*։ «*Անարգ Վասակը* մատնեց հայրենիքը» *(ՀՀ, 91)*։ «*Իսկ բյուրականցիք ուրախության աղաղակներով* ծաղրուծանակ էին անում նրանց» *(Մուր., 4, 282)*։ «Ծաղրի առավ ինձ *իրեն ակնարկով*» *(ՀԹ, 2, 9)*։ «Թող արինք փակ *մեր* տուն ու ժամ» *(ՀԹ, 1, 275)*։ «*Չար հարսը էստեղ*

գլխի է ընկնում բանը» *(ՀԲ, 1, 467)*։ «Ճանապարհ դրեց այցելուներին» *(Տիրլ., 3, 343)*։

Գործողության սոսկ առարկա պահանջող բայերից մի քանիսի մոտ (ունենալ, ստանալ, սովորել, ուսանել) *ուղիղ խնդիրը միայն իրի առումով է լինում, այսինքն դրանց ուղիղ խնդիրը միայն ուղղականաձև է հնարավոր։ «Նա* կին *ու* երեխաներ ունի»։ «*Նա* աշխատավարձ ստացավ»։ «*Բանակը* համալրում է ստացել»։ «*Ես շատ վաղ* ուսա տանջանքը *կյանքի» (Ս, 178)*։

Պետք է իմանալ, որ գործողության սոսկ առարկա, այսպես կոչված արտաքին ուղիղ խնդիր[1] *պահանջող մի շարք բայեր կարող են ստանալ նաև այլ բնույթի ուղիղ խնդիր։ Այսպես,* տալ, բերել, անել *բայերի լրացումը արտաքին ուղիղ խնդիր է* («Գիրքը տվեցի Վարդանին», «Հաց բերեցի», «Գլխարկը հանեց» *և այլն)։ Սակայն* տալ *բայը* ստեղծել, վաստակել, պատրաստել *և նման իմաստներով,* բերել, հանել *բայերը* ստեղծել *իմաստով գործածվելիս ունենում են հետևանքի ուղիղ խնդիր։*

«Բանջարանոցը ծառայում էր տեղական քահանային և տալիս էր *նրան ուտելու* սոխ, կանաչեղեն, *մի քանի տասնյակ* վարունգ *և ձմեռվա համար մի քանի հատ* դդում» *(Մուր., 5, 244)*։ *«Բուն շինեցի,* ձագ հանեցի» *(ՀԲ, 1, 240)*։ *«Գլխիս էսպես* փորձանք բերավ» *(ՀԲ, 1, 240)*։

Այս կապակցություններից մի քանիսը դարձվածքի են վերածվել, ինչպես՝ գետին տեսնել *(ընկնել),* օրհնել մեկին, գլուխն առնել *(կորչել),* ճարը տեսնել *և այլն։ «Դեռ քո թիկունքը* չէր տեսել գետին» *(ՀԲ, 2, 58)*։ *«Ինչ մեծ բան է, ու* հեր օրհնած» *(ՀԲ, 1, 195)*։

Բ. Ազդվող, փոփոխվող առարկայի հայցական.— *Այսպիսի ուղիղ խնդիր կարող են ստանալ ակտիվ ներգործություն արտահայտող բազմաթիվ բայեր՝ ինչպես* այրել, վառել, դաղել, կարել, կոտրել, ջարդել, հոշոտել, ոչնչացնել, գլխատել, սպանել, փշրել, մաքրել, զարդարել, հարդարել, ճնշել, ծեծել, բախել, քամել, մզել, մղել, հրել, սևացնել, պոկել, խցկել, քանդել, փորել, ուրել, մանրել, փոշոտել, խաշավարել, հարթել, ողողել, քերել, գզել, գրոփել, ծալել, հավաքել, հրձիգ անել, գերի տանել, զոհ բերել, ավերակ անել, լեզվակոխ անել, անեծքակոխ անել, արյունլվիկ

[1] Արտաքին և ներքին ուղիղ խնդիր *տերմինները Մ. Աբեղյանինն են, տե՛ս «Հայոց լեզվի տեսություն», 1965, 417*։

անել, լեղաճաք անել *և այլն։ Սրանց թիվը հարյուրների է հասնում։*

Իբրև լրացում հանդես եկող բառերը սահմանափակում չունեն։

«*Ուզում է ջահել* քրոջն սպանի» (*ՀԹ, 2, 59*)։ «*Բարկացավ Դավիթ,* չափը շպրտեց, *Տվավ Կոզբադնի* գլուխը ջարդեց» (*ՀԹ, 2, 11*)։ «Տրորում են *քո երեսը, քո* դաշտերը *ծաղկավառ*» (*ՀԹ, 1, 126*)։ «*Կրակն արագ-արագ* լափում էր *բուրգի* տախտակները» (*Շիրվ., 3, 387*)։ «Եկեղեցիները հրձիգ արին» (*Մուր., 4, 70*)։ «*Այդ խոսքերը* դող հանեցին *Թագուհու* սիրտը» (*Մուր., 4, 507*)։ «Հինա դրին ձեռները» (*ՀԹ, 2, 9*)։ «Թալան է տալի *բովանդակ* Սասուն» (*ՀԹ, 2, 110*)։ «Սրի քաշեց հովիվներին» (*Իս., 2, 188*)։ «*Սկզբում* ձեռները ձիգ ու միգ արավ, *որ կապանքից ազատի, հետո տեսնելով, որ չի կարողանում, սկսեց* ոտները բալդի-բալդի անել, *ոլոր-մոլոր գալ*» (*ՆԴ, 1, 14*)։ «Երեխաներին լեղաճաք անի» (*ՆԴ, 1, 49*)։ «*Տանջանքները* հալումաշ էին արել խեղճին» (*ՆԴ, 1, 49*)։ «*Շատերի* ծիծաղը շարժեց» (*Մուր., 5, 8*)։ «*Մի ընդհանուր* կարոտություն դարմանելու *համար շատ փոքր է*» (*Մուր., 5, 10*)։ «Կրավորեն *դրանով մի ամբողջ ազգի թշվառ* կացությունը» (*Մուր., 5, 10*)։ «*Գինին ևս չէր կարող* զրգռել *նրա* երևակայությունը» (*Ր, 7, 497*)։

Այսպիսի խնդիր պահանջող մի շարք բայեր այլ իմաստ արտահայտելու դեպքում կարող են ունենալ նաև հետևանքի ուղիղ խնդիր, ինչպես՝ վառել, բորբոքել, հղկել, փորել *և այլն։*

«*Գարուն, ամեն տեղ* նոր կյանք ես վառել, *Իմ սրտում էլ ես թևերդ փռել, Իմ հոգում էլ* ես հրդեհել *նոր* սեր» (*ՎՏ, 1, 68*)։ «*Ճեղքում,* հղկում *էր քարե* տախտակներ, *Եղունգով* փորում *պես-պես* նկարներ» (*ՂԱ, 371*)։

Այսպիսի կապակցություններից առաջացել են մի շարք դարձվածքներ, ինչպես՝ գլուխը կորցնել, խոսք կուլեցնել, երդում ուտել, գլուխ տանել, խոսքը կտրել, գլուխը դնել (*հողը*), իրեն ուտել *և այլն։*

«*Արաբացիք* գլուխները կորցրած *սկսան իրար հրելով և կոխկրտելով դեպի վրանները վազել*» (*Մուր., 4, 347*)։ «Խոսք եք կուլացրել, *արին հո չարիք*» (*ՀԹ, 2, 40*)։ «Երդում կերավ *նա*» (*ՀԹ, 2, 61*)։ «*Այնքան ասին՝* գլուխ տարան» (*ՀԹ, 1, 184*)։ «*Վերջը,* խոսքս կտրում եմ կարճ» (*ՀԹ, 1, 185*)։ «*Այ տափը* դնեմ *նրա* գլուխը» (*ՆԴ, 1, 30*)։ «Գայլը *նորից* գլուխն էր քաշել» (*ՆԴ,*

1, 60)։ «Էմինն իրեն ուտում էր *հուսահատությունից» (ՋԴՄՆ, 2, 228)։*

Մի շարք կապակցություններ էլ վերածվել կամ վերածվում են բայական հարադրության, ինչպես՝ գլուխ խոնարհել, ծափ զարկել, պայման կապել, ճանապարհ կտրել, փող փչել, թմբուկ զարկել *և այլն։*

«Պատգամավորները գլուխ խոնարհելով *պատասխանեցին» (Մուր., 4, 341)։ «Ամբոխները զրահապատ* ծափ են զարկում *ու* պարում» *(Չ, 246)։ «Խրճիթ է շինել,* վրան է զարկել» *(Իս., 2, 12)։* «Փող փչեցին, թմբուկ զարկին» *(ՀԹ, 1, 245)։ «Այսպիսի* օրեր էր քաշել *Րաֆֆին» (Շիրվ., 8, 469)։ «Խուլ շառաչում են—* լարում են թակարդ» *(ՎՏ, 1, 60)։ «Քո լույս երգերի* կարոտն ենք քաշում» *(Ծ, 183)։ «Նրանք երկար* ճանապարհ էին կտրել» *(Մուր., 4, 95)։ «Իշխանը* բռնեց *ամրոցի* ճանապարհը» *(Մուր., 4, 96)։*

Գ. Հետևանքի ուղիղ խնդրի հայցական.— *Բայի լրացումը նրա արտահայտած գործողության արդյունքը, նրա հետևանքով ստեղծված առարկան է ցույց տալիս։ Հետևանքի ուղիղ խնդիրը գործողությունից անկախ գոյություն չունի, այն ստեղծվում է միայն դրա ընթացքում։ Այսպիսի լրացում կարող են ստանալ հետևանքային, արդյունքային գործողություն ցույց տվող բայերը, որոնք շատ չեն։ Դրանցից կարելի է նշել՝* ստեղծել, կերտել. կառուցել, շինել, սարքել, պատրաստել, հաստատել, առաջ բերել, առաջացնել, հորինել, հերյուրել, կազմել, հյուսել, կարդալ, գրել, խորհել, մտածել, վաստակել, շահել, ձեռք բերել, թխել, եփել, գլուխ բերել, բաց անել, առաջ բերել, երևան հանել, հանդես բերել *և այլն։*

Լրացում դարձող բառերը սահմանափակ չեն. իբրև այդպիսին հանդես են գալիս որևէ գործողության հետևանքով ստեղծվող առարկա ցույց տվող բոլոր բառերը։

«Նրանք միասին բանակ կազմեցին» *(Մուր., 4, 86)։ «Թովմա Արծրունի անունով մի վարդապետ* գրում է *այժմ Արծրունյաց ցեղի* պատմությունը» *(Մուր., 4, 43)։ «Նա հետզհետե* կազմակերպեց մի գունդ» *(Մուր., 4, 270)։ «Ցերեկը նրանք արգելում էին արևի ճառագայթները, իսկ գիշերն* ստեղծում *անթափանցելի* խավար» *(Մուր., 4, 475)։ «Չորրորդ կողմը ջրափակ անելու համար* փորեցին *այդ* ջրանցքը» *(Մուր., 456)։ «Օխտը ծաղկից ծաղիկ քաղել,* Կապել *սիրո* ծաղկեփունջ» *(ՀԹ, 2, 43)։ «Զուռնաչին* փչեց *կռվի* եղանակ» *(ՀԹ, 2, 56)։* «Նետ աղեղ շինեց *ու տվավ իրեն» (ՀԹ, 2, 104)։ «Իմ սիրտն այնտեղ է, ուր*

նախնիքը մեր կերտել են *շքեղ* կորողներ *Հայերի» (Իս, 1, 168)*։ «*Մեր գյուղում* ուսումնարան բաց արին» *(ՀԹ, 1, 409)*։ «*Այդ գործում նա* երևան բերեց *արտակարգ* շնորհք»։

Հետևանքի ուղիղ խնդիր են ստանում նաև ասացական բայերը՝ ասել, պատմել, զեկուցել, երգել *և այլն։ Ընդ որում սրանց ուղիղ խնդիրը միայն իրի առումով է լինում։*

«*Ես* պատմում էի այգը *մեր մեծ եղ* առավոտը *մեր իրական» (Զ, 387)*։ «Ասում եմ *ես* զովք *դուսանական» (Զ, 473)*։ «*Նա* երգում է *իր* վիշտը»:

Երբեմն հետևանքի ուղիղ խնդիրը թանձրացական գոյական չէ։ Դա լինում է այն դեպքում, երբ բայը գործածվում է փոխաբերաբար։

«*Դեմքն* արտահայտում էր հուզում և վրդովմունք» *(Մուր., 4, 288)*։ «*Եվ այդ* խորհուրդը *վաղուց էր* հղացել» *(Մուր., 4, 128)*։ «*Ցաված սիրտս* երգեր հյուսեց» *(Իս., 1, 41)*։ «*Երկյուղը* հետաքրքրություն է ծնում» *(Շիրվ., 8, 121)*։

Այս կարգի կապակցություններից կազմված են մի շարք հարադրական բայեր, որոնք գերադասապես ունեն անել *բայական բաղադրիչը, ինչպես*՝ կտորած անել, բոթիկ անել, խորհուրդ անել, աղաչանք անել, պաղատանք անել, լաց ու կոծ անել. կրակ անել, կար անել, լվացք անել, պարտք անել, զովք անել, ուս անել, ախ քաշել, ուսում առնել, վեճ բացել, գերի շինել *և այլն։*

«*Տեսավ, որ բյուրականցիների ընդդիմությունը ահագին* կոտորած է անում *յուր զորքի մեջ» (Մուր., 4, 278)*։ «Խորհուրդ են արել, *որ այսուհետև իր թախտից զրկվի, ով* կռիվ անի» *(ՀԹ, 2, 36)*։ «Աղաչանք արի, պաղատանք արի» *(ՀԹ, 2, 39)*։ «*Էն, որ հառաչում ու* ախ եմ քաշում» *(ՀԹ, 2, 50)*։ «Լաց ու կոծ արին *ձեն ձենի տված» (ՀԹ, 2, 65)*։ «*Այնտեղ* կրակ է անում» *(ՀԹ, 1, 205)*։ «Կար էր անում, լվացք էր անում» *(ՆԴ, 1, 49)*։ «*Գնացել էր քաղաք* ուսում առնելու» *(ՆԴ, 1, 100)*։ «Արին մի *անգամ* զովքը *սիրունի» (ՀԹ, 2, 137)*։

Հետևանքի ուղիղ խնդրով կազմված դարձվածքներ կան, ինչպես՝ ջուր լալ, երկաթի ձու ածել, մուկ ծնել, եղջյուր հանել *և այլն։*

«*Ամբողջապես* ջուր լացող *կարմիր խեյագան ամեն անգամ ջրով լվացվելիս խնամքով ողողվում, մաքրվում էր» (ՆԴ, 1, 34)*։

Դ. Ներքին ուղիղ խնդրի հայցական.— *Ներքին ուղիղ խնդիրը իմաստով հետևանքի ուղիղ խնդիր է։ Սակայն այս դեպքում բա-*

յի լրացում դառնում է նրա արմատից կազմված գոյականը։ Սակավաթիվ են ներքին ուղիղ խնդիր պահանջող բայերը։ Դրանցից կարելի է նշել՝ փորձել, խաղալ, երգել, խոսել, լալ, տանել, խորհել, երազել, ծխել *և այլն։ Ընդ որում դրանցից մի քանիսի մոտ ուղիղ խնդիրը տարբեր ձևերով կարող է լինել։ Այսպես, լինում են՝* խորհել խորհուրդ, խորհել խոհ։ *Այսպիսի կապակցություններից* փորձ փորձել *այժմ հարադրական բայի նշանակություն ունի։*

«*Քու* խաղը խաղա, *ջան գյուղում սաս*» (*ՀԹ, 2, 53*)։ «*Մաքուր, սրտալի* էն երգը երգիր» (*ՀԹ, 2, 94*)։ «Խոսք եմ խոսում *իմ սրտի հետ*» (*Իս., 1, 289*)։ «*Ու* խորհում ես *խորին* խորհուրդ *տանջանքներում չարաղետ*» (*ՀԹ, 1, 126*)։ «*Քեզ նման երազներ* էի երազում» (*ՀԹ, 1, 339*)։ Լաց *վերջին* լացդ, *սիրտ իմ մենավոր*» (*ՎՏ, 1, 97*)։

Արդի հայերենում մի շարք չեզոք բայեր ևս ստանալով նույնարմատ գոյականով ներքին ուղիղ խնդիր, դրանով իսկ վերածվում են ներգործականի։ Այդպիսի գործածություն ունեն՝ երդվել (երդում երդվել), ճչալ (ճիչ ճչալ), ննջել (նինջ ննջել), կռվել (կռիվ կռվել) *և այլն։*

«*Ես անհավոր* երդում երդվեցա» (*Մուր., 4, 330*)։ «*Իմ սրտի մեջ* ճիչ են ճչում— *իմ սրտի մեջ հեկեկում*» (*ՎՏ, 2, 122*)։ «*Ոտանեկը այստեղ կռիվ ունի և* կկռվի *իր* կռիվը» (*ԴԴՎ, 125*)։ «Ննջում էր *անվերջ իր սև* նինջը *խոր*» (*Չ, 226*)։ «*Նստել*, նինջ էին ննջում» (*ՎԽԴԼ, 379*)։

Մատուցման հայցական.— *Ժամանակակից հայերենում այս հայցականը վերապրուկային, սահմանափակ կիրառություն ունի. Հանդես է գալիս* տալ, հանձնել, մատնել, անցնել *բայերի հետ և ցույց է տալիս այն առարկան, որին տրվում, մատուցվում է մի բան։ Սա գրաբարյան* ի *նախդրի և հայցականի կապակցությունից է առաջացել* (տալ ի ձեռն)։ *Իբրև լրացում հանդես է գալիս* ձեռք *բառը, իսկ դարձվածքային բնույթի կապակցություններում՝ նաև* բերան, շալակ *բառերը։*

«*Իրեն* հանձնել էր *նրա* ձեռքը» (*Մուր., 5, 231*)։ «*Քաջ Թագավորը* մատնված է *թշնամու* ձեռքը» (*Մուր., 4, 42*)։ «*Աստված ինքը* մատնեց *ինձ իմ թշնամու* ձեռքը» (*Մուր., 4, 134*)։ «*Եզ ու բրինձ է առնում*, տալիս *մշակի* շալակը» (*ՀԹ, 1, 475*)։ «*Սրանց կզգզեն*, կտան *ամբոխի* բերանը» (*ԴԴՎ, 471*)։

Մատուցման հայցականը զարգացման հեռանկար չունի, քանի որ այդ իմաստի դրսևորման ձևը տրականն է, որը չափազանց կենսունակ է։

Վերածման հայցական.— *Բայի լրացումը այսպիսի իմաստով ցույց է տալիս այն առարկան, որին վերածվում, փոխարկվում է մի բան։ Այս իմաստի արտահայտման բուն ձևը տրականն է (տե՛ս «Վերածման տրական» հատվածը)։*

Վերածման իմաստը գրաբարում արտահայտվում էր ի *նախդրի և հայցականի կապակցությամբ։ Այժմ* ի *նախդրի անկման հետևանքով հայցականը մի շարք կապակցություններում կատարում է գրաբարյան հիշյալ կապակցության դերը։ Ինչպես հայտնի է, այսպիսի լրացում պահանջում են* բաժանել, վերածել, փոխել, փոխարկել, փոխադրել *և նման սակավաթիվ բայեր։ Այս բայերից մի քանիսը աշխարհաբարի զարգացման նախասովետական շրջանում դեռևս պահպանում էին գրաբարյան խնդրառությունը՝ առանց* ի *նախդրի։*

«Քաշեց սուրը և ախոռապետի գլուխն երկու մասն բաժանեց*» (Ր, 7, 236)։ «Յուր զորքերը երկու* մասն էր բաժանել*» (Ր, 7, 282)։ «Բլբուլը բերեմ, հասցնեմ այգիս, Փուշը* վարդ փոխեմ *թովչական երգով, Ու գազանը՝* մարդ— *բանական հոգով» (ՀԹ, 2, 164)։*

Արդի գրական հայերենում վերածման հայցականը համարյա վերացել է, սակայն այդպիսի գործածության դեռևս հանդիպում ենք։

Դարձնել *բայի լրացումը ևս վերածման իմաստ է արտահայտում, սակայն այն այժմ ուղիղ խնդրի նշանակություն ունի (ոմանք էլ այն ստորոգելիական վերադիր են համարում)։ Օրինակ՝ «Հենց որ չոլիցը* բաղ ա դարձրել, *Վզակոթին տվել են ու շան պես դուրս քցել» (ՎՓ, 4, 306)։*

Հանգման հայցական.— *Սա ևս բնորոշ չէ արդի հայերենին։ Սակավաթիվ բայեր կապակցություն են կազմում մի քանի գոյականների հետ։ Այդ բայերը հանգման հարաբերությամբ կապակցվում են հիմնականում տրական հոլովի հետ, սակայն ժամանակակից գրական լեզվում լայնորեն գործածական են նաև հայցականով կազմված դարձվածքային բնույթի մի շարք կապակցություններ, ինչպես՝* գետին զարկել *(սակայն՝* զարկել ճակատին, զարկել մեջքին *և այլն),* տալ գետին, կապել վիզը, ֆարը ֆսվել:

«Գետին են զարկում *ձեռքերը հաստլիկ» (ՀԹ, 2, 56)։ «Ամբոխի առջև իգիթն իր օրում* Գետին չի զարկիլ *ընկեր իգիթին» (ՀԹ, 2, 56)։ «Ու ձին* տվալ *փորը* գետին» *(ՀԹ, 2, 124)։ «Այդ երեք տարվա ընթացքում նրանք քանդվեցին,* ֆարը ֆսվեցին» *(ՆԴ,*

1, 28)։ «Հագցրել էին պիոների հագուստ և վիզը կապել կարմիր վզկապ» (ՍԶ, 4, 441)։

(Արյունը) զարկեց գլուխը կապակցության մեջ հանգման իմաստին զուգահեռ զգացվում է նաև ուղղության իմաստը։

Միջոցի հայցական.— Սա ևս արդի հայերենում գործուն չէ. այն գրաբարի ի նախդրի և հայցականի կիրառության վերապրուկ է, որ գործ են ածել մեկ-երկու հեղինակ բանաստեղծական խոսքում՝ չափի պահանջով։ Այսպես՝ Թումանյանը գրում է. «Թե չէ նամարդը, արևս եմ երդվում, էլ չի պրծնելու երբեք իմ ձեռից» (ՀԹ, 2, 57)։ «Արևս եմ երդվում» կապակցության մեջ արևս հայցականը միջոցի խնդիր է և օրինաչափորեն պիտի լիներ արևով (եմ երդվում), սակայն այդ դեպքում մի վանկ կավելանար, որը կխախտեր չափը։ Նույն ստեղծագործության մեջ Թումանյանը գործածել է նաև օրինաչափական ձևը. «Դե իմ անունով երդվիր, անզգամ» (ՀԹ, 2, 58)։ Մի օրինակ էլ գործածել է Հ. Հովհաննիսյանը. «Կամ անմահության փառք պսակն մեզ, Կամ ինչպես ճճի՝ ոտի տակ կորչենք» (ՀՀ, 102)։ Այստեղ, սակայն, հնարավոր է փառք պսակել կապակցության այլ մեկնաբանություն ևս. այն կարելի է հասկանալ նաև ուղիղ խնդրի իմաստով, թեև բայի իմաստը թելադրում է միջոցի խնդիր լրացում (պսակել փառքով, ծաղիկներով)։

Սպրել կրկնասեռ բայը ներգործական նշանակությամբ գործածվելիս կարող է ուղիղ խնդիր ստանալ (վիշտ սպրել, ուրախություն սպրել և այլն)։ Սակայն որոշ դեպքերում հայցականը կարող է նրա մոտ միջոցի իմաստով մեկնաբանվել։ Այդպես է Զարենցի մի նախադասության մեջ. «Բայց մնում էր անոթի ու սպրում էր անհեթեթ, Անիմաստ կյանք մի դժվար» (Զ, 257)։

Ուղղության հայցական.— Լրացումը այս դեպքում ցույց է տալիս այն առարկան, որին ուղղվում է գործողությունը։ Արդի հայերենում այս իմաստն արտահայտվում է տրականով (տե՛ս «Ուղղության տրական» հատվածը), սակայն մի շարք բայերի մոտ այն կարող է նաև հայցականով դրվել։ Ուղղության հայցականը ևս մասամբ գրաբարյան նախդրավոր կապակցության վերապրուկ է (ի+հայցական, ընդ+հայցական, առ+հայցական)։ Այս հայցականը մի շարք բայերի մոտ վերածվել է կապի, ինչպես՝ շուրջը, կողմը, ներսը և այլն։

Ուղղության հայցականով լրացում պահանջում են սակավաթիվ բայեր, որոնցից կարելի է նշել՝ նայել, հառել, դիմել,

խոնարհել, ուղղել, դառնալ (շրջվել *իմաստով*), սևեռել, ձգտել, միտել, կարկառել *և այլն*։

Լրացում կարող են դառնալ տեղ ցույց տվող բազմաթիվ գոյականներ։

«*Անահիտը՝ աչքերը* հառած գետին, *լուռ էր*» (*Իս., 3, 90*)։ «*Ես հայացքս* հառել *եմ Լազունայի* հեռուները» (*Իս., 4, 8*)։ «*Քո* ծոցն եմ ձգտում, *ով մայր-բնություն*» (*ՀՀ, 110*)։ «*Իսկ հիմա կոպերը լայն բանալով, հայացքը* սևեռում է *ճեմարանցու* երեսը» (*ՍՉ, 3, 253*)։ «*Սառն հովը սկսվում էր նրա պարիսպներից* երկինք միտող *անսասան ծառերի ճյուղերի մեջ*» (*ԴԴԿ, 5*)։ «*Մատը դիմացի* տունն ուղղեց *և ասաց*» (*Բակ., 66*)։ «*Դերվիշները շնթռկում էին հարուստ կրպակների առաջ, ձեռքերը* երկինք կարկառում» (*ՍԽՄԽ, 289*)։ «երկինք են պարզվում *ծառերը վտիտ*» (*ՎՏ, 1, 157*)։

Իսկ հետևյալ նախադասության մեջ պարզել *բայի լրացումն ունի ուղղության և ուղևորության իմաստները հավասարապես*. «*Հիվանդ քնքշությամբ* երկինք է պարզում *Մեռնող ծաղիկը իր բույրը վերջին*» (*ՎՏ, 1, 63*)։

Այսպիսի կապակցություններից մի քանիսը դարձվածքի են վերածվել, ինչպես՝ (մի բան) խաշել գլուխը, ձայնը գցել գլուխը, *(արյունը)* գլուխը տալ *և այլն*։

«*Նաղարը ձենն ավելի է* գլուխը գցում» (*ՀԹ, 1, 497*)։ «*Գավը նորից* գլուխն էր խաշել» (*ՆԴ, 1, 60*)։ «*Արյունը* տվել էր գլուխը» (*ՋԴՍՆ, 2, 461*)։

Ուղղության հայցականի նշանակության հիման վրա են դըրվել մի շարք բայական հարադրությունների անվանական բաղադրիչները, ինչպես՝ վայր ընկնել, ճամփա ընկնել, ձեռք ընկնել, թևն ընկնել, ուսն առնել, ուսը գցել *և այլն*։

«Վայր ընկա, *ինչպես ուժաթափ մի բան*» (*ՀԹ, 2, 83*)։ «Ճամփա ընկան դեպի *մեծ ծով*» (*ՀԹ, 1, 245*)։ «*Որսը ամեն անգամ* ձեռ չի ընկնում» (*ՀԹ, 1, 417*)։ «*Աղախինը մեծ տիկնոջ* թևն ընկավ *և տարավ օթևան*» (*ԴԴԿ, 13*)։ «*Քուրքը* ուսն առավ, *սուրը բարձրացավ*» (*ՀԹ, 2, 114*)։

Պարագայական հայցականով կապակցություններ

Տեղի հայցական.— *Բայի՝ հոլովական այս իմաստով կիրառվող լրացումը ցույց է տալիս գործողության կատարման տեղը։ Տեղի հայցականը ժամանակակից հայերենում իմաստային տե-*

սակետից միատարր չէ. այն մի կողմից հանդես է գալիս իբրև շարժում ցույց տվող բայերի գործողության նպատակակետ և կոչվում է ուղղության տեղի հայցական[1], իսկ երկրորդ դեպքում տեղի հայցականը իմաստով հարաբերակից է ներգոյականին, երբեմն էլ տրականին, որոնք դադարման տեղ են ցույց տալիս։ Այս դեպքում հայցականը ևս չի դառնում շարժում ցույց տվող բայերի լրացում և կոչվում է դադարման տեղի հայցական։

Ա. Ուղղության հայցական.— Բայի լրացումը ցույց է տալիս այն տեղը, ուր ուղղվում, գնում է գործողը։ Ուղղության իմաստը գրաբարում արտահայտվում էր նախդիրներով (ի, ընդ, առ) և հայցականով, որը և կոչվում էր ուղղության հայցական։ Պատմական զարգացման ընթացքում նախդիրները ընկել են, և հայցականն առանձին արտահայտում է այդ իմաստը (երթալ ի քաղաք-երթալ քաղաք, ընթանալ ընդ արևելս-ընթանալ արևելք)։

Ուղղության հայցական պահանջում են շարժում ցույց տվող բազմաթիվ բայեր, ինչպես՝ գնալ, երթալ, գալ, ուղարկել, հասնել, վերադառնալ, ճանապարհվել, առաջնորդել, հաճախել, մտնել, խուժել, բարձրանալ, տանել, բերել, քաշվել, փոխադրվել, տեղափոխվել, գլորվել, անցնել, սուզվել, իջնել, թռչել և այլն։

Լրացման դերում հանդես են գալիս տարածական նշանակություն ունեցող բազմատեսակ գոյականներ։

«Տեսուչը վերադարձավ յուր սենյակը» (Մուր., 5, 11)։ «Արքայորդին առաջնորդեց մեզ դահլիճ» (Մուր., 4, 61)։ «Բնակիչները քաշվել էին տուն» (Մուր., 4, 109)։ «Հեռացա Գուգարաց լեռները» (Մուր., 4, 132)։ «Զորքերը խուժեցին վիմափոր տաճարը» (Մուր., 4, 218)։ «Անդունդը մի քար գլորեց ոտով» (ՀԹ, 2, 16)։ «Խոր սուզվեցին ակն աղբյուրի, Մտան կաղնին հաստաբուն, Ու լեռնային վտակների Ալիքները պաղպաջուն» (ՀԹ. 2, 44)։ «Ջուրն են իջնում աղջիկներ» (ՀԹ, 2, 47)։ «Կտորները երկինք թռան» (ՀԹ, 2, 125)։

Ուղղության հայցականով լրացում են ստանում նաև մի

[1] Ուղղության տեղի հայցական տերմինը գրաբարի քերականություններից է գալիս, իսկ դադարման տեղի հայցական տերմինը գործածել է Վ. Առաքելյանը «Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները» գրքում (էջ 53)։ Այս ենթիմաստը Մ. Աբեղյանն անվանում էր ներգոյական հայցական (ժամանակի հայցականի՝ ներգոյականի իմաստով գործածության հետ միասին)։ Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 418—419։

շարք հարադրական բայեր, ինչպես՝ ոտք դնել, ոտք կոխել, մուտք գործել, ներս ու դուրս անել *և այլն։*

«Հպատակ գյուղացիները ներս ու դուրս էին անում *գըզ-յակի* բակը» *(Մուր., 4, 418)։ «Նա մտածում էր անձամբ* մուտ գործել *քաղաքի* ներքնուղին» *(Մուր., 4, 405)։ «Արքաեղբայրն ու Մարզպետունին* ոտք էին կոխում *Սյունյաց նահանգի հյուսիսային* սահմանածայրը» *(Մուր., 4, 382)։* «Ոտք եմ *դնում հայրենական* հարկը *հին» (Իս., 1, 331)։*

Բայական հարադրության անվանական բաղադրիչ կարող են լինել ներս, դուրս *բառերը, որոնք ըստ էության նոր իմաստ չեն տալիս* գալ, գնալ, մտնել *և նման բայերին։ Իմաստային տեսակետից տարբերություն չունեն* մտնել տուն *և* ներս մտնել տուն *կապակցությունները, սակայն ոճական տեսակետից դրանք նուրբ տարբերություն ունեն, թեև պետք է նշել, որ երբեմն* ներս. դուրս *բաղադրիչներով կազմված հարադրության գործածությունը չի արդարանում։ Այսպես, «Շինականները* ներս մտան գավիթը» *(ԴԴՎ, 19)։ «Երկու ընկերով* ներս մտան՛ այգին» *(Զ, 226) նախադասություններում* ներս մտնել *հարադրությունը չի տարբերվում* մտնել *բայից և կարող է ազատ փոխարինվել նրանով։ Նույն ձևով ավելորդ է* ներս *բառը հետևյալ նախադասության մեջ. «Վարդանը* ներս հրավիրեց *նախարարներին* ամրոց» *(ԴԴՎ, 17)։ Դրանց գործածությունը չափածո խոսքում պատճառաբանվում է բանաստեղծական չափի պահպանման անհրաժեշտությամբ։*

«Տղերքը ճեպով ձորը ներս մտան» *(ՀԹ, 2, 61)։ «Էն անահ* սիրտը ներս սողաց *մի ցավ» (ՀԹ, 2, 97)։ «Քարը պատռվի—* դուրս արի մեյդան» *(ՀԹ, 2, 109)։ «Լեղապատառ* ներս ընկավ տուն» *(ՀԹ, 1, 244)։*

Ուղղության հայցականով լրացում կարող են ստանալ նաև փոխաբերաբար շարժում ցույց տվող մի շարք բայեր, ինչպես՝ շտապել, տալ, դիմել, պառկել, հանդիպել *և այլն։*

«Շտապեցի Թիֆլիս» *(Իս., 4, 47)։ «Իրեն* տվեց անտառը» *(ՀԹ, 1, 395)։ «Ինձ* ուսումնարան տվին» *(ՀԹ, 1, 409)։ «Դու հավատով* դիմում ես կյանք» *(ՀՀ, 106)։ «Աստղը որոշեց* հանդիպել *նաև իր* աշխարհը» *(ԴԴՎ, 348)։*

Սրանցից փոքր-ինչ տարբեր են այն դեպքերը, երբ ոչ շարժման (դադարման) բայերը միայն որևէ հեղինակի կողմից կարող են շարժում ցույց տվող բայերի փոխարեն գործածվել՝ ստանալով ուղղության հայցական։ Այսպես է դիպչել *բայը, որը Դ. Դե-*

միրճյանը գործածել է գնալ, այցելել իմաստներով։ «Բայց ամեն մարդ, որ դիպչում է կայարան, պիտի տեսնի Ակոբին» (ԴԴ, 1, 237)։

Մի շարք բայերի՝ հայցականով տեղի պարագա լրացումը նման է ուղղության հայցականին, այսինքն՝ պարագայական և խնդրային իմաստները համատեղվում են։ Վերջին հաշվով դրանք պարագա են, սակայն ուղղության իմաստով։ Այսպես, խրել գոտին կապակցության մեջ գոտին հայցականը համատեղում է ուղևորության և ուղղության իմաստները։ Այսպիսի լրացումներ ունեն նաև խցկել, կոխել, մտցնել, առնել, անցնել, թափանցել և այլ բայեր։

«Փեշերը հավաք խրում են գոտին» (ՀԹ, 2, 56)։ «Առնենք նորեն իմ գիրկը» (Բ, 4, 258)։ «Գուցե տասը կամ տասնհինգ կոպեկանոց մի դրամ խցկված լինի կարկատանների արանքը» (ՆԴ, 1, 47)։

Քանի որ տեղի հայցականը ոչ միայն ուղևորության, այլև տեղի ներգոյականի իմաստ է արտահայտում[1], այդ պատճառով էլ որոշ կապակցություններում հայցականի իմաստը երկակի կարող է լինել։ Այսպես է հետևյալ նախադասության մեջ. «Մարդիկ քաղաքների և գյուղերի մեջ ունեցածնին սպառելով ցրվեցան դաշտերը, ձորերն ու լեռները» (Բ, 4, 73)։ Ցրվել դաշտերը, ձորերն ու լեռները կարելի է հասկանալ և՛ ուղևորության իմաստով (գնալ դաշտերը, ձորերն ու լեռները), և՛ ներգոյականի իմաստով (ցրիվ գալ դաշտերում, ձորերում, լեռներում)։ Բերված կապակցության մեջ անշուշտ գերակշռում է առաջին իմաստը։

Ուղևորության հայցականով կազմված մի շարք կապակցություններ դարձվածքի են վերածվել։ Դրանցից կարելի է նշել՝ բերանը հասցնել, (որևէ բան) բերանը գալ, գնալ (մեկի) ոտը, (մտքի) ծովն ընկնել, դուրս գալ մարդամեջ, աշխարհ մտնել, ծակուծուկ մտնել, ընկնել ոտքը, անկողին ընկնել և այլն։

«Չենք կարողանում բերան հասցնենք» (ՀԹ, 2, 34)։ «Գնացինք թավադի ոտը խնդիրքով» (ՀԹ, 2, 40)։ «Դավիթը մնաց մտքի ծովն ընկած» (ՀԹ, 2, 106)։ «Ընկան նրա ձեռն ու ոտը» (ՀԹ, 1, 197)։ «Կիրակոսը մրսել էր, անկողին էր ընկել» (ՀԹ, 1, 364)։ «Ախ, սակայն հոգիս բերանս է գալիս» (Իս., 1, 310)։ «Աղաչանք արավ, ընկավ ոտները» (ՀԹ, 2, 99)։

Բազմաթիվ բայական հարադրությունների անվանական բա-

---

[1] Տե՛ս հաջորդ բաժինը։

վարդիչը ևս նշել է ուղղության հայցականի։ Դրանք շատ են, սակայն կապվում են գերազանցապես գալ, գնալ, մտնել, ընկնել, ելնել *և նման բայական բաղադրիչներով, ինչպես՝* միտքը գալ, մայր մտնել, քուն մտնել, մեջ գալ, տեղը մտնել *(պառկել)*, պար գալ *և այլն։*

«Միանգամ եկան *տատի զրույցները հին*» *(ՀԹ, 2, 15)։ «Աղլուխ էր առել ու* պար էր գալիս» *(ՀԹ, 2, 61)։ «Արևը նոր* էր մայր մտել» *(ՆԴ, 1, 55)։ «Սառ հողի տակ* քուն մտա» *(Իս, 1, 99)։ «Հազիվ* միտքդ եմ գալիս» *(Իս., 1, 320)։ «Մեյդան բաց արեք, թող մին էլ* մեջ գա» *(ՀԹ, 2, 57)։ «էն ի՞նչ է հայպա, որ* տեղն ենք մտնում՝ *Հեկեկում ես դու գիշերվա մթնում*» *(ՀԹ, 2, 59)։*

Ուղղության հայցականից է ծագել կողմը (կողմերը) *կապական բառը, որը երբեմն նախադասության ինքնուրույն անդամի նշանակությունը պահպանում է։ Այդ երևում է հետևյալ օրինակներից՝ «Այսպես խոսակցելով մենք* անցանք *ուրիշ* կողմեր» *(Մուր., 5, 256)։ «Ինքը շուտով* կնանապարհվի *այս* կողմերը» *(Մուր., 4, 108)։ «Ու չես իմանում որ* կողմը քշես» *(ՀԹ, 2, 37)։*

Շարժում ցույց տվող որոշ բայերի մոտ հայցականը կարող է մեկնաբանվել և՛ ուղղության, և՛ նպատակի իմաստներով[1]*։ Այդպես են մասնավորապես* տանել, բերել, ուղարկել *և այլն։*

«Հինգ ու վեց անգամ տարան դատաստան» *(ՀԹ, 2, 37)։* «Արի մեզ մոտ ճաշանիք» *(ՀԹ, 2, 16)։ «էգուց նախիրը* կտանես արոտ» *(ՀԹ, 2, 102)։ «Մշտական, երբ որ* կռիվ էր գնում, *էնտեղ էր քու հերն իր աղոթքն անում*» *(ՀԹ, 2, 106)։ «*Ժողովք են կանչում *երկրի մեծերին։* Ժողովք են գալի, *խորհուրդ են անում*» *(ՀԹ, 1, 50)։ «*Պետք է տանենք *նրան* պատերազմ» *(ԴԴՎ, 125)։ «Վարդանը* կործանում է տանում երկիրը» *(ԴԴՎ, 645)։*

Բ. Խաղարման հայցական (հայցականը ներգոյականի փոխարեն).— *Այս դեպքում ևս բայի լրացումը ցույց է տալիս գործողության կատարման տեղը, սակայն ոչ թե նպատակակետ-տեղը. այլ գործողությունը պարունակող տեղը։ Այս հայցականը համարժեք է ներգոյականին, երբեմն էլ տրականին։ Սակայն պետք է իմանալ, որ ներգոյականի իմաստ ունեցող հայցականով լրա-*

---

[1] *Այս երևույթը դիտված է Վ. Առաքելյանի կողմից. տե՛ս «Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները» (էջ 58—59)։*

ցումները հավասարապես նույն ծագումը և գործածությունը չունեն։

Ժամանակակից հայերենում դադարման հայցականը ծագմամբ կապվում է գրաբարյան ի նախդրով հայցականի (հոգնակի թվով) և տրականի (եզակի թվով) այն կիրառությանը, որը համարժեք է արդի ներգոյականին և մասամբ տրականին։ Այսպես, ի քաղաքս, ի ճանապարհի ձևերը «Բնակէին ի քաղաքս», «Նստէր ի ճանապարհի» նախադասություններում նշանակում են քաղաքներում, ճանապարհին։ Իհարկե արդի դադարման հայցականի բոլոր կիրառությունները հավասարապես չեն գալիս գրաբարի դադարման հայցականից, մի մասը նոր գործածություններ են, որոնք կամ առաջացել են գրաբարյան և արդի արևմտահայերենի ու բարբառային ձևերի համաբանությամբ, կամ իմաստային յուրահատկությամբ են պայմանավորված։ Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ դադարման հայցականը քննում ենք տեսակներով։

1. Գրաբարյան կապակցությունների և արդի արևմտահայերենի ու արևմտահայ բարբառների ազդեցությամբ կազմված կապակցություններ.— Մի շարք հեղինակներ (Թումանյան, Իսահակյան, Շիրազ, Դեմիրճյան) կազմել են բազմաթիվ կապակցություններ գրաբարի և արևմտահայերենի համապատասխան կապակցությունների օրինակով։ Հ. Թումանյանը, արևմտահայ չլինելով, իր ստեղծագործություններում արևմտահայ բարբառներով ստեղծված ժողովրդական բանավոր երկերը (ֆոլկլոր) մշակելիս հաճախ է դիմել այդ բարբառներին բնորոշ ձևերի գործածությանը։ Դադարման հայցականը նրա մոտ այդ երևույթներից մեկն էր։ Իսահակյանը, Շիրազը, Դեմիրճյանը կը ճյուղին պատկանող մայրենի բարբառի ազդեցությամբ հաճախ են գործածել այս հայցականը։

Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում հայցականը ներգոյականի իմաստով ավելի շատ է գործածված, քան բուն ներգոյականը, որը բացակայում է նրա մայրենի բարբառից (և արևմտահայերենից)։ Ս. Բակունցը, արևելահայ լինելով, երբեմն դիմում էր այս ձևին։

Դադարման հայցական դրվում է ոչ ուղղություն ցույց տվող բայերի մոտ, ինչպես նստել, ունենալ, սովորել, ուսանել, դիզել, մնալ, ապրել, լինել, կանգնել, կանգ առնել, զարկել, թողնել, կա և այլն։ Լրացում լինում են մեծ մասամբ տեղ ցույց տվող գոյականները։

«Նստեցե՛ք *Վարդան Մամիկոնյանի* օջախը» *(ԴԴՎ, 370)*: «Աշխարհ *տուն* չունեմ, *դադար* չունեմ» *(ԴԴՎ, 374)*: «Ուսել *են* Աղեքսանդրիա, Բյուզանդիոն, Սիրիա» *(ԴԴՎ, 515)*: «*Նրանից մի եղբայրը* Բաքու *հարստություն* է դիզել» *(Բակ., 158)*: «*Համաձայնություն տալուց հետո նա ստիպված եղավ առժամ* մնալ Կարին» *(ՍԶ, 9, 214)*: «*Թումանյանն այդ ամառ* ապրում էր Դսեղ» *(ՍԶ, 9, 167)*: «*Երբ հավքերը* երիկը ճռուչ էին անում, *հողը մաղվում էր անձրևի պես» (Իս., 3, 484)*: «Ռոստով եղած *ժամանակս գնում էի Աղայանի մոտ» (Իս., 4, 43)*: «*Էս դարում* Մըսըր *անհաղթ ու հզոր Մսրա-Մելիքն* էր նստած *թագավոր» (ՀԹ, 2, 98)*: «*Սասմա* երկիր *ձեզ տեղ* չկա» *(ՀԹ, 2, 113)*: «*Շատ տեսակի մարդիկ* կային բանտը» *(Իս., 3, 140)*:

2. Կապի վերածված և վերածվող հայցականը ներգոյականի փոխարեն.— *Այսպիսի գործածությունները բավական մեծ թիվ են կազմում: Այս հայցականը ևս դադարման իմաստ է արտահայտում, սակայն շնորհիվ այն բանի, որ ժամանակակից հայերենում տվյալ ձևը արդեն դարձել կամ դառնում է կապ, այլևս չի գիտակցվում գրաբարյան կամ արևմտահայ բարբառային երանգը: Դրանց լրացյալ լինում են ոչ ուղևորություն ցույց տվող բայերը, ինչպես՝* ունենալ, կանգնել, գտնվել, երևալ, պառկել, տանջվել, բաժանվել, թողնել, թաքնվել, մնալ, բուսնել, կա *և այլն: Կապի վերածվել և վերածում են բազմաթիվ ձևեր, ինչպես՝* շուրջը (շուրջները), կողմը (կողմերը), մեջտեղը, տեղը, դիմացը (դիմացները), առաջը (առաջները), դուրսը, դեմը *և այլն: Այս ձևերը կարող են հանդես գալ որպես ինքնուրույն անդամ (տեղի պարագա)՝ փոխարինելով կապի խնդրին ու կապին, ինչպես նաև կապի խնդրի հետ միասին: Երկու դեպքում էլ գործ ունենք ներգոյական իմաստով գործածվող հայցականի հետ:*

«*Բայց դու եկար միտքս մտար, Ինձ* չթողիր տեղս *դադար» (ՀԹ, 2, 88)*: «*Տեսավ*, սառանեց տեղը *սարսափից» (ՀԹ, 1, 265)*: «*Գիքորը* տեղը նստած էր» *(ՀԹ, 1, 316)*: «Հետևում էր *մեծ տիկնոջ* ամեն տեղ» *(Մուր., 4, 12)*: «*Էլ մենք* ենք մեջտեղ տանջվում *ամեն օր» (ՀԹ, 2, 38)*: «Մեջտեղ *փլավ* չեն *իրար* բաժանում» *(ՀԹ, 2, 39)*: «Դուրսը մնացին *և իմ խաղընկերները մեծ մասը» (ՀԹ, 1, 410)*: «Կանգնած են շուրջը *կանայք հարևան» (ՀԹ, 2, 63)*: «Շուրջներս *ամբողջ*՝ սփռված էր *անհուն տարածություն» (ՎՓ, 4, 560)*: «Դիմացս կանգնած էր *խոր ու անթափանցելի մութն անտառը» (ՀԹ, 1, 362)*: «Նստում եմ դեմդ՝ *հանգիստ ու խաղաղ» (Իս., 1, 310)*: «Շիկնել է դեմդ *ահա տիե-*

զերքը ողջ» (Չ, 19)։ «Առաջը *մի դուռն է* բացվում» *(ՀԲ, 1, 492)։*

3. Ուղեւորության և դադարման իմաստների նմանեցում.— *Մի շարք բայերի մոտ հայցականը երկակի մեկնաբանություն ունի։ Այսպես,* պտտվել, շրջել *և նման բայեր ներգոյականով տեղի պարագա են պահանջում (*շրջել գյուղում,— դաշտում,— ճանապարհին, պտտվել տեղում *և այլն)։ Սակայն նույն բայերը միաժամանակ կարող են արտահայտել նաև* գնալ, այցելել, *իմաստները, և այդ դեպքում նրանց մոտ լրացումը ուղեւորության հայցական է։*

Այսպիսի լրացում կարող են պահանջել նաև թափառել, առանձնանալ, մեկուսանալ, հավաքել, ժողովել, խռնվել, հայտնըվել, ցնդել, սփռել, ման գալ *և այլ բայեր։*

«Դուրս եկանք քաղաքից ձիով՝ հայրենի դավառակի գյուղերը պտտելու» *(Մուր., 5, 239)։ «Սպարապետի հետ* պտտվում էր զորանոցները» *(ՍխՄխ, 467)։ «Ցիր ու ցան դառնուկները* թափառում էին սար ու ձոր» *(Ր, 7, 438)։ «Ու* ման կուգամ *սև ջրի պես* Սարեր, ձորեր *ամայի» (Իս., 123)։ «Սիրտս կուզե* հեռուները սավառնել, *Նոր* ուղիներ, *նոր* աշխարհներ թափառել» *(Իս., 1, 173)։ «Երկու օր շարունակ ես խելագարի պես* թափառում *էի քաղաքի* շրջակաները» *(Մուր., 5, 316)։ «Նա հրամայեց* ժողովել Դվին *բոլոր* հազարացի զորքերը» *(Մուր., 4, 337)։*

Կան դեպքեր, երբ տեղի հայցականը երկու և ավելի բայերի լրացում է, և այդ դեպքում դժվար է որոշել, թե ինչ իմաստ ունի այն. ուղեւորության թե դադարման տեղի։ Ավելի ճիշտ, նման դեպքերում տեղի հայցականը այդ երկու իմաստն էլ արտահայտում է։

«Նա թռչում, թափառում էր *հեռավոր* տեղեր» *(Մուր., 4, 301)։ «Եկել* խռնվել էին Երազգավորս *լայնածավալ Շիրակի բնակիչները» (Մուր., 4, 399)։ «*Գամ թափառելու ափերդ, *Արազ» (Իս., 1, 190)։*

Հայցականը կարող է արտահայտել և՛ ներգոյականով կամ տրականով տեղի պարագայի, և՛ ուղղության խնդրի իմաստ։ Այսպիսի լրացումներ ստանում են սակավաթիվ բայեր, որոնցից կարելի է նշել՝ դասել, շարել, գցել, անցկացնել *և այլն։*

«Իսկ դու սուր ցցեցիր *թագուհու* սիրտը» *(Մուր., 4, 25)։ «Հարկավ այդ վարդապետը պաշտելի դյուցազանց* կարգը կդասե *յուր ազգակցին» (Մուր., 4, 43)։ «Իր ադամանդակուռ*

մատանին անց էր կացրել *նրա մատը»* (*ՋԴՍՆ, 2, 384*)։ «Ծամփուրը կշարի *մեզ»* (*ԴԴՎ, 504*)։

Անհրաժեշտ է կանգ առնել ներգոյականի իմաստով հայցականի գործածության մի երկու առանձնահատկության վրա։

Շնորհիվ այն հանգամանքի, որ նույն բայը կարող է տարբեր իմաստներով լրացումներ ստանալ, հնարավոր է դառնում մի քանի կապակցություններ տարբեր ձևով մեկնաբանել։ Այս կապակցությունների մեջ հայցականով լրացումը կարելի է համարել և՛ ներգոյականի իմաստով տեղի հայցական, և՛ ուղիղ խնդիր։

«*Քառասուն տարի* իշխում էր Սասուն» (*ՀԹ, 2, 97*)[1]։ «Գըրպաններս ման եկա *ու ճանապարհ ընկանք»* (*ՀԹ, 1, 412*)։ «*Խաչերի* դուռը *շատ* եմ ման եկել» (*ՆԴ, 1, 29*)։ «*Թեկուզ և հագնես երկաթի տրեխ, Փնտրես*՝ կանչելով աշխարհ *բովանդակ, Էլ չես հանդիպիլ նրան ոչ մի տեղ»* (*ՀԹ, 2, 77*)։

Իհարկե նկատի չունենք այն դեպքերը, երբ բայը, փոխաբերաբար գործածվելով, տեղ ցույց տվող գոյականը իբրև ուղիղ խնդիր է ստանում, ինչպես՝ «Նորահացի անուշ հոտը դուռ ու երդիկը բռնեց» (*Իս., 2, 34*)։

Մի շարք բայերի՝ հայցականով լրացումը կարող է երկու մեկնաբանություն ունենալ։ Դա կամ տեղի հայցական է, որն արտացոլում է ուղղության-ուղևորության իմաստների միասնություն, կամ ուղիղ խնդիր է։ Խոսքը վերաբերում է լցնել, շրջագայել, ձգել *և որոշ այլ բայերի։ Այսպես, երբ ասում ենք (ջուրը)* լցնել բաժակը, *ապա այստեղ* բաժակը *ուղղության-ուղևորության իմաստներ ունի։ Դա պարզ կդառնա, երբ համեմատենք «Ջուրը* լցվեց բաժակը» *նախադասության հետ, որտեղ* բաժակը *դարձյալ հայցական է՝ վերը նշված երկիմաստությամբ* (*հմմտ. «Ամպերն եկել են սարերը պատել,* Ձորերը լցվել, *իրար փաթաթվել»* (*ՀԹ, 2, 49*)։ *Իսկ եթե ասում ենք՝ «Երկար կոթավոր* շիբուխը լցրեց» (*ՀԹ, 2 36*), *ապա* շիբուխը *ուղիղ խնդիր է՝ դարձյալ պարագայական լրացուցիչ նրբերանգով։ Այսպիսի կապակցություններ կան նաև հետևյալ նախադասություններում։*

«*Խիժալի եղևինը խնկահոտ լուսավորությամբ* լցրեց *ամբողջ* քարանձավը» (*Բ, 7, 229*)։ «*Եվ ծաղիկները այդ սուրբ շշուկով*

[1] *Հիշենք, որ նույն հատվածում ասում է. «Սասմա* սարերում նստած էր *իշխան»*։

իմ սիրտը լցրին» (ՎՏ, 1, 11)։ «Դուրս նայից տեսավ նորեկ արևը Երկնքի ծայրը հրդեհ էր ձգել» (ՀԲ, 2, 222)։

Այստեղ ևս պետք է հիշել, որ հնարավոր է, որ հայցականը լինի երկու և ավելի տարբեր իմաստով հայցական պահանջող բայերի լրացում, և այդ դեպքում նրա առաջնային իմաստը բխում է մերձավորագույն բայերից։ Օրինակ՝ «Մեր բանը պըրծավ, երբ էս ձորերի Մրտերը սրանք էլ եկան սովրեցին» (ՀԲ, 2, 33)։

Վերջապես պետք է նշել, մի երևույթ ևս։ Նախադասության մեջ երբեմն տեղի հայցականը ներգոյականի իմաստով կարող է գործածվել իր լրացում երկրորդական նախադասության ազդեցությամբ։ Այսպես է գործածված հայցականը նախադասության մեջ. «Ու ահա այն խանութը, ուր ես անում էի իմ գնումները—հանդիպեցի Քնարիկին՝ մի վեց ձեռին» (ՍԶ, 2, 199)։ Իրականում այստեղ անկապակցություն կա. խանութը հանդիպեցի կապակցության փոխարեն պիտի լիներ խանութում հանդիպեցի: Բանն այն է, որ գլխավոր նախադասության մեջ խանութը բառը հայցականով է դրվել՝ «Ուր ես անում էի իմ գնումները» երկրորդական նախադասության ուր բառի ազդեցությամբ (որը հայցական է ենթադրում)։ Իհարկե այստեղ դեր է կատարել նաև այն հանգամանքը, որ գլխավոր նախադասության մեջ խանութը բառը սկզբնապես գուցե ենթակա կամ ստորոգելիական վերադիր լինելու միտում է ունեցել և հետագայում երկրորդական նախադասությունից հետո ընկած մասում է դարձել տեղի հայցական՝ ներգոյականի փոխարեն։

Ժամանակի հայցական.— Բայի լրացումը ցույց է տալիս գործողության կատարման ժամանակը։ Իմաստով այս հայցականը համարժեք է տրականին, մասամբ և ներգոյականին։

Ժամանակի հայցականով կապակցությունները ևս տարբեր տեսակի են՝ ըստ իրենց կազմության առանձնահատկության։

Առաջին խմբին պատկանում են այն կապակցությունները, որոնցում լրացումը չի փոխարինում այլ հոլովաձևերի, և կապակցությունը ժամանակակից հայերենին հարազատ է։ Այս դեպքում իբրև լրացում հանդես են գալիս ժամանակ ցույց տվող սակավաթիվ գոյականներ, ինչպես՝ ցերեկ, գիշեր, առավոտ. երեկո, օր, րոպե, վայրկյան, ժամ, ամառ, ձմեռ, աշուն, գարուն, տարի, շաբաթ, պահ, ժամանակ և այլն։ Սրանց մի մասը ժամանակի պարագա է դառնում նաև տրական, երբեմն էլ ներ-

դոյական հոլովներով։ Դրանցից են՝ առավոտ, երեկո, օր, ռոպե, վայրկյան, ժամ, պահ և այլն։

Հայցականով կապակցությունների համար բնորոշն այն է, որ այստեղ սովորաբար ժամանակ ցույց տվող բառը հանդես է գալիս որևէ լրացումով։ Այսպես, երբ ասում ենք «Ուրբաթ օրը նամեցիք տուր», ապա օրը բառը շարահյուսական տեսակետից ինքնուրույն միավոր չէ, այլ այստեղ ուրբաթ բառի հետ միասին է կատարում նախադասության մեկ անդամի դեր։ Իհարկե կան դեպքեր էլ, երբ ժամանակի հայցականը միայնակ է հանդես գալիս իբրև նախադասության մեկ անդամ։ Այսպես են՝ գիշեր, ցերեկ, ամառ, ձմեռ և նման բառեր։

«Լսեցի ցերեկն աղաղակ ու բոթ Գիշերը լացի մինչև առավոտ» (ՀԹ, 1, 89)։ «Գուցե գիշերս էլ՝ իր հերսից անքուն՝ Ուզում է ջահել քրոջն սպանի» (ՀԹ, 2, 59)։ «Ով, որ կանչում ես գիշեր ու ցերեկ» (ՀԹ, 2, 31)։ «Պարում է ձմեռն հարսանիքներում» (ՀԹ, 2, 39)։

Ավելի շատ են այն դեպքերը, երբ հայցականը հանդես է գալիս որևէ լրացմամբ։

«Սա մի ձև էր, որ կատարվում էր ամեն երեկո միևնույն կարգով» (Մուր., 4, 20)։ «Մնացած օրս էլ պսակ տային» (ՀԹ, 2, 86)։ «Հին աշխարհքը ամեն օր Հազար մարդ է մտնում նոր» (ՀԹ, 1, 149)։ «Եվ ամեն վայրկյան մեռնում է ներկան» (Իս., 1, 277)։ «Մի կերի տարի ես ու մեր Ավագը մարիքումը խոտ էինք պահում» (ՀԹ, 1, 332)։ «Մի ամառ էլ տավարի մեջ ցավ եկավ» (Բակ., 32)։

Հետաքրքրական է նշել, որ ժամանակի հայցականը երբեմն հանդես է գալիս հոգնակի ձևով։ Դա լինում է այն դեպքերում, երբ լրացում են դառնում ցերեկ, առավոտ, երեկո և այլ բառեր։

«Առավոտները դատարկ հետը տանում էր խանութը, երեկոները լիքը բերում» (ՆԴ, 1, 59)։ «Գիշերները լույս կտան» (ՀԹ, 2, 136)։ «Նա ցերեկներն զբաղվում էր գործերով, երեկոները փակվում էր սենյակում» (Շիրվ., 3, 66)։

Հոգնակի հայցականի առանձին գործածությունը որպես ժամանակի պարագա արդի հայերենում սովորական է։ Այդ հայցականն ըստ էության համարժեք է ամեն բառի և եզակի հայցականի կապակցությանը (գիշերները-ամեն գիշեր, առավոտները-ամեն առավոտ և այլն)։ Իսկ հոգնակի հայցականի հետ որևէ լրացման գործածությունը քիչ սովորական է, և դրա փո-

խարեն առավել գործածական է տրականը։ Սակայն պատահում ենք այսպիսի բազմաթիվ կապակցությունների։

«Վերջին օրերս նա շատ էր ընկել, նիհարել» (Իս., 3, 44)։ «Կիրակի օրերը ես չէի համարձակվում նրան մոտենալ» (Շիրվ., 8, 31)։ «Հետևյալ օրերը ճանապարհ ընկան Բյուզանդիա գնացող դեսպանները» (ԴԴՎ, 479)։ «Վերջին ժամանակներն ուրագը մի քանի անգամ վրա անելուց հետո շունչը կտրվում էր» (ՆԴ, 1, 27)։

Ժամանակի հայցականի երկրորդ կիրառությունը ժամանակակից գրական հայերենի ոգուն հարազատ չէ. այն բացահայտորեն տրականի կամ ներգոյականի փոխարեն է գործածված։ Այս կիրառությունն իհարկե սակավ է հանդիպում։

«Ջարդեց, փշրեց մինչև կեսօր, Կեսօր արևն ելավ հեղեղ» (ՀԹ, 2, 119)։ «Իսկ իրիկնադեմ ջիրիդ էր նշանակված» (ՀԹ, 1, 306)։

Կան մի շարք կապակցություններ, որտեղ բայի լրացումն արտահայտված է ժամանակի երկու հայցականով, որոնք առանձին վերցրած ներկայացնում են դարձվածքային կապակցություն և բայի հետ միասին ևս դարձվածք են։

«Տարին տասներկու ամիս անեծքներ էին միայն, որ թափվում էին նրա բերանից» (ՆԴ, 1, 65)։ «Եվ մեն մենակ, տարին մի օր Այգի ելնես մամուռ շիրմիս» (Իս., 1, 384)։

Ժամանակի երկու հայցականը կարող են նաև դարձվածք չկազմել։ Օրինակ՝ «Այդ օրը գիշերն էլ տուն չեկավ» (ՆԴ, 2, 472)։

Առանձին տեղ ունեն այն կապակցությունները, որոնցում բայի լրացումն արտահայտվում է մակբայի կամ այլ խոսքի մասի հետ կապակցված ժամանակի հայցականով։ Ընդ որում այստեղ գործ ունենք երկու տեսակ երևույթի հետ։ Մի դեպքում մակբայը կամ որևէ բառ և ժամանակի հայցականը կայուն կապակցություն են, ինչպես՝ առավոտ կանուխ, առավոտ վաղ, առավոտը ծեգին, երեկ առավոտ, առավոտ շուտ և այլն։

«Առավոտը կանուխ գալիս էր հյուրանոցից» (Իս., 4, 159)։ «Երեկ իրիկուն էդ կողքիդ սնից Կախ էին արած երեք հրացան» (ՀԹ, 2, 38)։ «Երևաց միայն երրորդ գիշերը շատ ուշ» (ՆԴ, 2, 472)։ «Առավոտները վաղ վեր է կենում» (ՆԴ, 2, 476)։ «Մենք ճամփա ընկանք առավոտ ծեգին» (Չ, 219)։ «Վաղն առավոտ կանուխ պիտի փողոց գնա» (Չ, 335)։ «Այս գիշեր լուսաբացին եմ քնել» (Շիրվ., 8, 479)։

Պատահում են դեպքեր, երբ նույն ձևի մեջ արտահայտ-

վում են ժամանակի և չափի իմաստները համատեղ։ Ընդ որում այդ ձևը կարող է հանդես գալ և՛ առանձին, և՛ լրացմամբ։

«Օր ու գիշեր նստած իր առանձնասենյակում, դավթարներ էր թերթում» (ՆԴ, 1, 144)։ «Ամբողջ ձմեռը նա Դվինում մաշվել էր անգործությունից» (Մուր, 4, 266)։ «Հետևյալ երկու օրը թըշնամին հարձակում չարավ» (Մուր., 4, 282)։ «Ու փերիներն էսպես տխուր երգում էին ողջ գիշեր» (ՀԹ, 2, 44)։ «Ամբողջ օգոստոս ամիսը ջուր էր ծախում» (ՍԶ, 4, 422)։ «Տանջվում ենք անվերջ— օրեր, տարիներ» (Ծ, 158)։

Ժամանակ ցույց տվող բառերը կարող են լինել ոչ միայն բայի ժամանակի պարագա լրացում, այլև դառնալ ուղիղ խնդիր, երբ հանդես են գալիս առարկայական իմաստով։ Այսպես. «Ցերեկը երկարացնում ենք էլեկտրական լույսով» (ՀՄՀԵ, 155) նախադասության մեջ ցերեկը ուղիղ խնդիր է (հմմտ. «Ցերեկը քնում է, գիշերը՝ աշխատում»)։

Երբեմն էլ նույն բայի մոտ ժամանակ ցույց տվող երկու հայցականներից մեկը ժամանակի պարագա է, իսկ մյուսը՝ կամ ուղիղ խնդիր, կամ չափի պարագա։ Օրինակ՝ «Վերջին մի քանի օրը նա անց էր կացնում այդտեղ երկար ժամեր» (Մուր., 4, 10)։

Սակայն պատահում են դեպքեր, երբ որոշ բայերի խնդրառական ճկունության հետևանքով դժվար է որոշել, թե տվյալ հայցականը ինչ իմաստ ունի (ժամանակի՞ թե ուղիղ խնդրի)։

«Իշխանն ու թիկնապահը անցուցին այդ գիշեր Սևորդյաց ձորի գյուղերից մինում» (Մուր., 4, 153)։ «Ամբողջ երեկոն Ալիմյան ընտանիքն անցկացրեց հուզված և դրդված» (Շիրվ., 3, 197)։ «Այստեղ է միայն ապրել ամբողջ կյանքը» (ՍԶ, 8, 270)։

Չափի հայցական.— Բայի լրացումը հայցականով կարող է արտահայտել զանազան չափային հարաբերություններ։ Չափը ընդհանուր իմաստի անվանումն է. այն կարող է տարբեր բովանդակություն, կոնկրետ դրսևորումներ ունենալ։ Չափը կարող է լինել տարածական, ծավալային, ժամանակային, կշռային և այլն։ Ըստ այսմ էլ չափի հայցականն ունի ենթատեսակներ՝ ժամանակային չափի, տարածական չափի, ծավալային չափի, կշռային չափի և այլն։

Ա. Ժամանակային չափի հայցական.— Սա ժամանակակից հայերենում ամենից շատ տարածվածն է։ Բայի լրացումը կարող է արտահայտվել երկու ձևով. ա) հայցականով առանձին, առանց լրացումների, բ) լրացում ունեցող հայցականով։

Առանց լրացումների ժամանակային չափի իմաստ արտա-

հայտում են ժամանակ ցույց տվող դոյականները, և այս դեպքում չափի հայցականը արտաքուստ նման է ժամանակի հայցականին։ Սա համարժեք է երկար, շատ կամ երբեմն մեկ բառով լրացում ունեցող հայցականներին։

«Ամեն հնչյունը դարեր է ապրում» (Իս., 2, 57)։ «Կռիվը օրեր տևեց» (Իս., 3, 47)։ «Ծայր տվին խնջույքներն ու գինարբուքները օրեր ու գիշերներ» (Իս., 3, 367)։ «Բայց ահա տարիներ տևում էր այս անհանդուրժելի վիճակը» (ԴԴՎ, 35)։ «Այս բանակցությունները ամիսներ տևեցին» (Մուր., 4, 266)։ «Երկու ժամ տևեց Ավետիքի նինջը» (ՎԽԴԼ, 54)։

Կապակցությունների այս տեսակը քիչ է տարածված։ Սովորաբար չափի իմաստի արտահայտման նպատակով ժամանակ ցույց տվող դոյականը (ժամանակի միավորը) որևէ լրացումով (թվականով, դերանվամբ, կամ այլ ձևով) է արտահայտվում՝ դրանով իսկ տարբերվելով ժամանակի հայցականից, որի մոտ նման լրացումները քիչ են լինում։

«Հազիվ մի քանի ժամ մնաց մեզ մոտ արքայորդին» (Մուր., 4, 45)։ «Ամբողջ երկու տարի բուն Հայաստանը կռվի և արյան դաշտ էր դարձած» (Մուր., 4, 73)։ «Տեսությունս հետաձգում եմ մի օր» (Մուր., 4, 342)։ «Ամբողջ մի ամիս խումբը զինավառ Սարեր ու ձորեր ոտնատակ տվեց» (ՀԹ, 2, 61)։ «Երեք գիշեր ու երեք օր Բոթը տվին Դավթի մահվան» (ՀԹ, 2, 27)։ «Տասնյակ տարիներ ապրեց խալիֆաների հոյակապ քաղաքում» (Իս., 2, 45)։ «Հայացքիդ ծովի մեջ գեթ մի պահ Թող հանգչեմ սրտիս Հուր—տենչերով» (Իս., 1, 200)։

Ժամանակային չափի հայցականի մի յուրահատուկ գործածություն էլ կա։ Այս դեպքում հայցականը որևէ լրացումով (սովորաբար թվական) կամ միայնակ զուգակցվում է թվական կամ քանակ ցույց տվող այլ բառի և անգամ կապի, և կազմված բաղադրյալ կապակցությունը դառնում է ժամանակային չափի ու քանակի լրացում։

«Բժիշկը շաբաթը երկու անգամ կանոնավորապես այցելում էր նրան» (ՆԴ, 1, 226)։ «Օրը երկու անգամ պտույտի էին հանում հանցավորներին» (Իս., 3, 105)։ «Օրամեջ կամ երկու օր մեկ անգամ վերցնում էր հավերի ածած ձուն և դնում թաղի մանրավաճառի մոտ» (ՆԴ, 1, 77)։ «Օրը երկու-երեք անգամ կարճ, բայց սաստիկ անձրև էր գալիս» (ՍԽՀ, 617)։

Երբեմն հայցականի փոխարեն կարող է գործածվել ական ածանցով կազմված ածական՝ նույն նշանակությամբ։

«*Սաթո մայրիկը* օրական երկու անգամ ցախ կրում էր» (*ՔԹՈՀ, 206*)։ «Օրական մի *քանի ձուկն* է աշխատում» (*ՀԹ, 1, 459*)։

Բ. Տարածական չափի հայցական.— *Այս դեպքում բայի լրացում լինում են տարածական չափի միավոր գոյականները՝ որևէ լրացմամբ (թվական, դերանուն և այլն)*[1]։ *Իբրև չափի միավոր կարող են հանդես գալ տարածական զանազան չափեր ցույց տվող բառերը, ինչպես՝* մետր, կիլոմետր, փարսախ, մղոն, հեկտար, քառակուսի մետր, քառակուսի կիլոմետր, գազ *և այլն*։

«*Նա* հեռացել էր *բանակից* մի քանի փարսախ» (*Մուր., 4, 496*)։ «*Մեկ շնչով հանդարտ* Թռա քառասուն գազ» (*Իս., 2, 246*)։ «*Սենեկապետն ու սպասավորները* քաշվեցին պատշաճ հեռավորություն» (*ԴԴՎ, 133*)։ «*Տրակտորը* հերկեց հիսուն հեկտար»։ «*Մեքենան* անցավ 1000 կիլոմետր»։

Գ. Ծավալային չափի հայցական.— *Այս դեպքում բայի լրացում դառնում են ծավալ ցույց տվող չափի միավոր գոյականները, ընդ որում դրանք կարող են լինել նորմավորված* (լիտր, խորանարդ միլիմետր, խորանարդ սանտիմետր, խորանարդ մետր, սաժեն, դույլ, տակառ) *կամ պայմանական* (գըրպան, գիրք, տուն, սայլ, մեքենա *և այլն*)։ *Այս գոյականներն ունենում են թվականով, դերանվամբ արտահայտված որևէ լրացում*։

«*Արբեցնում է արևի խանդավառ երազներով նրան, ով մի* թաս *միայն* խմում է *արևի գինուց*» (*Իս., 3, 390*)։ «*Այդ քարից* տեղափոխել ենք հինգ մեքենա»։ «*Վառելափայտից* պակասել է երեք խորանարդ մետր»։

Դ. Կշռային և այլ չափի հայցական.— *Բայի այս լրացումը ցույց է տալիս գործողության կշռային և այլ կարգի չափը։ Լրացումն արտահայտվում է համապատասխան չափի միավոր գոյականով* (գրամ, կիլոգրամ, փութ, ցենտներ, տոննա, ֆունտ, ռուբլի, կոպեկ *և այլն*) *և նրա լրացմամբ* (*թվական, դերանուն և այլն*)։

«Երեք հազար լիտր էր կշռում *հսկայական իր մկունդը*» (*ՀԹ, 2, 126*)։ «Մի կշռեք *եդ սամծիցդ* տուր» (*Իս., 3, 511*)։

---

[1] *Կապակցությունների այս տեսակը, մասնավորապես գոյականի լրացման դեպքում, մանրամասնորեն քննված է «Գոյականի լրացումը թվականով» հատվածում*։

«Հարցրեց ծայր աստիճան զարմացած» (ՆԴ, 1, 6)։ «Հավը խոսեց երեք բերան» (ՀԹ, 1, 164)։

Չափի իմաստ ունեցող հայցականը ներգործական սեռի որոշ բայերի լրացման դերում հանդես գալիս կարող է մեկնաբանվել նաև իբրև ուղիղ խնդիր։

«Ուրեմն դատարկենք դարձյալ մի գավաթ և անցնենք բուն խնդրին» (Մուր., 5, 303)։ «Իմ քաշերից կտամ քեզ մի գունդ» (Մուր., 4, 45)։ «Նրանցից գոնե մի քանի վայրկյան վերադարձնեին այժմ ինձ» (Մուր., 4, 59)։ «Մեկ բուռն ահա ես տալիս եմ մկներին, Այս մեկ բուռն էլ ագռավներին, ծտերին» (ՂԱ, 9)։ «Պատվիրեց, որ մի շիշ էլ բերեն» (ՆԴ, 2, 466)։

Պատահում են դեպքեր, երբ որևէ բայի հետ գործածված նույն ձևը կարող է դիտվել թե՛ չափի հայցական, թե՛ ուղղականով դրված ենթակա։ Այսպես կարող են մեկնաբանվել հետևյալ նախադասությունները, որոնց ստորոգյալը չեզոք սեռի բայ է. «Անցավ մի երկու օր» (Մուր., 4, 223)։ «Ջրանցքի առաջը բանալու համար մնացել էր միայն մի քանի քայլ» (Մուր., 4)։ «Անցավ դարձյալ մի հինգ րոպե» (ՆԴ, 1, 17)։

Նպատակի հայցական.— Ժամանակակից հայերենում բայի՝ նպատակի պարագա լրացումը սովորաբար տրականով է դրվում։ Սակայն շնորհիվ այն բանի, որ բայերի խնդրառության գրաբարին հատուկ որոշ երևույթներ դեռևս վերապրուկային արտացոլում ունեն արդի հայերենում, կան բազմաթիվ կապակցություններ, որոնցում նպատակի հարաբերությունը արտահայտվում է ոչ թե տրականով, այլ հայցականով, որը գրաբարից տարբերվում է նրանով, որ չունի նախդիր (գրաբարում ի նախդիրը գործողության անուն գոյականների հայցականի հետ նպատակ էր ցույց տալիս)։ Նպատակի հայցականը արդի գրական լեզվում մեծ մասամբ արտացոլվում է իբրև տարբեր հեղինակների միջոցով բարբառներից թափանցած ձև։ Հայցականի այս կիրառությունը բնորոշ է Հ. Թումանյանի, Իսահակյանի, Դեմիրճյանի և մի քանի այլ հեղինակների ստեղծագործությունների լեզվին։

Պետք է նշել, որ Մ. Աբեղյանը գրաբարյան ի նախդիր+հայցական կառուցվածքի՝ նպատակի իմաստով գործածության այս արտացոլումը, այսինքն՝ նպատակի հայցականի առկայությունը ժխտում է՝ դա մի շարք այլ ձևերի, այդ թվում և կրկնակի հայցականի հետ միասին մտցնելով ուղղական ստորոգելիական վերադրի մեջ։ Այսպես, գալ, գնալ, ուղարկել, տանել, բերել, ել-

նել, դուրս գալ և այլ բայերի մոտ հայցականը համարում է ուղղական սարքավիլիական վերադիր[1], թեև ինքն էլ ընդունում է, որ գնալ, գալ, ուղարկել, կանչել բայերի մոտ հայցականը նպատակի իմաստ էլ ունի[2]։ Սրանից էլ ելնելով՝ Վ. Առաքելյանը գտնում է, որ «Նպատակայնություն արտահայտում են այնպիսի գոյականները, որոնք իրենց մեջ պոտենցիալ գործողություն են բովանդակում կամ կապված են մի նույնպիսի գործողության հետ», ապա՝ «Նպատակի հայցականը իր ծագումով կամ գոյականացած բայ է, կամ կողմնակի ուղիղ խնդիր՝ կողմնակի նպատակային սարքավորյալը կորցրած»[3]։

Անշուշտ ճիշտ է, որ նպատակի հայցականը գործողության հետ է կապվում, առարկայացած գործողություն է ցույց տալիս։ Սակայն արդի հայերենում առկա է նպատակի հայցականի նաև գրաբարյան վերապրուկային գործածությունը։ Իսկ վերջինիս դեպքում նպատակի հայցականը նաև ոչ գործողության անունով է արտահայտվում։ Այնպես որ նպատակի հայցականի երկու շերտ է զուգակցվում արդի հայերենում՝ բարբառներից թափանցած և գրաբարյան վերապրուկային։

Նպատակի հայցական պահանջում են մեծ մասամբ ուղղություն ցույց տվող բայերը, ինչպես՝ գնալ, գալ, ուղարկել, բերել, դուրս գալ, քշել, տանել և այլն։ Լրացում լինում են մեծ մասամբ բայական ծագում ունեցող գոյականները (գործողության անուն), ինչպես՝ տես, տեսություն, զանգատ, կռիվ, պատերազմ, քննություն, ճաշ, կիր, պսակ և այլն։

«Վերևից մի մարդ եկավ քննություն» (ՀԲ, 2, 40)։ «Ու չեկավ նա տես» (ՀԲ, 2, 50)։ «Կռիվ տի գրնամ ես Դավթի վրա» (ՀԲ, 2, 114)։ «Դու պսակ կերթաս քո նոր յարի հետ» (Իս., 1, 160)[4]։ «Գնացին թագավորի մոտ զանգատ» (Իս, 2, 495)։ «Դուրս է եկել մեր դեմ կռիվ» (ՍՁ, 8, 346)։ «Վեր կկենա ռա-միկը պատերազմ» (ԴԴվ, 125)[5]։ «Թուշեի չքնաղ իմ սիրածին տես» (Իս., 1, 371)։

Պետք է դիտել, որ նպատակի հայցականը շատ դեպքե-

---

[1] Մ. Աբեղյան, նշվ. աշխատ., էջ 400—404։

[2] Նույն տեղում, էջ 415։

[3] Վ. Առաքելյան, նշվ. աշխատ., էջ 58։

[4] Նույն հատվածում Իսահակյանը գործածել է նաև պսակի կերթա կապակցությունը։

[5] Նույն տեղում կա նաև վեր է կացել պատերազմի կապակցությունը։

րում զուգակցվում է ուղիղ խնդրին, այսինքն՝ նրա լրացյալն ունենում է միաժամանակ ուղիղ խնդիր:

«Աշխարհ բեր կիր» *(ՀԹ, 2, 69): «Խլաթ քաղքի թագավորի* դուստրը խոսեց *նրան* կին» *(ՀԹ, 2, 131): «Բերում են* մեռելներին դնում *այս շենքի մեջ թաղումներին* կեր» *(ԴԴՎ, 532): «Հո* չենք թողնելու քեզ *գայլի* նաշ» *(ԴԴՎ, 617):* «Բերել եմ *կարմիր* սիրտը *Նախիի Ձեր կարմիր հրին— կարմիր* ողջակեզ» *(Չ, 257): «*Թաշկինակներ է կարում *ինձ համար* նվեր» *(ՀԱՀԵՄ. 138): «Ու չե՞ս ասել, դու, անամոթ,* Մինը ծառա դրկես *ինձ մոտ» (ՀԹ, 1, 238):*

Իսկ եթե ներգործական բայի մոտ միայն մեկ լրացում կա, ապա այն կարող է երբեմն մեկնաբանվել և՛ նպատակի, և՛ ուղիղ խնդրի իմաստներով:

«Ուզում էր, որ Անանը ճշար, աղաղակեր, լաց լիներ, օգնություն կանչեր» *(ՆԴ, 1, 67): «Ցասկոտ լեզվով* կանչում *իրան* աջակից» *(Նեկրասով, Ս, 351):*

Գրական լեզվում նպատակի հայցականի ու սովորական լինելու պատճառով բազմաթիվ կապակցություններ վերածվում են բայական հարադրության: Շատերը գտնվում են հենց այդ պրոցեսում:

«Գերի տարան *արքաների նշխարները» (Ր, 7, 179): «Հա կասակ իմ ցանկություն է եկել* ճյուր նստել *տանս» (ՆԴ, 2, 502).*

Սակայն շատ կապակցություններ վերածվել են բայական հարադրության, թեև պետք է նշել, որ այդ հարադրություններից մի քանիսի մեջ բաղադրիչների զոդումը թույլ է: Դրանցից են՝ նվեր բերել, նվեր տալ, նվեր տանել, թուխս դնել, թուխս նստել. ուխտ գնալ, ճյուր ընկնել, զինվոր տանել, աշակերտ տալ, բաժին ընկնել, բաժին տալ *և այլն:*

«Նա ինքը պատրաստ էր իր կյանքը նվեր բերելու» *(ԴԴՎ, 609): «Ուրիշները դեռ* թուխս էին նստել» *(ԳՄԼՉ, 293): «Ժողովուրդը* ուխտ էր գնում, *խունկ ծխում» (Իս, 4, 213):* «Հյուր ընկա *Անդրիաս քեռու տանը» (ՀԹ, 1, 386): «Մի վհատիր, եթե ավեր Եվ սուգն* ընկավ *քեզ* բաժին» *(ՀՀ, 112):*

Վիճակի և ձևի հայցական.— *Բայց շատ սակավ դեպքերում ստանում է նաև վիճակի և ձևի իմաստ ունեցող հայցականով լրացումներ, որոնք լրացյալի հետ մեծ մասամբ դարձվածք են կազմում: Այս հայցականը գոյացել է տարբեր ծագում ունեցող ձևերից, սակայն այժմ այն դիտում ենք ձևա-իմաստային մեկ միավոր՝ անկախ նրա ծագումից:*

Վիճակի իմաստ ունեցող հայցականը մի դեպքում համարժեք է նույնիմաստ տրականին և ներկայացնում է նրա բարբառային ձևը, այսինքն՝ տրականի փոխարեն գործածվել է հայցականը։ Այսպես, «Գավաթը ձեռքը սառը ջուր էր մատուցում» նախադասության մեջ գավաթը ձեռքը պետք է լիներ գավաթը ձեռքին[1]։ «Աղա Նազարը, քեֆը տեղը, խոսում էր ու խոսում (Իս., 2, 487)։ «Մեծ ընտանիքը կառավարում էր Օհաննեսի մայրը՝ պատկառելի նանին, շերեփը ձեռքը, իբրև իշխանական գավազան, հրամայում էր մեծին ու պստիկին» (Իս., 4, 77)։

Վիճակի հայցականը կարող է հանդես գալ նաև միայնակ։ Առանց լրացման վիճակի հայցական պահանջում են սակավաթիվ բայեր, որոնցից բնորոշ է տեսնել բայը։

«Իր եղբայրներին տեսնում էր գերի» (Իս., 2, 197)։ «Անապատում է տեսել մեզ, գազան չի տեսել» (ԴԴՎ, 695)։ «Վերջապես գտել է Ձոհրային արդեն ամուսնացած ու երկու երեխայի մայր» (ՁԴԱՎ, 60)։

Ձևի հայցականը ևս կազմությամբ միատեսակ չէ։ Մի դեպքում գործ ունենք գոյականաբար գործածված ածականի հայցականի հետ, որն անվերապահորեն ձևի պարագա է։ Այսպես, ասում ենք՝ ճիշտը խոսել, ուղիղը դատել, որոնք ծագմամբ բարբառային են և գուցե ուղիղ խնդրից են վերածվել պարագայի։ Օրինակ՝ «Անուշը թողեք ուղիղն ինձ ասի» (ՀԲ, 2, 63)։

Սակայն ձևի իմաստը կարող է արտահայտվել նաև գոյականի հայցական հոլովով՝ առանց ածականի միջնորդության։ Այս գործածությունը վերապրուկն է գրաբարյան նախդրավոր հայցականի (ի+հայցական), որը գործիականի իմաստ էր արտահայտում (երդնուլ ի հուր, ի ջուր–երդվել հրով, ջրով)։

«Շրջապատման փորձի դեպքում իսկույն թևերը բաժանվում են երկու մասի և ուղիղ ճակատ հարձակվում թշնամու թևերի վրա» (ԴԴՎ, 533)։ «Կերակուրների տեսակը... և հանգիստ զրույցը Վարդանի առջև նկարում էր աստանդական քոչվորի վայրենի կենցաղ ապրող մի նահապետական արքա» (ԴԴՎ, 572—573)։

Ձևի պարագա է դառնում հայցականը նաև այն դեպքում, երբ ածական լրացմամբ բարդ բառի արժեքով բայի հետ է գործածվում, ինչպես՝ պատասխանել կես բերան։ Օրինակ՝ «Թովմայի ողջույնին պատասխանեց կես բերան» (ՍԽՄԽ, 634)։

---

[1] Տե՛ս «Վիճակի տրական» հատվածը։

Դժվար չէ նկատել, որ այստեղ կես բերան համարժեք է կիսաբերան բարդ բառին։

Հայցականը երբեմն միայնակ կատարում է իբրև, որպես կապերի և նրանց խնդրի դեր՝ ձևի հարաբերությամբ կապակցվելով բայի հետ։ Այս գործածությունը, գրական լեզվին բնորոշ չլինելով, հանդիպում է խոսակցական լեզվին հատուկ կառուցվածքներում։ Օրինակ՝ «Ախ, երանի՝ ով մարդ կգա Ու մարդ կերթա անարատ» (ՀԹ, 2, 145)։

Հայցականի հետ չի կարելի շփոթել հայցականաձև մակբայները, ինչպես շեշտ և այլն։ Օրինակ՝ «Տիգրանին զգաց, որ մեկը շեշտ իրեն է նայում» (ՁԴԱՎ, 286)։

Այլ իմաստի հայցական.— Կան մի շարք կապակցություններ, որոնց լրացումն արտահայտում է հայցական հոլովի սովորական իմաստներից տարբերվող նշանակություն։ Դրանք միատեսակ չեն, սակայն զգալի մասը դարձվածքի արժեք ունի։ Այսպես, մի գլուխ ձևը բայի լրացման դերում ընդհանրական պարագա է։ Օրինակներ՝ «Ճանապարհին մի գլուխ բղավում էր կողերի մեջ զգացած անտանելի ծակոցներից» (ՆԴ, 1, 42)։ «Մի գլուխ հետաքրքրվում էր նրա կյանքով» (ՁԴՄՆ, 2, 363)։

Մի քանի տեղ, որոշ տեղեր կապակցությունները բայերի մոտ սահմանափակման իմաստ են արտահայտում։ Օրինակ՝ «Բաշերի հողը մի քանի տեղ թափվել էր» (Մուր., 5, 267)։

Կրկնակի հայցական[1].— Ժամանակակից հայերենում ևս, ինչպես գրաբարում էր, կան մի շարք բայեր, որոնք պահանջում են երկու ուղիղ խնդիր (խոսքը բազմակի լրացումներին չի վերաբերում), որոնք իմաստային տեսակետից նույն հարաբերությունը չունեն լրացյալի նկատմամբ։ Կրկնակի հայցական ունեցող բայի առաջին հայցականը կարող է լինել կամ գործողության սոսկ առարկա, կամ ազդվող առարկա, իսկ երկրորդական ուղիղ խնդիրն արտահայտում է կա՛մ հետևանքի, կա՛մ վերածման հարաբերություն։ Իհարկե հետևանքի և վերածման իմաստները ևս կապված են իրար հետ, ուստի և չենք առանձնացնում։ Կրկնակի հայցական պահանջող բայերից են՝ անվանել, կոչել.

---

[1] Մ. Աբեղյանը կրկնակի հայցական հասկացությունը չի ընդունում աշխարհաբարում։ Գրաբարյան կրկնակի հայցական պահանջող բայերի օրինակով աշխարհաբարում նույնպիսի խնդրառություն ունեցող բայերի երկրորդական ուղիղ խնդիրը համարում է ուղղականով ստորոգելիական վերադիր (տե՛ս «Հայոց լեզվի տեսություն», Երևան, 1965, էջ 402—404)։

համարել, կարգել, սահմանել, ճանաչել, ընդունել, շինել, դարձնել, անել, սարքել, հռչակել, զգալ *և այլն։*

«*Ես այդ ես* համարել եմ *Հայ գյուղացու բնավորության համակրելի գծերից* մեկը» *(Մուր., 5, 259)։* «*Նա* Ցլիկ-Ամրամին կարգեց *Ոստիկի* վերակացու» *(Մուր., 4, 120)։* «Դրադարանս շինում *եմ* կասսա» *(ՀԹ, 2, 95)։* «*Խնչույք է սարքել Թմկա տիրուհին,* Ցերեկ է արել *խավար* գիշերը» *(ՀԹ, 2, 139)։* «Վիպասանին ճանճար ասին, *Մենք էլ* արինք... սատվածաքան» *(ՀԹ. 1, 185)։* «*Ես հենց* ճեզ եմ ընտրում *ինձ* ընկեր» *(ՀԹ, 1, 427)։* «*Հարևաններս* անունը դնում են Անքան Հուռի» *(ՀԹ, 1, 480)։* «Արտասուքս գետ կշինեմ» *(ՀՀ, 81)։* «Ում *որ* եղբայր անվանեցի, ինձ թշնամի իմացավ» *(ՀՀ, 142)։* «*Ես* ինձ զգում եմ *քննություն տվող աշակերտ ուսուցիչների առաջ*» *(ՍՉ, 3, 411)։*

Երկրորդական ուղիղ խնդիրը լրացյալի հետ հակում ունի վերածվելու բայական հարադրության։ Այդ առանձնապես ակնհայտ է ներգործական բայը կրավորականի վերածելիս, երբ երկրորդական ուղիղ խնդիրը դառնում է ստորոգելիական վերադիր։ Այսպես, «Երեխային Վարդան *անվանեցին» նախադասությունը կրավորական դարձնելիս կստանանք «Երեխան Վարդան անվանվեց», որտեղ հայցականը վերածվեց ուղղականի՝ դառնալով ստորոգելիական վերադիր։ «Բնակավայրը կոչում են Արտաշատ» նախադասությունը կրավորականի փոխելով կստանանք՝ «Բնակավայրը* Արտաշատ *է կոչվում», որտեղ* Արտաշատ *երկրորդական ուղիղ խնդիրը վերածվեց ուղղական ստորոգելիական վերադրի։*

Դիտողություններ հայցականով խնդրառության առանձնահատկությունների վերաբերյալ.— *1. Մի շարք բայերի խոնարհման փոփոխության և սեռային տեղաշարժի հետևանքով ժամանակակից հայերենում երբեմն չեզոք բայը նմանվում է նույնահիմք ներգործականին։ Այս դեպքում արտաքուստ հայցականին նմանվող ձևը իրականում ուղղական է (ստորոգելիական վերադիր) և ոչ ուղիղ խնդիր, հետևաբար բայի հետ տվյալ ձևը բառակապակցություն չի կազմում։ Այսպես են* խոզ կտրել (=խոզ կտրվել-խոզ դառնալ, *այսինքն՝ շատ գիրանալ),* փուշ կտրել (=փուշ կտրվել-փուշ դառնալ, *այսինքն՝ փշի նմանվել) և այլն։ Սրանք, ինչպես երևում է բերված օրինակներից, դարձվածք են։* «*Որքան շուտ* ցեխ էր կտրում *հողը, այնքան էլ արագ ցամաքում էր*» *(ՎՓ, 4, 290)։* «*Եղեմ այգին* կտրի *թող* փուշ» *(ՀԹ, 2, 147)։* «*Վարդերս ամեն* փուշ կտրեցին» *(ՀԹ, 2, 148)։*

«Ջինջ աղբյուրը, մեկ էլ տես՝ Ցամաք կտրավ, *քար դառավ» (Իս., 1, 74)։ «Աչքս ջամփին* ծով կտրավ» *(Իս., 1, 97)։ Վերջին երկուսի մեջ* կտրավ *ձևը գրաբարյան իմաստով է գործածված (այսինքն՝* կտրավ=կտրվեց*)։ Այս դարձվածքների ճիշտ ձևերն են՝* փուշ կտրվել, ցեխ կտրվել *և այլն։ Օրինակ՝ «Մարությանն* ապուշ կտրված *միայն նայում է իր դեմքին» (ՆԴ, 3, 502)։*

2. Այն պատճառով, որ բայը լրացումներ կարող է ստանալ ոչ միայն հոլովվող, այլև չթեքվող խոսքի մասերով (մակբայ, ածական և այլն), երբեմն հանդիպում են այնպիսի բառակապակցություններ, որոնցում լրացման խոսքի մասային պատկանելությունը որոշելը դժվար է։ Այսպես, հայտնի է, որ ածականը կարող է դառնալ բայի լրացում (պարագա), ինչպես՝ հանգիստ աշխատել, ծանր շնչել, ուրախ բարևել *և այլն։ Միաժամանակ պետք է նշել, որ ածականը գոյականաբար գործածվելիս էլ կարող է դառնալ բայի լրացում, ինչպես* հանգիստը խանգարել, ծանրը բողնել, բերկը վերցնել *և այլն։ Այն դեպքում, երբ ածականը բայի հետ գոյականաբար գործածվելիս անորոշ առումով է դրվում, արտաքուստ նման է պարագա դարձող ածականին։ Տվյալ ձևի խոսքիմասային պատկանելությունը որոշվում է բնագրով։ Այսպես, հետևյալ նախադասություններում գործածված ձևը հայցական է (ուղիղ խնդիր կամ ձևի պարագա)։*

«Բայց ես չեմ ցանկանա նրա չարության փոխարեն՝ չար գործել» *(Ր, 7, 380)։ «Արամախանյանցը միշտ ձգտում էր նրանց* խորը թափանցել» *(Շիրվ., 8, 513)։ «Երբեք* չեմ բանա *սրտիս* մութը *փակ» (ՎՏ, 1, 36)։ «Եվ գիտես, որ զուր* հանգիստ ես խնդրում *Հուսահատության տառապանքներից» (ՀՀ, 63)։ «*Հանգիստ չտեսավ *իմ տանջված հոգին» (ՀՀ, 85)։*

Իսկ գույն ցույց տվող ածականները հագնել *բայի հետ կարող են երկու ձևով մեկնաբանվել. մերթ՝ իբրև գոյականաբար գործածված ուղիղ խնդիր, մերթ՝ պարագա։*

«Բոլորն էլ ճերմակ *կամ* կապույտ հագած՝ *կանգնում էին, բարձրանում» (ՍԶ, 4, 452)։ «*Կանաչ հագան *մեր հովիտներն անեղերք» (ՀԱՀԵՄ, 352)։*

3. Մի շարք բայեր ուղիղ խնդիր պահանջում են հիմնականում երկրորդական նախադասությամբ կամ անորոշ դերբայով։ Դրանցից են՝ սկսել, շարունակել, կամենալ, ցանկանալ, կարգադրել, հրամայել *և այլն։*

«Սկսեցի աշխատել»։ «Շարունակեց, *ինչ կիսատ էր թողել*»։ «Կամենում է, *որ իրեն* օգնեն»։ «Ցանկանում եմ, *որ վե-*

բաղադրանք»։ «Յանկացավ գնալ»։ «Կարգադրել է, որ մեկնեմ»։ «Կարգադրեց մեկնել»։

Այս բայերը, սակայն, երբեմն ստանում են նաև գոյականի հայցականով ուղիղ խնդիր։

«Շարունակում էր հետո իր խրատը, բայց Գիքորը հորը թինկը տված քնել էր արդեն» (ՀԹ, 1, 315)։ «Ու ես սկսեցի հարցուփորձ» (ՆԴ, 2, 494)։ «Ես չկամիմ ոչ քո փառքը, գիտությունը, Ոչ քո ոսկին և ոչ խարդախ ստությունը» (ՀՀ, 51)[1]։ «Կարգադրում էր անհրաժեշտ գործերը» (Շիրվ., 3, 329)։ «Միշտ ախորժել էր նա ոգելից խմիչքները» (Իս., 3, 210)։ «Ուրախությունն է՞լ ես հրամայում» (ԴԴՎ, 491)։ «Տեղեկանալով բոլորը, կազմեց նա յուր ամենավստահ ծրագիրը» (Ր, 7, 442)։

4. Որոշ հեղինակներ երբեմն հայցականով խնդիր են դնում այնպիսի բայերի մոտ, որոնք կա՛մ ներգործական չեն, կա՛մ եթե ներգործական են, ապա այդպիսի խնդիր չեն կարող ունենալ։ Այսպես, Րաֆֆին գործածել է վարձատրել քաջությունը, պարգևատրել աշխատանքը կապակցությունները։ «Այսպես առատաձեռն պարգևներով վարձատրում էր խելացի տիկինը յուրաքանչյուրի քաջությունը» (Ր, 7, 360)։ «Ոսկեղեն հունձքը՝ յուր լիառատ բեղմնավորությամբ՝ պարգևատրում էր վաստակաբեկ շինականի աշխատանքը» (Ր, 7, 438)։ Վարձատրել, պարգևատրել բայերն անշուշտ ներգործական սեռի են, սակայն ուղիղ խնդիր պահանջում են անձի անունով, իսկ այստեղ իրի անունով է խնդիրը, որն այդ դեպքում կարող է պարագա դիտվել (հմմտ. «Նրան պարգևատրեցին քաջության համար»)։ Հավատալ բայը չեզոք սեռի է, սակայն Ստ. Զորյանը մի տեղ այն դարձրել է ներգործական՝ վստահել նշանակությամբ գործածելով։ «Սեթոյին տարօրինակ թվաց, որ բոլորն իրենց իրերը հավատացին սայլապաններին» (ՍԶ, 4, 445)։ Գտնել բայի ուղիղ խնդիրը գործողության արդյունք է (օրինակ՝ գանձ գտնել, աշխատանք գտնել), մինչդեռ նույն հեղինակը մի տեղ այն գործածել է հավանել իմաստով և հայցականը դարձրել գործողության սոսկ օբյեկտ։ Այս իմաստով խնդիրը հայերենին հարազատ չէ։ «Հետաքրքրվեց, թե Արամն ինչպես գտավ Նվարդին» (ՍԶ, 8, 39)։ Ս. Խանզադյանը ընկերակցել չեզոք բայը գործածել է ընկերացնել պատճառականի փոխարեն՝ հայցականով ուղիղ խնդիր

[1] Հմմտ. «Ես կամիմ լռիկ սրտումս պահել Սիրուն պատկերից անվերջ քաղցրություն» (ՀՀ, 54)։

դնելով. «Ես նրան կխնդրեմ, որ քեզ էլ ընկերակցի ինձ» (ՍԽՄԽ, 206)։

Իհարկե այսպիսի սխալ խնդրառության հետ չպետք է շփոթենք թեև անսովոր, սակայն օրինաչափ կապակցությունները։ Այսպես, Գ. Մահարին գործածել է ջուր լսել, երջանկություն պահակել կապակցությունները, որոնց բայերը այդպիսի լրացումներ սովորաբար չեն ստանում, սակայն կարող են այլ դեպքերում ունենալ (երգ լսել, ձայն լսել)։ Պահակել բայն էլ հեղինակի կողմից գործածվել է պահպանել, հսկել իմաստներով։

5. Ժամանակակից հայերենում արդեն ավարտված է անձի և իրի առումներով պայմանավորված հայցականի ձևը։ Սակայն գրական լեզվի զարգացման նախորդ շրջանում, մասնավորապես XIX դարի երկրորդ կեսին, մի շարք հեղինակներ (Րաֆֆի, Մուրացան, ավելի ուշ՝ Վ. Փափազյան և ուրիշներ) անձի հայցականը ուղղականաձև էին դնում, ինչպես գրաբարում էր։ Այս կիրառությունն այժմ սխալ է, թեև գեղարվեստական գրականության մեջ օրինակներ կան նաև արդի գրողների երկերում։

«Գնա և պատսպարիր քո Սահանույշը վերահաս վտանգներից» (Մուր., 4, 91)։ «Տեղավորեց նաև յուր ազատանի բիկնապահները» (Մուր., 4, 346)։ «Սիրեցի, յարս տարան» (Իս, 1, 105)։ «Ինքնակոչ բժիշկներն ընդունում են հիվանդը» (ՎՓ, 4, 8)։ «Այս-այն խանութը, այս-այն անցնող կինը զննելով՝ մտնում էին շուկայի խորքերը» (ՎՓ, 4, 10)։ «Կպատահեն դավաճաններ և ուրացողներ... Մեռուժանը չենք մոռացել» (ԴԴՎ, 196)։ «Հիշեց իր մանկությունը, իրենց ամրոցը, իր դայակը, որ հեքիաթներ էր պատմում» (ԴԴՎ, 207)։

Չափածո ստեղծագործություններում անձի ուղղականաձև հայցականի գործածությունը պայմանավորված է չափով կամ հանգով։ Օրինակ՝ «Էլի ես որբ ու արնավառ իմ Հայաստան յարն եմ սիրում» (Չ, 48) նախադասության մեջ յարը գործածված է նախորդ տներում եղած բառը, լարը, բույրը, պարը, քարը ուղղականաձև հայցականների հետ։

Սակայն նույն շրջանի հեղինակների երկերում հանդիպում են նաև իր ցույց տվող բառերի տրականաձև հայցականի գործածության օրինակներ։

«Բարի է քո ցանկությունը, բայց կատարել նրան անկարող ես» (Մուր., 4, 307)։ «Ով քաղցր անցյալ, որին սիրով ենք հիշում միշտ» (Մուր., 5, 298)։ «Քո խոսքերով դու այլևս չես նորոգիլ իմ ցավերը, այլ գուցե և մեղմես նրանց» (Մուր., 4, 31)։

«Բայց դրանց *կարելի՞ է* համեմատել *այն վշտերի հետ,* որոնց տանում *էր Թագավորը» (Մուր., 4, 75)։ «Ահա քեզ ձեռքս, ընկեր Թանկագին,* Սեդմիր *դու* նորան *անվախ, անկասկած» (ՀՀ, 64։* «Սիրում ես *Սմբատ Ալիխյանին և ոչ նրա* հարստությանը» *(Շիրվ., 3, 333)։*

Սրանից տարբեր է այն դեպքը, երբ հեղինակը իր ցույց տվող գոյականը փոխաբերաբար տրականաձև հայցականով է գործածում. այս դեպքում իրը անձնավորում է։

«Որ բանեցնում է օդին ու ջրին, Ծառայեցնում կրակին, հողին» *(ԳԱ, 375)։ «Գարնան արևը անհուն համբույրով* դուրս կոչեց *կյանքի* ծլին ու ծաղկին» *(Իս., 1, 359)։* «Գուրգուրիր *կրկին* Արևածաղկին» *(ՀԹ, 2, 24)։*

Սակայն պետք է հաշվի առնել նաև մի այլ հանգամանք։ Այդ այն է, որ մի շարք բայեր պահանջում են միայն անձի հայցականով (տրականաձև) ուղիղ խնդիր, և դրանց լրացում դառնալիս իր ցույց տվող գոյականներն էլ տրականաձև են լինում։

«Մի՞թե դու կարող ես իրավունքի տեսակետից մեղադրել *քո* եզին» *(Մուր., 5, 251)։ «Ջանում էր իր* նժույգին *ևս* հարկադրել *պահպանելու այն համեստ միջոցը, որ կար իր և իր տիրոջ միջև» (ԴԴՎ, 7)։*

Առանձին պետք է նշել հայցականի սխալ ձևերը։ Մարդիկ, կանայք *հոգնակիները որոշյալ և անորոշ առումների տարբերություն չունեն։ Հետևաբար դրանց վրա* ը(ն) *որոշիչ հոդ դնելը սխալ է։*

«Նա բերեց *յուր հետ այդ* մարդկանցը *Կեսարիայից» (Ր, 7, 86)։ «Հետո նրանց երկրորդ գործը կլինի՝ կալանավորել աքսորված նախարարների* կանանցը, *զավակներին» (Ր, 7, 129)։* «Ձիանոնքը տար *ջրի» (ՎՓ, 4, 289)։* «Որդոցը կանչեց» *(ԳԱ, 15)։*

Վ. Տերյանը մի քառատողում իր ցույց տվող գոյականները տրականաձև հայցականով է գործածել՝ բանաստեղծական չափի և հանգի պահանջով։ «Այո, «էս»-ին և «էն»-ին *ես էլ* եմ մերժում: *«Զոկիր քաջին ու հենին, Ով լուսնահաշ չուն» (ՎՏ, 2, 98)։*

6. Ներգործական սեռի բայերը երբեմն կարող են գործածվել առանց հայցականով լրացման։ Խոսքը վերաբերում է ուղիղ խնդրին, քանի որ այդ լրացումն է պայմանավորում լրացյալի ներգործականությունը։

Ուղիղ խնդիր չունեցող ներգործական բայերի գործածության երկու դեպք կա։ Առաջին դեպքում գործ ունենք այն բա-

յերի հետ, որոնք ներգործական սեռի են, բայց գործածվել են որպես չեզոք սեռի՝ այլ բայերի փոխարեն։ Այսպես են՝ զարկել, մաղել, կոխել, խոտորել, մտածել և այլն,

«Երբոր զարկի շողքն արևի, Հաց կբերի մեր ափին» (ՀԲ, 1, 73)։ «Քնքուշ լուսնի շողան-փոշին Մաղեց հեզ գետի վրա» (Իս., 1, 82)։ «Ամպը կոխել է, աշխարքը մթնել» (ՀԲ, 2, 48)։ «Խոտորել էր տիրոջ ճանապարհից» (ՋԴՄՆ, 2, 507)։

Բերված օրինակներում զարկել բայը գործածվել է դիպչել, ելնել, մաղելը՝ իջնել, սփռվել, կոխելը՝ կուտակվել, խոտորելը՝ շեղվել նշանակություններով[1]։

Երկրորդ դեպքում ներգործական սեռի բայի ուղիղ խնդիրը կարող է արտահայտված լինել նախընթաց նախադասության մեջ կա՛մ իբրև այդպիսին, կա՛մ իբրև նախադասության այլ անդամ։ Վերջին հաշվով այս դեպքում ուղիղ խնդիր կա, սակայն ոչ անմիջականորեն։

«Արևի ճառագայթները այրում էին, չկար ոչ հովի շունչ, ոչ ծառերի շքարան» (Մուր., 5, 240)։ «Նրա ամենապաշտելի սուրբը ս. Գևորգն էր, ուր ամառ-ձմեռ համարյա ամեն շաբաթ երեկո գնում էր ճամբուրելու» (ՆԴ, 1, 5)։ «Քանդում էին, շինում, օգնում էին» (Շիրվ., 4, 340)։ «Նովոռոսիյսկ բնակվող, իսկական մալորուս էր, բավական մեծ կարողության տեր. ժառանգել էր ամուսնուց» (ՎՓ, 4, 626)։ «Մեկը շշուկով պատմում է կամաց» (ՎՏ, 1, 20)։ «Նայվածքդ տեգ, ժպիտդ նետ, օ, խնայիր, խայթում ես դու։ Ինքդ արեգ, սերդ աղետ, օ, մի նայիր, Դյութում ես դու» (ՎՏ, 2, 37)։ «Նա ուրացել է և դառել է պարսից արքունիքի գործիքը» (ԴԴՎ, 28)։ «Ով կճամբուրի, ո՞վ կհեկեկա» (Զ, 7)։ «Կանչում էր, կանչում ճամփան անմեկին» (Զ, 219)։ «Կիտել է հոնքերը ներքև, բերբում է, ֆրֆրում, ջոկում» (Զ, 348)։ «Լռել եմ, տարել, ներել, ճամբերել» (ՀԱՀԵՄ, 283)։

7. Սակայն զեղչվել կարող է ոչ միայն լրացումը, այլև լրացյալը։ Այսպիսի դեպքի մասին մասամբ խոսվել է արտականով կազմվող կապակցությունների բաժնում։ Գլխավոր անդամների զեղչումը հայերենին խորթ չէ։ Օրինակ՝ «Պետրոսը գյուղ գնաց, իսկ Համբարձումը՝ քաղաք» նախադասության մեջ զեղչ-

[1] Այս երևույթի հետ չի կարելի շփոթել բայի խոնարհման փոփոխությամբ առաջացած երկսեռությունը, ինչպես՝ մեղմել, կարել, մարել, մոլորել, խավարել և այլն, որոնց մասին խոսվեց վերևում։

ված է գնաց լրացյալը։ Բացի սրանից, կան մի շարք թերի նախադասություններ, որոնցում լրացյալի բացակայությունը սովորական է։ Խոսքը վերաբերում է հրամայական բնույթի այն նախադասություններին, որոնք գործածական են հենց գեղչված ստորոգյալով։ Օրինակ՝ «Դե, օն, իշխանները իրենց զորամասը» (ԴԴՎ, 533)։ Այստեղ պակասում է (թող) գնան. (թող) մեկնեն, կամ այլ լրացյալ։

Առավել գործածական են այն նախադասությունները, որոնցում հայցականը տրականի (կամ այլ ձևի) հետ միասին դարձվածքի արժեք ունի՝ լրացյալի զեղչումով։ Օրինակներ՝ «Պիտի ամբողջ ժամերով նստեի ջրի անհուն այն կապույտի տարածության առաջ, ակնարկս հորիզոնին, ականջս մշտական որոտող շշուկին» (ՎՓ, 4, 620)։ «Մեծավեց՝ գլխով ակնարկը վրաս» (ՎՓ, 4, 634)։

Կան նաև այնպիսի նախադասություններ, որոնցում ենթական և զեղչված բայի հայցականով լրացումն են դարձվածք կազմում։ Օրինակ՝ «Ձեր մեղքը ձեր վիզը» (ԴԴՎ, 46)։

8. Հայցականով լրացումը կարող է նույն նախադասության մեջ վերաբերել երկու և ավելի լրացյալների։ Ընդ որում հնարավոր է, որ այդ դեպքում լրացյալներից մեկն ու մեկը այդպիսի լրացում ստանալու հատկություն չունենա, սակայն ուրիշ բայի հետ գործածվելիս ստանում է նրան բնորոշ լրացում։

«Բաց է անում նամակը և հենց միևնույն տեղն էլ կարդում» (Մուր., 5, 301)։ «Վերցնելով այդտեղ պահվող փայտե մեծ մուրճը, երեք անգամ ամուր զարկեց պատի վրա ամրացված տախտակե կոչնակին» (Մուր., 97)։ «Թաց արեխները հանել է, ճերել» (ՀԹ, 2, 14)։ «Սիրեց և փորձեց ընկերներին» (Իս., 2, 45)։ «Պղինձը ջուր լցրեմ բերեմ, մի փեշ էլ ճար բերեմ կրակն ածեմ տաքանան» (ՀԹ, 1, 364)։ «Ուղիղ հիսուն տարի առաջ, թողնելով իր աննշան ծննդավայրը, եկել, հաստատվել էր այդ փոքրիկ, աննշան ծովեզրյա քաղաքը» (Շիրվ., 3, 7)։

9. Երբեմն հայցականը գործածվում է ոչ իր խոսքի մասային նշանակությամբ։ Այսպես, ձևավոր փախչել կապակցության մեջ ձևավոր գոյականը կարող է ունենալ երկու մեկնաբանություն. կամ այն ածականի արժեքով է հանդես գալիս (—վոր,— ավոր ածանցով կազմված շատ գոյականներ, այդ թվում և ձևավոր, ծագել են ածականից)՝ որոշակիորեն բառբառային կնիք ունեցող կառուցվածքում, և այդ դեպքում այն ձևի—վիճակի իմաստ ունի, կամ ձևավոր ձևը համարժեք է ձիով գործիականին, և

այս դեպքում դարձյալ այն ձևի նշանակություն է արտահայտում։ «Ջրոով փախա ես ձիավոր» (ՀԹ, 2, 113)։

Դիտողություններ հայցականի և լրացյալի շարադասության վերաբերյալ.— *1. Բայի լրացումները շարադասական խիստ օրենքներով չեն սահմանագծված, քանի որ հայերենում լրացման ու լրացյալի հարաբերությունը ձևաբանական միջոցներով է արտահայտվում։ Լրացումները կարող են դրվել ինչպես լրացյալից առաջ, այնպես էլ՝ նրանից հետո։ Սա պայմանավորված է նախադասության կառուցվածքով, նրա տրամաբանական շեշտով։ Սակայն պետք է հաշվի առնել մի հանգամանք։ Եթե տրականով, բացառականով, գործիականով, ներգոյականով դրվող լրացումները չեն շփոթվում, ապա հայցականի հարցը տարբեր է։ Ուղղականաձև հայցականը որոշակի բայերով կազմված նախադասություններում կարող է դիտվել նաև ուղղական։ Դա լինում է այն դեպքում, երբ տվյալ նախադասության մեջ մեկից ավելի նման ձևեր (ուղղական և հայցական) չկան։ Այսպես, «Տեսնենք, թե* առավոտը *ինչ* օր *կծագի մեզ համար» (Մուր., 4, 152) նախադասության մեջ կան երկու նման ձևեր՝* առավոտը *և* օր, *որոնցից առաջինը հայցական է, իսկ երկրորդը՝ ուղղական (ենթակա)։ Սակայն երբ միայն մեկ ձև է լինում, շփոթի հնարավորություն չէ ստեղծվում։ Այսպես, հետևյալ նախադասություններում ընդգծված ձևը կարող է դիտվել և՛ իբրև ենթակա, և՛ տեղի կամ ժամանակի պարագա։*

«Ու շուրջս մթնեց։ Տեղս կորցրի» (ՀԹ, 2, 75)։ «Ինչ խավար է էս գիշեր*» (Իս., 2, 40)։ «*Ներսն *այնքան մութն էր» (ՆԴ, 1, 86)։ «Համր է* շորս դիս, *Մուժ ու մշուշ» (ՎՏ, 1, 269)։ «*Մի կողմը *սուրբ Մարկոսի հրաշալի տաճարն է, մյուս* երեք կողմերը *թանգարաններն են» (Իս., 4, 159)։*

Հայցականի և լրացյալի շարադասության պատությունը երբեմն կարող է հանգեցնել ուղիղ խնդրի և ենթակայի շփոթի։ Այսպես է հետևյալ օրինակներում։

«Իսկ այդ մերկությունը ցույց է տալիս մեզ ճշմարտությունը*» (Մուր., 5, 294)։ «Վերադարձնում էր թագավորին յուր հարազատ եղբորը, որից նա վաղուց հեռացած էր գժտությամբ և որի* աջակցությունը պիտի ապահովեր *այժմ յուր նոր ձեռնարկության* հաջողությունը*» (Մուր., 4, 391)։ «Ծառերի* զանգվածը եզերում էր *կարկաչուն մի* գետակ*» (ՎՓ, 4, 462)։*

Իհարկե նախադասության բովանդակությունից, լրացումների իմաստից երևում է ենթակայի և խնդրի, բայի և լրացումնե-

րի հարաբերությունը։ Այսպես, հետևյալ նախադասություններում ենթական և խնդիրը զատվում են իմաստով. «Ու վայրի հոգին լեռնական մարդու Ալեկոծում է կասկածն ահարկու» (ՀԹ, 2, 18)։ «Հուրդ իմ հուրն է այրում» (ՎՏ, 1, 209)։

Երբեմն նույն բառը կարող է դիտվել և՛ իբրև չափի պարագա, և՛ իբրև ենթակա։

«Անց է կենում մի առժամանակ» (ՀԹ, 1, 475)։ «Անցել է միայն տասնհինգ տարի» (Չ, 195)։

2. Երբեմն լրացումը գտնվում է երկու բայերի միջև և կարող է վերաբերել երկուսին էլ։

«Մարդիկ ուղարկեց շրջակաները լրտեսելու» (Մուր., 4, 223)։ «Նրանք պառկեցին մի քանի ժամ հանգիստ առնելու համար» (Մուր., 4, 152)։ «Որ լուսադեմին հասնենք որսատեղը պահելու» (ՀԹ, 1, 357)։

Այսպիսի դեպքերում հեղինակը երկիմաստությունից խուսափելու նպատակով գործադրում է օժանդակ միջոց։ Եթե նա ցանկանում է ցույց տալ, որ լրացումը միայն դերբայինն է, ապա դերբայական դարձվածը տրոհում է։ Օրինակ՝ «Ապա գավաթը նորեն լցնելով՝ առջևը դրավ» (Մուր., 5, 303)։

3. Երբեմն հայցականով լրացումը կարող է վերաբերել ոչ թե բային, այլ նրա հետ հարադրված բայական ծագում ունեցող գոյականին։ Այսպես, գործածական են արշավ կազմակերպել գյուղ, տեսություն գալ Գրիգորին, ճանապարհորդություն կատարել արտասահման և այլն։ Օրինակ՝ «Որ նոր էր դարձել Իրան ու Թուրան կատարած հեռու ճամփորդությունից» (Իս., 2, 246)։

4. Թեև սակավ, բայց պատահում են խճճված շարադասության դեպքեր, երբ գլխավոր և երկրորդական նախադասությունների անդամները փոխում են իրենց տեղերը, այսինքն՝ երկրորդական նախադասության՝ հայցականով լրացումը փոխադրվում է գլխավոր նախադասության մեջ։ Ստացվում է արտաքուստ ճիշտ, իմաստով սխալ կապակցություն։ Այսպես, «Կաթողիկոսը տաճարից ելնելուց հետո, երբ նստել էր խուցում, թողուց իր աջը, որ համբուրելու գար յուրաքանչյուր միաբան» (ՎՓ, 5, 38) նախադասության մեջ աջը ուղիղ խնդիրը իր լրացյալից՝ համբուրելու դերբայից անջատվելով՝ փոխադրվել է գլխավոր նախադասության թողուց բայի մոտ, որի ուղիղ խնդիրն արտահայտված է հենց երկրորդական նախադասությամբ։ Արտաքուստ ճիշտ կապակցություն է կազմվել (աջը թողնել), մինչդեռ անի-

մասն կլիներ այդ կապակցությունը բերված նախադասության մեջ։ Այդ նախադասության ճիշտ կառուցվածքը պիտի լիներ՝ «Բողուց, որ իր աչքը համբուրելու դար յուրաքանչյուր միաբան»։

Գ. ԲԱՅԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԲԱՑԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ

Բացառական հոլովով դրված լրացումներն արտահայտում են բազմազան հարաբերություններ։ Իմաստային բազմազանությունը, սակայն, հենվում է այդ հոլովի հիմնական իմաստի վրա։ Բացառական հոլովը ցույց է տալիս առաջին հերթին անջատման, զատման հարաբերություններ. այն գործողության սկզբնակետն է։ Ինչպես արդեն դիտված է հայ քերականագիտության մեջ, բացառականը իր հիմնական իմաստով հակադրվում է տրականին։ Եթե տրականը գործողության հանգման առարկան է ցույց տալիս, ապա բացառականը դրա հակառակն է, այսինքն՝ սկզբնակետը[1]։ Տրականի և բացառականի իմաստային հակադրությունը չի ժխտվում նույնիսկ այն հանգամանքով, որ երբեմն բայի նույնիմաստ լրացումները կարող են դրվել և՛ տրականով, և՛ բացառականով։ Օրինակներ՝ «Նա իր պաշտպանությունը ձեզանից չի խնայիլ» (ՂԱ, 221)։ Նաև՝ «Նա իր ունեցվածքը ձեզ չի խնայի»։ Այսպես նաև՝ կպչել ծառից և կպչել ծառին, կառչել փայտից և կառչել փայտին և այլն։

Մ. Աբեղյանը, այնուհետև Վ. Առաքելյանը բավական մանրամասնորեն քննել են այս հոլովի իմաստները, սակայն նրանց մոտ, ինչպես արդեն նշված է այլ բաժիններում, հոլովի իմաստները գիրկընդխառն են ներկայացված նրա շարահյուսական կիրառությունների հետ։ Թեև պետք է նշել, որ երբեմն նրանք մի քանի իմաստներ միասին նույն վերնագրի տակ են քննում։ Այսպես, Վ. Առաքելյանը «Անջատման բացառական» բաժնում քննում է նաև ելման, պակասության բացառականները, սակայն նույն հեղինակը դրանցից մի քանիսը համարում է նախադասության առանձին անդամ (ելման անուղղակի խնդիր)[2]։

Բացառական հոլովը գերազանցապես բայի լրացում է դառնում։ Այս հոլովի իմաստները ևս երկու բնույթի են՝ խնդրային

[1] Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 448։ Վ. Առաքելյան. Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957, էջ 128։

[2] Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հատ. 1, 1958, էջ 311։

և պարագայական, ընդ որում առաջիններն ավելի բազմաթիվ ու բազմազան են։

Խնդրային բացառականի հիմքում, ինչպես նշվեց, ընկած է անջատման, ելակետի, սկզբնակետի իմաստը։ Անջատման բացառականի հետ սերտ առնչություն ունեն խուսափման, պակասության, պահանջման, անձի-ելակետային, ելման-սկզբնակետային, բաղկացության, նյութի, սերման (ծագման), ընդօրինակման բացառականները, ուստի անջատման բացառականը քննում ենք նշված տարատեսակներով՝ դրանց թվում նշելով նաև բուն անջատման (զատման) բացառականը։ Իբրև նախադասության անդամ այս բոլորը՝ անջատման անուղղակի խնդիր են, իսկ իբրև բառակապակցության բաղադրիչ, հիշյալ իմաստներն են արտահայտում։ Խնդրային են նաև մասնական (խնդրային մասնական), վերաբերության, հաղորդման, հանդման, համեմատության և գերադրության, ներգործող խնդրի, պասիվ ներգործության բացառականները։ Պարագայական իմաստները սակավաթիվ են։ Դրանք են՝ տեղի, ժամանակի, ձևի, հիմունքի, պատճառի։

Պետք է ասել, որ ինչպես խնդրային, այնպես էլ պարագայական իմաստները հիմնականում հստակորեն, որոշակիորեն տարբերվում են իրարից։ Սակայն անժխտելի է այն հանգամանքը, որ, ինչպես այդ նկատվում է մյուս հոլովների մեջ, այստեղ ևս բազմաթիվ կապակցություններ կան, որոնց իմաստը հստակ սահմանագծված չէ. այն կարելի է երկու և երբեմն ավելի ձևով մեկնաբանել։

Խնդրային բացառականով կապակցություններ

1. Անջատման խնդրի բացառական

Ա. Անջատման (զատման) բացառական.— *Անջատման բացառականը ցույց է տալիս այն առարկան, որից անջատվում, զատվում է մի բան։ Ընդ որում պետք է նկատի ունենալ, որ զատվող, անջատվող առարկան սկզբնապես կից է եղել բացառականով արտահայտված առարկային կամ կազմել է նրա մի մասը։ Այս իմաստով անջատման (զատման) բացառականը տարբերվում է անջատման անուղղակի խնդիր առավել ընդհանուր անունը կրող (շարահյուսական պաշտոնի տեսակետից) այլ բացառականներից։*

Այսպիսի լրացում կարող են ստանալ անջատման, զատման գործողություն ցույց տվող բազմաթիվ բայեր, ինչպես՝ կտրել, պոկել, բաժանել, խլել, կորզել, անջատել, զատել, փախչել, ճանել, ընկնել, չոկել, փրկել, տալ, թափել *և այլն։*

«Ոչ փշից *խաղող* կփաղվի, *ոչ* տատասկից՝ *թուզ»* (*Մուր.*, 4, 43)։ *«Օխտը* ծաղկից *ծաղիկ* փաղել, *Կապել սիրո ծաղկեփունջ»* (*ՀԹ*, 2, 43)։ «Թափվեցին *տերևները աշնան* ծառերից» (*Իս.*, 1, 83)։ *«Սոնեն պանրի փշրանքը հացի* կտորտանքից չոկում *և քրեզանն էր ածում»* (*ՆԴ*, 1, 91)։ «Կորզեց իրենից *իր որդուն»* (*Շիրվ.*, 3, 14)։ *«Ես* անջատված եմ *հայրենի* հողից» (*ՎՏ*, 1, 39)։ *«Վարդդ սիրուն, վարդդ կարմիր* թփից պոկեց *ու տարավ»* (*Ծ*, 84)։ *«Մեր հնամյա հարատև* ժողովրդից *ու* հողից *Ռուսը* չէր բռնել *Դեռ այդ պատառը հողի»* (*Չ*, 510)։ «Հոտից *մի զառ* է չոկում» (*ՀՍՀԵՄ*, 138)։ *«Եվ ոչ մի ժանիք ինձ* չի բաժանի *լեռնինյան* դարից, *Ինչպես ոչ մի ուժ ինձ* չի բաժանի *իմ չոնդալից, պայծառ* ճնարից» (*Չ*, 111)։

Տարբերել, որոշել, զանազանել *և նման մի քանի բայերի բացառականով խնդիրը ևս անջատման իմաստ ունի, սակայն այդտեղ անջատումը երբեմն անմիջական չէ, այլ փոխաբերական։*

«Բայց Արմանը նրան չէր որոշում աղջիկներից» (*ԴԱ*, 228)։ «Չէինք տարբերվում *վայրի* գազանից» (*Չ*, 235)։

Մի շարք բայերի՝ բացառականով խնդիրը միայն փոխաբերաբար է ցույց տալիս այն առարկան, որից մի բան է անջատվում։ Այսպիսի կապակցությունները բնորոշ են գեղարվեստական պատկերավոր խոսքին։

«Նրա միակ կամքը փրկել է *հարյուրավոր մանուկներ* *տգիտության* ճանկերից» (*Մուր.*, 5, 9)։ «Ազատեց *ժողովուրդը* ստրկությունից» (*Մուր.*, 4, 60)։ *«Արտաքին* աշխարհից կտրվելով *հետզհետե, ապրում էր իր ներքին աշխարհովը միայն»* (*ՎՓ*, 4, 560)։

Մի շարք կապակցություններում անջատման և խուսափման իմաստները հավասարապես առկա են։

«Ես ճեզնից *դառնացած* հեռացա» (*ՎՏ*, 30)։ *«Եթե տկար մի խոզ* ետ մնա մյուսներից, *արջը թաթի մի հարվածով ճեղքում է փափուկ մեջքը»* (*Բակ.*, 3)։

Երբեմն էլ բացառականը կարող է մեկնաբանվել և՛ անջատման, և՛ պակասության իմաստներով։

«Հարուստ հյուսերը ոսկե կապերից ազատվելով՝ *ալեծածան*

սփռվեցին նրա կիսամերկ ուսերի և կրծքի վրա» (Մուր., 4, 29)։ «Տարիների հիշողությունը մի տեսակ ձուլարան է, ուր գաղափարն այսպես ասած հալվում է և աստիճանաբար զտվում է ավելորդ տարրերից» (Շիրվ., 8, 242)։

Մի շարք կապակցություններում առկա են անջատման և ելման-սկզբնակետի իմաստները հավասարապես։

«Այդ երազից, ըստ մեր էպոսի, կրակ է վերցնում ժողովուրդը» (Իս., 4, 213)։ «Ու կրակ առա հայոց հրդեհի կարմիր բոցերից» (ՀԹ, 1, 132)։ «Փետուր է մնացել մի սև օրերիս չվող երամից» (ՀԱՀԵՄ, 38)։ «Բայց նա ժեռ քարից սնունդ է առել Եվ ջուր է առել խոնավ ճողմերից» (ՀԱՀԵՄ, 303)։

Մի քանի կապակցություններում համատեղվում են անջատման և մասնական-խնդրային իմաստները։

«Կըճտրես մի այդքան էլ գործում դիմացկուն Մեր սև սարուկներից դեմքով պապղոմ» (Հայնե, ԴԱ, 76)։ «Գլխահարկ էինք տալիս, բահրա էինք տալիս։ Ոչխարից տալիս էինք, ճավից, կովից, էծից տալիս էինք» (ՍԽՄԽ, 15)։

Առավել տարածված են այն կապակցությունները, որոնցում լրացման խնդրային և պարագայական բնույթն է համատեղվում. մի դեպքում այն անջատման, այլ դեպքում տեղի իմաստ է արտահայտում։ Այդպիսի բացառականը կարելի է անվանել խնդրա-պարագայական, որը վկայում է այն իրողությունը, որ պարագայական իմաստները ծագում են խնդրային իմաստներից։

Այսպիսի լրացումները հիմնականում արտահայտվում են թանձրացական գոյականներով։

«Լուռ ու մտախոհ բարձրացավ բազմոցից» (Մուր., 4, 14)։ «Իջավ ձիուց» (Մուր., 4, 44)։ «Բերավ այն մանյակը, որ հանել էին նաժիշտները թագուհու պարանոցից» (Մուր., 4, 62)։ «Օխտն աղբյուրից ջուր է առել» (ՀԹ, 2, 43)։ «Աղավնին դառավ՝ իմ ձեռքից թռավ» (ՀԹ, 2, 73)։ «Տավիղն հինավուրց հանելով ուսից Գուսանը կանգնեց դահլիճում մարմար» (Իս., 2, 176)։ «Հայոց մյուս նախարարական տներից ևս սպարապետներ են ընտրվել» (Ր, 7, 49)։ «Էլ ի՞նչ ենք ուզում վերցնել կյանքից» (Զ, 222)։ «Որ ծառերից քեզ վրա մարգարիտներ են կաթում» (ՀԱՀԵՄ, 347)։

Անջատման բացառականով են կազմված մի շարք դարձվածքներ և դարձվածքային կապակցություններ, ինչպես՝ (ոտքը) մի բանից կտրել, (երեխային) կրծքից կտրել, սևը սպիտակից

ջոկել *(տարբերել)*, վրեժ լուծել մեկից (վրեժ հանել մեկից), օգուտ քաղել մի բանից *և այլն*։

«Այս առաջին վրեժն էր, որ քաջ որդին լուծեց *հոր* սպանիչներից» *(Մուր., 4, 56)*։ *«Դուք ձեր* վրեժը կլուծեք *միայն* ազգից *և ոչ թե* բազավորից» *(Մուր., 4, 136)*։ *«Իշխանը կամեցավ* օգուտ քաղել *այդ* բանից» *(Մուր., 4, 146)*։ «Հաց ու ջրից կտրվել *է»* *(ԶԳՄՆ, 2, 129)*։ *«Արությունը* սեր սպիտակից ջոկել գիտե» *(ՂԱ, 533)*։

Բ. Խուսափման բացառական.— *Բայի լրացումը ցույց է տալիս այն առարկան, որից խուսափում, հեռանում է մի բան։ Այսպիսի լրացում ստանում են* խուսափել, խույս տալ, փախչել, փախուստ տալ, քաշվել, քաշցնել, ծածկել, հեռանալ, ղարձնել, խոտորել, փրկել, պաշտպանել, պատսպարել, զգուշանալ, ազատել, պրծնել, ապահովել, երես շրջել, խռովել, խորշել, հրաժարվել, ձեռք քաշել, վրիպել, բացակայել *և այլ բայեր։ Լրացում կարող են դառնալ և՛ թանձրացական, և՛ վերացական բազմաթիվ գոյականներ*։

«Բարի ոգիները նրա ինչ լինելը քաշցրել էին հողեղեններից» *(ՂԱ, 228)*։ «Հարկից խորշում են, *բայց ոչ* կռվելուց» *(ՂԱ, 379)*։ *«Այդ դեպքը մինչև անգամ* շատեցրեց *Աշոտին դավաճան* Սեռղիններից» *(Մուր., 4, 52)*։ *«Թագուհին ինքը* հեռանում էր մարդկանցից» *(Մուր., 4, 10)*։ *«Ճշմարտությունը ես* ծածկեցի քազունուց» *(Մուր., 4, 26)*։ *«Գնա և* պատսպարիր *քո Սահանույշը վերահաս* վտանգներից» *(Մուր., 4, 91)*։ «Ապահովել *ենք թշնամու* հարձակումից» *(Մուր., 4, 237)*։ «Համայնքից փախիր, փախիր վրեժից, *մարդկանց արյունոտ* արդարությունից, Փախիր կնոջից, սիրուց, ընկերից» *(Իս., 2, 75)*։ *«Նա թունդ* խռովել է ինձնից» *(ՆԴ, 1, 449)*։ *«Մի ժպիտ համար ես* կհրաժարվեմ *Առանց դղջալու բոլոր* աշխարհից» *(ՀՀ, 100)*։ *«Այդ հասակում ես նրա նետը երբեք չէր* վրիպում նպատակից» *(Ր, 7, 58)*։ *«Ով պետք է* պաշտպանե *հայրենիքը* կրակից *և* արյունից» *(Ր, 7, 144)*։ *«Վանականներն արագ* ընկրկեցին *ցատկող* նժույգներից» *(ԴԴՎ, 6)*։

Խուսափման բացառականով կազմված են մի շարք դարձվածքներ, ինչպես՝ մեկից քաշվել, ձեռք վերցնել մեկից,— մի բանից, ձեռք քաշել մեկից,— մի բանից *և այլն*։

«Ես մեր երկրիցը ձեռք չեմ վերցնիլ» *(ՂԱ, 212)*։ «Գլխիցդ ձեռք ես վերցրել» *(ՀԹ, 1, 504)*։ «Ձեռք քաշեմ նրանից. *ավելի լավ չէ՞ սուտ* ձեռք քաշեմ *իմ* կյանքից» *(ՆԴ, 2, 453)*։ *«Աներկյուղը*

գլխիցը ձեռք վեր առած *գնաց հասավ քառասուն հարամիների բնակարանը»* *(ՂԱ, 361)։*

Գ. Պակասության բացառական.— *Լրացումը ցույց է տալիս այն առարկան, որից զրկվում, պակասում է մի բան։ Բացառականով դրված լրացումը պակասող առարկան է արտահայտում։ Բացառականի այս իմաստը դիտված է Վ. Առաքելյանի կողմից*[1], *թեև պակասության բացառականը անջատման բացառականի տարատեսակ է համարված։ Անշուշտ, այդ ճիշտ է հոլովի շարահյուսական դերի տեսակետից. և՛ անջատման, և՛ պակասության (ինչպես և փոխանակման, նման և այլ իմաստներ) բացառականները նախադասության մեջ անջատման խնդիր են։ Սակայն հոլովաձևի բուն իմաստը հաշվի առնելու դեպքում պակասության բացառականը առանձին պետք է քննել։ Այսպես, իմաստային նույն հարաբերությունը չի արտահայտված մի կողմից* ծառից միրգ պոկել *և մյուս կողմից* ծառից զրկվել *կապակցություններում։ Եթե առաջինում առկա է անջատումը, ապա երկրորդում պակասության իմաստ է դրսևորվում։*

Պակասության բացառականով լրացում ստանում են զրկել (զրկվել), պակասել, մերկանալ (մերկացնել), մաքրել, ընկնել. դատարկել (դատարկվել), թեթևանալ, թեթևացնել, բուժվել. ազատվել *և այլ սակավաթիվ բայեր։ Լրացում կարող են դառնալ գերազանցապես թանձրացական գոյականները, փոխաբերաբար նաև որոշ վերացական գոյականներ։*

«*Գեղարդասարը* մերկացել էր *արդեն այն աղքատիկ* կանաչներից» *(Մուր., 4, 9)։ «Բայց արքայորդին դեռ սեփական երկիրը* պետք է մաքրեր *հագարացի* հրեշներից» *(Մուր., 4, 56)։ «Մեր հին* ադաթից ընկել ենք, զրկվել» *(ՀԹ, 2, 38)։ «Մարդիկս* ընկան *մարդու* կերպից» *(ՀԹ, 2, 148)։ «Խրճիթը* դատարկվեց *թամաշաչի* կանանցից *և* երեխաներից» *(ՆԴ, 1, 14)։ «Նա* թեթևանալ էր *ուզում ճնշող* մտքերից, *ժամ առաջ հասնել, լուծել վեճերը և* ազատվել մտատանջումից» *(ԴԴՎ, 7)։ «Այն սարը* սրբեց *գարանագործ* դևերից» *(ՂԱ, 332)։*

Պակասության բացառականով են կազմված մի շարք դարձվածքներ, ինչպես՝ ոտ ու ձեռից ընկնել, պատվից ընկնել, մի բանից դատարկ նստել *և այլն։*

«Ոտ ու ձեռից ընկած, *անճար, Հաց չտային, չէր ուզում»*

---

[1] Վ. Առաքելյան, *նշվ. աշխատ., էջ 129։*

(Իս., 2, 140)։ «Որից դատարկ են նստում *տերերը*» *(ՀԹ, 1, 112)*։ «*Կարմիր* արևից ընկած, *Սարո ջան*, *Կանաչ* տերևից ընկած, *Սարո ջան*» *(ՀԹ, 2, 66)*։

Դ. Պահանջման բացառական.— *Լրացումը ցույց է տալիս այն առարկան, որից մի բան է պահանջվում, խնդրվում։ Մ. Աբեղյանը այսպիսի լրացումը չէր տարբերում անջատման բացառականից*[1], *իսկ Վ. Առաքելյանը նշելով հանդերձ պահանջարկի մի շարք բայերի այսպիսի խնդրի տարբերությունը անջատման իմաստից, այնուամենայնիվ, դրանք համարում է նույն իմաստն ունեցող լրացումներ*[2]։ *Սակայն* պահանջել, ուզել, խնդրել, ակնկալել, սպասել, հուսալ *և նման մի շարք բայերի՝ բացառականով լրացումը չի կարելի նույնացնել* կտրել, պոկել, զատել, բաժանել *և նման բայերի բացառականով լրացումների հետ, քանի որ առաջին դեպքում լրացմամբ արտահայտված առարկայից չի անջատվում, բաժանվում որևէ բան։ Իսկ սա էլ անջատման բացառականի էությունն է։ Երկրորդ դեպքում բացառականով լրացմամբ արտահայտվում է այն առարկան, որից սոսկ պահանջվում, սպասվում է մի բան։ Լրացում կարող են լինել գիրականապես անձ, ինչպես և անձնավորված առարկա ցույց տվող բառերը՝* մարդ, ես, դու, նա, գայլ *և այլն*։

«*Սրտի խոսք* ենք ուզում քեզնից» *(ՀՀ, 72)*։ «*Նա հայ* գրականությունից *ավելի* էր պահանջում» *(Շիրվ., 8, 494)*։ «*Անտուն* անցորդից կխնդրեմ *ես հաց*» *(ՎՏ, 1, 25)*։ «*Եվ* չեմ սպասում գայլից *վարդ*» *(ՎՏ, 2, 17)*։

Պահանջման բացառականը կարող է դառնալ նաև փոխաբերաբար պահանջ արտահայտող բայերի լրացում։

«*Կարծես* ոչ ոքից չի տեսնում *բարիք*» *(ՎՏ, 2, 88)*։ «*Աղջիկները համարձակ խմում էին ձորերի աղբյուրները՝ այլևս* վախ չունենալով *պարսիկ* առևանգողից» *(ՍխՄխ, 137)*։

Պահանջման բացառականը կարող է դառնալ նաև պահանջ *անվանական բաղադրիչով բայական հարադրության լրացում։ Օրինակ՝ «Զսպում է փաշայաբար նստել և* հասարակությունից պահանջներ անել» *(ՎՏ, 2, 224)*։

Որոշ բայերի լրացումը կարելի է մեկնաբանել և՛ պահանջման, և՛ հաղորդման իմաստներով։ Ամենից շատ դա վերաբերում է խնդրել *բային։ Այսպես, «Ընկերս* խնդրեց ուսուցչից, *որ*

---

[1] Մ. Աբեղյան, *նշվ. աշխատ., էջ 448*։

[2] Վ. Առաքելյան, *նշվ. աշխատ., էջ 129*։

աշակերտները մի երգ սսեն» (Իս., 3, 52) նախադասության մեջ խնդրեց բայի ուսուցչից լրացումը հնարավոր է փոխարինել տրականով (ուսուցչին)։ Իսկ սա ցույց է տալիս, որ ուսուցչից ձևը պահանջման և հաղորդման իմաստներ է համատեղում։

Պահանջման բացառականով են կազմված մի շարք դարձվածքներ, ինչպես՝ դատ ու դատաստան ուզել մեկից, հաշիվ պահանջել մեկից, ակնկալություն ունենալ մեկից (մի բանից) և այլն։ Օրինակ՝ «Համեցեք, դիվան ուզիր սրանից» (ՀԹ, 2, 37)։

ծ. Անձի-ելակետային բացառական.— Բայի լրացումն այս դեպքում ցույց է տալիս այն անձը կամ իբրև անձ մտածվող առարկան, որից մի բան է ստացվում, առնվում, վերցվում։ Այս իմաստը մեր քերականագիտության մեջ անջատման իմաստի հետ է նույնացվել, կամ եթե առանձնացվել է, ապա նման ընդհանուր անվանումով դիտվել է անջատման բացառականի տարատեսակ[1]։

Սակայն պետք է նկատի ունենալ, որ ստանալ, առնել, վերցնել և նման բայերի լրացումը (մի բան ստանալ ընկերոջից, մի բան առնել երեխայից, դրամի մանրը վերցնել տոմսավաճառից, զենքը խլել թշնամուց), որոշակիորեն տարբերվում է կտրել, բաժանել բայի լրացումներից (ծառից ճյուղ կտրել, երեխային բաժանել ծնողից), և չի կարելի դրանք նույնիմաստ համարել։ Ելնելով այդ լրացումների միջև եղած տարբերությունից՝ դրանք տարբեր իմաստներ ենք համարում։ Քանի որ այդպիսի բայերի լրացում դառնում են գերազանցապես անձի (կամ իբրև անձ մտածվող այլ առարկաների) անունները, այս իմաստը համարում ենք անձի-ելակետային բացառական, թեև սա նման իմաստի հետ ընդհանրություն ունի։ Այսպիսի լրացում ունենում են առնելու գործողություն ցույց տվող մի շարք բայեր, ինչպես՝ առնել, ստանալ, վերցնել, ժառանգել, մնալ, բերել, հասնել, գալ և այլն։

«Շտապեց յուր երկիրը, որպեսզի Յուսուփից ստացած և ազգից անիծված թագի փառքը ապահովության մեջ վայելե» (Մուր., 4, 42)։ «Այդ հին նախապաշարմունք է, որ դարեր շարունակ ժառանգություն է մնում հորից որդուն» (Մուր., 4, 49)։ «Նա օգնական զորք բերել տվավ ափխազաց իշխանից» (Մուր., 4, 86)։ «Շտրափ է առնում անմեղ տիրոջից» (ՀԹ, 2, 39)։ «Թողնե՞լ այդ

---

[1] Վ. Առաքելյան, նշվ. աշխատ., էջ 128—129։

ամենը՝ պապերից ժառանգած տները, առևտուրը, արհեստագործությունը» (ՍԽՄԽ, 336)։

Նալ բայի անձի-ելակետային բացառականով լրացման հետ սովորաբար առարկա ցույց տվող գոյական է լինում (ենթակա)։ Օրինակ՝ «Հարուղից նամակ էր գալիս» (Բակ., 16)։

Անձ ցույց տվող գոյականով արտահայտված ենթակայի առկայությամբ սովորաբար այդպիսի բացառական չի դրվում։ Այդպիսի դեպքում սովորաբար գործածվում է կողմից կապական բառը սեռականի հետ (Թագավորի կողմից մարդ եկավ, հրամանատարի կողմից լրաբեր ժամանեց և այլն)։ Սակայն արևմտահայերենի հետևողությամբ (ուր այդ բացառականի մոտ սովորական է անձ ցույց տվող ենթակա) մի շարք հեղինակներ գործածում են հիշյալ կարգի կապակցություններ։

«Վենից երկրորդ պատգամավոր եկավ» (Մուր., 4, 23)։ «Մարզպանից էլ զորք եկավ» (ԴԴՎ, 45)։ «Այդ օրը երեկոյան սուրհանդակ եկավ Սատմից» (ԴԴՎ, 537)։

Անձի-ելակետային բացառականը կարող է գործածվել ոչ միայն թանձրացական, այլև վերացական գոյականով դրված ենթակայի հետ։ Այսպես, ասում ենք նաև՝ մեկից վտանգ հասավ. մեկից փորձանք եկավ և այլն։

«Գուցե յուր տիրոջը մի վտանգ հասնի ապստամբ իշխանից» (Մուր., 4, 148)։ «Թշնամիներից վտանգ չէր հասել գահին» (Մուր., 4, 438)։

Որոշ կապակցություններում բացառականով լրացումը կարելի է մեկնաբանել և՛ անձի-ելակետային, և՛ վերաբերության իմաստով։

«Ու նրանցից միմիայն անմեռ էս զրույցը հասավ մեզ» (ՀԹ. 2, 145)։ «Մայրը անպատճառ կկանչի նրան, հայտնելու նորից ստացած նորությունները» (Ի, 7, 39)։ «Առաջին հանդիպումով շատ հաճելի տպավորություն ստացա Թումանյանից» (Իս., 4, 63)։

Առաջին նախադասության մեջ նրանցից լրացումը կարելի է համարել և՛ իբրև անձի— ելակետային բացառական (նրանցից հասավ զրույց կամ մի այլ բան), և՛ իբրև վերաբերության բացառականով (նրանցից հասավ զրույցը— նրանց մասին հասավ զրույցը)։ Այդպես են նաև մյուս օրինակները։

Անձի-ելակետային բացառականի մի տարբերակը ընկալման բացառականն է, որը ցույց է տալիս այն առարկան (մեծ մասամբ անձ), որից ընկալվում, լսվում է որևէ բան։ Այդպիսի լրացում ունենում են ընկալման գործողություն ցույց տվող սահ-

մանափակ թվով բայեր, ինչպես՝ ընկալել. լսել. իմանալ. տեղեկանալ:

«Բայց դու ի՞նչ իմացար քահանայից» *(Մուր., 4, 149): «Ես* քեզնից եմ լսում *էսօր» (ՀԹ, 2, 215): «Ես էն հանգուցյալ* լավերից *նույնպես* լսել եմ *հաճախ գանգատներ պես-պես» (ՀԹ, 2, 92):*

Մեկից լսել *կապակցությունը այդ նախադասության մեջ կարելի է մեկնաբանել նաև վերաբերության իմաստով* (մեկից լսել—մեկի մասին լսել):

Զ. Ելման-սկզբնակետի բացառական.— *Բայի լրացումն այս դեպքում ցույց է տալիս այն տարածքը, որից սկսվում է գործողությունը: Սա գործողության տարածական ելակետն է: Մ. Աբեղյանը, ինչպես և Վ. Առաքելյանը այս բացառականը չեն տարբերում անջատման բացառականից և այդպիսի լրացում ունեցող բայերը նշում են անջատման խնդիր ունեցողների շարքում: Բացառական հոլովի բնորոշման մեջ էլ այս իմաստը նշում են, իբրև այդ հոլովի բնորոշ իմաստներից մեկը: Անշուշտ, ելման-սկզբնակետի բացառականը վերջին հաշվով անջատման բնույթի իմաստ է, սակայն այս դեպքում լրացմամբ արտահայտված տարածքից որևէ բան չի անջատվում, այլ սոսկ գործողությունն է սկիզբ առնում: Ելման-սկզբնակետի բացառականով լրացում ստանում են սակավաթիվ շարժում ցույց տվող բայեր, ինչպես՝* սկսել, ելնել, վեր ելնել *և այլն:*

«Այո, Սեդա, անցյալից պիտի սկսես» *(Մուր., 4, 36): «Հայրս* սկսում է *իմ կերած մի կտոր* շաքարից» *(ՍՉ, 4, 26): «Զինվորները խառնիխուռն* վիճակից շարքավորվեցին» *(ԴԴվ. 479): «*Նրանցից *էլ* սկիզբ են առնում *քաղաքի գլխավոր պողոտաները» (ՀՄՀԵ, 68):*

Այսպիսի լրացում ավելի շատ պահանջում են զգացական մի շարք բայեր, ինչպես՝ սթափվել. զգաստանալ. արթնանալ (զարթնել), առնել (հոտ առնել), բաց անել (աչքերը), ուշքի գալ, հանգստանալ *և այլն:*

«Ծնողական սիրտը կարծես զգաստացավ *մի երկարատև* արբեցությունից» *(Մուր., 4, 328): «*Ել, *հորեղբայր, անուշ* քնից» *(ՀԹ, 2, 106): «Սմբատը* սթափվում է մտքերից» *(Շիրվ., 3, 129): «Մեծ տիկինը* արթնացավ *իր սև* մտքերից» *(ԴԴվ, 377): «Նա սկսում էր* ուշքի գալ *իր* գինովությունից» *(ԴԴվ, 489):*

Մի շարք կապակցություններում ելման-սկզբնակետի իմաստը համատեղվում է պակասության իմաստի հետ:

«Մարթան շուտով լավացավ *մաթրախի* խարանճներից» *(ՆԴ, 1, 25)*։ «Ապաքինվել էր վերքերից» *(ԴԴՎ, 99)*։

Մնալ, դուրս գալ, ելնել, դառնալ, ստանալ, թողնել *և մի քանի այլ բայերի՝ բացառական հոլովով դրված լրացումը հնարավոր է մեկնաբանել և՛ ելման-սկզբնակետի, և՛ նյութի իմաստներով*։

«Ի՞նչ է մնացել *առաջվան* տղից» *(ՀԹ, 2, 60)*։ *«Ես չէի՞ ասում, որ* նայից *երբեք օրինավոր մարդ* չի դուրս գա» *(Շիրվ., 3, 45)*։ *«Անուշ* վարդերից մնաց *միայն փուշ ու* ցնորքներից՝ *վիշտ ու վհատում» (ՎՏ, 1, 110)*։ *«Լավ գիտենաս, Որ* տղայից *քար* կդառնաս» *(ՂԱ, 241)*։ *«Այրող* մարդուց *հանկարծ* դարձան *մի մոխրին կերտված արձան» (ՊՍԱՋ, 205)*։

«Քնած են ցերեկվա դաշտային աղմուկ աշխատանքի խոնջենքից» *(ԴԴՎ, 207) նախադասության մեջ բացառականը կարելի է մեկնաբանել և՛ ելման-սկզբնակետի, և՛ պատճառ-ներգործության իմաստներով*։

Մնալ *բայով կազմված կապակցությունը կարող է արտահայտել ելման-սկզբնակետի, նյութի և պատճառի իմաստները համապատասխանաբար։ Օրինակ՝ «Աստվ Ձարենց, էս* գոզալից *սրտիս մէ հին մրմուռ* մնաց» *(Զ, 45)*։

է. Ելման բացառական.— *Սա իմաստային ընդհանրություն ունի նախորդ երկուսի՝ անձի-ելակետային և ելման-սկզբնակետի բացառականների հետ։ Սակայն նրանցից տարբերվում է նրանով, որ այս դեպքում բացառականով լրացումն ավելի շատ տեղ, քան թե առարկա է ցույց տալիս*։ Ելման բացառականը ցույց է տալիս այն առարկայացած տեղը, տարածությունը, որից ելնում, դուրս է գալիս մի բան: *Այսպես, օրինակ, «*Քարից *հաց հանեցինք» նախադասության մեջ* քարից *ելման իմաստ է արտահայտում, իսկ «*Քարից *մի կտոր* պոկեցինք» *նախադասության մեջ* քարից *անջատման իմաստ ունի*։ *«Այս* քարից սկսեցինք չափել» *նախադասության մեջ* քարից *ելման-սկզբնակետի իմաստ ունի*։

Ելման բացառականը խնդրային և պարագայական իմաստների միահյուսում է ներկայացնում։

Ելման բացառականով լրացում են ստանում ելնել, դուրս գալ, հոսել, գնալ, բարձրանալ, փչել, բուրել, հանել, քամել, ծորել, ծագել, քաղել, բուսնել, բխել, քափվել, վիժել *և այլ բայեր*։

«Ապառաժ քարից *կրակ* դուրս թռավ» *(ՀԹ, 2, 99)*։ *«Էն ի՞նչ լույս* է բխում քարից» *(ՀԹ, 2, 106)*։ «Քարից, հողից *հաց* քամե» *(Իս., 1, 106)*։ *«Քրտինք* էր գոլորշիանում *նրանց* մարմնից»

(Բակ., 167)։ «Բոց հանեց ժայռից սմբակը ձիու» (Իս, 1, 378)։ «Արյունը գնում է գլխից» (ՍՁ, 3, 229)։ «Եվ գիտեմ աղբյուր հանել քարից» (ՀՍՀԵՄ, 35)։ «Մեղր է քամում փշից անգամ» (ՀՍՀԵՄ, 85)։

Ելման բացառականը շատ է գործածվում փոխաբերաբար։ Այս դեպքում բայի լրացումը ցույց է տալիս այն առարկան, որից ոչ ուղղակի իմաստով ելնում է մի բան։

«Գլխից էս տեսակ բաներ է հանել» (ՀԹ, 2, 91)։ «Ես որ մեռնիմ ու իմ վերքից Եթե մի վարդ դուրս ծլեր» (Իս., 1, 110)։ «Եվ հնչում էին այնտեղ ոգելից Ազատ երգ ու տաղ ազատ սրտերից» (Ծ, 16)։ «Ինչ-որ հնադարյան մարդու շունչ էր փչում նրա ջլուտ արտաքինից և ներքին լարված հոգեկան մեծ ուժից» (ԴԴՎ, 5)։ «Երանություն է բուրում այդ մատաղ զույգից» (ԴԴՎ, 53)։ «Ուր միայն մեկի ծառն երջանկության Բուսնում է տասի ավերակներից» (ՀՀ, 34)։

Ելման բացառականի փոխաբերական գործածությունը կարող է մեկնաբանվել նաև պատճառի իմաստով։ Օրինակ՝ «Անհամբերությունից միայն չարիք է առաջանում» (Մուր., 5, 242)։

Մի շարք կապակցություններում կարող են համատեղվել ելման և ծագման իմաստները։

«Չէ՞ որ գործերի այժմյան հիվանդոտ դրությունը բխում է մեր հին վերքերից» (Ր, 7, 81)։ «Եվ նրա ամեն բառ ու հնչյունից մի անդարձ կորած աշխարհ է հառնում» (ՀՍՀԵՄ, 18)։

Բացառական հոլովով դրված լրացման մեջ կարող են համատեղվել նաև ելման և միջոցի իմաստները, թեև այս վերջինը շատ թույլ է արտահայտվում։

«Միայն հարվածում էին թնդանոթներից» (ՍԽՄԽ, 391)։ «Իր օրում հրացանից չէր կրակել» (Բակ., 39)։

Ելման բացառականով կազմված են մի շարք դարձվածքներ, ինչպես՝ ձեռքից գալ, հնարել մի բանից,— մեկից, գլխից դուրս տալ, համբերությունից դուրս գալ, մտքից ընկնել, տակից գլխից դուրս տալ, խոսքից դուրս գալ, գլուխ հանել մի բանից. աչքից կրակ թափել, կաշվից դուրս գալ, սրտից արյուն կաթել և այլն։

«Թե՞ ավել հունար դուրս կգա ձեռից» (ՀԹ, 2, 42)։ «Ինչ բաներ ես դու քեզնից հնարում» (ՀԹ, 2, 92)։ «Սկսեց գլխից դուրս տալ» (ՀԹ, 1, 470)։ «Նա էլ կարող է մի օր դուրս գալ համբերությունից» (Շիրվ., 3, 130)։ «Մտքից չի ընկնում ահռելի հսկան» (ՂԱ, 370)։ «Կսկսեն տակից գլխից դուրս տալ»

(*ՂԱ, 409*)։ *«Շողակաթ նանի խելքը* գլխիցը թռավ» (*ՂԱ, 582*)։ *«Ո՞վ կարար նրա դեմ խոսել, նրա* խոսքից դուրս գալ» (*Թակ., 17*)։ *«Ինչպե՞ս է* գլուխ հանել այս ամենից» (*ՋԴՄՆ, 2, 134*)։ «Աչքերից *կրակ* թափելով, *ժառս եղավ»* (*ՆԴ, 1, 140*)։ *«Հիմա* ելնում եմ *մենքմեր* կաշվից» (*Զ, 389*)։ *Ամեն բան Արևահատի* ձեռիցը գալիս էր» (*ՂԱ, 220*)։ «Սրտից *արյուն* էր կաթում» (*ՍԽՄԽ, 127*)։ *«Այժմ նա* կաշվից դուրս էր գալիս *ուրախ, սրտաբաց երևալու»* (*ՋԴԱՎ, 755*)։

Ը. Սերման (ծագման) բացառական.— *Բայի լրացումը ցույց է տալիս այն առարկան, որից ծագում, առաջանում է մի բան։ Այս իմաստը մոտ է նախորդներին (մասնավորապես ելման բացառականին), սակայն տարբերվում է նրանով, որ այս դեպքում բացառականը տարածական նշանակություն չունի, այլ սոսկ առարկայական (գերազանցապես կենդանի էակի) իմաստ ունի։ Այսպիսի լրացում ստանում են ծագման, սերման, գործողություն ցույց տվող սահմանափակ թվով բայեր, ինչպես՝* ծագել, սերել, ծնվել, առաջանալ, առաջ գալ, սանղծվել *և այլն*։

«Ոմանք ասում են տանու շունը առաջ է եկել *մի վայրի տեսակից» (ՀԹ, 1, 419)։ «Ինքը սերունդ էր մի մեծ տոհմի, որ շառավիղում* է սառվածներից» (*Ր, 7, 230*)։ *«Ասում են՝ մարդն* առաջ է եկել կապիկից» (*ՍՁ, 3, 135*)։ *«Նա* ծնվել է *աղքատ* ծնողներից»։

Երբեմն սերման, ծագման իմաստը կարող է համատեղվել պատճառի իմաստի հետ։

«Բոլոր նրա ցանկությունները ու ձգտումները հենց այդ բանից են առաջանում» (*Շիրվ., 3, 65*)։ *«Ձեր բոլոր դժբախտությունն* առաջանում է *ձեր հոգու թերի* ուղղությունից *և մտքի ծույլ* կրթությունից» (*Շիրվ., 3, 284*)։ *«Նրա* արյունից կվառվի *մի օր վրեժն ահավոր»* (*ՎՏ, 2, 133*)։

Թ. Նյութի բացառական.— *Լրացումը ցույց է տալիս այն առարկան, որից, իբրև նյութից, ստացվում, առաջանում է մի բան։ Ընդհանրությունն ունենալով նախորդ՝ սերման, ծագման բացառականի հետ, նյութի բացառականը չի նույնանում նրա հետ։ Այս դեպքում լրացմամբ արտահայտված առարկան նյութ է դառնում ստեղծվող առարկայի համար և ոչ թե սոսկ աղբյուր, որից առաջ է գալիս մի բան։ Մ. Աբեղյանը նյութի բացառականը միասնական էր համարում ծագման բացառականի հետ՝ դրանք*

քննելով նույն վերնագրի տակ[1]։ Վ. Առաքելյանը նյութի բացառականն անջատում է ծագման կամ սերման բացառականից, սակայն այն չի քննում առանձին, այլ բաղկացության բացառականի հետ դիտում է իբրև մեկ իմաստ[2]։

Իհարկե, նյութի բացառականը միաժամանակ իմաստային ընդհանրություն ունի բաղկացության բացառականի հետ (երկուսն էլ ցույց են տալիս այն առարկան, որից գոյանում է մի բան), սակայն նրա հետ չի նույնանում, քանի որ նյութի բացառականով արտահայտված առարկան նրանից կազմված առարկայի առկայությամբ դադարում է գոյություն ունենալուց իբրև այդպիսին. այն բաղադրվում է ստեղծված առարկայի մեջ։ Այսպես, ցեխից (պատ) շինել կապակցության մեջ ցեխ առարկան այլևս դադարում է գոյություն ունենալուց. այն արդեն վերածվում է պատի։ Մինչդեռ վարդերից (փունջ) հյուսել կապակցության մեջ վարդերը չեն դադարում գոյություն ունենալուց։

Նյութի բացառականով խնդիր են առնում ստեղծման գործողություն ցույց տվող մի շարք բայեր, ինչպես՝ ստեղծել, շինել, պատրաստել, կերտել, գոյանալ, ձուլել, եփել, թխել, կոփել, գործել, մանրել և այլն։ Իբրև լրացում հանդես են գալիս ատաղձ դարձող թանձրացական մի շարք գոյականներ, ինչպես՝ հող, քար, փայտ, մետաղներ (ոսկի, արծաթ, երկաթ, պղինձ և այլն), բույսեր և այլն։

«Լույս-խմորից գնդեր շինեց» (Իս., 2, 133)։ «Երբ Յահվեն մարդուն ստեղծեց հողից» (Իս., 2, 196)։ «Անձրևի ջրից գոյացած մի առվակ ծլլալեն ներս խուժեց բարձի վրայով» (ՆԴ, 1, 40)։ «Փայտից նրա համար շինում էր խաղալիքներ» (Շիրվ., 3, 439)։ «Այնուհետև աշխատում էր նա այդ գերանից պատրաստել մի լաստափայտ» (Ր, 7, 219)։ «Ճաշը պետք է պատրաստվեր հետո, որսի մսից» (Ր, 7, 495)։ «Միևնույն ծաղկից օձը թույն է պատրաստում, իսկ մեղուն՝ մեղր» (ԳՄԼՉ, 507)։ «Հողմը ժայռից վագր է ձուլում» (ՀԱՀԵՄ, 57)։

Նյութի բացառականը գեղարվեստական պատկերավոր խոսքում հաճախ է գործածվում փոխաբերաբար։

«Հարկավոր է բանվորի տղից Պրոֆեսորներ ձուլել» (Չ, 348)։ «Հնչյուններից պիտի կերտել մի հուշարձան» (ՊՍԱՉ, 162)։

Երբեմն դժվար է որոշել նյութի և բաղկացության իմաստնե-

[1] Մ. Աբեղյան, նշվ. աշխատ., էջ 449։

[2] Վ. Առաքելյան, նշվ. աշխատ., էջ 144—145։

րի սահմանը։ Կան մի շարք կապակցություններ, որոնցում բացառականը կարող է մեկնաբանվել այդ երկու իմաստներով համապատասխանաբար։

«Միակտուր fարից *սքանչելի ապարանք* ստեղծեց» *(Ր, 7, 231)։ «Այգեպանը շտապում է պահունի* մրգերից *կախաններ* շինել» *(ՂԱ, 97)։ «Սա մարմնեղեն չէ, այլ* ժայռից կազմված» *(ՂԱ, 396)։*

*Երբեմն նյութի բացառականը կարող է ունենալ նաև միջոցի երանգ։ Օրինակ՝ «*Քոլfից *մի ձեռք տեղաշոր* կապեմ» *(Բակ., 20)։ Փոխաբերաբար գործածվող նյութի բացառականը ևս միջոցի երանգ ունի։ Օրինակ՝ «Ուրիշները միլիոնը* վաստակում են *մի* շաւրվանից» *(Շիրվ., 3, 347)։*

ժ. Բաղկացության բացառական.— *Բայի լրացումը այս իմաստով ցույց է տալիս այն առարկաները, որոնցից բաղկացած, գոյացած է մի բան։ Իբրև կանոն, այս դեպքում լրացումը հոգնակի գոյական է կամ մեկից ավելի եզակի գոյականներ։ Բաղկացության բացառականով լրացում են ստանում բաղադրման, բաղկացման իմաստ ունեցող բայերը, որոնց մի մասը կարող է ստանալ նաև նյութի բացառականով խնդիր։ Այդ բայերից են՝* հյուսել, բաղկանալ, պատրաստել, կազմել, ստեղծել, շինել, հավաքել, գոյանալ, կապել, կերտել *և այլն։*

«Մեծ բանակ կազմեց *սեփական* զորքերից» *(Մուր., 4, 86)։ «Բյուր* կառափներից *բուրգեր* է կերտում» *(Իս., 2, 10)։ «Անթոլոգիան* կազմվեց *հայ գեղարվեստական խոսքի ընտիր* նմուշներից» *(Իս., 4, 356)։ «Եվ այդ* վարդերից *փնջեր* պիտ հյուսվին» *(ՀՀ, 95)։ «Սուրբին հարկը* բաղկացած էր խանութներից ու գրասենյակներից» *(Շիրվ., 3, 9)։ «Կաղնու* ոստերից հյուսեցին *պսակ» (ՂԱ, 13)։*

Երբեմն եզակի գոյականը ևս կարող է դառնալ բաղկացության բացառական։ Օրինակ՝ «Կանգնած էր դրոգասյան Յագոյի հնօրյա տնակը, բաղկացած *ընդամենը մի մեծ* սենյակից» *(ՆԴ, 1, 63)։*

Բաղկացության բացառականը ևս կարող է փոխաբերական գործածություն ունենալ։

«Եվ ես կհյուսեմ *պսակ քո գլխին Վառ արշալույսի ոսկի շո*ղերից» *(ՀՀ, 52)։ «Միրտը* բաղկացած *էր էոլյան նվագարանի* լարերից» *(Շիրվ., 3, 113)։ «Քնքուշ* երգերից հյուսում եմ *մանյակ» (ՎՏ, 1, 77)։*

Երբեմն բաղկացության բացառական են ստանում նաև այն-

պիսի բայեր, որոնք ուղղակիորեն կտրել, կառուցել չեն նշանակում։ Օրինակ՝ «Վերջինի սյուները տաշված էին կաղնու հաստ գերաններից» (Մուր., 5, 266)։ Այս նախադասության մեջ տաշվել բայը գործածված է շինվել, պատրաստվել նշանակությամբ, ուստի և գերաններից լրացումն ունի բաղկացության իմաստ (ի դեպ, պետք է նշել, որ տաշել (տաշվել) բայի մոտ բացառականն ունի անջատման իմաստ։ Օրինակ՝ «Փայտից կտորներ տաշեց»)։

Որոշ կապակցություններում բացառականը կարող է արտահայտել և՛ բաղկացության, և՛ վերաբերության իմաստներ։ Օրինակ՝ «Վերf ու ցավից դու երգ ճյուսիր սրտալի» (Ծ, 213)։

ԺԱ. Ընդօրինակման բացառական.— Բայի լրացումը ցույց է տալիս այն առարկան, որից մի բան է ընդօրինակվում, որի նմանությամբ մի բան է ստեղծվում[1]:

Համեմատաբար սակավ են այսպիսի լրացում ունեցող բայերը։ Դրանցից են՝ թարգմանել, սովորել, ընդօրինակել, օրինակ վերցնել, դաս առնել, նկարել և այլն։ Օրինակներ՝ «Հանձն առա թարգմանել Գյոթեից, Պուշկինից և Լերմոնտովից» (Իս., 4, 157)։ «Ժողովրդից սովորեց նա ռեալիզմը» (Իս., 4, 179)։ «Քչերը չէին օգտվում նրա տված խորհուրդներից և օրինակ վերցնում նրա տնտեսությունից» (ՆԴ, 1, 100)։ «Նրան էին լսում և նրա դպլայլիկի բյուրավոր ելևէջներից դաս առնում» (ՂԱ, 105)։ «Օրինակ առ հենց մեր թագավորից և քո ամուսնուց» (Մուր., 4, 67)։

2. Մասնական խնդրային բացառական

Բայի լրացման դերում հանդես եկող մասնական բացառականը ցույց է տալիս այն առարկան կամ առարկաների ամբողջությունը, որը իր մի մասով է կրում գործողությունը։ Մասնական բացառականը ամենից շատ խնդրի դեր է կատարում, ուստի բայի այս լրացումը հարմար է անվանել մասնական-խնդրային բացառական՝ ի տարբերություն մասնական բացառականի այլ կիրառությունների։ Մասնական բացառականը կարող է երկու կարգի կիրառություն ունենալ։ Մի դեպքում այն սոսկ գոյականի կամ գոյականաբար գործածված այլ խոսքի մասի լրացում է (թվական, ածական, դերանուն), և այդ դեպքում մասնական բացառականը ուղղակի կապ չունի բայի հետ։ Օրինակ՝ «Երե-

[1] Բացառականի այս իմաստը առաջին անգամ դիտված է Վ. Առաքելյանի կողմից [illegible] նշվ. աշխատ., էջ 150)։

խաներից *երկուսը հիվանդ են*», «Տղաներից *մեծը Վարդանն է*», «Ձեզնից *ո՞վ է Գրիգորը*» *և այլն։ Այս նախադասություններում* երեխաներից, տղաներից, ձեզնից *մասնական բացառականները դարձել են* երկուսը *գոյականաբար գործածված թվականի,* մեծը *գոյականաբար գործածված ածականի և* ո՞վ *հարցական դերանվան լրացում։ Տարահյուսական տեսակետից, անշուշտ, այդ բացառականները ինքնուրույն դեր չունեն, այլ հիշյալ թվականի, ածականի, դերանվան հետ միասին են կատարում նախադասության մեկ անդամի պաշտոն։*

Սակայն կան դեպքեր, երբ մասնական բացառականը թեև ունի անմիջական լրացյալ՝ արտահայտված գոյականով կամ գոյականաբար գործածված որևէ խոսքի մասով, այնուամենայնիվ, որոշ չափով հարաբերություն ունի բայի հետ։ Այսպես է, օրինակ, հետևյալ նախադասություններում.

«Նրանցից *գոնե մի քանի* վայրկյան վերադարձնեի *այժմ ինձ*» *(Մուր., 4, 59)։ «Խեղճ կինը, երևի, հիշեց յուր անցյալը և* մտաբերեց *նմանօրինակ* դեպքեր *յուր* կյանքից» *(Մուր., 4, 61)։ «Ամեն անգամ քո* տվածից *երբ* մի բան ես *դու* տանում» *(ՀԹ, 1, 156)։*

Առաջին նախադասության մեջ նրանցից, *անշուշտ, լրացում է* վայրկյան *գոյականի, սակայն միաժամանակ այն* վերադարձնել *բայի համար խնդրային հարաբերություն արտահայտող լրացման երանգ ունի։ Երկրորդ և երրորդ նախադասությունների մեջ* կյանքից, տվածից *բացառականները* մտաբերեց, տանում ես *բայերի լրացման դեր ունեն։*

Հաճախ մասնական բացառականի հետ նույն նախադասության մեջ լինում է չափի իմաստ ունեցող որևէ գոյական կամ գոյականաբար գործածված բառ, որը կարող է և՛ համարվել այդ բացառականի լրացյալ, և՛ չհամարվել։ Այս դեպքում մասնական բացառականը կարող է դիտվել կա՛մ նախորդի նման՝ հավասարապես երկու բառի (գոյականի և բայի) լրացում, կա՛մ միայն բայի լրացում՝ մասնական ուղիղ խնդիր։

«Գալիս էին ջրաղացը հատկապես Օհան-ամու ընտիր թյությունից մի չիբուխ քաշելու» *(Իս., 3, 131)։ «Մի* կշեռք *էլ* ասածիցդ տուր» *(Իս., 3, 511)։ «*Չուտեն *իմ* փողից *և ոչ մի* կոպեկ» *(ՀԹ, 1, 190)։ «*Խմիր *այս* ջրից *մի* բաժակ» *(Մուր., 4, 34)։*

Սակայն կան բազմաթիվ կապակցություններ, որոնցում մասնական բացառականը անմիջապես բայի լրացում է։ Դրանցում բացառականի և բայի միջև չկա որևէ լրացյալ, որին վե-

բաների այդ բացառականը (ինչպես նախորդ դեպքերում էր լինում)։ Այսպես, երբ ասում ենք «խմեցի այդ ջրից», ապա ջրից բացառականը միայն խմեցի բայի լրացումն է և արտահայտում է խնդրային հարաբերություն։ Մասնական բացառականն այս դեպքում ունի ուղիղ խնդրի շարահյուսական դեր, և այդպիսի կապակցությունը համարժեք է հայցականով ուղիղ խնդիր-բայ կապակցությանը (խմել ջրից և խմել ջուր, ուտել հացից և ուտել հաց)։ Այս տեսակետից պատահական չէ, որ երբեմն նույն ներգործական բայն ստանում է հայցականով և բացառականով համազոր խնդիր լրացումներ։

«Գործազրկության առաջին շրջանում ծախեց ժամացույցը, զգեստներից» (Իս., 3, 163)։ «Հիշում էին քաղաքի կռիվներից, իրենց ընտանիքներին» (ԱԶ, 8, 418)։

Իհարկե, այդ զուգահեռ կապակցություններում լրացյալ բայի նկատմամբ ունեցած հարաբերությունն է համարժեք, սակայն էական տարբերություն կա հացից ուտել և հաց ուտել կապակցությունների միջև։ Առաջին դեպքում հաց գոյականը իր մի մասով է կրում ուտելու գործողությունը, իսկ երկրորդ դեպքում՝ ամբողջությամբ։ Հետևաբար քերականական իմաստով համարժեք լինելով՝ այդ կապակցություններն էապես տարբերվում են իրարից։

Մասնական-խնդրային բացառականով լրացում ստանում են խմել, ուտել, երգել, ծախել, վաճառել, ծախսել, առնել, տալ, կարդալ, նվագել, ուզել, խնդրել, տանել, ունենալ, համարել, ծխել, ուղարկել, ստանալ, կծել և այլ բայեր։ Լրացում դառնում են թանձրացական բազմաթիվ գոյականներ։

«Յարս էլ խմե՛ց էդ ջրից» (ՀԹ, 2, 48)։ «Այս ուռու տակ մենք երգեցինք Սիրո չքնաղ երգերից» (Իս., 4, 120)։ «Իր գրքերից նվիրեց ինձ սրտաբուխ մակագրություններով» (Իս., 4, 132)։ «Դու խնդրում ես, բայց որի՛ց» (ՀԹ, 1, 54)։ «Վերջը Գառնիկի մսիցն է ուզում» (ՀԹ, 2, 235)։ «Թառից-մառից չունե՞ս» (ՆԴ, 1, 110)։ «Դու բեր նրա գրքերից» (Շիրվ., 8, 93)։ «Հաճախ այցի էր գալիս նրան, անգիր կարդում պարսիկ հին բանաստեղծների գործերից» (ՍԽՄԽ, 181)։ «Ես գրել եմ, որ նրանց սերմերից ուղարկեն ինձ» (Շիրվ., 8, 117)։ «Բա այդ մրգերից ինչի՞ չես ուտում» (ՂԱ, 18)։ «Ով ասես չի գալիս տանում անեցիների ընզուն զանգերից» (ՎԽԳԼ, 42)։

Մասնական բացառականով կազմված որոշ կապակցություններ արդի հայերենում բարբառային բնույթ ունեն և դուրս են

գալիս գործածությունից խոսքը *վերաբերում է* ճամբռւել (պաչել), կծել *և նման բայերով և մասնական բացառականով կազմված կապակցություններին։*

«Մի բերեք տեսնեմ, ճակատիցը պաչեմ» *(ՀԹ, 1, 304)։* «Համբուրեց *երկու* քշերից» *(Ր, 7, 43)։ «Երբեմն* չորերից կծում է մի *բերան» (ՍՁ, 3, 55)։ «Փղի* ոտքից *մի պինդ* կծեց» *(ՂԱ, 40)։*

Երբեմն պատահում են այնպիսի կապակցություններ, որոնցում բացառականը մասնական-խնդրային իմաստ ունի, սակայն գործածված է գործիական հոլովի իմաստով։ Եթե այդ կապակցություններում հիշյալ բացառականի փոխարեն գործիական դնենք, ապա կապակցությունը ճիշտ կլինի, բայց մասնական իմաստը չի պահպանվի։ Հետևաբար ճիշտ է մասնական բացառականը՝ գործիականի իմաստով։ Օրինակ՝ «Շաքաթվա մեջ խնայած դրամից առնում էր *ծաղիկներ ու մոմեր» (Իս., 3, 100)։ Այս նախադասության մեջ (խնայած)* դրամից առնել *կապակցությունը չունի այն իմաստը, ինչ որ կունենար, ասենք, «Նրա ունեցած* դրամից *մի քիչ* առա» *նախադասության մեջ, այլ «(խնայած)* դրամի մի մասով առնել» *իմաստը (սակայն ոչ երբեք «(խնայած)* դրամով առնել» *իմաստը)։*

Մի քիչ այլ են այն կապակցությունները, որոնցում բացառականը մասնական իմաստին զուգակցում է նյութի իմաստը։ Օրինակ՝ «Մեր տված փայտից կրակ են անում» *(ՂԱ, 86)։*

Մի շարք բայերի՝ բացառական հոլովով դրված լրացումը կարելի է մեկնաբանել երկու իմաստով՝ և՛ մասնական-խնդրային, և՛ վերաբերության։ Իբրև լրացյալ հանդես են գալիս իմացական և ասացական մի շարք բայեր, ինչպես՝ ճասկանալ, իմանալ, ըմբռնել, ճիշել, վերճիշել, ասել, պատմել, կարդալ, ճարց տալ *և այլն։*

«Նրանք պատմում են *իրենց* դասերից, ընկերներից, ուսուցիչներից, *ես՝ իմ կարդացած* գրքերից *և տպարանի* անցուդարձերից» *(ՍՁ, 3, 374)։ «Դու կադրային սերժանտ ես,* կողմնացույցից կճասկանաս» *(ԲՀՍՁ, 188)։ «Երգել են նրանք մեր պաղած* ճողից, Գինուց խաղողից... Երգել *են նրանք մեր ցորեն* ճացից, *Մեր* խինդ ու լացից, *Մարտում* ընկածից» *(ՊՍԱՁ» 15)։*

Կան նաև այնպիսի կապակցություններ, որոնցում բացառականը թեև անմիջապես խնդրային ֆունկցիա չունի, սակայն մասնական իմաստ է արտահայտում և կարող է մեկնաբանվել ոչ միայն իբրև որևէ գոյականի (կամ գոյականաբար գործած-

ված, նրան հարաբերակից բառի) լրացում, այլև բայի վերաբերության խնդիր։

«Ընկերս հայտնել է, թե՝ ինքը բանաստեղծությունից բան չի հասկանում» (Իս. 3, 126)։ «Պատմել է ինձ իր կյանքից դրվագներ» (Իս., 4, 34)։ «Ասում են, թե ոչինչ չեն հիշում իրենց մանկությունից» (ՍԶ, 3, 60)։ «Բայց այդ բոլորից գյուղը միայն հասկացավ այն, որ դրությունը ծանրանում է» (Բակ., 38)։ «Ոչինչ չէր կարողանում ըմբռնել շրջապատից» (ԶԴՄՆ, 2, 54)։ «Գոնե մի բան իմանար դրսում կատարվածից» (ՍԽՄԽ, 776)։

Պարապել բայի մոտ բացառականը կարող է մեկնաբանվել և՛ մասնական-խնդրային, և՛ սահմանափակման իմաստներով։ Օրինակ՝ «Ուզո՞ւմ եք ձեզ հետ պարապեմ հայերենից» (ՆԴ, 2, 558)։

3. Մասնական-ենթակայական բացառականով կապակցություններ

Ժամանակակից հայերենում ենթական ուղղական հոլովով է դրվում։ Սակայն մի շարք կապակցություններում մասնական բացառականը կատարում է իր գոյական (կամ գոյականաբար գործածված որևէ բառ) լրացյալի՝ նախադասության բուն ենթակայի դերը՝ վերջինիս զեղչումով։ Այսպես, երբ ասում ենք «Նրա առակներից թարգմանվել են ֆրանսերեն», ապա այստեղ առակներից մասնական բացառականը ենթակայի դեր է կատարում նաև՝ բուն ենթակայի (մի քանիսը, մի քանի առակներ, որոշ թվով առակներ և այլն) զեղչման պատճառով։ Իսկ այդպիսի զեղչումն օրինաչափ է, անհրաժեշտաբար է տեղի ունենում, ավելորդ կրկնությունից խուսափելու համար։ Գեղեցիկ չէր հնչի, եթե ասեինք. «Նրա առակներից մի քանի առակներ (կամ որոշ թվով առակներ) թարգմանվել են ֆրանսերեն»։

Սակայն շարահյուսական տեսակետից անհարիր է, որ ենթական միաժամանակ բայի լրացում է։ Հենց այստեղից էլ դրսևորվում է լեզվական երևույթների բնորոշ դիալեկտիկական հակասություններից մեկը. տվյալ ձևը մի կողմից շարահյուսական-իմաստային կախման մեջ է բայից, իսկ մյուս կողմից այն քերականորեն անկախ է բայից։ Մասնական-ենթակայական բացառականի յուրահատկությունն էլ հենց այն է, որ նա և՛ անկախ է, և՛ կախյալ (բայի լրացումը)։ Անկախ է նրանով, որ արտահայտում է գործողության ենթական (գործողը, մի բան անող կամ եղող առարկան), սակայն կախյալ է նրանով, որ

բայի հետ կապված է։ Հնարավոր է այսպիսի բացառականով կապակցությունը շրջել, և մասնական բացառականը կդառնա խնդիր (մասնական ուղիղ խնդիր)։ Օրինակ՝ առակներից թարգմանվել են–առակներից թարգմանել են, որոնցից առաջինում առակներից ձևը մասնական-ենթակայական, իսկ երկրորդում՝ մասնական-խնդրային բացառական է։

Մասնական-ենթակայական բացառականով կապակցությունները կազմվում են բազմաթիվ բայերով։

«Չէ՞ որ հայոց զորքերից էլ շարունակ ջարդվում էին» (Մուր., 4, 126)։ «Կարելի ա ուսից բանից պատռանի» (ՀԹ, 1, 399)։ «Հոտավետ մի հատ խնձորը թեկուզ դնես կոշտ քարերի մեջ, հոտիցը նրանց էլ կկպչի» (ՎՓ, 4, 244)։ «Թե իշխան ձկնիցը կա, մի քիչ մաղացու դրկի» (ՎՓ, 4, 302)։

Երբեմն այլ իմաստ ունեցող ձևը նման է մասնական-ենթակայական բացառականին։ Օրինակ՝ «Կայծն և Արարատյան դաշտից» (ԴԴՎ, 99) նախադասության մեջ դաշտից բացառականը մասնական չէ, այլ զեղչված որևէ բայի լրացում (հավանաբար՝ եկած, ժամանած կամ այլ ձևի)։

Մասնական-ենթակայական բացառականի հետ սերտորեն առնչվում են ստորոգելիական վերադիր դարձող նույնիմաստ բացառականի ձևերը։ Այս դեպքում, անշուշտ, բացառականը բայի լրացում չէ։

«Շամիրը Դիզակու աչքերիցն էր» (ՂԱ, 577)։ «Մեր լավ ծխերից են» (ՆԴ, 1, 111),

4. Վերաբերության բացառական

Բայի լրացումը ցույց է տալիս այն առարկան, որին վերաբերում է խոսքը, որի մասին մի բան է խոսվում, պատմվում։ Այս բացառականը համարժեք է գրաբարյան բացառականի՝ զ նախդիրով կապակցությանը, որը հին քերականություններում կոչվել է պատմական բացառական (մի ժամանակ ոմանք պատմականը առանձին հոլով են համարել)[1]։

---

[1] Բացառականի այս իմաստը պատմական էր կոչում նաև Մ. Աբեղյանը, որը ամենայն մանրամասնությամբ ներկայացրել է այն (տե՛ս նշվ. աշխատ., էջ 454)։ Բացառականը այս իմաստով իբրև վերաբերության խնդիր դիտել է Ս. Աբրահամյանը (տե՛ս «Հայոց լեզվի ուսուցման հիմունքները միջն. դպրոցում», Երևան, 1951)։ Վ. Առաքելյանը գործածում է պատմական կամ վերաբերության բացառական տերմինը (տե՛ս նշվ. աշխատ., էջ 147—148)։

Վերաբերության բացառականը երկու տեսակ է լինում։ Մի դեպքում այդ բացառականի լրացյալ են լինում ասացական բայերը՝ ասել, խոսել, պատմել, բարբառել, զրուցել, բամբասել, համբավել *և այլն։ Իբրև լրացում հանդես են գալիս և՛ անձի, և՛ իրի անունները։*

«*Ինչպե՞ս եք ապրում, դու* ձեզնից պատմի. *Ձեր* օր ու կյանքից, *Ձեր* ցավ ու դարդից» (*ՀԹ, 2, 36*)։ «Խոսում են *կոռու հին-հին* քաջերից» (*ՀԹ, 2, 44*)։ «*Բայց* չեմ գանգատվել. բամբասել քեզնից» (*Իս., 1, 203*)։ «*Գնդակն առած գնում էր փուչ աշխարքից,* Գանգատվելով *մարդու անգութ* արարքից» (*ՀԹ, 1, 361*)։ «*Հեռավոր,* քեզնից չեմ տրտնջում» (*ՎՏ, 1, 62*)։ «*Չէ՞ որ դուք* Եվրոպայից եք բարբառում *շարունակ*» (*ՎՏ, 2, 339*)։ «*Մենք թափառում էինք և* զրուցում *մեծ մասամբ* անցյալից» (*ԳՄԼՉ, 403*)։

Երկրորդ դեպքում վերաբերության բացառականը լրացում է դառնում հարադրական այնպիսի բայերի, որոնց անվանական բաղադրիչը ասացական բայի արմատին զուգահեռ գոյական է։ Այդպիսի հարադրական բայերից են՝ հարց տալ, հարց ու փորձ անել, հարցմունք անել, զրույց անել, լուր տալ (խաբար տալ). լուր առնել, խոսք գցել, պատմություն անել. տեղեկություն տալ *և այլն։ Այս դեպքում էլ լրացում դառնում են ինչպես անձի, այնպես էլ այլ անուններ։*

«*Տխուր* լուր է առել *նա* քեզանից» (*Մուր., 4, 86*)։ «Հարցմունք արավ *լիքը* բառից» (*ՀԹ, 1, 161*)։ «*Իր* շանից *հետևյալ* պատմությունն է անում» (*ՀԹ, 1, 422*)։ «*Հիմի* տեղեկություն տանք *թագավորի* աղիցը» (*ՀԹ, 1, 469*)։ «*Երբ* քաջությունից. խելքից, հանճարից *մարդ* խոսք են գցում՝ *ծիծաղում է*» (*ՀԹ, 1, 505*)։ «*Այնտեղ* են լուրեր առնում *իրենց* հայրենիքից *ու* ազգականներից» (*Շիրվ., 8, 333*)։ «Պատմություններ է անում *շահի* ժամանակից, *անցած գնացած* օրերից, ոսկից *և* անտառից» (*Բակ., 119*)։

Սակայն պատահում են դեպքեր, երբ վերաբերության բացառականը գործածվում է ոչ թե իբրև համապատասխան ասացական բայից կազմված անվանական բաղադրիչ ունեցող հարադրական բայի լրացում, այլ այդպիսի կազմություն և իմաստ ունեցող գոյական պարունակող նախադասության մեջ որպես ոչ ասացական բայի լրացում։

«*Իմ* դարիբեն *խաբար* չի գա» (*Իս., 1, 157*)։ «*Տղերք, էս ա որ* պախրիցը խոսք բնկավ, *ես ձեզ մի բան պատմեմ*» (*ՀԹ, 1,*

359)։ «Նրա խանգարված ուղեղի մեջ մութ հիշողություններ էին հարուցանում իր առողջ ժամանակվա նախապաշարված-քարեպաշտական կյանքից, խաչերից ու սրբերից» (ՆԴ, 1, 17)։

Վերաբերության բացառական կարող են ստանալ նաև սովորաբար այլ ձևերով լրացում պահանջող բայերը։ Այսպես, հետաքրքրվել բայը գործիականով է խնդիր ստանում (հետաքրքրվել մի բանով, մեկով), սակայն կարող է ստանալ նաև վերաբերության բացառական։ Օրինակ՝ «Հետաքրքրվում էին Թավրիզի կյանքից, շահից, պարսիկների գործերից» (ՍԽՄԽ, 533) նախադասության մեջ հետաքրքրվել բայը գործածվել է հարցուփորձ անել, տեղեկանալ նշանակությամբ։

Որոշ կապակցություններում բացառականը համատեղում է վերաբերության և ձևի իմաստները։ Օրինակ՝ «Խոսում էր անկապ, տակից-վրայից, սարից-ձորից» (Իս, 3, 143)։

Վերաբերության իմաստը կարող է համատեղվել նաև պատճառի իմաստի հետ։ Օրինակ՝ «Ես լսում էի խոսքերը նրա Եվ անուշ լալիս իմ անուրջ բախտից» (ՎՏ, 1, 67)։

Պետք է նշել, որ ժամանակակից հայերենում վերաբերության իմաստն ավելի շատ արտահայտվում է սեռականով և մասին, վերաբերյալ, վերաբերմամբ կապերով։ Պատահում են դեպքեր էլ, երբ վերաբերության իմաստը նույն նախադասության մեջ երկու ձևով է արտահայտվում։ Օրինակ՝ Զրուցում էին եղանակից, պարսից կողմերում երևացած սև ցավի մասին» (ՍԽՄԽ, 541)։

Վերաբերության բացառականով կազմված են որոշ դարձվածքներ, ինչպես՝ գլուխ ունենալ մի բանից, գլուխ հանել մի բանից և այլն։ Օրինակ՝ «Նա էր միայն, որ գլուխ ուներ պղնձաձանման գործից» (ՍԽՄԽ, 145)։

5․ Հաղորդման բացառական

Բայի լրացումը ցույց է տալիս այն առարկան, որից որևէ բան է հարցվում, տեղեկացվում։ Հաղորդման իմաստի դրսևորման հիմնական ձևը ժամանակակից հայերենում տրականն է (Պետրոսին հարցնել, Գրիգորին հարց տալ և այլն)։ Սակայն մի քանի բայերի համար (հարցնել, հարց ու փորձ անել, տեղեկանալ) հաղորդման իմաստով լրացումը դրվում է նաև բացառականով։

Հաղորդման բացառականը դիտված է Վ. Առաքելյանի կող-

մից[1]*։ Սակայն Վ. Առաքելյանը հաղորդման բացառական է համարում նաև* լսել, իմանալ, հասկանալ, հավատիանալ, սովորել, ուսանել, ընդօրինակել *բայերի լրացումը։ Իրականում դրանց մի մասը* (լսել, իմանալ) *պահանջում է անձի—ելակետային բացառականով, իսկ մյուսները՝ ընդօրինակման բացառականով լրացում։ Բուն հաղորդման բացառականով լրացում պահանջող բայերը թվով սահմանափակ են։ Լրացում լինում են անձ ցույց տվող կամ անձնավորված գոյականները։*

«Այդ Վեդունց *Սարգսից մի* հարցնենք՝ *թե ինչո՞ւ է քահանային արգիլել յուր որդիքն ուսման ղրկելու» (Մուր., 5, 258)։ «Էկա* խորհուրդ հարցնելու *Չինավորից* զորավարից» *(Մուր., 4, 116)։ «Մի օր* ինձանից արավ հարց ու փորձ» *(ՀԹ, 2, 93)։ «Երբեմն* կնոջից *տեղեկություններ* էր հարցնում *Ալիմյանների ընտանեկան գործերի մասին» (Շիրվ., 3, 330)։*

6. Հանգման բացառական

Լրացումը ցույց է տալիս այն առարկան, որից կառչում, կըպչում, կախվում է մի բան։ Այս բացառականը դիտված է Վ. Առաքելյանի կողմից, սակայն չի համարված բացառականի առանձին իմաստ, այլ տեղի բացառականի մի տարբերակ, թեև նույն տեղում նշված է, որ կապել, ճաշել, ձգել, կառչել *և նման բայերի բացառականով լրացումը տարածականության իմաստ չի արտահայտում, այլ առարկայական իմաստ ունի*[2]*։ Վ. Առաքելյանը, մերժելով հանդերձ այդ բացառականը տեղի համարելու կարծիքը և նշելով, որ այն մոտենում է հանգման տրականին, միաժամանակ չի առանձնացնում իբրև բացառականի մի տեսակ։ Այս բացառականը (թեև ոչ իբրև առանձին իմաստ) նա կոչում է* կառչման *բացառական։*

Իրոք, հիշյալ կարգի բայերի՝ բացառականով լրացումը հանգման իմաստ ունի։ Դրանում հեշտությամբ կարելի է համոզվել, եթե այդ բայերից մի քանիսի բացառականը փոխարինենք տրականով։ Կապել, կպչել, կարել, կառչել *և նման բայեր նույն հաջողությամբ լրացում կարող են ստանալ և՛ տրական, և՛ բացառական հոլովներով։ Այսպես, հնարավոր է ասել և՛ (մի բան)* կապել փայտին *և՛* կապել փայտից, *(որևէ բան)* կարել հագուստին

1 Վ. Առաքելյան, *նշվ. աշխատ., էջ 147։*

2 *Նույն տեղում, էջ 138—139։*

և կարել ճազուստից, կառչել պատին և կառչել պատից, կպչել օձիքին և կպչել օձիքից։

«Մոտեցավ սրահին, կախ տված սնին *Սև Հրացանը—սև օձի նման» (ՀԹ, 2, 65)։ «Նժույգները* կապեց ծառին» *(ԴԴՎ, 677)։ «Հրացանը նորեն* կախեց ուսին» *(Շիրվ., 8, 21)։*

Ասպա՝ «Եկավ էս Չատնիս ճաշիցը կապեց» *(ՀԹ, 2, 40)։ «Ժամհարին* կախ տվեցին Պարանից *շանգակատան» (ՊՍԱՉ, 201)։*

Շարահյուսական այս համանշությունը վկայում է այդ ձևերի (բացառականի և տրականի) իմաստային համարժեքության մասին։ Իհարկե պետք է նշել, որ թեև հանգման տրականը և հանգման բացառականը իմաստով մոտ են, սակայն նրանց միջև տարբերություն կա։ Այդ այն է, որ հանգման տրականը ցույց է տալիս գործողության հանգման կետը, այն տարրկան, որին ընդհուպ մոտենում է մի բան, իսկ հանգման բացառականը ոչ թե հանգման կետն է ցույց տալիս, այլ կառչման, կախման տարրկան։

Հանգման բացառականով լրացում ստանում են սահմանափակ թվով բայեր, ինչպես՝ կախել, կախ անել, կախ տալ, կախ ընկնել, կապել, պնդացնել, կպչել (կպցնել), փաթաթ տալ, կառչել, կարել *և այլն։*

«Երեկ իրիկուն էդ կողքիդ սնից Կախ էին արած *երեք հրացան» (ՀԹ, 2, 38)։ «Նամարդ* օձից կախ եմ ընկել» *(Իս., 1, 136)։* «Վզներից կապում *չաղացի քարեր» (ՀԹ, 1, 237)։ «Մի ծայրով* պնդացրած *էր կողքին՝ կաշու* գոտկից» *(ՆԴ, 1, 45)։ «Շատերն էլ* կպչում էին *թաց* ձմերուկից» *(ՆԴ, 1, 69)։ «Եվ թագուհին* կառչեց *այդ* մտքից» *(ՍՉ, 4, 528)։*

Բռնել, կապել, քաշել *և նման մի շարք բայերի՝ բացառական հոլովով դրված լրացումը կարելի է մեկնաբանել և՛ հանգման, և՛ մասնական-խնդրային իմաստներով։*

«Եվ ահա ոսկի սանձերից բռնած *Թերում են ջրեն ձիանքն ամեհի» (ՀԹ, 1, 232)։ «Որ հրացանիս* լուլիցը բռնեց, *ես էլ կոթը պինդ բռնեցի» (ՀԹ, 1, 333)։ «Մարդը* չանբեց *նրա* թևից» *(ՆԴ, 1, 61)։ «Զիավորը, սանձի փոխարեն,* բռնած ունեւ *նրա* բաշից» *(Բ, 7, 18)։ «Ծամփին նրա ձիու* սանձից բռնում էին» *(Բակ., 47)։*

Հանգման բացառականով են կազմված որոշ դարձվածքներ, ինչպես՝ կախված լինել մի բանից (մեկից), կպչել (մեկի) օձիքից, (մեկի) երեսից կախվել *և այլն։*

«Երկրի փրկությունը կախված է *այժմ իշխանների* միությու–

նից» (Մուր., 4, 290)։ «Իմաստությունը հասակից կախումն չունի» (ՂԱ, 338)։ «Ի՞նչ ես կպել խեղճ մարդու օձիքից»։

7. Համեմատության և գերադրության բացառական

Համեմատության և գերադրության բացառականը սովորաբար ածականի ու մակբայի լրացում է լինում։ Սակայն երբեմն համապատասխան մակբայներից և ածականներից կազմված որոշ բայեր ևս ստանում են այսպիսի լրացում. այդ դեպքում սա ցույց է տալիս այն առարկան, որի համեմատությամբ որևէ բան գերազանցում, երբեմն էլ պակասում է։ Ընդ որում համեմատության և գերադրության բացառականի հետ կարող են լինել ավելի, պակաս անմիջական լրացումները ևս, սակայն երկուսն էլ բայի լրացման իմաստ են ունենում։ Այսպես, «Բոլոր վրաններից ավելի աչքի էին զարկում երկուսը» (Ր, 7, 443) նախադասության մեջ վրաններից բացառականի հետ կա նաև ավելի լրացյալ, որի հետ այն միաժամանակ աչքի էին զարկում բայի լրացումն է լինում։

«Ահա վաղը գալիս է նա, որին գերազանց բոլոր կանանցից» (Շիրվ., 3, 164)։ «Վեհափառը Բյուրականը գերազանց Դվինից» (Մուր., 4, 264)։ «Օտյանի ներսում լավը գերակշռում էր վատից, գեղեցիկը՝ տգեղից, բարին՝ չարից» (Շիրվ., 8, 525)։ «Ես չմնամ ընկերներիցս» (ՍՁ, 3, 194)։ «Առաջ չընկնի իր տիրոջ նժույգից» (ԴԴՎ, 7)։ «Գյուղում զենքը մանակից շատացավ» (Բակ., 38)։

Երբեմն անցնել բայի լրացումը ևս արտահայտում է գերադրության իմաստ։

«Անցել է թիվը հազար հազարից» (ՀԲ, 1, 265)։ «Կատաղած թագավորի անգթությունը անցավ ամեն չափից, ամեն սահմանից» (Ր, 7, 349)։

8. Ներգործող խնդրի բացառական

Բայի լրացումը այս իմաստով ցույց է տալիս այն առարկան, որից քերականական ենթական կրում է գործողությունը։ Ներգործող խնդիրը տրամաբանական ենթական է, գործողության կատարողը, որը, սակայն, քերականորեն սոսկ խնդիր է, իսկ տրամաբանական խնդիրը՝ քերականորեն ենթակա։ Այսպես, «Սամվելը շատ սիրված էր ժողովրդից» (Ր, 7, 70) նախադասության մեջ ժողովրդից ներգործող խնդրի բացառական է, որը տրամաբանական ենթական է՝ գործողության կատարողը (ժողովուրդն է սի-

21—486

րում Սամվելին), իսկ Սամվելը, որը գործողությունն իր վրա է կրում և տրամաբանական խնդիր է, հանդես է գալիս որպես նախադասության քերականական ենթակա։

Մ. Աբեղյանը նշում է, որ «Ներգործող խնդրի բացառական է դրվում սովորաբար զգացում, հույզ, հոգեկան որևէ վիճակ, գործունեություն ցույց տվող և մի քանի ուրիշ բայերի հետ»[1]։ Վ. Առաքելյանը նշելով այս հանգամանքը, միաժամանակ վերապահություն է անում՝ ասելով, որ այդպիսի կրավորական բայերի մոտ (զգացվել, վիրավորվել, վրդովվել, հուզվել, ազդվել. գրգռվել, խաբվել, սիրվել, պաշտպանվել, հարգվել, փառաբանվել, հրապուրվել, գրավվել, հափշտակվել և այլն) հնարավոր է այլ իմաստ ունեցող բացառականի գործածություն էլ։ Այսպես, «Ես պաշտպանվում եմ քեզնից» նախադասության մեջ քեզնից կարելի է հասկանալ և՛ ներգործող խնդրի իմաստով (դու պաշտպանում ես ինձ), և՛ այլ իմաստով (ես քո դեմ եմ պաշտպանվում)[2]։ Միանգամայն ուղիղ է Վ. Առաքելյանի այդ դիտողությունը։ Կան բազմաթիվ օրինակներ, որոնցում կրավորական բայի բացառականով լրացումը ներգործող խնդիր չէ։

«Ոչ մի գեղեցիկ կին կամ աղջիկ չազատվեցավ նրանց ձեռքից» (Մուր., 4, 70)։ «Ես չբաժանվեցի քո մարմնից» (Իս., 3, 337)։ «Սիրեց քեզ հեռվից՝ Զրկված քո բույրից» (ՀԹ, 1, 59)։ «Առմիշտ անջատվել էր մերձավորներից» (Շիրվ., 3, 24)։ «Պետք է անպայման ամուսնուց բաժանվի» (Շիրվ., 3, 148)։ «Խիստ տարբերվում էր փողոցներում վազվզող հասակակիցներից» (Շիրվ., 3, 451)։

Այս օրինակներում չազատվեցավ, չբաժանվեցի, անջատվել էր, բաժանվի, տարբերվում էր բայերը գործածված են ոչ կրավորական սեռի նշանակությամբ (դրանք միջին-անդրադարձ սեռային առման իմաստ ունեն[3]), ուստի նրանց մոտ չի կարող դրվել ներգործող խնդիր, իսկ զրկված բայը թեև կրավորական սեռի է, սակայն չունի ներգործող խնդիր և հանդես է եկել իր բառային իմաստի պահանջով դրվող լրացումով (բույրից)։

Նկատելի է, որ ներգործող խնդրի բացառական դառնում են առաջին հերթին անձ և անձնավորված առարկա ցույց տվող գոյականները։

«Այս կամ այն բերդը գրավվել է թշնամուց» (Մուր., 4, 21)։

---

[1] Մ. Աբեղյան, նշվ. աշխատ., էջ 450։

[2] Վ. Առաքելյան, նշվ. աշխատ., էջ 134։

[3] Տե՛ս Ս. Աբրահամյան, նշվ. աշխատ., էջ 630—646։

«Եղբայրասպանությունը մի ոճիր է, ատոմից և մարդկանցից անիծված» *(Մուր., 4, 158)։ «Այդ սրիկաները* վարձված են Դուլամյանից» *(Շիրվ. 3, 340)։* «Կրնկվեր *կամուրջի գիշերային* պանակներից» *(Ր, 7, 18)։* «Ծինված է եղել *Սանատրուկ* բազավորից» *(Ր, 7, 97)։ «Իմ անտեր մնացած երկիրը* կեղեքվում է *իմ* թշնամիներից» *(Ր, 7, 247)։* «Վիրավորված էին լինում գազանից» *(ՂԱ, 196)։ «Նա* հոշոտվել է գայլից»: *«Գուրգուրիր Հողիս՝* աշխարհից խոցված» *(Իս. 2, 59)։ «Սոկրատեսը* դատապարտված էր *մահվան Աթենական ամբոխավար* ատյանից» *(Իս., 2, 200)։*

Ներգործող խնդրի բացառական կարող են դառնալ նաև իր ցույց տվող բազմաթիվ գոյականներ։

«Թրջված էի անձրևից» *(Իս., 3, 335)։ «Դու շատ* մի խաբվիր *ժպտուն* աչքերից» *(ՀԹ, 1, 79)։ «Քանի* ձեռքից եմ վառվել» *(ՀԹ, 1, 150)։ «ԱնՀաղթելի* ուժից մղվում էր *դեպի աղքատիկ բնակարանը» (Շիրվ., 3, 245)։* «Անձրևից *ծառերը* լվացվել էին, մաքրվել էին» *(Ր, 7, 69)։ «Կարմիր դրոշները* ծածանվում են քամուց» *(ԳՄԼՉ, 364)։* «Արկերից *մեր վաշտում ոչ մի մարդ* չի սպանվել» *(ԲՀՍՉ, 74)։*

Քերականագիտության մեջ ներգործող խնդրի բացառականը միշտ ապես համարվել է կրավորական սեռի լրացում։

Վ. Առաքելյանը գտնում է, որ այդպիսի լրացում կարող են ստանալ նաև փոխաբերաբար կրավորական նշանակություն արտահայտող ներգործական բայերը[1]*։ Սակայն նրա նշած* տեսնել, քաշել *բայերի լրացումը ներգործող խնդիր չէ։ Մինչդեռ* լինել, կրել, ունենալ *բաղադրիչներով կազմված* պատրություն կրել, նետամուտ լինել, ոտնատակ լինել, ոտնակոխ լինել, վերաբերում ունենալ *և այլ հարադրական բայեր, անտարակույս, կրավորական նշանակություն ունեն, և նրանց մոտ բացառականը ներգործող խնդիր է։*

«Դա Հիմարություն է, նույնիսկ խելագարություն է՝ սիրել մի եղբոր, նետատմոտ լինելով մյուսից» *(Շիրվ., 3, 295)։ «Ամեն անգամ* պաշարվածներից *չարաչար* ջարդ կերան» *(Ր, 7, 350)։ «Նա ամոթալի* պարտություն կրեց *Մարզպետունու քան* զինվորներից» *(Մուր., 4, 337)։*

Ներգործող խնդրի բացառականը կարող է դառնալ բազմա-

---

[1] Վ. Առաքելյան, *նշվ. աշխատ., էջ 134։*

թիվ չեզոք բայերի լրացում։ Այսպես, ներգործող խնդիր կարող են ունենալ կուրանալ, արժանանալ, սպիտակել, սևանալ, չորանալ, փայլել, պերճանալ, բարձրանալ և այլ բայեր։

«Հզոր Սևազան... ապիրատ փեսայից կուրացած՝ յուր ծառաների շնորհիվն է միայն ձեր աչքին երևում» (Մուր., 4, 102) «Բոլոր հմուտ գրականագետներից բարձր գնահատականի արժանացել է» (Իս., 4, 312)։ «Արևից չորացած հողը ագահությամբ ծծում էր ջուրը» (Բակ., 96)։ «Քրտինքից խոնավացել էր ձիերի մուգ կապույտ վիզը» (Բակ., 117)։ «Աստվածներից փշրանքների անգամ չի արժանանում» (ՍխՄխ, 451)։

Մի շարք կապակցություններում լրացումը կարող է մեկնաբանվել և՛ ներգործող խնդրի, և՛ պատճառի իմաստներով։

«Նրա առաքինության ու պարկեշտության զգացումը վիրավորվում էր այդ ծառաների ներկայությունից» (Շիրվ., 3, 99)։ «Իսկ գաղթական ժողովուրդը կոտորվում էր սովից, ցրտից» (Բակ., 13)։

Երբեմն էլ բացառականով դրված լրացումը կարող է մեկնաբանվել և՛ ներգործող խնդրի, և՛ միջոցի իմաստներով։

«Հսկաները նույնպես հուզվեցին սրտի խորքից, մանավանդ որ նախապատրաստված էին արդեն իրենց քրոջ երազից» (ՂԱ, 354)։ «Ոստիկանը գրավվելով ոչ այնքան կաթողիկոսի քաղաքավար նամակից, որքան նրա ղրկած ընծաներից, շնորհեց հայրապետին ազատության հրովարտակ» (Մուր., 4, 264)։ «Սերակրվում են դրամատերերի սեղանի թափցումներից» (ՎՓ, 4, 585)։

9. Պասսիվ ներգործության բացառական

Բայի լրացումը ցույց է տալիս այն առարկան, որից ոչ ուղղակիորեն ազդվում, ներգործվում է ենթական։ Ներգործող խնդրի բացառականից տարբերվում է նրանով, որ այս դեպքում ակտիվորեն ներգործել չի կարող։ Եթե համեմատենք «Նա հյուրասիրվեց ընկերոջից» և «Նա ձանձրացավ ծույլ ընկերոջից» նախադասությունները, ապա կհամոզվենք, որ առաջինում բացառականը ակտիվ ներգործող առարկա է ցույց տալիս, իսկ երկրորդում բացառականը անուղղակիորեն, սոսկ պասսիվ կերպով, ներգործող առարկա է ցույց տալիս, ուստի և այս լրացումը պասսիվ ներգործության բացառական է համարվում։

Բացառականի այս իմաստը դիտված է Վ. Առաքելյանի կող-

մից[1]։ Նա պասսիվ ներգործության բացառական է համարում հոգեկան տարբեր վիճակ ցույց տվող մի շարք բայերի լրացումը (ձանձրանալ, ակնածել, ամաչել, վախենալ, զարհուրել, զզվել, խորշել, վիրավորվել, խռովել, դժգոհել, հիասթափվել, վշտանալ, կշտանալ, զոհ մնալ և այլն)։

Իհարկե, ճիշտ է այս դիտողությունը։ Սակայն պետք է նկատի ունենալ, որ հոգեկան տարբեր վիճակներ ցույց տվող բայերը կարող են ունենալ և՛ պասսիվ ներգործության, և՛ պատճառի, և՛ երբեմն էլ ներգործող խնդրի բացառականով լրացում։ Այսպես, «Նա ամաչում է ընկերոջից» նախադասության մեջ ընկերոջից պասսիվ ներգործության բացառական է, «Նա ամաչում է անփորձությունից» նախադասության մեջ անփորձությունից պատճառի բացառական է[2]։

Պասսիվ ներգործության բացառականով լրացում դառնում են առաջին հերթին անձ և թանձրացական առարկա ցույց տվող գոյականները կամ գոյականաբար գործածված բառերը։

«Դարշեցավ յուր անձից» (Մուր., 4, 42)։ «Ես շատ եմ զզվել ճաղից, գազերից» (ՀԹ, 2, 17)։ «Սև աչերեն շատ վախեցիր» (Իս., 1, 46)։ «Ամբողջ թաղը սարսափում էր նրա բերանից» (ՆԴ, 1, 65)։ «Թագավորն անգամ մի առանձին ակնածություն ուներ նրանցից» (Ր, 7, 50)։ «Թանգարաններից ու ցուցահանդեսներից ժամանակավորապես կշտացած, սկսեցի այցելել թատրոնները» (Շիրվ., 8, 289)։ «Պանինից երկյուղ չէր անում» (Բակ., 125)։ «Ձիերը հագեցել էին կանաչից» (Բակ., 128)։

Պասսիվ ներգործության իմաստը կարող է արտահայտվել նաև վերացական գոյականների բացառականով։ Այս դեպքում, սակայն, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ բացառականը հնարավոր է մեկնաբանել նաև պատճառի իմաստով։ Իհարկե բերվող օրինակներում բացառականը պասսիվ ներգործության իմաստ ունի, իսկ այլ դեպքերում դա պատճառի իմաստ կարող է արտահայտել։ Պետք է հիշել, որ բացառականը առարկայական նշանակության արտահայտելու դեպքում պասսիվ ներգործության իմաստ է ունենում։

«Ուրեմն մի վախենաք թշնամու զորությունից, նրա ահավոր պատրաստությունից» (Մուր., 4, 275)։ «Մահի հարվածից նա չի

[1] Վ. Առաքելյան, նշվ. աշխատ., էջ 134—135։

2 Բացառականի այս իմաստը Մ. Աբեղյանը չի արժեքավորել. այսպիսի լրացումը նա համարել է պատճառի բացառական։ (Տե՛ս նշվ. աշխատ., էջ 450—451)։

սարսափում» (ՀԹ, 2, 25)։ «Դողում է պաղ նրա ձենից իմ սիրտը սև ու տխուր» (ՀԹ, 2, 55)։ «Զանձրացե՞լ եք խաղաղ ու հաշտ Հողագործի օր ու կյանքից» (ՀԹ, 2, 30)։ «Առաջին իսկ հարվածից ընկնում է» (ՆԴ, 1, 128)։ «Արյունը պատրաստ էր դուրս ցայտել մի թեթև հպումից» (Շիրվ., 3, 39)։ «Երկիրը թնդում էր նրա զորությունից» («Շիրվ., 3, 189)։ «Սարսեց գնդապետը մեր ուժից անթիվ» (Չ, 398)։ «Ռունգերս լայնանում են սուսամբարի հոտից» (Բակ., 107)։ «Երբ որ շոգից նեղանում (էինք)» (ՀԹ, 2, 8)։ «Մեռավ Դավիթ էս մի զարկից» (ՀԹ, 2, 126)։

Պասսիվ ներգործության իմաստը կարող է արտահայտվել նաև անորոշ դերբայի բացառական հոլովով։ Իհարկե պետք է նշել, որ ոչ բոլոր դեպքերում է անորոշ դերբայի բացառականը այսպիսի իմաստ ստանում։ Պասսիվ ներգործության իմաստը անորոշ դերբայի բացառականի մեջ մասամբ զուգակցվում է պատճառի իմաստին։

«Ես արդեն հոգնել, թուլացել եմ իմ վշտերս միայնակ տանելուց» (Մուր., 4, 31)։ «Առատ, անհատ՝ աստծու նման միշտ տեղալուց հոգնել եմ ես» (ՀԹ, 1, 156)։ «Արևահատը աշխատելուց չէր նեղանում» (ՂՍ, 220)։

Մի շարք, մանավորապես կրավորական սեռին պատկանող, բայերի՝ բացառական հոլովով դրված լրացումը կարող է մեկնաբանվել և՛ պասսիվ ներգործության, և՛ ներգործող խնդրի իմաստներով։

«Նա տանջվում էր, մանավանդ, խղճի խայթից» (Մուր, 4, 385)։ «Մյուս երեկո, խրախուսված Հայրիկի սիրալիր վարմունքից, մի քանի նկատողություններ արեցի» (Իս., 4, 24)։ «Բոլոր ռուս գրողները ներշնչված են նրանից մինչև այսօր» (Իս., 4, 344)։ «Նուռն է հեղքվում քաղցրությունից» (ՀՍՀԵՄ, 114)։ «Դուքյանի խուփը ժանգից էր նեխվում» (ՊՍԱՉ, 86)։

Պասսիվ ներգործության և պատճառի իմաստները շատ մոտ են իրար։ Այդ պատճառով էլ մի շարք բայերի՝ բացառական հոլովով դրված լրացումը երկակի մեկնաբանության հնարավորություն ունի։

«Համարձակ խոսքերից վշտացել է նա» (Մուր., 4, 14)։ «Նրա վերջին խոսքից հրճվեցավ» (Մուր., 4, 22)։ «Ով սովից մեռել՝ նա է լավ դրել» (ՀԹ, 2, 93)։ «Անհուն ցասումից մռնչաց շահը» (ՀԹ, 2, 144)։ «Մղկտում է սիրտս անվերջ քո թառանչից աղեկեզ, Ու գաղթական ղավակներից լուռ շարքերից ուժասպառ, Եվ գյուղերից, և շեներից՝ տխուր, դատարկ ու խավար» (ՀԹ, 1, 126)։ «Ներքին

տանջանքից *օրիորդը սեղմեց բռունցքները»* (*Շիրվ., 3, 114*)։ *«Ան-վերջ* կասկածներից *Անուշն օր-օրի վրա* դառնում էր *մռայլ, մտր-դայլայ»* (*Շիրվ., 3, 153*)։ *«Իմ այս* խոսքից *դուցե* տխրեիր» (*ԲՀԱՁ, 228*)։ *«Առաջին իսկ* պայքարից վեր է ցատկում» (*ԲՀԱՁ, 237*)։

Պասսիվ ներգործության իմաստը կարող է համատեղվել նաև վերաբերության և պատճառի իմաստների հետ։

«Ասում ես, որ կասկածում էր *ազգայն* ապստամբությունի՞ց» (*Մուր., 4, 134*)։ *«Սարկավագը նախ սաստիկ* զարմացավ *դահերից զորավարի այդ տարօրինակ* ցանկությունից» (*ՍԽՄԽ, 165*)։

Երբեմն կարող են համատեղվել պասսիվ ներգործության և միջոցի իմաստները։

«Արյան զոլորշիներից արբած *հրոսակները ներս խուժեցին ղեկեղեցին»* (*Մուր., 4, 285*)։ *«Պատմում էին, թե քանի-քանի հոգի էին* խեղդվել *հարաբաղնիսից»* (*ՀԹ, 1, 366*)։ *«Մասիսին էր նա-յում, նրա փայլուն* տեսքից հիանում ու զվարճանում» (*ՂԱ, 194*)։ *«Ինչ թունդ է քո գինին, իմաստուն,* նրանից *իմ հոգին* հարբում է» (*Զ, 65*)։

Պարագայական բացառականով կապակցություններ

Տեղի բացառական.— *Բայի լրացումը այս դեպքում ցույց է տալիս այն տեղը, որտեղից սկսվում, անցնում է, որին զուգահեռ տեղի է ունենում գործողությունը։ Տեղի բացառականը շարժում ցույց տվող բայերի լրացում է։ Այդպիսի բայերից են՝* գալ, գնալ, անցնել, ընթանալ, վերադառնալ, ճոսել, ձգել, չհանալ, վերանալ, կորչել, ընկնել, դուրս գալ, հեռանալ, մտնել, վազել, քաշել *և այլն։ Լրացում դառնում են տեղ ցույց տվող բազմաթիվ գոյա-կաններ։*

«Հազարացիք հետզհետե հայրենակ զավառներից չհացան» (*Մուր., 4, 360*)։ *«Հերթով գալիս* անց ենք կենում *էս անցավոր* աշխարհից» (*ՀԹ, 2, 145*)։ *«Պախրեն* անցավ *էն* սարից» (*ՀԹ, 1, 72*)։ *«Աղվեսն* եկավ *բարձր* սարից» (*ՀԹ, 1. 16*)։ *«Մեհության խավար* զնդանից *կրկին ես* վերադարձա *հզոր և հպարտ»* (*ՎՏ, 1, 195*)։

Անցնել *բայի՝ բացառական հոլովով դրված լրացումը երբեմն համարժեք է հայցականին։ Այսպես, ասում ենք՝* անցնել գետից *և*

անցնել գետը[1]: Անցնել գետը *կապակցությունն արտացոլում է գրաբարյան խնդրառության վերապրուկային երևույթը* (անցանել *բայը գրաբարում տեղի իմաստով լրացում էր ստանում հայցականով և նախդիրներով. օրինակ* անցանել ընդ գետ): *Արդի հայերենում* անցնել *բայը տեղի իմաստով լրացում է ստանում և՛ բացառականով, և՛ հայցականով։ Օրինակներ՝ «Ինչպե՞ս կարող ենք մեր հոգնած բանակը Կուր* գետից անցկացնել» *(Մուր., 4, 495)։ «Մի ոստյունով* անցավ *երկաթուղու* գծից» *(ՎՓ, 4, 555)։ Նաև՝ «Երբ* գետն էինք անցնում» *(ՎՓ, 4, 419)։ «Գնում ենք* անցնելու կրակն ու ջուրը, անձն ու մահը» *(ԴԴՎ, 542)։*

Տեղի իմաստով գործածվում են նաև այնպիսի բառերի բացառական հոլովաձևերը, որոնք կա՛մ գործողության անուն են, կա՛մ անուղղակիորեն են տեղ ցույց տալիս։

«Դարձավ *իր* կովից *իշխան Թաթուլը» (ՀԹ, 2, 139)։ «Նոր* էր վերադարձել զբոսանքից» *(ՆԴ, 1, 205)։ «Նրանք* ճեպից էին գալիս» *(Շիրվ., 3, 403)։ «Կովը* եկավ տավարիցը» *(ՂԱ, 11)։ «Ջոկատը* վերադառնում էր *զինվորական* վարժությունից» *(Բակ., 322)։*

Եթե շարժում ցույց տվող բայերի մոտ բացառականն արտահայտում է այն տեղը, որտեղից անցնում է մի բան կամ սկսվում է շարժումը, ապա այլ իմաստ ունեցող բայերի մոտ բացառականը կարող է ցույց տալ գործողության սկզբնակետը։ Ուստի այս բացառականը կոչում ենք տեղի-սկզբնակետային *բացառական, որը, անշուշտ, նույն տեղի բացառականի մի տարբերակն է։*

Այսպիսի բացառականը դառնում է տարբեր իմաստ ունեցող բայերի լրացում։ Լրացումն արտահայտվում է տարածություն ցույց տվող բառերով։

«Միջնաբերդից *փողը* փչեցին» *(Մուր., 4, 97)։ «Ներքին* նարկից *սակրերով ու նիզակերով* փորփրում էին *պարսպի հիմքը» (Մուր., 4, 279)։ «Հետևակները* ափից *միայն* պիտի օգնեն» *(Մուր., 4, 495)։ «Էն ո՞վ* նայեց լուսամուտից» *(ՀԹ, 2, 17)։* «Ձորից *աղջկա ձենն է* ղողանջում» *(ՀԹ, 2, 51)։ «Այդ* տեսնում էր *Շապուհը յուր* վրանից» *(Ր, 7, 343)։ «Ես քեզ* եմ դիմում *այս ցուրտ* աշխարհից» *(ՎՏ, 2, 172)։*

Տեղի բացառականը կարող է գործածվել տեղի հայցականի

---

[1] Անցնել գետ *կապակցության մեջ բայը չի կարելի շփոթել ներգործական սեռի* անցնել *բայի հետ* («անցնել շատ տարիներ», «լեզու անցնել»)*, որի հայցականով լրացումը ուղիղ խնդիր է։*

հետ։ Այս դեպքում բացառականը գործողության սկզբնակետը, իսկ հայցականը գործողության նպատակակետը, վերջնակետն է ցույց տալիս։ Այս համատեղ գործածության դեպքում երկու հոլովաձևերը իրար հետ սերտորեն կապված են. դիտվում են իբրև կայուն կապակցություն, որի գրաբարյան արտահայտությունն այժմ մակբայի արժեք ունի (տնետուն, սարեսար *և այլն*)։

«Ուր եղջերուն է ստանում քերծից քերծ» *(Իս., 1, 168)։ «Ոսկի մի թիթեռ* ծաղկից ծաղիկ *նրա առաջին* թռչում էր, *խայտում» (Իս., 1, 364)։ «Երկար* շրջեցիր փողոցից փողոց» *(ՀԹ, 1, 181)։ «Ու* բաղից բաղ, *ու* տանից տուն Ձեն է տալի *մեկը մյուսին» (ՀԹ, 1, 259)։ «Մութը* տնից տուն է մտնում» *(ՎՏ, 1, 21)։ «Ես լուռ* անցնում եմ փողոցից փողոց» *(ՎՏ, 1, 65)։ «Գիժը* կտուրից կտուր կանչում էր *գիլ ձայնով» (Բակ., 11)։ «Նույն դրոշն* ենք տարել *մենք* վերելքից վերելք» *(ՀՍՀԵՄ, 219)։*

Սրանցից մի քանիսը թեև սկզբնապես տարածական իմաստ են արտահայտել, սակայն աստիճանաբար զրկվել են այդ նշանակությունից, և այժմ բայի և նրա զույգ լրացումների կապակցությունը դարձվածքի արժեք ունի։ Այդպես են՝ ոտից գլուխ, ծայրից ծայր *և այլն։* «Մզկիթները լցվում էին ծայրից-ծայր» *(ՍԽՄԽ, 288)։ «Ինձ* ոտից-գլուխ *մի անգամ* չափեց» *(ՀՍՀԵՄ, 265)։*

Սովորաբար տեղի բացառականը և հայցականը իրարից չեն անջատվում. նրանց կապակցությունը սերտ է։ Իսկ եթե դրանք անջատ են, ապա չունեն հիշյալ սերտ կապակցության արժեքը։ Օրինակ՝ «Գազաններից *ես* ցած իջա Անդունդները *սիրտ մաշող» (ՎՏ, 1, 40)։*

Երբեմն բացառականը նույն բայի մոտ կարող է մեկնաբանվել և՛ տեղի, և՛ անձի—ելակետային իմաստներով։ Օրինակ՝ «Հաց ու պանիր էր բերել *իրենց ծանոթ մի հարուստ* ընտանիքից» *(ՆԴ, 1, 91)։ Այստեղ* ընտանիքից *ձևը կարելի է հասկանալ և՛ տարածական իմաստով* (տուն), *և՛ առարկայական իմաստով* (անձեր)։

Մի շարք կապակցություններում կարող է արտահայտվել թե՛ տեղի, թե՛ ելման-սկզբնակետի հարաբերություն։

«Աբովյանից *ու* Պռոշյանից *մենք* հասել ենք *Թումանյանին ու Շիրվանզադեին» (ՎՏ, 2, 268)։ «Վիպագրության մեջ* Պռոշյանից, Աբովյանից, Աղայանից, Րաֆֆուց մենք անցել ենք *Մուրացանին, Նար-Դոսին» (ՎՏ, 2, 71)։*

Մի քանի բայերի՝ բացառական հոլովով դրված լրացումը կարելի է մեկնաբանել և՛ տեղի, և՛ ժամանակի իմաստներով։

Այսպիսի կապակցությունները երկու տեսակ են լինում։ Մի դեպքում լրացում լինում է այնպիսի գոյական, որը տարածական և ժամանակային իմաստներ է համատեղում, ինչպես՝ շրջան, հարսանիք, հնոռ և այլն։

«Ու էն հարսանիքից թշնամի դարձան» (ՀԹ, 2, 59)։ «Ես քեզ եմ փնտրել իմ կյանքի շեմքից» (Իս., 1, 134)։ «Մանկական խաղերի շրջանից մի ընկեր ուներ» (Իս., 3, 71)։ «Ու սառի խոսքերն անցյալի հեռվից Ուրվաձայն, երկչոտ հնչեցին նորից» (ՀԹ, 2, 16)։

Երկրորդ դեպքում թեև լրացումը ժամանակ ցույց տվող բառ է, սակայն լրացյալ բայը տարածական հարաբերությամբ է ստանում այդ լրացումը։

«Եվ դեպին փոշին ելնում է իմ հին Անցած օրերից» (Իս., 1, 268)։ «Դուք չեք այսօրվա մեր դյուրության դարերից հորդող գետն այն փարթամ» (Չ, 478)։ «Դու եկել էիր հինգերորդ դարից» (ՀՍՀԵՄ, 244)։

Երբեմն թվական լրացում ունեցող բացառականը կարող է մեկնաբանվել և տեղի, և չափի իմաստներով։ Օրինակ՝ «Մաքսիմի» ձայնը ես տասը կիլոմետրից էլ կճանաչեմ» (ԲՀՍՉ, 77)։

Տեղի իմաստը կարող է համատեղվել նաև ներգործող խնդրի իմաստի հետ, թեև այդ երկուսը շատ հեռու են իրարից։ Օրինակ՝ «Նրանք բոլորը կերակրվում էին խոշայի հարուստ սեղանից» (Բակ., 309)։

Իսկ մի քանի բայերի՝ բացառականով լրացումը կարելի է մեկնաբանել և՛ տեղի, և՛ վերաբերության իմաստներով։

«Արդյոք Ռուսիից մի տխուր լո՞ւր առավ, թե թշնամիների մոտալուտ հարձակման մասին մի բան է լսել» (Մուր., 4, 23)։ «Ես շատ քիչ տեղեկություն եմ առնում ձեր կողմերից» (Մուր., 4, 105)։ «Մեկը իր տեսած երազն էր պատմում, մյուսը՝ տնից ստացած տեղեկությունները» (Իս., 3, 39)։

Բացառականի մեջ կարող են համատեղվել նաև տեղի և միջոցի իմաստները։ Պետք է նկատի ունենալ, որ տարբեր նախադասություններում այդ իմաստներից մեկն ու մեկը կարող է գերակշռել։

«Կավե գավաթից գինի էր խմում» (Իս., 3, 412)։ «Սկսեց սանդուղքից իջնել գետափը» (Իս., 3, 184)։ «Խաղաղության ծխամորճն արեգակից են վառում» (ՀՍՀԵՄ, 63)։

Երբեմն տեղի բացառականը կարող է ունենալ նաև ձևի երանգ։

«Եվ մենք ուտում ենք՝ երկուսով մի կաթսայից» (ԲՀՍՉ, 10)։ «Թեյը խմում է պնակից» (Շիրվ., 3, 63)։

Պետք է նշել, որ ժամանակակից հայերենում միջոցի թույլ նրբերանգ ունեցող տեղի բացառականը համարժեք է տեղի գործիականին և հաճախ նրանով փոխարինելի։ Այսպես, զուգաձևական են մի կողմից՝ փախել մի տեղից (անցքից, խողովակից), դուրս գալ մի տեղից (դռնից, լուսամուտից), երևալ մի տեղից (դռնից, անցքից), անցնել մի տեղից (միջից, կողքից), մտնել մի տեղից (դռնից, լուսամուտից), նայել մի տեղից (պատուհանից, դռնից), *մյուս կողմից*՝ փախել մի տեղով (անցքով, խողովակով), դուրս գալ մի տեղով (դռնով, լուսամուտով), երևալ մի տեղով (դռնով, անցքով), անցնել մի տեղով (միջով, կողքով), մտնել մի տեղով (դռնով, պատուհանով) *և այլն։ Բերենք բացառական լրացումով օրինակներ։*

«Ո՞վ հող փախեց բուխարիկից» *(ՀՐ, 2, 17)։* «Դուրս գնաց *արդեն վանքի* դռներից» *(ՀՐ, 2, 21)։* «Քաշում են տանից, Քաշում են դռնից» *(ՀՐ, 2, 37)։ «Նրանց* արանքից *ատամները բաց Սպիտակ շարքերով* երևում էին» *(ՀՐ, 2, 66)։ «Մռայլ բանտիս նեղ* լուսանցքից *Աստղեր* տեսա *հեղալյա» (Իս., 1, 85)։ «Քարը ծալում* անցնում է *եղան մարմնի* միջից» *(Իս., 4, 200)։ «Քամին* կոշում էր *փողոցի մյուս* բերանից» *(ՆԴ, 1, 45)։ «Խողովակը* դուրս էր տարված պատուհանից» *(ՆԴ, 1, 192)։*

Տեղի բացառականով են կազմված մի շարք դարձվածքներ, ինչպես՝ շարքից դուրս գալ, գծից շեղվել, սրտից ջուր խմել *և այլն։*

«Միքայելը, ինչպես կասեն, նրա սրտիցն էր ջուր խմում» *(ՂԱ, 413)։ «Ես իմ ռեպերտուարով* դուրս եկա շարքից» *(ԴՄԼՋ, 369)։*

Ժամանակի բացառական.— Բայի *լրացումը այս իմաստով ցույց է տալիս այն ժամանակակետը, որից սկսվում է կամ որից հետո կատարվելու է գործողությունը։*

Ժամանակի բացառականով լրացում պահանջում են տարբեր իմաստ ունեցող բայեր (առանց սահմանափակման)։

Ժամանակի բացառականով դրվում են առաջին հերթին ժամանակ ցույց տվող բառերը, ինչպես՝ վայրկյան, րոպե, ժամ, օր, շաբաթ, ամիս, տարի, ժամանակ, դար, ժամանակաշրջան, սկիզբ, վերջ, լուսաբաց, մայրամուտ, կեսօր, առավոտ, երեկո, գիշեր *և այլն։*

«Նա սկզբից *արդեն ամեն բան* տեսել, ճնճել *և* սոուգել *էր» (Մուր., 4, 11)։ «Միապաղաղ ժայռերի մեջ* փորված էին *հին* ժամանակներից *բազմաթիվ այրեր, խուցեր ու մատուռներ» (Մուր., 4, 200)։ «Այն* օրվանից *սրա համար Կղզին* կոչվեց *Ախթամար»*

(ՀԹ, 1, 207)։ «Մանուկ օրերից իմ դուռն ես ծեծում» (ՀԹ, 2, 118)։ «Լուսաբացից վազում էին գետը» (Բակ., 43)։ «Էն օրվանեն դադար չունեմ» (Իս., 1, 92)։

Այս բացառականով կարող են դրվել նաև ժամանակի իմաստով գործածվող մի շարք գոյականներ, ինչպես՝ հասակ, տարիք, գլուխ, օրորոց, պատանեկություն, երիտասարդություն, երեխայություն, ծնունդ, բերքահավաք, գարնանացան, արձակուրդ, տոն և այլն։

«Ես նրան ճանաչում եմ դեռևս պատանեկությունից» (ՆԴ, 2, 506)։ «Սուրենը մանկությունից ծնվել, մեծացել էր այդ ամրոցում» (Ր, 7, 30)։ «Մենք օրորոցից ուսանք մաքառել» (Ծ, 200)։ «Պատանի հասակիցս երազել եմ տեսնել Վենետիկը» (Իս., 4, 7)։

Ժամանակի իմաստը հաճախ միահյուսվում է չափի իմաստին, և բացառականն արտահայտում է ժամանակա-չափային խառն իմաստ՝ ժամանակի իմաստի գերակշռումով։

Այս դեպքում բացառականն ունենում է որևէ լրացում՝ արտահայտված թվականով կամ այլ խոսքի մասով։ Ժամանակային չափի այս բացառականը իմաստով համարժեք է բացառականին և հետո կապին։ Այսպես, «Երեք ամսից նա վերադարձավ» նախադասությունը կարելի է արտահայտել նաև «Երեք ամսից հետո նա վերադարձավ» ձևով։ Երկրորդ դեպքում երեք ամսից հետո վերադարձավ կապակցությունը նույն իմաստն ունի, ինչ որ առաջին նախադասության մեջ երեք ամսից վերադարձավ կապակցությունը։ Պետք է նշել, որ այսպիսի կապակցությունները գրական լեզու են թափանցել այն գործածություններից, որոնք բարբառային ազդեցություն են կրել։

«Մի քանի րոպեից ներս մտավ բերդակալը» (Մուր., 4, 20)։ «Մի երկու վայրկյանից ներս մտավ դրագիրը» (Մուր., 4, 129)։ «Մի քանի րոպեից վերադարձավ» (ՆԴ, 1, 111)։ «Մի ակնթարթից ձին պահվեց սարի հետևը» (Բակ., 207)։

Ժամանակ ցույց տվող բառի բացառականը երբեմն կարող է մեկնաբանվել նաև ձևի-վիճակի իմաստով։ Օրինակ՝ «Հայկական նկարչությունը ներկայացված է իր հնագույն ժամանակներից» (ՀՄՀԵ, 76)։

Իսկ որոշ կապակցություններում հնարավոր է բացառականը մեկնաբանել և՛ ժամանակի, և՛ վերաբերության իմաստներով։

«Ջրաղացն անուշ մռմռալով, ասես հին օրերից մի հին հեքիաթ էր պատմում» (Իս., 3, 55)։ «Այդ օրերից մնում է ինձ մոտ մի թանկագին հիշատակ» (Իս., 4, 65)։

Վերջին օրինակում օրերից բացառականը կարող է արտահայտել նաև նման-սկզբնակետի իմաստ։

Անորոշ դերբայի բացառականը առանձին չի կարող դառնալ բայի լրացում ժամանակի իմաստով։ Սակայն մի շարք հեղինակներ մայրենի բարբառի ազդեցությամբ անորոշ դերբայի բացառականը ժամանակի իմաստով գործածում են բազմաթիվ բայերի հետ։ Վ. Առաքելյանը այս գործածությունը մեկնաբանում է հետևյալ կերպ։ Բարբառում անկատար դերբայը (որը նաև ժամանակ է ցույց տալիս) իս ձևի փոխարեն (գնալիս, աշխատելիս) ստանում է ուս ձևը (գնալուս, աշխատելուս), որը և շփոթվում է անորոշ դերբայի բացառականի հետ։ Դրանից հետո էլ անորոշ դերբայի բացառականը գործածվում է որպես բայի լրացում[1]։

Անշուշտ, այս բացառականը գրական լեզվի օրինաչափությանը հակասող է, ուստի և մերժելի։ Եղած օրինակներից կարելի է նշել մի քանիսը։

«Բայց ճանապարհվելուց ճայտնել էր հորս» (Մուր., 4, 79)։ «Քաղաքի սահմանին մոտենալուց ժողովուրդն արդեն զորախմբերը շրջապատեց» (Մուր., 4, 506)։ «Մութն ընկնելուց գալիս էին Աշոտն ու Օհան ապերը» (Բակ., 120)։ «Սպարապետը կարգադրեց դեսպանությունը երևալուց հրացաններից ճամազարկ տալ» (ՍԽՄԽ, 540)։

Ձևի բացառական.— Ժամանակակից հայերենում բացառական հոլովը կարող է բայի լրացում դառնալ ձևի հարաբերությամբ ևս։ Պետք է նշել, որ բուն ձևի իմաստով բացառականը քիչ է գործածվում։ Եղած օրինակներում ձևի բացառականը միշտ հենվում է տեղի և սահմանափակման իմաստների վրա։ Մեր քերականագիտության մեջ ձևի բացառական չի ընդունվել։ Ճիշտ է, Վ. Առաքելյանը նշում է ձևի բացառական, սակայն իբրև օրինակ բերում է ոչ թե արդի հայերենի բացառական հոլովաձևը, այլ գրաբարյան բացառականը (ի սրտե)[2]։

Անշուշտ, պետք է համաձայնվել, որ բացառական հոլովը բուն իմաստով ձևի լինել չի կարող, սակայն ձևի նշանակություն կարող են ստանալ տեղ ցույց տվող մի շարք բառերի բացառական հոլովաձևեր՝ փոխաբերաբար գործածվելիս, դարձվածքների մեջ։ Այդպես կարող են լինել, օրինակ, տեղ, արմատ, հիմք, եռև, գլուխ, սիրտ, հոգի և այլ բառեր։ Լրացյալ բայերի սահմանափակում չկա։

---

[1] Վ. Առաքելյան, նշվ. աշխատ., էջ 140։

[2] Նույն տեղում, էջ 150։

«Գարդմանը կարծես տեղից դղրդաց» (Մուր., 4, 45)։ «Նրանք Գիժ-Կեկել էին անվանում ետևից» (ՆԴ, 2, 549)։ «Նա ուզում էր մոտիկից իր աչքով տեսնել այդ հրաշք-բաները» (ԱՁ, 4, 435)։ «Ու էրվեց հիմքից աշտարակն ահեղ» (ՀԹ, 1, 268)։ «Աղջիկը սովալլուկ հայացքով աչքի տակից նայեց հոր դատարկ ձեռներին» (ՆԴ, 1, 48)։ «Նա խոսում էր անկեղծ և հոգու խորքից» (Շիրվ., 3, 283)։ «Նա խոսում էր միլիոնների սրտից» (Իս., 4, 190)։ «Հառաչանքով սրտի խորքից խոսք ես խոսում սարծու հետ» (ՀԹ, 1, 126)։ «Մի ամբողջ անտառ արմատից հանել» (ՊՍԱՁ, 188)։

Երբեմն ձևի իմաստը անբաժան է վիճակի իմաստից։ Օրինակ՝ «Մահակն ուսին, շունն ետևից Ներս է մտնում մի գլուխ չոբան» (ՀԹ, 1, 258)։

Իսկ «Ելնեց կաղնին խոր արմատից» (Իս., 2, 184) նախադասության մեջ առկա է ձևի և միասնության իմաստների համատեղումը։

Հետևյալ նախադասություններում հայացքից բացառականը կարելի է մեկնաբանել և՛ ձևի, և՛ ժամանակի իմաստներով. «Ճանաչեցի առաջին իսկ հայացքից» (ՆԴ, 2, 487)։ «Նրանք ատեցին միմյանց հենց առաջին հայացքից» (Շիրվ., 3, 168)։

Սահմանափակման բացառական.— Սահմանափակման իմաստը հիմնականում խնդրային է, սակայն քանի որ այն գերազանցապես դրսևորվում է տեղի իմաստին զուգակցված, ուստի քննում ենք պարագայական իմաստների բաժնում։

Բայի լրացումը ցույց է տալիս այն առարկան, որով սահմանափակվում է լրացյալի արտահայտած գործողությունը, հատկանիշը[1]։ Սահմանափակման բացառականը գերազանցապես ածականի լրացում է[2]։ Սակայն մի շարք բայեր ևս այսպիսի լրացում կարող են ստանալ։ Այս դեպքում բացառականն արտահայտում է հիմնականում տարածական առարկա, որը տեղի—սահմանափակման իմաստ ունի։ Այսպես, երբ ասում ենք՝ «Նա վիրավորվեց ոտքից», ապա ոտքից բացառականը ցույց է տալիս վիրավորվելու սահմանափակված տեղը (վիրավորվել կարելի է նաև ձեռքից, գլխից, ուսից և այլն)։

Սահմանափակման բացառականի առաջին ենթատեսակը տեղի—սահմանափակման բացառականն է։ Իբրև այսպիսի լրա-

---

[1] Դա դիտված է Մ. Աբեղյանի, Վ. Առաքելյանի կողմից։ (Տե՛ս Մ. Աբեղյան, նշվ. աշխատ., էջ 452—453, Վ. Առաքելյան, նշվ. աշխատ., էջ 148—149)։

[2] Տե՛ս «Ածականի բառակապակցությունները» գլուխը։

ցում կարող են հանդես գալ բազմաթիվ գոյականներ (մարմնի մաս ցույց տվող, ինչպես և այլ նշանակություն ունեցող)։

«Նա մեջքից կռացել էր» (Շիրվ., 8, 35)։ «Միայն ոտիցն է ընկել ու ոտը փշրվել է» (ՀԹ, 1, 390)։ «Միջից կտրեց ժանտ հրեշին» (ՀԹ, 2, 129)։ «Բարձրացավ, տեսավ մի մեծ մարմար քար կիսից պատռված ու միջից վառված» (ՀԹ, 2, 106)։ «Ոտքից կաղում էր նա» (Ր, 7, 20)։ «Տան կտուրը մի կողմից արդեն ծռվել էր» (Մուր., 5, 267)։ «Դրսից քարանձավը յուր բնական գեղեցկությունն ուներ» (Ր, 7, 224)։ «Այա ողջագուրվեց սուրհանդակ փաշայի հետ, որին ճանաչում էր պալատից» (ՍԽՄԽ, 834)։

Սահմանափակման իմաստը կարող է արտահայտվել նաև այլ նշանակություն ունեցող բառերով։ Օրինակներ՝ «Նա հույս ուներ վկա լինելու մի սպետական տեսարանի, որի մասին գաղափար ուներ միայն վեպերից ու բեմական ներկայացումներից» (Շիրվ., 3, 200)։ «Ընկերոջն օգնում է հատկապես ռուսերենից ու մաթեմատիկայից» (ՀՄՀՆ, 44)։

Պատճառի բացառական.— Բային լրացումը այս դեպքում ցույց է տալիս այն առարկան, որից, իբրև պատճառից, առաջանում է գործողությունը, երևան է գալիս մի բան։ Պատճառի բացառականը, ինչպես նշվեց վերևում, որոշակիորեն տարբերվում է պասիվ ներգործության բացառականից նրանով, որ հիմնականում չի արտահայտվում առարկա ցույց տվող բառերով։ Պատճառը որոշակիորեն տարբերվում է նաև հիմունքից (տե՛ս հաջորդ հատվածը)։

Պատճառի բացառական կարող են դառնալ վերացական գոյականներ՝ գերազանցապես հոգեվիճակ, զգացում արտահայտող, ինչպես՝ ծարավ, կարոտ, ցավ, ուրախություն, մենակություն, վախ, ահ, երկյուղ, սարսափ, դարդ, ճաղց, սով, նախանձ, աղմուկ, հաճույք, ձանձրույթ, վիշտ, ամոթ, հուսահատություն, շփոթմունք և այլն։ Այսպիսի լրացում կարող են ստանալ տարբեր իմաստ ունեցող բայեր։

«Արդեն հոգնել էր երկար մենակությունից» (Մուր., 4, 391)։ «Թե գող, թե գազան, հենց դատարկ վախից, Հեռու են փախչում նրա փարախից» (ՀԹ, 2, 15)։ «Իմ շան ահից ո՞վ սիրտ կանի» (ՀԹ, 2, 17)։ «Դարդից չորացավ» (ՀԹ, 2, 50)։ «Եվ լքել են ապարանքը սարսափից» (Իս., 2, 152)։ «Անոթությունից քուն չէի մտել» (Իս., 2, 223)։ «Գիշերվա անքնությունից նյարդերը հոգնել էին» (Շիրվ., 3, 165)։ «Ոմանք վհատությունից փախան դեպի զանազան կողմեր» (Ր, 7, 392)։ «Վշտից օղի էր խմում կաբակներում

բազմաղմուկ» (Չ, 257)։ «Պետին շփոթմունքից մոռացավ *երեսը փափախով սրբել» (Բակ., 40)։*

Պատճառի իմաստով կարող է գործածվել նաև անորոշ դերբայի բացառականը, որը լրացյալ բայի մոտ չպետք է շփոթել ժամանակի կամ այլ իմաստի բացառականի հետ։

«*Շատ* բղավելուց *բողազս* ցավում ա» (*ՆԴ, 1, 24*)։ «Գոռալուց *ձենը* կտրվում էր» (*ՎՓ, 4, 278*)։

Մի բանից փախչել *կապակցության մեջ բացառականը կարելի է մեկնաբանել և՛ պատճառի, և՛ խուսափման իմաստներով։ Օրինակ՝ «Նրանք էլ երևի* շոգից էին փախել» (*ՎՓ, 4, 181*)։

Հիմունքի բացառական.— *Ցույց է տալիս այն առարկան (պարագան), որի հիման վրա տեղի է ունենում գործողությունը, արվում է որևէ դատողություն, ենթադրություն և այլն։ Հիմունքի բացառականը Մ. Աբեղյանի կողմից չի տարբերվել պատճառի բացառականից։ Նա գտնում է, որ դատողության, որևէ բան ճանաչելու, հետևություն անելու համար հիմք ցույց տվող բացառականը ևս պատճառի բացառական է, նրա մի տարբերակը*[1]։ *Վ. Առաքելյանը թեև նշում է պատճառի և հիմունքի բացառականների տարբերությունը, սակայն այդ երկուսը նույն վերնագրի տակ է քննում*[2]։

Հիմունքի բացառականով դրված բառերը ցույց են տալիս ոչ թե գործողություն, դրություն, եղելություն առաջացնող առարկան, այլ սոսկ այն առարկան, որը դատողության, իմացական որևէ ակտի հիմք է ծառայում։ Այսպես, «Նրան ձայնից ճանաչեցի» *նախադասության մեջ* ձայնից *բացառականը* ճանաչել *իմացական գործողության սոսկ հիմքն է նշում և ոչ երբեք պատճառը, իսկ «Նա* թռչկոտում էր ուրախությունից» *նախադասության մեջ* ուրախությունից *բացառականը* թռչկոտել *գործողության պատճառն է ցույց տալիս։*

Պետք է նշել, որ հիմունքի բացառական պահանջում են առաջին հերթին իմացական, զգացական, երբեմն և այլ իմաստ ունեցող սակավաթիվ բայեր։

Իբրև լրացում հանդես են գալիս դատողության, հետևության հիմունք ծառայող բազմաթիվ գոյականներ։

«*Բայց* ակնարկությունից *դու այդ* գուշակեցիր» (*Մուր., 4, 147*)։ «*Բազմամյա* փորձառությունից գիտեր, *որ թշնամին հաս-*

---

1 Մ. Աբեղյան, *նշվ. աշխատ., էջ 450—451։*

2 Վ. Առաքելյան, *նշվ. աշխատ., էջ 130—132։*

նում է շատ անգամ այնպիսի ժամանակ, երբ ոչ ոք չէ սպասում նրան» (Մուր., 4, 223)։ «Ես աչքերից կճանաչեի,— պարծեցավ ընկերը» (ՀԹ, 1, 325)։ «Իսկ կոկարդավոր պարոնի համազգեստից իմացավ, որ դատական սպիտակ է» (ՆԴ, 1, 195)։ «Իմ սուր ճանկերից ճանաչեց նա ինձ, Ես ականջներից իմացա նրան» (Դուշ., Զ, 582)։ «Բոլոր նշաններից երևում էր, որ մի օր այդ ծարիր շեն ու փարթամ է եղել» (Մուր., 5, 266)։ «Զրույցից պարզվում է, որ ընկերներս եկել են դպրոցներ մտնելու» (ՍԶ, 3, 294)։

Ասացական բայերի մոտ (խոսել, ճառել, պատմել և այլն) բացառականը կարելի է մեկնաբանել և՛ հիմունքի, և՛ վերաբերության իմաստներով։ Օրինակ՝ «Բժիշկը օրենքից էր խոսում» (Բակ., 27)։

Հիմունքը կարող է համատեղվել նաև ձևի իմաստի հետ։ Օրինակ՝ «Մի նայելուց խելոքն հասկանում էր, թե որ կովն է գիշերն անհանգիստ եղել, որն է շատ քաղցած» (Բակ., 29)։

Մի շարք կապակցություններում բացառականը կարելի է մեկնաբանել և՛ հիմունքի, և՛ պատճառի իմաստներով։

«Մեր բախտից Ալեքսանդրին և օրիորդին, Անահիտին, հանդիպեցինք փողոցում» (Իս., 3, 74)։ «Բայց բախտից Ալու— Հյուպատոսն հանկարծ ելնում է դուրս» (Զ, 364)։

Դիտողություններ բացառականով կազմված կապակցությունների վերաբերյալ.— 1. Ժամանակակից հայերենում տարբեր իմաստ ունեցող մի շարք ձևեր վերածվել են կապի կամ կապական բառի։ Սակայն դրանցից մի քանիսը զուգահեռաբար ունեն նաև բուն կիրառություն (այսինքն՝ իրենց իմաստով գործածություն)։ Կապական բառ են կողմից, երեսից, ձեռից (ձեռքից), ետևից, տեսակետից, անունից, որոնք միաժամանակ գործածվում են իբրև գոյականներ։ Այսպես, հետևյալ օրինակներում դրանք գոյական են։

«Նրա աջ ու ձախ կողմերից բացվում էին չորս փոքրիկ և խորշավոր դռներ» (Մուր., 4, 17)։ «—Տը՛զզ, էն կողմից մի ճանճ գալի, էս կաթիլին վեր է գալի» (ՀԹ, 1, 258)։ «Գող-ավազակ մի կողմից են կողոպտում, Պարտատերս մյուս կողմից է ինձ խեղդում» (ՂԱ, 10)։ «Այն ժամանակ նա կհարձակվեր ետևից» (Մուր., 4, 152)։ «Նա երեսից մաքրեց օճառի փրփուրը»։ «Նա ձեռքից թողեց փայտը»։

Իսկ հետևյալ նախադասություններում այդ բառերը կապական գործածություն ունեն։

«Գալիս են կրկին թեթև, կամացուկ, Դռան ետևից փսփսում

ժածուկ» (ՀԹ, 2, 18)։ «Եվ նա էլ, մոլորված իմ սիրտ, Կրակն է ընկել—քո ձեռից» (ՀՍՀԵՄ, 38)։ «Ախ, աշխարհում մարդկանց ձեռնեն խաչեր շատ եմ, շատ տարել» (Իս., 1, 127)։ «Նա ուղարկված է Պետրոսի կողմից»։

2. Երբեմն որոշ հեղինակների երկերում հանդիպում ենք բացառականի սխալ ձևերի, ինչպես՝ նայելից, տարից (փոխանակ՝ նայելուց, տարուց)։

«Միմյանց նայելից չէին կշտանում» (ՂԱ, 137)։ «Դիպլոմը ծոցիդ՝ հինգ տասը տարից Հայրենիք կգաս օտար աշխարհից» (Ծ, 255)։

3. Սովորաբար բացառական հոլովով դրված երկու և ավելի բառերի գործածությունը նույն բայի լրացման դերում ոճական անհարթություն է առաջ բերում։ Նման դեպքում դրանցից մեկնումեկի փոխարեն այլ հոլովաձև է դրվում։ Այսպես, փոխանակ ասելու «Ցավից հեռացավ սեղանից»՝ ասում ենք «Ցավի պատճառով հեռացավ սեղանից»։ «Համեստությունից խուսափում է մեծարանքից» ասելու փոխարեն գործածում ենք «Համեստության պատճառով խուսափում է մեծարանքից» կամ փոխում ենք նախադասության կառուցվածքը (օրինակ՝ «Մեծարանք չի սիրում համեստությունից»)։

Այնուամենայնիվ որոշ գրողների երկերում երբեմն հանդիպում ենք տարբեր իմաստ ունեցող երկու բացառականի համատեղ գործածության՝ նույն բայի լրացման դերում։ Դրանք կամ չափածո խոսքի մեջ են և թելադրված հանգավորման ու չափի անհրաժեշտությունից, կամ բացառություններ են տվյալ երկում։

«Քու հոր մահվան տարուց-օրից Դուրս չեմ հանել ձին ախոռից» (ՀԹ, 2, 116)։ «Ու զինվորը էն ծերից պատերազմից եկավ տուն» (Զ, 264)։ «Տես, արևն ահա Վրկանա ծովից իր բոլոր շուքով ծագում է մորից» (ՂԱ, 382)։ «Սկզբում կարծում էին, որ Սունդուկյանը համեստությունից է հրաժարվում հոբելյանից» (Շիրվ., 8, 210)։ «Դրանից ես ամաչում եմ թե՛ ծարևաններից, թե՛ իմ ընկերներից» (ՍԶ, 3, 171)։

4. Բացառականը մեծ մասամբ շարահյուսական ինքնուրույն դեր ունի. այն դառնում է նախադասության մեկ անդամ։ Բացառություն է կազմում այն դեպքը, երբ մասնական բացառականը գոյական կամ դերանուն լրացյալի հետ է մեկ անդամ, ինչպես նաև այն դեպքը, երբ համեմատության բացառականը ածականի լրացում է։ Բայի լրացման դերում հանդես գալիս բացառականը նախադասության մեկ անդամ է լինում։ Սակայն կան որոշ գո-

յականներ, որոնք և՛ բացառականով, և՛ այլ հոլովներով գործածվելիս նախադասության լիարժեք անդամ չեն։ Դրանցից են ժամանակի, կշռի, տարածության և այլ չափերի միավորները, ինչպես՝ օր, ժամ, տարի, գրամ, մետր *և այլն, որոնք որևէ լրացումով հանդերձ են նախադասության մեկ անդամ լինում։*

«Այդ օրից *թագուհին բերդակալության պաշտոնը հանձնեց Մուշեղ անունով այս հինավուրց զորականին» (Մուր., 4, 20)։* «*Դեռ* փոքր հասակից *ծնողները թողել էին նրանց իրենց ազատ կամքին» (ՆԴ, 1, 140)։*

5. Երբեմն անձ ցույց տվող բառերի բացառականը կարող է արտահայտել կայքի խնդրի ու կայքի իմաստ։ Այսպես, «Հայրը մի վարպետից *մյուսի մոտ էր տանում» (ՂԱ, 203) նախադասության մեջ* վարպետից *ձևը=է* վարպետի մոտից:

Դիտողություններ բացառականի և լրացյալի շարադասության վերաբերյալ.— *1. Ուղիղ շարադասությամբ բացառականով լրացումը բայից հետո է դրվում, ինչպես* վերադառնալ դաշտից, *(մի բան)* առնել մեկից, խուսափել վտանգից *և այլն։ Շրջուն շարադասության դեպքում լրացումը նախադաս է լինում, ինչպես՝* ընկերոջից սիրվել, ծառից *(միրգ)* պոկել *և այլն։*

2. Բացառականով դրվող լրացումը սովորաբար չի տրոհվում։ Սակայն երբեմն պատահում են այսպիսի լրացումների տրոհման դեպքեր։

«Օդի մեջ լողացող ջրային շիթերը, արեգակի առաջին ճառագայթներից, վառվում էին *միլիոնավոր ոսկյա հուլունքների նման» (Ր, 7, 22)։ «Մամիկոնյան իշխանները, վաղեմի* ժամանակներից, վայելում էին *հայոց սպարապետության արտոնությունը» (Ր, 7, 22)։*

3. Տրոհված լրացումներից պետք է տարբերել բացառականի այն գործածությունը, երբ երկրորդական նախադասության բայի լրացումը փոխադրվում է գլխավոր նախադասության բայի մոտ։ Որպես կանոն՝ երկու բայերն էլ խնդրառական նույն հատկությունն ունեն (տվյալ դեպքում՝ բացառական ստացող են)։ Գլխավոր նախադասության բայի հետ տվյալ բացառականն արտաքուստ ճիշտ կապակցություն է կազմում, սակայն իմաստով լրացումը նրանը չէ[1]*։ Օրինակ՝ «Սպարապետի* հաղթությունից *չեմ սպասում, թե բան* դուրս գա, *բայց նրա պարտությունից բան* դուրս կգա» *(ԴԴվ, 545)։ Այստեղ* հաղթությունից *բացառականի լրացյալն է*

---

[1] *Հայցականի համանման գործածությունը նշվեց վերևում։*

դուրս գա, որից այն անջատվել և փոխադրվել է գլխավոր նախադասության մեջ։

4. Նույն նախադասության մեջ բացառականը կարող է լինել երկու կամ ավելի բայերի լրացում։ Օրինակ՝ «Պարզ տեսնում էր, թե ինչպիսի գումարներ, ինչպիսի թշվառներից մզված ու կորզված՝ կիտվում էին պորտաբույծների արկղներում» (Վփ, 4, 582)։ Իսկ երբ նույն նախադասության մեջ կա և՛ դիմավոր, և՛ անդեմ ձև, ապա բացառականի լրացյալը երբեմն կարող է որոշակի չլինել։ «Նրա շնչից գունատված տերևները դողդողում էին» (ՀԹ, 1, 330)։ «Փոքրիկ պատուհանը ծեփվել էր դրսից ներս նայող հետաքրքիր դեմքերով ու պսպղուն աչքերով» (ՆԴ, 1, 14)։

Առաջին նախադասության մեջ շնչից բացառականը կարելի է համարել և՛ գունատված, և՛ դողդողում էին բայերի լրացում։ Երկրորդի մեջ դրսից ձևը հնարավոր է դիտել և՛ ծեփվել էին, և՛ նայող բայերի լրացում։

5. Հայտնի է, որ գոյականը ևս, թեև սակավ, ունենում է բացառականով լրացում[1]։ Այս է պատճառը, որ նախադասության մեջ բացառականը դիտվում է նաև իբրև գոյականի լրացում։ Վերաբերության բացառականին նվիրված հատվածում արդեն նշել ենք, որ մի շարք կապակցություններում բացառականը դառնում է ասացական բայի արմատին զուգահեռ անվանական բաղադրիչ ունեցող բայական հարադրության լրացում (լուր տալ մեկից, զրույց անել մի բանից և այլն)։ Սրանից զատ այլ դեպքերում էլ բացառականի լրացյալ կարող են դիտվել բայը և գոյականը հավասարապես։

«Հագած էր շատ լավ կարած սև բանկոն շատ լավ կտորից» (ՆԴ, 2, 472)։ «Երկու թևատարած արծիվներ քարից դուրս էին բերված դռան կամարի վրա» (Ր, 7, 120)։ «Առաջ սրա հետ էր խորհրդակցում միշտ և հեռու ժողովրդից խելացի մարդկանց հրավիրում խորհրդի» (ԴԱ, 119)։ «Կերակուրներից նա ամենից շատ սիրում էր յուղն ու մեղրը» (ԴԱ, 199)։ «Իր մասն է ուզում իր խակ հողերից, Գող է ուզում իր այն փողերից» (ՊՍԱՁ, 193)։ «Միայն ագռավներն ու ճնճղուկներն էին մնացել թռչուններից» (Վփ, 4, 7)։ «Չոր ցախերից էլ մի շալակ էր անում» (Բակ., 5)։

Դ. ԲԱՅԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ

Գործիական հոլովը առաջին հերթին լինում է բայի լրացում։ Հոլովի անունն իսկ բխում է նրա շարահյուսական հիմնական

---

1 Տե՛ս «Գոյականի լրացումները թեք հոլովներով» հատվածը։

իմաստից ու կիրառությունից. ցույց է տալիս այն առարկան, որով, որի միջոցով կատարվում, տեղի է ունենում գործողությունը։ Երբ ասում ենք «Փայտով խփեցի ծառին», ապա փայտով բառաձևը ցույց է տալիս խփեցի գործողության կատարման միջոցը (իրացման առարկան)։

Գործիական հոլովի այս հիմնական նշանակության (միջոցի) շուրջն էլ առաջացել են նրա բազմաթիվ իմաստները, որոնք այս կամ այն չափով գործողության միջոցն են ցույց տալիս։

Գործիական հոլովի ձևա-իմաստային մանրամասն քննությունը տրված է Մ. Աբեղյանի հիշյալ աշխատության մեջ։ Վ. Առաքելյանն իր հերթին բացահայտել է այդ հոլովի մի շարք նշանակություններ։ Սակայն, այնուամենայնիվ, այս հոլովի իմաստային բոլոր առանձնահատկությունները լիովին երևան չեն հանված։

Բայի լրացման դերում հանդես եկող գործիական հոլովի իմաստները ևս բաժանվում են երկու խմբի՝ խնդրային և պարագայական։

Խնդրային ենք համարում միջոցի, նյութի, սահմանափակման, ներգործող խնդրի, միասնության, փոխարինության իմաստները։ Պարագայական իմաստներն ավելի շատ են։ Դրանք են տեղի, պատճառական, ժամանակի, չափի, համապատասխանության, ձևի. վիճակի, հիմունքի, պատճառի, նպատակի, միասնության. ամփոփման:

Պետք է նշել, որ խնդրային և պարագայական իմաստների միջև խիստ սահմանազատում չկա, երբեմն նույն ձևը մերթ խնդրային, մերթ պարագայական նշանակություն է ունենում։ Այսպես, երբ ասում ենք, «Նա սիրով կատարեց իմ խնդրանքը», ապա այստեղ սիրով գործիականը պարագա է (ձևի)։ Մինչդեռ «Նա իր սիրով հպարտանում է» նախադասության մեջ սիրով միջոցի խնդիր է։

Խնդրային գործիականով կապակցություններ

Ա. Բուն միջոցի անուղղակի խնդրի գործիական.— Միջոցի անուղղակի խնդիրը, իբրև նախադասության անդամ, արտահայտվում է բուն միջոցի (գործիքի), նյութի, բաղկացության իմաստներով։ Ուստի և այն քննում ենք առանձին-առանձին։ Բայի՝ այսպիսի նշանակություն ունեցող լրացումը ցույց է տալիս գործողության, եղելության միջոցը, այն առարկան, որով, որի օգնությամբ մի բան է կատարվում։

Այսպիսի լրացում ստանում են բազմապիսի բայեր, և առա-

ջին հերթին կոնկրետ գործողություն ցույց տվողները։ Դրանցից կարելի է նշել՝ փորել, ճանկել, ճանել, սանրծել, կատարել, աշխատել, գնալ, գալ, ստանալ, բերել, շրջապատել, կովել, կտրել, կարել, խմել, զինել, խոսել, գերազանցել *և այլն։ Երացում դառնում են առաջին հերթին թանձրացական գոյականները։*

«*Մորակի* կորով *դուռը* բախեց» *(Մուր., 4, 110)*։ «Կավում էին *լայնալիճ* աղեղներով *և թունավոր* նետերով» *(Մուր., 4, 173)*։ «*Պարզուկ* սրնգով երգել է *անուշ*» *(Իս., 2, 21)*։ «*Ոսկի* գավաթով *շերբեթ է* խմում» *(Իս., 2, 162)*։ «*Էն կարկաշուն վզիկը Սուր* դանակով զարկեցին» *(ՀԹ, 1, 115)*։ «*Մայրը* գոգնոցով սրբում է *աչքերը*» *(ՀԹ, 1, 312)*։ «Պատռեմ *սուր* խոփով *ես կուրծքը հողի*» *(ՀՀ, 48)*։ «Բաց է անում *երկաթի դռները ժանգոտ* բանալիով» *(Շիրվ., 3, 8)*։ «Կացնով ճանդում է *գետինը*» *(ՆԴ, 1, 9)*։

Միջոցի գործիական կարող են դառնալ նաև վերացական մի շարք գոյականներ, որոնք ավյալ դեպքում թեև առարկայական նշանակություն չունեն, սակայն միջոց են ծառայում գործողության կատարման համար։ Այդպիսի գոյականներից կարելի է նշել՝ խաղ, լուսավորություն, ճայրենասիրություն, ճաղթանակ, փառք, բույր, կարոտ, ամոր, տաղանդ *և այլն։*

«*Քո շքեղ* խաղով *մարդիկ* ճիացան» *(ՀԹ, 1, 180)*։ «*Եկել էր մեզ* զարմացնելու *իր վիպասանի և բանաստեղծի* տաղանդով» *(ՆԴ, 1, 110)*։ «*Մեծատան երեսն* այրիր ամոթով» *(ՀՀ, 57)*։ «*Մեխակի* բույրով *հովն* էր շշնչում *հեքիաթներն հազար ու մի գիշերվա*» *(Իս., 2, 56)*։

Երբեմն անորոշ դերբայի գործիականը ևս, որը սովորաբար ձևի պարագա է լինում, կարող է միջոցի իմաստ արտահայտել։ Օրինակ՝ «Այդ բոպեին զբաղված էր *ծխախոտ* փաթաթելով» *(ԳՄԼՁ, 196)*։

Անձ ցույց տվող բառերը սովորաբար միջոցի գործիական չեն դառնում։ Այսպես, հնարավոր չէ ասել «Գրիգորով ուղարկեցի *գիրքը*»։ *Անձ ցույց տվող բառերի միջոցի իմաստն արտահայտվում է կապի իմաստ ստացած* ձեռքով (ձեռով), միջոցով, բերանով *բառերով և սեռականով։ Բերված նախադասության փոխարեն ասում ենք* «Գրիգորի միջոցով (ձեռքով) ուղարկեցի *գիրքը*»։ *Նույն կերպ ասում ենք* Պետրոսի բերանով (ճաղորդել, տարածել, լուր տալ *և այլն*), ընկերոջ ձեռքով (ճասցնել, անել կատարել *և այլն*)։ «*Մի անգամ Դավիթ Ֆոմիչը դռնապան* Պողոսի բերանով *թել ու ասեղ* էր խնդրել *կնոջից*» *(ՆԴ, 1, 233)*։ «*Այդ նամակը մտադիր էի* ուղարկել Կոլյայի ձեռքով» *(ՆԴ, 594)*։

Միջոցի և ձևի իմաստները կարող են համատեղվել մի շարք կապակցություններում։

«*Երբեք չեղավ, որ մի չնչին* խոսքով *կամ մի աննշան արար-քով իրար* վիրավորած *լինեինք*» (*Իս., 3, 71*)։ «Պիտի գովեն *քո նոր կյանքը նոր* երգերով, *նոր* խոսքով» (*ՀԲ, 1, 127*)։ «*Սեփա-կան* ուժերով է վաստակում *օրվա պարենը*» (*Շիրվ., 3, 178*)։ «*Քո երկչոտ* փախուստով զրգռել ես *նրա զայրույթը*» (*Մուր., 4, 238*)։ «*Կգնա* նարց ու փորձով կիմանա» (*Բակ., 21*)։

Այդպիսի համատեղում կարող է լինել նաև անորոշ դերբայի գործիականի մեջ։

«Արտասվելով, լալով *էդպես* Նա չես դարձնի *էլ գերից*» (*ՀԲ, 2, 67—68*)։ «*Գիր* կարդալով—*դու գրքերում Շատ նորանոր բան* կիմանաս» (*Ս, 101*)։ «*Այս բոլորը այն ժամանակվա երեխեքը* սո-վորում էին խաղալով» (*ՂԱ, 202*)։

Մի շարք կապակցություններում գործիականը կարող է հա-մատեղել միջոցի և տարկայական միասնության իմաստները։

«*Միշտ* գալիս էին անքիվ նավերով» (*ՂԱ, 373*)։ «*Դյուցա-զունները* նկարում էր *նա Վահե* գործերովն *ու* արկածներով» (*Հայնե, ՂԱ, 72*)։ «*Կերակրի յուրաքանչյուր պատառը* կուլ էր տա-լիս *մերթ* գինով, *մերթ* օղիով» (*Շիրվ., 3, 26*)։

Որոշ կապակցություններում գործիականը կարող է երեք իմաստ արտահայտել՝ միջոցի, տարկայական միասնության և սահմանափակման։ Այսպես, «Հարստացան և վանքերը իրանց կալվածքներով» (*Ր, 7, 183*) *նախադասության մեջ* կալվածքնե-րով *գործիականը եթե ցույց է տալիս* կալվածքների միջոցով, *ապա միջոցի իմաստ ունի, եթե նշանակում է* կալվածքների հետ միասին, *ապա տարկայական միասնության իմաստ ունի, իսկ եթե ցույց է տալիս հարստանալու սահմանափակումը (ի հակա-դրություն, ասենք,* հարստանալ զրերով, վաճականներով *կա-պակցությունների), ապա սահմանափակման իմաստ ունի։*

Կան մի շարք կապակցություններ, որոնցում գործիականը կարող է ունենալ միջոցի, տարկայական միասնության և ձևի իմաստներ համապատասխանաբար։

«*Խարխուլ* մակույկով հանձնվիր *ծովին*» (*Իս., 2, 52*)։ «*Հեղի-նակը* ներկայանում *է մեծ* կտավով, *սովար* վեպով» (*Իս., 4, 295*)։ *Իսկ* երևակայությամբ վայելել *կապակցությունը կարելի է հա-կանալ և՛ միջոցի, և՛ ձևի, և՛ սահմանափակման իմաստներով։* «*Իրապես մի մութ անտառում կամ մի լեռան գագաթի վրա նըս-*

տած՝ երևակայությամբ *նա* վայելում էր *աշխարհի բոլոր վայելչությունը» (ՂԱ, 533)։*

Առավել շատ են այն կապակցությունները, որոնցում գործիականը համատեղում է միջոցի և սահմանափակման իմաստները։

«Ճանաչում էր ամեն մի խորշը, անտառը, աղբյուրը, որոնց հետ նվիրական հուշերով կապված էր *իր մանկությունն ու պատանեկությունը» (Իս., 4, 80)։ «Հ*ասակով *շատ* չէին տարբերվում *միմյանցից» (Ր, 7, 215)։ «Մենք* պետք է կրոնով միանանք *պարսիկների հետ» (Ր, 7, 297)։ «Գյուղի բնակիչները* պարապում էին *գլխավորապես* երկրագործությամբ *և մասամբ* մեղվաբուծությամբ» *(ՆԴ, 1, 99)։*

Զարմանալ *բայի՝ գործիական հոլովով դրված լրացումը կարող է մեկնաբանվել և՛ միջոցի, և՛ վերաբերության իմաստներով։ Օրինակ՝ «Երբ դեռ* աշխարհով զարմանալ *գիտեն» (ՀԱՀԵՄ, 9)։ Իհարկե այս խնդրառությունը նախընտրելի չէ. ավելի գործածական է* զարմանալ մի բանի, մեկի վրա *կարգի կապակցությունը։*

Կրավորական մի շարք բայերի՝ գործիականով լրացումը կարող է մեկնաբանվել և՛ միջոցի, և՛ ներգործող խնդրի իմաստներով։

«Պատուհանի ապակիները ավելի էին ծեփվել *հետաքրքիր* դեմքերով» *(ՆԴ, 1, 17)։ «Լռությունը* խանգարվում էր *միայն գրքացի կիսաձայն* ընթերցումով» *(ՆԴ, 1, 17)։ «Կղզին գետի ձախ կողմից ավելի մոտ էր ցամաքին, որից* բաժանված էր *բավական անձուկ* նեղուցով» *(Ր, 7, 494)։*

Միջոցի իմաստը կարող է համատեղվել նաև պատճառի իմաստի հետ։ Օրինակ՝ «Կաթողիկոսի մահվամբ *մի քանի չարիքներ միասին* էին առաջանում» *(Մուր., 4, 411)։*

Երբեմն գործիականը կարելի է մեկնաբանել և՛ միջոցի, և՛ հիմունքի իմաստներով։

«Ախ, ամենքն էլ էս աշխարհի անգութ կամքով *հող* են դառնել» *(Իս., 1, 137)։ «Իր կոչումի* անունով էին ճանաչում *նրան» (Իս,. 4, 93)։*

Նյութի գործիական.— *Բայի լրացումը այդ դեպքում ցույց է տալիս այն նյութը, որով կատարվում է գործողությունը*[1]*։ Իրակա-*

---

[1] *Գործիական այս իմաստը առաջին անգամ դիտված է Վ. Առաքելյանի կողմից։ (Մ. Աբեղյանը նյութի գործիականը չէր անջատում միջոցի գործիականից)։ (Տե՛ս նշվ. աշխատ., էջ 154—155)։*

նում նյութի գործիականը նույնական չէ միջոցի գործիականի հետ։ Եթե միջոցի գործիականը գործողության կատարման սոսկ միջոցն է նշում, ապա այս դեպքում գործիականն այն առարկան է արտահայտում, որը գործողության կատարման համար ոչ թե սոսկ առարկայական միջոց է, այլ նյութ։ Այսպես, երբ ասում ենք «Նա քարով կոտրեց փայտը», այստեղ քարով միջոցի գործիական է, իսկ «Նա քարերով (ջրով, շաղախով, փայտով) լցրեց փոսը» նախադասության մեջ քարերով գործիականը ոչ թե միջոցը, այլ նյութն է ցույց տալիս։

Նյութի գործիականը հարաբերակից է նյութի բացառականին։ Գործածության տեսակետից խիստ տարբերություններ կան նրանց միջև։ Կան մի շարք բայեր, որոնք նյութի բացառականով են լրացում ստանում, մյուսները, ընդհակառակը, գործիականով, իսկ մի շարք բայեր էլ՝ երկու ձևով հավասարապես։

Նյութի գործիական դառնում են գերազանցապես այն բառերը, որոնց ցույց տված առարկան կարող է նյութ դառնալ որևէ գործողության կատարման համար։

Այսպիսի լրացում ստանում են՝ լցնել, զարդարել, զուգել, համեմել, հագեցնել, լվանալ, ներկել, բուրել, ցողել, ծածկել, սփռել, բրջել, կերակրել, սնել և այլ բայեր։ Առաջին հերթին լրացում լինում են թանձրացական գոյականները։

«Քարով ու հողով լցրին էն փոսը» (ՀԹ, 2, 82)։ «Կզարդարեն քո շիրիմը վարդերով» (Իս., 2, 368)։ «Ազգերի արյունով շաղախեց Չինգիզ-խանը Ղարա-Ղորումի պարիսպները» (Իս., 3, 387)։ «Աչքերը լցվեցին արտասուքով» (ՆԴ, 1, 44)։ «Բազմոցները, գորգերը, բարձերը՝ բոլորը ցողված էին վարդաջրով» (Ր, 7, 88)։ «Կարճ կտրված սև մորուքը սփռված էր ոսկու փոշիով» (Ր, 7, 340)։ «Օդը տոգորված էր ուտելիքների և ըմպելիքների հոտով ու շոգիով և գլանակների թանձր մառախուղով» (Շիրվ., 8, 310)։ «Կուտակում էր կոպեկներ, սնվում հաց ու պանրով» (ԳՄԼՁ, 367)։ «Դրսի պատերը ներկված էին սպիտակ կավով» (ՍԽՄԽ, 228)։

Նյութի գործիական կարող են դառնալ նաև փոխաբերաբար գործածված մի շարք գոյականներ՝ պատկերավոր խոսքի մեջ։

«Հողը լցվում էր գարնան բույրերով» (Իս., 1, 199)։ «Եվ բեռնավորված հույսով ու վախով՝ Մեռավ հին տարին իր հետ թաղելով Ապարանքները իմ երազանքի» (Իս., 1, 303)։ «Դավթի արտասանած ամեն մի պարբերությունը համեմված էր ամենաընտիր և երբեմն շատ ինքնուրույն հայհոյանքներով» (ՆԴ, 1, 48)։

Որոշ կապակցություններում գործիականը համատեղում է նյութի և սահմանափակման իմաստները։

«Երկինք ու երկիր խառնվեցին *իրար* փոշով *ու* աղբով» *(ՆԴ, 1, 40)։ «Սենյակի օդը* հագեցած էր *խոնավության, սապնաջրի և ծխի դարչ* հոտով» *(ՆԴ, 1, 26)։*

Կարող են համատեղվել նաև նյութի և ձևի իմաստները։

«Շոգեկաթսաների խմբակներից արտացոլող կարմիր լույսերը արյան գույնով լուսավորում էին մեծ շրջաններ» *(ՎՓ, 4, 615)։ «Եվ սրտի սերը իր վառ կայծերով* Փովեց *երեսին վարդի* բերբերով» *(ՂԱ, 376)։ «Երկիրն* էր լայիս *պաղ* արցունքներով» *(ՎՏ, 1, 136)։*

Բաղկացության գործիական.— *Ցույց է տալիս այն տարրկան, որից առաջանում, կազմվում, ստեղծվում է մի բան*[1]*։ Եթե նյութի գործիականը հարաբերակից է նյութի բացառականին, ապա բաղկացության գործիականն էլ հարաբերակից է բաղկացության բացառականին։*

Իմաստային տեսակետից բաղկացության գործիականը սերտ կապի մեջ է նյութի գործիականի հետ։ Տարբերությունն այն է, որ նյութի գործիականը ցույց է տալիս որևէ բանի ստեղծման համար նյութ դարձող տարրկան, իսկ բաղկացության գործիականը՝ սոսկ այն տարրկանները, որոնցով մի բան է ստեղծվում։ Այսպես, երբ ասում ենք՝ «Քարերով լցրեց փոսը, *ապա* քարերով *սոսկ նյութն է (նյութի գործիական), իսկ* «Քարերով *ամբարտակ* կառուցեց» *նախադասության մեջ* քարերով *բաղկացության գործիական է։*

Պետք է նշել, որ բաղկացության գործիականով լրացում պահանջում են ստեղծման գործողություն ցույց տվող մի շարք բայեր, ինչպես՝ կառուցել, կերտել, շինել, պատրաստել, հյուսել, փնջել *և այլն։ Օրինակներ՝ «Այդ շենքը* կառուցում են *ընտիր* քարով»: *«Եվ ազգերի հազար-հազար ու բյուր* գանգերով *բուրգ ու աշտարակ* շինեց *Չինգիզ խանը» (Իս., 3, 387)։ «Ունենու դալար* ճյուղերով *կողով հյուսեց»։*

Բաղկացության իմաստը կարող է արտահայտվել նաև փոխաբերաբար։ Օրինակ՝ «Աստղերով հյուսված *երազ Բուրեց երգը թախծագին» (Իս., 1, 83)։*

---

[1] *Հայ քերականագիտության մեջ գործիականի այս իմաստը առաջինը ընդնված է Վ. Առաքելյանի կողմից։ (Տե՛ս նշվ. աշխատ., էջ 154)։*

Սահմանափակման գործիական.— Ցույց է տալիս այն առարկան, որով սահմանափակվում է լրացյալի արտահայտած գործողությունը, եղելությունը։ Այս իմաստը սովորաբար բնորոշ է ածականի լրացումներին[1]։

Սահմանափակման գործիականը կարող է լինել առաջին հերթին ածականական ծագում ունեցող բայերի լրացում։ Այդպիսի բայերից են՝ **մեղմանալ, թուլանալ, ուժեղանալ, հզորանալ, թեթևանալ, հասունանալ, մտերմանալ, գերազանցել, այլանդակվել** և այլն։ Իբրև լրացում հանդես են գալիս մեծ մասամբ **սիրտ, հոգի, տեսք, մարմին, միտք, տարիք, ուժ, խելք, վարք, բնավորություն, շնորհք, քաջություն** և նման բառեր, որոնք կա՛մ մարդու մարմնի մա՛ս, կամ որևէ առարկայացած հատկություն են ցույց տալիս։

«**Սրտով մեղմանում, Աղոթում եմ ես**» (ՀԹ, 1, 55)։ «Միքայելը կարող է կարծել, թե տակավին սիրում է **այդ մարմնով այլանդակված**, հոգով կոշտ ու կոպիտ մարդուն» (Շիրվ., 3, 64)։ «Թող **ցավերով մտերմացած**՝ Մեկտեղ գտնենք սփոփանք» (Ս, 135)։ «Մի՛ **թուլանաք հոգով**» (ԴԴՎ, 375)։ «Բայց երբ **խելքով հասունացան**, գլխի ընկան» (ՂԱ, 41)։ «Կրտսերը շատ **էր գերազանցում** մյուսներին իր **գեղեցկությունովը**» (ՂԱ, 164)։

Սահմանափակման գործիականը կարող է դառնալ նաև բազմաթիվ ու ածականական ծագում ունեցող բայերի լրացում։

«Դուք իմանում եք, որ նա **հոգով ու սրտով պատկանում է** ուրիշին» (Մուր., 5, 293)։ «Նրան՝ իր **տեսքով, հասակով**, ասին, **Չի հասնի** չքնաղ հուրին Իրանի» (ՀԹ, 2, 137)։ «Մեր վեպը իր **նմանությամբ**, իր բարձր **արվեստով**, իր դեմոկրատիկ, ինտերնացիոնալ, հումանիստ **գաղափարախոսությամբ մտնում է** դասական, առաջնակարգ էպոսների պանթեոնը» (Իս., 4, 215)։ «Այդ գրականությունը պատիվ կբերեր՝ իրենց պատմական **նշանակությամբ** ու իրենց **տարիքով** հայ ժողովրդին **չզիջող**՝ շատ ու շատ ժողովուրդների» (Իս., 4, 258)։ «**Հոգնած էր հոգվով, հոգնած էր** և **սրտով**» (Բ, 7, 135)։ «Ես **ոգով** այսօր **չեմ փոխվել** թեպետ» (Չ, 103)։

Կան բազմաթիվ կապակցություններ, որոնցում գործիականը կարելի է մեկնաբանել և՛ սահմանափակման, և՛ ձևի իմաստներով։

«Աշխարհի չար իրերը նրան բարի **դեմքով էին երևում**» (Իս., 2, 143)։ «Ամբողջ **մարմնով դողում էր** նա» (Իս., 3, 452)։ «Այժմ

[1] Տե՛ս «Ածականի բառակապակցությունները» գլուխը։

Սաքուլը ոտով-գլխով կորած էր *վերմակների տակ» (ՆԴ, 1, 26)։ «Ներսից իրենց վերին* մասով *համարյա* կպած էին *առաստաղին» (ՆԴ, 1, 192)։ «Պարզ է, որ մարդ* ճոգով տառապում էր» *(Շիրվ., 8, 426)։ «Գնում էի և* մտքով պատկերացնում *Վահանյանի ամբողջ անցյալը» (ՎՓ, 4, 556)։ «Արտակը* մտքով գնաց *Ողական ամրոցը» (ԴԴՎ, 176)։*

Սահմանափակման և ձևի համատեղ իմաստ արտահայտող այս գործիականը միաժամանակ միջոցի երանգ էլ ունի։

Ներգործող խնդրի գործիական.— *Լրացումը ցույց է տալիս այն առարկան, որից գործողությունը կրում է ենթական։ Ինչպես հայտնի է, ներգործող խնդիրը կրավորական կառուցվածքի նախադասության տրամաբանական ենթական է, իսկ քերականական ենթական գործողությունը կրողն է։*

Ինչպես նշել ենք բացառականի բաժնում, ներգործող խնդիրն ավելի շատ արտահայտվում է բացառական հոլովով։ Գործիականի՝ ներգործող խնդրի իմաստով քիչ դրսևորվելու պատճառը այդ հոլովի հիմնական իմաստի՝ միջոցի գերակշռումն է, այն հանգամանքը, որ նույնիսկ բուն ներգործող խնդրի իմաստ արտահայտող գործիականն էլ միջոցի զգալի երանգ է դրսևորում։ Ներգործող խնդրի և միջոցի ու պատճառի գործիականների նմանությունը դիտված է Մ. Աբեղյանի կողմից։ Նա նշում է, որ ներգործող խնդրի և միջոցի գործիականները հաճախ նույնանում են։ Դրանք տարբերակելու համար նա առաջարկում է հետևյալ միջոցը։ Եթե կրավորական բայը ներգործականի փոխելիս գործիականն անփոփոխ է մնում, ապա միջոցի կամ պատճառի գործիական է, իսկ եթե գործիականն ուղղական ենթակա է դառնում, ապա ներգործող խնդրի գործիական է։ Այսպես, «Մի ձեռով *երկու ձմերուկ չի բռնվի», «Անջուր* ջաղացով *ալյուր չի աղացվի» նախադասությունները եթե հասկացվում են* «Մի ձեռով *երկու ձմերուկ չեն բռնի», «Անջուր* ջաղացով *ալյուր չեն աղա», ապա* ձեռով, ջաղացով *միջոցի գործիական են, իսկ եթե հասկացվում են «Մի ձեռը երկու ձմերուկ չի բռնի», «Անջուր ջաղացը ալյուր չի աղա», ապա դրանք ներգործող խնդրի գործիական են*[1]*։ Վ. Առաքելյանը հավանաբար նկատի ունենալով Մ. Աբեղյանի այս նշումը, գտնում է՝ քանի որ կրավորական բայի մոտ գործիականը կարող է միաժամանակ միջոցի, պատճառի իմաստներ արտահայտել, ուստի բացահայտ*

---

[1] Մ. Աբեղյան, *նշվ. աշխատ., էջ 458—459։*

ներգործող խնդրի գործիական չկա[1]։ Սակայն ճիշտ չի լինի ժխտել ներգործող խնդրի գործիականի գոյությունը սոսկ այն հիման վրա, որ մի շարք կրավորական բայերի՝ գործիականով լրացումը համատեքստում է նաև միջոցի, երբեմն և պատճառի իմաստները։ Ինչպես տեսանք, այլ հոլովաձևերի մեջ էլ երբեմն մեկից ավելի իմաստներ են համատեղվում, բայց դրանից ելնելով չենք ժխտում համապատասխան իմաստների ինքնուրույն դրսևորումը։ Եթե գործիականը կրավորական բայի լրացման դերում չունի իմաստային հստակություն, և ներգործող խնդրի իմաստը մեկնաբանվում է նաև իբրև միջոցի իմաստ, ապա հնարավոր է ստուգել այլ ձևով։ Հայտնի է, որ ներգործող խնդիրն արտահայտվում է նաև բացառական հոլովով (սիրվել ընկերներից, պատժվել ուսուցչից և այլն)։ Կասկած հարուցող գործիականը կարելի է փոխել բացառականով։ Եթե առանց նախադասության միտքը խաթարելու կապակցությունը պահպանվում է, ապա ունենք ներգործող խնդրի գործիական։ Այսպես, «Նա գերվեց այդ աղջըկանով» նախադասության մեջ գործիականն ունի ներգործող խնդրի իմաստ, քանի որ նույն նախադասությունը կարելի է դարձնել «Նա գերվեց այդ աղջկանից» կամ «Նա գերվեց այդ աղջկա կողմից»: Անշուշտ, պետք է նկատի ունենալ, որ նախադասության կառուցվածքի այս փոփոխության նպատակը գործիական հոլովի քերականական իմաստի ստուգումն է, և չի կարելի ոճա-իմաստային տեսակետից հավասարության նշան դնել գործիական ու բացառական ունեցող կառուցվածքների միջև։ Թեև գործիականը ներգործող խնդրի իմաստ ունի, սակայն չի կարող ոճա-իմաստային տեսակետից հավասարազոր լինել բացառականին, կամ կապին ու կապի խնդրին (աղջկա կողմից): Վերջինները ավելի ակտիվ դեր են հատկացնում խնդրին (աղջիկ)՝ ի հակադրություն գործիականի, որի մեջ այդ խնդրի ակտիվությունը չի արտահայտվում։

Ներգործող խնդրի գործիական դառնում են առաջին հերթին անձ ցույց տվող հասարակ գոյականները՝ սահմանական թվով բայերի մոտ։

«Դաշտ ու ձոր, լեռ ու անտառ հազարացի զորերով ու ճեյուզակներով էին բռնված» (Մուր., 4, 73)։ «Թագավորի սիրտը գրավված էր Ամրամի կնոջմով» (Մուր., 4, 91)։ «Անմիջապես շըրջապատեցին ծերունուն, որ դարձավ մի տեսակ թիկնապահներով

---

[1] Վ. Առաքելյան, նշ. աշխատ., էջ 153—154։

պաշտպանված գուռը հրամանատար» (Շիրվ., 3, 11)։ «Դու այդ ձարդով ճափշտակված ես» (Շիրվ., 3, 333)։ «Ամեն մի զինվոր գիտեր, որ պաշարված է թշնամիներով» (Ր, 7, 531)։

Ինչպես երևում է բերված օրինակներից, ներգործող խնդրի գործիական պահանջում են գերազանցապես գաղարման բայերը։ Անձի հատուկ անունները ժամանակակից հայերենում քիչ են դառնում ներգործող խնդրի գործիական։ Այդ դեպքում, ինչպես նշված է Վ. Առաքելյանի կողմից, անձի հատուկ անունը գործածվում է կապերի հետ[1]։ Այսպես, ասում են «Գիրքը ուղարկվել է Գրիգորի ձեռքով», «Նամակը գրված է Վարդանի կողմից» և այլն։ Այս իմաստով էլ այժմ ոչ սովորական է անձի հատուկ անունների՝ ներգործող խնդրի գործիական կիրառությունը։ Օրինակ՝ «Ռևոլյուցիան ղեկավարված հանճարեղ Լենինով, փշրեց, փոշիացրեց ցարերի եղեռնագործ գահը» (Իս., 4, 183)։

Ներգործող խնդրի գործիականով կարող են դրվել նաև առարկա, առարկայացած հատկանիշ ցույց տվող մի շարք բառեր, ինչպես՝ աչք, դեմք, ճակատ, միտք, գեղեցկություն, հոգս, երգ և այլն։ Այսպիսի լրացում ունեն զգացական մի շարք բայեր, ինչպես՝ գրավվել, դյութվել, կախարդվել, գերվել, խաբվել, տանջվել և այլն։

«Սմբատը, ակամա գրավված Շուշանիկի պայծառ աչքերով, գեղեցիկ ճակատով, համակրելի դեմքով, դիտում էր նրան» (Շիրվ., 3, 117)։ «Մենք բոլորս մեր մանկության օրերից մինչև մեր կյանքի վերջը կախարդված ենք նրա Ապոլոնյան ճաճանչով» (Իս., 4, 177)։ «Նրա ստորոտը ողողվում էր լճի ալիքներով» (Շիրվ., 8, 433)։ «Ու հոգսով մղված՝ հոգսդ չես հիշում» (ՎՏ, 1, 157)։ «Անցորդներ են գերվել քո ծով գեղեցկությամբ» (ՀԱՀԵՄ, 209)։ «Բարձրադիր սարավանդակը շրջապատված էր բնության փառահեղ և աճարկու տեսարաններով» (Մուր., 4, 7)։ «Հինավուրց ամրոցը պատսպարված էր ամեն կողմից թե բնության և թե արհեստի ամրություններով» (Մուր., 4, 8)։

Մի շարք կրավորական բայերի լրացումը կարող է մեկնաբանվել և՛ ներգործող խնդրի, և՛ նյութի իմաստներով։

«Սնվել էր անմահ արևի բոցով» (Չ, 227)։ «Կաթնագույն մի լույսով ողողվել էր երկինքն ու քաղաքը» (ԳՄԼՁ, 426)։ «Մատներս բռնվում են կպչուն հեղուկով» (ԲՀԱՉ, 93)։ «Բանչարանոցը դանվում

[1] Վ. Առաքելյան, նշվ. աշխատ., էջ 153։

էր եկեղեցու առաջ և ողողվում էր *բավական հորդ ջրով» (Մուր., 5, 244)։*

Մի շարք կապակցություններում էլ ներգործող խնդրի իմաստը համատեղվում է միջոցի հետ։ Այս դեպքում լրացում դառնում են գերազանցապես թանձրացական գոյականները։

«*Հասավ վերնասրահին, որ* լուսավորված էր *կրկին աշտա*-նակներով» *(Մուր., 4, 18)։ «Բոլոր իրերը* ծածկված են *մի անտեսանելի վհուկի դյութական* գավազանով» *(Իս., 3, 349)։ «Նրա* ստեղծագործություններով դաստիարակվել են *սերունդներ» (Իս., 4, 180)։*

Կան որոշ կապակցություններ, որոնցում գործիականը կարելի է մեկնաբանել և՛ ներգործող խնդրի, և՛ պասսիվ ներգործության իմաստներով։ Այդպիսի լրացում ունեն ներշնչվել, ոգևորվել *և նման զգացական բայեր։*

«*Վեռներ,* ներշնչված *դարձյալ* ձեզանով, *Թնդում է հոգիս աշխուժով լցված» (ՀԹ, 2, 31)։ «Նրա* երկերով ներշնչվել *են ռուս մեծ երաժշտագետները» (Իս., 4, 344)։ «Ես* ոգևորվեցի *այդ* կերպարով»։

Ծածկվել, քողարկվել, մտասուզվել *և նման բայերի լրացումը կարող է համատեղել ներգործող խնդրի, միջոցի և նյութի իմաստները։*

«Սև ամպերով *երկնից դեմքը* քողարկվեց» *(ՀՀ, 92)։ «Ամբողջովին* մտասուզվեց *անցած գիշերվա իր լսած իրադարձությունների* հիշողությամբ» *(ԶԴՍՆ, 2, 378)։* «Սևացել է *դաշտը անթիվ* ցելերով» *(ՂՍ, 9)։*

Սկսվել *բայի լրացումը կարող է արտահայտել ներգործող խնդրի և ժամանակի իմաստներ։ Օրինակ՝ «Իսկ շաքարի նշանավոր* դեպքով *միանգամից* սկսվում է *իմ գիտակցական կյանքը» (ՍՁ, 3, 11)։*

Ներգործող խնդիրը կարող է համատեղվել առարկայական միասնության իմաստի հետ։ Օրինակ՝ «Ճոճվում էին *կախաղանների պարանները շինականների* մարմիններով» *(ԴԴՎ, 609)։*

Ներգործող խնդրի գործիականը երբեմն կարելի է մեկնաբանել նաև ձևի իմաստով։ Օրինակ՝ «Սամիկոնյան տիկնոջ գոռոզ աչքերը վառվեցան *բարկության կրակով» (Բ, 7, 102)։*

Կրավորական բայի լրացման դերում հանդես եկող գործիականը միշտ չէ, որ ներգործող խնդիր է լինում։ Կան դեպքեր, երբ կրավորական բայի լրացումը ներգործող խնդիր չէ։

«*Աչքերը* վառվում էին *ծայրահեղ զարմանքով և* հիասքանչա-

ցումով» *(ՆԴ, 1, 32)։ «Դիրքը* վաճառվել է *էժան* գնով»: «*Աշխատանքը* կատարվում է պայմանագրով»: «*Հարցը* լուծվեց *փոխադարձ* համաձայնությամբ»:

Փոխարինության գործիական.— *Բայի լրացումը ցույց է տալիս այն առարկան, որով փոխարինվում է մի բան, որի դիմաց կատարվում է գործողությունը*[1]*։*

Սա չի կարելի շփոթել միջոցի կամ ձևի իմաստների հետ։ Երբ ասում ենք «Գինին վաճառում է փողով, փոխարինում է հացահատիկով», *ապա այստեղ* փողով, հացահատիկով, *փոխարինության գործիական են։*

Այսպիսի լրացում ստանում են առք-վաճառքի կամ փոխանակության գործողություն ցույց տվող սահմանափակ թվով բայեր։ Դրանցից են՝ առնել, վաճառել, ծախել, գնել, տալ, փոխարինել, փոխանակել, ծառայել, աշխատել *և այլն։ Լրացում դառնում են փոխարժեք ցույց տվող բառերը, ինչպես՝* փող, վարձ, գին, ռուբլի, կոպեկ, ոսկի, հաց *և այլն։*

«*Հողը* վարձով է տալիս *իր հարևանին» (ՀԹ, 1, 447)։ «Ջուրը աստծունն է, և էսօրվանից ոչ ոք իրավունք չունի* փողով ծախելու» *ՀԹ, 1, 486)։ «Մուխանը հաշտարար դատարանի առջև սրա ու նրա համար հատը* տասը կոպեկով *խնդրագիր* էր հորինում» *(Շիրվ., 3, 26)։ «Այնտեղ կարող եք և՛* գիշերել, *և՛* կերակրվել *մի* չնչին վարձով» *(Շիրվ., 8, 388)։ «Անցյալ օրը չարչի Գևոն Տանն* էր տալիս մի հացով» *(ՂԱ, 31)։ «Մորեխի տարին* մի փութ կորեկով է առել» *(Բակ., 71)։*

Միասնության գործիական.— *Միասնության գործիականը հայ քերականագիտության մեջ դիտված է վաղուց։ Մ. Աբեղյանը միասնության իմաստը որոշակիորեն տարբերակում է մյուս իմաստներից, թեև այն, վերջին հաշվով, դնում է ձևի գործիականի հետ*[2]*։ Վ. Առաքելյանը միասնության գործիականը հստակորեն տարբերակում է ձևի գործիականից*[3]*։*

Անշուշտ, միասնության իմաստը որոշակիորեն տարբեր է ձևից՝ այս վերջինի նեղ, հոլովական նշանակության առումով։ Իսկ շարահյուսական պաշտոնի, նախադասության մեջ կատարած դերի տեսակետից միասնության գործիականը նաև ձևի պարագա է։

---

[1] *Փոխարինության գործիականը դիտված է Վ. Առաքելյանի կողմից։ (Տե՛ս նշվ. աշխատ., էջ 157—158)։*

2 Մ. Աբեղյան, *նշվ. աշխատ., էջ 462—465։*

3 Վ. Առաքելյան, *նշվ. աշխատ., էջ 160—161։*

Մենք որոշակիորեն տարբերակելով հանդերձ միասնության և ձևի գործիականները՝ միասնության իմաստ ունեցող գործիական հոլովաձևերը անվերապահորեն չենք կարող խնդիր համարել, այլ դրանց մի մասը խնդիր, իսկ մյուսները պարագա ենք դիտում։ Միասնության գործիականն ունի մի քանի ենթատեսակ։ Այդ բոլորի համար ընդհանուրն այն է, որ բայի լրացումը ցույց է տալիս միասնություն։ Սակայն միասնությունը միատեսակ չէ։ Մենք տարբերակում ենք միասնության գործիականի հետևյալ ենթատեսակները. բուն միասնության (որը և հաճախ պարզապես կոչում ենք միասնության գործիական), առարկայական-միասնության, ենթակայական-միասնության, խնդրային-միասնության:

Բուն միասնության, ենթակայական-միասնության գործիական հոլովաձևերը խնդրի պաշտոն ունեն, իսկ առարկայական-միասնության, խնդրային-միասնության գործիական հոլովաձևերը պարագայի պաշտոն են կատարում։

Ա. Բուն միասնության գործիական.— Լրացումը ցույց է տալիս այն առարկան (մեծ մասամբ անձ), որի հետ միասին է ենթական գործողություն կատարում։ Այս դեպքում ենթակայի հետ առարկան հավասարապես գործողության մասնակից է։ Լրացում դառնում են առաջին հերթին անձ ցույց տվող գոյականները։

«Մնացել էին թագավորի հետ հայրդ՝ յուր գարդմանայի գնդերով, Սիսակյան իշխանները՝ Սյունեցի վաշտերով և Մարզպետունի իշխանը՝ պետական զորքերով» (Մուր., 4, 71)։ «Թագավորը յուր թիկնապահներով ճանապարհ ընկավ» (Մուր., 4, 107)։ «Այդ տեղերին տիրում էր Գեղամը յուր թոռներով, անխառն ընդոծիններով» (Մուր., 4, 261)։ «— Չէ, ասավ Մելիք, քու ամբողջ ազգով Անց պիտի կենաս իմ թրի տակով» (ՀԹ, 2, 99)։ «Ըլնենք տեսով ու ճանաչով» (ՀԹ, 1, 142)։ «Մառաներով ման գալ չի սիրում» (ՀԹ, 1, 499)։ «Ամեն ամառ ընտանիքով ճոչում էր արտասահման» (ՆԴ, 1, 226)։ «Մի քանի հնդկահավեր ինքնագոհ շրջում էին իրենց ճուտերով» (ԳՄԼՁ, 293)։ «Անցավ ձմեռը յուր մահաբեր սառնամանիքներով» (Ր, 7, 556)։ «Ու այդպես նայում էր դաշտին, որն իր ծառերով, բլուրներով, գյուղերով պտտում էր շարունակ» (ՍԶ, 4, 395)։ «Քաղաքն իր փողոցներով, տանիքներով ու ծառերով մուշտակավորվում է» (ԳՄԼՁ, 26)։ «Դաշտի գյուղացին կանաչ գարունքին Հոտ ու նախիրով սարն է բարձրացել» (Իս., 2, 12)։ «Նրանք գնում էին իրենց անասուններով»: «Տեղափոխվում են ոչխարի հոտերով, ձիերի երամակներով»:

23—486

Անձի անունները սովորաբար միասնության իմաստի արտահայտման համար դրվում են տրականով և հետ կապով, որոնց կարող է հարադրվել նաև միասին մակբայը։ Այսպես, «Վարդանը ընկերոջ հետ (միասին) գնաց գյուղ»։ Առանձնապես անձի հատուկ անունները չեն դառնում միասնության գործիական։ Այսպես, հնարավոր չէ ասել, «Վարդանը Գրիգորով գնաց գյուղ», այլ ասում ենք «Վարդանը Գրիգորի հետ գնաց գյուղ»։

Շատ կապակցություններում գործիականն ունի միասնության և միջոցի իմաստներ միաժամանակ։

«Հրաշք աղջիկ, թագավորիս զորքերով կես աշխարհը դրոշակիս տակն առա» (Իս., 2, 166)։ «Ձեր անդունդներով եկեք չափվեցեք» (ՀԹ, 2, 32)։ «Մի գարիդ գցիր, թե ողջով խնդաս» (ՀԹ, 2, 61)։ «Ցարի կառավարությունն իր ստրաժնիկներով, կազակներով չի կարողանում նրանց բռնել» (Իս., 4, 79)։

Գործիականը կարող է համատեղել նաև միասնության և ձևի իմաստները։

«Հազարացիք սովար բանակով հառաջանում են դեպի Ամբերդ» (Մուր., 4, 267)։ «Շատերն են զորքով եկել մեզ վրա» (ՍԽՄԽ, 14)։ «Գյուղացիք խմբերով հավաքվում էին դուքանի առաջ» (Բակ., 12)։

Երբեմն էլ գործիականը կարող է մեկնաբանվել և՛ բուն, և՛ խնդրային-միասնության իմաստներով։

«Ողջ ժողովրդով մեզ համարեք զինվորյալ» (ԴԴՎ, 113)։ Այստեղ ժողովրդով ունի խնդրային միասնության իմաստ (այսինքն՝ մեզ՝ ողջ ժողովրդիս համարեցեք զինվորյալ)։ Սակայն նույն կապակցությունը այլ դեպքում կարող է մեկնաբանվել բուն միասնության իմաստով (Դուք՝ ողջ ժողովուրդդ, մեզ համարեցեք զինվորյալ)։

Բ. Առարկայական-միասնության գործիական.— Ցույց է տալիս այն առարկան, որը մասնակից է գործողությանը։ Լրացում դառնում են թանձրացական գոյականները։ Իրականում բուն միասնության և առարկայական միասնության գործիականների միջև իմաստային էական տարբերություն չկա. երկուսն էլ ցույց են տալիս ենթակային ուղընկեր առարկա, որը նրա հետ միասնաբար մասնակցում է գործողությանը։ Սակայն ըստ էության բուն միասնության գործիականով արտահայտվում է գործողության ակտիվ մասնակիցը, ենթակայի հետ հավասարապես գործողը,

մինչդեռ առարկայական-միասնության գործիականով արտահայտվում է գործողության սոսկ պասիվ մասնակիցը, այն առարկան, որին գործողության մեջ է դրել հենց ենթական։ Այս երկու իմաստների տարբերությունն իսկույն երևան է գալիս, երբ փորձում ենք միասնության իմաստի արտահայտման երկրորդ միջոցը գործածել։ Հայտնի է, որ բուն միասնության գործիականը կարելի է փոխարինել տրականով և հետ կապով (տե՛ս վերևում)։ Մինչդեռ առարկայական-միասնության գործիականը հնարավոր չէ փոխարինել այդպիսի ձևով։ Այսպես, հայերեն չի հնչի «նա վերադարձավ գանձերի հետ», սակայն կարելի է ասել «նա վերադարձավ գանձերով»։

Առարկայական-միասնության գործիականով լրացում ստանում են շարժում ցույց տվող բայերը, իսկ բուն միասնության գործիականի լրացյալ լինում են նաև այլ իմաստ արտահայտող բայերը։

Առարկայական-միասնության գործիականի կիրառությունը ավելի շատ է, քան նախորդինը։

Ինչպես նշվել է վերևում, այս գործիականը նախադասության մեջ սովորաբար ձևի պարագայի պաշտոն է կատարում, իսկ բուն միասնության գործիականը խնդիր է լինում։

«Վերջինս կասկած չունենալով Նըսրից, ընծաներով գալիս է նրա մոտ» (Մուր., 4, 203)։ «Մայրենի տաղով, հայրենի հողով Սերբանը նրա մոտ մեր գուսանն ու ես» (Իս., 2, 175)։ «Վերադառնում էր գանձերով ու բերքերով» (Իս., 3, 343)։ «Անհագին ավարով ետ էին դառնում իրենց ցրտաշունչ տափաստանները» (Իս., 3, 468)։ «Փողոցային որևէ թափառական մի երաժիշտ իր արգանով կամ հարմոնով, ջութակով կամ շվիով մտնում էր տան բակը» (ՆԴ, 1, 226)։ «Եկան դռնապանները՝ ավելներով, թիակներով, դույլերով» (Բակ., 219)։

Առարկայական-միասնության գործիականը հաճախ գործածվում է փոխաբերաբար։ Այս դեպքում լրացումը ցույց է տալիս ոչ թե գործողության մասնակից թանձրացական, այլ վերացական առարկա, որով ուղեկցվում է գործողությունը։ Այսպես, «Երգով ու տաղով մտավ հանդես» նախադասության մեջ երգով ու տաղով այն վերացական առարկաներն են ցույց տալիս, որոնք գործողության ուղեկիցն են։ Նկատի ունենալով այս հանգամանքը՝ փոխաբերաբար գործածվող առարկայական-միասնության գործիականը հարմար է անվանել ուղեկցման գործիական։

Այսպիսի լրացում ունեն շարժում ցույց տվող, ինչպես և այլ

իմաստ ունեցող բազմաթիվ բայեր, որոնք թվարկելը հնարավոր չէ։ Լրացում դառնում են վերացական գոյականները, ինչպես՝ աղմուկ, երգ, խաղ, ողբ, լաց, խոսք, շնորհք, ծաղր, խրատ, կասկած, լուր, պար, կսկիծ *և այլն*

«*Այս* խրատներով ճանապարհ դրավ *ինձ մեծ իշխանը*», (*Մուր. 4, 91*)։ «*Եվ՝ ուրախության* աղմուկ-գոռոցով *Հաղթողին փեսի թախտի մոտ* բերին» (*ՀԹ, 2, 57*)։ «*Թունայի* ծաղրով կանչում են, *գոռում*» (*ՀԹ, 2, 57*)։ «*Նա* գալիս էր *ցողոտ-շաղոտ, Հա*նաքներով *ու* խաղով» (*ՀԹ, 2, 70*)։ «*Ու միշտ ուրախ,* հաղթանակով *իր ամրոցն է* դառնում *նա*» (*ՀԹ, 2, 136*)։ «*Մեղրից անուշ լավ* խոսքերով *Մեղր* են քաշում» (*ՀԹ, 1, 258*)։ «*Այս* կասկածներով մտնում եմ *քաղաքային այգի*» (*ՍԶ, 3, 406*)։ «*Ծերունուն գյուղացիները* մռմռոցով ճանապարհ դրին» (*ՎՓ, 4, 250*)։ «*Խենթ* հեկեկանքով *դռներն* եմ թակում» (*ՎՏ, 1, 56*)։ «*Այսպես սրանք* Երգ ու տաղով, Պար ու խաղով Պիտի հասնեն *խնամոնց տուն*» (*ՊՍԱԶ, 118*)։

Մի շարք կապակցություններում գործիականը հավասարապես կարող է ունենալ և՛ առարկայական-միանության (ուղղակի և փոխաբերական կիրառությամբ), և՛ սահմանափակման իմաստներ։

«*Եվ առօրյա Հովհաննեսը իր* կյանքով, ոճով ու ձևով, իր խոսքով *ու* առակով *դարեր* պիտի ապրի *Կովկասի Հայի հիշողության մեջ*» (*Իս., 4, 173*)։ «*Դարձյալ մեր* ավանդույթներով կմնանք *Հայ*» (*ԴԴվ., 107*)։ «*Այդ գաղտնի ժողովը դեռ* մնացել է *իմ հիշողության մեջ իր բոլոր* մանրամասնությամբ» (*ՍԶ, 3, 383*)։

Գործիականը երբեմն կարող է արտահայտել առարկայական-միանության և նպատակի իմաստները հավասարապես[1]։

«*Պետք է վերջապես մի գործ գտնել։ Այս* հույսով *ամեն օր* գնում էի *մորեղբորս մոտ*» (*Շիրվ., 8, 25*)։ «*Թովման ևս մարդ* ուղարկեց *հոր մոտ՝ հարսանիքի պատրաստություն տեսնելու* պատվերով» (*ՍԽՄԽ, 53*)։

Ավելի շատ են այն կապակցությունները, որոնցում գործիականը համատեղում է առարկայական-միանության և ձևի իմաստները։

«*Մեկն* ընդունեց *աշունն այս մեծ Իր հնձանի կարմիր* գինով» (*ՀՍՀԵՄ, 55*)։ «*Առվի* վշշոցով, *բարդու* խշշոցով, *Հովի* սուլոցով *անվերջ-անվերջ, Բահի* զնգոցով, *օջախի* բոցով Գալիս մըտնում է *երգերիս մեջ։ Երփնավառ* թույրով, *բյուր* հրապույրով,

[1] *Նպատակի գործիականի իմաստը ծագել է առարկայական-միանության գործիականի հիման վրա։ Տե՛ս «Նպատակի գործիական» հատվածը։*

Սաղկունքի բույլով իր լուսառէշ, Փշատի բույրով, սիրո համբույրով Գալիս մտնում է երգերիս մեջ։ Զարթոնքի դողով, վաղորդյան ցողով, Մայրամուտներով լի փողփողեջ, Հողով, խաղողով, արևի շողով գալիս մտնում է երգերիս մեջ» (ՀԱՀԵՄ, 104)։

Առարկայական-միասնության գործիականը համատեղվում է նաև միջոցի իմաստի հետ։

«Տխուր զգացմունքներով Սամվելը երեսը շուռ տվեց Գյակա վանքից» (Ր, 7, 98)։ «Ուզում եմ մեռնել ես իմ հավատով» (Բայրոն, Ծ, 396)։ «Ես կոշիկներով ու հեսկիներով մտնում եմ ջուրը» (ԲՀԱՉ, 218)։ «Մտավ իմ համարը ժիլետով» (ԳՄԼՁ, 453)։

Գ. Ենթակայական-միասնական գործիական.— Ցույց է տալիս այն անձանց ամբողջությունը, որոնք համատեղ որևէ գործողություն են կատարում։ Իրականում այս գործիականը կիսով չափ է բայի լրացում։ Բանն այն է, որ այս դեպքում գործիականով արտահայտված անձինք հենց գործողություն կատարողն են։ Երբ ասում ենք «Ընկերներով ճանապարհ ընկանք», ապա այստեղ ընկերներով գործիականը միաժամանակ և՛ ենթակա, և՛ խնդիր է։ Դրանում հեշտությամբ կհամոզվենք, եթե համեմատենք բուն միասնության գործիականի հետ։ «Պետրոսը իր ընկերներով ճանապարհ ընկավ» նախադասության մեջ դարձյալ կա ընկերներով գործիականը, որն ունի բուն միասնության իմաստ, մինչդեռ նախորդ օրինակում այն ենթակայական-միասնության իմաստ ուներ։

Ենթակայական-միասնության գործիականի հետ բայը միշտ հոգնակի է լինում, մինչդեռ բուն միասնության գործիականի լրացյալը կարող է և՛ եզակի, և՛ հոգնակի լինել։ Ենթակայական-միասնության գործիականի հետ ենթական սովորաբար չի արտահայտվում. արտաքուստ ստացվում է, որ այդպիսի նախադասությունը զեղչված ենթակայով է։ Բանն այն է, սակայն, որ նույնիսկ որևէ դերանվամբ արտահայտված ենթակայի առկայությամբ էլ ենթակայական-միասնության գործիականը չի դադարում կիսով չափ ենթակայի նշանակություն արտահայտելուց։ Այսպես, «Մենք ընկերներով խաղում ենք բակում» նախադասության մեջ ընկերներով ենթակայական-միասնության գործիական է, որը կիսով չափ ենթակա է՝ նույնիսկ մենք ենթակայի առկայությամբ։ Եթե այդ նախադասությունից հանենք մենք ենթական, ընկերներով գործիականը լրիվ կստանձնի ենթակայի դերը, թեև ենթադրվում է մենք ենթական, որ զեղչված է։

Այս գործիականի տարբերությունը բուն միասնության գործիականից նաև այն է, որ այս դեպքում գործողություն կատարող

ենթական էլ պարունակվում է գործիական հոլովաձևով արտահայտված անձանց մեջ, մինչդեռ բուն միասնության գործիականով արտահայտված անձը կամ առարկան դուրս է նրանից։

«Մի խումբ ձիավորներով շտապում եմ X *կայարանը» (ՀԹ, 1, 371)։* «Ընկերներով *երկու բանակի բաժանված, բակում ձնագնդի* եմ խաղում» *(ՍՁ, 3, 74)։* «Գնում էինք *ամբողջ* ընտանիքով *և ընդմիշտ գաղթում էինք գյուղից» (ՎՓ, 4, 489)։* «Պատասխան տալու եմ *համայն* աշխարհով» *(ԴԴՎ, 55)։ «Ամբողջ* գյուղերով աշխատում էին *նրան սպանել» (ՂԱ, 205)։*

Ենթակայական-միասնության գործիականը կարող է արտահայտվել նաև որևէ թվական լրացումով կազմված գոյականի բառակապակցությամբ, որը հավասարազոր է հոգնակի գոյականին։ Այս դեպքում լրացումը ձեռք է բերում չափի երանգ ևս, որով և տարբերվում է առհասարակ ենթակայական-միասնության գործիականի մյուս ենթատեսակներից։

«Բավական է ասել, որ հինգ հոգով *մեզ* զգում էինք *աշխարհից կտրված մի ամայի անապատում» (Շիրվ., 8, 271)։* «Չորս հոգով մտնում եմ *խնձորի այգի» (ՍՁ, 3, 100)։* «Երկու ընկերով ներս մտանք *այգին» (Չ, 226)։*

Ենթակայական-միասնության գործիականը կարող է արտահայտվել նաև գոյականաբար գործածված թվականով։

«Քիչ անց երկուսով *զուգված տանից* դուրս եկան» *(ԶԴՍՆ, 2, 14)։* «Երեքով նստեցին *ցածրիկ սեղանի շուրջը» (ՍԽՄԽ, 58)։* «Հիսուն հազարով պարտվեցին *Միր Մահմուդի տասնհինգ հազարանոց հեծելազորից» (ՍԽՄԽ, 295)։ «Եվ* հավաքվում են հիսունով, հարյուրով, մի քանի հարյուրով» *(ՀԹ, 1, 394)։*

Այս գործիականը կարող է արտահայտվել նաև եղակի բաղադրիչ ունեցող հարադրական բարդությամբ։

«Ականջս տանում էր, թե մեծով-փոքրով գնանք հպատակվենք թուրքին» *(ՍԽՄԽ, 579)։* «Զինվեցեք մեծով ու փոքրով, *կին թե տղամարդ և եկեք ձեր զորքին օգնության» (ՍԽՄԽ, 491)։*

Դ. Խնդրային-միասնության գործիական.— *Լրացումը ցույց է տալիս այն առարկան, որը ուղիղ խնդրի հետ միասին է կրում գործողությունը։ Խնդրային-միասնության գործիականը հակադրվում է միասնության գործիականի նախորդ ենթատեսակին նրանով, որ սրանով արտահայտված առարկան ոչ թե գործողության կատարման մասնակից է, այլ գործողությունը կրողի զուգակիցն է։ Սա նախորդների հետ ընդհանրություն ունի միասնության բնույթով, իսկ այդ միասնությունը միօրինակ չէ։ Խնդրային-միասնու-*

թյան գործիականը դրվում է տարբեր իմաստ ունեցող բայերի հետ։ Իբրև լրացում հանդես են գալիս ինչպես անձ և կենդանի, այնպես էլ իր ցույց տվող բառերը։

«Մենք կենդանի տեսնում էինք քաջ Աղասուն իր քաջ ընկերներով» (Իս., 4, 228)։ «Բովանդակ Ռուսաստանը իր բազավորով, դասերով ու դասակարգերով նա տեղափոխեց կենդանական աշխարհի մեջ» (Իս., 4, 276)։ «Ես կհրամայեմ ներքինապետին, որ Որմիզդուխտ օրիորդին յուր բոլոր աղախիններով ու ներքինիներով քեզ հանձնե» (Ր, 7, 381)։ «Մութն արդեն կլանել էր կիսավեր քաղաքն իր շրջակա լեռներով ու ձորերով» (Շիրվ., 8, 10)։ «Սրան տանում են իր դրոշակով սուրբի վերի ծերին բազմեցնում» (ՀԹ, 1, 498)։ «Հաղկերտը հրաման է ուղարկել, թե երկիրը իր ժողովրդով տվեք» (ԴԴՎ, 101)։ «Բեկը հրամայեց ավազանում հրավիրել իրենց ընտանիքներով» (ՍԽՄԽ, 157)։

Որոշ կապակցություններում գործիականը կարող է մեկնաբանվել երեք իմաստով՝ խնդրային-միասնության, սահմանափակման, ձևի։

«Միայն թե էդպես Մի չնչին մեզ բռով-տեղով, Ամբողջ ցեղով» (ՀԹ, 1, 239)։ «Պետք է մեծ չարիքը արմատովը պոկել» (ՎՓ, 4, 448)։ «Աքարեցու քլունգը շիվն արմատովն է հանում» (Բակ., 25)։ «Սիմոնին տնով-տեղով գյուղից հեռացնում են» (ՋԴՍՆ, 2, 137)։

Կարող են համատեղվել խնդրային-միասնության և ձևի իմաստները։ Օրինակ՝ «Թեյ էր խմում ցամաք հացով» (ՆԴ, 1, 8)։

Միասնության գործիականի մի տարբերակը ցույց է տալիս այն առարկան, որի առկայությամբ է կատարվում գործողությունը։ Այս դեպքում լրացումը ոչ թե գործողության մասնակիցն է, այլ պասսիվորեն առկա եղող առարկան[1]։

Առկայության գործիականով լրացում պահանջում են շարժում ցույց տվող և այլ սակավաթիվ բայեր՝ գալ, գնալ, քայլել, անցնել և այլն։

«Զորաջոկատները գնում էին տարբեր դրոշներով՝ Մամիկոնյան, Խորխոռունյաց և Գնունյաց» (ԴԴՎ, 388)։ «Ով հանդես կգաք ձեր նախարարական դրոշներով» (ԴԴՎ, 643)։

Պարագայական գործիական

Տեղի գործիական— Լրացումը ցույց է տալիս այն տեղը, որով անցնում է գործողությունը կամ այն առարկայացած տեղը,

[1] Այս գործիականը Վ. Առաքելյանը համարում է ձևի գործիականի մի տարբերակը։ (Տե՛ս նշվ. աշխատ., էջ 156)։

որի վրայով, կողքով, միջով կտրում, անցնում է գործողությունը։

Տեղի գործիականով լրացում պահանջում են շարժում ցույց տվող մի շարք բայեր, ինչպես՝ անցնել, գնալ, գալ, շարժվել, վազել, քայլել, սլանալ, բարձրանալ, սահել, մտնել, լողալ *և այլն։ Լրացում դառնում են տարածական հասկացություն արտահայտող բառերը։*

«*Մութ* անտառով *լուռ* մահ կուգամ» *(Իս., 1, 126)*։ «Անցավ *մի օր էգ* բերդով» *(Իս., 2, 36)*։ «*Գոհար սարերի քարավանները* թափառում էին *երկնի* ճամփեքով» *(Իս., 2, 47)*։ «*Ձին* վազում էին *խանձված* դաշտերով» *(Իս., 2, 76)*։ «*Կառքն* անցնում է մի *մեծ նավթային լճի* ափով» *(Շիրվ., 2, 119)*։ «*Վճիտ* երկնքով լողում են *քողի նման բարակ, թափանցիկ ամպեր*» *(ՍԶ, 3, 102)*։

Տեղի գործիականը երբեմն ունենում է մեկ *(բարբառային՝* մին) *հարադրվող բառ, որի հետ միասին գործիականն արտահայտում է ներգոյականի նշանակություն։ Այս դեպքում գործիականով արտահայտված տեղը համընդհանուր նշանակություն է ստանում, և տեղի գործիական*+մեկ *բառը ունենում է* ամբողջ, ողջ+*տվյալ տեղը նշանակությունը։*

Վ. Առաքելյանը այդպիսի լրացմամբ կազմված կապակցությունը դարձվածքային է համարում[1]*։ Սակայն պետք է հիշել, որ այդպիսի կազմություն ունեն և՛ ազատ կապակցությունները, և՛ դարձվածքները։ Այսպես, հետևյալ կապակցությունները դարձվածքային չեն.* «Փողոցներով մեկ հոսում է *ժողովուրդը*» *(ԳՄԼՁ, 364)*։ «*Եվ անձրևը* շառաչեց Արարատյան դաշտով մեկ» *(ՆԳ, 105)*։ «Երկրով մեկ տարածվում էր *Մշո վանքի սարսափելի անունը*» *(ՁԳՄՆ, 2, 78)*։ «*Նրա ճիչը* թռավ շուկայով մեկ» *(ՍԽՄԽ, 230)*։

Տեղի գործիականը կարող է գործածվել փոխաբերաբար։ Այս տեսակետից հետաքրքրական է գլուխ *բառը։ Բուն տեղի իմաստով* գլխով *գործիականը ցույց է տալիս ոչ թե* գլխի միջով, *այլ՝* վրայով: *Օրինակ՝*«Գլխովը *շատ ամպեր* կանցնեն» *(ՀԹ, 2, 135)*։ *Սակայն փոխաբերական իմաստով այն նշանակում է* գլխի միջով: *Օրինակ՝* «*Վայրկենապես* անցան *այս մտքերը Մարզպետունու* գլխով» *(Մուր., 4, 162)*։

Մի շարք բառերի գործիականն արտահայտում է տեղային-սահմանափակման և ձևի իմաստներ։ Այդ բառերից են՝ լայնություն (լայնք), երկարություն, ուղղություն:

[1] Վ. Առաքելյան, *նշվ. աշխատ., էջ 163։*

«Նա վեր կացավ և սկսեց քայլել *սենյակի* երկայնքով» *(ՆԴ, 1, 352)*։ *«Իմ* ուղղությամբ *վերևից կտուրը* քանդում են» *(ՀԹ, 1, 39)*։ *«Լոռու ձորերի* երկարությամբ *ոռնալով* փչում է *նոյեմբերի ցուրտ քամին» (ՀԹ, 1, 371)*։

Մի շարք կապակցություններում գործիականը կարող է մեկնաբանվել և՛ տեղի (ներգոյականի փոխարեն), և՛ պարառական իմաստներով։

«Գյուլնազ սարի թռչներն էլ՝ քուրսու չորս կողմովը բոլորված՝ *իրանց սարին էին հեքիաթ ասել տալիս» (ՂԱ., 217)*։ *«Սկսեցին նայել իրանց* առաջով ընկած *անդնդաձև խորության վերա» (ՂԱ., 434)*։ «Շաղ տամ *շռայլ լավն ու բարին երկրի բոլոր* եզերքներով» *(ՀԱՀԵՄ, 367)*։

Տեղի գործիականով են կազմված մի շարք դարձվածքային կապակցություններ, ինչպես՝ մտքով անցնել, (սիրտը) բերնով գալ։

«Մտքովն անցնում է *աշխարհքի բանը» (ՀԹ, 2, 143)*։ *«Ջըղջիկն էսպես մի՜շտ լսելիս Սիրտը* բերնով դուրս էր գալիս» *(ՀԹ, 1, 199)*։ *«Թող անի՝* ձեռքովը գալիս է» *(ՍԽՄԽ, 47)*։ *Այս վերջինը՝* ձեռքովը գալ *բարբառային դարձվածք է*։

Պարառական գործիական.— *Լրացումը ցույց է տալիս այն առարկան, որի շուրջը, վրան անցնում, փաթաթվում, ընկնում է մի բան, որը պատվում, օղակվում է մի բանով։ Պարառական գործիականը վերապրուկային իմաստ է, որ գալիս է գրաբարից, որտեղ այն* զ *նախդիրով էր գործածվում (թեև գրաբարում պարառական գործիականով նաև ժամանակ ցույց տվող բառերն էին գործածվում՝ մոտավորություն արտահայտելով)։*

Ժամանակակից հայերենում պարառական գործիականը միայն տարածական նշանակություն ունի։ Գործածության տեսակետից սա բավական սահմանափակ է. դրվում է մի քանի բայերի հետ։

Պարառական գործիականով կազմված կապակցությունները ավելի շատ գործածական են այն գրողների ստեղծագործություններում, որոնք ավելի շատ բարբառային ազդեցություն են կրել (Հ. Թումանյան, Նար-Դոս, Բակունց և ուրիշներ)։

Պարառական գործիականով լրացում են ստանում փաթաթել, պատել, շուռ գալ, տալ, անցնել, անցկացնել, փարել, քսել, ընկնել, դիպչել, գցել, զարկել *և նման իմաստ ունեցող այլ բառեր։*

Լրացում դառնում են առաջին հերթին մարմնի մաս ցույց

տվող գլուխ, ուս, թիկունք, մեջք, պարանոց, բուկ, ականջ, աչք, քիթ, ծունկ *և այլ բառեր։*

«Փարեց *նրա* ծնկներով» *(Ր, 4, 33)։ «Կտուցները քնքշորեն* քսում էին *նրա* պարանոցով» *(Իս., 3, 327)։ «Թանթլիկը բերավ* ուսովս պատ տվավ» *(ՀԹ, 1, 333)։ «Աղջիկը միամիտ առաջ է վազում,* վզովը փաթաթվում» *(ՀԹ, 1, 491)։ «Տանուտերի շղթան* վզովն անցկացրեց» *(Բակ., 80)։ «Անտոնն աղվեսին* ուսովը գցեց» *(Բակ., 121)։ «Գլուխը* դիպավ *կողքի* պատովն *ու վեր ընկավ» (ՀԹ, 321)։ «Կոկոսը դա էս ծառին բարձրանա ու վեր ընկնի,* քարովը դիպչի, *մեռնի» (ՀԹ, 1, 506)։ «Բարձրացնում,* պատովն էր տալիս *մանրավաճառի խանութի ճակատից կախված ցուցանակը» (ՆԴ, 1, 451)։ «Բառաչողը Նարգիզն է ,որի հորթը* քարով է ընկել» *(Բակ., 152)։ «Վարում վշշում է խուլ Որոտանը,* Ափերով տալիս *ավազ ու ջուր» (ՀԱՀԵՄ, 123)։ «Ոտքը* ոտքով գցեց» *(ՍԽՄԽ, 116)։*

Որոշ կապակցություններում գործիականը կարող է պարառական իմաստ արտահայտել և դիտվել բացառականի նշանակությամբ տեղի գործիական։ Օրինակ՝ «Ձեր Ծաղիկ կովը Միրզանց դոմի փլեկովը ներքև ընկավ, *սատկեց» (ՀԹ, 1, 326)։*

Պարառականով կազմված են բազմաթիվ դարձվածքներ և կայուն կապակցություններ, որոնցում երբեմն զգացվում է այդ պարառականի անմիջական իմաստը։ Այդպիսի դարձվածքներից են՝ (մեկի) խելքով ընկնել, տակով անել[1], գլխով(ը) ջուր գալ, իրարով անցնել, քնով ընկնել, (մեկի) գլխով անցնել, աչքով ընկնել, ականջով ընկնել, գետնով տալ, քնով անցնել, (գլուխը) քարովը տալ, երեսով տալ, (արյունը) գլխովը տալ *և այլն։*

«Դու, Մուսայի խելքով ընկած, *Վեր ես կենում մեր դեմ խոսում» (ՀԹ, 2, 89)։ «Նա իմ դանակը* տակով արավ» *(ՀԹ, 1, 412)։ «Սպարապետի* գլխովը ջուր գա, *ներեց» (ՍԽՄԽ, 124)։ «Տանն* իրարով անցան» *(ՍԽՄԽ, 532)։ «Խնդրեցինք, որ նա մեզ զարթեցնի, որ* քնով չընկնենք» *(ՀՄՀԵ, 195)։* «Ականջով *մի ձայն* ընկավ» *(Բակ., 83)։* «Աչքովն ընկավ *մի երիտասարդ աղջկա գլուխ» (ԳՄԼՋ, 365)։ «Մարդիկ էլ տեսան* ընկել եմ շառով» *(ՀԹ, 1, 190)։ «Շարունակ* երեսովս էր տալիս *իմ ու երեխայիս կերած մի կտոր հացը» (ՆԴ, 1, 212)։ «Շատ շուտով տեսա, որ գլուխս* քարովն էի տվել, *հանձն առնելով այդ բթամիտ տղայի հետ պարապելու տաժանակիր աշ-*

[1] Տակով անել *դարձվածքը, որ նշանակում է* գողանալ, թաքցնել, *չի կարելի նույնացնել* տակովն անել *հարադրական բայի հետ, որ նշանակում է* ծածկել:

խատանքը» *(ՆԴ, 2, 554)։ «Այն երեկո Ադիլբեկովի տանը արյունն* գլխովս էր տալիս» *(Շիրվ., 3, 139)։*

Պարառական գործիականից է առաջացել մի շարք հարադրական բայերի անվանական բաղադրիչը, ինչպես՝ վզով ընկնել, տակով անել, տակով լինել *և այլն։*

«Հազարներով մարդն ու իր ձին Տակովն եղան, *կոտորվեցին» (ՀԲ, 1, 246)։ «Մի մեծ ժայռ փլվել ու* տակովն է արել *այն քարայրը» (Բակ., 159)։* «Վզովդ ընկնեմ, *քեզ համբուրեմ մի անգամ» (ՀՀ, 31)։*

Ժամանակի գործիական.— *Բայի լրացումը այս դեպքում ցույց է տալիս այն առարկայական ժամանակը, որի ընթացքում կատարվում է գործողությունը։ Օրինակ՝ «Նրանք դուրս* եկան գիշերով» *նախադասության մեջ* գիշերով *գործիականը դուրս գալու գործողության ժամանակն է ցույց տալիս։ Ժամանակի գործիականը Մ. Աբեղյանը բնորոշել է 3 հիմունքով. ա) իբրև անպատեհ, չսպասված ժամանակ, կամ եղանակ, օրվա վիճակ ցույց տվող, բ) մոտավոր ժամանակ ցույց տվող, գ) պայմանավորված ժամանակ ցույց տվող։ Սրանցից երրորդը իրականում ժամանակի իմաստ չունի և չպետք է ընկնի ժամանակի գործիականի բնորոշման հիմքում։ Օրինակ՝* «ժամով *կառք* վարձել» *կապակցության մեջ* ժամով *գործողության կատարման ձևն է ցույց տալիս, իսկ* «Երեք ժամով վարձել» *կապակցության մեջ՝ չափը*[1]*։*

Ժամանակի գործիականի համար մոտավոր ժամանակ ցույց տալը բնորոշ է։ Իբրև լրացում հանդես են գալիս ժամանակ ցույց տվող օր, գիշեր, ցերեկ, ժամանակ, *ինչպես նաև կողմնակիորեն ժամանակ ցույց տվող* արև, լույս, մութ, անձրև, ձյուն, մառախուղ, մշուշ *և նման բառեր։ Սրանց մի մասը կարող է ինքնուրույն գործածվել կամ լրացումով հանդես գալ, իսկ* օր *բառը միշտ որևէ լրացումով է հանդես գալիս* (մեկի օրով): *Այդպիսի լրացում կարող են ստանալ բազմաթիվ բայեր։*

«Այդ ջրանցքը շինվել էր *Քրիստոսից մոտ 200 տարի առաջ Արտաշիսս* կուսակալի օրով» *(Մուր., 4, 455)։ «Փերիները սարի գլխին* հավաքվեցին գիշերով» *(ՀԲ, 2, 43)։* «Ցերեկով մեռած *գյուղը մեկեն սկսեց շարժվել» (ՆԴ, 1, 109)։ «Գիտեմ ընկեր, տեղ* կհասնենք արևով» *(ՀՀ, 139)։ «Նա աշխատում էր* մթնով դուրս գալ *յուր իշխանության սահմանից» (Ր, 4, 225)։ «Խաղաղ* գիշերով

---

[1] *Տե՛ս «Չափի գործիական» հատվածը։*

դու կգաս ինձ մոտ» (ՎՏ, 1, 48)։ «Հետո մեկ էլ օր-ցերեկով Ձեր ողջ տունը կողոպտեցին» (Ս, 102)։

Ժամանակի իմաստով կարող են գործածվել նաև գործողության անուններ, ինչպես՝ ծնունդ, կնունք, հարսանիք և այլն։

«Հորս կնունքով, մորս ծնունդով, վեր կացանք մի օր հինգ ու վեց հոգով, թրով-թվանքով որսի գնացինք» (ՀԹ, 1, 478)։

Ժամանակի գործիականը երբեմն հարադրված է լինում ժամանակի հայցականին։ Օրինակ՝ «Մեհրաբ յուզբաշին պատվիրեց, որ առավոտը գիշերով թոռչիներ (ձկնորսներ) գնան ձորը» (ՀԹ, 1, 307)։

Ժամանակի իմաստ կարող է արտահայտել նաև անորոշ դերբայի գործիականը, որը սովորաբար ձևի, վիճակի և այլ իմաստների համար է գործածվում։ «Ամեն շարժվելով ծղփում էր նրա տակ լճացած արյունը» (ՀԹ, 1, 133)։ «Ես շռայլ եղա իբրև սերմնացան ժլատ կլինեմ՝ ելնելով հնձի» (Չ, 104)։

Բերված նախադասություններում դերբայի գործիականը արտահայտում է շարժվելու ժամանակը, ելնելու ժամանակը կամ շարժվելիս, ելնելիս։ Երբեմն էլ այդ ձևը կարող է ունենալ նաև կապի ու բացառականի իմաստ։ Օրինակ՝ «Այդտեղ քրմապետը՝ օրհնելով ճանապարհ ձգող ջերմեռանդ կռապաշտներին՝ ետ դարձրեց» (ՂԱ, 122)։ Այս նախադասության մեջ օրհնելով=է օրհնելուց հետո։ Այսպես են նաև հետևյալ օրինակները. «Էս ասելով գյուղացիներից մինը մի նամակ հանեց տվավ Գիքորին» (ՀԹ, 1, 326)։ «Այս ասելով արագ շրջվեց դեպի դուռը և գնաց» (ԴԴՎ, 34)։

Սակայն երբեմն էլ անորոշ դերբայի գործիականը կարող է մեկնաբանվել և՛ ժամանակի, և՛ ձևի իմաստներով։ Օրինակ՝ «Սաստիկ դանդաղությամբ պատասխան տալով Դեպի յուր դափին ինձ առաջնորդեց» (ՀԹ, 2, 33)։

Մի շարք բառերի գործիականը լրացյալ բայի մոտ արտահայտում է այնպիսի իմաստ, որը ժամանակից բացի, ինչ-որ չափով նաև պայմանի, առկայության նրբերանգներ ունի։ Այսպես՝ «Աղոտ լույսով տեսա նրա դեմքը» նախադասության մեջ լույսով ձևն անշուշտ ժամանակի իմաստ ունի, սակայն նաև որոշ չափով պայման է նշում, ինչպես և առկայություն։ Այսպես են հետևյալ նախադասություններում գործածված կապակցությունները. «Շարունակում էր շխշխկացնել իր կարի մեքենան ճրագի լույսով» (ՆԴ, 1, 159)։ «Նա ընդհարվեց որդու հետ հարսի ներկայությամբ» (Շիրվ., 3, 299)։ «Ընթրիքը շարունակվեց մարխերի լուսավորությամբ» (ԴԴՎ, 81)։

Գործիական հոլովը արտահայտում է նաև ժամանակային չափի իմաստ (տե՛ս «Չափի գործիական»), ընդորում ժամանակի և ժամանակային չափի գործիականները արտահայտվում են նույն բառերով, միայն ժամանակային չափի գործիականն ունենում է թվականով կամ նրան հարաբերակից բառերով լրացում, իսկ ժամանակի գործիականի համար այդպիսի լրացում չի լինում։ Սակայն պատահում են դեպքեր, երբ գործիականի այդ իմաստները հստակորեն չեն տարբերվում նույն կապակցության մեջ։

«*Երկար* ղարերով գնում ենք *դեպ վեր*» (*ՀԹ, 1, 98*)։ «*Պատահում էր, որ Դավիթն* ամբողջ ժամերով գոռում-գոռգոռում էր, հայհոյում էր *ամենադզվելի ածականներով*» (*ՆԴ, 1, 49*)։ «*Մի անկյունում կիտված էր ձիու* ամիսներով հավաքված *աղբը*» (*ՆԴ. 1, 64*)։ «Օրերով *ու* շաբաթներով *տան երես* չէր տեսնում» (*ՆԴ. 1, 79*)։

Չափի գործիական.— *Լրացումը ցույց է տալիս գործողության կատարման չափը*[1]*։ Ընդ որում գործողության չափը միատեսակ չէ. կան տարածական, ժամանակային, քանակական, ծավալային և այլ կարգի չափեր։ Այսպես, երբ ասում ենք «Նա արձակուրդ* ստացավ երկու շաբաթով», *ապա այստեղ* (երկու) շաբաթով *գործիականը* ստանալու *գործողության ժամանակային չափն է ցույց տալիս։* «Երկու կիլոմետրով գերազանցեց *ռեկորդը*» *նախադասության մեջ* (երկու) կիլոմետրով *տարածական չափն է ցույց տալիս։ Իսկ* «Երկու բաժակով հարբեց» *նախադասության մեջ* (երկու) բաժակով *գործիականը* հարբելու *ծավալային չափն է ցույց տալիս։ Գնի գործիականը դառնում է սահմանափակ բայերի լրացում։*

Անշուշտ ճիշտ է Վ. Առաքելյանը, երբ նշում է, որ գնի գործիականը որոշ չափով մոտ է փոխարինության գործիականին։ Սակայն գնի գործիականի համար բնորոշ է այն, որ նա ունի որևէ լրացում (թվականով կամ այլ խոսքի մասով)։ Գործածության տեսակետից ավելի հաճախ է հանդիպում ժամանակային չափի գործիականը։

Ա. Ժամանակային չափի գործիական.— *Սա կարող է լինել տարբեր իմաստ ունեցող բայերի լրացում։ Այս գործիականի հա-*

[1] *Մ. Աբեղյանը չափի գործիականի հետ իրավացիորեն քննում էր նաև գնի գործիականը՝ ըստ էության այն դիտելով չափի մի տարատեսակ։ Սակայն Վ. Առաքելյանը գնի գործիականն անջատում է չափի գործիականից։ (Տե՛ս* Մ. Աբեղյան, *նշվ. աշխատ., էջ 465—466)։* Վ. Առաքելյան, *նշվ. աշխատ., էջ 158։*

մար բնորոշն այն է, որ արտահայտվում է ժամանակային չափի միավոր գոյականով (օր, ժամ, րոպե, վայրկյան, շաբաթ, ամիս, տարի *և այլն), որն ունենում է թվական կամ թվականին հարաբերակից որևէ բառով արտահայտված լրացում։*

«Հայտնեց, որ մի-երկու օրով եկել է *գյուղից» (Իս, 4, 40)։* «Մի քանի րոպեով *երևաց աչքիս» (ՆԴ, 2, 539)։ «Ի՞նչ կլիներ, որ ինձ թողնեիք գոնե* մի ամսով հեռանալ *այս տնից» (Շիրվ., 3, 289)։ «Երբ նա խմում էր մի քանի բաժակ Մադրասու գինի,* ամբողջ երեսուն տարով երիտասարդանում էր» *(Շիրվ., 8, 38)։ «Երբեմն* երեք-չորս օրով ուշանում էր» *(ԴԱ, 107)։ «Այժմ* մի կարճ պահով եկել էր *վերջին շաբաթվա դեպքերը շարադրելու իր մատյանում» (ՍԽՄԽ, 742)։*

Սակայն ժամանակ ցույց տվող բառի գործիականը հաճախ կարող է առանց թվական կամ այլ կարգի լրացում ունենալու էլ ժամանակային չափի իմաստ արտահայտել։ Այս դեպքում գործիականը միայնակ կատարում է համապատասխան լրացումով կազմված բառակապակցության դեր։ Այսպես, «Օրերով *տուն չէր գալիս» նախադասության մեջ* օրերով *գործիականը կատարում է* ամբողջ օրերով *(կամ* շատ օրերով) *կապակցության դեր։*

«Փողոցի լապտերի լույսը մատնեց նրա արգահատելի վիճակը— օրերով չսափրված *սև դեմքը» (Իս., 3, 160)։ Այս գաղափարի մասին* խորհեց *նա* տարիներով» *(Իս., 3, 400)։* «Դարերով *արյուն* թափեց» *(Իս., 4, 237)։* «Ժամերով *հերթի* էին սպասում» *(ՆԴ, 1, 11)։* «Ամսով, տարով *տանը* չէր կենում» *(ԴԱ, 472)։* «Ժամերով կարող եք նայել, *թե ինչպես է զարկում փոքրի մաշկը» (Բակ., 3)։* «Ամիսներով մոռացվում էր *այդ պատմությունը» (Բակ., 134)։*

Բ. Տարածական չափի գործիական.— *Սա ցույց է տալիս գործողության տարածական չափը։ Իբրև լրացում հանդես են գալիս տարածական չափի միավոր գոյականները* (միլիմետր, սանտիմետր, մետր, մղոն, կիլոմետր, փարսախ, քառակուսի մետր, քառակուսի կիլոմետր *և այլն)՝ քանակական որևէ լրացումով հանդերձ։*

«Նրանք հեռացան քսան կիլոմետրով»: *«Օրվա առաջադրանքը* գերակատարեց երեսուն հեկտարով»: *«Երևանը վերջին քառասնամյակում* ընդարձակվել է մի քանի տասնյակ քառակուսի կիլոմետրով»:

Գ. Քանակական չափի գործիական.— *Լրացումն այս դեպքում ցույց է տալիս գործողության կատարման քանակական չափը։ Ընդ որում սա ունի երկու նշանակություն՝ գնի և այլ չափերի։*

Գնի գործիականը, ինչպես արդեն նշվել է, ցույց է տալիս այն առարկայական չափանիշը, որի դիմաց մի բան է տրվում, առնվում։ Այսպիսի լրացում ստանում են առք և վաճառք ցույց տվող բայերը՝ առնել, գնել, վաճառել ծախել, տալ, ձեռք բերել *և այլն։ Այս բայերի անմիջական լրացում դառնում են գնի չափանիշ գոյականները՝ որևէ քանակական լրացումով հանդերձ* (երկու կոպեկով, հինգ ռուբլով, չորս ոսկով, քսան մանեթով, երկու գրոշով, ութ դոլլարով, յոթ ֆունտ ստերլինգով *և այլն)։*

«*Գիրքը* վաճառվում է երկու ռուբլով»: «*Գինին* գնել են մեկ ռուբլով»: «*Մեքենան* տվեց հազար ռուբլով»: «Հարյուր դոլլարով ձեռք բերեց *կարի մեքենա*»։

Երբեմն գնի գործիականը վերցվում է՝ պաշտոնը հանձնելով քանակական լրացմանը։ Այսպես, ասում ենք «Հազարով գնեց», «Հարյուրով կտա *այդ ապրանքը*» *և այլն։*

Քանակական այլ չափի գործիականը ցույց է տալիս գործողության կատարման քանակական չափը։ Լրացումն արտահայտվում է գոյականով, գոյականաբար գործածված թվականով։

«*Բանակը* մեծացավ հազար հազարներով» *(ՎՓ, 4, 453)։* «*Նրա ընկերները* ծախսում էին հազարներով ու տասնյակ հազարներով» *(Շիրվ., 3, 47)։* «Մարած են, մեռած, փռված ու ցրված հազար հազարով» *(ՀԹ, 1, 132)։ «Հունձք էր անում ծրաչան,* հազարներով գլխատում» *(Զ, 260)։ «Ձիերը չէին դիմանում,* ընկնում էին տասնյակներով» *(ՍԽՄԽ, 702)։ «Նրա կյանքի պատմությունը* բազմացրել էին շատ օրինակներով» *(ԶԴՍՆ, 2, 241)։*

Դ. Ծավալային չափի գործիական.— *Բայի լրացումը այս նշանակությամբ ցույց է տալիս գործողության կատարման ծավալային չափը։ Ծավալային չափը արտահայտվում է համապատասխան միավորներով, ընդ որում դրանք կարող են լինել ընդունված նորմա կամ ֆունկցիոնալ չափեր։ Այսպես, ընդունված չափեր են՝* լիտր, դեկալիտր, խորանարդ սանտիմետր, խորանարդ մետր *և այլն։ Իբրև ֆունկցիոնալ չափի միավոր կարող է հանդես գալ ծավալ ներթադրող ամեն մի գոյական* (շիշ, դույլ, տակառ, տոռն *և այլն)։ Ծավալային չափի գործիականը ևս հանդես է գալիս թվական կամ այլ կարգի լրացումով։*

«Հազարավոր լիտրերով շռայլում են *գինին*»։ «*Մենակ* երկու այս կաթսայիկով կուտեի» *(ԲՀԱԶ, 10)։ «Հետն էլ բուրյան մշտադալար վարդ* է թափում փնջերով» *(ՀԹ, 2, 151)։ «Արյուն չեմ ուզում թափել առատորեն, մինչ պետք էր* թափել հեղեղներով» *(ԴԴՎ, 646)։ «Արեգակի շողերը* խուրձերով *ներս* էին թափվել»:

(Շիրվ., 3, 27)։ «Ոմանք հատով, ոմանք փնջերով գնում են կարմիր կակաչները» (ԳՄԼՁ, 146)։

Կան որոշ կապակցություններ, որոնցում լրացումը համատեղում է չափի և ձևի իմաստներ։

«Ապրանքները թափված էին խուրձերով ու բլուրներով, ինչպես ցորենն ու գարին մեզ մոտ» (Շիրվ., 8, 413)։ «Գիտե ուտել կուշտ, չափով խմել» (Զ, 385)։ «Եվ ահա եկան օրը ցերեկով Սոված գայլերը՝ Ամբողջ ոհմակով» (ՂԱ, 38)։ «Ով որ տարով կմեծանա, մեր Արևամանուկը օրով էր մեծանում ու զորանում» (ՂԱ, 199)։ «Ես հավատում եմ ամբողջ սրտով Այս բացվող օրվա միջօրեին» (ՀԱՀԵՄ, 355)։ «Մանրիկ կումերով գինին հոսում էր կոկորդով» (ՋԳՄՆ, 2, 117)։

Երբեմն գործիականը համատեղում է չափի և միասնության իմաստները։ Օրինակ՝ «Տիկինը մտավ այդ բերդը տասնեյոթ հազար հոգով» (Ր, 7, 350)։

Համապատասխանության գործիական.— Սա ցույց է տալիս այն առարկան, որին համապատասխան մի բան է կատարվում, տեղի է ունենում գործողությունը։ Գործիականի այս իմաստը Մ. Աբեղյանը դիտում էր ձևի և միասնության ընդհանուր նշանակության մի երանգը[1]։ Վ. Առաքելյանը համապատասխանության և նմանության իմաստն առանձին է քննում[2]։

Պետք է նկատի ունենալ, որ համապատասխանության գործիականը շարահյուսական դերով ձևի պարագա է, և այս տեսակետից իրավացի էր Մ. Աբեղյանը։

Համապատասխանության գործիական դառնում են ոչ թանձրացական մի շարք գոյականներ, ինչպես՝ ոճ, ոգի, մոդա, ճաշակ, կարգ, հանգ, պահանջ, ձև և այլն։ Այսպիսի լրացում կարող են ստանալ բազմազան իմաստի բայեր։

«Արտասանեցի մի երկու ոտանավոր այդ ոճով գրածներից» (Իս., 4, 63)։ «Պահանջում էր, որ անպատճառ իր գնահատումներով ցուցակագրվեն» (ՆԴ, 1, 202)։ «Սենյակը զարդարված է եվրոպական ընտիր ճաշակով» (ՆԴ, 1, 301)։ «Նա ծնողների քմահաճույքով շարժվող աղջիկներից չէ» (ՆԴ, 2, 446)։ «Վաղը ևեթ այս ծրագրով դուք կպատվիրեք հատակագիծը» (Շիրվ., 3, 125)։ «Նա թույլ է տալիս իր կնոջը զուգվել և զարդարվել վերջին մոդայով» (Շիրվ., 8, 419)։ «Կերտել ենք զվարթ քաղաքը մեր Պա-

[1] Մ. Աբեղյան, նշվ. աշխատ., էջ 462—465։

[2] Վ. Առաքելյան, նշվ. աշխատ., էջ 157։

հանգմունքներով ձեր խոստացին» (ՀՍՀԵՄ, 112)։ «Նորից բարեց իր երկրի կարգով» (ՀԹ, 2, 35)։

Մի շարք կապակցություններում գործիականը կարող է մեկնաբանվել համապատասխանության և ձևի իմաստներով հավասարապես։

«Ինձ աերունական մեծ զորք չեն տվել, որ կռվեմ հունական, չղիտեմ պարսկական, անգամ հայկական ռազմակարգերով» (ԴԴՎ, 640)։ «Դիակի շուրջը կարգով շարվեցին» (ՀԹ, 2, 65)։ «Տնտեսությունը պլանով վարելու՝ համար Վասիլը մտքումը դրեց օրագրի պես մի բան պահել» (Բակ., 255)։ «Բնակարանը տրվում է ընտանիքի անդամների թվի հաշվով» (ՀՄՀԵ, 95)։

Համապատասխանության իմաստը կարող է համատեղվել միջոցի իմաստի հետ։ Օրինակ՝ «Իսկ եթե իրենք կբարկանան, թող իրենք էլ տուժեն իրենց դրած պայմանով» (ՀԹ, 1, 450)։

Չափի բառի գործիականը կարող է արտահայտել և՛ համապատասխանություն, և՛ չափի իմաստ։ Օրինակ՝ «Ամեն մարդ տաքն իր վերմակի չափով է պարզում» (ՀՄՀԵ, 154)[1]։

Ձևի գործիական.— Լրացումն այս դեպքում ցույց է տալիս գործողության կատարման ձևը, եղանակը, կերպը։ Երբ ասում ենք «Նա սիրով ընդառաչեց ընկերոջը», ապա այստեղ սիրով գործիականը ընդառաչել գործողության ձևն է արտահայտում։ Ձևի գործիականը բավականաչափ շատ դրսևորումներ ունի։

Նախ՝ պետք է հստակորեն տարբերել ձևի գործիական իմաստը ավանդական քերականության սաորոգյալի լրացում ձևի պարագա հասկացությունից։ Նախադասության մեջ ձևի պարագա ենք համարում մի շարք գործիականներ (միասնության, համապատասխանության, վիճակի, բուն ձևի)։ Ձևի գործիականը նախադասության մեջ ձևի պարագա հասկացության նկատմամբ այն հարաբերությունն ունի, ինչ որ որակական սեռականը որոշիչ սեռականի նկատմամբ։ Որոշիչ ենք համարում բազմազան իմաստ ունեցող սեռականը (անձի, նյութի, ժամանակի, պարունակության նպատակի և այլն), իսկ որակական սեռականը իբրև մի առանձին իմաստ մտնում է որոշիչ սեռականի մեջ։ Այսպես էլ բուն ձևի իմաստը ձևի պարագայի մի դրսևորումն է։

Ձևի գործիականը կարող է դառնալ բազմազան իմաստ ունեցող բայերի լրացում, սակայն ամենից շատ այդ դերը կատարում են շարժում ցույց տվող բայերը։ Լրացում կարող են դառնալ ոչ

---

1 Ոտքը վերմակի չափով պարզել (մեկնել) դարձվածքային կապակցություն է։

թանձրացական գոյականները. ձևի նշանակություն ձեռք են բերում վերացական գոյականները։

Ձևի գործիականը կարող է հանդես գալ առանց լրացման։ Սրանք մեծ մասամբ -ություն ածանց ունեցող գոյականներն են, որոնց գործիականը ավելի շատ պարագայական նշանակություն է ստացել։

«Հայերը հարվածում էին սաստկությամբ» (Մուր., 4, 496)։ «Թեթևամտությամբ չէր կարծիք հայտնում» (Մուր., 4, 47)։ «Ներսը հավաքված կանայք նայում էին ծերունուն և նրա աղջկան խըղճահարությամբ, կարեկցությամբ» (ՆԴ, 1, 10)։ «Վարդանը համբերությամբ սպասում էր» (ԴԴՎ, 272)։

Այսպիսի գործիականը միայնակ ևս նախադասության մեջ ինքնուրույն շարահյուսական դեր ունի։ Սակայն պատահում են դեպքեր, երբ ձևի իմաստը միայն գործիականով չի արտահայտվում, այլ՝ գործիականի որևէ լրացումով հանդերձ։ Այս նշանակում է, որ իմաստային-շարահյուսական դերը զուտ գործիականին չի հատկացված, այլ՝ լրացում-լրացյալ կապակցությանը։

«Սպասում էր նրան սրտի անձկությամբ» (Մուր., 4, 224)։ «Նրանք թռչում էին թունդ մրրկի արագությամբ» (ՂԱ, 157)։ «Ջաղեձորը ննջում էր միջօրեի թմրությամբ» (ՍԽՄԽ, 2)։ «Մեր հյուրը նորեկի քաջությամբ շտապեցնում է մեզ» (ՀՄՀԵ, 35)։

Ձևի իմաստ կարող են արտահայտել նաև այլ գոյականների գործիական հոլովաձևերը, ինչպես՝ ուժ, ձայն, սեր, հերթ, շարք, պատիվ, ախորժակ, կարոտ և այլն։

«Վաղուց կարոտով սպասում են ինձ» (ՀԹ, 2, 46)։ «Խաղ էին կանչում ու ձենով լալիս» (ՀԹ, 2, 62)։ «Բան է, թե որ շատ սիրով, Աչքը հանիր՝ խլիր զոռով» (ՀԹ, 2, 115)։ «Եվ գլուխներն խոնարհում են հարգանքով» (Իս., 1, 367)։ «Պարշանքով շրջեց ճակատը կնճռոտ» (Իս., 2, 50)։ «Հերթով գալիս, անց ենք կենում» (ՀԹ, 2, 134)։ «Սովետահայ գրականությունը պատվով կատարեց իր հայրենասիրական պարտքը» (Իս., 4, 321)։ «Տղերքը նեղով ձորը ներս մտան» (ՀԹ, 2, 61)։ «Ես ամեն տանջանք տարել եմ սիրով» (Չ, 118)։

Այս դեպքում ևս գործիականը կարող է որևէ լրացմամբ արտահայտել ձևի իմաստը։

«Եվ տարիք անցան համր շարքերով» (Իս., 1, 199)։ «Իսկ հնոցը վառվում էր դեռ նախկին ուժով» (Շիրվ., 3, 135)։ «Ուտում էր նա գայլի ախորժակով» (Շիրվ., 8, 311)։ «Թագուհին հրամայել էր պատշաճ հարգանքով դիմավորել օտարերկրյա դեսպանին

ու նրա շքախմբին» *(ԶԴՍՆ, 2, 173)*։ «*Տառերը* գրված էին զարմանալի խնամքով» *(ՍԽՄԽ, 71)*։

Սրանցից պետք է տարբերել այն կապակցությունները, որոնցում գործիականը առանց լրացման չի կարող ձևի իմաստ արտահայտել։ Այս դեպքում գործիականը կարող է կա՛մ միայն լրացումով հանդես գալ՝ արտահայտելով ձևի իմաստ, կա՛մ առանձին հանդես գալու ժամանակ այլ իմաստ է ունենում։

Այսպես, գույներով նկարել *կապակցության մեջ* գույներով *գործիականը միջոցի իմաստ ունի, իսկ* տխուր գույներով նկարագրել *կապակցության մեջ* տխուր գույներով *կապակցությունը ձևի իմաստ է արտահայտում։*

Իհարկե ավելի շատ են այն գործիականները, որոնք լրացմամբ են շարահյուսական-իմաստային տվյալ դերը կատարում։ Իբրև գործիականի լրացում հանդես է գալիս սովորաբար որևէ ածական, և ձևի իմաստն արտահայտվում է երկուսի կապակցությամբ։

«Պատկառուն ձևերով բարևեց *ինձ»* *(ՎՓ, 5, 9)*։ «Հեռացավ վայելուչ քայլվածքով» *(ՎՓ, 4, 634)*։ «*Թագավորի փոքրիկ նավատորմը սկսավ* մեղմ ընթացքով *դեպի Բեշիրի բանակն* առաջանալ» *(Մուր., 4, 346)*։ «Կատվի քայլերով գնաց *բարձրացավ թախտը»* *(ՆԴ, 50)*։ «Մտածում էր *կյանքի և մահվան առեղծվածի առջև կանգնած* մարդու մտատանջանքով» *(ՆԴ, 52)*։ «Խաղաղ սրտով եմ հիշում *չարերին»* *(ՎՏ, 2, 166)*։ «*Քարքարոտ ճանապարհը* քմահաճ գծերով իջնում էր *դեպի հարթությունը»* *(ԴԴՎ, 7)*։ «*Այստեղ մոքի աշխատավորն* ապրում է համամարդկային կյանքով» *(Շիրվ., 8. 400)*։

Ձևի գործիականը երբեմն դրսևորվում է նույն բայի արմատով կազմված գոյականով՝ լրացմամբ հանդերձ։ Սա արտաքուստ նման է միջոցի գործիականին։ Այսպես լինում են՝ քնել խոր քնով, քնել հսկայի քնով, զնգալ անհուն զնգոցով, մեռնել բնական մահով և *այլն։*

«Գգվեցիր *դու ինձ* զզվանքով քնքուշ» *(Չ, 128)*։ «*Արեգակը թվում է ծնծղա, և երկիրը* բուրում է անկրկնելի բույրով *բոլոր պարմանի սրտերում»* *(Չ, 169)*։ «Քնել էր *ղեկավարը* Անզարթնելի քնով» *(Չ, 361)*։ «*Արևն* է զնգում անհուն զնգոցով» *(Չ, 427)*։ «*Հավը* մեռնում էր բնական մահով» *(Բակ., 171)*։ «*Նա* լալիս էր իսկական արցունքներով» *(ԳՄԼՉ, 14)*։ «Կարոտով անհուն կարոտեցի *ես Կենդանի շնչիդ, հրիդ ու տապիդ»* *(Չ, 130)*։

Երբեմն ձևի իմաստ է արտահայտում չափի նշանակություն ունեցող բառը։ Օրինակ՝ «Նա շտկվեց, կիսով նստեց *անկողնում»*

(ՋԴԱՎ, 87)։ Այստեղ կիսով գործածված է կիսով չափ-ի փոխարեն, իսկ վերջինս չափի իմաստով է գործածվում։

Ձևի իմաստն արտահայտվում է նաև անորոշ դերբայի գործիականով։ Անորոշ դերբայը ձևի պարագա կարող է դառնալ և՛ չտրոհված, և՛ տրոհված։ Անորոշ դերբայի գործիականով արտահայտվում է գլխավոր գործողությանը զուգակցվող մի գործողություն, որը հիմնականի համար ձև է ծառայում։

Ձևի գործիական դառնում են տարբեր իմաստ ունեցող բառեր։ Լրացյալի դերում կարող են հանդես գալ իմաստային բազմազան խմբերի բայեր։

«Խնդրում էր լալով *եղբոր առաջին Անզոր ու դալուկ իր քույրը չոքած*» (ՀԹ, 2, 58)։ «Մռնչալով ելավ *տեղից*» (ՀԹ, 2, 128)։ «Ճափաղ տալով *դուն* կուգաս» (Իս., 2, 13)։ «Խաղ ասելով *նա* սարավ *Ջրեց հոտը իր ծարավ*» (ՀԹ, 1, 71)։ «*Ստախոսը գլուխը* քորելով դուրս է գնում» (ՀԹ, 1, 439)։ «*Թորոսը հազիվ ոտները* շարժելով մոտեցավ *թախտին*» (ՆԴ, 1, 22)։ «*Ցուրտ քամին* շրխկշրխկացնելով շարժում էր *դուռը և* սվսվալով *ներս* մտնում *տախտակների արանքներից*» (ՆԴ, 1, 86)։ «*Արազն* եկավ լափին տալով» (ՀՀ, 81)։ «*Ու* երգելով կռվում էին *ամբոխները խելագարված*» (Չ, 250)։ «*Գերմանացիները* սողալով առաջանում *են*» (ԲՀՍՉ, 124)։

Անորոշ դերբայով կազմվող կապակցությունների մեջ առանձին տեղ ունեն նույն բայի կրկնավոր կազմությունները։ Այս դեպքում ձևի իմաստն արտահայտվում է նույն բայի անորոշ դերբայի գործիականով, որը տվյալ կապակցության մեջ իմաստի սաստկացման դեր է կատարում[1]։

Այսպիսի կապակցություններ են ստեղծվում զգացական մի շարք բայերի անորոշ դերբայներով և դիմավոր ձևով։ Այսպես, կազմվում են՝ ատելով ատել, խորշելով խորշել, զզվելով զզվել, հրաժարվելով հրաժարվել, տենչալով տենչալ, փափագելով փափագել և այլն։

Այսպիսի կապակցությունները գործածական էին գրաբարում, և այժմ էլ բավական թվով օրինակների հանդիպում ենք արդի հայերենում։ Ա. Աբրահամյանը նշում է, որ կապակցության այս տեսակը խորթ չէ հայերենին, ինչպես կարծել են որոշ քերական-

[1] Տե՛ս Ա. Աբրահամյան, *Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953, էջ 286—288*։

ներ։ Նա այսպիսի կապակցության մեջ անորոշ դերբայի գործիականը համարում է բայական ավելադրություն[1]։

«Մեր ժողովրդի մեծ մասը տակավին յուր կրոնին է հետևում և խորշելով խորշում է քրիստոնեությունից» (Ր, 7, 296)։ «Ես միշտ առնելով առնում էի քեզ, և քո գարշելի երեսը տեսնելու ժամանակ, միշտ զզվելով զզվում էի քեզանից» (Ր, 7, 424)։ «Սիրում եմ կյանքը, Անահիտ, տենչում եմ տենչալով» (ԴԴՎ, 608)։ «Սակայն շինականի կինը հրաժարվելով հրաժարվում է այդ ամենից» (ՍՁ, 9, 207)։

Երբեմն գործիականով դրվում է ոչ թե անորոշ դերբայը, այլ նույնարմատ գոյականը։ Օրինակ՝ «Այս տղաները փափագով փափագում են մտնել զորագունդը» (ԴԴՎ, 459)։ Կրկնավոր գործիականը կոչվում է նաև սաստկացման գործիական։ Սակայն սաստկացումը իմաստ չէ, ուստի և այն առանձին չենք քննում։

Ձևի իմաստը երբեմն կարող է արտահայտվել տեղ ցույց տվող բառերով, որոնք տվյալ կապակցության մեջ վերանում են իրենց բուն, առարկայական իմաստից՝ ստանալով սոսկ ձևի իմաստ։ Այսպես կարող են գործածվել ճանապարհ, հրապարակ և այլ բառեր, որոնք գտնվում են կապի վերածվելու պրոցեսում։

«Այդ ճանապարհով վնասից ազատ մնալն հավասար է գողության» (Մուր., 5, 291)։ «Բայց ցույց կարողանայի խոնեմության ճանապարհով այս պատակտման առաջն առնել» (Մուր., 4, 104)։ «Այդ մասին կհայտնեմ ես վաղը, հրապարակով» (Մուր., 4, 288)։ «Դու համոզվա՞ծ ես, որ մեր հայրը իր միլիոնները արդար ճանապարհով է վաստակել» (Շիրվ., 3, 48)։

Մի շարք կապակցություններում գործիականը կարող է մեկնաբանվել և՛ ձևի, և՛ պատճառի իմաստներով։

«Ոչ մեկը իր բնական մահով, կամ որևիցե տկարությամբ չի մեռել» (ՂԱ., 582)։ «Այլ զոհվեց անլուր դավաճանությամբ» (ՊՍԱՁ, 233)։ «Երգչի միջամտությամբ թագավորն ազատություն շնորհեց ճորտերին» (ՋԴՍՆ, 2, 175)։ «Ձիերը տառապեցին ցեխ ծեծելով» (ՍԽՄԽ, 207)։

Ձևի գործիականով են կազմված մի շարք դարձվածքներ, ինչպես՝ քաղցր աչքով նայել, ականջի ծայրով լսել, (ինչ) երեսով անել և այլն։

«Ու քաղցր աչքով մեզ մտիկ անես» (ՀԹ, 2, 99)։ «Տանտերս աղջիկա՝ ինձ աշակերտելու վրա հաշտ աչքով էր նայում» (ՆԴ, 2,

---

[1] Նույն տեղում։

570)։ «*Նրանց* լսում էր ականջի ծայրով» *(ՍԽՄԽ, 164)*։ «*Ի՞նչ լուր* պիտի տանեի, ի՞նչ երեսով» *(ՍՁ, 9, 146)*։

Վիճակի գործիական.— *Բայի լրացումը ցույց է տալիս այն առարկան, որը գործողություն կատարողի կամ գործողության խնդրի վիճակն է արտահայտում։ Վիճակի գործիականը մեր քերականագիտության մեջ չի ճանաչվել, և այսպիսի իմաստով գործիականը դիտվել է ձևի գործիականի մի դրսևորում։ Իրականում, սակայն, վիճակի և ձևի գործիականները տարբեր են։ Վերջինս, ինչպես տեսանք, գործողության կատարման ձևը, եղանակը, կերպն է ցույց տալիս։ Մինչդեռ վիճակի գործիականը գործողության կատարման ձև չի ցույց տալիս։ Այսպես, երբ ասում ենք՝ «Նա* հագուստով է քնել», *ապա այստեղ* հագուստով *գործիականը ցույց չի տալիս* քնելու *գործողության ձևը, այլ գործողություն կատարողի վիճակն է արտահայտում։ Իհարկե վերջին հաշվով վիճակի գործիականը ևս շարահյուսական դերով, իբրև նախադասության անդամ, ձևի պարագա է դիտվում, սակայն վիճակի գործիականը չի նույնանում բուն ձևի գործիականի հետ. նրանից տարբերվում է, և այդ տարբերությունը չի կարելի անտեսել։*

Վիճակի գործիականով արտահայտվում են բազմաթիվ ու բազմազան գոյականներ, որոնք գործողություն կատարողի տեսքը, վիճակն են ցույց տալիս։ Սովորաբար այսպիսի լրացում դառնում են հագուստ, զգեստ, մարմնի մաս ցույց տվող գոյականները։ Այսպիսի լրացում ստանում են բայերը առանց սահմանափակման։

Անհրաժեշտ է տարբերել վիճակի երկու դրսևորում։ Մի դեպքում գործիականը ցույց է տալիս գործողություն կատարողի, ենթակայի վիճակը, իսկ երկրորդ դեպքում՝ գործողության առարկայի, խնդրի վիճակը։

Գործողի, ենթակայի վիճակ ցույց տվող լրացումը կարող է հանդես գալ և՛ առանձին, և՛ լրացումներով։

«Մտավ *Ակոբը* գզգզված հագուստով, մրից սևացած դեմքով, ձեռքերով և մինչև սրունքները մերկ ոտներով» *(ՆԴ, 1, 53)*։ «Պառկած էի շորերով» *(ՆԴ, 263)*։ «Կորացած մեջքով կանգնած էր *նրա անկողնի առջև» (Շիրվ., 3, 178)*։ *«Մարդիկ թե կանայք* նստոտել էին ձմեռվա վերարկուներով, գլխարկներով» *(ՍՁ, 8, 73)*։ «*Դու այդ* կույր տեղովդ *ո՞րտեղից* ես գալիս» *(ՎՓ, 4, 251)*։

Երբեմն վիճակի իմաստը կարող է արտահայտվել նաև լրացում ունեցող ոչ թանձրացական գոյականներով։

«Այրված սրտով դուրս եկավ *դահլիճից*» (*Ր, 7, 314*)։ «Այս մտքերով դուրս եմ գալիս *դաշտ*» (*ՍՁ, 3, 245*)։

Երկրորդ դեպքում գործիականը ցույց է տալիս գործողության տարածական վիճակը։ Այս գործիականը ևս կարող է հանդես գալ առանձին կամ լրացումներով։

«Նրա «Երկրագործություն» խստիվ արգելված գիրքը միայն ձեռագիր տետրակներով ունեինք» (*Իս., 4, 326*)։ *«Նշանտուքի ժամանակ Անանիին* ցույց էին տվել վրացական նազուստով» (*ՆԴ, 1, 139*)։ *«Վահանը* երևակայում էր *նրան միշտ* ուսանողական զգեստով, երկար մազերով, բարակ բեղերով *ու* փոքրիկ մորուքով» (*ՍՁ, 8, 16*)։ *«Ես* տեսնում էի *նրան միշտ* քայքայված առողջությամբ, քայքայված մարմնով» (*Իս., 4, 141*)։ *«Միրոնք փախան և ինձ* թողին փշրված ոտով» (*ՆԴ, 1, 209*)։ *«Ախր* էս նալովը *մենք ո՞նց դեզը* տանենք *նրան*» (*ՎՓ, 4, 327*)։

Խնդրային վիճակի իմաստը ևս կարող է անորոշ դերբայի գործիականով արտահայտվել։

«Ու իրան լալով դուրս արի *միջից*» (*ՀԹ, 1, 191*)։ *«Նրան* նետացրին մղկտալով»:

Վիճակի գործիականով են կազմված տեղով կրակ դառնալ, ամոթով մնալ, ամոթով թողնել *և այլ դարձվածքներ*։

«Թնկուզ իր տեղով *հենց կրակ* դառնա» (*ՀԹ, 2, 99*)։ «Կնիկ տեղովս *քեզ նման* չէի տնտնում» (*Շիրվ., 8, 16*)։)։ *«Այդ պարոնիկ լակոտները* ամոթով պիտի թողնեին ինձ» (*Ր, 7, 503*)։

Հիմունքի գործիական.— *Լրացումը ցույց է տալիս այն առարկան, որի հիման վրա կատարվում է գործողությունը, արվում է որևէ ենթադրություն, եզրակացություն*[1]։ *Եթե պատճառը այս կամ այն չափով ակտիվ ներգործություն է ունենում օբյեկտիվորեն գործողության կատարման համար, ապա հիմունքը գործողության կատարողի համար սոսկ առարկայական, իրավական հիմք է ծառայում։ Այսպես, եթե համեմատենք «Պետրոսի* կարծիքով *անձրև* չի գա» *և «Քամու և ջրի* ազդեցությամբ *ժայռերը* փոքրանում են» *նախադասությունների* կարծիքով *և* ազդեցությամբ *գործիականները, ապա հասկանալի կլինի, որ առաջինը սոսկ ենթադրության հիմքն է, իսկ երկրորդը՝ գործողության պատճառը։*

Հիմունքի գործիական դառնում են՝ օրենք, հրաման, որոշում, կարծիք, խոսք, վկայություն, առաջարկ, հասկացողություն,

---

[1] *Հիմունքը պատճառից որոշակիորեն տարբերվում է, ինչպես այդ իրավացիորեն դիտված է Վ. Առաքելյանի կողմից։ (Տե՛ս նշվ. աշխատ., էջ 152)։*

ըմբռնում, իրավունք, թույլտվություն, ցուցում, ցուցմունք, նշան, փորձ *և այլ բառեր։ Այսպիսի լրացում կարող են ստանալ իմաստային բազմազան խմբերի բայեր։*

«*Նա* ապստամբել է *Սևադայի* խորհրդով» (*Մուր., 4, 108*)։ «*Կաթողիկոսի* կարծիքով *թշնամին* չէր կարող մտնել *այդ անշուք վայրերին*» (*Մուր., 4, 201*)։ «*Սպենդիարովի գեղեցիկ* առաջարկով ծրագրվեց *մի գործ*» (*Իս., 4, 123*)։ «*Հայոց դպրոցները* փակվել են *ռուս թագավորի* հրամանով» (*ՍՁ, 3, 66*)։ «*Անհայտ օրենքի չգրված* կետով *Լոկ ձայնի համար—* Համարվեց *նա սանի*» (*ՊՍԱՁ, 23*)։ «*Մելիքի* նշանով նստեց *միայն ավագ որդին*» (*ՍԽՄԽ, 48*)։

Սակայն հիշյալ գոյականները կարող են նաև այլ իմաստներով գործածվել։ Այսպես, օրենք *բառը կարող է ձևի, համապատասխանության իմաստներ արտահայտել հետևյալ նախադասության մեջ.* «*Դու էլ* ես ապրել *նախնյաց* օրենքով» (*ՀԹ, 2, 30*)։

Ասացական բայերի անորոշ դերբայի գործիականը ևս կարող է հիմունքի իմաստով գործածվել։

«*Իրիցկնոջ* ասելով *փեսային* բռնել էին *դպրոց պահելու համար*» (*ՍՁ, 3, 79*)։

Երբեմն գործիականը կարող է մեկնաբանվել հիմունքի և պատճառի իմաստներով հավասարապես։ «*Նրանց* թելադրությամբ էին *գավառներից բազմաթիվ պատգամավորներ* եկել» (*Շիրվ., 8, 177*)։ «*Զարենցի* խնդրանքով նվագում էր *Կոմիտասի երգերից*» (*ԳՄԼՁ, 461*)։

Մի շարք կապակցություններում էլ գործիականը կարող է մեկնաբանվել և՛ հիմունքի, և՛ համապատասխանության իմաստներով։

«*Չպետք է ծույլերի* հոգեբանությամբ *հույսներս* դնենք *լոկ արտաքին հրաշքների վրա*» (*ՎՏ, 2, 316*)։ «*Նրա բերդն էլ՝ ուրարտացիների որոտի և պատերազմի աստծու* անունով կոչվել է Թեյշեբաինի» (*ՀՄՀԵ, 72*)։

Կարող են համատեղվել նաև հիմունքի և ձևի իմաստները։ Օրինակ՝ «*Քու* խոսքովն են *ողջ* նստում-վեր կենում» (*ՀԹ, 1, 250*)։

Անուն *բառի գործիականը կարող է համատեղել հիմունքի և նպատակի իմաստները։*

«Խմբվում ենք *այս տոնի համար Մենք գիտության* անունով» (*ՀՀ, 129*)։ «*Կհամոզես, որ երեխաների* անունով *մի խոշոր գումար* մտցնի *Պետերբուրգի բանկերից մեկը*» (*Շիրվ., 3, 302*)։

Պատճառի գործիական.— *Բայի լրացումը ցույց է տալիս այն*

առարկան, որը պատճառ է դառնում գործողության կատարման համար։ Պատճառի գործիականը որոշակիորեն տարբերվում է հիմունքի գործիականից։ Վ. Առաքելյանը նշում է, որ ժամանակակից հայերենում բացահայտ պատճառի գործիականով դրվում է պատճառով *բառը, որը կապական նշանակություն է ստացել, ինչպես և* առիթով, պատրվակով, շարժառիթով *բառերը*[1]*։ Անշուշտ ճիշտ է այս դիտողությունը։ Սակայն պետք է նկատի ունենալ, որ այդ բառերը արդեն կապական բառ են։*

Այս իմաստով կարող են գործածվել մի շարք վերացական գոյականներ, իսկ թանձրացական գոյականը նման իմաստ չի արտահայտում։ Պատճառի գործիական դարձող գոյականներից կարելի է նշել՝ ազդեցություն, տպավորություն, լավատեսություն, հոռետեսություն, բերում *և այլն։*

«*Սակայն ոչ մեկի, ոչ էլ մյուսի* մեղքով կատարվեց *անսպասելին*» (*ՍԽՄԽ, 68*)։ «*Այս երեկո, մի քանի ժամ առաջ տեսած պատկերի* տպավորությամբ, *նրա ներքին աշխարհում* կատարվում էր *տարօրինակ հեղաշրջում*» (*Շիրվ., 3, 164*)։ «*Սմբատի զգացմունքները շուտով սկսեցին* բթանալ *թմրեցուցիչ գարեջրի* ազդեցությամբ» (*Շիրվ., 3, 263*)։

Պատճառի իմաստը ավելի շատ արտահայտվում է անորոշ դերբայի գործիականով։ Այս դեպքում սահմանափակում չկա ոչ լրացման, ոչ էլ լրացյալի տեսակետից։

«*Իշխանը սաստիկ* վշտացավ *այդ զույժն* առնելով» (*Մուր., 4, 411*)։ «*Նա չարաչար* տանջվում էր *տիկնոջ տխուր վիճակը* նկատելով, *նրա դալկահար դեմքը, նրա լացող աչքերը* երևակայելով» (*Մուր., 4, 417*)։ «*Ոչ դու* կհոգնես կարդալով, *ոչ էլ մենք՝* լսելով» (*ՆԴ, 1, 109*)։ «*Ըմբոստացած, խելագարված,* չտանելով *հին կյանքը էլ՝ Անծիր դաշտում այդ հավաքված՝ նրանք կռվի* էին ելել» (*Զ, 250*)։

Նպատակի գործիական.— *Լրացումը այս դեպքում ցույց է տալիս գործողության կատարման նպատակը։ Նպատակի գործիականը որոշակիորեն տարբերվում է նպատակի տրականից, որը ժամանակակից հայերենում նպատակի իմաստի դրսևորման հիմնական միջոցն է։ Եթե նպատակի տրականով արտահայտվում է այն առարկան, որը գործողության վերջնական նպատակն է, որի իրագործումը ենթադրելի է, ապա նպատակի գործիականով արտահայտված առարկան առկա է գործողության հետ, թեև նրա*

[1] Վ. Առաքելյան, *նշվ. աշխատ., էջ 151*։

իրագործումը չի արտահայտվում։ Այսպես, «Գնացինք գործի» և «Գնացինք այդ գործով» նախադասություններից առաջինի մեջ գործի նպատակի իմաստ է արտահայտում տրականով։ Գործ առարկան գործողության ընթացքում դեռևս առկա չէ, այն նպատակադրվում է։ Մինչդեռ երկրորդ նախադասության մեջ գործը կա գնալու ընթացքում։

Պետք է դիտել, որ նպատակի իմաստը գործիականի համար բնորոշ, հիմնական իմաստ չէ. այն առաջացել է առարկայական միասնության գործիականի հիման վրա[1]։

Նկատելի է, որ նպատակի գործիականը հանդիպում է ավելի շատ բարբառային ազդեցություն կրած հեղինակների ստեղծագործություններում։

Նպատակի գործիական դառնում են սահմանափակ թվով վերբացական գոյականներ, որոնք գործողության անուն են։ Լրացում ստանում են շարժում ցույց տվող բայերը, ինչպես՝ գալ, գնալ, ուղարկել, առաքել, վերադառնալ, շրջել և այլն։

«Գնացինք թավադի ոտը խնդրելով» (ՀԹ, 2, 40)։ «Ինչ-որ միսիայով է շրջում» (Իս., 3, 496)։ «Տարին մի քանի անգամ այդ ընկերության գործերով գալիս էր քաղաք» (ՆԴ, 1, 99)։ «Թագավորը նրան մի հանձնարարությունով ուղարկեց Պերոժ քաղաքը» (ՂԱ, 119)։

Նպատակի իմաստ է արտահայտվում նաև անորոշ դերբայի գործիականով, թեև ոչ շատ հստակ։ Վերջինս ավելի շատ կատարում է ձևի, պատճառի պարագայի դեր, իսկ նպատակի իմաստը բավականաչափ թույլ է զգացվում։ Այդպիսի դեպքում անորոշ դերբայը որոշակիորեն նպատակ արտահայտելու համար դրվում է տրականով։

«Նա անհանգիստ անցուդարձ էր անում՝ աշխատելով խույս տալ ծանոթներից» (Շիրվ., 3, 165)։ «Իր զինվորներից մեկին ուղարկեց Տաթև՝ Հովակիմ եպիսկոպոսին խնդրելով, որ մի ձեռներեց դպիր ուղարկի» (ՍԽՄԽ, 146)։

Մի շարք կապակցություններում գործիականը կարող է մեկնաբանվել և՛ նպատակի, և՛ պատճառի իմաստներով։

«Մոսկվայում, իր մայրենի շրջանում, նրանք կենակցում էին մի կերպ զավակների սիրո անունով» (Շիրվ., 3, 298)։ «Ինչ-որ գործով նա պետք է բացակայի քաղաքից մի ամսով» (ԳՄԼՉ, 560)։

---

[1] Տե՛ս «Միասնության գործիական» հատվածը։

Կարող են համատեղվել նպատակի, ձևի և սահմանափակման իմաստները։ Օրինակ՝ «Ես հրավիրված էի քարտուղարի պաշտոնով» (Շիրվ., 8, 148)։

Հետևանքի գործիական.— Բայի լրացման դերում հանդես եկող անորոշ դերբայի գործիականը (սովորաբար տրոհված) ցույց է տալիս լրացյալի գործողության հետևանքը։ Իբրև կանոն, անորոշ դերբայի գործիականը միայնակ չի հանդես գալիս, այլ լրացումներով (դերբայական դարձված է կազմում)։ Այսպիսի կապակցվածքների գործածությունը բավականաչափ տարածված է։ Օրինակներ՝ «Այն էլ չէր հիշում, թե երբ էր մեռել կինը, թողնելով իր մի քանի զավակներից միայն մի աղջիկ» (ՆԴ, 1, 4)։ «Տեղտեղ ճերմակ ծեփը թափվել էր՝ երևցնելով չթրծած կարմրավուն աղյուսները» (ՋԴՄՆ, 2, 6)։

Ընդհանրական գործիական.— Ընդհանրական գործիականը ցույց է տալիս գործողության ընդհանուր հանգամանքը, որը որոշակի մեկ իմաստ չունի։ Լրացումը կարող է մեկնաբանվել տարբեր իմաստներով։ Այսպես, երբ ասում ենք «Քամին գնալով սաստկանում է», ապա գնալով գործիականը հնարավոր չէ մեկնաբանել որևէ առանձին իմաստով։ Այստեղ առկա է և՛ ձևի, և՛ ժամանակի, և՛ պատճառի իմաստ, դարձյալ ուրիշ ինչ-որ մի բան, որը չի բնորոշվում։ Ուստի և այս գործիականն անվանում ենք ընդհանրական (կան պարագայի դեր կատարող ընդհանրական մակբայներ ևս)[1]։

Պետք է ասել, որ ընդհանրական գործիականը ինչ-որ չափով մոտ է այն գործիականներին, որոնք մեկից ավելի իմաստի համատեղում ունեն։ Սակայն այդ երկուսը չեն նույնանում այն պատճառով, որ վերջինները թեև կարող են մեկնաբանվել այս կամ այն իմաստով, բայց որևէ իմաստով մեկնաբանվելու դեպքում այլևս լրացուցիչ երանգ չունեն. դրանք, այսպես ասած, առանց մնացորդի են արտահայտում համապատասխան իմաստը։ Ասենք ձևի և ժամանակի, ձևի և պատճառի իմաստների համատեղում ունի որևէ գործիական ։Այդ երկու իմաստներից զատ նա այլ բան չի կարող արտահայտել։ Մինչդեռ ընդհանրական գոր-

---

1 Այն դիտել են Ս. Աբրահամյանը և Ա. Քյուրքչյանը իրարից անկախ։ Վերջինս ընդհանրական մակբայն առանձնացրել է իր «Հայերենի մակբայները» թեկնածուական դիսերտացիայում, որի մի մասը տպագրվել է իբրև հոդված («Պատմա-բանասիրական հանդես», 1961, № 3—4)։ Ս. Աբրահամյանը ընդհանրական մակբայը քննել է «Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը» աշխատության մեջ (1959, էջ 65)։

ծիականը լրացուցիչ ինչ-որ իմաստ ունի, որով և այն բնութագրվում է իբրև այդպիսին։

Ընդհանրական գործիականն արտահայտվում է անորոշ դերբայով։

«Երկունքի ցավերն են, որ գնալով *սոսկալի տանջանքներ* են պատճառում» *(ՆԴ, 1, 94)։ «Իսկ քամին* գնալով *ավելի ու ավելի* է սաստկանում» *(ՆԴ, 1, 94)։*

Դիտողություններ գործիական լրացումով կազմվող կապակցությունների վերաբերյալ

1. Նկատելի է, որ ժամանակի ընթացքում գործիականի մի քանի ձևեր վերածվել և վերածվում են կապի։ Այս երևույթը տեղի է ունենում գործիականի առարկայական իմաստի վերացման և միայն պարագայական իմաստի ամրապնդման շնորհիվ։ Եթե տվյալ ձևը դադարում է առարկայական նշանակություն արտահայտելուց, ապա գործածվում է սոսկ պարագայական այս կամ այն իմաստով, իսկ հետո դրա հիման վրա այն վերածվում է կապի։ Այս պրոցեսի հետևանքով այժմ կապի են վերածվել կերպով, ձևով, պատճառով, նպատակով, առիթով, կողմով, ուղղությամբ, ձեռքով, միջոցով, իմաստով *և այլն։ Սրանցից մի քանիսը կարող են ունենալ և՛ բուն, և՛ կապական կիրառություններ։ Դրանց բուն կիրառությունը պայմանավորված է մի կողմից դրանց մի մասի իմաստային տարբերությամբ, մյուս կողմից՝ գոյականական խոսքի մասային հատկանիշի պահպանմամբ։ Ահա այս ձևերի բուն կիրառության օրինակներ. «Այդ մարմինները* տարբերվում են *իրենց արտաքին* ձևով»: *«Նրանք* գժտվեցին *չնչին* պատճառով»: *«Նա այցելեց բարի* նպատակով»: *«Ի՞նչ* առիթով են նավարկել»: *«Դանակի սուր* կողմով կտրեց»: *«Բոլորս* նայում էինք *նրա մատի* ուղղությամբ» *(ՍԶ, 3, 310)։ «Նամակը* գրել է *իր* ձեռքով»: *«Ազնիվ* միջոցով է վաստակել»[1]:

Իսկ հետևյալ նախադասություններում այդ բառերը գործածված են կապի նշանակությամբ։ «Նախանձոտ հակառակորդները սկսում են անարգել իրան, վիրավորելով *յուր գլխավորական հպարտությունը յուր իսկ* ստորադրյալների ձեռքով» *(Մուր., 4, 14)։ «Չէիր կամենալ մի* կնոջ պատճառով *հայրենյաց դավաճանի անուն* վաստակել» *(Մուր., 4, 163)։* «Հրաժեշտիս առիթով *Փարիզի հայ մտավորականների մի խումբ ինձ* պատվեց *մի ճաշկերույթով»*

---

[1] *«Գարնանը կարճ* միջոցով *այստեղ երկիրը ծածկվում է ցանցառ խոտերով» (Շիրվ., 3, 118) նախադասության մեջ* միջոցով *ժամանակի իմաստ ունի։*

(Շիրվ., 8, 456)։ «Նա թշնամու ձևով է վարվում հետս»։ «Նրան ուղարկեցի օգնելու նպատակով»: «Ինձ լուր է ուղարկել երեխայի միջոցով»:

2. Ոճական նկատառումներով ընդունված է նույն հոլովաձևը շատ չգործածել նույն նախադասության մեջ, իհարկե, եթե նույն ձևի կրկնությունը արտահայտչական նպատակ չունի։ Առավել ևս սա վերաբերում է գործիականին, որի կրկնությունը նույն նախադասության մեջ տգեղացնում է խոսքը։ Այսպես, գեղեցիկ չի հնչի «Գիշերով երեք-չորս հոգով զինված հրացաններով լեռնային ճանապարհներով գնում էին որսի» նախադասությունը, որտեղ 4 անգամ գործածված է գործիականը՝ թեև տարբեր իմաստներով։ Այդ պատճառով էլ սովորաբար խուսափում են նույն ձևի շատ գործածությունից և աշխատում են տվյալ իմաստի արտահայտման ուրիշ ձևեր ընտրել։

Սա չի վերաբերում նույն իմաստն ունեցող ձևի բազմակի գործածությանը, որը սահմանափակում չունի։ Օրինակ՝ «Սրանք գալիս էին իրենց ընտանիքներով, մատաղացու ոչխարներով ու արջառներով, վանքի համար ծանրագին նվերներով» (ՍխՄխ, 157)։ Մինչդեռ ոչ նույնիմաստ գործիականների կուտակումը ծանրացնում է ոճը։ Սակայն գեղարվեստական երկերում, մանավորապես չափածոյի մեջ, գրողի վարպետության շնորհիվ նույնիսկ նույն բայի հետ կարող են գործածվել տարբեր իմաստ ունեցող գործիականներ՝ հանգավորման, չափի նպատակով՝ առանց ոճի խաթարման։

«Իշխում էր ահեղ, ու նրա օրով, Հավքն էլ չէր անցնում Սասմա սարերով» (ՀԹ, 2, 97)։ «Ու բովանդակ էս աշխարհքում ամեն մինը իր կյանքով Ծնվում, մեռնում փոփոխվում է մի ընդհանուր օրենքով» (ՀԹ, 2, 150)։ «Ընկերներիդ հետ թռաք ու հասաք Նժույգ ձիերով, խրոխտ լեռներով» (Իս., 1 ,378)։ «Շրջենք երկուսով ծաղկած արոտով» (Իս., 1, 378)։ «Քայլում էր հանդիսավոր, նիրհած գիշերով, հնչուն զանգերի անուշ ղողանջով» (Իս., 2, 46)։ «Տաղով եկավ, Ախով գնաց Սայաթ-Նովան, Երգով եկավ, Վերքով գնաց Սայաթ-Նովան, Սիրով եկավ, Սրով գնաց Սայաթ-Նովան, Սիրով մնաց Սայաթ-Նովան» (ՀԹ, 1, 124)։ «Հորս կնունքով, մորս ծնունդով, վեր կացանք մի օր հինգ ու վեց հոգով— բրով-բվանքով որսի գնացինք» (ՀԹ, 1, 478)։

Նույն բայի լրացման դերում բազմաթիվ գործիականների առկայությունը արձակ ստեղծագործության մեջ հանձնարարելի չէ, մանավանդ երբ դրանք կապվում են բաղհյուսական շաղկապներով։

«*Գրբացի* հրամանով թոկով կապեցին *նրա ձեռքերը հետևից*» *(ՆԴ, 1, 14)*: «*Նա սկսեց դարձյալ* պարապել *տնային* գործերով *նախկին* եռանդով» *(Շիրվ., 3, 335)*: «*Սպարապետը փառավոր* պատրաստություններով *և սովոր ազատագունդ* համհարզներով ճանապարհ ընկավ *դեպի Բյուզանդիա*» *(Ր, 7, 396)*:

Երբեմն գրողը նույն բայի մոտ գործածում է գործիականի մի քանի ձևեր՝ դրանք կամ հակադրելով, կամ մեկը մյուսի իմաստի խորացման, ճշտման, հարստացման նպատակով:

«*Ինչ որ գրել է նա,* գրել է *սրտի* ցավով, *սրտի* արյունով, համոզմունքով, *վառ* հավատով» *(Իս., 4, 52)*: «*Բանաստեղծությունը* չի գրվի հանգով *ու* վանկով, *այլ* սրտով *ու* զգացմունքով» *(Իս., 4, 72)*:

Երբեմն, սակայն, նույնիմաստ երկու գործիական նույն բայի մոտ բացառում են իրար: Օրինակ՝ «Բլբուլի երգով Ձե՞ս հարբել գինով» *(Իս., 2, 38)*: *Այս նախադասության մեջ* հարբել *բայի երկու լրացումներից մեկն ավելորդ է, քանի որ երկուսն էլ ունեն նյութի իմաստ:*

3. Թեև սակավ, բայց կան որոշ բայերի սխալ խնդրառության օրինակներ: Որոշ հեղինակներ սովորաբար ճիշտ գործածելով օգտվել, շնչել, զեղել, շնորհավորել *և նման բայերի խնդիրները, երբեմն թույլ են տալիս այս բայերի ոչ հայերեն խնդրառություն:*

«*Թող ուրեմն, որ ես* օգտվեմ *նրա* հարստությունով» *(Շիրվ., 3, 48)*: «*Չէր ցանկանում* օգտվել *ճաշարանի* պարագաներով» *(Շիրվ., 8, 108)*: «Օգտվում էին վայրկյանով» *(ՎՓ, 4, 635)*: «*Հողի կյանքը* զեղում է առողջությամբ, վայելքով ու բերկրանքով» *(ԴԴՎ, 679)*: «*Ցեմենտե պատերը տհաճ* սառնությամբ են շնչում» *(ԲՀՍՉ, 96)*: «Շնորհավորեցինք *այդ վիթխարի մարդուն իր նոր* հագուստներով» *(ՍՉ, 2, 21)*:

Գործիականի այս սխալ կիրառությունից պետք է տարբերել այն դեպքերը, երբ գործիականն ստանձնում է այլ հոլովների պաշտոն՝ որոշ չափով նաև իր իմաստից ելնելով: Այս դեպքում գործիականի կիրառությունը երկակի բացատրություն կարող է ստանալ. այն կամ իր իմաստից բխող կիրառություն ունի, կամ այլ հոլովի փոխարեն է գործածվել: Այսպես, «Մայր աթոռն էր սկսել անհանգստանալ *նրա* ներկայությամբ» *(ՋԴՄՆ, 2, 348)*: «*Լուսամուտների մեջ, մեծ* ծաղկամաններով, դրված էին *ամենաթարմ փունջերը*» *(Ր, 7, 88)* *նախադասություններից առաջինում* ներկայությամբ *գործիականն ունի պատճառի ներգործության բա-*

ցառականի իմաստ, թեև այն կարող է մեկնաբանվել նաև ժամանակի իմաստով (որը, սակայն, այս նախադասության մեջ այդպիսին չէ)։ Այդ կապակցությունն ավելի ճիշտ կլիներ կազմել բացառականով (անհանգստանալ նրա ներկայությունից), որը հեղինակի մտքից կբխեր։ Երկրորդ նախադասության մեջ ծաղկամաններով գործիականը տեղի ներգոյականի իմաստ ունի, թեև այդ նախադասության մեջ առկա է ձևի իմաստը։ Համենայն դեպս, այս կապակցությունները այնպիսի սխալ չեն, ինչպիսին վերը նշվածները։

Բոլորովին այլ է գործիականի վերապրուկային կիրառությունը։ Րաֆֆին դատապարտել բայի լրացումը մի տեղ դնում է գործիականով՝ գրաբարյան խնդրառության հետևողությամբ։ «Դուք այդ սայլակների վրա կդատապարտվեք չարաչար մահվամբ» (Ր, 7, 346)։ Արդի հայերենում դատապարտ(վ)ել բայը տրականով է լրացում ստանում (դատապարտ(վ)ել մահվան):

4. Գրաբարի գործիական որոշ ձևեր ժամանակակից հայերենում վերածվել են մակբայի կամ կապի՝ իրենց ձևը պահպանելով հանդերձ, ինչպես՝ մասամբ, շնորհիվ և այլն։ Սակայն մաս, շնորհ(ք) բառերի գործիականներն այժմ գործածվում են իբրև դոյականներ։ Հետևաբար ճիշտ չէ մասով, շնորհով ձևերը գործածել համապատասխանաբար մակբայի և կապի իմաստներով։ «Աոևտրականները մեծ մասով փակել էին իրենց խանութները» (ՍԶ, 8, 62)։ «Ես մեծացել, կյանք եմ առել, նրա շնորհով մարդ եմ դառել» (Ծ. 104)։

5. Հազվադեպ հանդիպում են գործիականի և լրացյալի անկապակցության օրինակներ, որոնցում կա՛մ գործիականը լրացյալի բայի խնդրառական հատկությամբ չի պայմանավորված, կա՛մ լրացյալ չունի։ «Դրանց հետ ունեին բազմաթիվ զամփռներ, բազեներ... մի խոսքով որսի ամեն պատրաստությունով» (ՂԱ, 232)։ «Իմ սեղանի վրա մի եղեգնյա կողովով— Ել մի կապույտ ծրար մի անծանոթ մարդուց... Ո՞վ է արդյոք սրտի թրթիռով ու դողով Աշունն ինձ ուղարկել իր հեռավոր այգուց» (ՀՍՀԵՄ, 223)։

Հաճախ են պատահում անորոշ դերբայի գործիականի և լրացյալ բայի սխալ կապակցության օրինակներ։ Հայտնի է, որ անորոշ դերբայի գործիականով կազմված դերբայական դարձվածի ենթական պետք է նույնը լինի նախադասության ենթակայի հետ, ինչպես՝ «Ընկերոջը տեսնելով՝ Պետրոսն ուրախացավ»։ Այստեղ ընկերոջը տեսնելով դերբայական դարձվածի ենթական Պետրոս բառն է (զեղչված է), որը նաև նախադասության ենթական է։

Երբ դերբայական դարձվածի և նախադասության բուն ենթական չեն համընկնում, ստացվում է անկապակցություն, ընդ որում անորոշ դերբայի գործիականը այլևս չի կարող դիտվել նախադասության ստորոգյալի հետ կապակցվող լրացում:

«*Մամիկոնյանների գյուղացին* լինելով, *իբրև մի շնորհալի և մաքուր տղա, նրան* բերեցին *ամրոցը*» *(Ր, 7, 30)*: «*Բայց ընկղմըված* լինելով *մի խոր մտածության մեջ, թեյը նրա աչքին* չէր երեվում» *(ՂԱ, 496)*: «*Այս ամենը* մտաբերելով՝ *պարապահի խիղճը* տանջում էր» *(ՍխՄխ, 68)*:

6. *Սովորաբար գործիականը ստորոգելիական վերադիր չի լինում, սակայն երբ նրա բուն լրացյալ բայը զեղչված է, այս այն կարող է ստանձնել այդ դերը: Այդ դերը կատարող գործիականը տարբեր իմաստ կարող է արտահայտել տարբեր նախադասություններում (տեղի, ժամանակի, ձևի, միասնության և այլն):*

«Հավատով *էր մեր ճակատագրի հանդեպ*» *(Իս., 4, 67)*: «*Ճանապարհս անտառի* միջովն *էր*» *(ՆԴ, 2, 476)*: «*Բոլորը* զենքերով *էին և ձմեռային* հագուստներով» *(ՍԶ, 8, 200)*: «*Ոչ մեկը հոր* սրտովը *չէր*» *(ՍխՄխ, 589)*: «*Մեկ նա* մորուքով *էր, մեկ առանց մորուքի*» *(ՀՄՀե, 28)*: «*Նրա ղեկավարությունն էլ* օրինակով *է, քան թե* ցուցմունքներով» *(ՀՄՀե, 157)*:

Դիտողություններ գործիականով կազմվող կապակցությունների շարադասության վերաբերյալ.— *1. Սովորական շարադասությամբ գործիականով դրված խնդիրները նախադաս են լինում, իսկ շրջուն շարադասության դեպքում կարող են ետադաս լինել: Օրինակներ՝* «*Նա* հարբեց գինով»: «Վերադարձավ ընկերներով»: «*Հողը* փորում է բրիչով»:

Խնդրային գործիականը սովորաբար չի տրոհվում լրացյալից: Սակայն երբեմն պատահում են տրոհման դեպքեր:

«*Եվ երախտագետ Երևանը,* սերունդներով, *հարգալից* գլուխ պիտի խոնարհեն *մեծ արվեստագետի, մեծ հայրենասերի հիշատակի առաջ*» *(Իս., 4, 145)*: «*Այսօր միանգամայն* բորբոքեց *նա Անուշի նախանձը՝ իր ազատ* վարք ու բարքով» *(Շիրվ, 3, 128)*:

2. *Գործիականով դրված պարագաները ուղիղ շարադասությամբ նախադաս են: Սակայն կան ետադաս կիրառության դեպքեր էլ:* «*Նա* ընկերացավ *մեզ* սիրով»: «Ընդունեցինք *նրան* ցերեկով»:

Լրացում ունեցող պարագաները կարող են նաև տրոհվել:

«*Սև նավթը, գազի ուժգին* զորությամբ, դուրս մղվելով *երկրի խորքից, սլանում էր վեր*» *(Շիրվ., 3, 182)*: «*Զանազան գաղտնի*

անցքեր, ստորերկրյա ճանապարհով, իջնում էին ամրոցի բարձրությունից» (Ր, 7, 24)։ «Լեռնանցքով գնում էին մի երեսունի չափ զինված հեծյալներ, երկու զլխավորի առաջնորդությամբ» (ԴԴՎ, 17)։

Անորոշ դերբայի գործիականը բայի լրացման դերում կարող է հանդես գալ և՛ չտրոհված, և՛ տրոհված ձևով։ Հետևյալ օրինակներում գործիականը տրոհված չէ։

«Լույս տալով եմ սպառվել» (ՀԹ, 1, 150)։ «Մռնչալով ելավ տեղից» (ՀԹ, 2, 128)։ «Սպանեց ծեծելով» (ՆԴ, 1, 22)։ «Արագն եկավ լափին տալով» (ՀՀ, 81)։

Սակայն շատ կապակցություններում անորոշ դերբայի պարագայական գործիականը տրոհված է հանդես գալիս։

«Նրանք են, որ երանգավորում են շուկան՝ տալով նրան տոնական տեսք» (Շիրվ. 8, 319)։ «Հեռանում է՝ fսվելով պատին» (Չ, 365)։ «Սուլելով ու թառանչելով, որպես մի կենդանի, մի հրեշ, անցավ շոգեկառքը, հետևից fաշելով նավթային վագոնների երկայն շարքը» (Շիրվ., 3, 146)։ «Իր մահաբեր թույնը թափելով՝ սողում էր դառնաշունչ քամին» (ՀԹ, 1, 330)։

3. Շարադասության ազատ լինելու պատճառով բազմաթիվ նախադասություններում գործիականը կարող է համարվել և՛ բայի, և՛ մերձավոր գոյականի լրացում։ Երկակի մեկնաբանություն ունեցող ձևերը բայի լրացում դիտվելիս տարբեր իմաստներ կարող են արտահայտել, մինչդեռ գոյականի լրացում դիտվելիս դրանք միայն որոշիչ են։

«Պատերից յուրաքանչյուրը բաժանվում էր չորս կամարամասի, հնգական զույգ ունեայուններով, որոնք հաստատված էին զառիզարդ պատվանդանների վրա» (Մուր., 4, 27)։ «Քառսուն բեռնով ոսկի հանեմ» (ՀԹ, 2, 112)։ «Եվ ծավալվում է մռայլ հոգուս մեջ լուռ անապատը խոր զաղտնիքներով» (Իս., 1, 84)։ «Եկեք բաղով փլավ անենք» (ՀԹ, 1, 479)։ «Թասով ջուրը բերին» (ՆԴ, 1, 15)։ «Ո՞վ կհասկանա նրա կյանքի ամբողջ դրաման՝ իր բոլոր նրբություններով» (Շիրվ., 3, 329)։ «Հարկ ու պատշաճ կլինեն խնջույքներ սարքել նվագներով ու պարերով» (ԴԴՎ, 652)։

Ե. ԲԱՅԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ

Ժամանակակից հայերենում ներգոյական հոլովը առաջին հերթին բայի լրացում է լինում։ Կարելի է ասել, որ մյուս թեք հոլովների շարքում սա գրեթե միակն է, որի գործածությունը գոյա-

կանի լրացման դերում սահմանափակված է միայն անվանողական կապակցություններով[1]։ Ներգոյական հոլովաձևը քիչ գործածական է նաև ածականի լրացման դերում[2]։

Ներգոյականը, իբրև պարունակության տեղի հոլովաձև, կապվում է գործողության հետ, քանի որ տեղը, որպես գործողության բնորոշ հանգամանք, դրսևորվում է հիմնականում ներգոյական հոլովաձևով։ Սակայն ժամանակակից հայերենում այս հոլովաձևի ոչ համայնապարփակ լինելու պատճառով բազմաթիվ գոյականներ (և առհասարակ հոլովվող բառեր) տեղի պարագայական իմաստի դրսևորման այլ ձևեր են ունենում, մի հանգամանք, որն ազդում է այս հոլովաձևի գործածության սահմանների ընդլայնման վրա։ Շատ դեպքերում տարածական հարաբերությունը ներգոյականի փոխարեն արտահայտվում է տրական, հայցական հոլովներով։ Սակայն ներգոյականի գործածությունը սահմանափակվում է ավելի շատ մեջ կապի կիրառական ոլորտների ընդարձակումով, մի երևույթ, որը առավել ուժով ի հայտ է գալիս նաև այն պատճառով, որ գրաբարում և արևմտահայերենում ներգոյական հոլովաձևի բացակայության հետևանքով դրանց ազդեցությամբ բազմաթիվ կազմությունների գործածությունը ժամանակակից հայերենում խիստ զգալի է։ Պարունակության տեղի իմաստի դրսևորման արևմտահայերենի կառուցվածքային տիպերի ազդեցության շրջանակներն առավել ցայտունությամբ երևան են գալիս գեղարվեստական գրականության մեջ, մանավորապես այնպիսի գրողների ստեղծագործություններում, որոնց մայրենի բարբառը դրանց կնիքն է կրում։ Բայց՝ տրականով և հայցականով լրացումների քննության առնչությամբ արդեն նշել ենք, որ արևմտահայ բարբառների ներկայացուցիչ գրողների և արևմտահայ գործիչների ստեղծագործությունների ազդեցությամբ հաճախ սովորական են այն կազմությունները, որոնցում տրականն ու հայցականը գործածված են ներգոյականի իմաստով։

Ինչպես դասական (XIX դարի երկրորդ կեսի և XX դարի սկզբի), այնպես էլ սովետահայ գրողների ստեղծագործությունների քննությունը երևան է հանում նաև հակառակ երևույթը։ Բանն այն է, որ որոշ գրողների երկերում առկա է ներգոյականի գործածությունը նաև տրականի ու հայցականի իմաստներով։ Այս երևույթն առանձնապես նկատվում է Րաֆֆու, Մուրացանի և այլ

---

1 Տե՛ս «Գոյականի լրացումները մյուս թեք հոլովներով» հատվածը։

2 Տե՛ս «Ածականի բառակապակցությունները» գլուխը։

գրողների ստեղծագործություններում։ Դա բացատրվում է նրանով, որ գրական լեզվի զարգացման վաղ շրջանում ներգոյականը դիտվում էր տարածական իմաստի միակ հոլովաձև, որին հատկացնում էին արդի տրականի և դադարման հայցականի շատ իմաստներ։ Այս երևույթը վկայում է, որ ներգոյականի հետ կապվում է տարածական-տեղի իմաստն առհասարակ, և ներգոյականի ձևը ձգտում է համայնապարփակ դառնալու։

Սակայն դեռևս ներգոյական հոլովաձևը տեղի-տարածական իմաստի դրսևորման միակ միջոցը չէ, և կան իմաստային շարահյուսական կիրառությունների որոշակի ոլորտներ, որոնցում սահմանափակվում են համապատասխանաբար տեղի տրականը, հայցականը և ներգոյականը։ Այս երևույթը դիտված է Մ. Աբեղյանի և Վ. Առաքելյանի կողմից[1]։ Վ. Առաքելյանը մանրամասնորեն քննարկում է այն բառերն ու բառախմբերը, որոնք զուրկ են ներգոյական հոլովաձևերից և որոնց դեպքում տեղի տարածական հարաբերությունները արտահայտվում են այլ միջոցներով։ Ուստի մերժելի է ներգոյական չունեցող բառերի ներգոյական ձևերի գործածությունը, որը հանդիպում է Րաֆֆու, Ծատուրյանի և այլ գրողների երկերում։

«Լինի դա **տնում**, փողոցի **միջում**, Կաֆե-շանտանում, թե խոհանոցում» (Ծ, 238)։ «Մեր **տանում** երբեք անկողին չեմ ունեցել» (Ր, 4, 333)։ «Պիտի այսպես **տնում** էլի նստած մնա՞» (Զ, 344)։ «Հետազոտել է հայտնի **երկսիրուբենում**» (ՀՀ, 251)։ «**Բեզանում** արյունը դեռ եփ է գալիս» (Ր, 2, 553)։

Հայ քերականագիտության մեջ ներգոյական հոլովին հատկացվել են տեղի, ժամանակի, սահմանափակման, մասամբ և ժամանակային չափի իմաստները։ Անշուշտ այս իմաստներն ավելի բնորոշ են ներգոյական հոլովին, սակայն այս հոլովն ունի նաև ուրիշ իմաստներ, որոնք թեև շատ կապակցություններում չեն հանդես գալիս, սակայն առկա են։

Տեղի ներգոյականով կապակցություններ.— Ինչպես հայտնի է, տեղի ներգոյականը ցույց է տալիս պարունակություն—տեղը, այն տեղը, որը հակադրվում է մակերեսային, արտաքին տեղին։ Այս դեպքում ներգոյականը հակադիր է տրականին և **վրա** կապին։ Պարունակություն—տեղի ներգոյականով լրացումներ են ստանում դադարման բայերը։ Դրանցից կարելի է նշել՝ **աշխատել**,

[1] Մ. Աբեղյան, նշվ. աշխատ., էջ 466—469, Վ. Առաքելյան, նշվ. աշխատ., էջ 165—171։

ստեղծագործել, ապրել, ծնվել, մեռնել, կանգնել, նստել, երգել, խմել, եփել, հավաքել, կորցնել, լինել, կա, քնել, սպասել *և այլն*։

«Դահլիճում վառվում էին *զանազան ճրագներ*» (*Ր, 2, 85*), «*Գինու կարասները սովորաբար* թաղում էին այգիներում» (*Ր, 2, 326*)։ «Ծովում կորցրիր *երկու եղբայր*» (*Ծ, 133*)։ «*Վիշտ ու թախիծ* ես կարդում *իմ* երգերում» (*Ծ, 173*)։ «*Ձախ ձեռքով* ժամում *մոմեր* են վառում» (*Ծ, 244*)։ «*Նրա սարսափը* հեռուներում էր տարածված» (*Բակ., 4*)։ «*Գնացքը* կանգ էր առնում կայարաններում» (*ՍՁ, 4, 37*)։

Ինչպես նշեցինք, տեղի ներգոյականը որոշ գրողների կողմից գործածվում է նաև տեղի տրականի ու հայցականի փոխարեն։ Անհրաժեշտ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ նման դեպքերում կարևոր է ոչ միայն գրողի լեզվական մտածողությունը, այլև այն, որ մի շարք բայերի մոտ հնարավոր է գործածել և՛ ներգոյական, և՛ տրական (կամ հայցական)։ Խոսքը վերաբերում է գտնել, տարածել, դասել, բուսնել *և այլ բայերի, որոնց մոտ ներգոյականի գործածությունը նույնքան օրինաչափ է, որքան տրականինը (ու երբեմն նաև հայցականինը)։ Այսպես, ներգոյական է գործածված հետևյալ նախադասություններում։*

«*Նրանց* մեջտեղում գտնվում էր *ընդարձակ, սյունազարդ դահլիճը*» (*Մուր., 5, 266*)։ «*Միրի լղար կովերը քարերի* արանքում բուսած *չոր խոտերն էին պոկում*» (*Բակ., 43*)։ «Շրջել եմ *ես քո* սարերում» (*ԳՍԵԺ, 1, 287*)։

Կան որոշ բայեր, որոնց մոտ ներգոյականն ու տրականը կամ հայցականը պայմանավորված են լրացյալի իմաստային լայն հնարավորություններով։ Այսպես, աքսորել *բայը* աքսոր ուղարկել *նշանակությամբ ստանում է հայցականով լրացում* (աքսորել Սիբիր,— արտասահման,— հեռու երկիր *և այլն*), *սակայն* աքսորված լինել *ձևը հայցականից բացի կարող է ունենալ ներգոյականով լրացում*՝ աքսորավայրում գտնվել *նշանակության դեպքում։ Օրինակ*՝ «Աքսորված է եղել *մի ցուրտ* երկրում» (*Ր, 5, 469*)։ Ընկնել բայը *սովորաբար ուղղության հայցական է պահանջում* (կրակն ընկնել, ջուրն ընկնել)։ *Սակայն սկսվել նշանակությամբ այն ներգոյական է ստացել հետևյալ նախադասության մեջ*. «*Մի առավոտ էլ* գյուղում *անսովոր իրարանցում* ընկավ» (*Բակ., 11*)։ *Սակայն* ընկնել *բայի բուն իմաստի դեպքում ներգոյականը անսովոր է հնչում։ Օրինակ*՝ «*Տեսնենք ո՞ր* գնդում կընկնեմ» (*ԳՄԼՁ, 86*)։ *Այստեղ ճիշտ կլիներ* գունդը կընկնեմ *կապակցությունը*։

Նույն ձևով խցկել (խցկվել) բայը մտցնել (մտցվել) իմաստով ունի հայցականով լրացում (մի բան խցկել գրպանը): Սակայն խցկվել բայը տեղավորվել նշանակությամբ ստանում է ներգոյականով լրացում։

«Ապարատներում խցկվել են ամեն տեսակի մորթապաշտներ» (ՇԹՆՃ, 1, 67)։ «Կառքերը խցկվում են կայարանի հետևում» (ԴԴՎ, 1, 237)։

Այսպես նաև գալ բայի հայցականով լրացումը ուղևորության իմաստ է արտահայտում (գալ գյուղ,— քաղաք և այլն), իսկ ներգոյականը նրա մոտ այլևս ուղևորության իմաստով չէ։ Այս դեպքում ներգոյականը պայմանավորված է գալ բայի սկսվել իմաստով։ Օրինակ՝ «Ասես գարուն էր եկել Երևանում» (ՇԹՆՃ, 2, 298)։

Անցնել, քաշվել և նման բայեր ուղևորության հայցական են ստանում (անցնել դպրոց, քաշվել մի անկյուն և այլն)։ Սակայն դրանք համապատասխանաբար տեղի ունենալ և նստել իմաստներով գործածվելիս ստանում են ներգոյականով լրացում։ «Դուք մոռացել եք, թե վերջին ժամանակներում ինչ դժբախտ անցքեր անցան մեր աշխարհում» (Ր, 4, 180)։ «Մի անկյունում քաշված, սրա նրա համար տրեխ էր գործում» (Բակ., 7)։

Մի շարք բայերի մոտ տրականը ներգոյականից տարբերվում է նրբիմաստով։ Այսպես, սուլել, հնչել բայերի՝ տրականով լրացումը («Ձայնը հնչեց ականջին», «Սուլեց ականջին») փոքր-ինչ տարբեր է ներգոյականից։ «Անվերջ հնչում են իմ ականջներում» (Ծ, 18)։ «Որ նորից նոր ձայնը հնչեր իրեն ականջում» (ՍՏԲ, 120)։

Ցնդել բայը հայցականով էր լրացում ստանում գրաբարում (Յօղս ցնդել կապակցության մեջ)։ Սակայն այժմ գործածվում է նաև ներգոյականով կապակցություն. «Վաղն այդ բոլորը կցնդի օդում» (Ծ, 253)։

Դեռևս գրաբարում դնել բայն ստանում էր ի նախդիրով և հայցականով լրացում։ Այստեղից էլ գալիս են մի շարք կապակցություններ, ինչպես՝ մատանի դնել մատը, մատը դնել բերանը: Սակայն արդի հայերենում դնել բայն ավելի շատ տեղի իմաստով տրականով է լրացում ստանում, ինչպես՝ գլխարկը դնել գլխին, ձեռքը դնել ուսին, հացը դնել սեղանին և այլն։ Տեղի իմաստով լրացումն արտահայտվում է նաև վրա, մեջ և այլ կապերով (գիրքը դնել սեղանի վրա, դույլը դնել հատակի վրա և այլն)։ Դնել բայի՝ ներգոյականով տեղի պարագան պայմանա-

վորված է այդ բայի տեղավորել, թողնել նշանակություններով։ Օրինակներ՝ «Հրամայեց սնդուկը դնել յուր խանութում» (Ր, 4, 433)։ «Այդ վիճակը կնոջը դնում է կյանքի և մահու սահմանում» (ՍՋ, 2, 202)։ «Ես իմ ջանքի գանձերն այս կողովում դրի, Եվ ծրարում դրի հրճվանքները հոգուս» (ՀՍՀԵՄ, 224)։

Երբեմն էլ դնել բայի՝ ներգոյականով լրացման գործածությունը պայմանավորված է չափածո խոսքի չափի և հանգի պահանջով։ Օրինակ՝ «Դաշտում տեսավ մի մանուշակ, Քաղեց դրեց իր գրքում Ու նրա հետ թերթերի տակ Թողեց երգ ու խնդություն» (ԳՍԵԺ, 1, 57)։ Այստեղ գրքում ներգոյականը գործածվել է խընդություն բառի հետ հանգավորվելու նպատակով, իսկ այլ դեպքերում կգործածվեր դնել գրքի մեջ կապակցությունը։ «Ես հորթի մասին գրեցի մի երգ, Խմբագիրն առավ, դրեց դարակում.— Կտպվի անշուշտ, պահով եղեք, Ոչ մի տողի դեմ ես չեմ առարկում» (ՀՍՀԵՄ, 393) քառատողում հեղինակը դարակում է գործածել՝ չորրորդ տողի առարկում ձևի հետ հանգավորվելու նպատակով։ Ուրիշ դեպքում պետք է գործածվեր դրեց դարակը կապակցությունը։

Իսկ դնել բայի՝ ուղղության տեղի իմաստով լրացման ներգոյականաձև գործածությունը սխալ է։ Օրինակներ՝ «Եվ նա համակ անփութությամբ ճխլտելով դնում է վարտիքի գրպանում» (Մուր., 5, 301)։ «Մեր աղատ, մեր սուրբ հողում հայրենի ոտք չի դնի ոչ մի արնախում» (ՍԲԱ, 224)։ «Որ քնար դրեց իմ այս ձեռքերում» (ՀՍՄԱ, 51)։ «Մինչև գարուն ոչ մի մարդ ոտք չի դնում անտառներում» (Բակ., 3)։

Մի շարք դեպքերում տեղի ներգոյականի գործածությունը պայմանավորված է լրացյալի ոչ թե բուն, այլ փոխաբերական իմաստներով։ Այսպես, ավարտել բայը տեղի ներգոյական է ստացել սովորել իմաստով, այլապես բուն իմաստով այն ուղիղ խնդիր պիտի ստանար։ «Նա ավարտել էր հայոց օրիորդական դպրոցներից մեկում» (Ր, 7, 260)։

Ուղևորության հայցական պահանջող գալ, մտնել, տանել, գցել, թափանցել, հրավիրել, բերել, քաշվել և այլ բայերի մոտ ներգոյականի գործածությունը սխալ է և բխում է հեղինակների բարբառային մտածողությունից։

«Խոստովանողը գաղտնի սողցնում էր նրա ձեռքում մի քանի ապասի» (Ր, 2, 13)։ «Էս ի՞նչ կրակ ու ցավ գցեցիր խալխի սրտում» (Ր. 2. 121)։ «Օրվա լույսը անզոր էր թափանցելու նրա բազմաթիվ մթին նկուղներում» (Ր, 2, 286)։ «Մեզ հրավիրեցին

մի բավական մաքուր սենյակում» *(Ր, 2, 361)*։ «*Պառավը* քաշվեցավ *մի* անկյունում» *(Ր, 2, 488)*։ «*Մի դյութական ձեռք ինձ* բերեց *այդ դիվական* ավերակներում» *(Ր, 4, 297)*։ «*Վարդանի* հոգում *ներս* խուժեց *խանդը*» *(ՇՆԲԾ, 1, 123)*։ «*Այսօր հաջողացրել էր այդ հարցը* մտցնել *տալ ժողովի* օրակարգում» (ՇԹՆԾ, 1, 323)։ «*Նրանք* հրավիրեցին *երիտասարդին իրենց մոտ*—կառքում» *(ՇԹՆԾ, 1, 614)*։ «*Կնիքը* գրպանում հանել կոխել, *միշտ մի երկու մանեթ այդ նեղության համար ստանալը շատ ավելի նպաստավոր էր*» *(ՎՓ, 4, 291)*։ «*Ոչ մի* սրտում չի խրվի *ֆիննական դանակ*» *(ԳՍԵԺ, 1, 244)*։

Եթե մի կողմ թողնենք այն հանգամանքը, որ մի շարք բառերի ներգոյականի ձևի անսովորության պատճառով պարունակության—տեղի իմաստն էլ տրականով է արտահայտվում (տուն, դուռ *և այլն*), *ապա պետք է նշել, որ ուղղակիորեն արտաքին մակերեսային տեղի համար տրականն է գործածական* (*կամ կապի խնդիրը և* վրա *կապը*), *իսկ պարունակության—տեղի համար՝ ներգոյականը։ Այս պատճառով էլ, ինչպես արդեն նշվել է*[1], *սխալ է ներգոյականը արտաքին տեղի իմաստով գործածելը։*

«*Կտցահարում էին կեղտոտ ջրի* երեսում լողացող *փտած վարունգը*» *(Շիրվ., 3, 445)*։ «Ափում *մարդիկ* հավաքվել սպասում էին *նավակին*» *(ՍԶ, 2, 152)*։ «Կողքում, *քիչ ցած, գետնախնձոր* էին հանում» *(ՎՓ, 4, 314)*։ «*Երկաթուղու գծի* երկու կողմերում երևացին *տներ ու խանութներ*» *(ՎՓ, 4, 614)*։ «*Քո հեռու-հեռու պաղ* մայրերում *ո՞վ, Ո՞վ կարող է քեզ այն խոսքերն* ասել» *(ՊՍՄԱՄ, 19)*։

Հայտնի է, որ ծայր, գագաթ *և նման բառերի ներգոյականը սովորական չէ, ուստի սխալ է դրանց ներգոյականի գործածությունը, այն էլ արտաքին տեղի նշանակությամբ։ «Նա մտավ* գյուղի ծայրումը գտնված *տներից մեկի մեջ*» *(Ր, 4, 501)*։ «*Սեղանի* գլխում *մի առանձին տեղ* հատկացված էր *վանահորը*» *(Ր, 5, 132)*։

Երբեմն ներգոյականի գործածությունը տրականի փոխարեն հանգավորման նպատակով է արվում։ Օրինակ՝ «Թախտ գետի կանաչ ափում Կա *մի շիրիմ պայծառ, Ալվարոն է այնտեղ նընջում*» *(ԳՍԵԺ, 2, 61)*։ *Այստեղ* ափում *է գործածված՝* ննջում-*ի հետ հանգավորելու նպատակով։*

Սակայն հանձնել, տալ, մասնակցել *և նման բայերի լրացու-*

---

[1] Վ. Առաքելյան, *նշվ. աշխատ., էջ 112—115։*

մը խնդրային նշանակությամբ արդեն դուրս է տեղի ներգոյական—տրական, ներգոյական—հայցական հարաբերակցություններից։ Այդպիսի խնդրառությունը արդի հայերենի կապակցությունների ոգուն խորթ է ու մերժելի։

«Բարեխնամ ձեռքում հանձնեցի ձեր զավակին» (Ր, 4, 101)։ «Նա մեզ հետ քաջությամբ մասնակցում էր այն բոլոր գործերում» (Ր, 5, 345)։ «Չէին կամենալ խառնվել ուրիշի գործերում» (ՎՓ, 3, 391)։ «Գութանում լծում էին չորս լուծ եզ» (ՍԶ, 4, 197)։

Տեղի ներգոյականը բայի լրացման դերում երբեմն փոխաբերաբար է գործածվում, այսինքն այն ոչ թե գործողության առարկայական տեղն է ցույց տալիս, այլ փոխաբերական տեղը, որը տվյալ դեպքում ձևականորեն ունի տեղի իմաստ, իսկ իրականում դա նաև ձևի կամ սահմանափակման իմաստներով է հանդես գալիս։ Ինչպես կտեսնենք սահմանափակման և ձևի ներգոյականների քննության բաժնում, այդ վերջինները ծագում են ներգոյականի երկու հիմնական իմաստներից՝ տեղի և ժամանակի։ Բանն այն է, որ փոխաբերաբար տեղի իմաստ ունեն այն ներգոյականները, որոնք առարկայական-պարունակության տեղ չեն ցույց տալիս, այլ մեծ մասամբ վերացական գոյական են կամ գործողության առարկայական անուններ։ Այդպես են՝ միտք, հոգի, խորք, երգ, կանչ և այլն։

«Հոգուս խորքում ես քեզ անպարտ եմ զգում» (ՍԶ, 2, 162)։ «Մտքում իր ճառն էր պատրաստում» (ՍԶ, 4, 318)։ «Նա մտքումը զվարճանում էր» (ՎՓ, 3, 338)։ «Նրանց երգերում Մերձենալու են բառերն իրարու» (ՀՍՀԵՄ, 42)։ «Դու բուն ես դրել իմ հոգում վաղուց» (ՇԹՆՃ, 1, 378)։ «Նրանց հետ օրերն են արթնանում քո հոգում» (ԳՍԵԺ, 1, 289)։ «Նա արթնացավ իր խոհերում ճամփաներն իր մանկության» (ԳՍԵԺ, 2, 353)։

Տեղի ներգոյականի փոխաբերական գործածությունը մի շարք բառերի դեպքում, մասնավորապես աչք, սիրտ, հոգի, միտք և այլն, հանգեցրել է դարձվածքային կապակցության՝ դնել, ընկնել, բարձրանալ, մնալ, ունենալ և այլ բայերի հետ։

«Մտքում դրեց կալ ու մարագ շինել վանքի քարերից» (Բակ., 51)։ «Օրեցօր ավելի ու ավելի բարձրանում էին նրա աչքում» (Շիրվ., 4, 63)։ «Հանգիստ քնած է ուղտի ականջում» (ԴԴ, 1, 236)։ «Այդ օրվանից Արշակ Խորենիչի նշանակությունը մեր պոստատան ծառայողների աչքում բարձրացավ» (ՍԶ, 4, 158)։ «Մնացել եմ երկու քարի արանքում» (ՍԿՔԴՔ, 485)։

Կա բարբառային չափսում գալ դարձվածքը. «Հարսը չափ-

սում եկավ, *ու նրան էլ գրեցին նորակոչիկների ցանկում» (Բակ., 14)։*

Վիճակի և ձևի ներգոյականով կապակցություններ.— *Տեղի և ժամանակի ներգոյականների փոխաբերական կիրառությունը ժամանակի ընթացքում հանգեցնում է ներգոյական հոլովաձևի վիճակի-ձևի իմաստի առանձնացմանը, մի երևույթ, որը բնորոշ է բոլոր հոլովաձևերի իմաստային զարգացմանը։ Իհարկե, այդ պրոցեսում կարող են լինել միջակա աստիճաններ, որոնցից նշեցինք վերը* (արբնանալ մտնում,— խոներում, զվարճանալ մտնում *և այլն)։*

Ներգոյականի՝ վիճակի ձևի իմաստը պայմանավորված է մի կողմից լրացումների բառային իմաստով (ոչ ամեն մի բառ կարող է այդ իմաստով գործածվել. մասնավորապես վիճակի-ձևի ներգոյականներով չեն դրվի պարունակություն-տեղի նշանակություն ունեցող գոյականներ, ինչպես՝ գետին, հող, ջուր, անտառ, սար, դաշտ, փողոց *և այլն), մյուս կողմից՝ լրացյալների իմաստային առանձնահատկություններով՝ ավյալ բնագրում։ Մեծ մասամբ վիճակի ներգոյական ստանում են* տեսնել, հանդիպել *բայերը։ Վիճակի ներգոյականը տարբերվում է ձևի ներգոյականից, որի գործածությունը սակավ է հանդիպում։ Այսպես, «Մեր բոլոր կյանքը* անցնում է *չնչին փոքրիկ կրքերով, ունայն* հոգսերում» *(ՀՀ, 49) նախադասության մեջ առկա է ձևի իմաստը, մինչդեռ* «Այրում, տանջվում *եք անբավ* հոգսերում» *(Ծ, 159) նախադասության մեջ ներգոյականը վիճակի իմաստ է արտահայտում։*

Վիճակի ներգոյականը դրսևորվում է երկու ձևով։ Մի դեպքում ներգոյականը հանդես է գալիս իբրև բայի անմիջական լրացում, իսկ երկրորդ դեպքում ներգոյականը (սովորաբար լրացումներով կամ իր հետ կապված բառերով) դերբայական դարձվածի դերբայի զեղչումով վերջինիս պաշտոնն ստանձնած ձև է։ Այսպիսի կազմություններ կան նաև այլ խոսքի մասերի բառակապակցությունների մեջ։ Այսպես, երբ ասում ենք՝ «Նա կովի դաշտ գնաց սերը սրտում», *ապա* սրտում *ներգոյականը անմիջականորեն* գնաց *բայի լրացումը չի եղել, այլ ենթադրյալ (զեղչված)* սերը սրտում պահած (ունենալով *և այլն) կազմության դերբայի զեղչումով ստացված ձևն է։*

Առաջին տեսակի վիճակի ներգոյականի արտահայտությունը հենվում է տեղի ներգոյականի վրա։

«Նազում ես *ու* շորորում *զմրուխտե քո* շորերում» *(ՀՍՀԵՄ, 118)։ «Դու* եկել էիր *նշանիդ* շորում» *(ՀՍՀԵՄ, 278)։ «Ես շատ անգամ* հանդիպում էի *նրան* արտասուքը աչքերում» *(Ր, 2, 545)։ «Մեկ* տեսնում էր *իրեն* գյուղում, *կոշկակարի* արհեստանոցում»

(ՍՁ, 4, 422)։ «Նկարել է նա լուսինն ամպերում» (ԳՍԵԺ, 1, 182)։ «Ոչ, մարդկության առաջ ես պարտավոր էի լինել մարդասպանի ահեղ դերում» (ՀՍՄԱ, 146)։ «Մեն ճոճվում ենք գայլերի ճանկում» (Ծ, 183)։

Վիճակի իմաստ ունեն նաև արտաքուստ ժամանակի ներգոյականները հետևյալ նախադասություններում.

«Հույս չունեի տեսնել ձեզ այս օրում» (ՎՓ, 4, 186)։ «Իսկ այժմ տեսնում էի ընկերներիս նույն հասակում» (Ր, 4, 341)։ «Հոգնել եմ արդեն հանդարտ հոսելուց, Իմ մտքերի հետ մրնում խոսելուց» (ՀՍՄԱ, 147)։

Ավելի շատ գործածական է վիճակի ներգոյականը երկրորդ դեպքում։ Այս կապակցությունների առանձնահատկությունն այն է, որ ներգոյականը միայնակ հանդես չի գալիս, բայց լրացման դերում. լրացումը տվյալ դեպքում ամբողջ բառակապակցությունն է, որտեղ ներգոյականը գլխավորն է և վիճակի իմաստի հիմնական արտահայտիչը՝ լրացյալի հարաբերությամբ։ Իսկ իր հերթին տվյալ բառակապակցության (զեղչված դերբայական դարձվածի) ներսում ներգոյականը տեղի նշանակությամբ է օժտված։ Այսպիսի ներգոյականով կազմվող կապակցությունները գործուն են արդի հայերենում։

«Հնձանն է մտնում ծեր Դիլան դային, Հոգում հեռավոր օրերի ցավը» (ՀՍՀԵՄ, 246)։ «Գնում է նա լացը սրտում» (ԳՍԵԺ, 1, 38)։ «Արցունքն աչքերին, սրտերում վերքը Մեր ազատ կյանքի օրն ենք երազել» (ԳՍԵԺ, 1, 284)։ «Որտեղ չպատահեն քերծերից ցած գլորված քար, քարուքանդ ոտնահետք, այնտեղ էլ մարդու ոսկոր, գանգ, անթաղ մեռել ու հոգին բերանում մեռնող» (ՎԽԳՀ, 5)։

Երբեմն վիճակի ներգոյականը գործածվում է վիճակի տրականի փոխարեն։ Օրինակ՝ «Ես շիբուխը ձեռքումս հետևեցի նրան» (Ր, 2, 425)։

Սահմանափակման ներգոյականով կապակցություններ.— Տեղի ներգոյականը որոշակի կապակցություններում վերածվել է նաև սահմանափակման իմաստի։ Բառացի անշուշտ այս դեպքում ես ներգոյականը տեղ է ցույց տալիս, սակայն այդ այն տեղն է, որով սահմանափակվում է լրացյալի գործողությունը։ Որպես կանոն, սահմանափակման ներգոյական դառնում են առաջին հերթին ոչ թանձրացական գոյականները. դրանք կամ գործողության անուն են կամ վերացական գոյական։ Լրացյալ կարող են լինել բազմազան բայեր։

«Կարճ ժամանակում կրթվեցավ առևտուրի արհեստում» (Ր, 2, 8)։ «Կշեռքում ծանր առնել և թեթև տալ նրա հին արհեստն

էր» (Ր, 2, 12)։ «Արշինում պակաս շալիեր նա ուսած էր բաղաքխանում աշակերտության օրերից» (Ր, 2, 13)։ «Ձեր ընտանիքը այդ բանում կատարյալ բացառություն է կազմում» (Ր, 2, 175)։ «Քեզ ժպտա երկինք Քո վսեմ գործում» (Ս, 162)։ «Անդուլ կռվում, անդուլ գործում Քեզ չի հաղթի ժանտ ձմեռ» (Ս, 194)։ «Միայն մի առարկայում նա ցույց տվեց առանձին շնորհք» (Շիրվ., 3, 449)։ «Երեսուն տարի բոլոր ժանրերում Ուժերը փորձեց հավասարապես» (ՀՍՀԵՄ, 404)։ «Ինչու է կինն սկսել ամենահասարակ բաներում չհավատալ իրեն» (ՇՐՆԾ, 1, 8,)։

Սահմանափակման իմաստը հաճախ արտահայտվում է աչք բառի ներգոյականով, ընդ որում այդ դեպքում բայն ու լրացումը ձևով են բերում դարձվածքի նշանակություն։

«Երեխաներիս աչքում ավելի մեծ նշանակություն ուներ» (Ր, 4, 280)։ «Ինձ ստորացնում էր իմ աչքում» (Շիրվ., 8, 92)։

Սակայն սահմանափակման իմաստի ավելի որոշակի արտահայտություն է անորոշ դերբայի ներգոյականը, որի գործածությունը թեև փոքր ինչ անսովոր է, սակայն բնորոշ է այս նշանակության համար։

«Նա օգնում էր Աթանեսին կերպասի կտորները բաց անելում ու ծալելում և վաճառված ապրանքը փաթաթելում» (Շիրվ., 3, 451)։ «Աշխատում էր ուտելում եռ չմնալ հյուրերից» (ՍՁ, 4, 294)։

Ժամանակի ներգոյականով կապակցություններ.— Ժամանակի իմաստի դրսևորման համար գործածական են ներգոյականը, հայցականը և տրականը։ Արդի հայերենում ժամանակի ներգոյականը աստիճանաբար ձևով է բերում իմաստային-ոճական յուրահատկություն և տարբերվում տրականից ու հայցականից, սակայն դեռևս զուգահեռություն է նկատվում դրանց գործածության միջև։ Սովորաբար ժամանակի իմաստ ունեցող գոյականներից ներգոյականով դրվում են ընդհանուր, տևական ժամանակ ցույց տվող դար, դարաշրջան, ընթացք, ժամանակաշրջան, հասակ, տարիք, սկիզբ, վերջ, կյանք, ապագա և այլ բառեր։

«Ճանճուր Իվանիչը երբեք յուր կյանքում պաս չէր կերած» (Ր, 2, 13)։ «Այդ հարցը կլուծվի ապագայում» (Ր, 2, 158)։ «Այդ հասակում մարդիկ ամեն բան հասկանում են» (Ր, 2, 545)։ «Սկզբում մեծ եռանդով ձեռնարկեց այդ գործին» (ՇՐՆԾ, 1, 80)։ «Չգիտե, թե յուր նախորդի օրերում ինչեր են կատարվել» (Ր, 2, 352)։ «Ես էլ ծերության օրերում իր ջրերն ընկած կապրեմ» (Բակ., 9)։ «Առաջին ամիսներում սանս ուրախություն կար» (Բակ., 36)։ «Որ ապրում եք հիմա այս ալեկոծ դարում» (ՍՏԲ, 78)։

Որոշ կապակցություններում ներգոյականը կարող է համատեղել ժամանակի և տեղի իմաստները։

«Մենք գիտենք մարտնչել կյանքում» (ՀՍՀԵՄ, 163)։ «Արի կյանքում գեթ մի անգամ սրտիս հետ գնա» (ԳՍԸԷ, 11)։ «Իրիկվա մուժում նստում էր նա լուռ» (ԳՍԵԺ, 1, 69)։

Երբեմն ներգոյականը կարելի է մեկնաբանել և՛ ժամանակի, և՛ վիճակի իմաստներով։ Օրինակ՝ «Ինձ տեսել էին շատ փոքր հասակում» (Ր, 2, 468)։

Չափի ներգոյականով կապակցություններ.— Երբ ժամանակ ցույց տվող բառը թվական կամ թվականին հարաբերակից որևէ բառով լրացում է ունենում, ապա լրացյալ բայի նկատմամբ ներգոյականն ու իր անբաժանելի լրացումն արտահայտում են ոչ թե ժամանակի, այլ ժամանակային չափի հարաբերություն։ Այս դեպքում ներգոյականը զուրկ է շարահյուսական ինքնուրույն դերից, որը համաբաշխված է լինում նրա և նրա անմիջական լրացման վրա։ Համաբաշխ հարաբերությամբ էլ ներգոյականն ու որևէ թվական ստանձնում են չափի պարագայի պաշտոն։ Այս դեպքում բայի անմիջական լրացումը, ճիշտ է, ներգոյականն է, սակայն դա սոսկ ձևական է։ Իբրև լրացում հանդես են գալիս ժամանակային չափի միավորները՝ ակնթարթ, վայրկյան, րոպե, ժամ, օր, շաբաթ, ամիս, տարի և այլն։ Լրացյալի կիրառությունը նման հանգամանքներում սահմանափակված չէ։

«Խոստացավ երկու տարում արհեստի վարժեցնել» (Բակ., 11)։ «Մի քանի վայրկյանում բակը դատարկվեց» (Շիրվ., 3, 446)։ «Մի երկու վայրկյանում երկաթե պատշգամը լցվեց մարդկանցով» (ՍԶ, 4, 315)։ «Քեռին քանի՞ օրում կգա» (Բակ., 135)։

Երբեմն չափի ներգոյականը միայնակ է դրվում բայի մոտ, սակայն այս դեպքում այն պատենցյալ կերպով ունի թվական լրացում։ Թվական լրացումը տվյալ դեպքում լռելյայն հասկացվում է իբրև մեկ։ Երբ ասում ենք «ժամում անցավ քսան կիլոմետր», ապա ժամում ձևը միայնակ լինելով լռելյայն ենթադրում է մեկ լրացումը, այսինքն՝ մեկ ժամում (անցավ)։ Օրինակներ՝ «Եվ ակնթարթում մենք իրար անցանք» (Ծ, 249)։ «Ժամ ու կեսում հասնում էինք քաղաք» (ՍԶ, 4, 234)։

Ժամանակային չափի նշանակություն է ստանում նաև անորոշ դերբայի ներգոյականը՝ համապատասխան լրացումով։ Օրինակներ՝ «Մի նստելում յոթ հաց կուտեր» (Բակ., 300)։ «Քեռին քանի՞ օրում կգա։— Մի աչքը նայելում» (Բակ., 138)։

Երբեմն լրացումով ներգոյականը կարող է մեկնաբանվել

երկու իմաստով. և՛ ժամանակի, և՛ ժամանակային չափի։ Դրա պատճառը այդ կապակցությունների կառուցվածքային յուրահատկությունն է։ Լրացումն այստեղ ունի և՛ թվականով, և՛ այլ բառերով դրված անմիջական որոշիչ, որոնք և երկակի մեկնաբանության տեղիք են տալիս։

«Կարճ միջոցում նա ընդարձակեց յուր վաճառականական ասպարեզը» (Ր 2, 8)։ «Փոքր ժամանակում գրավեցի ոչ միայն իմ աստուծո շնորհը, այլև ժողովրդի հարգանքը» (Ր, 2, 474)։ «Դառնություններ շատ ես տեսել այս չորս տարում» (ՀՍՀեՄ, 144)։ «Իր օրում հրացանից չէր կրակել» (Բակ., 39)։

Դիտողություններ ներգոյական հոլովով դրված լրացումների գործածության առանձնահատկությունների վերաբերյալ.— 1. Նախադասության մեջ երկու ներգոյականի համատեղ գործածությունը խանգարում է ոճի գեղեցկությանը։ Սովորաբար դրանցից մեկը փոխարինվում է այլ ձևով։ Այսպես, հարմար չէ տեղի և ժամանակի ներգոյականների համատեղ կիրառությունը. դրանից մեկի փոխարեն կարելի է տրական կամ կապով արտահայտվող անդամ դնել։ Փոխանակ ասելու «Այս գյուղում նա մնաց լեռներում», պետք է ասել՝ «Այս գյուղին նա մնաց լեռներում»: Ոճական այսպիսի անհարթ կառուցվածքներ երբեմն հանդիպում են։ Օրինակ՝ «Հապա այս գյուղում ո՞վ կմնա ամարանոցում» (Ր, 2, 180)։

Սա վերաբերում է նաև ներգոյական բացահայտյալի մոտ դրվող մասնավորեցնող (կոնկրետացնող) բացահայտչի ձևին։ Նման դեպքերում անհրաժեշտ է բացահայտիչը կամ բացահայտյալը այլ ձևով (ուրիշ հոլովով կամ կապով ու կապի խնդրով) դնել։ Այսպես, հարմար չէ ասել՝ «Գյուղում, կենտրոնական փողոցում, հավաքվել էր բազմությունը», այլ «Գյուղում, կենտրոնական փողոցի վրա, հավաքվել էր բազմությունը»։ Այս տեսակետից հարմար չէ հետևյալ նախադասության մեջ երկու ներգոյականի համատեղ գործողությունը։ «Դեռ անցյալ տարի, Փարիզի աշխարհահանդեսում, ասիական գործվածքների կարգում, առաջին մրցանակը ստացավ» (Ր, 5, 494)։

Նույնաձև ներգոյական բացահայտյալ-մասնավորեցնող բացահայտիչ կապակցության գործածությունն անհարթ է նաև այն դեպքերում, երբ բացահայտիչը բացահայտյալից անջատված է այլ անդամներով։ Օրինակներ՝ «Ավճալայի աշխատանքային ուղղիչ ճամբարի գաղութում Շավարշն աշխատում էր դարբնոցում» (ՇԹՆՃ, 1, 285)։ Իմիջիայլոց պետք է նշել, որ առհասարակ սխալ է մասնավորեցնող բացահայտիչը բացահայտյալից այլ անդամներով ան-

չատելը։ Օրինակ՝ «Եվ կրակի մոտ *մխուր մայում է Մատաղի դառը վանքի* բակում» *(ՀՍՄԱ, 95)։*

2. Ներգոյականը երբեմն կարող է չունենալ անմիջական լրացյալ. վերջինս կարող է զեղչված լինել։

«Էլ ի՞նչ ուրախ երգ ներկա օրերում» *(Ծ, 172)։ «Մի դեմք եմ հիշում հեռու* մշուշում» *(ԴՄՂԼ, 28)։ «Դեռ խոր թմրության հայրենի* երկրում, *Ազգը ծարավի ուսման, գիտության, Ազգային զենքը անշարժ* ձեռքերում» *(Ծ, 155)։*

3. Փոքր-ինչ տարբեր է այն դեպքը, երբ ներգոյականի լրացյալի զեղչման հետևանքով այն վերածվում է ստորոգելիական վերադրի։ Ըստ էության այն ոչ թե ստորոգելիական վերադիր է, այլ պարագա։

«Նա էլ իր խելքումը *չէր» (Բ, 5, 449)։ «Տես, խաթունն էլ գործը պրծած* Փողոցումն *է, ժամ է շտապում» (ՀՀ, 43)։ «Խիղճը* փողումն *էր, հոգին-* գրպանում» *(Ծ, 254)։ «Դու ծաղկանկար* շորերում *էիր» (ՀՍՀԵՄ, 25)։*

4. Այս կապակցությամբ արժե նշել, որ երբեմն գործածվում են ներգոյական ստորոգելիական վերադրով ոչ հայերեն նախադասություններ՝ «Բանը նրանում է» տիպի։

«Բայց հարցը նրանում *է, թե ինչո՞ւ համար են զղջանում» (Բ, 7, 262)։ «Այդ հյուրանոցի գլխավոր հարմարությունը* նրանումն *էր, որ հաճախորդները միմյանց չէին տեսնում» (Բ, 2, 286)։ «Սկզբում դժվար էր իմանալ բանն* ինչումն *է» (ՍԶ, 2, 72)։*

2. ԲԱՑԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԿԱՊՈՎ ԵՎ ԿԱՊԻ ԽՆԴՐՈՎ

Բացի լրացումներն արտահայտվում են ոչ միայն գոյականի թեք հոլովաձևերով (տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական), այլև կապերի միջոցով։ Այսպիսի լրացումները կոչվում են կապային լրացումներ։ Թեև կարելի էր գործածել կապային խնդրառություն, սակայն հայ քերականագիտության մեջ երկար ժամանակ կապերը (հին քերականները չունեին կապ *ընդհանուր տերմինի ըմբռնումը. նրանք* նախադրություն *և* ետադրություն *տերմիններով էին արտահայտում քերականական այս երևույթը) դիտվել են հոլովառու, խնդրառու։ Այդ նշանակում է, որ կապի մոտ դրված հոլովաձևը դիտվել է կապի լրացում։ Այստեղից էլ նրանց անվանումը՝* կապի խնդիր։ *Մեր քերականագիտության մեջ վերջերս հրաժարվում են* կապի խնդիր *տերմինից և առաջարկում*

են կապվող բառ *տերմինը, որն ավելի ճիշտ է արտահայտում այդ հասկացությունը։*

Իրականում կապի հետ դրվող բառը (կապվող բառը կամ խնդիրը) ոչ թե կապի լրացումն է, այլ կապի հետ միասին (և միայն այդ վիճակում) լրացում է դառնում այլ խոսքի մասի համար։ Լրացական հարաբերությունը միայնակ չի ընկնում կապվող բառի վրա. այն դրսևորվում է կապվող բառի և կապի միջոցով հավասարապես։

Կապը այդպիսի բառակապակցության մեջ քերականական-շարահյուսական հարաբերություն արտահայտելուն է ծառայում՝ իր իմաստի դրսևորմանը զուգահեռ։ Ճիշտ չի լինի, եթե ասենք, որ կապը սոսկ շարահյուսական հարաբերություն արտահայտելուն է ծառայում (թեև առանց կապի շարահյուսական տվյալ հարաբերությունը բառակապակցության մեջ դրսևորվել չի կարող)։ Կապը երկակի դեր ունի. մի դեպքում այն ծառայում է իր բուն իմաստի դրսևորմանը, ապա միջոց է դառնում կապվող բառի և լրացյալի լրացական հարաբերության դրսևորման համար։

Լրացական հարաբերությունը կարող է արտահայտվել նաև առանց կապերի։ Այդպիսի հարաբերությունները բավականին բարդ ու բազմազան են (որոնց քննությունը տրված է համապատասխան հոլովներով լրացում պարունակող բառակապակցությունների բաժիններում)։

Սակայն լեզվի մեջ շարահյուսական բոլոր հարաբերությունները չէ, որ կարող են դրսևորվել ուղղակի լրացական կապակցություններով։ Շարահյուսական բազմաթիվ հարաբերություններ արտահայտվում են միայն կապերի միջոցով, քանի որ լրացումների համար ծառայող հոլովաձևերը համեմատաբար սակավաթիվ են, իսկ հարաբերությունները՝ շատ։ Այս երևում է նաև այն բանից, որ յուրաքանչյուր հոլովաձև իմաստային տեսակետից առանց այն էլ ծանրաբեռնված է։ Իհարկե, կապերի դերը միայն շարահյուսական հարաբերությունները արտահայտելը չէ. նրանք ունեն իրենց խոսքի մասային նշանակությունները, որոնց դրսևորմանը և ծառայում են։ Կապերով արտահայտվում են տարածական, ուղղության, ուղեկցության, նպատակային, պատճառական, ժամանակային, վերաբերության, հանգման, ձևի, վիճակի և բազմաթիվ այլ իմաստներ։ Կապերով արտահայտվում են այնպիսի հարաբերություններ, որոնք

---

1 *Տե՛ս* Ս. Աբրահամյան, *Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1965, էջ 341—344։*

մեծ մասամբ առանձին հոլովաձևով արտահայտել հնարավոր չէ։ Նույնիսկ այն դեպքում, երբ կապը համարժեք է դիտվում որևէ հոլովաձևի իմաստին, դարձյալ նուրբ տարբերություն կա դրանց միջև։

Կապերի նշանակությունները, տեսակները հայ քերականագիտության մեջ բավականաչափ ուսումնասիրված են։

Եթե մի կողմ թողնենք անցյալի ուսումնասիրությունները, ապա վերջին շրջանում դրանք մանրամասնորեն քննվել են մեծ հայագետ Մ. Աբեղյանի, ապա Վ. Առաքելյանի, Ա. Մարգարյանի, Ս. Աբրահամյանի և ուրիշների կողմից[1]։

Այս քերականները երևան են հանել կապերի խոսքի մասային առանձնահատկությունները, տվել նրանց իմաստային քննությունը, սահմանազատել կապը այլ խոսքի մասերից, երևան հանել կապի և այլ խոսքի մասերի հարաբերակցությունները։

Մ. Աբեղյանն առաջինը ցույց տվեց, որ կապն ու կապի խնդիրը միասնաբար են շարահյուսական մի պաշտոն կատարում։ Սակայն Աբեղյանը չի զբաղվում այն հարցով, թե ինչ խոսքի մասի լրացումն են նրա հետ կապում կապերը, ինչպիսի հարաբերություններ են արտահայտում նրանք։ Նա միայն քննել է կապերի իմաստները։

Կապերի հոլովառությունը և իմաստային հարաբերությունները համառոտ ձևով ներկայացված են նաև հայոց լեզվի դպրոցական դասագրքերում։

Սակայն Մ. Աբեղյանի, Վ. Առաքելյանի, Ս. Աբրահամյանի աշխատություններում, պայմանավորված դրանց բնույթով, կապերը չեն քննված ըստ նրանց և կապի խնդրի (կապվող բառի) լրացական հարաբերության՝ բառակապակցության գլխավոր բառի նկատմամբ։ Այսպես, մանրամասն չի քննված այն հարցը, թե ինչ խոսքի մասի լրացումներ են արտահայտվում կապով ու կապի խնդրով (կապվող բառով), ինչպես և չի բացահայտված կապերի հարաբերակցությունը իմաստային տեսակետից, այսինքն՝ ցույց չի տրված, թե ինչ ընդհանուր իմաստների շուրջն են խմբավորվում

---

[1] Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, Երևան, 1931 թ., Վ. Առաքելյան, *Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները*, 1957, Ա. Մարգարյան, *Արդի հայերենի կապերը*, 1955, Ս. Աբրահամյան, *Չթեքվող խոսքի մասերը*, Երևան, 1959, ապա նույնի *Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում*, Երևան, 1965։

կապերը։ Կապերի իմաստային հարաբերությունների, նրանց հոլովառության և շարահյուսական դերի բացահայտմանն է նվիրված Ս. Մարգարյանի աշխատությունը։ Այստեղ հեղինակը կապերը դասակարգել է երկու սկզբունքով՝ ա) ըստ նրանց արտահայտած իմաստի, բ) ըստ շարահյուսական կիրառության, այն բանի, թե նախադասության ինչ անդամ են կապում նրա լրացյալին, այսինքն թե կապն ու կապի խնդիրը նախադասության ինչ անդամ են դառնում։

Սակայն կապերի ամեն մի խմբի վերագրելով մեկ հարաբերության իմաստ՝ այնուհետև նույն կապերի կիրառություններն է նշում։ Ըստ Ս. Մարգարյանի, ստացվում է, որ մոտ, վրա, տակ, մեջ, ներքև, շուրջ, միջև կապերն ունեն տարածական հարաբերության իմաստ և այդ իմաստով էլ լինում են նաև տեղի պարագա, սակայն տեղնուտեղը նշում է, որ վրա կապը իր խնդրի հետ կարող է լինել նաև ժամանակի պարագա, ձևի պարագա, իսկ տակ կապը՝ նաև ձևի պարագա, մեջ կապը նաև ժամանակի պարագա, շուրջ կապը նաև վերաբերության խնդիր և այլն, իսկ ուղղության հարաբերություն արտահայտող կապերի (դեպի, մինչև, առ) համար հիմնական կիրառություն չի նշում, այլ կապին առանձին-առանձին տալիս է տեղի պարագայի, վերաբերության խնդրի, ժամանակի պարագայի, չափի պարագայի և այլ պաշտոն՝ կապի խնդրի հետ։

Ստացվում է, որ կապերն ունեն ընդհանուր իմաստներ ըստ խմբերի, ապա ամեն մի կապ առանձին-առանձին կիրառություն՝ իր խնդրի հետ միասին։ Իրականում կապի ամեն մի կիրառություն հենց նրա կապային տվյալ իմաստից է բխում։ Կապի իմաստը նրա կիրառությանը հակադրելը ճիշտ չէ։ Կապի իմաստը շարահյուսական կիրառությունից դուրս հնարավոր չէ որոշել։ Որքան իմաստ որ արտահայտվում է տվյալ կապով, այնքան էլ շարահյուսական կիրառություն ունի այդ կապը։ Եթե մի դեպքում մեջ կապը տեղի պարագա կիրառություն ունի, այսինքն տեղի պարագա է լինում կապի խնդրի հետ, իսկ այլ դեպքում՝ ժամանակի պարագա, ապա դա նշանակում է, որ մեջ կապը ունի և՛ տարածական, և՛ ժամանակային իմաստներ և ոչ թե միայն ժամանակային իմաստ, որի հիման վրա իբր այն կարող է տարբեր կիրառություն ունենալ, այսինքն լինել տարածական հարաբերություն արտահայտող կապ, որը մի դեպքում իր խնդրի հետ դառնում է տեղի պարագա, իսկ այլ դեպքում՝ ժամանակի և այլ պարագաներ։ Սա կապի իմաստի անջատումն է նրա կիրառությունից։ Կապի շարահյուսական կոչված կիրառությունը ըստ էության նրա իմաստի դրսևորումն է։ Ս. Աբրահամյանը իր հիշյալ աշխատության մեջ նշում է, որ կապերը ոչ միայն բայի, այլև ուրիշ խոսքի մասերի լրացումներն են կապում նրանց հետ։

Հարցի այս կողմի վրա մենք ուշադրություն ենք դարձրել մեր մի շարք հոդվածներում[1]: Հարցի այսպիսի մեկնաբանությունը սկզբունքային նշանակություն ունի։ Կապի կիրառությունը դրանով ավելի լայն սահմաններում է ներկայացվում, քան ավանդական քերականագիտության մեջ է ընդունված։

Մեր աշխատության համապատասխան գլուխներում անդրադարձել ենք առաջին հարցին. ցույց է տրված, որ կապերով կարող են դրսևորվել ածականների, գոյականների բազմաթիվ լրացումներ։ Այս բաժնում քննության ենք առնում բայերի՝ կապերով արտահայտվող լրացումները՝ իմաստային տեսակետից։ Դասդասումը կատարվում է աշխատության բնույթին համապատասխան։ Կապերը ուսումնասիրված են ոչ թե առհասարակ, այլ ըստ իրենց արտահայտած լրացական հարաբերության լրացյալ բայերի նկատմամբ։

Պետք է նշել, որ կապերի դասդասումը ըստ տեսակների (իսկական, անիսկական և կապական բառեր) մեր ուսումնասիրության համար էական նշանակություն չունի։ Այստեղ կարևորը կապերի և կապվող բառերի արտահայտած լրացական հարաբերության բացահայտումն է։ Նույն կարգի հարաբերությունները կարող են արտահայտվել և՛ իսկական, և՛ անիսկական կապերով, և՛ կապական բառերով:

Կապերի ուսումնասիրությունը բացահայտում է ոչ միայն տարբեր կապերի միջև եղած իմաստային ընդհանրությունները, այլև նույն կապերի բազմիմաստությունը, որով հարաբերակցությունը կապերի միջև բազմազան է լինում. մի դեպքում տարբեր կապեր նույն իմաստն են արտահայտում, իսկ մյուս կողմից, նույն կապը տարբեր կապերի հետ ընդհանրություն է ձեռք բերում։

Կապերի իմաստային ընդհանրությունը առաջին հերթին հենվում է նրանց շարահյուսական դերի ընդհանրության վրա։ Մյուս կողմից էլ, նույն կապի բազմազան իմաստները պայմանավորում են տվյալ կապի շարահյուսական բազմազան կիրառությունները։

Կապերի իմաստային դասդասումը բավականաչափ դժվար է։ Դրա պատճառը ոչ միայն այն է, որ կապերը մեծ մասամբ բազմիմաստ են, այլև այն, որ երբեմն նույն կապակցության մեջ դրսևորվում է շարահյուսական-իմաստային խառը հարաբերություն, այսինքն զգացվում է երկու և երբեմն երեք իմաստի համատեղում։

[1] Տե՛ս մեր «Ածականի կազմության շուրջը» («Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 1), «Ածականի բառակապակցությունները ժամանակակից հայերենում» (Նույն տեղում, 1962, № 2), «Մակբայի բառակապակցությունները ժամանակակից հայերենում» (Խ. Աբովյանի անվան մանկ. ինստիտուտի «Գիտական աշխատությունների ժողովածու» № 8, 1961)։

Ցվ սա օրինաչափ երևույթ է։ Կապերի միջև շարահյուսական իմաստի ընդհանրության առաջացման պրոցեսում կան միջակա աստիճաններ, երբ նույն կապը երկու և ավելի իմաստները միաժամանակ է դրսևորում։

Ահա այդ անընդհատ պրոցեսի արտահայտությունն էլ իմաստային խառն խմբերի առկայությունն է։ Այսպես, շնորհիվ կապով արտահայտվում է պատճառի հարաբերություն, սակայն այն դեռևս կարող է մեկնաբանվել նաև իր հին՝ միջոցի իմաստով։

Սակայն սա չի նշանակում, թե բոլոր կապերն էլ կարող են այսպիսի իմաստային խառն դրսևորում ունենալ։ Մասնավորապես պետք է նշել, որ կապական բառերը հիմնականում մենիմաստ են։

Իսկական կապերի (ինչպես և որոշ անիսկական կապերի) բազմիմաստությունը պայմանավորված է նրանց՝ բառային կոնկրետ նշանակության աստիճանական կորստով և վերացական, միայն քերականական նշանակության ձեռք բերումով։

Մինչդեռ կապական բառերը չեն հեռացել իրենց նյութական իմաստից, լիովին չեն ձևայնացել («քերականացել»)։

Սպասարկու բառերի, մասնավորապես նախդիրների այսպիսի առանձնահատկությունը դիտված է նաև այլ լեզուների բառակապակցություններին նվիրված ուսումնասիրություններում[1]։

Ինչպես արդեն նշել ենք «Մակբայի բառակապակցությունները» բաժնում[2], մի շարք բառեր համատեղում են մակբայի և կապի խոսքի մասային հատկանիշներ։ Այդ բառերը (առաջ, հետո և այլն) բառակապակցությունների մեջ կարող են հանդես գալ մերթ իբրև մակբայ, մերթ իբրև կապ, մերթ էլ՝ այդ երկուսի համատեղությամբ։ Այս հանգամանքը մեր քերականներից ոմանց կողմից ճիշտ չի մեկնաբանված. նրանք իբրև մակբայ գործածվելու շնորհիվ այդ բառերի ստացած լրացումները կապի խնդիր են համարում։

Մենք աշխատել ենք խուսափել այդպիսի սխալից։ Այս տեսակետից էլ ոմանց կողմից իբրև կապի խնդիր դիտված ձևերը այստեղ չենք քննում։

Բայց կապային լրացումներ ստանում է սեռական, տրական, հայցական, բացառական և մասամբ գործիական հոլովներով։ Սրանց մեջ ամենից շատ բաժին ընկնում է սեռականին, փոքր-ինչ պակաս՝ նաև տրականին։ Հայցական, բացառական հոլովներով խնդրառությունը համեմատաբար սակավ է, իսկ գործիականով լրացումները դրվում են միայն ճանդերձ և չափ կապերի հետ։

---

1 Տես Н. Н. Прокопович, Словосочетание в совр. русском лит. языке, М., 1966, էջ 181—186։

2 Տե՛ս «Մակբայի բառակապակցությունները» բաժինը։

Հայ քերականագիտության մեջ կապերի քանակը տարբեր չափով է ներկայացվել։ Կապերի գիտական առաջին դասակարգման հեղինակ Մ. Աբեղյանը դրանց թիվը սահմանում էր հետևյալ կերպ. իսկական՝ 12, անիսկական՝ 7 և կապական բառեր՝ 23-ից ավելի (առանց սահմանափակելու)։ Ա. Մարգարյանը իսկական և անիսկական կապերն ընդունում է իբրև մի տեսակ՝ իսկական և դրանց թիվը սահմանում 35-ը, իսկ կապական բառերը՝ 30-ից ավելի (առանց սահմանափակման)։ Վ. Առաքելյանը կապերը (իսկական, անիսկական, կապական բառերը) 126-ի է հասցնում։ Ս. Աբրահամյանը ընդունում է 40 իսկական, 23 անիսկական և 23 կապական բառեր։

Ինչպես երևում է, կապերի թիվը պտտվում է 70-ից 100-ի շուրջը։ Պետք է նկատի ունենալ, որ Վ. Առաքելյանի կողմից նշված կապերի մի մասը գրաբարյան է և այժմ գործածությունից դուրս եկած, ինչպես՝ զ, ստն, ց, ի տրիտուր, զկնի, զինչ, *մի քանիսը նեղ բարբառային են և այս կամ այն հեղինակի կողմից շատ քիչ գործածված, ինչպես՝* հար (մինչև), ոնց, փոխ, փոխան, բանց *և այլն։*

Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բայի լրացումները նրա հետ կապում են մոտ 90 կապեր, որոնցից մի քանիսը հազվադեպ են գործածվում կամ բարբառային կնիք ունեն, ինչպես՝ ի հեճուկս, ի հանույս, զերդ, հեղ, ջգրու, առ ի չգոյե, բանց *և այլն։ Առավել գործածական կապերը շուրջ 70-ի են հասնում, այդ թվում և կապական բառերը։ Դրանք են՝* անց, առ, առանց, առաջ, առջև, արքիվ, բացի, դեմ, դեպի, դիմաց, դուրս, զատ, ընդդեմ, ըստ, ժամանակ, ի, իբրև, ինչպես, ի պատիվ, ի վեր, վեր, կերպով, կողմը, համաձայն, համար, համեմատ, հանդերձ, հանդեպ, հանդիման, հանձին (հանձինս), հանուն, հետ, հեռու, հետև (ետև), հետո, հօգուտ (օգտին), ձեռքից, մասին, մեջ, մինչև, միջոցին, միջոցով, միջև, մոտ, նախքան, ներս, ներքո, ներքև, նկատմամբ, նման, նպատակով, շնորհիվ, շուրջը, որպես, չափ, չնայած, պատճառով, պես, վար, ի վար, վերաբերյալ, վերաբերմամբ, վերջը, վերև, վրա, տակ, տեղ, տեսակետից, ցած, փոխարեն, բան:

Անշուշտ, դրանք հավասարաչափ չեն գործածվում, ինչպես և իմաստային տեսակետից նույն նշանակությունը չունեն։ Սրանցից մի քանիսի գործածության շրջանակներն անընդհատ աճում են, իսկ մի քանիսինը, ընդհակառակն, պակասում են։ Այսպես, առանց, բացի, առաջ, դեմ, հետ, մեջ, վրա, մոտ, պես, տակ, մասին, վերաբերյալ *կապերը խիստ շատ գործածական են, իսկ* առ, զատ, հանդիման, չափ *կապերի գործածությունը սահմանափակ է։* Հետ, վրա, մոտ, դեպի, մասին, մեջ, նման, պես, առաջ, առջև, որպես, տակ,

իբրև և այլ կապեր աչքի են ընկնում բազմիմաստությամբ, ընդ որում երբեմն նրանք այնպիսի իմաստներ են արտահայտում, որոնք իրարից արդեն շատ հեռու են։

Կապային լրացումներով բայական բառակապակցությունների ուսումնասիրությունը կատարել ենք հետևյալ ձևով։ Սկզբում ներկայացվում են կապերը և նրանց հոլովառությունը, այն է՝ տարբեր հոլովների և կապերի միջոցով արտահայտվող կապակցությունները, ապա և քննվում են այդ կապակցություններում լրացման իմաստային հարաբերությունները։ Հայ քերականագիտության մեջ կապերի իմաստների ուսումնասիրությունը կատարվել է մանրամասն։ Այստեղ հարմար չէ կրկին մեկ առ մեկ քննել նույն կապերի իմաստները մի տեղում, քանի որ՝ ա) նույն իմաստը արտահայտվում է տարբեր կապերով, և այդ դեպքում ավելորդ կրկնություն կստեղծվեր, բ) բազմաթիվ կապեր իմաստային նույն խմբին են պատկանում, և դրանց միավորումը կնպաստի շարադրանքի համառոտմանը։

Ս. Մարգարյանի վերոհիշյալ աշխատության մեջ նույնպես քննվել են կապերի կիրառությունները։ Սակայն դա վերաբերում է կապերի բոլոր կիրառություններին։ Մյուս կողմից, այդտեղ նկատի է առնվում կապի խնդիրն ու կապը իբրև նախադասության անդամ։

Մինչդեռ մեր ուսումնասիրությունը վերաբերում է բառակապակցություններին, իսկ այդ պահանջում է կապի խնդիրն ու կապը դիտել միայն բառակապակցության սահմանում։ Այս տեսակետից էլ քննության մեջ չեն կարող արտահայտվել կապի խնդրի ու կապի բացահայտիչ, ստորոգելիական վերադիր կիրառությունները, ինչպես նաև գոյականի լրացումների դերում հանդես եկող կառուցվածքները։ Վերջին տեսակի կապակցությունների քննությունը մտնում է գոյականի բառակապակցությունների մեջ[1]։

Բայի լրացումները սեռական հոլովով և կապերով.— Սեռական հոլովով կապի խնդիր են ստանում և բայի լրացում դառնում նրա հետ միասին շատ մեծ թվով կապեր (բոլոր կապերի կեսից ավելին)։ Դրանք են՝ առաջ, առջև, առթիվ, դեմ, դիմաց, ետև, երեսից, ընդդեմ, կողմը, կողմից, համար, հանդեպ, հանդիման, հանձին, հանուն, հետ, հօգուտ, ձեռից, մասին, մեջ, միջոցով, միջև, մոտ, ներքև, նկատմամբ, վերաբերմամբ, վերաբերյալ, վերև, վրա, տակ, տեղ, տեսակետից, փոխարեն։ Սրանցից մի քանիսը անձնական դերանունների առաջին և երկրորդ դեմքի ձևերի տրական հոլովի հետ են գործածվում, ինչպես՝ համար, հանուն, հետ, մոտ, վրա։

[1] Տե՛ս «Գոյականի լրացումները կապով ու կապի խնդրով» հատվածը։

Ներքև, առաջ կապերը դրվում են նաև բացառականի, չափ՝ գործիականի հետ։ Մի քանիսն էլ ետադրություն լինելիս սեռականի, իսկ նախադրություն լինելիս անձնական դերանունների 1-ին և 2-րդ դեմքերի տրականի հետ են գործածվում, ինչպես՝ հանձին, շնորհիվ։

Հետո, մոտ, վրա կապերի հետ 1-ին և 2-րդ դեմքերի անձնական դերանունների սեռականի գործածությունը բարբառային ազդեցության հետևանք է և սխալ։

«Բոլորովին հակառակ ազդեցություն էր անում իմ վրա» (Ր, 2, 326)։ «Շրջապատող առարկաները ծանրացել էին իմ վրա» (Ր, 2, 353)։ «Դա կատարվել էր իմ հետ» (Ր, 2, 406)։ «Նավաստին տեղափոխվեցավ իմ մոտ» (Ր, 5, 132)։ «Քո հրեշտակը կկապվի քո հետ» (Ծ, 248)։

Իսկ չափ, դեմ, տեղ կապերի մոտ անձնական դերանվան առաջին, երկրորդ դեմքի ձևերը ևս սեռականով են դրվում, ուստի սխալ է դրանց տրական գործածությունը։

«Ես էլ քեզ տեղ լինեի, այդպես կվարվեի» (Մուր., 3, 288)։ «Ինձ չափ փորձված չես» (Մուր., 3, 288)։ «Նրան լարում են մեզ դեմ» (Մուր., 6, 296)։

Մասին, առթիվ կապերի մոտ հնարավոր է ցուցական դերանունների թե՛ սեռականի (սրա, դրա, նրա, մասին,—առթիվ), թե՛ հայցականի գործածությունը (այս, այդ, այն մասին,— առթիվ)։ Այսպես, վերջին ձևերի գործածությունից կարելի է նշել. «Կամենում եմ այդ առթիվ ստանալ իշխանուհու և ձեր հաճությունը» (Մուր., 6, 37)։ «Ավելորդ է համարում այդ մասին խոսելը» (Շիրվ., 3, 42)։

Համար կապի մոտ երբեմն սխալմամբ դնում են ինչո՞ւ հարցական դերանունը՝ ինչի՞ սեռականի փոխարեն, որը սխալ է։ Օրինակ՝ «Ինչո՞ւ համար մի գնդակի զուր զոհ գնալ երեքով» (ԳՍեԺ, 2, 333)։ «Բայց ինչո՞ւ համար դու ասացիր» (Մուր., 2, 74)։

Սեռական հոլովի հետ գործածվող կապերը իմաստային տեսակետից միատեսակ չեն։ Դրանք արտահայտում են բազմաթիվ հարաբերություններ, և կապի խնդիրն ու կապը լրացյալի նկատմամբ շատ բազմազան իմաստներ են դրսևորում։

Սեռական և կապ պահանջող բայերը բազմաթիվ իմաստային խմբերի են պատկանում։

Բայի լրացումները տրական հոլովով և կապերով.— Տրական հոլովով կապի խնդրի հետ գործածվող կապերը համեմատաբար սակավաթիվ են։

Դրանց մեջ մտնում են արդեն նշված այն կապերը, որոնք անձնական դերանունների տրական են պահանջում, ինչպես նաև

առանց, ընդառաջ, ըստ, կից, հակառակ, համաձայն, համապատասխան, հանձին, հավասար, նման, չնայած, պես:

Պետք է նշել, որ մինչև կապի խնդիրը երբեմն դնում են տրականով։ Այս գործածությունը, սակայն, ճիշտ չէ, թեև այն իբրև օրինաչափություն է նշվում Մ. Աբեղյանի կողմից[1]։ Եղած սակավաթիվ կառույցվածքներն արդյունք են այլ գործոնների ազդեցության։ «Իմ խռովությունը այժմ հասնում էր մինչև խելագարության» (Ր, 4, 269)։ «Հայրենասիրությունը հասնում էր նրա մեջ մինչև մոլեռանդության, իսկ կրոնասիրությունը՝ մինչև բարձր առաքինության» (Ր, 5, 189)։ «Պարտեզների շարքը հասնում էր մինչև դաշտը կարող վտակին» (Վփ, 4, 235)։ «Հավասար ատելությամբ էին վերաբերվում հարկահան կողոպտիչներին՝ բանը երբեմն հասցնելով մինչև զինված ընդհարման» (ՁԴԱՎ, 256)։ «Բայց հազիվ կգտնվեր մի մարդ, որ խոնարհվեր մինչև այն աստիճան սառնության» (Ր, 4, 373)։

Առաջին չորս օրինակներում մինչև կապի մոտ տրականը դըրված է երկու տեսակ կառուցվածքների բաղարկությամբ։ Կապն ու խնդիրը հասնել բայի լրացումն են, իսկ հասնել բայը առանց կապի տրականով խնդիր էստանում (հասնել մի բանի,— մեկին)։ Հինգերորդ օրինակում մինչև կապի մոտ աստիճան բառը խլել է կապի խնդրի դերը և դիտվել իբրև հայցականով կապի խնդիր։

Նույնտիպի սխալ հոլովառություն կա հազվադեպ նաև դեպի կապի մոտ։ Այս դեպքում ևս լրացյալ բայի ու կապային խնդրառության ազդեցությամբ դեպի կապի խնդիրը տրականով է դրվում։ Օրինակ՝ «Դարձիր նորից դեպի քո պատվանդանի բարձունքին» (ԳՍԵԺ, 2, 218)։ Առանց կապի մոտ սա, դա, նա դերանունների սեռականով խնդրի գործածությունը արդի հայերենում սխալ է, քանի որ ն-ն այդ դերանվան հոլովաձևերի մեջ հոդ չէ այլևս։ Օրինակներ՝ «Առանց դրա էլ այնքան հոգս կա» (ՇԹՆԺ, 2, 67)։ «Առանց նրա հնարավոր չէր լինում որևէ բան նախաձեռնել» (ՇԹՆԺ, 2, 92)։ «Առանց դրա կարելի է խելագարվել» (ՄԱՊՀՋ, 338)։

Տրականով և կապերով արտահայտվում են տարբեր իմաստներ։

Բայի լրացումները հայցականով և կապերով.— Հայցականով կապի խնդիր են ստանում և նրա հետ բայի լրացում դառնում առ, առանց, բացի, դեպի, ի վար, ի վեր, իբրև, ինչպես, մինչև, նախքան, քան կապերը։

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ առանց կապը հայցականով խնդիր է ստանում ցուցական դերանունների հետ (առանց այն,—

[1] Տե՛ս «Հայոց լեզվի տեսություն», 1965, Երևան, էջ 477։

այս,—այդ), *եթե դրանք իր են մատնանշում։ Օրինակներ՝ «Դարձյալ դո՞ւք, դարձյալ դո՞ւք,— կանչեց* առանց այն *էլ կատաղած իշխանուհին» (ՆԴ, 2, 65)*։ «Առանց այն *էլ չկա ու չկա» (ՆԴ, 3, 18)*։

Այս տեսակետից ճիշտ չէ իր մատնանշելու դեպքում այս, այդ, այն *դերանունների հայցականի փոխարեն* սա, դա, նա *ցուցականների տրականի գործածությունը կապի խնդրի դերում։ Օրինակ՝ «Այգեպանները* առանց նրան *էլ շատ են մեր մեջ» (ՎՓ, 3, 473)*։

Սակայն պետք է առանձին նշել առանց *կապի մոտ հայցականի մի կիրառությունը, որը գալիս է բարբառներից ու խոսակցական լեզվից։ Այս դեպքում* առանց *կապն առանձնում է* ան *ժխտական նախածանցի դերը*։

«Ինքն էլ զարմացավ հանկարծ, թե ինչու է առանց նրա *մարդանը* մտել» *(Բակ., 397)*։ «*Ամբողջ կյանքումս պիտի այսպես* առանց ճայրիկ մնամ» *(ԱՇ, 27)*։

Բանաստեղծական խոսքում չափի և հանգավորման պահանջով այսպիսի գործածությունը սովորական է դառնում։

«Առանց ժամ *ու* պատարագ *Մեջը* դրին *Մարոյին» (ՀԲ, 2, 12)*։ «*Ամբողջ ամառը* առանց տաքիլեր Պոլիս եմ զալի *էս ձորի միջին»* *(ՀԲ, 2, 37)*։ «Գնա ու գնա առանց ճանզրվան» *(Իս., 2, 67)*։

Սակայն տարօրինակ է, որ նույն նախադասության մեջ առանց *կապի մոտ դրվում են և՛ տրական, և՛ հայցական։ Օրինակ՝* «Նլավ զնաց առանց կաց բարևի, առանց խոսք» *(ՎԽԳՀ, 228)*։

Բացի *կապը նույնպես հայցականով խնդիր է առնում բարբառային հոլովառության ազդեցությամբ*։

«Սեղանատան մեջ ուրիշ ձայն չէր լսվում, բացի *աքեղաներից մեկի ընթերցանության* ձայնը» *(Ր, 5, 134)*։ «*Ուրիշ ոչինչ* չի երևում՝ բացի *արևի* գունդը *և Արարատի* սպիտակ կատարը» *(Բակ., 571)*։ «*Բացի* օգնությ՝ *ոչ մի* վնաս չէր պատճառել նրան» *(Մուր., 3, 293)*։

Ի վեր, ի վար *կապերի մոտ բացառականի գործածությունը սխալ է*։ «*Եվ* ֆայլում են *մարդիկ* Պողոտայից ի վեր, Պողոտայից ի վար» *(ՍՏԲ, 74)*։

Պետք է նշել, որ սխալ է ի մեջ *գրաբարյան նախադրությունը հայցականի հետ գործածելը*։ «*Խեժ* կկաթի փոսն ի մեջ» *(ՎԽԳՀ 232)*։

Բայի լրացումները բացառականով և կապով.— *Բացառական հոլովի հետ համեմատաբար քիչ կապեր են դրվում։ Դրանք են՝* անց, առաջ, բացի, դեն (դես), դուրս, զատ, հետո, հեռու, ներքև, վերջը։ *Սրանցով և կապի խնդրով կարող են տարբեր իմաստներ արտահայտվել*։

Ճիշտ չէ կողմ *կապի հետ բացառականի գործածությունը։ Այսպես, Վ. Խեչումյանը գործ է ածել* ճամփից կողմ.— *«Սիմ-սարի*

կայծակեղեն ամպերին մերձ, ճամփից կողմ՝ տուն կա ապահով» (ՎխԳԼ, 194)։ Այստեղ կողմ գործածված է մեկուսի, հեռու կապերի իմաստով, և այդ պատճառով էլ կապի խնդիրը բացառականով է դրված։

Բայի լրացումները գործիականով և կապով.— Գործիականի հետ դրվում են հանդերձ և չափ կապերը՝ բայի լրացումը նրա հետ կապելով։ Այսպիսի կապային լրացումները մի քանի իմաստ են արտահայտում, որոնք կքննվեն կապերի իմաստների բաժնում։ Այսպիսի կապակցություններից կարելի է նշել. «Գիտենալով հանդերձ, զգում էր, որ անզոր է» (Շիրվ., 3, 215)։ «Անկասելի է, որ հոգով չափ չվշտանամ» (Մուր., 2, 52)։

Կապային լրացումների իմաստային հարաբերությունները լրացյալի նկատմամբ.— Կապի խնդիրներն ու կապերը կարող են արտահայտվել բազմաթիվ իմաստային հարաբերություններ լրացյալ բայի նկատմամբ բառակապակցության մեջ։ Ընդ որում այդ իմաստները մի դեպքում բնորոշ են միայն որոշ թվով, երկրորդ դեպքում՝ ավելի մեծ թվով, երկրորդ դեպքում՝ շատ ավելի մեծ խմբի պատկանող կապերի միջոցով արտահայտվող լրացումներին։ Նկատի ունենալով այն հանգամանքը, որ կապերով արտահայտվող հարաբերությունները խմբավորվում են, կապային լրացումներով բառակապակցությունների քննարկումն էլ կատարել ենք իմաստային այդ խմբերից ելնելով։

Պետք է նշել, որ կապերի միջոցով նույնպես, ինչպես բայի և նրա ոչ-կապային լրացումներով կազմվող բառակապակցություններում, կարող են արտահայտվել խնդրային և պարագայական հարաբերություններ։ Այսպես, կապի խնդրով և կապով կարող են դրսևորվել հանգման, վերաբերության, բացառման, սահմանափակման, փոխադարձ կապի, վերածման, փոխարինության, համեմատության, շահի և այլ խնդրային, տեղի, ժամանակի, նպատակի, ձևի, վիճակի, պատճառի, հիմունքի և այլ պարագայական հարաբերություններ։

Կապային լրացումներով կազմվող բառակապակցությունների քննությունը երևան է հանում մի հետաքրքրական երևույթ։ Այդ այն է, որ շարահյուսական իմաստները շատ դեպքերում անխառն չեն լինում. նույն բառակապակցության մեջ կապի խնդիրն ու կապը կարելի է մեկնաբանել մեկից ավելի իմաստներով։ Սա պայմանավորված է կապերի իմաստային վերացարկման աստիճանով. որքան կապը շատ է հեռացել իր բառային իմաստից, այնքան շատ շարահյուսական իմաստների դրսևորման կարող է

ծառայել։ Այսպես՝ վրա *կապով կարող են արտահայտվել բազմազան շարահյուսական իմաստներ (տարածական, ժամանակային, ուղղության, վերաբերության, հանգման և այլն)։*

Հետ կապով ավելի շատ իմաստներ են արտահայտվում։ Նկատելի է, որ կապական բառերն ու որոշ իսկական կապեր, մեկական հարաբերություն են դրսևորում, օրինակ՝ փոխարեն, տեղ, տեղակ:

Իսկ շատ դեպքերում էլ նույն կապակցության մեջ կապն ու խնդիրը համատեղում են տարբեր իմաստներ։ Այստեղից էլ՝ կապերի միջոցով դրսևորվող իմաստային միջակա հարաբերությունների առկայությունը։ Պատահական չէ, որ հետ *կապով արտահայտվում են ոչ միայն միասնության, փոխարինության, հանգման, ժամանակի որոշակի հարաբերությունները, այլև միասնության-ժամանակային, հանգման-միասնության, հանգման-փոխարինության խառն հարաբերությունները։* Համեմատ *կապով դրսևորվում են ոչ միայն փոխարինության, վերաբերության, տեղի անխառն հարաբերությունները, այլև հանգման-վերաբերության, հանգման-սահմանափակման խառն իմաստները։*

Նկատվում է նաև մի հետաքրքրական երևույթ։ Այդ այն է, որ նույն կապն ու խնդիրը նույն բառակապակցության մեջ կարող են տարբեր հարաբերություններ արտահայտել։

Այսպես, խոսել մեկի վրա *բառակապակցության մեջ* մեկի վրա *երկու մեկնաբանություն ունի։ Մի դեպքում այն վերաբերության իմաստ է արտահայտում* (խոսել մեկի վրա=խոսել մեկի մասին), *իսկ երկրորդ դեպքում՝ հանգման իմաստ* (խոսել մեկի վրա=խոսել մեկի դեմ, *ինչպես՝* բարկանալ մեկի վրա):

Կապային լրացումները խնդրային հարաբերությամբ.— *Կապերի միջոցով կարող են արտահայտվել խնդրային բազմաթիվ հարաբերություններ։ Ընդ որում դրանք սովորաբար ընդհանրապես ենք արտահայտում այն տերմիններով, որոնցով բնորոշում ենք բայի և նրա թեք հոլովներով լրացումների հարաբերությունները։ Իրականում կապերի միջոցով դրսևորվող խնդրային հարաբերությունները յուրահատուկ են. դրանք իմաստային նուրբ տարբերություններ ունեն այն խնդրային հարաբերություններից, որոնք դրսևորվում են այս կամ այն հոլովաձևով՝ առանց կապերի։ Ճշգրիտ արտահայտելու դեպքում ամեն մի կապի մեկ իմաստը պետք է ունենար իր տերմինը, և այդ դեպքում կապերով դրսևորվող հարաբերությունները կունենային մի քանի հարյուր տերմին։*

Ելնելով կապային լրացումների առավել վերացարկված նշանակություններից, դրանք խմբավորում ենք նույն իմաստային խմբ-

քերի մեջ, ինչ որ բայի՝ թեք հոլովաձևերով դրված լրացումների արտահայտած հարաբերությունները։

Հանգման հարաբերությունը կապով և կապի խնդրով.— *Հանգման հարաբերությունը կարող է արտահայտվել* հետ, առ, դեպի, դեմ, ընդդեմ, հանդիման, մոտ, ներքո, վրա, տակ, մեջ *կապերի և համապատասխան կապի խնդիրների միջոցով, ընդորում կապի խնդիրը կարող է դրվել ըստ տվյալ կապի խնդրառության, տվյալ դեպքում կա՛մ սեռական, կա՛մ տրական, կա՛մ հայցական հոլովներով։ Հանգման իմաստով լրացումներ ստանում են մասամբ նաև այն բայերը, որոնց մոտ հանգման տրականով լրացում է դրվում։ Դրանցից են՝* վերաբերվել, մասնակցել, կռվել, պատերազմել, զայրանալ, բարկանալ, հակառակվել, խոնարհվել, փակել, թշնամանալ, համեմատել, մատնել, հուսալ, հույս ունենալ, իշխել, բռնանալ, խոսել, հաչել *և այլն։*

«*Հարգանքով է* վերաբերվում դեպի *այդ* մարդը» *(Ր, 6, 108)։* «*Նա մինչև անգամ* մասնակցում է *իրանց գյուղային հասարակության բոլոր* գործերի մեջ» *(Ր, 2, 309)։* «*Արգելում է մեզ* առ աստված ունեցած *մեր պարտքը կատարել*» *(Մուր., 5, 173)։* «*Սկսում էի նրա* մտքի դեմ հակառակել» *(Ր, 4, 389)։* «*Կարծես ծագող* արևի դեմ խոնարհվել է *հեթանոս քրմուհին*» *(Բակ., 141)։* «Ջերմացնենք նրա *սիրտը* դեպի *յուր* դպրոցը» *(Մուր., 3, 49)։* «*Եվ* ընդդեմ *այս բաց* անարդարության *Առայժմ մենք մեր աչքերն* ենք փակում» *(ՊՍՄԱՄ, 219)։* «*Ու մի օր սիրան* է բաց անում Մառ ու ծաղկի հանդիման» *(ԳՍեժ, 2, 168)։* «*Գուցե* կթշնամանա նրա հետ» *(Ր, 4, 508)։* «*Ոմանք ծիծաղում էին, գլխարկը* համեմատում ծակ բևի հետ» *(Բակ., 62)*, «*Ու* ժայռերի հետ կռվել ենք *կյանքում*» *(ԳՍեժ, 1, 310)։* «*Ես պատրաստ էի մինչև անգամ* մատնել *գործակատարներին Մակար* աղայի մոտ» *(Շիրվ., 4, 52)։* «*Իր գլուխը ամենայն հնազանդությամբ* խոնարհեցնում է *ամեն մի անիրավ* ձեռքի ներքո» *(Ր, 4, 319)։* «Նրա վրա հուսալ *իզուր է*» *(Ր, 2, 145)։* «*Կարծում էր, թե* կիշխե *բոլոր* տղամարդկանց վրա» *(Ր, 2, 164)։* «Ամենի վրա հաչում էր» *(Ր, 4, 285)։* «*Ոչինչ սիրող* սրտի վերա բռնանալու *ուժ չունի*» *(ՀՀ, 53)։* «*Բոլորը* ենթարկված էին հարկերի տակ» *(Ր, 4, 387)։*

Մի շարք կապակցություններում կապի խնդիրն ու կապը կարող են մեկնաբանվել երկու իմաստով՝ հանգման և ուղղության։ Այդպիսի լրացումները արտահայտվում են դիմաց, վրա *կապերի միջով, իսկ լրացյալ կարող են դառնալ* ուշադրություն դարձնել, իջնել, ծառս լինել *և նման ուրիշ բայեր։*

«Մառս եղավ *դուշման* երկնքի դիմաց» *(ՀԹ, 2, 66)*։ «*Երբեք* ուշադրություն չէր դարձրած, *յուր կարծիքով, այդպիսի սնոտի* հարցերի վրա» *(Ր, 2, 16)*։ «*Նրա պաշտոնն այն էր՝ հսկել խանութի դուռը*, կանաչեղենի վրա *ջուր* սրսկել» *(Ր, 2, 7)*։ «*Վարագույրն* իջավ նկարների վրա» *(Բակ., 176)*։

Հանդեպ, վրա *կապերով ու կապի խնդրով լրացումները երբեմն կարող են արտահայտել հանգման-վերաբերության հարաբերություններ։ Այսպես են* ծիծաղել, քրքջալ, ուրախանալ, խոսել, զարմանալ *բայերը*։

«*Ասես ձորը* քրքջում է *նրանց* հիմարության հանդեպ» *(Բակ., 156)*։ «*Իմ ընկերուհիները* ծիծաղում էին ինձ վրա» *(Ր, 2, 30)*։ «*Ասլանը ժպտաց թուրք հնագետի* միամտության վրա» *(Ր, 5, 66)*։ «Ուրախանում էր *նրա* դատողությունների վրա» *(Ր, 5, 217)*։ «*Շատ* եմ զարմանում *ես այն* հոր վրա» *(ՀՍՄԱ, 153)*։

Նույն կապերով և կապի խնդիրներով կարող են արտահայտվել նաև հանգման-սահմանափակման հարաբերությունները։ Այդպիսի լրացումները դրվում են փորձել, լցվել, խեղճանալ, ընկնվել *և նման բայերի մոտ*։

«*Այդ բոլորը* փորձել էին *թե* վարպետիս *և թե նրա* գործավորների վրա» *(Ր, 2, 341)*, «Մահվան հանդեպ *վախից* չեմ կորանում-կեռվում» *(ՊՍՄԱՄ, 269)*։ «*Բոլորը քնքուշ սիրով* են լցվում քո հանդեպ» *(ՇԹՆԾ, 1, 36)*։

Դիմաց *կապով և կապի խնդրով կարող է արտահայտվել հանգման-հաղորդման խառն իմաստը։ Այս դեպքում իբրև լրացյալ հանդես է գալիս* խոսել *բայը։ Օրինակ՝* «Ծերունու դիմաց խոսեց *աբեղան*» *(ՀԹ, 2, 30)*։

Հետ *կապով և խնդրով արտահայտվում է հանգման-միասնության խառն հարաբերություն։ Այս դեպքում լրացյալ լինում են* խաղալ, տեսնվել, ամուսնանալ, մրցել *և նման բայերը*։

«Ամուսնացած էր *մի* դերձակի հետ» *(Շիրվ., 4, 283)*, «*Չէր կարող* մրցել *այս իրական* դժոխքի հետ» *(Շիրվ., 4, 13)*։ «*Պանինի շներն անտառի բացատում* արջի հետ էին կոխ կենում» *(Բակ., 4)*։ «*Գեղեցկությունը և հարստությունը մի-մի չարիքներ են, եթե* լծորդված չեն առաքինության հետ» *(Մուր., 2, 58)*։ «*Դիմում էր դեպի կլուբ՝ այնտեղ* վաճառականների հետ տեսնվելու» *(Ր, 2, 21)*։

Հետ *կապն ու նրա խնդիրը մի շարք բայերի մոտ դարձվածք են կազմում, ինչպես՝* խաղալ (մեկի) հոգու հետ, հազարների հետ խաղալ *և այլն*։

«*Իմ* հոգու հետ *դու* մի խաղա» *(ԴՍԵԺ, 1, 225)*, «Հազարների

հետ էր խաղում» *(Ր, 2, 9)*։ «*Արևը* խաղում էր *մայրամուտի* ամպերի հետ» *(Բակ., 234)*։

Իսկ առ, վրա *կապերով ու խնդիրներով լրացումները կարող են համդման, ուղղության, հաղորդման հարաբերություններ համապատասխանող լրացումը կապել լրացյալ բային։ Իբրև լրացյալ հանդես են գալիս* զանգատվել, կանչել, գոռալ, աղաղակել *և այլ բայեր*։

«*Պատկերն սաես* զանգատվում էր առ ստվածն» *(ՄՍԿԿՏ, 35)*։ «Կանչում էր զրաստների վրա» *(ՎՓ, 4, 93)*։ «*Պապս ղողղոջ ձայնով պատասխանում էր, երբեմն* կանչում ձիու վրա *և սանձը ձգում*» *(Բակ., 138)*։

Վերաբերության հարաբերությունը կապով ու կապի խնդրով.— *Վերաբերության հարաբերությունը արտահայտվում է* մասին, համար, վրա, վերաբերյալ, վերաբերմամբ, առթիվ, հանդեպ, նկատմամբ, կապակցությամբ, դեմ, *շուրջը կապերով ու կապի խնդիրներով։ Իբրև լրացյալ մեծ մասամբ հանդես են գալիս վերաբերության խնդիր ստացող սացական, իմացական, նաև այդպիսի բայերի արմատից կազմված անվանական բաղադրիչ ունեցող հաբաղրական բայերը, ինչպես՝* խոսել, պատմել, զանգատվել, բողոքել, կասկածել, մտածել, դատել, խորհել, կասկած ունենալ, զրույց անել, խոսք բացել, հոգ տանել, կարծիք հայտնել *և այլն*։

«*Ես նրանից* ուսման մասին դատել *չէի կարող*» *(Ր, 2, 324)*։ «*Ամերիկյան ամբողջ մամուլը* խոսում էր *այդ նոր փայլուն* աստղի մասին» *(ՆԴ, 1, 125)*։ «*Սպասում էին, հուսալով որևէ բան* իմանալ *հանգուցյալի կտակի* բովանդակության մասին» *(Շիրվ., 3, 19)*։ «*Իսկույն սկսեցին* մտածել *նրա* հանգստության համար» *(Ր, 5, 283)*։ «*Նա* զանգատվում է ձեզ վրա» *(Շիրվ., 8, 63)*։ «*Կծկված մի անկյուն* խորհում էր երազների վրա» *(ՎՓ, 4, 512)*։ «*Սկսեցիր* քեզ վրա *մի*թ կարծիք կազմել» *(ՎՓ, 3, 340)*։ «*Զանազան* խնդիրների առթիվ *հոր* հայտնած *կարծիքները նրան թվում էին հնացած*» *(Մուր., 3, 76)*։ «*Միշտ* տրտնջում էր նրա դեմ» *(ՆԴ, 3, 242)*։ «*Նա* փոխել էր *իր հայացքը հատկապես* կանանց նկատմամբ» *(ՇԹՆԾ, 2, 192)*։ «Սակարկում էին *ինչ-որ* բանի շուրջը» *(ՍՁ, 4, 165)*։

Վերաբերության իմաստը կարող է արտահայտվել նաև հասցեին *կապական բառի միջոցով։ Օրինակ՝* «Իմ հասցեին *նա* պիտի սեր *անշուշտ*» *(ՍՁ, 2, 249)*։ *Պետք է նշել, որ* վրա *կապի գործածությունն այս իմաստով արդեն հնանում է, թեև հանդիպում ենք* վրա *և* մասին *կապերի համատեղ գործածության։ Օրինակ՝* «*Օհանն այժմ* դրա վրա չէր մտածում, *նա* մտածում էր միայն մանուկի մասին» *(Ր, 4, 97)*։

Իսկ արդի հայերենում վրա *կապի գործածությունը* մասին, վերաբերյալ *կապերի իմաստներով հնաբանության արտահայտություն է։ Օրինակ՝ «Ասյա* ասաց *Անի* քաղաքի վրա» *(ՎԽԴՎ, 41)։*

Վերաբերության իմաստը կարող է արտահայտվել նաև փոխաբերաբար գործածված բայերի լրացման միջոցով։ Այսպես, բուրել *բայը ասացական նշանակություն չունի, սակայն Գ. Սարյանի մի բանաստեղծության մեջ այն գործածված է* ասել, պատմել *նշանակությամբ և ունի վերաբերության իմաստով լրացում։* «Բուրեցե՛ք *նրան իմ* սիրո մասին» *(ԳՍԵԺ, 1, 458)*[1]։

Վերաբերյալ, վերաբերմամբ, վրա *կապերով լրացումները կարող են արտահայտել նաև վերաբերության-սահմանափակման խառը հարաբերություն՝* սխալվել, տարածվել *և այլ բայերի մոտ։*

«Դուք սաստիկ և սաստիկ սխալվում եք *այդ* առարկայի վերաբերմամբ» *(ՆԴ, 2, 48)։ «Մի՞թե ծնողների հանցանքը* տարածվում է որդիների վրա» *(Ր, 4, 239)։*

Սահմանափակման հարաբերությունը կապով ու կապի խնդրով. — *Մի շարք բայերի լրացումները սահմանափակման հարաբերություն են արտահայտում՝ լրացյալին կապվելով* մեջ, մասին, կողմից, համար, հանձին (հանձինս), տեսակետից, ի դեմս *կապերի միջոցով։ Այսպիսի լրացում ստանում են բազմաթիվ բայեր, և դժվար է թվարկել դրանք իմաստային տեսակետից։ Դրանցից են՝* ցույց տալ, դրսևորել, արտահայտել, երևան բերել, ունենալ, օգնել, հաղթել, խուսափել, փախչել, վարժվել, մեղադրել *և այլն։*

«Նա խիստ նուրբ ճաշակ ուներ *կերակուրների և ըմպելիքների* ընտրության մեջ» *(Ր, 2, 307)։ «Ավոյի* պարապմունքի մեջ *Մըհեն* օգնում էր *նրան» (Ր, 4, 249)։* «Ձիարշավի մեջ *նա բոլորին* հաղթեց, մուշտակռիվների մեջ *բոլորը* փախչում էին նրա *առջևից, բոլոր* խաղերի մեջ *նա* ցույց տվեց *զարմանալի ճարպկություն» (Ր, 4, 287)։* «Նյութականի կողմից *նախանձելի վիճակ* ուներ» *(Մուր., 2, 12)։ «Թիֆլիսը* նրա համար նորոգվեց» *(ՇԹՆԾ, 2, 409)։* «Մտավոր կողմից *նա բավականին* զարգացած էր» *(Մուր., 2, 11)։* «Առաջարկեց *օրվա հոբելյարի՝ քաղխորհրդի կենացը,* հանձին *նրա* նախագահի» *(ՍԶ, 4, 320)։ «Ամբոխի* ուժից հետո *վճռական ձայնը* պատկանում է փողին» *(Մուր., 3, 217)։*

Վերջին բառակապակցության մեջ զգացվում է նաև ժամանակի նուրբ իմաստ։

---

[1] *Նույն բանաստեղծության մեջ կան նաև* ասացեք սիրո մասին, լուր տարեք սիրո մասին, երգեցեք սիրո մասին *և այլ կապակցություններ։*

Սակայն դուրս, մեջ, կողմից *կապերով կազմվող մի շարք բառակապակցություններում երբեմն լրացումն արտահայտում է տեղի-սահմանափակման (կամ սահմանափակման-տեղի) խառն հարաբերություն։ Նման կապակցություններում լրացյալ է լինում այնպիսի բայ, որը առանձին-առանձին երկու տեսակ լրացում կարող է ստանալ։ Այդպես են՝* որոնել, փնտրել, գտնել, տեսնել *և այլն։*

«*Սկսեցի այդ պատճառը* որոնել *սիրածս աղջկա* դավաճանությունից դուրս» (*ՆԴ, 1, 119*)։ «*Բժիշկը նորից նրա կաշվի տակ* մեջքի կողմից սրսկում էր *ինչ-որ սթափեցուցիչ հեղուկ*» (*Շիրվ., 3, 13*)։ «*Բայց ես* չգտա *նրան* կյանքի մեջ» (*ՀԹ, 1, 11*)։

Համեմատության իմաստը կապով և կապի խնդրով.— *Համեմատության հարաբերությունը սովորաբար բնորոշ է ածականի և բաղադրյալ ստորոգյալի լրացումներին։ Այսպես,* հետ, առջև, մոտ, մով, հանդեպ, դիմաց, դեմ *կապերով և կապի խնդիրներով լրացումները բաղադրյալ ստորոգյալի լրացում լինելիս կարող են համեմատության իմաստ արտահայտել։ Իսկ բայը քիչ է ստանում կապով համեմատության իմաստ ունեցող լրացումներ։ Եղած օրինակներից կարելի է նշել.* «*Երեխաները* նրա դիմաց նսեմացել էին *կարծես*» (*ՍԶ, 4, 368*)։ «*Նրա* ահավորության առջև *մարդ կարծես* մանրանում էր» (*Ր, 5, 65*)։

Փոխարինության իմաստը կապով ու կապի խնդրով.— *Փոխարինության իմաստը կարող է արտահայտվել* տեղ, տեղակ, փոխարեն, հանդեպ, դեմ, դիմաց, համար, իբրև, կողմից, հետ *կապերով ու նրանց խնդիրներով։ Իբրև լրացյալ հանդես են գալիս բազմաթիվ բայեր՝ առանց իմաստի սահմանափակման։ Դրանցից կարելի է նշել՝* տալ, դնել, ծանրանալ, կանգնել, աշխատել, կապել, պահանջել, խնդրել, ուզել, վերցնել, ուտել, հավաքել, անել, փոխել, վաճառել, ծախել, ընդունել *և այլն։*

«*Ծառերն* էին *փող* տալիս հացի տեղ» (*Բակ., 37*)։ «*Իրեն սիրելի կնոջ* գլխի տեղ *Օձի գլուխն* է *կրծքին* ծանրացած» (ՀԹ, 2, *142*)։ «*Հազար ու մի թուղթ գրելով Քո* հոր տեղակ ստորագրեցին» (*Ս, 102*)։ «*Հինգ* արշինի տեղ *չորս ու կես* է տալիս» (*Շիրվ., 4, 47*)։ «*Թող դուք* կորչեիք հորբերի տեղակ» (*ՀԹ. 1, 213*)։ «*Վանուշը* հոր տեղը *պահակ* էր կանգնել» (*ՍԶ, 4, 497*)։ «*Նամակ* գրելու համար *հավ ու ճուտ* էր ուզում» (*Բակ., 15*)։ «*Խղճի դեմ բան կլիներ փող* վերցնել *փոքրիկ* ծառայությունների համար» (*ՇԹՆՃ, 1, 295*)։ «*Ջոր քար է* կրծում *իր* հացի հանդեպ» (*Իս., 2, 69*)։ «Վարձի դիմաց *մեկը նրան մեջը ծակ հին փափախ* էր տալիս» (*Բակ., 408*)։ «Պարտքի դիմաց *ցորեն ու պանիր* էին հավաքում» (*Բակ., 17*)։ «*Քո*

շարության դեմ *Բարություն* չանել Չեմ կարողանում» *(ՀՍՄԱ, 132)։* «*Բայց դրա համար* խնդրում է *իմ դուստրը* իբրև փրկանք» *(Մուր., 6, 67)։* «*Նա* փոխում է *իր յուղը, պանիրը, բուրդը երկրագործի* ալյուրի հետ» *(Ր, 4, 375)։* «*Հինը* ծախում եք *նրան* իբրև *նոր* ապրանք» *(Մուր., 3, 228)։*

Կողմից *կապով և խնդրով լրացումը որոշ բայերի մոտ* (պատասխանել, պատասխան տալ, ելույթ ունենալ, ճառել *և այլն) կարող է մեկնաբանվել և՛ փոխարինության, և՛ սահմանափակման իմաստներով։ Օրինակ՝* «*Իր* ընկերների կողմից պատասխանեց *նրա ճառին*» *(Ր, 5, 450)։*

Ճանի իմաստը կապով ու կապի խնդրով.— *Շահի հարաբերությունը դրսևորվում է* համար, հօգուտ (օգտին), ի սեր, հանուն, տակ *կապերով ու կապի խնդիրներով։ Ընդ որում պետք է նշել, որ դրանցից մի քանիսի բուն նշանակությունն է շահի իմաստի դրսևորմանը ծառայում, իսկ մյուսները երկրորդաբար են այդ դերը կատարում։ Այսպես, շահի իմաստը արտահայտվում է առաջին հերթին* համար, հօգուտ (օգտին), հանուն *կապերով, իսկ մյուսների համար այդ իմաստի դրսևորումը հիմնականը չէ։ Շահի իմաստով լրացում կարող են ստանալ բազմաթիվ և բազմազան իմաստային խմբերի պատկանող բայեր, ինչպես՝* աշխատել, գործել, բերել, տանել, ուղարկել, բացվել, պատասխանել, շինել, կառուցել, հանել, կազմակերպել, գրել, զոհել, թողնել *և այլն։*

«Կռրծում էին *միայն* եկեղեցու համար» *(Ր, 2, 477)։* «Պետու համար *գարունը երջանիկ օրեր* էր բերում» *(Բակ., 32)։* «Կազմակերպված էր *գաղթական* որբերի օգտին» *(Շիրվ., 9, 261)։* «*Դրանից հետո մի գումար* գրի հօգուտ *մեր ազգի խեղճ ու որբերի* ընկերությանը *բարեգործական*» *(ՀԹ, 1, 191)։* «*Կարող էի* զոհել գանի *և* հայրենիքի սիրույն» *(Մուր., 4, 147)։* «Հանուն *ազատ մեր* աշխարհի, Հանուն ասածու *և իր* փառքի— Բարձրացնում ենք *մեր ձայնն ահա*» *(ՀԹ, 1, 262)։* «*Սենյակը* թողնում էր *իմ* տրամադրության տակ» *(ՍՉ, 4, 122)։*

Շահի հարաբերության դրսևորմանն են ծառայում նաև ի նպաստ, խաբրու, ի նեննւկս, ի հանույս *ոչ սովորական կապերը։*

«Արտահայտվեցիք ի նպաստ Հունաստանի» *(Շիրվ., 9, 236)։* «Ման եմ գալիս փառքիս խաբրու» *(ՀՍՄԱ, 194)։* «*Ձմեռն էլ կարծես* նրանց ջգրու *ավելի* է զայրանում» *(ԱՇ, 104)։*

Երբեմն համար *կապով և խնդրով դրված լրացումը կարելի է մեկնաբանել և՛ շահի, և՛ նպատակի իմաստներով։ Այդ երկակի մեկնաբանությունը հենվում է լրացման իմաստային ճկունության*

վրա։ Պետք է նշել, որ նման բառակապակցություններում լրացյալ լինում են նույնպես բազմաթիվ և տարբեր իմաստային խմբերի պատկանող բայեր։ Հայտնի է, որ նպատակի պարագան ցույց է տալիս այն նպատակը, որի համար տեղի է ունենում գործողությունը, իսկ շահի անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան կամ անձը, որի օգտին կամ որին ի վնաս կատարվում է գործողությունը։ Եթե այնպես է լինում, որ կապի խնդիր է դառնում որևէ վերացական գոյական, ապա համար *կապը նրա հետ նպատակի-շահի խառն հարաբերություն է արտահայտում։ Այսպես,* որևէ բան անել մեկի բարօրության համար *կապակցության մեջ* բարօրության համար *և՛ նպատակի, և՛ շահի հարաբերություն է դրսևորում։ Այսպես են նաև հետևյալ բառակապակցությունները։*

«*Ընկերներս* խնամք էին տարել *իմ* հանգստության համար» *(Ր, 4, 296)։* «*Կարոն* աշխատում էր *մի այսպիսի նախապատրաստված ժողովրդի* բարօրության համար» *(Ր, 4, 348)։* «Պատմության համար լույս է ընծայել *մի գեղեցիկ նյութ*» *(Շիրվ., 9, 17)։*

Բացառման իմաստը կապով և կապի խնդրով.— *Բացառման անուղղակի խնդիրը, ինչպես հայտնի է, ցույց է տալիս այն առարկան, որի մասնակցությունը բացառվում է որևէ գործողության կամ եղելության մեջ։ Բացառման իմաստով լրացումները բնորոշ են բազմաթիվ բայերի, և դժվար է սահմանափակիչ բնութագրում տալ այնպիսի լրացում ստացող բայերին։ Սակայն այս հարաբերությունը դրսևորման քիչ միջոցներ ունի։ Իբրև բացառման իմաստի հիմնական արտահայտիչ հանդես են գալիս* առանց, բացի, զատ, դուրս *կապերը և նրանց խնդիրները։*

«Առանց զենքի, Առանց զորքի *Շահերի դեմ* կգնար» *(ՀԹ, 2, 136)։* «Բացի *քավոր* Պետրոսից *մենք ուրիշ բարեկամ* չունեինք» *(Ր, 317)։* «*Իսկ ձորերի մեջ բան* չի երևում *Անձայն արտասվող* ամպերից բացի» *(ՀՍՀԵՄ, 154)։* «Իրենից զատ *ոչ մի տղամարդ* չէր երևում» *(Մուր., 2, 14)։* «*Նա Նեապոլի երաժշտական* դպրոցից զատ *ուրիշ ոչինչ* չէր տեսել *Իտալիայում*» *(Մուր., 2, 71)։* «Նախրից դուրս *ուրիշ գործ* չուներ *նա*» *(Բակ., 36)։*

Պետք է նշել, որ առանց *կապով և խնդրով լրացումը հավասարապես կարող է դիտվել նաև ձևի, երբեմն էլ վիճակի իմաստներով։ Օրինակ՝* «*Դեռ* քնած էին *մերկ գետնի վրա,* առանց ծածկոցների» *(Ր, 4, 236)։*

Փոխադարձ կապի իմաստը կապով և կապի խնդրով.— Միջև հետ *կապերը և նրանց խնդիրները բայի լրացման դերում հանդես գալով կարող են ցույց տալ ենթակայի և այլ առարկայի միջև եղած*

փոխադարձ հարաբերություն, այնպիսի հարաբերություն, որն ստեղծվում է գործողության փոխադարձությամբ։ Այսպիսի կապակցություններում կապի խնդիր դառնում են անձ ցույց տվող (կամ անձնավորված) բառերը (գոյական, դերանուն կամ գոյականաբար գործածված այլ խոսքի մասեր)՝ բուն կամ փոխաբերական կիրառությամբ։ Լրացյալ լինում են տարբեր իմաստային խմբերի բայեր, ինչպես՝ մտերմանալ, հաշտվել, գրկախառնվել, ողջագուրվել, փոխել, փոխանակել, բռնվել, կապվել *և այլն։*

«*Օրըստօրե* ընկերներիս հետ *ավելի* մտերմանում էի» *(Ր, 2, 324)։* «*Այսպիսի թղթերը նրանք* փոխում էին միմյանց հետ» *(Ր, 2, 431)։* «*Բոսֆորը* գրկախառնվում է Մարմարայի հետ» *(Շիրվ., 9, 227)։* «*Իր պատրաստած չիթերը* փոխում էր ֆուրղի հետ» *(Ր, 5, 407)։* «*Բոլորն ինքնաբերաբար* համբուրվեցին Երեմիայի, *ապա նաև* միմյանց հետ» *(ՋԴԱՎ, 496)։* «*Արտասվելու չափ գիտեմ սիրել, Բախտս* բաժանել ամենքի հետ» *(ՀՍՄԱ, 47)։* «*Մարդիկ կատաղի գոտեմարտի* բռնվեցին թշնամու հետ» *(ՄՀԱԿՄ, 5)։* «*Այն կապն է միայն սուրբ, որ* կապված է *երկու* ազգակիցների *ու* կրոնակիցների միջև» *(Շիրվ., 3, 41)։* «*Հիշո՞ւմ եք* իմ *ու* Նասիրյանի միջև տեղի ունեցած ընդհարումը» *(ՆԴ, 3, 119)։*

Փոխադարձ կապի իմաստով լրացում չեն կարող դառնալ իր ցույց տվող գոյականները, քանի որ իրը գործողության ակտիվ մասնակից չէ (բուն կիրառության դեպքում)։ Այս իմաստով էլ սխալ է ծանոթանալ մի բանի հետ *բառակապակցությունը։ Օրինակներ՝* «*Եվրոպական* լեզուների հետ ծանոթացա» *(Մուր., 2, 93)։* «*Դուրս կգանք կյանք*՝ երկրի հետ *լավ և մոտից* ծանոթանալու *համար*» *(ՎՓ, 3, 686)։*

Նման դեպքում ճիշտ է ծանոթանալ մի բանի *կառուցվածքը (որտեղ լրացում-լրացյալ հարաբերությունը հանգման է)։*

Վերածման իմաստը կապով և կապի խնդրով.— *Վերածման իմաստի դրսևորման հիմնական միջոցը տրական հոլովն է (տե՛ս «Բայի լրացումները տրական հոլովով» բաժինը)։ Սակայն երբեմն* վրա *կապը և նրա խնդիրը ևս այդպիսի հարաբերություն կարող են արտահայտել։ Օրինակ՝* «*Բոլոր հարստությունը* բաժանած էր *յոթն* մասների վրա» *(Ր, 4, 292)։*

Միասնության իմաստը կապով և կապի խնդրով.— *Հայ քերականագիտության մեջ միասնության հարաբերությունը պարագայական իմաստների մեջ է քննվում։ Սակայն մասնավորապես կապային իմաստների ուսումնասիրությունը բերում է այն եզրակացության, որ միասնության հարաբերություն ցույց տվող լրացումները*

ոչ միայն պարագա, այլև խնդիր են։ Այսպես, «Ընկերներիս հետ ես էլ գնացի» նախադասության մեջ ընկերներիս հետ լրացումը գնացի բայի մոտ ցույց է տալիս գործողությանը մասնակցող առարկաները և ոչ թե գործողության հանգամանքը, հետևաբար այն խնդիր է և ոչ թե պարագա է։

Միասնության իմաստը դրսևորվում է հետ, հանդերձ կապերով և նրանց խնդիրներով։

Այսպիսի լրացումներ կարող են ստանալ տարբեր իմաստային խմբերի պատկանող բայեր, ինչպես՝ գնալ, գալ, վերադառնալ, աշխատել, գործել, բերել, տանել, վերցնել, դնել, հանել և այլն։

Միասնության իմաստը դիտում ենք ենթատեսակներով՝ բուն միասնության և խնդրային միասնության։

Ա. Բուն միասնության իմաստով լրացումը կապով և կապի խնդրով.— Լրացումը ցույց է տալիս այն առարկան, որը գործողության մասնակիցն է՝ ենթակայի հետ միասին։

«Ընկերների հետ տուն եկավ Հաբուզը» (Բակ., 14)։ «Դրան հետ խրճիթն էլ ամբողջ շարժվում էր տեղից» (ՆԴ, 1, 78)։ «Նա եկավ ընտանիքով հանդերձ»։ «Պայքարիր դարիդ առընթեր» (Չ, 180)։ «Դու Մաշտոցի հետ հաց էիր կտրել» (ՀՍՀԵՄ, 244)։

Բ. Խնդրային միասնության իմաստը կապով և կապի խնդրով. — Մի շարք բառակապակցություններում կապով լրացումն այն առարկան է ցույց տալիս, որը կրում է գործողությանը խնդրի հետ հավասարապես։

«Թաղեմ քեզ, հատիկ, և դարդս քեզ հետ» (ՀՀ, 48)։ «Ջանադան մանրուքի և մրգեղենի հետ հաց էլ էր ծախում» (ՆԴ, 1, 77)։ «Փողոցում հանդիպեց Լևոնին մի աղջկա հետ» (ՇԲՆԾ, 2, 431)։ «Մեր հերոսը իր փառքի հետ ժառանգեց և բազմաթիվ նախանձորդներ» (Ր, 4, 173)։ «Ուրիշների հետ ինձ ևս տարավ կռիվ» (ՍԶ, 2, 101)։

Հետ կապն ու խնդիրը երբեմն կարող են մեկնաբանվել միաժամանակ և՛ միասնության, և՛ ժամանակային իմաստներով։ Օրինակ՝ «Նրա հետ ծնվել, նրա հետ էլ պիտի մեռնեին» (ՆԴ, 3, 8)։

Երբեմն կապն ու խնդիրը բուն միասնության և խնդրային միասնության իմաստները կարող են արտահայտել հավասարապես։ Օրինակ՝ «Հայ մշակույթի բազմաթիվ ականավոր ներկայացուցիչներ, տակավին նախահեղափոխական շրջանում, ազգային համալսարանի և ակադեմիայի հետ միասին առաջ էին քաշում նաև հանրագիտարան ստեղծելու հարցը» («Հայրենիքի ձայն», 1966 թ., № 51)։ Այստեղ համալսարանի և ակադեմիայի հետ միասին լրացումը առաջ էին քաշում բայի լրացումն է և ունի 2 մեկնաբանու-

թյուն. բնագրից բխող մեկնաբանությամբ այն խնդրային միասնության իմաստ է արտահայտում, մինչդեռ ձևով այն բուն միասնության իմաստով է գործածված:

Երբեմն հետ *կապի խնդիրը լինում է ոչ թանձրացական գոյական, և այդ դեպքում կապն ու խնդիրը ոչ թե միասնության, այլ ուղեկցման հարաբերություն են արտահայտում՝ ցույց տալով այն երևույթը, որը ուղեկցում է լրացյալ բայի գործողությանը: Այսպիսի լրացում կարող են լինել* ձայն, աղմուկ, զարկ, հարված, ըխկոց *և այլ գոյականներ: Օրինակ՝ «Յուրաքանչյուր* հարվածի հետ *դուրս* է ցայտում *կայծերի մի ամբողջ հեղեղ» (Ր, 4, 242):*

Համապատասխանության իմաստը կապով ու կապի խնդրով. — Ըստ, համաձայն, համեմատ *կապերն ու նրանց խնդիրները մի շարք բայերի մոտ արտահայտում են համապատասխանության հարաբերություն: Կապի խնդիրը տվյալ բառակապակցություններում ցույց է տալիս այն առարկան, որին համապատասխանում է գործողության կատարումը: Լրացյալ դառնում են բազմաթիվ ու տարբեր իմաստի բայեր, ինչպես՝* անել, կատարել, կանգնել, նստել, գործել, աշխատել, փոխել *և այլն:*

«Այդ ամենի սիգարը բերանիդ, զզվելի սովորությանդ համաձայն, *միայն* ծաղրեցիր, հեգնեցիր և լույս տվիր անտարբերությամբ» *(ՆԴ, 3, 112): «Տեսնում է այն էակին, որին աստված* ստեղծել է *իր* պատկերի հանգույն» *(ԶԴՍՎ, 119): «Նրանք իրենց* սովորության համեմատ նամակներ էին անում, ծիծաղում» *(Ր, 2, 532): «Տոների սովորական* հանդեսների համեմատ կատարվեցան *զանազան խաղեր» (Ր, 4, 287):*

Միջոցի իմաստը կապով և կապի խնդրով.— *Միջոցի դրսևորման ձևը սովորաբար գործիական հոլովն է: Սակայն, ինչպես հայտնի է, անձ ցույց տվող գոյականների գործիականը միջոցի իմաստով խիստ սակավ է գործածվում (տես «Բայի լրացումները գործիականով» բաժինը): Մասնավորապես անձի անունների միջոցի գործիականն ընդհանրապես անսովոր է: Այս դեպքում միջոցի իմաստը դրսևորվում է* հետ, միջոցով, ձեռքով *կապերով և սեռականով:*

«Երբեմն քարի տակից հանում էր տպագիր առաջին լրագիրը, որ ստացել էին սուրհանդակի հետ» *(Բակ., 162): «Իր բաժինը կարող* է ուղարկել Թարոսի հետ» *(ՍԶ, 2, 71):* «Նրանց միջոցով *ավելի հեշտ է խաղաղ ժողովրդի մեջ երկպառակություն* ձգել» *(Ր, 5, 427):* «Գրիշայի միջոցով ծանոթացավ *երիտասարդ կնոջ հետ» (Շիրվ., 3, 61):*

Ակնհայտ է, որ այս դեպքում կապն ու խնդիրը միջոցի իմաստն

արտահայտում են ձևի երանգով։ Դա էլ վկայում է ձևի իմաստի վերացարկման մասին՝ միջոցի և այլ իմաստների հիման վրա։

Միջոցի իմաստի թույլ երանգ է արտահայտվում մեջ, տակ, վրա *կապերով ու նրանց խնդիրներով։*

«Նա բերեց *մի* ամանի մեջ *կերակուր» (Ր, 4, 13)։ «Հանեց մի կերպ ծրարած, ծրարը խմորով փակցրած, հացեն* նրագի վրա չորացրած *նամակներ» (Բակ., 50)։ «Կառքը, թանկագին* մուշտակի մեջ փաթաթված *Իվան Գրիգորիչին տանում էր գործարան» (Շիրվ., 49)։ «Եվ* մաղախի մեջ *ես տուն* եմ տանում *Դաշտի բույրմունքով փշրանքը հացի» (ՀՍՄԱ, 108)։ «Այդ արտաները* քողարկում են լոզունգների, պլակատների տակ» *(ՇԲՆՃ, 1, 582)։*

Ուղղության իմաստը կապով և կապի խնդրով.— *Ուղղության իմաստը սովորաբար դրսևորվում է տրական հոլովով, ինչպես նաև մի շարք կապերով ու կապի խնդրով, ինչպես՝* դեպի, շուրջ, տակ, առաջ, վրա, ի վեր, կողմը, ընդդեմ, ընդառաջ, դուրս, հետ, կողմից: *Այս իմաստը գրաբարում արտահայտվում էր* ի, ընդ, առ *նախդիրներով և հոլովականով, ընդ որում գրաբարում նախդիրներն ու հոլովակաը ոչ միայն ուղղության, այլև ուղեկցության իմաստի դրսևորմանն էին ծառայում։ Արդի հայերենում ևս այս կապերը և նրանց խնդիրները հաճախ դառնում են ուղեկցության իմաստ արտահայտող լրացում։*

Պետք է նշել, որ բուն ուղղության իմաստով լրացումը խնդրային, իսկ ուղեկցության իմաստով լրացումը պարագայական նշանակություն ունի։

Ուղղության և ուղեկցության հարաբերությունների տարբերությունը դրսևորվում է լրացյալ բայերի իմաստով. ուղեկցության հարաբերությամբ լրացում ստանում են ուղեկցություն- շարժում ցույց տվող բայերը, իսկ ուղղության հարաբերությամբ լրացումը կապվում է հիմնականում ոչ տեղափոխություն ցույց տվող բայերի հետ։ Ուղղության իմաստով կապային լրացումներ ստանում են նայել, նետել, հայացք ձգել (հայացք գցել), աչք գցել, տանել, կախել, կախվել, բերել, ուղղել, ականջ դնել, բարձրացնել, շեղել, պարզել, կանչել, հրավիրել, լարել, հաչել *և այլ բայեր։*

«Ձեռքը տարավ դեպի *մի խոշոր* կոկոն» *(Ր, 2, 241)։* «Նայում ենք մեր շուրջ–*ահեղ փոթորիկ» (Ս, 86)։ «Պատահմամբ* նայեց պատշգամբի կողմը» *(Բակ., 123)։ «Արևն արդեն* դեպի մայրամուտ էր կախվել» *(Բակ., 129)։ «Գլուխը մի* կողմի վրա կթեքեր» *(Բակ., 130)։* «Հայացքը զցում էր սառայանչի կողմը» *(Բակ., 206)։ «Բոլորի աչքերն* ուղղված էին *սեղանի շուրջ նստած* չինովնիկների կող-

մը» *(Բակ., 208)։* *«Ամենքն իրանց* հայացքը հառել էին նրա վրա» *(Շիրվ., 4, 299)։* *«Հանկարծակի արթնանում էր և միշտ* ականջ դնում դեպի *կից* սենյակը» *(Շիրվ., 4, 428)։* «Բարձրացրեց *իր ձեռները* դեպի երկինք» *(Շիրվ., 8, 8)։* *«Հրացան* է քաշել հրամանատարի վրա» *(Բակ., 133)։* «Խոտորում էր դեպի *Գառնու* արահետը» *(Մուր., 4, 10)։* *«Անտանելի արկղը* ծռվում էր դեպի անդունդը» *(Վփ, 3, 224)։* «Նայում էր ոտքի տակ» *(ՇԲՆԺ, 2, 531)։* *«Ժայռերը սկսեցին քարեր* ձգել *նրա* հոսանքի դեմ» *(Շիրվ., 9, 43)։* «Հայացքը հառեց լուսամուտից դուրս» *(ՇԲՆԺ, 1, 332)։* «Ոլորվում էր կալերն ի վեր» *(ՀԱՄԱ., 157)։* *«Իսկ դու* նայում ես հորիզոնն ի վեր» *(ՀԱՀԵՄ, 62)։* *«Լռությունը* լարեց հաչոցի կողմը» *(Բակ., 418)։*

Ուղղության հարաբերությունը կարող է արտահայտվել նաև դին *կապի միջոցով։ Օրինակ՝ «Հանգիստ ու հպարտ* նայում է շուրջ դին» *(ՀՀ, 137)։* Դեպի օդը ցնդել *բառակապակցությունը երբեմն գործ է ածվում* հօդս ցնդել *գրաբարյան կապակցության փոխարեն։ Օրինակ՝ «Վանի միջնաբերդի գինարանը, վառոդի մթերանոցները մի գիշեր* դեպի օդը ցնդեցին» *(Ր, 5, 476)։*

Դեպի *կապն ու խնդիրը* գործածել, կիրառել *և նման բայերի լրացման դերում հանդես գալիս կարող են արտահայտել նպատակի-ուղղության համատեղ իմաստ։ Օրինակ՝ «Թող այսուհետև* գործ դրվին դեպի *հասարակաց* բարին» *(Ր, 5, 302)։*

Պետք է նշել, որ երբեմն ուղղության հարաբերությունը խստորեն չի սահմանազատվում ուղևորության հարաբերությունից։ Թեև դրանց տարբերությունը պայմանավորված է լրացյալ բայի իմաստով (ուղևորության իմաստով լրացում են ստանում ուղևորման-շարժման բայերը), սակայն հենց ուղղության ցույց տվող լրացումը կարող է նաև դիտվել ուղևորության նշանակությամբ։ Այս տեսակետից էլ այդ երկուսի տարբերակումը պայմանական է որոշ չափով։ Մասնավորապես հետաքրքրական է հետևից *կապի կիրառությունը։ Երբ ասում ենք՝* գնալ նրա ետևից, *ապա կա ուղղության և ուղևորության հարաբերության՝ խառն ձևով։* Հետևից *կապով կազմված են* մեկի (մի բանի) հետևից ընկնել *տիպի կայուն բառակապակցությունները։* «Վարուցանքի հետևից էինք ընկնում» *(Բակ., 134)։ «Ամեն մարդ իր* մտքի հետևից էր ընկնում» *(Բակ., 448)։*

Ընդառաջ *կապով և կապի խնդրով արտահայտված լրացումը ևս ուղղության-ուղևորության խառն իմաստ է արտահայտում։ Օրինակ՝* «Նրան ընդառաջ կգա *գինկամը*» *(ՄՍԿԿՏ, 387)։*

Երբեմն ուղղության իմաստի արտահայտմանն է ծառայում առ

նախդիրը՝ գրաբարյան կառույցվածքների օրինակով կազմված նախադասություններում։ Օրինակ՝ «Երկրավորի հայացքն ուղղում է առ աստված» *(ՋԴԱՎ, 113)։*

Պարագայական հարաբերությունները կապով և կապի խնդրով. — *Կապերի միջոցով կարող են արտահայտվել պարագայական բազմաթիվ իմաստներ, ինչպես՝ տարածական, ժամանակի, նպատակի, ձևի, վիճակի, պատճառի, հիմունքի, չափի և այլն։ Ընդ որում պարագայական իմաստները կապերի միջոցով ավելի շատ նրբերանգներ են ստանում։ Այս հարաբերությունների դրսևորմանը ավելի շատ կապեր են մասնակցում, քան խնդրային իմաստների արտահայտմանը։*

1. Տարածական հարաբերությունը կապով և կապի խնդրով.— *Տարածական հարաբերությունը երկու ենթատեսակ ունի՝ ուղղության և տեղի։*

Ա. Ուղղության իմաստը կապով և կապի խնդրով.— *Այսպիսի լրացումներն արտահայտվում են* առաջ, դեպի, մեջ, մոտ, տակ, վրա, կողմը, ետև, ի վար, վերև *կապերի միջոցով։ Լրացյալ լինում են շարժման-ուղղության բայերը, ինչպես՝* գնալ, գալ, ճանապարհ ընկնել, վերադառնալ, արշավել, մեկնել, դուրս գալ, հասնել, այցելել, նետվել, վազել, տանել, անցնել, փախչել, իջնել, բարձրանալ *և այլն։*

«Բարձրացանք դեպի գյուղը» *(Մուր., 5, 257)։* «Ինձ մոտ արի՝ *ձվածեղ անեմ» (ՀԹ, 2, 116)։ «Երբ* դղյակի առաջ հասավ, *իջավ ձիուց» (Մուր., 4, 44)։ «Գնացին մի այլ աշխարհ, այլևս մեր* երկրագնդի վրա չվերադառնալու *պայմանով» (ՎՓ, 3, 224)։ «Մինասյանն այդ գիշեր անհարմար համարեց* Շանյանի մոտ տեղափոխվել» *(ՆԴ, 3, 299)։ «Շավիղը* հանեց *ինձ* բլուրների առաջ» *(ՎՓ, 4, 646։ «Եվ մենք երդվեցինք Նկարի առաջ* Նետվել մարտի մեջ *ահեղաշառաչ» (ՀԱՀԵՄ, 78),* «Քայլում էի ձիապանի ետևից» *(Բակ., 127)։* «Անցավ դահլիճի մյուս կողմը» *(Ր, 2, 238)։* «Փախչում էին *իրենց* խանութի ետև» *(Շիրվ., 8, 70)։ «Իջեք, մրրիկներ,* դաշտն ի վար իջեք» *(Իս., 1, 366)։* «Բարձրանում են սարերն ի վեր *Եվ* իջնում են ձորերն ի վար» *(ՀԱՀԵՄ, 92)։ «Տավարը* հանեցին գյուղի վերև» *(Բակ., 34)։*

Ուղղության իմաստի դրսևորմանն են ծառայում նաև հնացած կամ բարբառային դեսը, դենը, քով *կապերը։*

«Մտքերը նախիրից չէին հեռանում, սարերից դենը չէին գնում» *(Բակ., 36)։ «Դուք* եք կանչում *ինձ* ձեր քով» *(ՀԹ, 1, 152)։*

Մեջ, ետևից *կապերով կազմված են մի շարք դարձվածքային*

բառակապակցություններ, ինչպես՝ հունի մեջ մտնել (ընկնել, դնել), (որևէ) բանի ետևից ընկնել *և այլն*

Ուղղորդության իմաստով լրացումը կարող է դրվել նաև այնպիսի բայերի մոտ, որոնք ուղղորդություն են ցույց տալիս ոչ թե անմիջականորեն, այլ փոխաբերաբար, ինչպես՝ չքանալ, ծորալ, *(մի բան)* նստել, կենտրոնանալ *և այլն*։

«*Սպիտակ ձին* չքացավ դեպի *Նարնջագույն* ամպերը» (*Բակ.*, *215*)։ «*Երևում էին նժույգներ հեծած այլ խմբեր ևս, որոնք արշավակի* կենտրոնանում էին դեպի *Մուսա աղայի* տաղավարները» (*ՎՓ, 3, 383*)։ «*Գետը սուսուսում է խոխոջյունով և մեղմիկ* ծորում դեպի մացառուտները» (*ՎՓ, 3, 388*)։ «*Մյուս օրը Սուրենյանը երկաթուղի* նստեց դեպի Փարիզ» (*ՎՓ, 3, 583*)։

Բ. Տեղի հարաբերությունը կապով և կապի խնդրով.— *Այս դեպքում լրացումը ցույց է տալիս այն տարածությունը, որտեղ կատարվում է գործողությունը։ Լրացյալի դերում հանդես են գալիս դադարման բազմաթիվ բայեր, ինչպես՝* կանգնել, նստել, պառկել, սպասել, հայտնվել, երևալ, դնել, գտնել, դիմավորել, տարածվել, ապրել, աշխատել, լսել, ծածկել, պահել, թաքնվել, փնտրել, քաղել, եռալ, տեղավորել, քնել, արթնանալ, տեսնել, նայել *և այլն*։

Այս հարաբերության դրսևորմանն են ծառայում վրա, առջև, շուրջը, միջև, տակ, հանդեպ, առաջ, մոտ, դիմաց, մեջ, դեմ, դուրս, կողմը, կողմից, հեռու, հանդիման, ետև (հետև), ներս, ներքև, ի վար, վեր, վերև, ցած *կապերը*։

«Մահճակալի շուրջը հավաքվել էին *մեռնողի ընտանիքի անդամները*» (*Շիրվ., 3, 10*)։ «*Լուսամուտներից* մեկի առջև դրված էր *մեծ գրասեղանը*» (*Շիրվ., 3, 51*)։ «*Սմբատը* նստեց տանտիրոջ *և* պապաշայի միջև» (*Շիրվ., 3, 88*)։ «Կանգնած էր դռան հանդեպ» (*Մուր., 2, 83*)։ «*Պատերից* մեկի տակ գտնվում էին *երկու հողե կուժեր*» (*Մուր., 6, 232*)։ «*Գնացքը* կանգ առավ *մի* կայարանի առաջ» (*Մուր., 6, 394*)։ «Դիմավորեց *թագավորին ամրոցի* դռների մոտ» (*Մուր., 4, 89*)։ «Կանգնեց նրանց դեմ ու դեմ» (*ԳՍԵժ, 2, 45*)։ «*Եկան* կանգնեցին *նրանք* խանութների դեմ դիմաց» (*ԳՍԵժ, 105*)։ «*Նա* պառկել էր տաղավարից դուրս» (*Ր, 4, 334*)։ «*Ծեր Փարվանա թագավորի* Ապարանքի հանդիման *Կազմ ու պատրաստ* սպասում են» (*ՀԹ, 1, 225*)։ «Կանգ առավ ափից հեռու» (*Շիրվ., 9, 194*)։ «*Ձին ու երինջը* ծածկվեցին բոստանների հետևը» (*Բակ., 136*)։ «Փնտրում ես *նրան յոթ սարի ետև*» (*ՀՍՀԵՄ, 321*)։ «*Շտապում էր դեպի առաջ, խորը* ավազի մեջ թաղելով *յուր ոտքերը*» (*Շիրվ., 4, 10*)։ «Ծածկվել է *ահագին* հողակույտերի ներքո» (*Ր, 5, 71*)։ «Սառ-

ցի ներքև քնա՞ծ եք *դեռ» (ՀԹ 1, 120)*։ «Ճանապարհից վերև, *բլուրի լանջին, մեկը* ջրում է *մուգ-կանաչ առվույտը» (Բակ., 107)*։ «*Պառավն իր* գլխի վերև տեսավ *մթության մեջ փայլող երկու ահարկու աչքեր» (ՆԴ, 1, 79)*։

Տեղի նշանակությունը դրսևորվում է նաև միջին, քով, դեմ *հնացած կամ բարբառային դարձած կապերով*։

«Կանգնած է *մենակ լայն* դաշտի միջին» *(Մ, 139)*։ «*Կապույտ* լեռներից դեմ՝ *Դնեպրի լուրթ ափին, Մի բարձունքի վրա անտառն* է *խոր* ննջում» *(ԳՍեժ, 1, 331)*։

Անհրաժեշտ է նշել, որ մեջ *կապը տեղի իմաստով իր խնդրի հետ միասին հաճախ համարժեք է տեղի ներգոյականին*։ Մեջ *կապի և նրա խնդրի այդպիսի կիրառությունը անհրաժեշտ է այն դեպքերում, երբ տվյալ բառը ներգոյական հոլովաձև չունի (օրինակ՝* ժողովրդի մեջ, էության մեջ, քնի մեջ, ամբոխի մեջ, ձյան մեջ, ստորության մեջ *և այլն)*։ *Այս կառուցվածքների գործածությունը ներգոյականի փոխարեն՝ առանց որոշակի նրբիմաստային տարբերության՝ ոճական սխալ է*։ *Այսպես, հարմար չէ գործածել* սենյակի մեջ, օդի մեջ, բաղի մեջ, դասարանի մեջ, դպրոցի մեջ, գրասենյակի մեջ, անկողնի մեջ, բանտի մեջ *և այլն՝* սենյակում, օդում, բաղում, դասարանում, դպրոցում, գրասենյակում, անկողնում *և այլ ձևերի փոխարեն*։ *Այս տեսակետից էլ ճիշտ չեն* մեջ *կապի հետևյալ գործածությունները*. «*Կարծես* օդի մեջ շարժվում էր *մի դիվական շունչ» (Ր, 5, 475)*։ «*Ամբողջ* բաղի մեջ չկար մի *ուրիշը նրա նման» (Շիրվ., 4, 230)*։ «Արևելքի մեջ *ամեն ինչ նվիրայացում* թվում է *խորհրդավոր և խորիմաստ» (Շիրվ., 9, 219)*։ «Նստեց անկողնի մեջ» *(ՍԶ, 2, 494)*։ «Բանտի մեջ *իմաստունը բավական* երազեց» *(Վփ, 3, 13)*։

Մեջ *կապի այսպիսի գործածությունը պատճառաբանվում է երկու դեպքում*։ *Առաջինն այն է, որ տվյալ նախադասության մեջ գործածված է այլ բառի ներգոյական հոլովաձև՝ մասնավորապես* մեջ *կապի ու նրա խնդրի հետ առնչված*։ *Այսպես, եթե տվյալ ներգոյականը* մեջ *կապի ու նրա խնդրի նկատմամբ դրվում է բացահայտիչ-բացահայտյալ հարաբերության մեջ, ապա ոճի անմիօրինակության պահանջով արդարացվում է* մեջ *կապի ու նրա խնդրի՝ ներգոյականի իմաստով գործածությունը*։

«*Ճանճուր Իվանիչը* ժամի մեջ կանգնած է *յուր սովորական* տեղում» *(Ր, 2, 14)*։ «*Մի այսպիսի* հյուրանոցի մեջ, *փոքրիկ գավառական* քաղաքում, *քավոր Պետրոսը* տեղեկացավ *մի պառավ կնոջ գաղտնիքների» (Ր, 2, 390)*։ «*Փաշան* կենում էր քաղաքում, *այսին-*

քըն բերդի մեջ» (Ր, 5, 50)։ «Շուկայի մեջ, հրապարակներում և եկեղեցիների բակերում խոսում, դատում և վիճում էին այդ խընդիրների մասին» (Մուր., 5, 146)։

Երկրորդ դեպքում մեջ կապի ու խնդրի՝ ներգոյականի իմաստով գործածությունը պատճառաբանվում է չափածո խոսքի չափի կամ հանգավորման նպատակներով։ Օրինակներ՝ «Թե կոչված ես դու կյանքի մեջ Մի նոր շավիղ հարթելու, Շավիղ դեպի լույսը անշեջ» (Տ, 22)։ «Եվ կյանքի մեջ արի զինվոր զրկեցիր Մինչև գերեզման չարության դեմ կռվելու» (Տ, 75)։ «Կռվի մեջ միայն ես արյան գըռնով Կփրկեմ իմ խեղճ, սուրբ հայրենիք» (Տ, 117)։

Առաջին օրինակներում կյանքի մեջ գործածված է 3-րդ տողի անշեջ-ի հետ հանգավորելու նպատակով, իսկ 2-րդ և 3-րդ օրինակներում մեջ-ի գործածությունը մեկական վանկ ավելին լինելու պահանջով է պայմանավորված։

Մեջ, հետո կապերն ու նրանց խնդիրները երբեմն դառնում են այնպիսի բայի լրացում, որը կարող է ստանալ և՛ տեղի, և՛ ժամանակի իմաստով լրացում, և այդ լրացումն էլ այդպիսի բառակապակցության մեջ կարող է երկու իմաստով էլ մեկնաբանվել։ Դա լինում է մասնավորապես իմացական, զգացական բայերով արտահայտված լրացյալի մոտ, ինչպես՝ հիշել, զգալ և այլն։

«Պատրաստ էր արդեն նրա անունը հիշել յուր պատարագի մեջ» (Ր, 2, 13)։ «Օրիորդ աշխատակիցների անունները տըղա աշխատակիցներից հետո՞ եք գրել» (Մուր., 3, 206)։

Վրա, տակ կապերն ու նրանց խնդիրները երբեմն լրացյալ բայի մոտ կարող են մեկնաբանվել և՛ տեղի, և՛ ձևի իմաստներով։ Օրինակներ՝ «Նստած էր մի նոր հոկայական շինության բակում իրար վրա դարսած հաստ տախտակների վրա» (ՆԴ, 1, 36)։ «Թևքի տակ կրում էր իր դեղորայքի պայուսակը» (Ր, 5, 35)։ «Այդ մի տաժանական աշխատանք է, որ վիճակվում է հայոց զավակներին պանդխտության մեջ» (Ր, 8, 85)։ Իսկ արևի տակ փայլեց բառակապակցության մեջ արևի տակ ոչ այնքան տեղ, որքան վիճակ է արտահայտում։

Տեղ ցույց տվող կապի խնդիրն ու կապը լրացյալի հետ դարձվածքային կապակցություն են կազմում, ինչպես՝ քափ-քրտինքի (քափուքրտինքի) մեջ կորչել, աչքի առաջ (առջև) ունենալ և այլն։

Ժամանակի իմաստը կապով և կապի խնդրով.— Այս իմաստի դրսևորմանը շատ մեծ թվով կապեր են ծառայում, ինչպես՝ անց, առաջ, առջև, առ, դեպքում, դեմ, ետ, ընթացքում, ժամանակ, ի վեր, հետ, հետո, հետե, մոտ, մինչև, միջոցին, նախքան, պահին,

պես, վրա, վերջը: *Լրացյալի դերում հանդես եկող բայերը իմաստային սահմանափակում չունեն։*

«*Անա գլխին* երեկոյան դեմ *մեր բակն* էր գալիս» (*Բակ., 148*)։ «*Ու* ձայնիս վրա վեր եմ թռչում» (*ՀՍՄԱ, 154*)։ «*Մտադիր էին* տեղափոխվել *քիչ* ժամանակից հետո» (*Մուր., 6, 170*)։ «*Ժամը* երեքից անց *բոլոր զորամասերը հրաման* ստացան» (*Բակ., 284*)։ «Մարդուց առաջ *ձորերում* ապրել են *գազանները*» (*Բակ., 156*)։ «*Հաճախակի կարկատանները* տարիների ընթացքում աղավաղել էին *նրա հագուստի նախկին ձևը*» (*Ր, 5, 404*)։ «*Մեր բոլոր* խոսակցության ժամանակ *նա մի բառ անգամ* չէր արտասանում» (*Մուր., 3, 13*)։ «Սարում են *սիրով* երեխուց ի վեր» (*ՀԹ, 2, 15*)։ «Ողջույնից հետ *երիտասարդը* նկատեց» (*Մուր., 2, 48*)։ «Հնձելու միջոցին *հասկերից հատիկները* թափվում էին» (*Ր, 5, 428*)։ «*Այս* խորհրդածության մեջ *Միքայելը* զգում էր, *որ օր-օրի վրա իր սրտում զարգանում էր ատելություն դեպի Սմբատը*» (*Շիրվ., 3, 51*)։ «*Արևը մայր* մտնելու մոտ, *ծովափի կողմից* սկսել էր փչել *զով քամին*» (*Մուր., 6, 259*)։ «Նախքան ննջելս *տիկինջը փող* պիտի վճարեմ» (*Մուր., 3, 266*)։

Առանձնակի պետք է նշել պես կապի գործածությունը անորոշ դերբայի տրականի հետ՝ ժամանակի իմաստով։ Այսպիսի կառուցվածքի մեջ լրացումն արտահայտում է գործողության անմիջական հաջորդությունը տվյալ ժամանակին։

«*Թշնամու մոտենալը* նկատելուն պես իմաց տար *իշխաններին*» (*Մուր., 4, 179*)։ «*Շները նրանց* տեսնելուն պես հաչում էին» (*ՎՓ, 4, 19*)։

Ժամանակի իմաստի յուրահատուկ դրսևորում է հետ *կապի և նրա խնդրի գործածությունը։ Այս դեպքում արտաքուստ թվում է, թե* հետ *կապն ու նրա խնդիրը արտահայտում են միասնության հարաբերություն։ Սակայն բաղադրիչների փոխհարաբերության քննությունը երևան է հանում ժամանակային իմաստը։ Տվյալ բառակապակցության մեջ լրացմամբ արտահայտվում է ոչ թե ենթակայի հետ գործողություն կատարող առարկան (որը կլիներ միասնության խնդիրը), այլ գործողության ժամանակը։ Լրացյալ դառնում են տարբեր իմաստային խմբերի պատկանող բայեր։*

«*Մթնաձոր տանող միակ արահետն առաջին* ձյունի հետ փակվում է» (*Բակ., 29*)։ «*Առաջին* աքլորականչի հետ զարթնում է *Պետին*» (*Բակ., 29*)։

Սակայն այնուամենայնիվ հետ *կապն ու նրա խնդիրը երբեմն կարող են՝ մեկնաբանվել և՛ ժամանակի, և՛ միասնության իմաստներով։ Ընդ որում դրանցում երբեմն իմաստներից մեկն ու*

մեկը կարող է գերակշռել։ Այսպես, արևի հետ քնել, լույսի հետ բացվել *բառակապակցություններում զգալի է միասնության իմաստի գերակշռությունը, իսկ* տարիների հետ ծերանալ, խոսքերի հետ նայել *բառակապակցություններում զգացվում է ժամանակային իմաստի գերակշռությունը։*

«Գյուղացի երեխաները քնում են արևի հետ *և զարթնում նրանից առաջ» (Թ, 5, 110)։ «Առավոտյան* լույսի հետ բացվեցավ *մեր աղջև Մուշի գեղեցիկ դաշտը» (Թ, 5, 418)։* «Տարիների հետ կհալվեր *մորմոքը» (Բակ., 134)։*

Դեպքում *կապն ու խնդիրն արտահայտում են ժամանակի կամ պայմանի հարաբերություն։ Օրինակ՝ «Աշխատեցին տեղ բռնել, որ* անձրևի դեպքում *տակի վրա չմնան» (ՍԶ, 4, 306)։*

Ի վեր *կապն ու նրա խնդիրը կարող են մեկնաբանվել ոչ միայն* ժամանակի, *այլև* ժամանակի-ժամանակային չափի *խառն իմաստով, մանավանդ այն դեպքերում, երբ կապի խնդիր են դառնում ժամանակ ցույց տվող բառերը՝ չափային լրացումով. ինչպես՝* երկար ժամանակից ի վեր, դարերից ի վեր, ամսից ի վեր *և այլն։ «Վերջապես սրտի տեսնեմ այսքան* ժամանակից ի վեր ցանկացածս *դյուցազնին» (Մուր., 4, 61)։ «Դարերից* ի վեր ապրում էին *այդտեղ հսկահասակ կաղնիները» (Մուր., 4, 375)։* «Մի ամսից ի վեր *ավազակը* փչացել էր» *(ՎՓ, 4, 291)։*

Վրա *կապն ու խնդիրը երբեմն կարող են մեկնաբանվել և ժամանակի, և՛ պատճառի իմաստներով։*

«Սոնան մեռավ երեխայի վրա» *(Բակ., 235)։* «Այս հայտարարության վրա կարմրեց» *(Մուր., 3, 207)։ «Նրանց* ձայնի վրա *ողերքը գործները* թողին» *(ՍԶ, 4, 205)։ «Մեր* խոսքերի վրա *Շահյանը* նիշեց *Աշխենին» (ՆԴ, 3, 247)։*

Կողմ *կապի գործածությունը ժամանակի իմաստով ավելի շատ այլ լեզուների (մանավանդ ռուսերենի* к *նախդիրի) համապատասխան կառույցների ազդեցություն է։ Օրինակ՝* «Երեկոյան կողմ *բրիգադիրը* չէր էլ հաշվում *Իվան Ազատովի աշխատանքը» (ՄԱՊՀՁ, 10)։*

Նպատակի իմաստը կապով և կապի խնդրով.— *Նպատակի իմաստը դրսևորվում է ոչ միայն անորոշ դերբայի և բայանունների տրական հոլովով, այլև* համար, նպատակով, ի, իբրև, ինչպես, ի պատիվ, ի սեր, հանուն, մտքով, վրա *կապերով ու նրանց խնդիրներով։ Անշուշտ, դրանց մեջ առավել գործուն են* համար, նպատակով *կապերը, որոնց խնդրի դերն ստանձնում են առաջին հերթին անորոշ դերբայը և բայանունները, թեև այլ բառեր ևս կարող են հան-*

դես գալ այս կիրառությամբ։ Լրացյալ դառնում են տարբեր իմաստ ունեցող բայեր, ինչպես՝ գնալ, գալ, աշխատել, վերցնել, դնել, բերել, զրկել, զոհել, շարժել, ծառայել, ընկնել, մեռնել, տալ, ցանկանալ *և այլն։*

«Ճնճղուկներ թռան եկան ուտելու համար, *Կացա քար* վեր առա զարկելու համար» *(ՀԹ, 1, 168)։ «Հինգերորդ բուռը ձեր անհատնելի գանձի* Սերմանեցեք ոգուն *մեր* ի նվեր» *(Չ, 172)։ «Փառակազմ գրքերը այնպես* շարված էին *պահարաններում* իբրև զարդարանք» *(Ր, 2, 236)։* «Ծառայում էր *նաև* ինչպես *մի գեղեցիկ* դիտարան» *(Մուր., 4, 9)։ «Ասես* համազարկ էին տալիս ի պատիվ զոհվածների» *(ՄՀԱԿՄ, 201)։* «Մաքառեցինք ի սեր օրվա *այս հաղթական» (ՍՏԲ, 56)։ «Մարտիկն* ընկավ հանուն կյանքի» *(ԳՍԵԺ, 2, 152)։* «Այդ մտքով հիմնեց *նա ապաստանի քաղաքը» (Ր, 5, 376)։ «Դրանցից շատերը նրա գեղանի դստեր փեսայության պարծանքը* վաստակելու նպատակով էին հաճախում *Դարդման» (Մուր, 4, 37)։*

Համար, *երբեմն էլ* վրա *կապերը և նրանց խնդիրները կարող են մեկնաբանվել նպատակի և պատճառի իմաստներով հավասարապես։*

«Մարդ բոլորական զվարճության համար կորցնում է *յուր ամբողջ ապագան» (Ր, 2, 621)։ «Ծիրանի* տափի համար *համարյա հավասար թվով մահակներ* էին զարկվում *երկուստեք» (Բակ., 42)։ «Մի օր ծնողներս* գնացել էին *մեր բարեկամի տուն՝* մեռելի վրա» *(ԱՉ, 4, 49)։*

Պատճառի իմաստը կապով և կապի խնդրով.— Առթիվ, երեսից, ի սեր (սիրուն), հանուն, համար, հետևանքով, ձեռից, ներքո, շնորհիվ, վրա, տակ *կապերն ու նրանց խնդիրները կարող են բայի լրացման դերում հանդես գալով արտահայտել պատճառի հարաբերություն։ Դրանցից անշուշտ մի քանիսն ավելի հաճախակի են ծառայում այդ իմաստի արտահայտմանը, ինչպես՝* համար, երեսից, շնորհիվ:

Լրացյալի դերում հանդես եկող բայերը իմաստային տեսակետից անսահմանափակ են։ Դրանցից կարելի է նշել՝ անել, պատրաստել, հագնվել, բռնել, բռնվել, փչանալ, ներել, մտածել, անջատվել, բաժանվել, արդարացնել, մեղադրել, նախատել, դառնալ, տանջել, թառամել, հավաքվել, վառնել *և այլն։*

«Տոնի առթիվ *նրանք* հագնված են *մաքուր» (Շիրվ., 9, 273)։ «Իմ տղան էլ* նրա երեսից բռնվեց» *(ԱՉ, 4, 88)։ «Նրան թվում էր, թե Կեսարը* կների *եթե ոչ իր սրտահույզ* աղերսանքի շնորհիվ, *գեթ* երեխաների սիրուն» *(ԱՉ, 2, 285)։ «Երբեք* չի անջատվիլ *նրանցից՝*

ոչ հանուն *հայրական* անեծքի, *ոչ* հանուն կրոնի» (*Շիրվ.*, 3, 104)։ «*Նրան* բռնել էին գողության համար» (*ՆԴ*, 1, 87)։ «*Օֆ, էլ հանգիստ քուն* չունի *մարդ էս անիծված* լվի ձեռից» (*ՀԹ*, 2, 121)։ «*Սրտի* ջերմության ներքո *ջուրը բոլորովին* գոլորշիանում էր» (*Ր*, 5, 101)։ «*Ժամանակից առաջ* քառամել էր *ծանր* հոգսերի տակ» (*Շիրվ.*, 4, 283)։ «*Այսպես* մտածեց *Կամսարյանը տանուտերի խոսքերի թարմ* ապերախտության վրա» (*ՎՓ*, 3, 224)։ «*Չպետք է մի* անձի պատճառով *շատերին* զոհել» (*Մուր.*, 4, 269)։

Հայտնի է, որ շնորհիվ *կապը դրական նշանակություն ունի, և նրանով դրսևորվող պատճառը բացասական լինել չի կարող, ինչպես երևում է բերված օրինակներից։ Այս տեսակետից մերժելի են հետևյալ կառուցվածքները։ «Այդպիսի մի* բյուրիմացության շնորհիվ *ես ուղղակի դահ* կդառնայի» (*Մուր.*, 4, 126)։ «*Ձախողակ* հանգամանքների շնորհիվ *արքայական ընտանիքը* տեղափոխվեց *Գառնի*» (*Մուր.*, 4, 249)։

Երբեմն համար *կապն ու նրա խնդիրը բայի լրացում դառնալով կարող են մեկնաբանվել և՛ պատճառի, և՛ փոխարինության իմաստներով։*

«*Չէի կամենում, որ* ապրուստի համար *փող* վճարեք» (*Մուր.*, 3, 248)։ «Ամաչում է հոր համար» (*ՄՍԿԿՏ*, 169)։

Շնորհիվ *կապն ու խնդիրը կարող են արտահայտել պատճառի-ձևի խառն իմաստ։*

«*Նրա առողջ* ֆրֆիջների շնորհիվ *մեր ճաշն* անցնում էր *զվարճալի*» (*Շիրվ.*, 4, 327)։ «*Եվ այն շրջանը, որ վիճակված էր* պտտել *իր* դիրքի շնորհիվ, *չէր գոհացնում նրան*» (*Շիրվ.*, 3, 243)։

Հիմունքի իմաստը կապով և կապի խնդրով.— *Այս իմաստի դրսևորման հիմնական միջոցը կապերն են։ Հիմունքի հարաբերությունն արտահայտվում է* հիման վրա, վրա, ըստ, հանուն, նայած *կապերի ու նրանց խնդիրների միջոցով։ Իբրև կապի խնդրի հանդես են գալիս* օրենք, հրաման, որոշում, կարգադրություն *և բազմաթիվ վերացական գոյականներ։ Լրացյալ լինում են տարբեր իմաստային խմբերի բայեր, ինչպես՝* անվանել, համարել, ընդունել, հույս ունենալ, գնալ, հեռանալ, աշխատել, շարունակել *և այլն։*

«*Հենց այդ* իրավունքի հիման վրա *ես ձեզ մեծ մարդ* եմ անվանում» (*Մուր.*, 6, 206)։ «*Նրա* հրամանի վրա *բոլորը* հեռացան» (*ՎՓ*, 4, 121)։ «Ըստ հրամանի *շահը մենավաճառը* ջնջում էր» (*ՎՓ*, 4, 73)։ «Հանուն իմ՝ կսկսեն ծծել *ժողովրդին*» (*ՎՓ*, 3, 183)։

Հակառակ հիմունքի (զիջման) իմաստն արտահայտվում է չնայած, հանդերձ *կապերով և նրանց խնդրով։*

«Կզա՝ չնայած *խարխլված առողջությանը»* (ՇԹՆՃ, 1, 13)։ «Կիտենալով հանդերձ զգում էր, *որ անզոր է»* (Շիրվ., 3, 215)։ «*Կեղեքը* ընդունելով հանդերձ, *նա* շարունակում է *նույն վատ կենցաղը»* (Շիրվ., 3, 376)։

Ձևի իմաստը կապով և կապի խնդրով.— *Ձևի իմաստը դրսևորվում է* առանց, դուրս, ընդդեմ, ըստ, իբրև, ինչպես, կերպով, հետո, նման, մեջ, որպես, պես, վրա, տակ *կապերով ու նրանց խնդիրներով։ Ինչպես երևում է թվարկումից, այս կապերի մեծ մասը այլ իմաստի դրսևորմանն են ծառայում։ Սրանք ձևի իմաստն արտահայտում են իրենց ոչ բուն նշանակությամբ գործածվելով։ Այսպես,* վրա *կապը ուղղության, ուղևորության, տեղի նշանակություններով է գործածվում, սակայն խնդրի հետ միասին նաև ձևի իմաստ է դրսևորում, ինչպես՝* պառկել մեջքի վրա։

Առանձնապես պետք է նշել առանց *կապի և անորոշ դերբայի տրականի գործածությունը ձևի իմաստով։ Լրացյալ լինում են բազմազան բայեր։*

«*Մի՞թե նա շաղաշեց Սմբատին, որ գործը* վերջացնի առանց դատարանի» (Շիրվ., 3, 379)։ «*Իմաստակները այսօր էլ երբեմն* կրկնում են *այդ բառն* առանց *խղճի* խայթի» (Շիրվ., 9, 204)։ «*Գոռում էր ու* հայհոյում *անխտիր,* առանց հասցեի» (ՎՓ, 4, 276)։ «Հերթից դուրս *ջուր* էր գողանում» (Բակ., 102)։ «Ըստ պատշաճին պարապել էր *ֆրանսիական լեզվի ուսումնասիրությամբ»* (Մուր., 2, 12)։ «*Հինգ անգամ* իրար վրա կարդացի» (Մուր., 6, 135)։ «Պառկեց երեսի վրա *անկողնում»* (Շիրվ., 4, 201)։ «*Դուք մեր դեմ* եկել եք զենքի տակ» (ՄՀԱԿՄ, 253)։

Ձևի իմաստով կապի խնդիրն ու կապը մի շարք դեպքերում դարձվածքային բառակապակցություն են կազմում բայերի հետ, ինչպես՝ քթի տակ խոսել (մռմռալ, մրմռալ, շշնջալ) *և այլն։*

Ձևի իմաստի մի տարբերակ պետք է համարել պես, նման, որպես, իբրև, ինչպես *կապերի և նրանց խնդիրների այն գործածությունը, երբ լրացումը ցույց է տալիս տվյալ գործողության կատարման ձևը համեմատության միջոցով։ Այս դեպքում կապի խնդիրը այն առարկան է, որի գործողությունը համեմատության եզր է դիտվում լրացյալի արտահայտած գործողության համար։ Որպես կանոն այսպիսի բառակապակցություններում կապի խնդիրը ցույց է տալիս գործողություն կատարելու ընդունակ առարկան։*

«*Նա* իբրև ծեր մտածեց, *սակայն* իբրև երիտասարդ գործեց» (Մուր., 3, 311)։ «*Ես* կնոջ նման *արտասուք* չեմ թափի» (Ր, 7, 52)։

«*Նա* անհայտանում է որպես դև և հայտնվում՝ որպես հրեշտակ» *(Ր, 2, 307)*: «*Կինը* որոնում է *պառավ* կովի պես» *(Բակ., 91)*:

Ձևի իմաստի մի դրսևորումը վերաբերում է ոչ թե գործողության կատարողին, այլ գործողության առարկային: Սա նշանակում է, որ կապն ու խնդիրը ցույց են տալիս գործողության ձևը ոչ թե ենթակայի, այլ խնդրի կողմից: Այսպես, երբ ասում ենք Գրիգորը հոր նման սիրում է Վարդանին, *ապա դեռևս պարզ չէ, թե* հոր նման-*ը ում է վերաբերում՝ ենթակայի՞ն* (Գրիգորը), *թե՞ խնդրին* (Վարդանը): *Այս դեպքում երբեմն կարող է միկնաբանությանն օգնել լրացման բառային իմաստը: Այսպես, «Մի տեսնեմ դրան, ականջները շան* թուլի պես կտրեմ» *(ԱԾ, 58) նախադասության մեջ* թուլի պես-*ը խնդրային ձևի նշանակություն ունի, քանի որ այն նշանակում է՝* թուլի ականջները կտրելու պես (կտրեմ) *և ոչ թե* թուլի կտրելու պես *(ինչպես թուլան է կտրում)*:

Խնդրին վերաբերող ձև ցույց տվող անդամն անվանում ենք խնդրային ձևի լրացում: *Այս դերը կատարում են* պես, նման *կապերն ու նրանց խնդիրները*:

«Երազի նման հիշում եմ *տունը*» *(ԴՍԵԺ, 1, 55)*: «*Բայց ես քավոր Պետրոսին* սուրբի նման պաշտում էի» *(Ր, 2, 321)*: «*Ինձ* որդու նման սիրում էր» *(Ր, 2, 322)*: «*Ինձ թվում էր, թե գնում եմ շատ հեռու երկիր, որի մասին* հեքիաթի պես պատմում էր *աշխարհագրության դասատուն*» *(Բակ., 118)*:

Խնդրային ձևի իմաստ ունեցող կապի խնդիրն ու կապը լրացյալի հետ դարձվածքային կապակցություն են կազմում, ինչպես՝ աչքի լույսի պես պահել (պահպանել), հալած յուղի պես ընդունել *և այլն*:

Վերև, վրա, տակ, մեջ, առաջ *կապերն ու նրանց խնդիրները երբեմն կարող են միկնաբանվել ձևի-վիճակի խառն իմաստով*:

«*Արեգակն* են տանում *իրենց* գլխի վերև» *(ՀՍՄԱ, 59)*: «*Ինձ* թևերի տակ էր պահում *սպան*» *(ՀՍՄԱ, 145)*: «*Բայց դարձյալ* ապրում է աղքատության մեջ» *(Ր, 4, 336)*: «Ոտքի վրա սպասավորություն էին անում» *(Ր, 4, 193)*: «*Յուր բոլոր անցյալը նա այդ րոպեին* պատկերացնում էր *յուր* աչքի առաջ» *(Մուր., 2, 92)*: «Հանգստանում է *մի* ոտքի վրա» *(ՀՍՀԵՄ, 319)*:

Շնորհիվ, վրա, տակ *կապերն ու նրանց խնդիրները մի շարք բառակապակցություններում կարող են բայի գործողության ձևն ու միջոցը համատեղ արտահայտել: Ավելի ճիշտ, նման կապակցություններում լրացումը ձևն է ցույց տալիս՝ միջոցի ընդգծված երանգով*:

«Հարստացել էր արքունիքի շնորհիվ» *(Ր, 4, 258)*։ «*Եվ փոքրիկ ու փայլուն ավտոն, փափուկ* անիվների վրա *մի արև առավոտ* սահեց *քաղաքի փողոցով*» *(Բակ., 393)*։ «*Նրանց ձեռնտու չի շուկայում* ձեռքի վրա *դրանք հատ-հատ* ծախելը» *(ՇԹՆԾ, 1, 392)*։ «*Կարծես կամենում էր* փշրել յուր *սանձահարողին սմբակների սաստիկ* հարվածի տակ» *(Ր, 7, 65)*։

Վիճակի իմաստը կապով ու կապի խնդրով.— *Վիճակի իմաստի դրսևորմանը ծառայում են* առանց, հետ, մեջ, ներքո, վրա, տակ *կապերն ու նրանց խնդիրները։ Այստեղ ևս տարբերակվում են բուն գործողի և գործողության առարկայի (խնդրի) վիճակը։ Առաջին դեպքում արտահայտվում է գործողության վիճակը՝ գործողի տեսակետից, իսկ երկրորդ դեպքում՝ գործողության առարկայի վիճակը։ Այսպես, գործողի վիճակն է արտահայտված հետևյալ բառակապակցություններում։*

«*Այդպիսի* խորհրդածությունների մեջ *նա աննկատելի կերպով* անցավ *Գոլովինսկի պրոսպեկտը*» *(Ր, 2, 182)*։ «*Նոր* շորերի մեջ *նա* երևաց ավելի բարձրահասակ» *(Բակ., 123)*։ «*Կարծես լեռներից մի ամբողջ զորաբանակ* է իջել *բոբիկ, մերկ և* առանց գլխարկի» *(Բակ., 320)*։ «*Ես ճաշից* հեռացա *ծանր* տպավորության տակ» *(Շիրվ., 8, 113)*։ «Վերադարձանք *խոր* տպավորության ներքո» *(Շիրվ., 9, 281)*։ «*Բայց* գնում ենք *մենք անվեհեր* Զարկերի տակ *չար բախտի*» *(ՀԹ, 1, 101)*։

Խնդրային վիճակի իմաստը նույնպես արտահայտվում է այս կապերով ու նրանց խնդիրներով։

«*Մի անգամ* գտա *նրան սարսափելի* խռովության մեջ» *(Ր, 2, 546)*։ «*Գրեթե նույն* դրության մեջ տեսանք *Կուսանաց Անապատը*» *(Շիրվ., 9, 28)*։ «*Ինձ* տանում էին *դեպի կախաղան*, Սվինների տակ *զինավառ զորքի*» *(Իս. 1, 166)*։ «Թողնենք *իշխանուհուն յուր* երազների հետ» *(Մուր., 2, 11)*։ «Առանց *կարմիր* քթի *երբեք* տեսնել *չէր կարելի նրան*» *(ՎՓ, 4, 267)*։

Մեջ, վրա, տակ *կապերն ու նրանց խնդիրները երբեմն կարող են դառնալ այնպիսի լրացում, որը կարելի է ըմբռնել և՛ վիճակի, և՛ տեղի իմաստով։*

«*Դիմացի սպիտակ տունը ձգվել էր և* մշուշի մեջ *ավելի բարձր* էր թվում» *(Բակ., 177)*։ «*Նա* հրդեհի մեջ դողում է, մրսում» *(ՀՍՄԱ, 72)*։ «*Առաջին անգամ* եմ տեսնում *լարախաղացին* պարանի վրա» *(ՄՍԿԿՏ, 95)*։ «Քայլել է *զինվորը հարյուրավոր կիլոմետրեր* կրակի տակ» *(ՄՍԿԿՏ, 338)*։

Իսկ երբեմն էլ մեջ կապով լրացումը կարող է դիտվել վիճակի և ժամանակի խառն իմաստներով։

«Քաղցր քնի մեջ պապս ձայն էր տալիս մեզ» (Բակ., 131)։ «Ճերմակ խոնարհության, ճերմակ լռության մեջ ես լսում եմ նրա փափուկ շրշյունները» (ՀՍՀԵՄ, 13)։

Չափի իմաստը կապով և կապի խնդրով.— Չափի իմաստի դրսևորմանն են ծառայում չափ, դուրս, մեջ, մինչև կապերն ու նրանց խնդիրները։ Չափը տարբեր կարող է լինել՝ տարածական, ժամանակային, ծավալային, կշռային և այլն։ Իհարկե չափի բոլոր տեսակները չէ, որ կարող են արտահայտվել կապերով ու նրանց խնդիրներով, այլ մի քանիսը միայն։ Կապերով արտահայտվում են ընդհանուր չափի, տարածական չափի և ժամանակային չափի իմաստները։ Այսպես, ընդհանուր չափի իմաստն է արտահայտվում հետևյալ բառակապակցություններում։

«Չափից դուրս անհանգստացավ» (Մուր., 2, 87)։ «Հեռվից երեվում էր նա մի հավի չափ» (Ր, 2, 331)։ «Դահլիճը հրդեհվելու չափ լուսավորված էր» (Մուր., 3, 42)։ «Ես ամենքի չափ կյանքը զովել եմ» (ՀՍՀԵՄ, 117)։

Մինչև կապով արտահայտվում է գործողության այնպիսի չափ, որը սահմանափակվում է։ Այդ սահմանափակումը պայմանավորված է հենց մինչև կապով։ Այսպիսի իմաստով լրացում դառնում են տարբեր գոյականներ։

«Ոտքից մինչև գլուխ թաթախված ենք կեղտի մեջ» (Շիրվ., 44, 56)։ «Թրջվել եմ մինչև ոսկորներս» (ԳՄԼՋ, 93)։

Տարածականը չափի իմաստը նույնպես արտահայտվում է մինչև կապի միջոցով։ Այս դեպքում կապի խնդիր է լինում տեղ ցույց տվող որևէ գոյական։ Լրացյալի դերում կարող են հանդես գալ շարժում ցույց տվող, ինչպես և այլ իմաստի բազմաթիվ բայեր, ինչպես՝ գնալ, գալ, տանել, բերել, հասնել, առաջնորդել, իջնել, աշխատել, այրվել և այլն։

«Մինչև գառնվայրի սկիզբը ճանապարհն անցնում էր փոքրիկ տափարակով» (Բակ., 128)։ «Գնաց մինչև հողը Մսրա» (ՀԹ, 2, 127)։ «Նանն ուղեկցեց նրան մինչև վագոնի շեմքը» (ՍԶ, 2, 426)։

Իսկ ժամանակային չափը կարող է արտահայտվել ինչպես մինչև, այնպես էլ մեջ կապերով և նրանց խնդիրներով։ Երկու դեպքում էլ կապի խնդիր դառնում են ժամանակ ցույց տվող բառերը, սակայն մեջ կապի հետ խնդիրը սովորաբար չափը բնորոշող լրացմամբ է լինում։

«Մարդը մինչև լույս մնաց մոտը» (Բակ., 27)։ «Գիտեր, որ մին-

չև կեսգիշեր շուռումուռ պիտի գար *անկողնում*» (*ՆԴ, 1, 75*)։ «*Ու* գնում են մինչև էսօր» (*ՀԹ, 2, 125*)։ «*Նամակը մի քանի* ռոպեի մեջ *տեղ* հասցրեց» (*Մուր., 3, 250*)։

* * *

Դիտողություններ կապային խնդրառության մի քանի առանձնահատկությունների վերաբերյալ.—

1. *Պետք է նշել, որ* կողմը, կողմից, ժամանակ *բառերը երբեմն հանդես են գալիս իրենց գոյականական լրացումներով՝ դրսևորելով գոյականի ու կապի խառն հատկանիշներ։ Այսպես, կազմվում են* մի բանի (մեկի) չորս կողմը, մի բանից այն կողմը, մի բանի (մեկի) այն կողմը, օրվա այդ ժամանակը, տարվա այս ժամանակ *և այլ կապակցություններ։*

«*Համարյա ամեն իրիկուն գիրքապահներ* էին շրջում գյուղի չորս կողմ» (*Բակ., 38*)։ «Գետից այն կողմը *ճանապարհը* բարձրանում է *ջրաղացների կողքով*» (*Բակ., 312*)։ «*Արևելքը* կարմրել էր սարերի այն կողմը» (*ԱՉ, 4, 220*)։ «Աչք ածեց սենյակի չորս կողմը» (*Մուր., 2, 66*)։ «Օրվա այդ ժամանակը *փողոցներում կառք չէ* ճարվում» (*Մուր., 2, 79*)։

2. Առջև, դեմ, հետ, մեջ, տակ, տեղ, վրա, փոխարեն, դիմաց *անիսկական կապերը հաճախ կապի խնդրի փոխարեն ստացական հոդ են ստանում (ս, դ, ն,)։ Այսպես, ասվում է՝* հետս եկավ, դիմացդ նայիր, վրան կեղտոտվել է *և այլն։ Օրինակ՝* «Տակները փռում էին *հին ճիլոպ*, վրաները գցում էին *մեշոկ*» (*ԱՉ, 4, 405*)։ *Սակայն երբ դրանից առաջ կապի խնդիր է դրվում, այդ հոդերի գործածությունը ոչ միայն ավելորդ, այլև սխալ է։ Այսպիսի սխալ գործածության հանդիպում ենք շատ գրողների ստեղծագործություններում։*

«*Արագ քայլերով* նրա դեմն եկավ *օրիորդ* Սահակյանը» (*ՆԴ, 3, 630*)։ «*Երկու-երեք օր շարունակ* նրա առջևը կանգնել *չէր լինում*» (*Շիրվ., 4, 285*)։ «*Ես ամբողջապես նրա* իշխանության տակն էի գտնվում» (*Մուր., 2, 21*)։ «*Յուր* ծանոթի տեղն է դրել *ինձ*» (*Մուր., 3, 26*)։ «*Մի՞թե իմ* լավության փոխարենը *ա՞յդ* պիտի վճարեիք» (*Մուր., 3, 246*)։ «*Սիրտս* նրա հետն է խոսում» (*ԳՍԵԺ, 1, 171*)։ «Ձեր մեջն է *միշտ* արտասվում *ուռենին՝ կույսը տխուր*» (*ՍՏԻ, 55*)։ «*Գետի մյուս ափին*, գյուղի դիմացն ընկած *անտառի բացատում խարույկը բոցավառվում էր*» (*Բակ., 471*)։

3. *Կապն ու խնդիրը իրենց լրացյալի զեղչման հետևանքով երբեմն ստանձնում են ստորոգելիական վերադրի պաշտոն, ավելի*

ճիշտ՝ գեղչվում է լրացյալ բայի դերբայական ձևը, իսկ նրա օժանդակ բայը պահպանվում է՝ վերաիմաստավորվելով իբրև հանգույց։

«Կյանքի և կայքի ապահովությունը վտանգի մեջ էր» (Ր, 5, 476)։ «Նրա տունը վերի հանդը տանող ճամփի վրա է» (Բակ., 8)։ «Կինն առանց գլխարկի էր» (Բակ., 89)։ «Թիթեղներն էլ առաջին անձրևի տակ են» (Բակ., 181)։ «Վերքը աջ թևի վրա էր» (Մուր., 4, 47)։ «Բերդակալն ապստամբների հետ չէ» (Մուր., 4, 99)։ «Թագավորի զայրույթը երիտասարդ Քանանայի դեմ էր» (Մուր., 5, 178)։ Այսպիսի բառակապակցություններից մի քանիսը դարձվածքի արժեք ունեն։ Օրինակներ՝ «Հացն էլ պրծնելու վրա է» (Բակ., 428)։ «Կյանքս ավարտելու վրա եմ արդեն» (ՀՍՄԱ, 5)։ «Մեր գործն արդեն հաջողվելու վրա է» (Մուր., 6, 22)։ «Արևը մայր մտնելու վրա է» (Մուր., 4, 95)։ «Արտերը հասնելու վրա էին» (ԱՋ, 2, 420)։

Անշուշտ, սրանից տարբեր են այն դեպքերը, երբ կապն ու կապի խնդիրը ստորոգելիական վերադիր են դառնում հատկանշային նշանակությամբ և ենթադրում են ոչ թե գեղչված լրացյալ բայ, այլ գոյական։

«Վայրի վարազի պես էր անտառապահ Պանինը» (Բակ., 4)։ «Առավոտյան Պետին մոլորվածի պես էր» (Բակ., 33)։

Բոլորովին այլ մեկնաբանություն ունեն հետևյալ կապակցությունները։ «Իմ խոսքն այժմ երկրորդ իշխանուհու մասին է» (Մուր., 2, 7)։ «Երկյուղը միայն ապագայի մասին էր» (Մուր., 2, 19)։ Սրանցում կապի խնդրի ու կապի գործածությունը պայմանավորված է խոսքը, երկյուղը ենթակաների բայական ծագումով (համմտ. խոսել իշխանուհու մասին, երկյուղ կրել ապագայի մասին)։

4. Կապի խնդիրն ու կապը կարող են դառնալ նաև ուղիղ խնդիր ունեցող ներգործական բայերի լրացում՝ անուղղակի խնդրի նշանակությամբ։ Այսպիսի կապակցությունները սովորական են։ «Շատ էի լսել պոլսուհու գեղեցկության մասին գովասանքներ» (Շիրվ., 9, 210)։ «Ես Նորքի մասին գրեցի մի երգ» (ՀԱՀԵՄ, 323)։ «Մեր սիրո մասին հեքիաթ են ասում» (ԳՍԵԺ, 1, 176)։

Սակայն մի շարք դեպքերում ներգործական բայի մոտ կապի խնդրի ու կապի առկայությամբ ուղիղ խնդիրը չի գործածվում։

«Մայրս հաղորդեց նրան իմ հանդուգն արարքի մասին» (Շիրվ., 8, 11)։ «Պատմում է Դսեղ փոքրիկ գյուղի հայերի քաջության մասին» (Շիրվ., 9, 13)։ «Կարո՞ղ էի մտածել որևէ մերժման մասին» (Շիրվ., 9, 208)։ «Այժմ այլևս նախանձի մասին չէր ուզում լսել» (Մուր., 4, 189)։ «Նա նրանց համար կարդում է պատերազմի մասին» (ԱՋ, 2, 325)։ «Դեռ պնդում էր վիշապի գոյության մասին»

(Վփ, 3, 368)։ «Երգեցե՛ք նրան իմ սիրո մասին» (ԳՍԸէ, 35)։ «Բարի հիշիր իմ մասին» (ԳՍԵժ, 2, 237)։

5. Ժամանակակից հայերենում մի շարք կապեր երբեմն սխալ են գործածվում։ Ընդ որում դա կամ պատճենավորված գործածություն է, կամ հեղինակի վրիպման հետևանք։

Առաջին հերթին անհրաժեշտ է նշել վրա կապի պատճենավորված, սխալ գործածությունը։ Այս դեպքում վրա կապն արտահայտում է կա՛մ որևէ հոլովաձևի, կա՛մ այլ կապի ֆունկցիա, որը բնորոշ չլինելով նրան՝ ստեղծում է ոչ հայերեն կառուցվածք։

«Աղջիկն էլ մի նարուտի վրա է պսակել» (Վփ, 3, 283)։ «Նա ամուսնացել էր նրանից հավանած նարսնացուի վրա» (ՍԶ, 2, 115)։ «Ես խելագարի նման սիրահարվեցա այդ աչքերի վրա» (Ր, 2, 474)։ «Մատնացույց արավ քեֆ անողների վրա» (Մուր., 3, 92)։ «Օրիորդը ցույց տվավ նրանց վրա» (Ր, 2, 198)։ «Գրպացե՛ք ինձ վերա» (Մուր., 2, 44)։ «Ասլանը գիտեր ածել ջութակի վրա, Սագոն ածում էր բութակի վրա, իսկ Կարոն լավ ածել գիտեր դայիրա» (Ր, 2, 25)[1]։ «Ես կնվագեմ ձեզ համար պիանինոյի վրա» (Ր, 2, 60)։

Մեջ կապը երբեմն գործածում են միջև նշանակությամբ։

«Նույն օրը երեկոյան Սմբատի ու Միքայելի մեջ տեղի ունեցավ առաջին ընդհարումը» (Շիրվ., 3, 47)։ «Տեղական երկու թուրք խոշոր գերդաստանների մեջ տիրում է թշնամություն» (Շիրվ., 8, 98)։ «Բաժանում են իրենց մեջ գյուղերն ու քաղաքները» (Վփ, 3, 66)։

Ճիշտ չէ նաև մեջ կապի հետևյալ գործածությունը. «Բոքից ցդլուխ նազնված մորթերի և մուշտակների մեջ, այդ գռեհիկները հազիվ որոշվում էին թավամազ արջերից» (Ր, 2, 531)։

Հետ կապը երբեմն գործածում են դեմ-ի նշանակությամբ, որը նույնպես սխալ է։ «Կատաղի կռիվներ էր մղում յուր հակառակորդի հետ» (Մուր., 2, 8)։

Լինում է նաև հակառակը, երբ դեմ կապն են գործածում հետ-ի նշանակությամբ։ «Դրանք այնպիսի ուժեր են, որոնց դեմ մրցել չի կարող կինը» (Մուր., 5, 44)։

Վերաբերյալ կապը սովորաբար վերաբերության իմաստ ունի։ Ուստի ճիշտ չէ հետևյալ կապակցությունը. «Հյուրասիրության վերաբերյալ ժամերը լրացան» (Մուր., 3, 175)։

Համար կապի գործածությունը վերաբերության իմաստով նույն-

---

[1] Հետաքրքրական է, որ այստեղ երկու անգամ սխալ, մի անգամ ճիշտ խնդրառություն կա. ածել-ը պահանջում է հայցական (և ոչ սեռականով ու վրա կապով լրացում)։

պես սխալ է։ Օրինակ՝ «Ինչպես աղան համաձայնեց գնալ այդ զըզ-վելի ապականված թուրքի տունը, որի համար պատմում *են, թե ոչ մի կեղտոտ բան չկա, որ չաներ» (ՎՓ, 3, 125)։*

Դեմ *կապը հաճախ գործածվում է* դիմաց-*ի փոխարեն։ Օրինակներ՝ «Երրորդ* հարցի դեմ գրեց» *(Շիրվ., 9, 212)։ «Շողենավը* կանգ առավ *Ռոդոս* կղզու դեմ» *(Շիրվ., 9, 241)։*

Իսկ դիմաց *կապն էլ կարող է* դեմ-*ի իմաստով գործածվել։ Օրինակ՝ «Ո՞վ* դուրս կգա նրա դիմաց» *(ՀՐ, 1, 243)։*

Ճիշտ չէ դեպի *կապի հետևյալ կիրառությունը.* «Մատնացույց արավ դեպի նրան» *(Մուր., 2, 27)։*

6. Մի շարք կապական բառեր երբեմն գոյականական կիրառությամբ կարող են դառնալ դեպի, մինչև *կապերի խնդիր։ Այսպես են* ետև, կողմ, դուրս, ետ, ներքև, առաջ, վար, վեր, վերջ *և այլն։*

«Նայում էր դեպի *յուր* ետևը» *(Ր, 2, 274)։ «Նա* դեպի *ամեն* կողմ ծռվում է» *(Ր, 2, 307)։ «Աղոտ լույսը* քաշեց *մեր քարավանը* դեպի *իր* կողմը» *(Ր, 4, 313)։* «Դեպի վեր բռնում են *բարկության կայծեր» (ՀՀ, 83)։ «Միտքը թև առած* թռչում է դեպի ետ» *(Բակ., 391)։* «Շտապեց դեպի դուրս» *(ՆԴ, 1, 9)։ «Վզները* երկարացրին դեպի ներքև» *(ՆԴ, 1, 79)։* «Շտապեցի դեպի առաջ» *(Մուր., 2, 28)։ «Ճչալով* սահեց դեպի վար» *(Մուր., 5, 366)։ «Քեզ* մինչև վերջը լսեցի» *(Մուր., 5 186)։*

Սակայն դեպի, մինչև *կապերը չի կարելի գործածել այն դեպքում, երբ հիշյալ բառերը հանդես են գալիս արդեն կապական դերով և դրված են կապի խնդրի մոտ։ Այս դեպքում ստացվում է, որ արդեն կապի խնդիրն ու կապը դառնում են այլ կապի մոտ դրված խնդիր։ Իսկ այսպիսի կառուցվածքը հայերենի կապակցությունների ոգուն խորթ է։ Իհարկե նման կառուցվածքները բանավոր խոսքում երբեմն կարող են երևան գալ՝ խոսքի արագությամբ պայմանավորված, ինչպես երբեմն լինում է ֆուտբոլի խաղ հաղորդողի լեզվում։ Այսպես, պատահել են այսպիսի կառուցվածքներ. «Գնդակը մոտենում է* դեպի *եզրային* գծի մոտ», *«Գնդակն ուղղում է* դեպի *տուգանային* հրապարակի մոտ» *և այլն։ Նման կառուցվածքները մերժելի են։*

«Եկան մեզ հետ մինչև գյուղից դուրսը» *(Ր, 4, 533)։ «Ծառերից մի քանիսը... արմատները, փոխանակ ըստ վաղեմի ավանդության* դեպի ձորն ի վար *իջնելու, սկսել էին* դեպի լեռն ի վեր *պարզել» (ՎՓ, 3, 287)։ «Հոտը փոշի հանելով և բառաչելով* դեպի բլուրն ի վեր էր *գնում» (ՎՓ, 3, 383)։*

Ճիշտ չէ նաև հետևյալ կառուցվածքը. «Դեպի ամեն կողմ տիրում էր երեկոյան լռությունը» (Ր, 5, 431), որտեղ դեպի-ն ավելորդ է։

Ճիշտ չէ նույն բայի մոտ կրկնակի կապային խնդրառությունը։ Խոսքը վերաբերում է ոչ թե նույն բայի բազմակի լրացումներին, այլ նույնական լրացումներին։ Օրինակ՝ «Այդ քարոզիչները, պապի սորուկների թիվը բազմացնելու նպատակով, ամեն միջոց գործ էին դնում հայադավաններին մոլորեցնելու և իրենց եկեղեցու ծոցից հեռացնելու համար» (Մուր., 5, 91)։

7. Երբեմն կապն ու խնդիրը լրացյալ բայի մոտ գործածվում են անկապակցությամբ։ Դա լինում է առաջին հերթին նետ կապի և նրա խնդրի՝ միասնության իմաստով գործածվելու դեպքում։ Պատահում է, որ եզակի ենթակայի մոտ հոգնակի ստորոգյալ է դրվում՝ միասնության իմաստով լրացումների առկայությամբ։ Անշուշտ, այս գործածությունը հայերենի ոգուն հարազատ չէ։

«Հետո պառավը երեխայի նետ անհայտացան» (Ր, 4, 304)։ «Կարոն իր ընկերների նետ շտապում են դեպի այն կողմը» (Ր, 4, 365)։

Քան նախադրության ավելորդ գործածությունը բխում է երկու կառուցվածքի բաղարկությունից. «Նրան սիրում է տերը ավելի, քան իր կնոջից, ավելի, քան իր որդիներից» (Ր, 4, 373)։

Իսկ ուպես նախադրությունը մասնական բացահայտիչ կապելու և բացահայտյալի ձևն ունեցող կապի խնդրի փոխարեն բռնացել է այլ ձևով դրված կապի խնդիր. «Որսորդը տալիս էր մեզ վառոդ, ուպես երեխաներ, խաղ անելու համար» (Ր, 4, 288)։

8. Հայերենում սովորական է լրացյալի զեղչումը։ Այս տեսակետից բացառություն չեն նաև կապային լրացումները. նրանց լրացյալ բայը ևս կարող է զեղչվել՝ տարբեր կառուցվածքներում։ «Դեպի ռազմի դաշտ, դեպ ներոսացում, Դեպի բարձունքը մեծ հաղթանակի» (Իս. 1, 362)։

Պատահում են դեպքեր, երբ կապն ու խնդիրը զեղչված հարադրական բայի անվանական բաղադրիչի հետ են դրվում։ Օրինակ՝ «Ահա նոր քայլ դեպի առաջ, նոր գործի սեր ազգի մեջ» (Ն, 242)։ Ի միջի այլոց պետք է դիտել, որ եթե լրացյալի զեղչումը սովորական է, ապա կապի խնդրի զեղչումը առհասարակ անհեթեթ ոճ է ստեղծում։ Օրինակ՝ «Ինքը կարող է ամեն ինչ պատմել։ Ամեն ինչ, բացի գուցե Սիրունի մասին» (ՇԹՆԾ, 2, 49)։

Հաճախ կապային լրացումն սահմանում է իր զեղչված լրացյալի պաշտոնը նախադասության մեջ՝ զեղչված լրացյալի մյուս լրա-

ցումների հետ կապակցված։ Այս դեպքում կապն ու խնդիրը տվյալ նախադասության մեջ բայի ոչ թե անմիջական, այլ միջնորդավորված լրացում են, այն էլ ոչ միայնակ։

«Պանիրը սատանայի պես քրքջում էր, ոտքն արջի դիակի վրա» (Բակ., 7)։ «Թոնրից հեռանում էր, մի քանի տաք լավաշ կռան տակ» (Բակ., 26)։ «Նա մեջքի վրա պառկած, երեսը դեպի վեր նայում էր կապույտ ատլասի նման երկնքին» (ՍՁ, 2, 134)։ «Նա պորտֆելը թևի տակ իջնում էր փայտե աստիճաններով» (ՍՁ, 4, 526)։ «Մինչև ծնկներս երբեմն խոտերի ու ծաղիկների մեջ գնացի ես այդպես» (ՎՓ, 4, 646)։ «Ականջներիս մեջ ձեր երգը վայրի, Մտնում եմ նորից անտառը մայրի» (ՀՍՀԵՄ, 5)։

9. Մի շարք անիսկական, երբեմն և իսկական կապեր բաղադրված ձևով երբեմն դրսևորում են ինչպես կապի, այնպես էլ մակբայի հատկանիշներ։ Այսպես, դեմ, դիմաց բառերը հանդես են գալիս նաև դեմ-հանդիման, դեմ-դիմաց բաղադրյալ ձևերով, որոնք երբեմն մակբայ են («Կռվում էին դեմ-դիմաց», «Դուրս եկան դեմ-հանդիման»), իսկ երբեմն էլ՝ կապ։ Սրանք պարզ ձևով սեռականով կապի խնդիր են ունենում (քո դեմ, իմ հանդիման և այլն)։ Սակայն բաղադրված ձևով կարող են ունենալ և՛ սեռականով, և՛ տրականով կապի խնդիր։ Իսկ սա վկայում է, որ կապային կիրառությունը խառըն է մակբայականին։

«Նրանք կյանքի գնով ձգտում էին փակել թշնամու ճանապարհը, սեփական կուրծքը երկաթին ու կրակին դեմ հանդիման խիզախում» (ՄՀԱԿՄ, 14)։ «Մահվան դեմ-հանդիման կանգնած այս պահին քեզ եմ դիմում» (ՄՀԱՄԿ, 275)։ «Կանգնած է սարն իմ դեմ դիմաց» (ԳՍեծ, 1, 125)։

Ցած բառն ունի գոյականի, մակբայի և կապի խոսքի մասային իմաստ, որը տարբերակված է համապատասխան կառուցվածքներում։ Այսպես, ցածից բռնել կապակցության մեջ՝ ցածից գոյական է, ցած գնալ կապակցության մեջ՝ մակբայ, իսկ ծառից ցած տեղափոխվել կապակցության մեջ՝ կապ։ Սակայն երբեմըն գոյականի և կապի դիրքերը խառնվում են։ Այսպես «Եվ ձմեռն իջնի Արագածից ցած» (ՀՍՀԵՄ, 110) նախադասության մեջ այն կարելի է և՛ իբրև մակբայ, և՛ կապ հասկանալ։

Իսկ հեռու, մոտ բառերը համատեղում են մի քանի խոսքի մասերի իմաստ (գոյական, ածական, մակբայ, կապ)։ Պատահում է երբեմն, որ այդ բառերը որևէ նախադասության մեջ կարող են երկու մեկնաբանություն ստանալ։ Այսպես, մոտ բառը կարող է դիտվել և՛ իբրև կապ, և՛ բայական հարադրության անվանական բաղադրիչ՝

«Բայց իմ սիրտը միշտ պիտ խնդրե Քնքուշ սրտիդ մոտ լինել» (ՀՀ, 38) նախադասության մեջ։ «Ես ուրախության բախտավոր ժպիտ Ամպամած դեմքից հեռու *է պահում» (ՀՀ, 54) նախադասության մեջ,* հեռուն *կարող է նույն մեկնաբանությունն ունենալ։*

Դիտողություններ կապի ու կապի խնդրի շարադասության վերաբերյալ.—

1. Երբեմն կապն ու խնդիրը կարող են դրվել տարբեր լրացումներ պահանջող երկու հարադրված կամ լրացական հարաբերությամբ կապակցված բայերի հետ, և այդ դեպքում հնարավոր է կապի ու խնդրի երկակի մեկնաբանություն։

«Մի վճիտ աղբյուր պսպղում էր մեր առաջ ու գնում տարածվելու դեպի *դաշտի* խոտերը» *(ՎՓ, 3, 388)։ «Ծուխը անոսր* բարձրանում տարածվում էր դաշտի կողմը» *(ՎՓ, 3, 383)։* «Ինձ մոտ աշխատում էր *որքան կարելի էր սառնասիրտ* երևալ» *(Ր, 2, 355)։ «Լոկ* խոստանում է իմ կյանքի համար *Ծաղիկ* բուսցնել *ոսկե շողերով» (ՀՀ, 41)։*

2. Հայտնի է, որ բայական, ածականական ծագում ունեցող, ինչպես և այլ գոյականներ նույնպես ստանում են կապային լրացումներ։ Այսպիսի գոյականների առկայությամբ երբեմն կապի խնդիրն ու կապը նույն նախադասության մեջ կարող են լրացական երկակի մեկնաբանություն ստանալ՝ և՛ բայի, և՛ գոյականի լրացում դիտվելով։ Դրան նպաստում է հայերենի շարադասության ազատությունը։

«Խիստ մտերմաբար հայտնեց *իր* ուրախությունը *ինձ* տեսնելու համար» *(Ր, 5, 7)։ «Զարմանալի* պատմություններ էի լսել *այդ կըրքոտ* անապատականների մասին» *(Ր, 5, 121)։ «Իրանց* կարծիքը հայտնում էին յուրաքանչյուրի մասին» *(Ր, 5, 337)։ «Միայն տղան* տեսավ *մոր* նկարն *սպիտակ* թղթի վրա» *(Բակ., 195)։* «Վինարանությունը շարունակվեց *այլ* հարցերի մասին» *(Շիրվ., 4, 264)։ «Նա միայն* կատարում է *իր* պարտքը երեխաների վերաբերմամբ» *(Շիրվ., 3, 175)։* «Օտարականների դեմ զայրույթը գրգռվում էր» *(ՎՓ, 4, 164)։ «Դիմացինդ* պարզում է *քեզ իր* հայացքը *որոշ* խնդրի մասին» *(ՎՓ, 4, 342)։*

3. Կապն ու իր խնդիրն ունեն ինչպես իրար, այնպես էլ իրենց լրացյալի և նախադասության մյուս անդամների հետ որոշակի ձևով շարադասվելու կանոններ։ Այդ կանոնների համաձայն նախադաս

---

[1] *Տե՛ս «Գոյականի լրացումը կապով և կապի խնդրով» բաժինը։*

կապի ու նրա խնդրի միջև ընկնում են վերջինիս լրացումները («Նա գնաց դեպի *իր ընկերոջ* տունը»)։ *Նախադաս կապը անմիջապես կապի խնդրից հետո է դրվում։ Այս կանոնների խախտումն ստեղծում է հայերենի ոգուն խորթ կառուցվածք։*

«Կարելի՞ է քաղաքակրթությունն իբր չափանիշ գործածել» *(ՎՓ, 3, 438)։ «Այդ բոլորը կատարվում էր* մի շարք կարևոր դեպքերի իբր արդյունք» *(ՎՓ, 4, 73)։* «Սրտի մինչև վերջին զարկը *զինվոր* էին» *(ՄՀԱԿՄ, 51)։ «Մեծ* անտառից, *լիքն* անտառից *Կանգնած է* զատ ու *սգվոր» (ՍՏԲ, 8)։*

3. ԲԱՅԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՄԱԿԲԱՅՈՎ

Մակբայը հատկանիշի հատկանիշ ցույց տվող խոսքի մաս է և իբրև այդպիսին հիմնականում հանդես է գալիս բայի լրացման դերում, իհարկե կատարելով նաև ածականի լրացման պաշտոն։ Սակայն մակբայը եթե ածականի լրացման դերում հանդես է գալիս սահմանափակ դեպքերում (ոչ բոլոր ածականները կարող են ստանալ մակբայ լրացում), ապա բայի լրացում լինելը նրա շարահյուսական հիմնական կիրառությունն է, և այստեղ սահմանափակում չկա ընդհանրապես։ Խոսքը չի վերաբերում, անշուշտ, այն դեպքերին, երբ, մակբայի և բայի իմաստներով պայմանավորված, որևէ մակբայ հնարավոր չէ բայական բոլոր ձևերի լրացում դարձնել (օրինակ՝ հնարավոր չէ ասել վաղուց աշխատեմ, արդեն նստեմ, դարեդար ծնվեցի, օրնիբուն մեռավ *և այլն)։ Բայի լրացում կարող են դառնալ բոլոր մակբայները՝ տեղի, ժամանակի, ձևի, չափի ու քանակի, ընդհանրական։ Բոլոր մակբայներն էլ բայի լրացում դառնալիս արտահայտում են պարագայական հարաբերություններ։ Սակայն նկատելի է, որ տեղի, ժամանակի մակբայների մի մասը ոչ թե տեղի պարագայական հարաբերություն է արտահայտում, այլ ձևի, որն ըստ էության պարագայական հարաբերությունների գերակշռող իմաստ է դառնում։ Այդ նշանակում է, որ ձևի պարագա են դիտվում ոչ միայն ձևի մակբայները, այլև մյուս տեսակի մակբայներից մի քանիսը՝ որոշակի կառուցվածքներում։ Մյուս կողմից նկատվում է, որ մակբայները բացի հայտնի տեսակներից ,արտահայտում են նաև իմաստներ, որոնք չեն արժեքավորված։ Դրանցից են սահմանափակման և անորոշ-նպատակային իմաստները։ Սրանք մտցված են ձևի, ընդհանրական և տեղի մակբայների մեջ, իբրև նրանց ներիմաստ։ Իհարկե, սահմանափակման իմաստն այնպիսին է, որ կարող է նաև առանձնացվել իբրև*

առանձին տեսակ մակբայների շարքում, սակայն այդ չենք անում՝ դասդասումները չբարդացնելու նպատակով։

Տեղի մակբայը բայի լրացում.— Տեղի մակբայը հիմնականում տարածական իմաստ է արտահայտում՝ բայի լրացման դերում։ Այդպես են հետևյալ նախադասություններում եղած կապակցությունները.

«Պտտվում է դեսուդեն» (ՍԶ, 4, 22)։ «Եղբայրներից կրտսերը զարնվում է մի թփի տակ և մեռնում տեղնուտեղ» (ՎՓ, 4, 232)։ «Ասես շրջել ես երգով ինձ հետ ամենուր» (ԳՍԵժ, 1, 329)։ «Տեղ-տեղ արբում, տեղ-տեղ կիտում» (ԳՍԵժ, 2, 355)։ «Հանդիսականները խռնվում էին վեր» (ՎՓ, 3, 503)։ «Այնքան էին լաց լինում, գետնեգետին բավալ գալիս» (ՇԹՆԾ, 1, 320)։

Մի շարք տեղի մակբայներ ձևի նրբիմաստ են արտահայտում՝ չդադարելով սակայն տեղի ընդհանուր նշանակություն ունենալուց։

«Անձրևը խփում էր երեսանց» (ՍԶ, 2, 475)։ «Դեմառդեմ հանդիպելիս ուղղակի չեն բարևում» (ՍԶ, 4, 22)։ «Կանգնել են դեմ հանդիման» (ՀՍՀԵՄ, 14)։ «Լուրն անցնում է բերնե-բերան» (ՄՍԿԿՏ, 55)։ «Այն բարձրանում է դարնիվեր» (ՇԹՆԾ, 1, 27)։

Մի շարք մակբայներ ունեն ուղղության լրացուցիչ նրբիմաստ՝ տեղի ընդհանուր նշանակության հետ միասին։ Այդպես են՝ դես, դեն, ետ, առաջ, ետուառաջ, վեր և այլն։

«Թե չէ դես քաշեմ, դեն քաշեմ, զանիկդ անեմ դուրս թռչեմ» (ՀԹ, 1, 433)։ «Ահա հսկում է, ետ ու առաջ մտիկ տալիս» (ԴԴ, 1, 236)։ «Նրա բրիչը ժայռեր էր դեսուդեն նետում» (ՎՓ, 3, 370)։ «Դեսուդեն ընկան մարդիկ անհանգիստ» (ՀՍՀԵՄ, 419)։ «Մագլցում էր ծառնիվեր» (ՋԴՍՎ, 10)։ «Ել նայեց նա դեսուդեն» (ԳՍԵժ, 1, 46)։

Իսկ խփել, խփվել, դիպչել, կպչել և նման բայերի լրացման դերում տեղի մակբայներն արտահայտում են լրացուցիչ հանգման խնդրային հարաբերություն։ Իհարկե, դա այնպիսի հարաբերություն չէ, որ ամբողջովին կուլվի խնդրային, սակայն ունի խնդրային նրբերանգ։

Այսպիսի կապակցություններում մակբայի արտահայտած խնդրային իմաստը պայմանավորված է լրացյալ բայի խնդրառական հատկությամբ (այդ բայերը սովորաբար հանգման անուղղակի խնդիր են պահանջում)։

«Փոթորիկը նրան ժայռեժայռ էր խփում» (ՎՓ, 3, 289)։ «Երերում էր, պատեպատ կպչում» (ՎՓ, 3, 322)։ «Ահեղ որոտը խեղդում է ձորի բոլոր ձայներն ու դիպչում ժայռեժայռ» (ՄՍԿԿՏ,

26)։ «Երբեք մի խփիր դու քեզ պատեպատ» (ՍԲՍ, 449)։ «Անքուն ջրի պես դիպչում քարեքար» (ՀԲ, 1, 84)։

Երբեմն պատահում է, որ տեղի մակբայը գործածվում է այնպիսի նախադասության մեջ, որտեղ առկա է որևէ տեղի պարագա։ Նման կառույցվածքներում ավելի է ընդգծվում տեղի մակբայի ձևային նշանակությունը։

«Դեմառդեմ տեղավորվեցին մի լուսամուտի առաջ» (ՎՓ, 3, 565)։ «Այդպես օտարոտի մի պատահար էր, ահա, որ դեմառդեմ տեղի ունեցավ ձորագլխում» (ՎՓ, 4, 232)։ «Մի անգամ դպրոցի միջանցքում դեմ-դիմաց հանդիպեցին» (ՇԲՆԾ, 1, 203)։

Հետաքրքրական է, որ մի շարք բառեր մի տեսակ համատեղում են մակբայի և կապի խոսքի մասային հատկանիշները[1]։ Այսպիսի համատեղումը սակայն միատեսակ չի դրսևորվում։ Եթե մակբայների մի մասն ունի և՛ մակբայի հատուկ լրացումներ, և՛ կապ է դառնում միաժամանակ, ապա մյուսները ունեն միայն կապի թույլ իմաստ, քանի որ նրանք գործածվում են որևէ գոյականի հետ անբաժան։ Այսպես, եթե հեռու մակբայը նաև կապ է «Նախագահի գրասեղանից քիչ հեռու նստել էր Տիգրանը» (ՍԶ, 4, 340) նախադասության մեջ, քանի որ ունի գրասեղանից կապի խնդիր, ապա դեմառդեմ, երեսնիվեր, կողերն ի վար մակբայները սոսկ կապի երանգ ունեն։ «Մի օր դեմառդեմ եկավ մի քարավանի» (ՎՓ, 3, 16)։ «Ճանապարհին նրանք դեմառդեմ եկան մի զինվորականի» (ՎՓ, 3, 165), «Ջուրը հորդությամբ հոսում էր նրա երեսն ի վեր» (ՎՓ, 3, 101), «Կարկաչյունով ծորում էր ավազանի կողերն ի վար» (ՎՓ, 3, 101) նախադասություններում, քանի որ հանդես են եկել քարավանի, զինվորականի, նրա, ավազանի բառերի հետ, որոնք ըստ էության կապի խնդրի արժեք ունեն (այդ բառերը շարահյուսական ինքնուրույն դեր չունեն և բերված մակբայներից անբաժան են՝ շարահյուսական-ֆունկցիոնալ առումով)։ Իհարկե չի կարելի մակբայը այդ բառերի մոտ կապ համարել, իսկ մյուս կողմից էլ այդ բառերը հենց կապի խնդրի արժեքով են հանդես գալիս։

Ժամանակի մակբայը բայի լրացում.— Ժամանակի մակբայները թվով ավելի շատ են, քան տեղի մակբայները։ Սրանց տարբերիչ գծերից մեկն այն է, որ մեծ մասամբ հանդես են գալիս իրենց բուն իմաստով, այլ իմաստներ քիչ են զուգակցվում

[1] Այս հարցի մասին ավելի մանրամասն տես «Մակբայի բառակապակցությունները» գլուխը։

սրանց։ Այս մակբայներից են՝ հիմա, այժմ, երբեք, նոր, միաժամանակ, այլևս, առայժմ, շուտ, ուշ, վաղ, վերջիվերջո, հավետ, հավիտյան, դեռ, դեռևս, վաղուց, օրեցօր, հետո, մանկուց, մերթ և այլն։ Ժամանակի մակբայները գործածության տեսակետից առանձնահատուկ են. նրանցից մի քանիսը իրենց արտահայտած ժամանակային հատկանիշին համապատասխան կապակցվում են որոշակի ժամանակային ձև ունեցող բայի հետ։ Այսպես, վաղուց, մանկուց մակբայների հետ սովորաբար կապակցվում են անցյալ ժամանակի բայաձևերը։

«Մանկուց եմ լսել ես Մարոյի անունը» (ՀՍՀԵՄ, 237)։ «Վաղուց-վաղուց են այդ բոլորն անցել» (ՀՍՀԵՄ, 239)։ «Էդ մենք բոլորս էլ շատուց գիտեինք» (ՇԹՆԾ, 1, 491)։

Այժմ, արդ, հիմա (հիմիկ) մակբայները կարող են կապակցվել միայն ներկա և ապառնի ժամանակի բայաձևերի հետ։

«Եվ խիղճս հիմա ինձ չի չարչարում» (ՀՍՀԵՄ, 51)։ «Մի լուսին է հիմա ինձ խեթ ու մեթ նայում» (ՊՍՄԱՄ, 319)։

Սակայն հենց նշած մակբայները կարող են գործածվել տարբեր ժամանակների բայաձևերի հետ, որը վկայում է այն մասին, որ մակբայի ժամանակային սահմանափակումը որոշակի չէ։

«Մեր վայրի հարևանները հիմա շատ նեղ վիճակում են մնացել» (ԱՇ, 104)։ «Ես հետո շատ բան իմացա» (ՇԹՆԾ, 1, 508)։ «Նա վաղուց պիտի գնար»։

Ժամանակի մակբայների մեծ մասը գործածության տեսակետից սահմանափակում չունի. նրանք կարող են տարբեր ժամանակի բայաձևերի հետ կապակցվել։

«Երբեք հայրենի մասին չէր մտածել» (ՍՁ, 2, 196)։ «Ոչ մի խելացի մարդ երբեք չէր համաձայնվելու բնակվել մի այնպիսի խարխուլ և փլփլված շենքի մեջ» (Ր, 1, 266)։ «Վռնչում է դեռ սպիտակ քո ձին» (ՀՍՀԵՄ, 77)։ «Դեռ դու եկեղեցուց չէիր վերադարձել» (Ր, 7 ,313)։ «Էմման դեռ կարմրեց, հետո գունատվեց» (ՆԴ, 2, 323)։ «Ես դեռ կանեմ, հետո հերն անիծեմ, ինչ ուզում է, թող լինի» (ՆԴ, 2, 469)։ «Շատ շուտ եմ բարբոքվում» (ՆԴ, 3, 134)։ «Առավոտը զարթնեցի բավական շուտ» (ՍՁ, 4, 140)։ «Այնպես վաղ էին նրանք արթնանում» (ՀՍՀԵՄ, 109)։ «Այս առավոտ խիստ վաղ զարթնեց» (Ր, 3, 342)։ «Էլ չեմ տանջվում» (ՎՓ, 3, 494)։ «Մարդկանց ձեռքն այլևս գործ չէր բռնում» (ՍՁ, 2, 450)։

Նկատելի է, որ ժամանակի մակբայներից մի քանիսը եր-

բեմն զուգադրաբար են գործածվում՝ իմաստի սաստկացման նպատակով։ Այսպես, լինում են՝ վաղուց արդեն (արդեն վաղուց), այժմ դեռ (դեռ այժմ), հիմա դեռ (դեռ հիմա), այժմ այլևս, այժմ էլ, էլ հիմա, դեռ հետո *և այլն։*

«Այժմ այլևս չեմ վախենում *կորցնել աստղիկիս*» *(ՎՓ, 3, 254)*։ «*Արձանի մասին* վաղուց արդեն *շատերը* մոռացել էին» *(ՎՓ, 2, 294)*։ «*Գիշերը* վաղուց կիսվել էր արդեն» *(ՄԲԱ., 499)*։ «Այժմ *գարունը* եռում էր արդեն» *(ՍԶ, 4, 197)*։

Մի շարք ժամանակի մակբայներ բայի հետ կապակցվելիս դրսևորում են նաև ձևի իմաստ։ Այս դեպքում, թվում է, մակբայը վերածվում է ձևի նշանակություն ունեցողի, սակայն այդպես չէ։ Այդ կապակցություններում ժամանակի մակբայը սոսկ ժամանակավորապես է ստանձնում ձևի իմաստ։ Այդպես են՝ տարեցտարի, վերստին, ընդմիշտ *և այլն։*

«Տարեցտարի *նա դասարանը* փոխադրում էր *գովասանագրերով*» *(ՇԹ՛ՆԾ, 1, 197)*։ «*Ու* վերստին դարձավ *նա մարմարակերտ մի արձան*» *(ԳՍԵԺ, 2, 218)*։

Երբեմն էլ ժամանակի մակբայը կարող է չափի (ժամանակային չափի) իմաստ դրսևորել՝ ժամանակային ընդհանուր նշանակությանը զուգահեռ։

«Պիտի բուրի հար-հավիտյան *Հայոց փշատենին*» *(ՀԱՀԵՄ, 96)*։ «*Հայրը* հազվադեպ *էր նրա վրա* ձեռք բարձրացնում» *(ՇԹ՛ՆԾ, 1, 19)*։ «*Սա ու* հավիտյանս հավիտենից բանացրու» *(ՇԹ՛ՆԾ, 1, 93)*։ «Օրնիբուն աշխատում էր» *(ՇԹ՛ՆԾ, 1, 190)*, «*Մեր սրտերում* հավետ պահենք *անունն անմար*» *(ԳՍԵԺ, 1, 328)*։ «*Ու քո ազգի հետ* քայլել դարեդար» *(ՄԲԱ., 36)*։ «*Մեր սրտերում* հար կհառնեն» *(ՍՏԲ, 41)*։

Ձևի մակբայը բայի լրացում.— *Ամենից շատ գործածական են ձևի մակբայները։ Մակբայի այս տեսակի գերակշռությունը պայմանավորված է առաջին հերթին ձևի մակբայի կազմության առանձնահատկություններով։ Ձևի մակբայները կազմվում են մի շարք ածանցներով* (պես, բար, որեն *և այլն*), *բառաբարդմամբ, այլ խոսքի մասերի ձևերի քարացումով։ Սրանց մի մասն էլ առաջանում է այլ տեսակի մակբայների՝ ձևի իմաստ ձեռք բերելով։ Ձևի մակբայները թվարկել հնարավոր չէ. դրանք անընդհատ կազմվում են բազմաթիվ միջոցներով և տարբեր խոսքի մասերից։ Կարելի է նշել դրանցից մի քանիսը, ինչպես՝* դանդաղ, բաքուն, ակնդետ, շեղակի, ճշմարտապես, գրկաբաց, շտապ, հապճեպ, փոխեփոխ, ակամա, գլխապատառ, հևիհև, գեղովի, բնազ-

դորեն, ձեռաց, վազեվազ, ընկերովի, ջոկ-ջոկ, սրտանց, թևան-ցուկ, որոտընդոստ, գաղտագողի, սրտատրոփ, շարեշար, թերթե-վակի, հեզնաբար, ծալապատիկ, նշանացի, լռելյայն, փոխադար-ձաբար, ազնվորեն, անհրաժեշտաբար, մարդկայնորեն, սուսու-փուս, մեծավարի, հանպատրաստից, առերևույթ, գլխահակ, բե-րանքսիվայր, բացեիբաց, չարաչար, չորեքթաթ, սողեսող, լռու-մունջ, կուզեկուզ, գետնաթավալ, շքեղապես, պարբերաբար, գո-ղունի, պարզեիպարզ, խումբ-խումբ, շերտ-շերտ *և այլն։ Սրանցով կարող են կազմվել բազմաթիվ կապակցություններ։*

«*Ես* օրհնեցի *քեզ* թաքուն» (*ՀՄՄԱ, 95*)։ «Մտովին *անեծք-ներ* էր տեղում» (*ՍՁ, 2, 41*)։ «*Ահա* ակնդետ նայում էր» (*ՍՁ, 2, 144*)։ «*Նա ինձ* ընդունեց գրկաբաց» (*ՍՁ, 2, 222*)։ «Իջնում են ահեղագոչ, որոտընդոստ պայթում» (*ՎՓ, 3, 129*)։ «Գաղտագողի էին դիտում *արձանը*» (*ՎՓ, 3, 291*)։ «*Երբ* մարդկայնորեն *սիրտս* գերում են» (*ՊՄՄԱՄ, 110*)։ «Անխոս-լռելյայն երդում է տա-լիս» (*ՊՄՄԱՄ, 220*)։ «Բարեսրտորեն ժպտում էր» (*ԳՄԼՁ, Տ*)։ «Աղոթեց *Սայաթ-Նովան* ծնկաչոք, երեսն ի վար» (*ԳՍԵԺ, 2, 212*)։ «Սողեսող, *հոգնած* փռվեցի *սարին*» (*ԳՍԵԺ, 2, 276*)։ «Փախչում են խումբ-խումբ, *մեկ-մեկ*, սյուն առ սյուն» (*ՍԲԱ, 252*)։ «*Ոսկի շողեր է* թափում խուրձ-խուրձ» (*ՍԲԱ, 471*)։

Որոշ ձևի մակբայներ կարող են զուգահեռաբար արտահայ-տել նաև սահմանափակման իմաստ։ Դրանցից են՝ արտաքուստ, ներքուստ, ֆիզիկապես, բարոյապես, հոգեպես, մտովին *և այլն։ Սրանցով կազմված կապակցություններում ձևի իմաստը ոչ թե վերանում, այլ համատեղվում է սահմանափակման իմաստի հետ, և ստացվում է ձևի-սահմանափակման հարաբերությամբ կազմը-ված կապակցություն։*

«*Այդ ամենին կարևորություն* չէր տալիս ներքուստ» (*ՍՁ, 2, 220*)։ «Ֆիզիկապես *ու* բարոյապես տրորում էին *նրանց*» (*ՄՀԱԿՄ, 6*)։ «Փաստորեն *հերոսի բարոյական ուժերը* հաղթանակում են *ֆիզիկական ուժի օգնությամբ*» (*ՇԲՆԾ, 1, 547*)։

Պետք է նշել, որ ձևի մի շարք մակբայներ որոշ կապակցու-թյուններում արտահայտում են վիճակի իմաստ՝ ձևի իմաստին զուգահեռ։ Այսպես են՝ գլխիկոր, ծնկաչոք, ինքնախորասույզ *և այլն։*

«*Ու* հեռացավ գլխիկոր» (*ԳՍԵԺ, 2, 376*)։ «*Դարերում ոչ ոք* չի տեսել *նրան* Ծնկաչոք՝ *վզին լուծը ստրկի*» (*ՍԲԱ, 424*)։ «*Իլ-յիչն առօրյա հոգսերով վառված*՝ Ինքնախորասույզ գրում է *լռին*» (*ՍԲԱ, 488*)։

Միասին մակբայը ձևի իմաստից բացի կարող է արտահայտել խնդրային վիճակի իմաստ՝ տեսնել բայի հետ։ Օրինակ՝ «Նա Շավարշին ու Թինիկոյին տեսավ միասին» (ՇԹՆՃ, 1, 231)։

Չափի մակբայը բայի լրացում.— Չափի մակբայները նախորդների համեմատությամբ պակաս թիվ են կազմում։ Սրանց մի մասը աստիճանի իմաստային երանգ ունի և հանդես է գալիս նաև ածականի լրացման դերում (կազմում է համեմատության աստիճաններ), ինչպես՝ ավելի, առավել, շատ. քիչ, նվազ. բավականին, բոլորովին, ամբողջովին, և այլն։ Սակայն դրանք միաժամանակ բայի լրացում են լինում՝ չափի հարաբերությամբ։

Չափի մակբայը ածականի հետ կապակցվելիս շարահյուսական ինքնուրույն պաշտոն չի կատարում, այլ լրացյալ ածականի հետ միասին է այդպիսի դեր ստանձնում։ Մինչդեռ բայի լրացման դեր կատարելու դեպքում չափի մակբայն ունի շարահյուսական պաշտոն, այսինքն՝ համարվում է նախադասության անդամ (չափի պարագա)[1]։

Բայի հետ կապակցվելիս չափի մակբայները չունեն էական սահմանափակում. ամեն մի մակբայ կարող է դառնալ բազմաթիվ բայերի լրացում (իհարկե ըստ նրանց բառային իմաստների համապատասխանության)։

Չափի մակբայները բայի լրացում կարող են դառնալ և՛ առանձին, և՛ իրենց լրացումներով[2]։

«Ժայռերին զարկվել ու շատ եմ լացել» (Իս., 1, 203)։ «Մոռացել էր ինձ և ամբողջովին տարվել երեխայով» (ՍԶ, 2, 202)։ «Նա ավելի խորհում էր, քան խոսում» (ՍԶ, 2, 270)։ «Վերքն առողջացել էր բոլորովին» (ՍԶ, 2, 373)։ «Ձայնը բարձրացնում էր կրկին՝ պայմանների ներածից ավելի» (ՍԶ, 2, 395)։ «Առայժմ լռելուց հետո հարցրեց» (ՍԶ, 2, 433)։ «Գևորի ձայնը խլանում էր իսպառ» (ՍԶ, 2, 444)։ «Պատակ էին անում մի քիչ» (ՍԶ, 2, 405)։ «Հասարակությունը քանիցս կամեցավ փշրել արձանը» (ՎՓ, 3,

[1] Այստեղ, ի միջի այլոց, դրսևորվում է բառակապակցության և նախադասության կառուցվածքային տարբերությունը. իբրև բառակապակցություն, չափի մակբայն ու ածականը որակապես չեն տարբերվում մակբայի և բայի բառակապակցություններից։ Օրինակ՝ Շատ բարձր և շատ խոսել երկուսն էլ բառակապակցություն են, մինչդեռ առաջինի մեջ շատ չի համարվում նախադասության անդամ. օրինակ՝ «Ինքնաթիռը շատ բարձր է թռչում» նախադասության մեջ (նախադասության մեկ անդամը շատ բարձր կապակցությունն է)։ Մինչդեռ բայի լրացման դերում չափի մակբայը նախադասության անդամ է։ Օրինակ՝ «Նա շատ խոսեց»։

2 Այս հարցի մասին տե՛ս «Մակբայի բառակապակցություններ» գլուխը։

291)։ «Ան յուղարձը լիովին դադարել էր» (ՎՓ, 3, 443)։ «Յորնապատիկ ներքում էին գիրինների կաշին» (ՄՀԱԿՄ, 99)։ «Ես ճավատում եմ կենդանի մարդուն, Առավել նրա ծնվելիք որդուն» (ՊՍՄԱՄ, 112)։

Որոշ մակբայներ չափի և ձևի իմաստներ են համատեղում, ինչպես՝ առատորեն, բերնեբերան, բացարձակորեն, սակավադեպ *և այլն։ Սրանցով կազմված կապակցությունները կարելի է մեկնաբանել և՛ չափի, և՛ ձևի հարաբերությամբ կազմված։*

«Դաշտերը լուսավորված էր առատորեն» (ՍՁ, 4, 340)։ «Հընչյունները հեղեղում են մարդկանցով բերնեբերան լցված դաշտերը» (ՄՍԿԿՏ, 23)։ «Մոլի մունչյունը բացարձակորեն խլացնում էր ամեն ուրիշ աղմուկ» (ՎՓ, 4, 647)։ «Սակավադեպ էին փրնտրում միմյանց» (ՇԲՆԾ, 2, 112)։

Ավելի *մակբայի առնչությամբ պետք է ասել, որ այն գործածվում է նաև* ավելին *ձևով՝ իմաստի փոքր-ինչ սաստկությամբ։ Օրինակ՝* «Ավելին ուզողը *թող չուն դառնա*» (ՇԲՆԾ, 1, 100)։

Ընդհանրական մակբայը բայի լրացում.— *Մակբայի այս տեսակը ուվետահայ քերականագիտության մեջ վերջերս է արժեքավորվել*[1], *թեև այն, իբրև իրողություն, առկա է նաև գրաբարի քերականական համակարգում։ Ընդհանրական կոչվում են այն մակբայները, որոնք բառական նույն իմաստի սահմաններում դրսևորում են երկու և ավելի մակբայական իմաստ։ Դրանք գերազանցապես ժամանակի, ձևի, չափի մակբայներ են եղել, որոնք ժամանակի ընթացքում ավելի լայն մակբայական իմաստ են ստացել՝ վերածվելով ընդհանրական առանձին տեսակի։ Դրանցից են՝* հանկարծ, նորից, կրկին, շարունակ, հետզհետե, ստեպ-ստեպ, հաճախ *և այլն։*

«Ավելկոծվում է հանկարծ» (ՀՍՄԱ, 56)։ «Ստեպ-ստեպ ել ու մուտ էին անում» (ՍՁ, 2, 143)։ «Հետզհետե *բազմություն*ը լցվեց» (ԴԴ, 1, 238)։ *«Սերմազարիչը անդադրում* Բաքախում էր շարունակ» (ԳՍԵԺ, 2, 356)։ «Նորից *իմ սիրտը քո դեմ* բացում եմ» (ՀՍՀԵՄ, 97)։ *«Դու շատ* հաճախ էիր *իմ մազերը* գովում» (ՊՍՄԱՄ, 304)։

Մի քանի մակբայներ մեր քերականագիտության մեջ ընդհանրական չեն դիտվում, ձևի կամ այլ տեսակների մեջ էլ չեն մտցըվում։ Դրանք բայի լրացման դերում հանդես գալիս արտահայտում են նպատակի հարաբերություն, որը տվյալ դեպքում ոչ թե որոշա-

[1] *Տե՛ս 379 էջի տողատակի ծանոթագրությունը։*

կի, այլ անորոշ է։ Այդ մակբայներից են՝ զուր, իզուր, դիտմամբ, անտեղի, ապարդյուն *և այլն։*

Իհարկե, նպատակային իմաստը սրանց մեջ ձևի իմաստի հետ է զուգակցված, սակայն սրանք դադարում են սոսկ ձևի մակբայլինելուց, ուստի և հարմար է սրանք ընդհանրական համարել, թեև ընդհանրական մակբայները երկու կամ ավելի մակբայական իմաստ պիտի ունենան, իսկ նպատակի իմաստը մակբայական չէ։

«Հոգնել եմ արդեն զուր թափառելուց» *(ՀՍՄԱ, 147)։* «Իզուր եք նայում *Դուք իմ ճաղատին» (ՀԱՀԵՄ, 391)։* «Դիտմամբ *կողմնակի բաների մասին* էր խոսում» *(ՍՁ, 2, 215)։* «Նայում էր ապարդյուն» *(ՍՁ, 2, 459)։*

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱԿԲԱՅԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԲԱՅԻ ԼՐԱՑՄԱՆ ԴԵՐՈՒՄ

1. Պարագայի դերում մակբայները կարող են համադաս լինել ածականին, դոյականի հոլովաձևերին, որոշ դերբայների, կապի խնդրին ու կապին։ Այդ դեպքում յուրաքանչյուր խոսքի մաս հանդես է գալիս իր բնորոշ ձևով։ Մասնավորապես մակբայը իր չթեքվող ձևով է դրվում բայի վրա, եթե նույնիսկ այն միավորիչ շաղկապներով կամ շարահարական կապակցությամբ է հանդես գալիս տվյալ խոսքի մասի հետ՝ բայի լրացման դերում։

«Նորից կպրենք հաշտ ու հանգիստ» *(ՍՁ, 2, 247)։ «Մարդոն նրանց հարցերին* պատասխանում էր *հաճախ* ակամա, անտարբեր» *(ՍՁ, 4, 508)։ «Սամվելը* տխուր, գլխիկոր կանգնեց *փողոցի մեջտեղում» (ՇԹՆԺ, 1, 302)։* «Ծիծաղում են սրտանց, ջերմ» *(ՄՍԿԿՏ, 214)։ «Իսկ նա* նայում է *այնպես* սառնորեն ու խորը» *(ՍԲԱ, 64)։ «Սեղանը* սարքել էր առատորեն ու նաշակով» *(ՍՁ, 4, 287)։ «Բժիշկը իրեն* էր նայում զննողաբար *ու* համառությամբ» *(ՎՓ, 3, 353)։*

Սակայն երբեմն որոշ գրողներ մակբայական իմաստով գործածում են ածականներ՝ առանց համապատասխան ածանցով դրանք մակբայական կերպարանքի բերելու, որը հանգեցնում է ոչ ճիշտ կապակցության։ Օրինակներ՝ «Լևոնն իր դարանից որոշ տեսնում էր *նրա լուսամուտները» (ՍՁ, 2, 142)։* «Ինքնաբեր նստեց *իր սովորական տեղը» (ՍՁ, 2, 155)։ Սրանցում պետք էր գործածել* որոշակի (որոշակիորեն), ինքնաբերաբար *մակբայները։*

2. Մակբայը սովորաբար լրացյալ բայի մոտ է դրվում նախադաս կամ ետադաս կիրառությամբ։ Վերը բերված օրինակներում մեծ մասամբ մակբայը անմիջականորեն լրացյալի մոտ է դրված (դեսուդեն ընկան, պատեպատ էր կպչում, դեմառդեմ տեղավոր-

վեցին, վաղուց պիտի գնար, շուտ գնա, պիտի բուրի նար–նավիտյան, փորեցին օրնիբուն և այլն)։ Կան դեպքեր էլ, երբ մակբայը լրացյալից անջատված է այլ անդամներով՝ խոսքի առանձնահատուկ կառուցվածքով պայմանավորված։ Այդպիսի կապակցությունների օրինակներ նշված են վերը («Մեջտեղը՝ արևի ցոլքի տակ դալարվող ջրեր են նոսում», «Ահա շրջել ես երդվել ինձ հետ ամենուր» և այլն)։

Սակայն պատահում են դեպքեր, երբ որևէ բայի անմիջապես հարող մակբայը նրա լրացումը չէ, այլ ուրիշ բայի հետ է կապակցվում։ «Իմ պատմությունն ավելի շուտ նրան պատահած մի դեպքի մասին է, քան իր՝ Արշակ Խորենիչի» (ՍԶ, 4, 152)։ «Գարու և ցորենի ցանքը տևեց յոթ օր և բռնեց հողամասի կեսը, ավելի շուտ եղած սերմացուն հազիվ բավարարեց կեսին» (ՍԶ, 4, 201)։

Այս նախադասություններում ավելի շուտ մակբայը պատահած և եղած բայերի հետ կապ չունի, այլ դեպքի մասին է և բավարարեց ստորոգյալների լրացումն է։

3. Որոշ գրողներ երբեմն մակբայի մոտ դնում են կապ՝ այն ածականի հետ շփոթելով։ Այսպես, գաղտագողի բառը մակբայ է, որ նշանակում է գաղտնի և գողի նման, ուստի նրա մոտ կերպով կապն ավելորդ է։ Սակայն Վ. Փափազյանը գործածել է գաղտագողի կերպով ճետապնդել ոչ ճիշտ կապակցությունը։ «Կարող էր կարծել, թե հետապնդում են իրեն և այն էլ ոչ թե համարձակ, այլ գաղտագողի կերպով» (ՎՓ, 4, 625)։

Սա չի կարելի շփոթել այն դեպքի հետ, երբ մակբայի բաղադրումով որևէ կապի հետ՝ կազմվում է նոր մակբայ։ Օրինակ՝ վաղուց մակբայը ի վեր կապի հետ կազմում է վաղուց ի վեր բաղադրյալ մակբայը։

«Թեկուզ չենք լինի մենք վաղուց ի վեր» (ԴՍեժ, 1, 63)։

4. ԲԱՅԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԱԾԱԿԱՆՈՎ

Ածականը, իբրև առարկայի հատկանիշ ցույց տվող խոսքի մաս, գոյականի լրացում է լինում։ Սակայն որոշ ածականներ, մասնավորապես որակականները, կարող են դառնալ նաև բայի լրացում։ Բայի լրացման դերում հանդես գալը ձևի-որակական ածականների հիմնական կիրառություններից մեկն է (ինչպես և հենց որակական ածականների համեմատության աստիճանների կազմությանը մասնակցելը)[1]։ Այս առումով պատահական չէ, որ

[1] Տե՛ս «Ածականի բառակապակցություններ» գլուխը։

Մ. Աբեղյանը ածականն ու մակբայը նույն խոսքի մաս է դիտում և ածական անելով հասկանում այդ երկուսի՝ գոյականի լրացում. իսկ մակբայ՝ դրանց՝ բայի լրացում կիրառությունը։

Սակայն ածականը բայի լրացում դառնալով չի կորցնում իր խոսքի մասային արժեքը և չի վերածվում մակբայի։ Բայի լրացում դարձող ածականները առաջին հերթին գոյականի լրացում են լինում, ինչպես և կատարում են ստորոգելիական վերադրի պաշտոն (իսկ այդ երեքը ածականի բնորոշ կիրառություններն են)։ Բայի հետ կապակցվում են բազմաթիվ ածականներ՝ արտահայտելով ձևի ու վիճակի հարաբերություններ։ Կան նաև սրանցից դուրս ուրիշ հարաբերությամբ կապակցվող սակավաթիվ ածականներ։

Երբ խոսում ենք բայի լրացում դարձող ածականների կիրառության մասին, անշուշտ, նկատի չունենք այն դեպքերը, երբ մի քանի բառեր՝ շատ, քիչ *և այլն, իմաստային յուրահատկություն ունենալու շնորհիվ հանդես են գալիս երկու խոսքի մասային արժեքով և դառնում են մի դեպքում ածական, մյուս դեպքում՝ մակբայ*[1]։

Ածականը բայի լրացում՝ ձևի հարաբերությամբ.— *Ձևի պարագա լրացում կարող են դառնալ շատ որակական, երբեմն և հարաբերական ածականներ։ Դրանցից կարելի է նշել՝* անհամբեր, լուրջ, անսովոր, հին, հորդ, սև, ուշադիր, թեթև, պարզ, անվարժ, անսպասելի, աշխույժ, համարձակ, վճռական, զուրկ, առատ, ահեղ, խեղճ, արդար, ճիշտ, ճոխ, փառավոր, պերճ, երկար, սառը, մանր, անփույթ, ուրախ, անհոգ, ամուր, փայլուն, հաջող, կտրուկ, հիանալի, վճիտ, մեղկ, ազատ, մռայլ, խիզախ, ազնիվ, ուժեղ, երջանիկ, քաջ, սուր, մաքուր, լուսավոր, հպարտ, ժլատ, քաղցր, մտերիմ, զվարթ *և այլն։*

Այս ածականները կարող են կապակցվել բազմաթիվ և տարբեր իմաստային խմբերի բայերի հետ։

«Սկսեցին լուրջ կշռադատել *դրությունը» (ՍԶ, 2, 465)։ «Ծառերը* խշշացին անսովոր» *(ՍԶ, 2, 471)։ «Մի քանիսը* դրված էին զուգահեռ» *(ՍԶ, 4, 191)։ «Նա* ուշադիր հետևում էր» *(ՍԶ, 4, 317)։ «Սիրում է այսպես* թեթև հագնվել *ու* պարզ» *(ՍԶ, 4, 340)։ «Ծառան եկավ,* գոռաց ահեղ» *(ՎՓ, 3, 187)։* «Հագել էր խեղճ, ոչ պատառոտուն» *(ՎՓ, 3, 188)։ «Ձեռքը* կարճ *ու* վարանոտ պարզում էր *անցորդների» (ՎՓ, 3, 189)։ «Երիտասարդը* քայլել էր արդար, ճիշտ» *(ՎՓ, 3, 226)։* «Ապրում էր նա ճոխ ու փառավոր» *(ՎՓ, 3,*

---

[1] *Տե՛ս «Գոյականի բառակապակցությունները մակբայ լրացումով» հատվածը։*

369)։ «Կանչել եմ *որերս* անփույթ» (ՀԱՀԵՄ, 39)։ *«Ծաղկուն ծառերն* ուրախ, ուրախ շորորացին» *(ԳՍԵԺ, 1, 42)*։ «Խիզախ նայիր *ձմռան կատարներին»* *(ԳՍԵԺ, 1, 13)*։ *«Հողմը* ուժեղ է մռնչում» *(ԳՍԵԺ, 2, 220)*։ «Սուր անՖում էր *մացառների մեջ»* *(ԳՍԵԺ, 2, 280)*։ *«Լաց, իմ նաղելիս,* լաց դառն ու անհուն» *(Իս., 1, 242)*։ «Երգեց անուշ ու տխուր» *(Իս., 1, 41)*։ *«Դու ավելի* փարթամ պիտի ծաղկես» *(ՀՍՄԱ, 100)*։ «Հանդիսավոր հսկում էր» *(ԴԴ, 1, 238)*։

Սակայն հագնել, հագնվել *բայերի մոտ* հին, սև, սպիտակ, վարդագույն *(առհասարակ գույն ցույց տվող) ածականների գործածությունը յուրահատուկ է։ Այսպես,* հին հագնել *կապակցությունը կարելի է հասկանալ նաև իբրև ուղիղ խնդիր—բայ կապակցություն, այսինքն* հին *ածականը դիտել իբրև գոյականաբար գործածված բառ* (հմմտ. հինը հագնել, նորը հագնել)։ *Իսկ* հին հագնվել *կապակցությունը ձևով երկակի մեկնաբանության հիմք չունի, քանի որ* հագնվել *բայը միջին-անդրադարձ սեռային տառման է. այդ կապակցության մեջ* հին *չի կարող խնդիր դիտվել, սակայն այնուամենայնիվ* հին հագնվել-*ի մեջ* հին *չի նշանակում* հին ձևի, *այլ նշանակում է* հին հագուստ։ *Այսպիսի կապակցությունների գործածությունը սակավադեպ է։*

«Տեսնեմ՝ դրանք էլ են հին հագնված» *(ՍԶ, 4, 116)*։ *«Առաջինը մի տարեց կին էր՝ վերից վար* սև հագնված» *(ՍԶ, 4, 278)*։

Հայերենում ընդհանրապես գույն ցույց տվող ածականները ձևի հարաբերությամբ չեն կապակցվում բայի հետ։ Այս տեսակետից ոչ հայերեն են հնչում որոշ հեղինակների գործածած կարմիր վառվել, կապույտ անել *և այլ կապակցությունները։* «Կարմիր վառվեց *արևը բոսոր որպես կռվի ազդանշան» (Չ, 256)*։

Սովորաբար հատկացական ածականները պարագայի դերը միայնակ չեն կատարում, այլ կապական բառերի հետ միասին, ինչպես՝ բարեկամական ձևով (օգնել), մարդկային կարգով (ընդունել), ընկերական ձևով (վերաբերվել) *և այլն։ Սակայն երբեմն հանդիպում ենք այնպիսի կապակցությունների, որոնցում հատկացական ածականը միայնակ է ստանձնել պարագայի դերը։ Իհարկե այդ կապակցությունները հայերենի ոգուն հարազատ չեն և այդ պատճառով սակավադեպ կիրառվող։*

«Հարցական նայեց *Հակոբին» (ԴԴ, 1, 240)*։ *«Երգիր, դերվիշ, դու* երկնային ես երգում» *(ՎՓ, 3, 154)*։ *«Նա հենց սկզբից էլ* մարտական էր տրամադրված» *(ԱՍՍ, 243)*։ «Սպառողական նայեց *տղային» (ՄԱՊՀՉ, 349)*։

Կան մի շարք կապակցություններ, որոնցում ածականը կա-

րող է մեկնաբանվել երկակի՝ ձևի և վիճակի իմաստներով։ Դա պայմանավորված է լրացյալ բայով։ Մի շարք բայերի մոտ ածական լրացումը ձևի և վիճակի խառն նշանակություն է ձեռք բերում։ Այդպիսի բայերից են՝ նստել, լսել, զգալ, տեսնել, նայել, պառկել և այլն։

«Շունչ առնեմ ազատ, մեռնեմ բախտավոր» (Իս., 1, 379)։ «Կրկին հայտնվում ճապուկ ու թեթև» (ՀԹ, 2, 72)։ «Մինչ այդ նստած էր անշարժ ու անտարբեր» (ՍԶ, 2, 281)։ «Նա խոսում էր այժմ համեմատաբար հանգիստ» (ՍԶ, 4, 138)։ «Զգում էր իրեն անհանգիստ, անհարմար, ամոթահար» (ՍԶ, 4, 511)։ «Ամեն ինչ վարդագույն տեսնող աղջիկը այժմ դարձել էր սաստիկ հոռետես» (ՎՓ, 4, 650)։ «Գործած և չքաշած իմ մեղքերի ծովից Ես դուրս եկա մաքուր՝ որպես որբ ճերմակ» (ՊՍՄԱՄ, 29)։ «Խոժոռ ու մռայլադեմ քայլեց դուրս» (ՇԹՆԾ, 1, 111)։ «Նայում էր նա պախծոտ, տրտում» (ԳՍԵԺ, 2, 361)։

Ածականը բայի լրացում՝ վիճակի հարաբերությամբ.— Վիճակի հարաբերությունը լայն առումով մտնում է ձևի իմաստի մեջ. դպրոցական քերականությունն էլ վիճակի պարագան չի սահմանազատում ձևի պարագայից։ Դրա հիմքն այն է, որ վիճակը ևս ձևի մի տարատեսակ է։ Սակայն դա միայն լայն առումով. իրականում վիճակի հարաբերությունը տարբեր է ձևից։ Վիճակի իմաստ ունեցող լրացումը ցույց է տալիս գործողի կամ գործողության առարկայի վիճակը և ոչ թե գործողության կատարման ձևը։ Ընդ որում վիճակի իմաստը երկու ենթատեսակ ունի. մի դեպքում այդ լրացումը գործողի վիճակն է դրսևորում, իսկ երկրորդ դեպքում՝ խնդրի վիճակը, որը և անվանում ենք խնդրային վիճակ։

Գործողի վիճակ են ցույց տալիս բազմաթիվ ածականներ՝ բայի լրացման դերում։ Այսպիսի կապակցություններ են պարունակվում հետևյալ նախադասություններում։

«Թռչում եմ արթուն» (ՀԹ, 2, 73)։ «Օհանը մտածում է անշարժ» (ՍԶ, 2, 499)։ «Թշվառ ծնաք, թշվառ մեծացաք» (ՎՓ, 3, 188)։ «Խեղճ մարդը մեռելի պես գունաթափ դողում էր» (ՎՓ, 2, 441)։ «Ծծում էր աչքերը փակ և շրթունքները սեղմած շշի պռնկին» (ՆԴ, 1, 52)։ «Թռչում է միշտ իմ մտքում Թևը արնոտ ու մոլոր» (ՀԹ, 1, 151)։ «Ոտները ամպոտ կանգնեց առաջին» (ՀԹ, 2, 92)։ «Մեկը գերվել է վիրավոր, մյուսը՝ ցնցում ստացած» (ՄՀԱԿՄ, 20)։ «Կռվից ողջ առողջ վերադարձիր տուն» (ԳՍԵԺ, 1, 358)։ «Արթուն քեզ եմ օրորում» (ԳՍԵԺ, 1, 382)։ «Գունաթափ ու ահաբեկ կռա-

ցավ *նրբքև» (ԳՍԵԺ, 2, 106)։* «Ի՞նչ ես կանգնել *ծովափին Այդպես* ծարավ ու տոչոր» *(ՍԲԱ, 302)։*

Մի շարք կապակցություններում ածականով արտահայտվում է գործողության առարկայի, խնդրի վիճակը, ուստի այդ պարագան կոչվում է խնդրային վիճակի։ Պետք է նշել, որ խնդրային վիճակի պարագա լրացում ունենում են ոչ բոլոր բայերը։ Դրանք տեսնել, թողնել, բերել, տանել *և այլ բայերն են։ Լրացում դառնում են որակական բազմաթիվ ածականներ։*

«Ես նորից տեսա *նրան առաջվա պես* պարզամիտ, սրտաբաց, ուրախ *ու* շատախոս» *(ՆԴ, 2, 442)։ «Երբեք նրան այս օրվա պես* անհանգիստ չեմ տեսել» *(Շիրվ., 2, 243)։ «Ես փախչում եմ դողի պես,* թողնելով *նրան վշտից* կարկամած» *(ՍԶ, 2, 219)։ «Առավոտները* դատարկ *հետը* տանում էր *խանութ, երեկոները* լիքը բերում» *(ՆԴ, 1, 59)։ «Ասում են՝* քեզ ես կտրել *դու մերին» (ՀԹ, 2, 37)։*

Հայերենում գտնել *բայը վիճակի հարաբերությամբ լրացում չի ստանում. նրա հետ որևէ ածական կապակցվելիս ձևի իմաստ է արտահայտում։ Սակայն այլ լեզուների կապակցությունների պատճենումով կազմվում են* մեկին (մի բան) գեղեցիկ գտնել,— խելոք գտնել *և այլն։ Օրինակ՝ «Նրա դեմքը ավելի գրավիչ կանանց մանավանդ. առաջ* դիվային էին գտնում» *(ՎՓ, 3, 492)։*

Երբեմն նույն ածականը կարող է մեկնաբանվել մերթ վիճակի, մերթ պատճառի իմաստներով։ Այսպես, անզոր կախվել, անզոր քարշ գալ *կապակցություններում* անզոր *վիճակն է ցույց տալիս, իսկ* անզոր մարել, անզոր պարտվել *կապակցություններում (որոնք, ի դեպ, տարածված կառուցվածքին ավելի շատ են բնորոշ), առկա են պատճառի և վիճակի հարաբերությունները։ Օրինակ՝ «Հայոց պայծառ մտքի աստղերն* էին մարում *այդ ահավոր ժամին խավարի դեմ* անզոր» *(ԳՍԵԺ, 2, 219)։*

Ածականը բայի լրացում՝ չափի իմաստով.— *Մի շարք ածականների հարաբերությունը իրենց լրացյալին պայմանավորված է նրանց բառային իմաստով։ Այդպես են ծավալային և տարածական հատկանիշ ցույց տվող* երկար, կարճ, անսահման, կիսատ *և այլն, որոնք բազմաթիվ բայերի լրացման դերում հանդես են գալիս չափի հարաբերությամբ։ Այսպես, կազմվում են՝* երկար աշխատել, -զբաղվել, -պարապել, -կռվել, -պայքարել, կարճ խոսել, -քայլել, -դատել, -քնել, անսահման ուրախանալ, -սիրել, -բարկանալ *և այլն։ Իհարկե, ավելի շատ* երկար, կարճ *ածականները չափի պարագայի դեր կատարում են համապատասխան չափային միավոր-*

ների հետ միասին. օրինակ՝ երկար ժամանակ մնալ, երկար տարածություն գնալ, կարճ ժամանակ աշխատել և այլն: Սակայն առաջին տիպի կապակցությունները պակաս գործածական չեն:

«Ինչո՞ւ այդքան երկար անեց քո ուխտագնացությունը» (Ի, 5, 8): «Բավական երկար մնացին սրահում» (ՎՓ, 3, 544): «Լույսը լրիվ բացվել էր» (ՇԹՆԺ, 1, 68): «Բայց զոքանչը անսահման սիրում, փարում էր նրան» (ՀԹ, 2, 9):

-Վոր, -ավոր ածանցներով կազմված ածականները բայի հետ գործածելիս երկու մեկնաբանություն ունեն: Մի դեպքում ածականը ենթակայի դեր է կատարում՝ զեղչված ենթակայի փոխարեն, իսկ երկրորդ դեպքում այն չափի պարագա է: «Ու եկան հազարավոր, բյուրավոր» (Զ, 258): «Հավաքվեցին բյուրավոր ու բանակներ կազմեցին» (Զ, 265):

Կիսատ, կիսատ-պռատ և նման ածականները ձևի և չափի իմաստներ են համատեղում՝ բայի լրացման դերում: «Իմ բաժակը միշտ կիսատ էի խմում» (ՍԶ, 2, 225):

Բարձր ածականը շատ բայերի հետ կապակցվելիս արտահայտում է ձևի հարաբերություն (բարձր խոսել, -բղավել, -պահել և այլն): Սակայն բարձր փակել կապակցության մեջ այն ձև-չափի համատեղ իմաստներ է արտահայտում: «Սյունյաց լեռները կոհակում, վետվետում և հորձանք էին տալիս դեպի երկինք՝ փակելով հորիզոնը տեղ-տեղ շեշտակի բարձր» (ԴԴՎ, 24):

* * *

Կան որոշ կապակցություններ, որոնցում ածականը պատճառի հարաբերություն է արտահայտում լրացյալ բայի նկատմամբ: Դրանք շատ չեն:

«Հեռո՛ւ կորի, խե՛նթ պատանի, Որ անպիտան գործի, բանի, Ուշք ու միտքդ տվել երգին՝ Մի չես նայում էս աշխարքին» (ՀԹ, 2, 90): «Նրա քաջ խոխերը, իր խմբի տղերքը՝ Իրենց խմբապետի հռչակին վստահ Անվերջ խմում էին—ու հոսում էր երգը» (Զ, 106): «Մեռած չոբանի պառավ նանն էր նա՝ Ցավից խելագար, բառաչում, լալիս» (ՀԹ, 2, 65):

Երբեմն էլ ածականը բայի լրացման դերում հանդես է գալիս պարագայական ընդհանուր իմաստով: Ընդհանուր պարագայական այս գործածությունը բնորոշ է մի շարք ածականների, մանավանդ տրոհված կառուցվածքներում:

«Տեղին ու դիրքին վայել իմ հագուստն էլ փոխեցին» (ՀԹ,

1, 411)։ «Կարծես նետված մի հաղթ ձեռքով՝ աշխարհային կամքին հլու՝ Գնում էին կռվով, երգով, կայարանը գրավելու» (Չ, 251)։ «Նրանք իրարից անտեղյակ, իրար կարծելով միևնույն տեղերի կողմից ուղարկված՝ ճամբարից հեռանում և կորչում էին զանազան ուղղությամբ» (ԴԴՎ, 345)։

Անշուշտ, պարագայական ընդհանուր իմաստ են արտահայտում նաև այն կապակցությունները, որոնցում ածականի գործածությունը բուն հայերենին հարազատ չէ, այսինքն կապակցությունը պատճենված է այլ լեզուներից։ Այսպես, բարձրահասակ ածականը հայերենում չի կարող լրացում դառնալ որևէ բայի, իսկ գեղեցիկ ածականը ձևի, վիճակի հարաբերություն է արտահայտում տարբեր բայերի հետ կապակցվելիս (գեղեցիկ գրել, -նկարել, -նազնվել և այլն)։ Մինչդեռ երբ ասում ենք կանգնել է բարձրահասակ, կանգնել է գեղեցիկ, ապա այս կապակցությունները պատճենված են ռուսերենից։ Օրինակ՝ «Սենատորական տոգայի մեջ կանգնել էր բարձրահասակ ու գեղեցիկ» (ՍԶ, 2, 277)։

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱԾԱԿԱՆԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲԱՅԻ ԼՐԱՑՄԱՆ ԴԵՐՈՒՄ

1. Հայերենի շարադասության ճկունությունը, մասնավորապես չափածո ստեղծագործություններում, երբեմն առաջ է բերում մի շարք ածականների շարահյուսական դերի երկակի մեկնաբանության հնարավորություն։ Երբ ածականը դրվում է գոյականի և բայի միջև, ապա այն կարող է դիտվել այդ երկուսի լրացում էլ։ Սա բխում է ինչպես ածականի շարահյուսական կիրառության առանձնահատկությունից, այնպես էլ տվյալ խոսքի մասերի կապակցելիության հնարավորություններից։ Այսպես, մեղմ, վառ, անմար, շքեղ, քաղցր, վարար, հաղթական, փառապանծ, ուրախ, զվարթ, պղտոր, մռռնապոր և այլ ածականները կարող են դառնալ և՛ գոյականի, և՛ բայի լրացում, և երբ նրանք դրվում են այդ երկուսի միջև կամ երկուսից էլ հեռու են, ապա ստեղծվում է նրանց լրացական հարաբերության երկակի մեկնաբանության հնարավորություն։ Այսպես, երբ ասում ենք «Երեկոն մեղմ համբուրում է քեզ», ապա մեղմ-ը կարող է դիտվել և՛ երեկոն գոյականի, և՛ համբուրում է բայի լրացում։

«Ու տղերքը տխուր ու լուռ վերադարձան գեղի տուն» (ՀԹ, 2, 67)։ «Ամպերն են վառվում հազարաձև» (ԳՍԵժ, 1, 219)։ «Կերտել են աշխարհը այսքան վառ ու անմար» (ԳՍԵժ, 1, 340)։ «Կուչ է

եկել ճաղցր *իր մայրիկի գրկում»* *(ԳՍԵԺ, 1, 62)։* *«Միժաղը հնչում է* վարար» *(ԳՍԵԺ, 2, 268)։* *«Հնչում են երգեր* Ոսրախ ու զվարթ» *(ՍԲԱ, 191)։* *«Արաքսն էր գալիս* պղտոր ու վարար» *(ՍԲԱ, 242)։* *«Եկավ Դավիթը* ճռնապոր» *(ՍԲԱ, 362)։*

2. *Սովորաբար բայի մոտածականները մեկ հարաբերությամբ են դրվում։ Օրինակ՝* գեղեցիկ, բարձր, ազնիվ երևալ, խելոք, ուշիմ դառնել *և այլն։ Սակայն կարող են լինել որոշ կապակցություններ, որտեղ տարբեր ածականներ տարբեր հարաբերությամբ կապակցվեն նույն բայի հետ։ Օրինակ՝* «Ու մռամոլոր *շրջում է* երկար, *Իր բախտից դժգոհ,* տխուր ու տրտում» *(ՍԲԱ, 409)։ Այստեղ շրջում է բայն ունի* մռամոլոր, տխուր ու տրտում *ածական լրացումները վիճակի հարաբերությամբ,, իսկ* երկար *ածական լրացումը չափի հարաբերություն է արտահայտում։*

3. *Ածականը բայի լրացման դերը կարող է կատարել երկու ձևով՝ չտրոհված և տրոհված պարագա լինելով։ Երկրորդ կիրառությունը շատ է պատահում։ Այդպիսի դեպքերում ըստ էության ածականը ենթադրյալ* լինելով *դերբային է վերաբերում, որի զեղչումով ստանձնել է նրա դերը։ Այսպես,* «Տրշապատին անուշաղիր՝ նա աշխատում էր» *նախադասության մեջ* անուշաղիր *ածականը ենթադրյալ* լինելով *դերբայի կողմնակի ստորոգելիական վերադիրն է և* լինելով*-ի զեղչումով կատարել է նրա դերը։ Այսպիսի կապակցությունները շատ գործուն են։*

«Բայց Գրատոսը, այդ ամենին անուշաղիր, շարունակեց *մի փոքր հապաղումով»* *(ՍՉ, 2, 282)։* «Ու, տխուր՝ դուրս գնացին *խմբագրատնից»* *(ՎՓ, 3, 658)։* *«Առանց խոսելու, սևակնած,* դաժան, Մոտեցավ *սրահին, կախ տվավ սնին»* *(ՀԹ, 2, 65)։* *«Նրանք— մանր, թույլ ու ողորմելի, Որ,* կույր, խնդացին *նստած կրկեսում»* *(Չ, 240)։*

4. *Ածականը,* մնալ *բայի հետ կապակցվելով, ստորինանաբար կորցրել է իր վիճակի իմաստը, իսկ լրացյալ բայը՝ ինքնուրույն ստորոգյալ լինելու հատկությունը (այդ կարգի կապակցության մեջ), և ածականը վերածվել է ստորոգելիական վերադրի, իսկ լրացյալ բայը դադարելով լրացյալ լինելուց, դարձել է սոսկ հանգույց։ «Մայրաքաղաքը* մնաց անգլուխ, անկարգ» *(ՎՓ, 4, 163)։* *«Ողբացին անշունչ դիակի վրա,* Անտեր մնացած *խեղճ յարի մասին» (ՀԹ, 2, 65)։*

5. *Որոշ կապակցություններում ածականը և լրացյալ բայը վերածվել են հարադրական բայի։ Այսպես են ստացվել* ճանճիստ թողնել, ազատ թողնել, ազատ արձակել *և այլն։ «Հիշողությունները*

գրգռեցին նրա ջղերը և շբողին գլուխը հանգիստ» (ՎՓ, 3, 352)։

6. Հարաբերական ածականները բայի լրացում չեն լինում։ Սակայն հանդիպում ենք որոշ կապակցությունների։ Օրինակ՝ «Կարծես թե հազարագույն Բյուրեղյա վազում եք դուք» (ԳՍԵժ, 1, 388)։

7. Երբեմն ածականը կարող է պարագայի դեր կատարել մակբայի փոխարեն։ «Եվ կոլխոզները անդադրում Մրցում էին փոխադարձ» (ԳՍԵժ, 2, 356)։

Այստեղ պետք է նշել, որ անփորձ ածականը երբեմն բարբառների ազդեցությամբ գործածվում է անփորձանք մակբայի փոխարեն։ Օրինակ՝ «Ուրախ էր նախ՝ նրա համար, որ անփորձ լուսացրեց» (ՍԶ, 4, 398)։

Սակայն սրա հետ չպետք է շփոթել այն երևույթը, որ ժամանակակից հայերենում բազմաթիվ բառեր նույն ձևով դրսևորում են և՛ ածականի, և՛ մակբայի հատկանիշներ։ Դրանք մեծ մասամբ բայարմատով բարդություններ կամ ածանցումներ են, որոնք երկու խոսքի մասային իմաստները նույն ձևով են դրսևորում։ Գոյականի լրացում լինելիս դրանք ածական են, իսկ բայի լրացում լինելիս՝ մակբայ[1]։

Սա վերաբերում է համեմատաբար սակավաթիվ բառերի։ Դրանցից են՝ անձայն, անվերջ, անտուն, անխոս, կիսաձայն, լեղապատառ, պատրաստակամ, անձրևախափան, ռոպեաչափ, անքուն, մտախոհ, կցկտուր, անզերեզման, անբաղ, անդարձ, անհոգ և այլն։ Այն դեպքում, երբ այս բառերը առարկայի հատկանիշ են արտահայտում (օրինակ՝ անձայն-ձայն չունեցող, անձայն էակ,— կենդանի,— արձան և այլն, անտուն-տուն չունեցող, անտուն մարդ,— երեխա և այլն, անխոս-չխոսող, անխոս վկա,— նյութ,— մարդ և այլն), դրանք ածական են։ Իսկ եթե դրանք գործողության հատկանիշ են արտահայտում (օրինակ՝ անձայն-առանց ձայն հանելու, անձայն հրամայել,— հեռանալ,— հետևել և այն, անտուն-առանց տան, առանց տուն ունենալու, անտուն թափառել,— ապրել և այլն, անխոս-առանց խոսելու, անխոս գնալ,— հեռանալ,— կանգնել և այլն), ապա մակբայ են։

Այս բառերը մակբայ են հետևյալ նախադասություններում. «Եվ հետևում էր ամբոխն ինձ անձայն» (Իս., 1, 166)։ «Եվ անվերջ քայլիր քո անհայտ ուղին» (Իս., 1, 191)։ «Ով իր տան մեջ ապրեց անտուն» (ՀՍՄԱ, 83)։ «Անխոս ջուր գալով գնաց իր սենյակը»

[1] Տե՛ս նաև «Գոյականի լրացումը մակբայով» հատվածը։

(ՍՉ, 2, 180)։ «Երգում էր *դրեթե* կիսաձայն» (ՍՉ, 2, 394)։ «*Քաղաքից կառքեր են* սլանում լեղապատառ» (ԴԴ, 1, 237)։ «*Մի կեսօր էլ* նստեցին անձրևախափան» (ՍՉ, 4, 200)։ «*Իզուր ես գիշերներն* անքուն անցրնում» (ՎՓ, 3, 259)։ «Մտախոհ անցավ *նա բազմության միջից*» (ՎՓ, 3, 492)։ «Խոսում էր կցկտուր» (ՇԹՆԾ, 2, 347)։ «Ընկան *հազարները* անզերեզման, անթաղ» (ԳՍԵԺ, 1, 66)։ «*Դարեր* են եկել, գնացել անդարձ» (ՍԻԱ, 36)։

5. ԲԱՅԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԴԵՐԲԱՅՆԵՐՈՎ

Ժամանակակից հայերենում մի շարք դերբայներ ունեն շարահյուսական դեր, որը դրսևորվում է ինչպես գոյականների, այնպես էլ բայերի հետ կապակցվելիս։ Բայի լրացումների դեր կատարում են անորոշ, անկատար, հարակատար դերբայները, որոնցից հարակատարն ու անկատարը այդ դերն ստանձնում են շնորհիվ իրենց խոսքի մասային առանձնահատկությունների, այսինքն այն բանի, որ դրանք հարաբերակից են բայի լրացում դարձող խոսքի մասերին։ Անկատար դերբայը պարագա է դառնում՝ մակբայի, իսկ հարակատար դերբայը՝ ածականի և մակբայի հետ ունեցած հարաբերակցության շնորհիվ։ Անորոշ դերբայը բայի լրացում է դառնում գոյականին հարաբերակից լինելով։ Դրանցով էլ պայմանավորված են նրանց արտահայտած հարաբերությունները՝ բայի լրացման դերում։ Անորոշ դերբայի արտահայտած իմաստները գերազանցապես խնդրային են, իսկ անկատար և հարակատար դերբայներինը՝ պարագայական, իսկ սա բխում է այն բանից, որ նրանց հարաբերակից համապատասխան խոսքի մասերը արտահայտում են խնդրային (գոյական) և պարագայական հարաբերություններ (մակբայ, ածական)։

Անորոշ դերբայը բայի լրացում.— *Անորոշ դերբայը բայի լրացում դառնում է տրական, հայցական, բացառական, գործիական, նույնիսկ ներգոյական հոլովներով, ինչպես և կապերի միջոցով։ Այդ բազմազան ձևերի քննությունը այստեղ ամբողջապես չենք կրկնում, քանի որ անորոշ դերբայի տարբեր թեք հոլովաձևերը հանդես են գալիս իմաստային նույն հարաբերություններով, ինչ որ գոյական անունները, իսկ գոյականի տարբեր հոլովաձևերի իմաստային հարաբերությունները բայի լրացման դերում քննված են բայական բառակապակցությունների համապատասխան բաժիններում։ Այստեղ միայն կանգ կառնենք այն կապակցությունների վրա, որոնցում անորոշ դերբայը շեղվում է իր սովորական ձև-*

րից։ Բանն այն է, որ բացառական, գործիական, ներգոյական հոլովաձևերում անորոշ դերբայը շեղում չի հանդես բերում։ Շեղումը հիմնականում դրսևորվում է տրական-հայցական հոլովներում՝ պայմանավորված բայերի խնդրառական առանձնահատկություններով և բայական բաղադրյալ ստորոգյալի, ինչպես և այլ լեզուների համապատասխան բառակապակցությունների ազդեցությամբ։

Հայտնի է, որ անորոշ դերբայը շատ դեպքերում կարող է դառնալ բայի ուղիղ խնդիր՝ հայցականով դրվելով։ Օրինակ՝ «Թըշնամին քո մեռնելն է ուզում»։ «Նա այդ գործիքի աշխատելը փորձեց» և այլն։ Սակայն այս կիրառությունները սակավ են պատահում։ Ավելի հաճախ անորոշ դերբայը հայցականաձև բաղադրիչ է դառնում մի շարք ներգործական բայերի հետ կապակցվելով, և ստացվում է մի բառակապակցություն, որտեղ բաղադրիչներն այլևս ինքնուրույն շարահյուսական միավոր չեն, այլ միասնական մի ամբողջություն, որը նախադասության մեջ հանդես է գալիս իբրև մի անդամ (ստորոգյալ կամ այլ անդամ՝ ըստ տվյալ նախադասության կառուցվածքի)։ Այսպես, ուզում է մեռնել, փորձե՛ց աշխատել այլևս սովորական բառակապակցություններ չեն, որտեղ դիմավոր բայը այլևս լրացյալ չի դիտվում, այլ երկուսը միասին շարահյուսական մի ամբողջություն են։ Այսպիսի կառուցվածքը ավելի շուտ բառակապակցությունից նախադասության անդամ, ապա և ձևաբանական միավոր անցնող շղթայի մի օղակն է (առաջին աստիճանը)[1]։

Սակայն այդ կառուցվածքը միայն բայական բաղադրյալ ստորոգյալ համարել չի կարելի, քանի որ այն կարող է հանդես գալ նաև գլխավոր անդամի դերբայական կիրառությունների դեպքում (ցանկացավ սովորել և ցանկանալով սովորել, սովորել ցանկանալիս, աշխատեց օգնել և աշխատելով օգնել, օգնել աշխատելը, հարկավոր է աշխատել օգնել և այլն։ Հենց այս վերջին դեպքում երևան է գալիս այդ կառուցվածքի՝ բառակապակցություն լինելու առանձնահատկությունը։

Սակայն պետք է նշել, որ մի շարք բայերի մոտ անորոշ դերբայը հայցականաձև չի լինում, և տվյալ բայի մոտ անորոշ դերբայն այլևս բայական բաղադրյալ ստորոգյալի բաղադրիչ չէ, այլ ինքնուրույն խնդիր։ Այսպես, գործածվում են մի կողմից՝ շտապեց

[1] Այսպիսի կառուցվածքների քննությունը մանրամասնությամբ տրված է Վ. Առաքելյանի կողմից։ Տե՛ս «Հայերենի շարահյուսություն», հ. 1, Երևան, 1959, էջ 139—146։

կարծիք հայտնել և մյուս կողմից՝ շտապեց կարծիք հայտնելու, ձգտում է բարձր արդյունքների հասնել և ձգտում է բարձր արդյունքների հասնելու և այլն։ Երկրորդ դեպքում դրսևորվում է բայական բառակապակցություն, որտեղ լրացյալ բայը հանդես է գալիս իր խնդրառական հատկությամբ (մինչդեռ առաջին տեսակի կառուցվածքում այն խնդրառական հատկություն չունի, կամ ինչպես հին քերականներից ոմանք էին ասում՝ խնդիրն արգելվել է)։

«Դու դարձյալ շտապեցիր քո կարծիքը հայտնելու» (Մուր., 5, 259)։ «Իշխանին էլ առաջարկեց նստելու» (Մուր., 4, 174)։ «Այդ նրա բարի, գաղափարական ես-ի ձայնն էր, որ բնության հրաշափառ տեսարանի առաջ դարձյալ իշխեց հնչելու» (Մուր., 6, 264)։

Պետք է նշել, որ բայական բաղադրյալ ստորոգյալ (կամ նրա համարժեք կառուցվածք) կազմող գլխավոր բաղադրիչ լինում են հիմնականում ներգործական և չեզոք մի շարք բայեր (իմաստային խմբերը քննված են Վ. Առաքելյանի վերոհիշյալ աշխատության մեջ)։ Այս իմաստով էլ մերժելի է կրավորական բայերի մոտ անորոշ դերբայի հայցականաձև բաղադրիչի գործածությունը։ Օրինակ՝ «Սրահն սկսվեց դատարկվել» (ՎՓ, 3, 432)։

Իհարկե այս երևույթի հետ ուղղակի առնչություն չունեն գրաբարաձև կառուցվածքները, որոնցում անորոշ դերբայը փոխարինում է գրաբարյան ի նախդիրի և հայցականի կապակցությանը։ Այսպես, գրաբարում ասվում էր գալ ի մխիթարել, փութալ ի սպանանել և այլն։ Սրանց նմանակությամբ էլ որոշ գրողներ ի նախդրի անկումով հայցականը գործածում են նպատակային գործողություն ցույց տվող գալ, գնալ, ուղարկել և այլ բայերի հետ։ Այսպիսի կապակցությունները ևս մերժելի են։

«Եկել էր մխիթարել այդ ավերակների անբախտ բնակիչներին» (Ր, 4, 9)։ «Որը պատրաստվում է քնել» (Մուր., 5, 7)։ «Երբ գնացինք դիմավորել Նոր գարունքին ու նոր կյանքին»» (ՀԹ, 1, 87)։ «Պատրաստվում են անկում կարդալ մեր աշխարհին հոյաշեն» (Չ, 178)։ «Ես հետաքրքրվում եմ իմանալ, թե քանիսո՞վ է տակոս հաշվել» (Մուր., 6, 310)։

Առանձին պետք է նշել այն դեպքը, երբ որևէ դիմավոր բայի մոտ անորոշ դերբայը թեք հոլովով գործածվելու փոխարեն ուղիղ ձևով է հանդես գալիս։ Դա լինում է հավանաբար այլ լեզուների համապատասխան կառուցվածքների ազդեցությամբ։ Այսպես, կազմվում են՝ դադարեց աշխատել, դադարեց բաբախել տիպի բառակապակցություններ, որոնց փոխարեն հանձնարարելի են դա-

դարեց աշխատելուց, դադարեց բաբախելուց *կապակցությունները*։

«Դադարեցեք *այսուհետև գաղտնիք* որոնել այնտեղ, ուր չկա *այդպիսին*» *(Մուր., 6, 401)*։ «*Շատ մտածելն ու քիչ խոսելն էր*, *որ* խանգարում էր *արագ* գործել» *(ՎԽԳՀ, 159)*։ «*Նա* սարսափում էր նայել *հարսնացուին*» *(ՋԴԱՎ, 497)*։

Խոսակցական լեզվում գործածական են գնալ գնալ, տանել տանել *տիպի կապակցությունները, որոնք բնորոշ չեն գրական լեզվին։ Սրանք թափանցում են նաև գրական լեզու*։ «*Հարուստ մեռելներ հարուստ ապրեցին, հարուստ էլ* գնալ գնացին *գետնի* տակ: *Իսկ մենք* կոտորվել կոտորվեցինք» *(ՎԽԳՀ, 118)*։ «*Մեծ* ուրախանալ է ուրախանում *Ավետիքը*» *(ՎԽԳՀ, 147)*։

Անկատար դերբայը բայի լրացում.— *Անկատար դերբայի* -իս *վերջավորվող ձևը* (գրելիս, խաղալիս) *ժամանակակից հայերենում ունի երկու դեր՝ ձևաբանական և շարահյուսական։ Ձևաբանական դերը հանդես է երկրորդական բաղադրյալ ու բաղադրյալ ժամանակների կազմությանը* (գրելիս եմ լինում, -եմ եղել, -լինեմ, -պիտի լինեմ *և այլն), ինչպես և* տալ, լալ, գալ *անկանոն բայերի համար գլխավոր բաղադրյալ ժամանակների կազմությանը* (տալիս եմ, -էի): *Իսկ շարահյուսական դերը սահմանափակ է. այն հանդես է գալիս բայի լրացման դերում*։

Անկատար դերբայի իմաստային հարաբերությունները ևս բազմազան չեն. այն հիմնականում արտահայտում է ժամանակի և վիճակի իմաստներ լրացյալի նկատմամբ։

Պետք է նշել, որ ժամանակի իմաստը անխառն քիչ է արտահայտվում. այն սովորաբար ուղեկցվում է պայմանի, վիճակի, նույնիսկ սահմանափակման իմաստների հետ (իսկ սահմանափակման իմաստը պարագայական չէ, այլ խնդրային)։ Այսպիսին է անկատար դերբայի արտահայտած հարաբերությունը հետևյալ կապակցություններում։

«*Ինձ* նայելիս *աչքերը* կկոցում էր» *(ՍԶ, 2, 168)*։ «*Հրացան* տեսնելիս դողում էր *տերևի պես*» *(ՍԶ, 4, 46)*։ «*Նախիրն* արածացնելիս *Պետին* նստում էր *մի քարի վրա*» *(Բակ., 36)*։

Որ ժամանակի իմաստը ուղեկցվում է վիճակի, պայմանի նրբերանգներին, երևում է այն դեպքերում, երբ անկատար դերբային զուգահեռ գործածվում են նաև ժամանակի այլ պարագաներ։

«*Նախիրը տուն* քշելիս մի իրիկուն *էլ նա գյուղում անսովոր իրարանցում* տեսավ» *(Բակ., 36)*։ «Երբեմն *օրավարձով* օգնում

էր ձկնորսներին՝ ուռկանը ծովից քաշելիս կամ ձուկը պահեստը կրելիս» (ՍԶ, 2, 141)։

Անկատար դերբայը մի շարք բայերի լրացման դերում (թողնել, տեսնել, նկատել, հանդիպել և այլն) արտահայտում է խնդրային վիճակի հարաբերություն։

«Այնուամենայնիվ, տանը եղած ժամանակ, առաջին օրերը, ես նրան դուրս գալիս չտեսա» (ՍԶ, 4, 41)։ «Մի դասախոսության ժամանակ տեսա Հայկոյին ինչ-որ աղջիկների հետ զրուցելիս» (ՍԶ, 4, 173)։ «Մայրը նրան գտավ տաքության մեջ զառանցելիս» (ԶԴԱՎ, 64)։ «Հիշեց նրան եղբոր խանութում չիթ ծախելիս» (ԶԴԱՎ, 573)։

Երբեմն էլ անկատար դերբայը ոչ թե գործողության առարկայի, այլ գործողի վիճակն է ցույց տալիս։

«Մի-մի ճիպոտ ձեռքներին, շատերը քեղ ծամելիս, մի քանիսն էլ մատաղ՝ փռվեցին խոտերի վրա» (ՎՓ, 4, 362)։ «Հատուկենտ ուխտավորներ էին երևում վանքի պատերի տակ արևկող ննջելիս կամ քարերին կռացած աղոթք անելիս» (ԶԴԱՎ, 125)։

Պատահում է, որ նույն նախադասության մեջ երկու անկատար դերբայ գործածվում են տարբեր իմաստներով՝ ժամանակի և վիճակի։ Այսպես, «Ես ներս մտնելիս նկատեցի սեղանապետին կարգադրություն անելիս» (ՍԶ, 2, 277) նախադասության մեջ մտնելիս ժամանակի, իսկ անելիս վիճակի իմաստ են արտահայտում։

Հարակատար դերբայը բայի լրացում.— Հարակատար դերբայի շարահյուսական կիրառությունը պայմանավորված է նրա խոսքի մասային առանձնահատկություններով։ Այն հարաբերակից է ածականին, մակբային և դրա շնորհիվ կարող է ստանձնել նրանց շարահյուսական դերը։ Հարակատար դերբայը ածականի նման կարող է դառնալ որոշիչ, ածականի և մակբայի նման՝ պարագա։

Պետք է նկատի ունենալ, որ հարակատար դերբայը գոյականաբար գործածվելով նույնպես կարող է դառնալ բայի լրացում (ինչպես և ենթակա ու ստորոգելիական վերադիր)։ Այդ կիրառությունները այստեղ քննության առարկա լինել չեն կարող, քանի որ դրանք վերաբերում են գոյական լրացումով բայական կապակցություններին։ Հարակատար դերբայի հանդես գալը տարբեր հոլովներով, ինչպես և կապերի միջոցով, չի վերաբերում այդ դերբայի շարահյուսական այն կիրառությանը, որը քննության առարկա է այստեղ։

Որ հարակատար դերբայը մակբային հարաբերակից է, երևում է այն դեպքերից, երբ այն մակբայի հետ համադաս հարաբերությամբ լրացում է դառնում որևէ բայի:

«Հետո պատմեց հուզված, կցկտուր, թե դուրս է եկել» (ՍԶ, 2, 216): «Թափառական ճանապարհորդները փոշեթաթախ, լռելյայն ու հոգնած, մտան ձորակի մեջ» (ՎՓ, 3, 55): «Մեծ քաղաքի փողոցում, պատին կռթնած, վշտալից ու մենակ ձեռք է կարկառում» (ՎՓ, 3, 190):

Հարակատար դերբայը բայի լրացման դերում կարող է արտահայտել իմաստային մի շարք հարաբերություններ՝ ձևի, վիճակի, ժամանակի, պատճառի: Ընդ որում պետք է նշել, որ այդ իմաստները ոչ միշտ են անխառն լինում. հաճախ դրանք միահյուսված են հանդես գալիս: Այսպես, հետևյալ կապակցություններում արտահայտում է ձևի հարաբերություն:

«Խոսում էր միշտ ոգևորված» (ՍԶ, 2, 203): «Նա հիացած նկարագրում էր անտառների գեղեցկությունը» (ՍԶ, 2, 210): «Նայում էր լարված և մի տեսակ մռայլ» (ՍԶ, 2, 153): «Նրա հարցերին տղան պատասխանում էր նեղացած ու դժգոհ» (ՏԹՆԾ, 2, 166): «Այսպես տաքացած խաղում էին նրանք» (ՎՓ, 3, 209):

Ձևի հարաբերությամբ կազմված որոշ կապակցություններ վերածվել են դարձվածքի, ինչպես՝ խոսել չափած, ձևած:

Մի շարք բայերի հետ հարակատար դերբայը կապակցվում է խնդրային վիճակի հարաբերությամբ, ինչպես՝ տեսնել, գտնել, հանդիպել, պահել և այլն:

«Մենք գտանք բոլորին քնած» (Ր, 4, 358): «Երբ տեսավ ինձ հագնված, ներս մտավ» (Ր, 4, 416): «Առաջին երկու օրը նրանց պահեցին փակած» (ՍԶ, 2, 392): «Ես շատ եմ արտասվել, երբ մեռել ես բեմում, Օթելլոն է երբ խեղդել քնած» (ԳՍԵժ, 1, 202):

Իսկ մի շարք կապակցություններում լրացումն արտահայտում է գործողի վիճակը: Այսպիսի հարաբերությամբ այն կապակցվում է տարբեր իմաստ ունեցող բայերի հետ: «Ձեռքդ բուռ արած ընկել ես հողին» (ՀՍՄԱ, 70): «Սկսեց թիավարել թևքերը վեր քշտած» (ՍԶ, 2, 150): «Ողջ Հոտը ծափահարում էր ոտքի կանգնած» (ՍԶ, 2, 265): «Դուրս եկավ սաստիկ այլայլված» (ՍԶ, 2, 306): «Այս կենացը նույնպես խմեցին ոտքի կանգնած» (ՍԶ, 4, 321): «Այժմ հանգստանում էր պիջակը հանած» (ՍԶ, 4, 364): «Էմման դուրս եկավ գլխարկը դրած» (ՎՓ, 3, 597):

Վիճակի հարաբերությամբ կազմված որոշ կապակցություն-

30—486

ներ դարձվածք են, ինչպես՝ ճստել ձեռքերը ծալած (ոչինչ չանել)։

Իսկ մի շարք կապակցություններում հարակատար դերբայի հարաբերությունը դժվար է որոշել, քանի որ այն կարող է մեկնաբանվել վիճակի և ձևի իմաստներով հավասարապես։

«Ես վիրավորված դուրս եկա նախագահի սենյակից» (ՍԶ, 2, 236)։ «Ներոնը զայրացած խոսում էր նրա մասին» (ՍԶ, 2, 267)։ «Պարսից արքաները սիրում էին գիշերով ծպտած դուրս ելնել» (ՎՓ, 3, 332)։ «Ինքն սպասեց ուշադիր ու հետաքրքրված» (ՍԶ, 4, 535)։

Հարակատար դերբայի մի յուրահատուկ կիրառություն է մնալ բայի հետ կապակցվելը։ Այս դեպքում, ճիշտ է, լրացման հարաբերությունը հիմնականում վիճակի է (ճստած մնալ, կանգնած մնալ, պառկած մնալ, կծկված մնալ և այլն), սակայն հարակատար դերբայը կարծես կորցնում է վիճակային իր նշանակությունը և լրացյալի հետ միասին բաղադրյալ ձև կազմում, եթե համեմատենք լինել բայով և հարակատարով կազմությունը (ճստած լինել) և այսպիսի կազմությունը, ապա ակնհայտ կլինի մնալ-ով կազմության համարժեքությունը բաղադրյալ ձևերին։ Այսպիսի կապակցությունները շատ են գործածական։

«Նա նույն տեղը ճստած մնաց այնքան ժամանակ, մինչև որ հայրը եզներն արձակեց» (ՍԶ, 2, 445)։ «Հնձած խոտը մնացել էր արտերում փռված» (ՍԶ, 2, 450)։ «Ու մնացի տեղն ու տեղը գամված, կծկված մի թփի տակ, հմայված վեր ելնող միալար մռնչյունից, շլացած միօրինակ փողփողուն ծփումներից» (ՎՓ, 4, 647)։

Մի շարք կապակցություններում լրացումը ցույց է տալիս գործողության ժամանակը։ Այդպիսի լրացում դառնում են սակավաթիվ դերբայներ, ինչպես, սկսած, չհասած, չբացված, չանցած, չտեսած և այլն։ Այս դերն ստանձնում են հիմնականում հարակատար դերբայի ժխտական ձևերը՝ ցույց տալով լրացյալի գործողությանը նախորդող մի ժամանակ։ Այսպիսի կապակցություններում լրացումն ունի դեռ մակբայ+տվյալ դերբայի դիմավոր ձևերի նշանակություն։ Այսպես՝ «Տուն չհասած՝ հանդիպեցի Գրիգորին» նախադասության մեջ (տուն) չհասած հանդիպեցի կառուցվածքը=է դեռ (տուն) չէի հասել, երբ հանդիպեցի։ Այս կապակցություններում հարակատար դերբայը մոտենում է կապին։

«Լուսաբացից սկսած, ամեն կողմից խումբ առ խումբ երևում էին ձիավորներ» (ՎՓ, 3, 382)։ «Թփին չհասած, նկատեցի

սադրի հրամներ» (ՎՓ, 4, 350)։ «Լույսը չբացված, տատիկն ինձ արթնացնում է» (ԱՇ, 160)։ «Տարին չանցած՝ Սոսի համբավն ավելացավ» (ՄՀԱԿՄ, 303)։

Ինչպես երևում է օրինակներից, ժամանակի իմաստով գործածվելիս հարակատար դերբայը տրոհվում է լրացյալից։

Երբեմն ժամանակի իմաստը համատեղվում է պատճառի հետ։ Օրինակ՝ «Ու ցավից զարթնած՝ լաց եղա անքուն» (Իս., 1, 240)։

Իսկ որոշ կապակցություններում ժամանակը, ձևը և վիճակը կարող են համատեղվել։

«Ու գործարան գնաց լարած ուժ ու մկան» (ԳՍեժ, 1, 67)։ «Ուշացած տուն էր գալիս երբեմն» (ՍԶ, 4, 269)։

Ավելի հաճախ հարակատար դերբայը, տրոհվելով իր լրացյալից, արտահայտում է պատճառի իմաստ։

«Վաղուց, ընտանիքի հոգսով տարված՝ ինքը մոռացել է իրեն» (ՍԶ, 4, 306)։ «Գրելով զբաղված՝ նա մյուս խնդիրը հանձնեց իր դիվանապետ Դավթին» (ՍԶ, 4, 299)։ «Ցրված՝ չէր նկատում, որ ռեդիկյուլը մնացել է բաց» (ՍԶ, 4, 498)։ «Մի անգամ հասած այդ դրության՝ դուք վարժվում եք» (ՎՓ, 3, 673)։ «Մի քանիսն օրինակ փորձել էին այդ, բայց ծեծված ու հալածված՝ ներս էին փախել» (ՎՓ, 4, 200)։

Այսպիսի կապակցությունների մեջ լրացում լինում են որոշ դարձվածքներ, ինչպես՝ ճարը կտրած, ճարները կտրված:

Երբեմն էլ հարակատար դերբայը բայի լրացման դերում կարող է մեկնաբանվել հավասարապես և՛ պատճառի, և՛ վիճակի իմաստներով։

«Շատ որոնելուց հոգնած եկա տուն» (ՍԶ, 2, 239)։ «Գլուխն օրորեց զարմացած» (ՍԶ, 4, 266)։ «Վատ զգացմունքով լցված՝ շտապեցի հեռանալ այդտեղից» (ՎՓ, 4, 625)։

Ժամանակի իմաստը մի շարք կապակցություններում կարող է միահյուսված հանդես գալ վիճակի իմաստի հետ։

«Դեռ նոր հանդիպած՝ մենք բաժանվեցինք, Իրար նոր գտած՝ կորցրինք իրար» (ՊՍՄԱՄ, 20)։ «Երեք օրինակ հազիվ վաճառած՝ Գրավաճառը դարձավ ու ասաց» (ՀՍՀԵՄ, 420)։

Իսկ թողած դերբայը, լրացում դառնալով, արտահայտում է և՛ ժամանակի, և՛ ձևի, և՛ վիճակի, և՛ այլ իմաստներ, այսինքն՝ այն ձեռք է բերում պարագայական ընդհանուր նշանակություն։ «Խոսքը կիսատ թողած նա վեր է կենում» (ԱՇ, 1, 49)։ «Եվ քայլում է թողած ահա Մի բարձրաբերձ կամուրջ» (ԳՍեժ, 1, 57)։

Հարակատար դերբայի մի յուրահատուկ կիրառություն կա։ Այս դեպքում այն դրվում է անձնական դերանվան մոտ և կարող է մեկնաբանվել կա՛մ իբրև այդ նախադասության մեջ եղած որևէ բայի, կա՛մ անձնական դերանվան լրացում։ Ինչպես հայտնի է, անձնական դերանունները լրացում չեն ստանում սովորական ձևով։ Նրանց լրացումը կարող է միայն տրոհված լինել։ Վերջին հաշվով անձնական դերանվան լրացում չի դիտվում այդ հարակատար դերբայը, սակայն ինչ-որ չափով նրա այս գործածությունը տարբերվում է մյուս կիրառություններից։

«Ծովափին մեծացած՝ նա գիտեր ծովի հետ կապված բոլոր գործերը» (ՍԶ, 2, 141)։

Մի շարք նախադասություններում հարակատար դերբայը կարող է մեկնաբանվել և՛ իբրև բայի, և՛ իբրև գոյականի լրացում։

«Շինականն է խոսել հոգնած ու հեզ» (ՀՍՄՍ, 99)։ «Ասաց, մռայլ հեռացավ Արգուլ խանը դառնացած» (ԳՍեժ, 2, 110)։

Այս նախադասություններում հոգնած, դառնացած դերբայները կարելի է վերագրել համապատասխանաբար մի կողմից խոսել է, հեռացավ բայերին, իսկ մյուս կողմից՝ շինականը, Արգուլ խանը գոյականներին։ Իհարկե տվյալ ստեղծագործությունների ոգուց բխում է, որ դրանք բայի և ոչ թե գոյականի լրացում են, սակայն հնարավոր է նաև երկրորդ մեկնաբանությունը։

Բայի լրացման դերում հանդես եկող (թեկուզ և տրոհված ձևով) հարակատար դերբայը չի կարելի շփոթել սոսկ արտաքուստ տրոհվածին նման միջանկյալ դերբայական կապակցությունների հետ։ Իբրև միջանկյալ կապակցություն հանդես են գալիս ճիշտն ասած, ճիշտը խոստովանած և նման կառուցվածքներ։ «Հրաժարվեցի, որովհետև, ճիշտը խոստովանած, ինձ շատ անհարմար էի զգում» (ՍԶ, 4, 132)։

Ենթակայական դերբայը ժամանակակից հայերենում չի կարող դառնալ բայի լրացում։ Պարագայի դեր կատարելու համար ենթակայական դերբայը պետք է գործածվի գոյականաբար և կապի հետ միասին, կամ ենթակայական դերբայի փոխարեն կարող են գործածվել նույն բայի այլ դերբայական ձևերը։ Այսպես, չի կարելի ասել հասկացող ժպտալ, զգուշացնող սուլել. օգնող մոտենալ և այլն, այլ հասկացողի նման (պես) ժպտալ (կամ հասկանալով ժպտալ)։ Այս առումով էլ մերժելի են գրական

լեզվի մեջ խիստ հազվադեպ գործածված այսպիսի կապակցությունները։

«Գտավ երիտասարդին միշտ նստած, արթուն, հոգատար և ուշադրությամբ հետևող վիրավորի քնելուն, շարժումներին և հիվանդության ընթացքին» (ՎՓ, 3, 23)։ «Աչքերը սակայն հասկացող ժպտում էին» (ԱՍԱ, 228, 1959)։ «Մեքենան կանգ առավ տան բաց դարբասների առաջ ու զգուշացնող սուլեց» (ԱՍԱ, 233)։ Ա. Ստեփանյանի «Ամառնամուտ» վեպում ենթակայական դերբայի պարագայական կիրառության մասին դիտողություն է արել Ա. Մարգարյանը[1]։

---

[1] «Ամառնամուտ» վեպի լեզուն» («Սովետական գրականություն» ամսագիր, 1960, № 6)։ Ենթակայական դերբայի փոխարեն ճիշտ է, այդ դերբայից կազմված մակբայի գործածությունը բայի լրացման դերում, ինչպես վարվել է Մ. Արմենը. «Առաջինն ու երրորդը հասկացողաբար նայեցին իրար» (ՄԱՊՀՋ, 284)։

ԳԼՈՒԽ ՅՈԹՆԵՐՈՐԴ

ՄԱԿԲԱՅԻ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մակբայն ունենում է տարբեր խոսքի մասերով արտահայտված լրացումներ, որոնց դրսևորած իմաստները միատեսակ չեն։ Մակբայի կապակցությունները բաժանում ենք երկու ենթախմբի։ Առաջին ենթախմբին պատկանում են այն կապակցությունները, որոնք արտահայտում են մակբայի ցույց տված հատկանիշի համեմատության աստիճանները։ Սրանք իրենց կառուցվածքով հիշեցնում են որակական ածականի համեմատության աստիճան կազմող կապակցություններ, սակայն տարբերվում են նրանցից ինչպես ձևական, այնպես էլ իմաստային տեսակետից։

Համեմատության աստիճան կազմող մակբայական կապակցությունները, ըստ լրացման բնույթի, բաժանվում են մի քանի տեսակների։ Կան մակբայով, ածականով, ցուցական դերանուններով, գոյականով, գոյականով և մակբայով, թվականով և այլ բառերով լրացում ունեցող մակբայական կապակցություններ։ Քննենք դրանք առանձին-առանձին։

Մակբայի՝ համեմատության աստիճան արտահայտող լրացում կարող են դառնալ քիչ, շատ, ավելի, չափազանց և նման մակբայներ։ Այսպես, կազմվում են՝ մի քիչ դանդաղ, փոքր-ինչ հեռու, շատ հաճախ, չափազանց շատ, շատ առավել, առավել իզուր, շատ սրտանց, քիչ հեռու, քիչ առաջ, շատ դանդաղ, բավական ուշ, բավական շուտ, բավական հեռու, ավելի վաղ, ավելի հաճախ, ավելի շուտ, ավելի ուշ, ավելի վաղուց, շատ ավելի արագ և այլն։ Այս կապակցությունները շատ գործածական են։

«Մենք շատ էլ հեռու չենք գնում» (Շիրվ., .5, 188)։ «Նրանք չափազանց շատ են սիրում ծաղիկներ և կոնֆետներ» (Շիրվ.,

5, 194)։ «Երեքը դրանցից շարունակ սարի գոմերում էին լինում և տուն գալիս էին շատ սակավ» (ՍԶ, 2, 80)։ «Օ, շատ առավել դժնի դրանից Եվ Եղկելի էր հազարապատիկ» (Չ, 195)։ «Ծոռերը փոխելու համար ննջարան մտավ բավական ուշ» (ԱՍԱ, 13)։ «Շատ ավելի բարձր ու ամուր զգացումներով են կապված իրար» (ԱՍԱ, 49)։ «Նա այդ բոլորն անում էր շատ համոզկեր, շատ սրտանց» (ՔԲՊ, 1, 369)։ «Քիչ հետո ընկան անձրևի առաջին խոշոր և շառաչուն կաթիլները» (ՔԲՊ, 1, 378)։ «Նրանք բարձրանում էին շատ դանդաղ» (ՔԲՊ, 1, 559)։ «Ջարկերակը զարմանալիորեն արագ էր աշխատում» (ՔԲՊ, 3, 420)։ «Ախ, նրանք այնտեղ հաճախ, շատ հաճախ խույս էին մանում լոկ լուսաբացին» (ՊՍԱԶ, 176)։ «— Ճանապարհ տվեք, խնդրում եմ,— ավելի աղերսագին կրկնեց նա» (ԱՍԱ, 4)։ «Ոչ մի կերպ ավելի վաղ չկարողացա ազատվել» (ԱՍԱ, 10)։ «Վաղուց, շատ վաղուց էր մեռել մարդը, որ մի հարբեցող խարազ էր» (ՆԴ, 1, 76)։ «Երևակայեցեք, այսօր մի քիչ ուշ վեր կացա, որովհետև գիշերը շատ ուշ տուն եկա» (ՆԴ, 1, 248)։

Ինչպես ածականի, այնպես էլ մակբայի համեմատության աստիճանը կարող է կազմվել ոչ միայն աստիճանի մակբայների, այլև որոշ ածականների միջոցով։ Այդպիսի դեր կարող են կատարել փոքր, անծայր, անսահման, բացարձակ և այլ ածականներ։ Այսպես, դրանցով կազմվում են՝ բացարձակ միաձայն, փոքր առաջ, անսահման արագ, անսահման դանդաղ, անսահման հեռու, անծայր հեռու և այլն։

«Իսկ այգիների շուրջպարը կամաց ձգվում էր անծայր ու անծայր հեռու» (Չ, 226)։ «Ինչպես փոքր առաջ, Վարդ իշխանի հետ խոսելիս, այնպես էլ այժմ նայում էր Արշակը այդ ամենին և ոչինչ չէր տեսնում» (ՍԶՀԲ, 114)։ «Տասներկու տարի շարունակ նա անընդհատ ընտրվում էր բյուրոյի կազմում, երբեմն բացարձակ միաձայն» (ԱՍԱ, 449)։ «Անհնարին արագ պետք է զորք հավաքենք մարզպանին» (ԴԴՎ, 588)։ «Փողոցում նա քայլում էր անսովոր արագ» (ՍԶ, 2, 340)։

Անհրաժեշտ է նշել, որ սրանց գործածությունը ևս սահմանափակ է, և ավելի հաճախ այս կապակցությունների փոխարեն գործ են ածվում մակբայ լրացումով կապակցություններ (բացարձակապես միաձայն, փոքր ինչ առաջ, անսահմանորեն արագ և այլն)։

Մակբայի համեմատության աստիճանն արտահայտվում է ամենից հաճախ դերանուն-մակբայ կապակցություններով։ Ընդ

որում դրանք դիտում ենք երկու ենթատեսակներով։ Մի դեպքում մակբայի լրացում լինում է ամենից բառը, կազմելով ամենից շատ, ամենից ուշ, ամենից հաճախ, ամենից ուժգին, ամենից արագ, ամենից կանուխ և նման այլ կապակցություններ։ Սրանք իրենց բնույթով հիշեցնում են բացառական հոլովով դրված գոյականի և մակբայի նույնիմաստ կապակցությունները, ուստի կքննենք նրանց հետ։ Երկրորդ դեպքում մակբայի լրացում են դառնում ցուցական դերանուններից մի քանիսը՝ այնքան, այսքան, այնպես և այլն։ Այս դեպքում ունենում ենք այնքան հեշտ, այնքան հաճախ, այնքան անկեղծորեն, այնքան կարեկցաբար, ոչ այնքան հեռու, այնքան շատ, այդքան շռայլորեն, այդքան ուշ, այդքան շուտ, այսքան շատ, այդպես անակնկալ, այդպես անժամանակ, այնպես դանդաղ, այնպես արագ, այնպես ուժգին և այլն։ Այս կապակցությունները ևս լինում են երկու կարգի։ Մի դեպքում ցուցական դերանունը, մակբայի վրա դրվելով, ինքնուրույն կերպով է արտահայտում մակբայի ցույց տված հատկանիշի համեմատության աստիճանը։ Այսպիսի կապակցությունները շատ գործածական են ինչպես գրական, այնպես էլ խոսակցական լեզվում։

«Գիտեք, ես այնքան վաղուց ընկերներ չունեի» (ԱՍԱ, 35)։ «Շատ քիչ տղամարդիկ իրենց փողերն այդքան շռայլորեն կծախսեն կնոջ համար նվերներ գնելու» (ԱՍԱ, 276)։ «Բեգ, այդքան ուշ, ինչի՞ համար ազատեցին» (ՊՍԱՋ, 214)։ «Ինչու ես մեր այս կարճատև երջանկությունը այդքան շուտ ընդհատում» (ՔԲՊ. 3, 184)։ «Մեր քսանամյա ծանոթության և այնքան հաճախ հանդիպումների ընթացքում երբեք չէր խոսել սիրո մասին» (Շիրվ., 5 , 305)։ «Ուր են շտապում այսպես սրարշավ» (ՍՋՀԲ, 7)։ «Նա շատ զարմացած էր, թե ինչու է թագավորն այդպես անակնկալ կանչել իրեն» (ՍՋՀԲ, 183)։ «Լսում էր ու հիշում իր երջանկությունը, որ չքացել էր այդպես շուտ, իր պլաններն ու իղձերը, որոնք խորտակվել էին այդպես հանկարծակի ու անժամանակ» (Ա. Մելիքյան, Հատուցում, 274)։ «Ինչն է նրանց ստիպել այդպես վաղ բաժանվել անկողնից» (ՆԱՈ, 402)։ «Վարդենիների ճյուղերի վրա իջել էին դեղձենու ծաղկաթերթիկները, որոնք այդպես շքեղորեն զարդարել էին» (ՔԲՊ, 3, 139)։

Երբեմն ցուցական դերանվան փոխարեն կարող է դրվել հարաբերական կամ հարցական դերանուն, և այդ դեպքում կազմըվում են որքան շատ, որքան բարեկամաբար, ինչքան հեշտ, ինչքան շուտ և այլն։ «Որքան շատ բան գիտեր նա Գուրգենի մասին»

(ԱՍՍ., 510)։ «Վա՜, էս մարդիկը **ինչ վաղ** են քնում» (ՀԹ, 2, 107)։

Այս կապակցությունների երկրորդ տեսակը կազմվում է ցուցական դերանուններով և մակբայով, ընդ որում ցուցական դերանունը կատարում է ձևական դեր, իսկ համեմատության առարկանի իմաստն արտահայտվում է երկրորդական նախադասությամբ։ Սրանք ևս շատ գործածական են։

«Նա ժպտում էր այնքան մեղմ, **այնքան կարեկցաբար**, որ Լևոնիդն իսկույն մոռացավ և՛ իր մարմնավոր ցավը, և՛ իր հոգեկան տառապանքը» (Շիրվ., 5, 242)։ «Սկսեց հեկեկալ **այնպես** ուժգին, որ թվում էր, թե նրա մարմինը կտոր-կտոր է լինում» (Շիրվ., 5, 59)։ «Անախորժություններն ու դրանից բխող հիասթափությունների **այնքան արագ** էին հաջորդում իրար, որ Անին ժամանակ չէր ունենում մտածել իսկական վերաբերմունքի մասին» (ԱՍՍ., 138)։ «Հետո **այնպես շուտ** սովորեց տեսակների գները և կշեռքի «լեզուն», որ Մարտին ապերը շուտով կշռելը հանձնեց նրան» (ՍԶ, 1, 436)։

Համեմատության առարկանի իմաստ են արտահայտում նաև մակբայական այն կապակցությունները, որոնցում լրացման դեր են կատարում այլ խոսքի մասեր, ընդ որում դրանք կարող են գործածվել կա՛մ ինքնուրույն, կա՛մ կապի հետ միասին։ Այս տիպի կապակցությունները համեմատաբար սակավ են հանդիպում։ Կարելի է նշել **երգի պես ցնծագին, չափից դուրս արագ, ավելի շատ երկար** և այլն։

«Նա այժմ **ավելի շատ երկար** հիշեցնում էր գնչուհու» (ԱՍՍ., 22)։ «Նրան դիտողություն էին անում **չափից դուրս արագ** խոսելու համար» (ԱՍՍ., 97)։ «Այդ խոսքերը սրտերի մեջ ծփացին հաղթանակի **երգի պես ցնծագին**» (Ա. Մելիքյան, Հատուցում. 243)։ «Գործում էր **մի տեսակ կույր-կույր**, ցեխում չանենալով ոչ մի կողմնակից, որ մի հենարան» (ԱՍՍ., 123)։

Համեմատության առարկան են կազմում նաև բացառական հոլովով դրված գոյականի (և հոլովվող այլ խոսքի մասերի) և մակբայի կապակցությունները, ընդ որում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այս կապակցությունները կարող են լինել կա՛մ սոսկ գոյականի և մակբայի, կա՛մ գոյականի ու այլ բառի և մակբայի կապակցություններ։ Մեծ մասամբ բացառական հոլովով դրված գոյականը քիչ դեպքերում է միայնակ դառնում մակբայի լրացում, ավելի հաճախ նրա հետ միասին մակբայի լրացում են դառնում նաև այլ մակբայներ, ածականներ կամ ուրիշ խոս-

քի մասեր, իսկ այս վերջին տեսակի կապակցություններն արդեն դիտվում են ոչ թե երկու պարզ, այլ բարդ բառակապակցություն։ Այնուամենայնիվ, քիչ չեն այն կապակցությունները, որոնցում բացառական հոլովով դրված գոյականը (կամ հոլովվող այլ խոսքի մասը) դառնում է մակբայի համեմատության աստիճան կազմող լրացում։ Կապակցությունների այս տեսակը շատ նման է որակական ածականի նույն կազմությունն ունեցող կապակցություններին (հմմտ., գազանից կատաղի, մարդուց խելոք, ծովից խոր և այլն)։

Գործածության հաճախականության տեսակետից սրանք անշուշտ զիջում են բացառականով ու այլ բառերով լրացում ունեցող կապակցություններին։ Դրանցից կարելի է նշել ժամանակից շուտ, ժամանակից ուշ, (նշանակված) օրից վաղ, ամսից ավելի, սովորականից ավելի, հողմից արագ և այլն։

«Սովորականից կանուխ էր ելել» (Շիրվ., 5, 377)։ «Վտիտ ուսերով, թխադեմ ու ժամանակից շուտ սպիտակած Աշխենը թեքվել էր մոր վրա» (ԱՍՍ, 8)։ «Աշխենը ամսից ավելի հիվանդ պառկած էր մոր տանը» (ԱՍՍ, 77)։ «Մրրիկ է կյանքը այս մի, թռչում է հողմից արագ» (Զ, 18)։ «Անդրեյը սովորականից ավելի էր հուզված» (Վ. Արամյան, Մարդը, 78)։

Սակայն ամենից շատ գործ են ածվում այն կապակցությունները, որոնցում մակբայի համեմատության աստիճանի արտահայտվում է բացառական հոլովով դրված որևէ գոյականի (կամ այլ խոսքի մասի) և այլ բառի, ածականի, մակբայի միջոցով։ Մեկից ավելի լրացումով կապակցությունները կազմվում են տարբեր ծագում ու կառուցվածք ունեցող մակբայներով։ Սովորականներից կարելի է նշել առաջվանից անհամեմատ ավելի շատ, մեզնից առնվազն մի տասն անգամ ավելի, ժամանակից շատ շուտ և այլն։

«Սրանք կանգնել էին բազրիքից փոքր-ինչ ետ՝ հարգալից հեռավորությամբ» (ՍՁՀԲ, 538)։ «Ջանոյանի օրոք Ժորան առաջվանից անհամեմատ ավելի շատ էր փող ստանում» (ԱՍՍ, 174)։ «Մենք հո մեղավոր չենք, որ նա մեզանից առնվազն մի տասն անգամ ավելի է վաստակում» (ԱՍՍ, 328)։ «Դասակը կայարանից երկու հարյուր քայլ վերև կտրեց երկաթգիծը» (ՔԹՊ, 2, 161)։

Անհրաժեշտ է կանգ առնել առաջ, հետո, հետու, ներքև և այլ մակբայների վրա, որոնք կապակցություն են կազմում և՛ երկու մակբայ, և՛ միաժամանակ ունեն կապական կիրառություն։ Այն բոլոր դեպքերում, երբ այդ բառերն ունեն նաև մակբային հա-

տուկ այլ լրացումներ, բացառական հոլովով դրված բառը հա-մարվում է նրանց լրացումը, իսկ երբ նրանք գործ են ածվում սոսկ բացառական հոլովով դրված բառի հետ, ապա դիտվում են իբրև կապ, բացառական հոլովով դրված բառն էլ կապի խնդիր։ Այսպես, կառուցելուց անմիջապես հետո, նրանից բավական հետո, սրանից բավական ժամանակ առաջ *մակբայական կապակցություններ են, և նրանցում* կառուցելուց, նրանցից, սրանից *ձևերը մակբայի լրացումներ են, իսկ ասենք,* քաղաքից հետու, աշխարհից հետու, քեզանից առաջ, ինձնից հետո, գյուղից ներքև *և նման կապակցություններում* քաղաքից, աշխարհից, քեզնից ինձնից, գյուղից *ձևերը կապի խնդիր են, իսկ* հետու, առաջ, հետո, ներքև *ձևերը՝ կապ (մակբայ են՝ կապական բառի կիրառությամբ)։*

«Հայրը նրանից շատ առաջ *էր վերադարձել և խրճիթի շեմքին նստած՝ սպասում էր նրան» (ՆԴ, 1, 6)։ «*Խմբից ոչ այնքան հետու, *առանձին սեղանի քով նստած էր մի մարդ» (Շիրվ., 5, 368)։ «Ինչու չասաց* ժողովից անմիջապես հետո» *(ՍԶՀԻ, 161)։ «Մեծ ու լայն* լուսամուտից երկու քայլ հետու *դրված էր թիթեղե բարձր* վառարանը» *(ՔԹՊ, 1, 61)։*

Որ այդ բառերը (առաջ, հետո, հետու, ներքև) *մակբայ են, երևում է նաև այն բանից, որ դրանք համեմատության աստիճան կարող են կազմել նաև առանց բացառական հոլովով լրացում ստանալու։ Լայնորեն գործածական են թվականով կամ թվականին փոխարինող այլ բառով և չափի միավոր գոյականով լրացում ունեցող մակբայական կապակցությունները։ Սրանց լրացյալի դերում մեծ մասամբ հանդես են գալիս հենց նշված մակբայները։ Այսպես, կազմվում են՝* հինգ տարի առաջ, մի քանի տարի հետո, երկու րոպե հետո, երկու օր առաջ *և այլ կապակցություններ։*

«Այն բարդը, որի տակ նրանք նստեցին, հիսուն քայլ հազիվ հետու *լիներ սայլուղուց» (ՔԹՊ, 2, 626)։ «*Հինգ, վեց տարի առաջ *ինչպես Արամը, այնպես էլ ինքը գրում էր ոտանավորներ» (ՔԹՊ, 1, 52)։ «*Երկու օր հետո *հավանաբար նույն ձևով կստացվի մի ուրիշ հրաման» (ԱՍԱ, 404)։ «Եվ,* մի պահ հետո, *հան-կարծ ցած թափվեց» (ՊՍԱՁ, 21)։ «Սեղան նրան զանգահարեց* մի քանի օր հետո» *(ԱՍԱ, 324)։ «*Քանի մի օր առաջ *շնորհա-վորել էր Գնելին իր հարսանիքի առթիվ» (ՍԶՀԻ, 155)։ «Երեք այդ օր-*քանի դար հետո— *երկինք ու երկիր հաշտվեցին նորից» (ՊՍԱՁ, 20)։*

Հնարավոր է, որ մակբայից առաջ պատահականորեն դրված լինի բայի կամ այլ խոսքի մասի լրացումը։ Օրինակ՝ «Երեկոյան

դեմ Գոհարն աշխատանքից շուտ վերադարձավ» (Բ. Ուլուբաբյան, Հայրենի հող, 187) նախադասության մեջ աշխատանքից բառաձևը ոչ մի կապ չունի շուտ մակբայի հետ, թեև նրանից առաջ է դրված։ Սա վկայում է այն մասին, որ տվյալ խոսքի մասի մոտ դրված ոչ բոլոր բառերը կարելի է նրա լրացումը համարել, կամ դրանք բառակապակցություն դիտել։

Պատահում են նաև դեպքեր, երբ մակբայի համեմատության աստիճանն արտահայտվում է ոչ թե առանձին բառով, այլ նախադասությամբ։ Իհարկե դրանք խիստ սակավադեպ գործածություն ունեն։ Օրինակ՝ «Դե կրակիր այդ կենդանի, խլրտացող կույտերի մեջ, կրակիր ինչքան կարող ես արագ ու անվրեպ» (ՎԱՈՊ, 5, 101)։

Լրացական հարաբերությամբ կազմվող մակբայական կապակցությունների երկրորդ ենթախումբը կազմում են այլ խոսքի մասերի և մակբայի այնպիսի կապակցությունները, որոնցում արտահայտվում են ոչ թե համեմատության աստիճանի, այլ ուրիշ կարգի հարաբերություններ։

Առաջին հերթին պետք է նշել այն կապակցությունները, որոնք կառուցվածքով հիշեցնում են ածականի կապակցություններ՝ հիմնականում համապատասխան մակբայի՝ նաև ածականական իմաստ ու կիրառություն ունենալու պատճառով։ Իբրև այդպիսի մակբայ կարելի է նշել թաքուն, ծածուկ, գաղտնի և նման բառեր։ Շատ գործածական են սրանցով կազմվող մեկից (մի բանից) գաղտնի,— թաքուն,— ծածուկ և նման կապակցությունները։

«Այս կարգադրել էր Թագուհին, չկամենալով մայրաքաղաքի բնակիչներից և առհասարակ ժողովրդից ծածուկ պահել ոչինչ» (ՍԶՀԲ, 505)։ «Ապա մեզանից գաղտնի գոգնոցով սրբում էր արցունքները» (ՎԱՈՊ, 5, 29)։ «Մորից ու Գասպարից ծածուկ խնայած փողերով նա կահավորեց իրենց սենյակը» (ԱՍԱ, 79)։

Այստեղ բացառական հոլովով դրված լրացումն արտահայտում է անջատման, զատման հարաբերություն։ Թաքուն, ծածուկ և նման մակբայները կարող են ունենալ նաև կապով ու կապի խնդրով լրացում։ Օրինակ՝ «Ասա, Վարդապետ, Ով էր քո սերը, Բախտի պես թաքուն Քո սիրո տերը» (ՊՍԱԶ, 161)։

Առանձնակի տեղ ունեն հայցական հոլովով դրված գոյականի և մակբայի այն կապակցությունները, որոնք արտահայտում են չափի հարաբերություն։ Սրանցում մեծ մասամբ գոյականը դրվում է հոգնակի (կան նաև եզակի գործածության դեպ-

քեր)։ Անշուշտ, ծագման տեսակետից դրանք միատարր չեն, սակայն արդի գրական լեզվում դիտվում են իբրև նույն կազմություն ունեցող կապակցություններ։ Սրանց մի մասը առաջ է եկել բաղադրիչների համազոր փոխհարաբերություն արտահայտող երկու բառի տեսական հարադրումից (տարիներ, ժամեր, օրեր շարունակ), մյուս մասը ծագմամբ չափի լրացական փոխհարաբերություն ունեցող կապակցություն է եղել, մանավանդ եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ նույն մակբայները կազմում են կապակցություն երկու ձևով էլ (երկու տարի առաջ և տարիներ առաջ, հինգ օր հետո և օրեր հետո)։ Շատ գործածական են տարիներ շարունակ, ամիսներ շարունակ, դարեր շարունակ, տարիներ առաջ, ամիսներ առաջ, երեք օր շարունակ, րոպե առաջ և այլն։

«Քանի երկրակալ, քանի պետություն բարձրացել, ընկել, անցել են հերթով Եվ մահ տարածել քո ճանապարհին Դեռ դարեր առաջ Լենինյան դարից» (Չ, 192)։ «Սպասարկում էր րոպե առաջ հեռանալ բակից» (ՔԲՊ, 2, 18)։ «Ցանկանում է վայրկյան առաջ տեսնվել վիրավոր հրամանատարներին» (ՔԲՊ, 2, 347)։ «Մենք քեզ հետ երեք օր շարունակ համոզում էինք սառը երիտասարդների» (ՆՍՌ, 221)։ «Ժամեր շարունակ մենակ ու մենիկ Պապ սենյակներին հաղորդում էր նա» (ՊՍԱՉ, 77)։ «Հողում անտանելի ուժով բռթբռթում, եռ էր գալիս շաբաթներ շարունակ կուտակված մաղձը» (ԱՍՍ, 146)։ «Տարիներ շարունակ խարխափելով փաթաթելով, Սաթենիկը հմտացել էր իր գործի մեջ» (ԱՍՍ, 156)։

Առանձին պետք է նշել մակբայական այն կապակցությունները, որոնք այժմ դիտվում են իբրև դարձվածքներ և որոնց բաղադրիչների միջև դժվար է լրացական կամ համազոր հարաբերություն գտնել։ Դրանք փոխադարձաբար պայմանավորված բաղադրիչների կապակցություն են։ Դրանցից են՝ մեկի (մի բանի) հետ միասին, մի անգամ առմիշտ և այլն։

«Մայր, ես խնդրում եմ քեզ մի անգամ առմիշտ ազատել ինձ այդ տեսակ գրերից» (Շիրվ. 6, 412)։ «Այժմ սպիտակ տան մեջ ծերունին ապրում է մենակ՝ իր շան հետ միասին» (ՍԶ, 1, 299)։ «Բայց բոլորից ավելի մոտ էր պառավ Մարինային, որի ամուսնու հետ միասին անց է կացրել ամբողջ քաղաքացիական կռիվները» (Ա. Մելիքյան, Հատուցում, 29)։

Մակբայի լրացում կարող են դառնալ ժամանակի, ձևի, տեղի, որոշ մակբայներ՝ ճշգրտելով լրացյալի արտահայտած հատկա-

նիշը։ Այսպես, կազմվում են դեռևս նոր, դեռ հեռու, միաժամանակ հետո, հանապազ առանձին և նման կապակցությունները։

«Նա դեռ նոր էր եկել ծայր հյուսիս» (Վ. Արամյան, Մարդը, 5)։ «Եվ Սոնիկն ամեն առավոտ, դեռևս շապկանց վազում էր պատուհանի մոտ եղանակը ստուգելու» (ԱՍԱ, 467)։ «Նա դեռ մանկուց չէր սիրում, երբ հյուրերը ցրվելուց հետո թողնում էին իրենց հետևից դատարկ աթոռները, սեղանը» (ԱՍԱ, 27)։ «Միաժամանակ հետո, երբ նրանք գետնին չոքած հավաքում էին մարջանները, Անին նկատեց Գուրգենի ծոցագրպանից դուրս սահող հրավիրատոմսերը» (ԱՍԱ, 284)։ «Զրուցում են հանապազ առանձին» (ՍԶՀԲ, 110)։ «Գրողի կոչումը շատ վսեմ է, անչափ, և ես դեռ շատ ու շատ հեռու եմ այդ բարձր ու ազնիվ կոչումից» (ՔԹԴ, 1, 548)։

Մակբայական կապակցությունները այնքան կենսունակ և գործածական են, որ մակբայը այլ խոսքի մասի փոխարեն գործածվելու դեպքում էլ պահպանում է իրեն հատուկ լրացումները։ Այդպես, ավելի հեռու, բավական հեռու և նման կապակցություններ գործածվում են նաև գոյականաբար։

«Ուրեմն իրավունք կտաս ինձ մի փոքր հեռվից սկսել» (Շիրվ., 5, 67)։ «Արամը մի երկու անգամ էլ բավական հեռվից նայեց» (ՔԹԴ, 2, 172)։ «Նրա քիչ առաջվա հուզումը պարզապես տղայական էր»։ «Ելույթն սկսեց շատ հեռվից» (ԱՍԱ, 433)։ «Իրավունք ուներ կյանքից շատ ավելին պահանջելու» (ԱՍԱ, 105)։

Հարկ ենք համարում նաև կանգ առնել մակբայական սխալ կապակցությունների վրա։ Գրողներից ոմանք երբեմն անտեսելով մակբայի իմաստն ու կազմությունը, ստեղծում են այնպիսի կապակցություններ, որոնք հայերեն չեն։ Այսպես, գործ են ածում ավելի ուշ-ուշ, ավելի արագ-արագ, հոգով միմյանց շատ հեռու և այլն։

«Գրեթե երկու անգամ կոնյակ ավելի շատ խմեց, քան թե ինքը» (ՔԹԴ, 1, 60)։ «Ատամները կրճտացնելով ավելի արագ-արագ սկսեց ետ ու առաջ անել» (ՔԹԴ, 2, 683)։ «Ինքն ու զինվորները հոգով միմյանց շատ հեռու են» (ՔԹԴ, 2, 566)։ «Արամը նրան տարօրինակ մեծահոգաբար ողջունեց» (ՔԹԴ, 1, 153)։

Բերված կապակցություններից ավելի-ով կազմվածները ճիշտ չեն այն պատճառով, որ արագ-արագ ձևը հենց համեմատության առավելական աստիճանն է նշում, հետևաբար ավելի ձևը պետք չէր։ Երկու անգամ ավելի շատ կապակցությունը ևս ճիշտ չէ, քանի որ երկու անգամ կապակցությունը շատ մակբայի հետ առավելա-

կան համեմատական է կազմում, ուստի ավելի բառն ավելորդ է։ Հոգով միմյանց շատ հեռու սխալ է, քանի որ հեռու բառի լրացումը տրականով չի լինի, այլ բացառականով (միմյանցից հեռու)։ Տարօրինակ մեծահոգաբար կապակցությունը ևս սխալ է իր կազմությամբ։ Մակբայի լրացում դառնում են միայն համեմատության աստիճան նշող ածականները, իսկ տարօրինակ ածականը այդպիսի իմաստ չունի, հետևաբար չի կարող նրա վրա դրվել։ Այստեղ բացառություն են կազմում գրաբարյան ծագում ունեցող այն կապակցությունները, որոնցում ածականը (և նրան փոխարինող դերանունը) արտաքուստ մակբայի լրացում է, սակայն իրականում դա ծագմամբ եղել է ածական—գոյական կապակցություն (մեծ մասամբ, ամենայն իրավամբ)։ Օրինակներ՝ «Լենինականի հին թաղերից մեկում՝ Ձորի Բողազում, որն ամենայն իրավամբ դեռ կարող էր կրել Գյումրի անունը, իր փոքրիկ տան մեջ մեռնում էր աղբյուրների հռչակավոր վարպետ ուստա Մկրտիչը» (Մ. Արմեն, Հ. աղբյուր, 3)։ «Մեծ մասամբ քույրերը փոխեփոխ կարդում էին զավեշտական գրքեր» (ՍԶ, 2, 374)։

Անհրաժեշտ է կանգ առնել այն դեպքերի վրա, երբ նախադասության մեջ մակբայի հետ դրված բառը (մակբայ կամ այլ խոսքի մաս) կարելի է և՛ նրա լրացումը համարել, և այդ դեպքում գործ կունենանք արդեն քննարկված որևէ կառուցվածքի հետ, և՛ միաժամանակ չի կարելի կապակցություն համարել։ Այդպես են հետևյալ դեպքերը. «Վաղուց արդեն դարբասի վրա կպցրած հայտարարությունն անձրևներից ու արևից խունացել էր» (Շիրվ., 5, 299)։ «Ու լռել է երգը քո արդեն հիմա» (Չ, 33)։ «Նա նորից ակամա Փառանձեմին համեմատում էր պալատական տիկինների հետ» (ՍԶՀԲ, 198)։ «Ու թեև ընկնում էին, բայց շարունակում էին բարձրանալ դարձյալ աղմուկով ու հայհոյանքներով, այժմ արդեն անընդհատ նետեր արձակելով» (ՍԶՀԲ, 541)։ «Երեկոները նա սկսեց դարձյալ ուշ տուն գնալ» (ԱՍԱ, 175)։ «Կալի մեջ պապիկն ընկավ— Իր ոսկե թեղն էր էրնում, որպեսզի տուրքը Թուրքին օր առաջ շուտ վճարի» (ՊՍԱՉ, 201)։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՇ — Աղավնի, Շիրակ, Երևան, 1954։
ԱՍԱ — Ա. Ստեփանյան, Ամառնամուտ, Երևան, 1959։
ԱՍԾ — Ա. Սահինյան, Ծարավ, 1, Երևան, 1959։
ԱՐՊ — Արազի, Պատմվածքներ և վիպակներ, Երևան, 1953։
Բակ. — Ա. Բակունց, Երկեր, Երևան, 1955։
ԲՀՍՉ — Բ. Հովսեփյան, Սերմնացանները չվերադարձան, Երևան, 1962։
ԳՄԼՁ — Գ. Մահարի, Լռության ձայնը, Երևան, 1962։
ԳՄՀ — Գ. Մահարի, Հնձաններ, Երևան, 1959։
ԳՍԲ — Գ. Սարյան, Բանաստեղծություններ, Երևան, 1958։
ԳՍԵԺ — Գ. Սարյան, Երկերի ժողովածու, 1—2, Երևան, 1961։
ԳՍԸԷ — Գ. Սարյան, Ընտիր էջեր, Երևան, 1965։
ԳՍԹ — Գ. Սևունց, Թեհրան, Երևան, 1953։
ԴԴ — Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, 1, 1955։
ԴԴՎ — Դ. Դեմիրճյան, Վարդանանք, Երևան, 1954։
ՋԴԱՎ — Ջ. Դարյան, Արծիվ Վասպուրականի, Երևան, 1965։
ՋԴՍՆ — Ջ. Դարյան, Սայաթ-Նովա, 1—2, Երևան, 1960—1963։
Իս., — Ա. Իսահակյան, Երկեր, 1—4, Երևան, 1958—1959։
Ծ — Ալ. Ծատուրյան, Բանաստեղծություններ, Երևան, 1958։
ՀԱՆՀ — Հ. Արամյան, Նեղոսի հովտում, Երևան, 1958։
ՀԹ — Հ. Թումանյան, երկհատորյակ, Երևան, 1958։
ՀՀ — Հ. Հովհաննիսյան, Երկեր (միհատորյակ), Երևան, 1959։
ՀՄՀԵ — Հ. Մկրտչյան, Հայրենի երկրում, Երևան, 1963։
ՀՇՔՀ — Հ. Շիրազ, Քնար Հայաստանի, Երևան, 1958։
ՀՍՀԵՄ — Հ. Սահյան, Հայաստանը երգերի մեջ, Երևան, 1962։
ՀՍՄԱ — Հ. Սահյան, Մայրամուտից առաջ, Երևան, 1964։
ՀՍՆԴԲ — Հ. Սահյան, Նաիրյան դալար բարդի, Երևան, 1958։
ՀՔՄՏՋ — Հ. Քոչար, Մեծ տան զավակները, 1—2, Երևան, 1959։

ՂԱ — Ղ. Աղայան, Ընտիր երկեր, Երևան, 1950։
ՄԱՈՀ — Մկրտիչ Արմեն, Ոսկի հնձան, Երևան, 1959։
ՄԱՊ — Մկրտիչ Արմեն, Պատմվածքներ, Երևան, 1957։
ՄԱՊՀՁ — Մ. Արմեն, Պատվիրեցին հանձնել ձեզ, Երևան, 1964։
ՄՀԱԿՄ — Մ. Հակոբյան, Անհայտ կորած մարդիկ, Երևան, 1964։
ՄՄԼ — Մ. Մարգարյան, Լիրիկա, Երևան, 1962։
ՄՇԶ — Մ. Շաթիրյան, Զինվորներ, Երևան, 1955։
ՄՍԿԿՏ — Մ. Սարգսյան, Կյանքը կրակի տակ, Երևան, 1963։
Մուր. — Մուրացան, Երկերի ժողովածու, 1—7, Երևան, 1961—1965։
ՆԱՈ — Նոր-Այր, Ոլորտներում, Երևան, 1958։
ՆԴ — Նար-Դոս, Երկերի ժողովածու, 1—3, Երևան. 1955։
ՆԶՄ — Ն. Զարյան, Միհատորյակ, Երևան, 1959։
ՆԶՊՊ — Ն. Զարյան, Պարոն Պետրոսն ու իր նախարարները, Երևան, 1958։
ՆԶՍԳ — Ն. Զարյան, Սեր և գժտություն, Երևան, 1960։
ՇԹՆՃ — Շ. Թաթիկյան, Նրա ճանապարհը, 1—2, Երևան, 1964—1965։
Շիրվ. — Շիրվանզադե, Երկերի ժողովածու, 1—10, Երևան, 1958—1962։
Չ — Ե. Չարենց, Երկեր, Երևան, 1954։
ՊՍԱԶ — Պ. Սևակ, Անլռելի զանգակատուն, Երևան, 1959։
ՊՍՄԱՄ — Պ. Սևակ, Մարդը ափի մեջ, Երևան, 1963։
ՌԱԶ — Ռ. Աթայան, Զարթոնք, Երևան, 1958։
ՌԱՌԵ — Ռ. Արամյան, Ռուբինյան եղբայրներ, Երևան, 1954։
ՍԱՊ — Ստ. Ալաջաջյան, Պարտություն, Երևան, 1957։
ՍԲԱ — Սարմեն, Բանաստեղծի աղբյուրը, Երևան, 1961։
ՍԶ — Ստ. Զորյան, Երկերի ժողովածու, 1—10, Երևան, 1960—1964։
ՍԶՀԲ — Ստ. Զորյան, Հայոց բերդը, Երևան, 1959։
ՍԽՀ — Ս. Խանզադյան, Հողը, Երևան, 1957։
ՍԽՄԽ — Ս. Խանզադյան, Մխիթար Սպարապետ, Երևան, 1961։
ՍԿՔԴՔ — Ս. Կապուտիկյան, Քարավանները դեռ քայլում են, Երևան, 1964։
ՍՏԲ — Ս. Տարոնցի, Բանաստեղծություններ, Երևան, 1954։
ՎԱՀԳ — Վ. Անանյան, Հովազաձորի գերիները, Երևան, 1956։
ՎԱՈՊ — Վ. Անանյան, Որսորդական պատմվածքներ, 5, Երևան, 1959։
ՎԱՍԱ — Վ. Անանյան, Սևանի ափին, Երևան, 1961։

ՎԽԳԼ — Վ. Խնչումյան, Գիրք լինելության, Երևան, 1966։

ՎՆԻԱ — Վ. Նորենց, Իմ աշխարհը, Երևան, 1958։

ՎՏ — Վ. Տերյան, Երկեր, 1—3, Երևան, 1960—1963։

ՎՓ — Վ. Փափազյան, Երկերի ժողովածու, 1—5, Երևան, 1958—1959։

Ր — Րաֆֆի, Երկերի ժողովածու, 1—10, Երևան, 1955—1959։

ՔԹՈՀ — Ք. Թափալցյան, Ոսկե հովիտ, Երևան, 1955։

ՔԹՊ — Ք. Թափալցյան, Պատերազմ, 1—3, Երևան, 1946—1959։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայերեն

Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, Երևան, 1965։

Մ. Աբեղյան, *Աշխարհաբարի քերականություն*, Վաղարշապատ, 1906։

Ա. Աբրահամյան, *Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը*, Երևան, 1953։

Ա. Աբրահամյան, *Գրաբարի ձեռնարկ*, Երևան, 1952 և հետագա հրատարակ.։

Ա. Աբրահամյան, *Բայը ժամանակակից հայերենում*, Երևան, 1962։

Ս. Աբրահամյան, *Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատականիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում*, Երևան, 1965։

Է. Աղայան, *Հայ լեզվաբանության պատմություն*, 1—2, Երևան 1958—1962։

Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների*, 1, 1952։

Ա. Այտընյան, *Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի*, Վիեննա, 1866։

Վ. Առաքելյան, *Ժամանակակից հայերեն հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները*, Երևան, 1957։

Վ. Առաքելյան, *Հայերենի շարահյուսություն*, 1—2, Երևան, 1958—1964։

Հ. և Ջ. Ասատուր, *Գործնական քերականութիւն արդի աշխարհաբարի*, Բ. գիրք, Կ. Պոլիս, 1922։

Յ. Աւգերեան, *Քերականութիւն անգղիական և հայերէն*, Վենետիկ, 1817։

Գ. Աւետիքեան, *Քերականութիւն հայկական*, Վենետիկ, 1815։

Ա. Բագրատունի, *Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց*, Վենետիկ, 1852։

Ա. Բահաթրեանց, *Քերականութիւն աշխարհիկ լեզուի*, Տփխիս, 1879։

Բաղդասար Դպիր, *Պարզաբանութիւն քերականութեան կարճառօտ և դիւրիմաց*, Կ. Պոլիս, 1736։

Յ. Գազանճեան, *Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի*, Կ. Պոլիս, 1925։

Կ. Գալանոս, *Քերականական և տրամաբանական ներածութիւն առ յիմաստասիրութիւնն շահելոյ*, Հռոմ, 1645։

Ա. Մ. Գարագաշեան, *Դպրութիւն կամ նոր քերականութիւն հայերէն*, Կ. Պոլիս, 1862։

Ա. Մ. Գարագաշեան, *Աշխարհաբար քերականութիւն կամ Քերականութիւն արդի հայերենի*, Կ. Պոլիս, 1891։

Յ. Թումանեան, *Համառօտ ստուգաբանութիւն հայոց աշխարհաբար լեզուի*, Թիֆլիս, 1904։

Յ. Կոստանդնուպոլսեցի (Հոլով), *Զտութիւն հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական*, Հռոմ, 1675։

Ա. Ղարիբյան, *Հայոց լեզվի քերականություն*, Երևան, 1934 և հետագա հրատ.։
Ա. Ղարիբյան, *Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա*, Երևան, 1954։
Ստ. Մալխասեանց, *Գրաբարի համաձայնութիւնը*, Թիֆլիս, 1892։
Ն. Մելիք-Թանգեան, *Աշխարհաբարի քերականութիւն*, Շուշի, 1893։
Ա. Մարգարյան, *Արդի հայերենի կապերը*, Երևան, 1955։
Ա. Մուրվալյան, *Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն*, Երևան, 1959։
Շրոդեր, *Արամեան լեզուին դուռն*, Ամստերդամ, 1711։
Վ. Չալըխեան, *Քերականութիւն հայկաբան, լեզուի*, Վիեննա, 1848։
Վ. Չալըխեան, *Քերականութիւն հայկազնեան լեզուի, հանդերձ փոփոխմամբ և յաւելուածովք աշխատասիրեալ ի Հ. Արսէնէ Վ. Այտընեան*, Վիեննա, 1885։
Մ. Չամչեան, *Քերականութիւն հայկաբան լեզուի*, Տփխիս, 1826։
Ստ. Պալասանեան, *Ընդհանուր տեսութիւն արևելեան նոր գրաւոր լեզուի Հայոց*, Թիֆլիս, 1870։
Ստ. Պալասանեան, *Գործնական քերականութիւն հայերէն լեզուի, հատ. 2 (Համաձայնութիւն)*, Թիֆլիս, 1869։
Ստ. Պալասանեան, *Քերականութիւն մայրենի լեզուի*, Թիֆլիս, 1874 և հետագա հրատ.։
Գ. Ջահուկյան, *Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում*, Երևան, 1954։
Գ. Ջահուկյան, *Լեզվաբանության պատմություն*, 1—2, Երևան, 1960—1962։
Ս. Ջուղայեցի, *Գիրք որ կոչի քերականութիւն, գրաբառի լեզուի հայկազեան սեռի*, Վենետիկ, 1730։
Գ. Սևակ, *Հայոց լեզվի շարահյուսություն*, Երևան, 1936 և հետագա հրատարակությունները։
Գ. Սևակ, *Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց*, Երևան, 1955։
Գ. Վանցեան, *Դպրոցական քերականութիւն*, Թիֆլիս, 1906։
Ն. Տեր-Ղևոնդեան, *Մայրենի լեզուի քերականութեան տարերքը, 1 և 2 մասը*, Թիֆլիս, 1906։
Մ. Տեր-Յարութիւնեան, *Քերականութիւն գրաբարի*, Կ. Պոլիս, 1808։
Ա. Քյուրճյան, *Ընդհանրական մակբայները հայերենում* («Պատմա-բանասիրական հանդես», 1961, № 3—4)։
Վ. Քոսյան, *Թվականի բառակապակցությունները ժամանակակից հայերենում* (ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, 1960, № 10)։
Վ. Քոսյան, *Մակբայի բառակապակցությունները ժամանակակից հայերենում* (Խ. Աբովյանի անվան մանկ. ինստիտուտի «Գիտական աշխատությունների ժողովածու», №, 8, 1961 թ.)։
Վ. Քոսյան, *Ածականի բառակապակցությունները ժամանակակից հայերենում* («Պատմա-բանասիրական հանդես», 1962, № 2)։
Վ. Քոսյան, *Գոյականի բառակապակցությունները՝ ածական լրացումով* (ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, հաս. գիտություններ, 1963, № 9)։
Վ. Քոսյան, *Սեռական հոլովի իմաստները և շարահյուսական կիրառությունը* (Խ. Աբովյանի անվան մանկ. ինստիտուտի գիտական աշխատություններ, հայոց լեզվի բաժին, № 1, 1965)։
Վ. Քոսյան, *Մակբայը գոյականի լրացում* («Սովետական մանկավարժ» ամսագրի հավելված «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 1966, № 5)։

Վ. Քոսյան, *Գոյականի լրացումը կապով և կապի խնդրով* («Սովետական մանկավարժ» ամսագրի հավելված «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 1967, № 2)։

Վ. Քոսյան, *Գոյականի լրացումները թեք հոլովներով (առանց սեռականի)*, («Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 1968, № 3)։

Վ. Քոսյան, *Ժամանակակից հայերենի բառակապակցությունները (հատվածներ համանուն մենագրությունից)*, (Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի գիտական աշխատություններ, հայոց լեզվի բաժին, № 2, 1967)։

2. Ռուսերեն և օտար լեզուներով

Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915.

Античные теории языка и стиля, М.—Л., 1936.

О. С. Ахманова, Словосочетание (сборник «Вопросы грамматического строя», М., 1955).

О. С. Ахманова, Словарь лингвистических терминов, М., 1966.

О. С. Ахманова ,Г. В. Микаэлян, Современные синтаксические теории, изд. Московского университета, 1963.

С. Бернштейн, Основные понятия грамматики в освещении А. М. Пешковского (предисловие к книге А. М. Пешковского «Русский синтаксис в научном освещении», М., 1938).

Р. А. Будагов, Введение в науку о языке, М., 1958.

Ф. И. Буслаев, Историческая грамматика, М., 1959.

Н. С. Валгина, Д. Э. Розенталь, М. И. Фомина, В. В. Цапукевич, Современный русский язык, изд. «Высшая школа», М., 1971.

В. В. Виноградов, Вопросы изучения словосочетаний (на материале русского языка)—журнал «Вопросы языкознания», 1954, № 3.

В. В. Виноградов, Идеалистические основы синтаксической системы проф. А. М. Пешковского, ее эклектизм и внутренние противоречия (сборник «Вопросы синтаксиса современного русского языка», М., 1950.

В. В. Виноградов, Из истории изучения русского синтаксиса, М., 1958.

В. В. Виноградов, Основные вопросы синтаксиса предложения (на материале русского языка)—(сборник «Вопросы грамматического строя», изд. АН СССР, М., 1955).

В. В. Виноградов, Русский язык, М., 1947.

В. В. Виноградов, «Синтаксис русского языка» акад. А. А. Шахматова (сборник «Вопросы синтаксиса современного русского языка», М., 1950).

А. Востоков, Русская грамматика, СПБ, 1835.

А. Н. Гвоздев, Современный русский литературный язык, ч. 2, синтаксис, М., 1958.

Г. Глисон, Введение в дескриптивную лингвистику (перевод с английского), М., 1959.

Грамматика русского языка, т. 2, ч. 1, изд. АН СССР, М., 1960.

Грамматика современного русского литературного языка, изд. «Наука», М., 1970.

Т. А. Дегтерева, Краткий обзор лингвистических учений (в 19—20 веках в Европе)—(сборник «Проблемы изучения языка», М., 1957).

О. И. Дикушина. Какой единицей является синтагма? (уч. записки ЛГУ, № 283, серия филолог. наук, вып. 56, Л., 1961).
А. Добиаш, Синтаксис Аполлония Дискола, Киев, 1882.
И. И. Ковтунова, О синтаксической синонимике (сборник «Вопросы культуры речи», вып. 1, М., 1955).
Е. В. Кротевич, Члены предложения в современном русском языке, Львов, 1954.
Е. В. Кротевич, Словосочетание как строительный материал предложения, изд. Львовского университета, 1956.
Z. Lange, das system der syntax des Apollonios Dyskolos, Gottingen, 1852.
Ф. Микуш, Структурализм и синтагматическая теория (журнал «Вопросы языкознания», 1957, № 1).
И. И. Мещанинов, Структура предложения, М.—Л., 1963.
И. И. Мещанинов, Члены предложения и части речи, М.—Л., 1945.
Д. Н. Овсянико-Куликовский, Синтаксис русского языка, СПБ, 1912.
М. Н. Петерсон, Лекции по современному русскому литературному языку, М., 1941.
М. Н. Петерсон, Очерк синтаксиса русского языка, М.-Л., 1923.
А. М. Пешковский, Русский синтаксис в научном освещении, М., 1933.
А. М. Пешковский, Школьная и научная грамматика, М., 1925.
П. И. Поллер, О системах членения предложения в зарубежной грамматической литературе (сборник «Проблемы изучения языка», М., 1957).
А. Потебня, Из записок по русской грамматике, М., 1958.
Н. Н. Прокопович, Словосочетание в современном русском литературном языке, М., 1966.
Н. Н. Прокопович, О влиянии словообразовательных связей частей речи на построение словосочетаний (журнал «Вопросы языкознания», 1953, № 6).
А. А. Реформатский, Введение в языкознание, М., 1955.
L. Ries, Zur Wortgruppenlehre, Prag, 1928.
L. Ries, Was ist ein Satz?, Prag, 1931.
L. Ries, Was ist Syntax?, Marburg, 1894.
В. П. Сухотин, Проблема словосочетания в современном русском языке (сборник «Вопросы синтаксиса современного русского языка», М., 1950).
В. П. Сухотин, Из материалов по синтаксической синонимике в русском языке (сборник «Исследования по синтаксису русского литературного языка», изд. АН СССР, М., 1956).
А. И. Смирницкий, Синтаксис английского языка, М., 1957.
Н. А. Федотова, О выражении членов предложения неделимыми словосочетаниями (уч. записки, т. 109, «Труды филолог. факультета Харьковского госунта», т. 8, 1960).
Ф. Ф. Фортунатов, Избранные труды, т. 2, М., 1957.
А. А. Шахматов, Синтаксис русского языка, М., 1941.
В. Н. Ярцева, Предложение и словосочетание (сборник «Вопросы грамматического строя», М., 1955).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 5

Գլուխ առաջին

1. Բառերի կապակցությունների ուսմունքի ձևավորումը և զարգացումը քերականագիտության մեջ 6
2. Կապակցությունների ուսմունքը հայ քերականագիտության մեջ . . 15
3. Բառակապակցության ըմբռնումը սովետական լեզվաբանության մեջ 28

Գլուխ երկրորդ

Գոյականի բառակապակցություններ 37
1. Գոյականի լրացումը ուղղական հոլովով 37
2. Գոյականի լրացումները սեռական հոլովով 52
3. Գոյականի լրացումները մյուս թեք հոլովներով 96
4. Գոյականի լրացումը ածականով 110
5. Գոյականի լրացումը թվականով 126
6. Գոյականի լրացումը դերբայներով 130
7. Գոյականի լրացումը կապով և կապի խնդրով 148
8. Գոյականի լրացումը մակբայով 159

Գլուխ երրորդ

Ածականի բառակապակցություններ 167

Գլուխ չորրորդ

Թվականի բառակապակցություններ 193

Գլուխ հինգերորդ

Դերանվան բառակապակցություններ 195

Գլուխ վեցերորդ

Բայական բառակապակցություններ 199

1. Բայի լրացումները գոյականով (և հոլովված այլ բառերով) . . . 200
ա) Բայի լրացումները տրական հոլովով 213
բ) Բայի լրացումները հայցական հոլովով 249
գ) Բայի լրացումները բացառական հոլովով 296
դ) Բայի լրացումները գործիական հոլովով 340
ե) Բայի լրացումները ներգոյական հոլովով 385
2. Բայի լրացումները կապով և կապի խնդրով 398
3. Բայի լրացումները մակբայով 442
4. Բայի լրացումները ածականով 451
5. Բայի լրացումները դերբայներով 460

Գլուխ յոթերորդ

Մակբայի բառակապակցություններ 470
Համառոտագրություններ 486
Օգտագործված գրականություն 483

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ՔՈՍՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ ԱՐԶՈՒՄԱՆԻ
КОСЯН ВАГАРШАК АРЗУМАНОВИЧ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր
Վ. Դ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հրատարակչական խմբագիր
Ս. Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Նկարիչ
Կ. Կ. ՂԱՑԱԴԱՐՅԱՆ

Տեխնիկական խմբագիր
Ս. Կ. ՋԱՔԱՐՅԱՆ

ՎՖ 05251 Հրատ. 4030 Պատվեր 486 Տպաքանակ 2500

Հանձնված է շարվածքի 27/IX 1974 թ.։ Ստորագրված է տպագրության 16/IV 1975 թ.։ Տպագր. 30,5 մամուլ, հրատ. 26,25 մամուլ։ Թուղթ № 1, 60×90 1/16։ Գինը՝ 2 ռ. 87 կ.։

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան—19, Բարեկամության 24
Издательство АН Арм. ССР. Ереван-19. Барекамутян, 24.

ՀՍՍՀ Մինիստրների սովետի հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող. № 65։

A II / 54718

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220054718